

Գ. Ն. Գյուրջիև

ԱՄԵՆՆ ԱՄԵՆԱՅՆԻՎ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

**Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն
կամ
Բեհեդգերուդի պատմաձևերն իր թոռանը**

(Թարգմանություն ռուսերենից՝ անգլերենի համեմատությամբ)

Գ. Հ. ԳՅՈՒՐՉԻՆԻ ՄԱՍԻՆ



Գ. Հ. Գյուրջին (1877? - 1949), Գեորգի Հովհաննեսի¹ Գյուրջին, ծագումով՝ կեսհույն-կեսհայ, հոգևոր ուսմունքի հիմնադիր: Ժամանակակից կրոնական և հոգեբանական ուսմունքների գունապնակում Գյուրջինը շարունակում է մնալ հանելուկային դեմք՝ անընդհատ աճող ազդեցությամբ: Առավել նման լինելով ձեն-բուդդայականության հոգևոր նահապետի կամ Սոկրատին, քան հայտնի կերպարով քրիստոնեական միստիկի՝ Գյուրջինն իրեն ճանաչողների շրջապատում ուներ մարդկանց «արթնացնելու» անգերազանցելի շնորհով օժտված մարդու հոչակ: Նա Արևմուտք հասցրեց գաղտնատեսական համընդգրկուն գիտելիքներ և իրենից հետո թողեց մի դպրոց, որն աչքի է ընկնում գիտակցության զարգացման իր ուրույն մեթոդաբանությամբ:

«Գիտակցություն» ասելով Գյուրջինը հասկանում էր ավելին, քան ուղեղի ակտիվ վիճակն ու գործունեությունը: Ըստ նրա ուսմունքի՝ գիտակցելու ունակությունը պահանջում է մտավոր, զգացական և մարմնական առանձին էներգիաների ներդաշնակ համակցություն, և միայն դա է թույլ տալիս, որ մարդու ներսում գործեն այն բարձրագույն գործոնները, որոնք կապված են այնպիսի ավանդական հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ *նուս*-ը (համաշխարհային բանականությունը), *բուդդան* (պայծառացումը) կամ *ատման*-ը (կյանքի հիմքը, հոգին): Այդ տեսակետից մարդը, ինչպիսին կա, իրականում անկատար էակ է, որին արտաքին խթաններով առաջնորդում են նրա պայմանական ռեֆլեքսները: Լայն բազմազանությամբ աչքի ընկնող գյուրջինյան մեթոդները կարող են որպես միջոց ծառայել «իսկական մարդու» ինքնագիտակցությանն ու հոգևոր որակներին հասնելու համար, ինչպիսիք են՝ կամքը, անձը և օբյեկտիվ գիտելիքները: Մարդու էվոլյուցիային առնչվող նրա մեթոդն ու ուսմունքն իրենց արտացոլում են գտել տիեզերաբանական մի ընդարձակ համակարգում, որը լուսաբանված է հենց իր Գյուրջինի թողած ժառանգության մեջ և Պ. Դ. Ուսպենսկու «Հրաշալիի որոնումներ» գրքում (Նյու Յորք, 1949):

Չնայած 1920-ական թվականներին մամուլում տեղ գտած և նրան վերաբերող սենսացիոն բնույթի տեղեկատվությանը՝ իր հետևորդների շրջանակից դուրս Գյուրջինը համարյա անհայտ մնաց իր ողջ կյանքի ընթացքում: Մակայն 1950-ականներին նրա գաղափարները սկսեցին տարածվել. դրան նպաստեց ինչպես նրա սեփական ստեղծագործությունների, այնպես էլ աշակերտների հուշագրությունների հրատարակումը: Նրա անձի բացառիկ հատկանիշները և հատկապես կյանքի հանգամանքների օգտագործման հանճարեղ ունակությունը, որով նա աշակերտներին օգնում էր, որպեսզի նրանք իրենց մասին իմանան ամբողջ ճշմարտությունը, առիթ տվեցին նաև, որ նրա մասին տարածվեն բազմաթիվ կեղծ պատմություններ, որոնք էլ երկար տարիների ընթացքում ստվեր գցեցին նրա գաղափարների մաքրության վրա: Բայց այսօր արդեն կարելի է ասել, որ Գյուրջինի ուսմունքն ազատվել է ասեկոսեների ու զրպարտությունների սարդոստայնից և ճանաչվել որպես ներկա դարաշրջանի ամենախորաթափանց հոգևոր ուսմունքներից մեկը:

Գյուրջինը ծնվել է ռուսական Անդրկովկասի հարավային մասում գտնվող Ալեքսանդրապոլ քաղաքում: Հայրը հույն էր, մայրը՝ հայ: Արտակարգ ընդունակություններով օժտված պատանին վայելում էր իր դաստիարակների՝ ուղղափառ վանականների հատուկ բարեհաճությունը և ժամկետից շուտ ստացել է հոգևոր ու բժշկական կրթություն: Համոզված լինելով, որ հավերժական գաղտնատեսական գիտելիքների ավանդույթներն ինչ-որ տեղ դեռևս պահպանվում են, նա լքում է ակադեմիական ուսումնառության արահետը և սկսում փնտրել իր առջև ծառայած էական հարցերի պատասխանները: Մոտ 20 տարի (1894-1912) ճամփորդելով հիմնականում Միջին Ասիայում և Մերձավոր Արևելքում՝ նա փորձում է խորամուխ լինել հինավուրց ավանդույթների բուն էության մեջ: Նրա կյանքի այդ շրջանն առաջվա պես մեզ համար գաղտնի է մնում, թեև դրա առավել նշանակալից իրադարձությունները նա շարադրել է «Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ» ինքնակենսագրական պատումում:

1913 թ-ին Գյուրջինը հայտնվում է Մոսկվայում: Այդ ժամանակ նա արդեն հասցրել էր լիարժեք ուսմունք ստեղծել և սկսում է իր շուրջը հավաքել աշակերտների խմբեր՝ հիմնականում մտավորական միջավայրից: Այդ շրջանից սկսած՝ նրա կենսագրությունն ավելի հստակ է: Ռուս գրող Պ. Դ. Ուսպենսկին և երգահան Թոմաս դը Հարթմանը նկարագրում են, թե ինչպես է նա, չնայած բոլոր դժվարություններին, շարունակում աշխատել նաև բուլշևիկյան հեղափոխության տարիներին, ինչպես է իր հետևորդների հետ ճանապարհորդում դեպի Կովկաս (1917), Կոստանդնուպոլիս (1920) և վերջապես հասնում Փարիզից հարավ գտնվող Ֆոնտեբլո քաղաքը, որտեղ էլ դը Ավոն ամրոցում (Priure d'Avon), մշտական հիմունքով վերականգնում է իր «Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտը»:

Ինստիտուտի վարդապետությունն ու դրանում կիրառվող փորձարարական մեթոդները շուտով իրենց կողմն են գրավում Անգլիայի և ԱՄՆ-ի առաջատար շատ նկարիչների ու մտածողների, որոնք գալիս էին ծանոթանալու Գյուրջինի հետ և ի վերջո մնում, որպեսզի աշխատեն նրա կողքին: Նրանցից շատերին, օրինակ՝

¹ Իվան, աշուղ Աղաշ

Մորիս Նիկոլին, Ջեյն Հիփին ու Քետրին Մենսֆիլդին Գյուրջիևի ուսմունքին ծանոթացրել են հայտնի քննադատ և «Նոր դար» ամսագրի խմբագիր Ա. Ռ. Օրեյջը և Պ. Դ. Ուսպենսկին:

1924 թ-ի սկզբին Գյուրջիևն աշակերտների հոծ խմբի ուղեկցությամբ առաջին անգամ այցելում է Միացյալ Նահանգներ, որտեղ մի քանի հրապարակային ելույթներ է ունենում սրբազան պարերի իր ուսումնասիրությունների թեմայով: Այդ ելույթները կայացել են հիմնականում Նյու Յորքում: Գյուրջիևն իր առջև նպատակ էր դրել ցուցադրելու «շարժումների գիտության» մտացված սկզբունքները և լուսաբանելու այն հատուկ դերը, որն այդ գիտությունն ունի հոգևոր զարգացման ասպարեզում:

1924 թ-ի ամռանը տեղի ունեցած ավտովթարից հետո, որը քիչ էր մնացել նրա համար ճակատագրական լինել, Գյուրջիևը որոշ չափով սահմանափակում է իր ինստիտուտի գործունեությունը, նեղացնում իր հետևորդների շրջանակը և ձեռնամուխ լինում իր ժառանգությանը գրավոր տեսք տալու գործին: Մինչև 1934 թ նա արդեն ավարտին էր հասցրել իր աշխատությունների առաջին երկու գրքերը և երրորդ գրքի մի մասը: Այդ ընթացքում նա շարունակում էր կապ պահպանել նախկին աշակերտների հետ, ևս երկու անգամ այցելում է ԱՄՆ (1929 և 1933 թթ) և վերջնականապես բնակություն հաստատում Փարիզում:

1935 թ Գյուրջիևը վերսկսում է աշխատանքն աշակերտների խմբերի հետ: Այդ գործում նրան օգնում էր Ժաննա դը Ջայցմանը, որը նրա հետևորդների շարքում նրան ամենամոտ անձնավորությունն էր և ավելի ուշ շարունակեց նրա գործը: Թեև Գյուրջիևի աշակերտներին պատվիրված էր ծայրահեղ փակ գործել, սակայն Ֆրանսիայում նրա հետևորդների թիվն անընդհատ աճում էր նույնիսկ պատերազմի տարիներին: Նրանց թվում կային գրականության, արվեստի և բժշկության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Ռենե Դոմալը, Քատրին Հավը, Պ. Լ. Թրեվերսը: Պատերազմից հետո Գյուրջիևի աշակերտների բազմազգ ընտանիքը կրկին հավաքվեց նրա շուրջը: 1948 թ-ի դեկտեմբերին նա վերջին անգամ այցելեց Ամերիկա և, չնայած հիվանդությանը, իր եռանդուն աշխատանքը շարունակեց ընդհուպ մինչև իր մահը, որը վրա հասավ հաջորդ տարվա հոկտեմբերի 29-ին, Փարիզում:

«Բեհեդգեբուդի պատմածներն իր թոռանը» գիրքը, որն առաջին անգամ անգլերեն լեզվով լույս տեսավ 1950 թ-ին, Գյուրջիևի ստեղծագործությունների գլուխգործոցն է: Այն ընթերցողի առջև փռում է Երկրի վրա մարդու կյանքի անօրինակ լայնարձակ համայնապատկերը, ինչպես այն կներկայանար հեռավոր աշխարհի էակին: Պատմությունների ոչ հաջորդական հերթագայությամբ և միտումնավոր լեզվական իմաստաբանություններով հյուսված տիեզերական պլաբանության հետևում Գյուրջիևի ուսմունքի էությունն է թաքնված:

1963 թ լույս տեսած «Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ» գրքում Գյուրջիևը պատմում է իր պատանեկության և գիտելիքների համառ որոնումների մասին:

Նախապես Գյուրջիևը մտադրվել էր իր եռագրությունն ավարտել «Կյանքն իրական է միայն այնժամ, երբ ԵՄ կամ» գրքով, սակայն այն այդպես էլ անավարտ է մնում. դեռ ավելին, դրա մի մասն այժմ անհետ կորած է համարվում: Պահպանված մնացած հատվածները հրատարակվել են 1981 թ: 1973 թ լույս տեսած «Հայացքներ իրական աշխարհից» գիրքը պարունակում է Գյուրջիևի դասախոսությունները, որոնք նրա աշակերտների կողմից գրի են առնվել 1920-ական թվականներին: Այդ ամենից գատ, Գյուրջիևը թողել է նաև բազմաթիվ երաժշտական ստեղծագործություններ, որոնք գրվել են Թոմաս դը Հարտմանի համահեղինակությամբ: Դրանց մի մասն օգտագործվել է այն սրբազան պարերի ու շարժումների նվագակցության համար, որոնք Գյուրջիևի ուսմունքի կարևոր մասն են կազմում: Այդ շարժումները փաստագրվել և պահպանվել են նրա աշակերտների կողմից:

Գյուրջիևի սկսած գործունեությունն ու դրան հարակից հետազոտությունները նրա աշակերտների գլխավորությամբ շարունակվել ու ընդլայնվել են զանազան ֆոնդերի և ընկերությունների շրջանակներում, որոնք կազմակերպվել են արևմտյան աշխարհի խոշորագույն քաղաքների մեծ մասում: Առաջացել են նաև որոշակի թվով խմբեր, որոնք նրա աշակերտների հետ որևէ կապ չունեն, թեև իրենք իրենց Գյուրջիևի հետևորդներ են հռչակում կամ պնդում նրա ուսմունքի հետ իրենց կապված լինելը:

Միջել դը Ջայցման

(Հեղինակի սույն ակնարկը գետեղվել է

Մ. Էլիադեի 16-հատորանոց

«Կրոնի հանրագիտարան» գրքում

(The Encyclopedia of Religion, 16

Volumes, Mircea Eliade, editor in chief,

New York: Macmillan, 1987))

Երկու խոսք և մաղթանք թարգմանչի կողմից

Գ. Ն. Գյուրջիևի սովորածավալ այս աշխատության առաջին երեք գրքերում բազմաթիվ են այնպիսի տերմիններն ու անվանումները, որոնք համընդհանուր ընդունված չեն և կարող են խորթ հնչել նույնիսկ հայ ընթերցողի ականջին: Այնուհանդերձ, դրանց մեծ մասը հեղինակը կառուցել է հայերեն բառարմատների հիման վրա՝ հաճախ դրանք համեմելով հային, հատկապես՝ գյումրեցուն բնորոշ, մեղմ, երբեմն էլ հազիվ նշմարելի հումորով: Դրանց մի զգալի մասը տարբերակներով ու աղավաղվել են աշխատությունն այլ լեզուներով թարգմանելու ընթացքում: «Հայացված» տերմինների ու անվանումների ռուսերեն ու անգլերեն տարբերակներն ընթերցողը կարող է գտնել սույն գրքի էջերում զետեղված ծանոթագրություններում և ամեն մի առանձին դեպքում դրանցից ընտրել այն տարբերակը, որն իրեն ավելի հոգեհարազատ ու հասկանալի կհամարի:

Եվս մի կարևոր հանգամանք: Թարգմանության ընթացքում աշխատել եմ ձեռնպահ մնալ պարզեցման նպատակով գյուրջիևյան բազմաբարդ ու դժվարընկալելի նախադասությունները մասնատելուց, որոնցով հեղինակը վարպետորեն կերտել է իր այս գրքի գլխավոր հերոսի՝ Բեհեղզբուդի կերպարը: Այլապես հավանաբար կնմանվեի այն բժշկին, որն այն աշխարհ անցնելուց հետո ամենախիստ պատժին է ենթարկվում՝ աստծո տված հիվանդություններից մարդկանց անտեղի և իսպառ ազատելու իր մեղքի պատճառով:

Անկասկած է, որ հեղինակի բազմաբարդ և հիմնական իմաստից հաճախակի շեղումներ պարունակող նախադասությունները, ինչպես նաև ամբողջ աշխատության մեջ ամենուրեք սփռված այն բազմաթիվ կրկնաբանությունները, որոնց ճնշմանը թույլ նյարդեր ունեցող ընթերցողները հազիվ թե դիմանան, խիստ որոշակի նպատակներ են հետապնդում, որոնք նա շարադրել է «Ամենն ամենայնիվ» ընդհանուր վերնագիրը կրող իր աշխատության հենց սկզբում՝ հեղինակի մտահղացման ծրագրային նախաբանում:

Ի սրտե հաջողություն եմ մաղթում այն հայ ընթերցողին, որը կխիզախի անցնել գյուրջիևյան «զառամյալ հերոսի» մտքի և հոգու կամ, ինչպես «ուրիշ խմորից հունցված» իր այդ հերոսի շուրթերով ինքը՝ հեղինակն է ասում, «ընդհանուր լինելիական ներկայության» տիեզերական թռիչք-անկումներով և քարոլորտաշունչ դիտանցումներով:

Տաս գիրք՝ երեք մասից

Առաջին մաս – Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն կամ Բեհեդզերուդի պատմածներն իր թոռանը՝ երեք գրքով

Երկրորդ մաս – Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ՝ երկու գրքով

Երրորդ մաս – Կյանքն իրական է միայն այնժամ, երբ ԵՍ կամ՝ հինգ գրքով

ԱՄԵՆ-ը գրված է տրամաբանական դատողության բոլորովին նոր սկզբունքների հիման վրա և նպատակ ունի լուծելու հետևյալ երեք հիմնարար խնդիրները.

Առաջին մասում՝ ավերել, անխնա կերպով և առանց որևէ զիջողականության, աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի վերաբերյալ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում առկա հավատալիքներն ու հայացքները, որոնք նրա մեջ բույն են դրել Բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում:

Երկրորդ մասում՝ ընթերցողին ծանոթացնել արարչության նոր նյութի և ապացուցել, որ այն ավելի խելամիտ է ու լավորակ:

Երրորդ մասում՝ նպաստել, որ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում գոյանան իրական, ոչ երևակայական պատկերացումներ ոչ այն պատրանքային աշխարհի վերաբերյալ, որ նա զգում է իր շուրջ, այլ իրականում գոյություն ունեցողի:

*«Որևէ մեկը նրանցից, ուլքեր հետաքրքրվում են իմ գրվածքներով,
չպետք է նույնիսկ փորձի դրանք կարդալ այլ հերթականությամբ,
քան նշված է. այլ կերպ ասած, երբեք չպետք է կարդա իմ որևէ
գրվածքը՝ առանց լավ ուսումնասիրած լինելու իմ նախորդ գործերը»:*
Գ. Հ. Գյուրջին

Ընկերական խորհուրդ

(հանպատրաստից գրված է հեղինակի կողմից,
երբ արդեն տպագրության պատրաստ գիրքը
հանձնվում էր հրատարակման)

Իրենց ամբողջ կարդացածի կամ լսածի նկատմամբ ժամանակակից մարդկանց ընկալման արդյունավետության վերաբերյալ արված բազմաթիվ հետևությունների և եզրահանգումների հիման վրա, որոնց հանգել եմ իմ փորձարարական պրպտումների ընթացքում, նաև ելնելով հնուց եկած մի իմաստուն ասույթի գաղափարից, որը հենց նոր մտքիս եկավ, այն է՝ «Ամեն մի աղոթք կարող է լսելի դառնալ Վերին Ուժերին և համապատասխան արձագանքի արժանանալ, եթե այն արտաբերվում է եռակի.

առաջին անգամ՝ ի ողջություն ծնողների կամ նրանց հոգու հանգստության համար,
երկրորդ անգամ՝ ի ողջություն մերձավորի,
և միայն երրորդ անգամ՝ հանուն քեզ»,

անհրաժեշտ եմ համարում լիովին հրատարակման պատրաստ այս գրքի հենց առաջին էջում տալու հետևյալ խորհուրդը. «Իմ յուրաքանչյուր գրավոր շարադրանքը կարդացեք եռակի.

առաջին անգամ՝ հենց այնպես, ինչպես սովոր եք կարդալ բոլոր ժամանակակից գրքերն ու թերթերը,

երկրորդ անգամ՝ այնպես, կարծես բարձրաձայն կարդում եք ուրիշ մեկի համար,
և միայն երրորդ անգամ ջանացեք հասկանալ գրվածքիս բուն էությունը»:

Միայն այդ դեպքում կարող եք ակնկալել, որ ձեր սեփական, միայն ձեզ հատուկ անաչառ կարծիքը կկազմեք իմ գրվածքների վերաբերյալ: Եվ միայն այդ դեպքում կիրականանա իմ հույսը, որ դուք, ձեր ըմբռնմանը համապատասխան, կքաղեք այն առանձնահատուկ օգուտը, որը ես ակնկալում եմ և կամենում ձեզ իմ ողջ էությամբ:

Հեղինակ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա** – Մտածողության արթնացում
Բ – Ներածություն կամ թե ինչու էր Բեհեդզեբուղը հայտնվել մեր արեգակնային համակարգում
Գ – «Քարնակ» տիեզերանավի անկման հապաղման պատճառը
Դ – Անկման օրենքը
Ե – Հարիթոն Հրեշտակապետի համակարգը
Զ – Հավերժական շարժիչ
Է – Լինելիության ճշմարիտ պարտքի գիտակցում
Ը – Հանդուգն պատանի Հասեինը՝ Բեհեդզեբուղի թողը, համարձակվում է մարդկանց «լորձոտներ» անվանել
Թ – Լուսնի առաջացման պատճառը
Ժ – Թե ինչու «մարդիկ» կոչվողները մարդիկ չեն
ՃԱ – Ժամանակակից մարդու յուրօրինակ հոգեկառույցի մի հետաքրքրաշարժ գծի մասին
ՃԲ – Առաջին «որոտները»
ՃԳ – Թե ինչու մարդու բանականությունը երևակայական ընդունում է իրականության տեղ
ՃԴ – Հեռանկարներ, որոնք որևէ լավ բան չեն խոստանում
ՃԵ – Բեհեդզեբուղի առաջին վայրէջքը Երկիր մոլորակ
ՃԶ – Ժամանակի հարաբերականության ըմբռնումը
ՃԷ – Գերանհեթեթություն. Բեհեդզեբուղի պնդմամբ՝ մեր Արեգակը ոչ լույս է տալիս, ոչ ջերմություն
ՃԸ – Գերհրաշալիս
ՃԹ – Բեհեդզեբուղի պատմածը Երկիր մոլորակի վրա իր երկրորդ վայրէջքի մասին
Ի – Բեհեդզեբուղի երրորդ թռիչքը դեպի Երկիր մոլորակ
ԻԱ – Բեհեդզեբուղի առաջին այցը Հնդկաստան
ԻԲ – Բեհեդզեբուղն առաջին անգամ Տիբեթում
ԻԳ – Բեհեդզեբուղի չորրորդ անձնական այցը Երկիր մոլորակ
ԻԴ – Բեհեդզեբուղը դեպի Երկիր է թռչում հինգերորդ անգամ
ԻԵ – Վերևից Երկիր առաքված սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը
ԻԶ – «Իրավիճակի ահավորություն» կոչվող Լեգոմինիզմը՝ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի դատողությունների վերաբերյալ
ԻԷ – Մարդկանց գոյատևման կազմակերպումն Աշխաթա Շիեմաշի կողմից
ԻԸ – Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների բոլոր արգասիքների ոչնչացման գլխավոր մեղավորը

ԳԼՈՒԽ Ա Մտածողության արթնացում

Իմ բոլոր համոզմունքների շարքում, որոնք ձեռք եմ բերել պատասխանատվությամբ լի և անսովոր դասավորված կյանքում ունեցած իմ ընդհանրական ներկայությամբ, կա տարակույս չհարուցող մեկը, ըստ որի՝ երկրի վրա միջոտ և ամենուրեք, մարդկանց հասկացողության տարբեր աստիճանների և այն գործոնների բոլոր ձևերի դրսևորումների պայմաններում, որոնք այլազան գաղափարներ են ծնում իրենց անհատականությունների ներսում, ընդունված է, ինչ-որ նոր բանի առկայության դեպքում, բարձրաձայն կամ, եթե ոչ բարձրաձայն, ապա գոնե մտքում, արտաբերել բոլորին և նույնիսկ անգրագետին հասկանալի այն ասույթը, որը տարբեր դարաշրջաններում տարբեր է ձևակերպվել, իսկ մեր ժամանակներում հնչում է հետևյալ բառերով. «Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, Ամեն»:

Ահա թե ինչու, ձեռնամուխ լինելով ինձ համար բոլորովին նոր այս հղացմանը՝ հեղինակ դառնալուն, սկսում եմ այդ կոչը մեջտեղ բերելով և դա անում եմ ոչ միայն բարձրաձայն, այլ նաև շատ ցայտուն ու լիահունչ, ըստ հինավուրց տուրուզցիների մի բնորոշման՝ «լիովին արտահայտված հնչերանգով» և, իհարկե, այնքան լիահունչ, որքան դա կարող է արտահայտվել իմ ներսում կուտակված և արմատավորված այն տվյալների շնորհիվ, որոնք ընդհանրապես ձևավորվում են՝ մարդու բնույթի մեջ, մասնավորապես՝ նրա նախապատրաստական տարիքում, իսկ ավելի ուշ՝ պատասխանատու կյանքի ընթացքում, տվյալ անհատականությանն օժտելով նման հնչերանգ դրսևորելու բնույթով և ունակությամբ:

Ահա այսպես սկսելով՝ ես արդեն կարող եմ լիակատար հանգիստ լինել և նույնիսկ ներկայիս մարդկանց կրոնական բարոյախոսության տեսակետից՝ առանց դույզն-ինչ կասկածի վստահ, որ իմ այս նոր նախաձեռնության հետագա ողջ ընթացքը կլինի, ինչպես ասում են, «հալած յուղի պես»:

Ամեն դեպքում, ես սկսեցի՝ այդպես, իսկ թե հետագան ինչպիսին կլինի, ես առայժմ միայն կարող եմ ասել «տեսնենք», ինչպես կույրը կասեր...

Նախ և առաջ ես իմ ձեռքը, ավելին՝ աջը, որը թեև մի փոքր վնասվել է վերջերս ինձ հետ պատահած վթարի հետևանքով, այնուամենայնիվ իմ սեփականն է և իմ ողջ կյանքի ընթացքում երբեք ինձ չի դավաճանել, կդնեմ իմ սրտի վրա (որը նույնպես իմ սեփականն է, բայց իմ կազմվածքի այդ հատվածի կայունության կամ անկայունության մասին այստեղ հարկ չեմ համարում շատ ծավալվելու), որից հետո անկեղծորեն կխոստովանեմ, որ ներկա պահին անձամբ ես դույզն-ինչ անգամ ցանկություն չունեմ որևէ բան գրելու, սակայն ինձնից բոլորովին անկախ հանգամանքներ կան, որոնք ստիպում են ինձ դա անել: Այդ հանգամանքները պատահաբար են գոյացել, թե միտումնավոր կերպով ստեղծվել կողմնակի ուժերի կողմից՝ ես ինքս դեռ չգիտեմ: Գիտեմ միայն, որ այդ հանգամանքներն ստիպում են ինձ գրել ոչ թե այնպիսի դատարկ բաներ, որոնք, օրինակ, ընդունված է կարդալ քնելուց առաջ, այլ ծանրակշիռ և ծավալուն հատորներ:

Ինչևէ, ես սկսում եմ...

Բայց ինչի՞ ց...

Գրո՞ղը տանի... Մի՞ թե նորից կկրկնվի այն չափազանց տհաճ և վերին աստիճանի տարօրինակ զգացողությունը, որն ինձ վիճակվեց ապրել մոտավորապես երեք շաբաթ առաջ, երբ մտովի պլան և գաղափարների հերթագայման ծրագիր կազմեցի հրատարակման պատրաստելու համար և չիմացա, թե ինչից սկսեմ:

Այն ժամանակվա այդ զգացողությունը ես կարող եմ հիմա ձևակերպել որպես «սեփական մտքերի գերառատության մեջ թաղվելու երկյուղ»:

Այդ զգացողությունից ազատվելու համար ես այն ժամանակ դեռ կարող էի օգտվել ինչպես ամեն մարդու, այնպես էլ ինձ հատուկ այն վնասակար հատկանիշից, որը մեզ թույլ է տալիս, առանց խղճի խայթ զգալու, այսօրվա գործերը հետաձգել վաղվան: Եվ դա շատ հեշտ կարող էի անել, քանի որ գրելն սկսելուց առաջ այն պատկերացումն ունեի, որ առջևում դեռ շատ ժամանակ կա: Բայց հիմա նման կերպ վարվել չեմ կարող. ես անպայման պետք է սկսեմ, ինչպես ասում են, «թեկուզ ճաքեմ»:

Բայց, իսկապես, ինչի՞ ց սկսել...

Ուռա՞, էվրիկա...

Համարյա բոլոր գրքերը, որոնք ինձ վիճակվել է կարդալ իմ կյանքում, սկսվում են նախաբանով:

Նշանակում է՝ իմ դեպքում նույնպես ես պետք է նման բանով սկսեմ:

Ասում եմ «նման բանով», քանի որ ընդհանրապես իմ կյանքի ընթացքում՝ սկսած այն պահից, երբ տղան աղջկանից սկսել եմ ջոկել, ես միշտ ամեն ինչ, բացարձակապես ամեն ինչ արել եմ ոչ այնպես, ինչպես Բնության բարիքների մնացած ինձ նման երկոտանի ավերողները: Ուստի, ձեռնամուխ լինելով գրելու գործին, ես պետք է (նաև, սկզբունքից ելնելով, պարտավոր եմ) սկսեմ ոչ այնպես, ինչպես մյուս գրողները:

Ամեն դեպքում, նախաբանով սկսելու փոխարեն ես կսկսեմ Նախագգուշացումով:

Նախագգուշացումով սկսելն իմ կողմից խելամիտ քայլ կլինի թեկուզև այն պատճառով, որ դա ո՛չ ֆիզիկապես, ո՛չ հոգեբանորեն, ո՛չ էլ նույնիսկ «կամային» առումով չի հակասի իմ սկզբունքներին: Միաժամանակ դա կլինի լիակատար անկեղծ քայլ, անկեղծ՝ օբյեկտիվորեն, քանի որ ինչպես ես, այնպես էլ ինձ ճանաչողներն անտարակույս վստահությամբ միասին ակնկալում ենք, որ իմ այս գրվածքների շնորհիվ ընթերցողների մեծ մասի մոտ հոդս կցնդի միանգամից (այլ ոչ թե աստիճանաբար, ինչպես վաղ թե ուշ պետք է վիճակվի յուրաքանչյուր մարդու) ամբողջ իրենց կամ ժառանգած, կամ սեփական աշխատանքով ձեռք բերած այն «հարստությունը», որն իր մեջ պարունակում է այնպիսի օրորուն պատկերացումներ, որոնցից միայն միամիտ երագներ կարող են ծնվել, ինչպես նաև պարունակում է իրենց ներկա կյանքի և ապագայի ձեռքբերումների գեղեցիկ տեսարաններ:

Արհեստավարժ գրողները սովորաբար իրենց նախաբանն սկսում են ընթերցողին դիմելով՝ իրենց խոսքը համեմելով ամեն տեսակի փքուն-վերամբարձ, այսպես ասած, «քաղցր» ու «բարձր» դարձվածքներով:

Միայն մի բանում ես կհետևեմ նրանց օրինակին և կսկսեմ նման դիմումով, բայց կաշխատեմ այնպես «քաղցր-մեղք» չլինել, ինչպես նրանք՝ գլխավորապես իրենց վնասակար իմաստականության պատճառով, որով գրգռում են քիչ թե շատ նորմալ ընթերցողի զգայնությունը:

Եվ այսպես...

Իմ շատ սիրելի պատվարժան, վճռական և, իհարկե, շատ համբերատար պարոնայք. իմ շատ հարգելի, հիասքանչ և անաչառ տիկնայք... կներեք, ամենակարևորը բաց թողեցի... և բոլորովին ո՛չ հիստերիկ տիկնայք,

պատիվ ունեմ հայտնելու ձեզ, որ չնայած իմ կյանքի ընթացքի վերջին փուլում ծագած հանգամանքների թելադրանքով ես հիմա պատրաստվում եմ գիրք գրելու, բայց իմ կյանքի նախորդ տարիներին ես երբեք ոչ միայն գիրք կամ զանազան այսպես կոչված «ուսանելի հոդվածներ» չեմ գրել, այլև նույնիսկ նամակներ, որոնցում անպայման, ինչպես ասում են, «քերականությունը» պետք է ապահովվի: Եվ, հետևաբար, թեև հիմա պատրաստվում եմ դառնալու արհեստավարժ գրող, բայց, որևէ փորձառություն չունենալով ընդունված բոլոր արհեստավարժական կանոններից ու հնարքներից, ոչ էլ տիրապետելով, այսպես կոչված, «գրականության լեզվին ու լավ տոնին», ստիպված եմ գրելու ոչ այնպես, ինչպես սովորական «պատենտավորված գրողները», որոնց գրելաոճին դուք, ամենայն հավանականությամբ, այնպես էք վարժվել, ինչպես սեփական հոտին:

Իմ կարծիքով, տվյալ դեպքում դժբախտությունը գլխավորապես այն է, որ դեռևս մանուկ հասակից ձեր մեջ ներարկվել և հիմա ձեր ընդհանուր հոգեկառույցին իդեալական համապատասխանելուն է հասել ամեն մի նոր տպավորություն ընկալելու հրաշալի գործող այն ավտոմատիզմը, որի այդ կարգի «բարեգործության» շնորհիվ դուք հիմա՝ ձեր կյանքի պատասխանատու շրջանում, կարիք չեք զգում որևէ անհատական ջանք գործադրելու:

Անկեղծ ասած՝ իմ այս խոստովանության մեջ անձամբ ես գլխավորը համարում եմ ոչ թե գրողական կանոնների ու հնարքների վերաբերյալ իմ գիտելիքների անբավարարությունը, այլ այն, որ չեմ տիրապետում նշած «գրականության լեզվին ու լավ տոնին», ինչը ժամանակակից կյանքում անպայմանորեն պահանջվում է ոչ միայն գրողներից, այլ նաև բոլոր հասարակ մահկանացուներից:

Ինչ վերաբերում է առաջինին՝ զանազան գրողական կանոնների ու հնարքների վերաբերյալ գիտելիքներիս անբավարարությանը, ապա դա ինձ այնքան էլ չի մտահոգում: Եվ չի մտահոգում այն պատճառով, որ նման «անգրագիտությունն» էլ է արդեն մարդկանց կյանքում ընդունելի բան դարձել: Նման բարեհոգությունը ծագել և այժմ Երկրի վրա ամենուրեք բուռն ծաղկում է ապրում այն նոր ու տարօրինակ հիվանդության հետևանքով, որով վերջին քսան-երեսուն տարիների ընթացքում այս կամ այն պատճառով հիվանդանում է հատկապես բոլոր երեք սեռերի ներկայացուցիչների մեծ մասը,

որոնք քնում են կիսաբաց աչքերով, իսկ երեսները բոլոր առումներով պարարտ հող են ամեն տեսակի պտուկների առաջացման համար:

Այդ տարօրինակ հիվանդության ախտանշանն այն է, որ եթե դրանով հիվանդն ինչ-որ չափով գրագետ է, և նրա բոլոր ռենտաներն էլ կանխավ վճարված են երեք ամիս առաջ, ապա տվյալ սեռի ներկայացուցիչն անհապաղ գրիչ է վերցնում և գրում կա՛մ որևէ «ուսանելի հոդված», կա՛մ ամբողջական մի գիրք:

Լավ տեղյակ լինելով մարդկանց այդ նոր հիվանդության և Երկրի վրա դրա համաճարակային տարածվածության մասին՝ ես, ինչպես դուք կարող եք գլխի ընկնել, իրավունք ունեմ ենթադրելու, որ դուք, ինչպես կասեին գիտուն «բժիշկները», «իմունիտետ» ունեք դրա նկատմամբ, և այդ պատճառով ձեզ չի զայրացնի գրողական կանոններից ու հնարքներից անտեղյակ լինելուս հանգամանքը:

Այս բանի ըմբռնումը ստիպում է իմ զգուշավորության ծանրության կենտրոնը տեղափոխելու գրականության լեզվի իմ չիմացության վրա:

Որպեսզի արդարացնեմ ինքս ինձ, նաև, չեմ բացառում, մեղմեմ ձեր զգոն գիտակցության կողմից այդ լեզվի իմ չիմացության դատափետումը, որն այդքա՛ն անհրաժեշտ բան է համարվում ժամանակակից կյանքում, խոնարհ սրտով և ամոթից կարմրած այտերով հարկ եմ համարում նաև ասելու, որ թեև մանուկ հասակում ինձ ուսուցանել են այդ լեզուն և նույնիսկ ինձ իմ պատասխանատու հասակին նախապատրաստող մերձավոր ավագներից ոմանք, խտրություն չդնելով ահաբեկման միջոցների միջև, մշտապես ստիպում էին ինձ «անգիր անել» բազմաթիվ ու զանազան «նրբահունչ բաներ», որոնց համախումբն էլ գոյացնում է հենց ժամանակակից այդ «անուշ-մեղուշությունը», բայց, ցավոք սրտի (ձեզ համար, իհարկե), այն ամենից, ինչ ես ժամանակին անգիր եմ արել, ոչինչ չի պահպանվել ու չի հասել իմ ներկայիս գրողական գործունեության մատույցներին:

Եվ ոչինչ չի պահպանվել, ինչպես վերջերս ինձ համար պարզ դարձավ, ոչ իմ, ոչ էլ իմ երբեմնի հարգելի կամ ոչ հարգելի ուսուցիչների մեղքով, այլ բոլոր այդ ջանքերն ի դերն են ելել մի անսպասելի և կատարելապես բացառիկ իրադարձության հետևանքով, երբ ես հայտնվում էի Աստծո աշխարհում: Ինչպես բավականին երկար տևած «հոգե-ֆիզիկա-աստղաբաշխական» հետազոտությունից հետո ինձ բացատրեց Եվրոպայում շատ լավ հայտնի մի օկուլտիստ, իմ աշխարհ գալու պահին այն անցքի միջով, որը մեր իսլամ ալժն էր բացել պատուհանի ապակու վրա, ներթափանցել են ձայնային թրթռոններ, որոնք արձակվել են հարևան տանը եղած Էդիսոնի ձայնարկիչից, իսկ տատմոր բերանում այդ ժամանակ գերմանական կոկաինով ներծծված հաբ է եղել (ի դեպ՝ ոչ «Էրզաց»²), որը նա ծծել է այդ հնչյունների տակ առանց հարկ եղած հաճույքի:

Իմ ներկա վիճակն արդյունք է ոչ միայն մարդկանց առօրյա կյանքում այդքան հազվադեպ պատահող այդ իրադարձության, այլ նաև այն բանի, որ հետագա իմ նախապատրաստական և հասուն տարիքում (պետք է խոստովանեմ, որ սա ինքս եմ գլխի ընկել՝ երկար ժամանակ մտորելով գերմանացի պրոֆեսոր հերր Շտուսպգինշմաուգերի մեթոդով), ինչպես բնագրով, այնպես էլ ինքնաբերաբար, երբեմն՝ նույնիսկ գիտակցաբար, միով բանիվ՝ սկզբունքորեն, միշտ խուսափել եմ այդ լեզվից օգտվելուց, երբ հաղորդակցվել եմ ուրիշների հետ: Եվ նման դատարկ կամ գուցե ոչ դատարկ բանի պատճառով ես ինձ այդպես եմ դրսևորել ևս երեք առանձնահատուկ տվյալների շնորհիվ, որոնք իմ կառույցում ձևավորվել են իմ նախապատրաստական հասակում, իսկ թե ինչ տվյալներ են դրանք՝ ես մտադիր եմ ձեզ հայտնի դարձնել իմ գրվածքի հենց այս առաջին գլխում:

Այսպես թե այնպես, այնուամենայնիվ իրական փաստ է՝ բոլոր կողմերից լուսաբանվող ամերիկյան գովազդի պես, կամ փաստ, որը ոչ մի ուժի կողմից այլևս չի կարող փոփոխության ենթարկվել (եթե նույնիսկ այդ ուժն օժտված լինի ըստ «մարտիշկինյան աշխատանքի»³ մասնագիտացված հմտությամբ), այն, որ ես, ում ոչ վաղ անցյալում շատ մարդիկ համարում էին բավականին լավ տաճարային պարուսույց, այժմ ահա դարձել եմ արհեստավարժ գրող և, իհարկե, կգրեմ չափազանց շատ, քանի որ դա ինձ դեռ մանկուց է բնորոշ. երբ ես ինչ-որ բան եմ անում, պետք է անեմ չափազանց շատ: Այնուհանդերձ, քանի որ, ինչպես տեսնում եք, դրա համար չունեմ ինքնաբերաբար ձեռք բերված և ինքնաբերաբար ձևավորված հմտություններ, ես ստիպված կլինեմ

² իսկականին փոխարինող, ոչ լիարժեք ապրանք

³ «мартышкин труд» - ռուսական դարձվածք, նշանակում է անօգուտ, անպտուղ աշխատանք

նոջ մտադրվածս գրի առնել սովորական, հասարակ, կյանքում իր տեղը գտած լեզվով՝ առանց գրական պաճուճանքների ու «քերականական իմաստակություն»:

Սակայն կճուճը դեռ լիքը չէ... Չէ՞ -որ ես դեռ չեմ որոշել, թե ինչ լեզվով պետք է գրեմ:

Թեև ռուսերենով սկսեցի, սակայն, ինչպես կասեր իմաստնագույն Խոջա Նասրեդինը, այդ լեզվով շատ հեռու չես գնա:

Մոլլա Նասրեդինը, որին նաև Խոջա Նասրեդին են ասում, կարծես թե այնքան էլ հայտնի չէ Եվրոպայում և Ամերիկայում, բայց լավ հայտնի է ասիական աշխարհամասի բոլոր երկրներում. այդ առասպելական կերպարը համապատասխանում է ամերիկյան քեռի Սեմին կամ գերմանական Թիլ Ուլենշպիգելին: Այդ Նասրեդինին են վերագրվել և այժմ էլ շարունակում են վերագրվել Արևելքում տարածում ստացած շատ պատմություններ, որոնք նման են իմաստախոսությունների: Դրանց մի մասը շատ հնուց է գալիս, որոշներն էլ սկիզբ են առել ոչ շատ վաղ անցյալում:

Ռուսերենը, չի կարելի ժխտել, շատ լավ լեզու է: Այն նույնիսկ ինձ դուր է գալիս, բայց... միայն այնքանով, որ դրանով կարելի է լավ անեկդոտներ փոխանակել կամ դրանից օգտվել, երբ հարկ է լինում անդրադառնալու որևէ մեկի ծագումնաբանության խնդրին:

Ռուսերենը նման է անգլերենին, որը նույնպես շատ լավ լեզու է, բայց միայն այն բանի համար, որ «ծխարաններում» կամ բազմոցին նստած մի ոտդ մյուսի վրա գցես ու գրուցես ավստրալական սառեցրած մսի կամ հնդկական հարցի շուրջ:

Այդ երկու լեզուները նման են մի կերակրատեսակի, որին Մոսկվայում «սոլյանկա» են անվանում և դրա մեջ լցնում ինձնից ու ձեզնից բացի ամեն ինչ, որի տակ կարող եք ներառել, ըստ էության, ամեն բան, ինչ մտքներովդ կանցնի, նույնիսկ Շեհերեզադեի «հետճաշյան չեմշուն»:

Հարկ է նշել նաև, որ, շնորհիվ իմ պատանեկության պատահական, գուցե ոչ պատահական հանգամանքների դասավորության, ինձ վիճակվել է սովորել, ընդ որում՝ լրջորեն և, իհարկե, մշտապես ինքս ինձ ստիպելով, խոսել, կարդալ ու գրել բազմաթիվ լեզուներով և այնքան վարժ, որ հիմա հնարավոր է, որ կկարողանայի գրել դրանցից յուրաքանչյուրով, եթե ճակատագրի կողմից անսպասելիորեն ինձ պարտադրված այս մասնագիտության մեջ ես չորոշեի չօգտվել իմ այդ գործնական ճանապարհով ձեռք բերած «ավտոմատիզմից»:

Իսկ եթե ձգտեի խելամտաբար օգտվել իմ այդ մեխանիկորեն ձեռք բերված ավտոմատիզմից, որը դյուրին է դարձել երկարատև գործառնությունների շնորհիվ, ապա պետք է գրեի կամ ռուսերեն, կամ հայերեն, քանի որ կյանքիս վերջին քսան-երեսուն տարիների հանգամանքները եղել են այնպիսին, որ ուրիշների հետ հաղորդակցվել եմ հատկապես այդ երկու լեզուներով և, հետևաբար, դրանցով առավել շատ գործնական փորձառություններ եմ անցել, որպեսզի դրանց տիրապետեմ ավտոմատիզմի աստիճանի:

Գրո՞ղը տանի... Նույնիսկ այս դեպքում նորմալ մարդու համար անսովոր իմ յուրահատուկ հոգեկառույցի մի կողմն ահա սկսում է տանջել ամբողջին:

Եվ համարյա ձերունական տարիքում ինձ հասած այս դժբախտության գլխավոր պատճառն այն փաստի հետևանքն է, որ մանուկ հասակում իմ յուրահատուկ հոգեկառույցի մեջ բազմաթիվ այլ թափելու բաների հետ մեկտեղ, որոնք պիտանի չեն ժամանակակից կյանքում, ներմուծվել է ևս մի անքակտելի հատկանիշ, որը միշտ և ամեն ինչում ինքնաբերաբար իմ ամբողջ կառույցին ստիպում է վարվել այնպես, ինչպես ժողովրդական իմաստությունն է թելադրում:

Ներկա դեպքում, ինչպես միշտ լինում է կյանքի՝ դեռևս իրենց ավարտին չհասած նմանատիպ դեպքերում, իմ մտքում (որն իմ պարագայում անհաջող է կառուցված հեզնասիրության առումով, և հիմա, ինչպես ընդունված է ասել, ծայրեծայր «ներծծված է» դրանով) անմիջապես հառնեց ժողովրդական իմաստության այն ասույթը, որը գոյություն է ունեցել դեռևս հինավուրց մարդկանց օրոք և հասել մինչև մեր օրերը՝ ստանալով հետևյալ բառային տեսքը. «Ամեն մահակ միշտ երկու ծայր է ունենում»:

Եթե սկզբում փորձ արվի հասկանալու այդ տարօրինակ բառային ձևակերպման մեջ թաքնված հիմնական միտքն ու ճշմարիտ իմաստը, ապա ամեն մի քիչ թե շատ առողջ մտածողություն ունեցողի գիտակցության մեջ նախ և առաջ, իմ կարծիքով, պետք է ծագի ենթադրություն, որ բոլոր այն գաղափարների բազմության մեջ, որոնց վրա հիմնված է և որոնցից պետք է բխի այդ ասույթի

⁴ չադրա

խորհմաստ լինելը, ընկած է երկար դարերի ընթացքում մարդկանց հասու դարձած այն ճշմարտությունը, համաձայն որի մարդու կյանքում պատահած ամեն մի պատճառ, ինչպիսի երևույթներից էլ այն ծագած լինի, որպես այլ պատճառից ծնված երկու հակադիր հետևանքներից մեկը, իր հերթին անպայմանորեն ծնում է երկու կատարելապես իրար հակադիր հետևանքներ: Այսպես, օրինակ, եթե «ինչ-որ բան», որն ստացվել է երկու իրարից տարբեր պատճառներից, լույս է ծնում, ապա այդ բանն անխուսափելիորեն պետք է ծնի նաև իրեն հակադիր երևույթը, այսինքն՝ խավար. կամ այն գործոնը, որը կենդանական նյութի օրգանիզմում բավարարվածության զգալի ազդակ է ծնում, ապա անպայմանորեն ծնում է նաև անբավարարվածություն և, իհարկե, նմանապես զգալի, և այլն, և այլն, միշտ և ամեն ինչում:

Կիրառենք հենց այդ նշածս դեպքի համար սույն ժողովրդական իմաստությունը, որը ձևավորվել է դարերի ընթացքում և արտահայտվել մահակի կերպարով, որը, ինչպես ասվում է, իսկապես երկու ծայր ունի, որոնցից մեկը համարվում է լավ ծայր, իսկ մյուսը՝ վատ: Իմ դեպքում, եթե օգտվեմ վերը նշածս ավտոմատիզմից, որը ձեռք եմ բերել երկարատև գործնական փորձառության շնորհիվ, ապա անձամբ ինձ համար դա, իհարկե, շատ լավ կլինի, սակայն, համաձայն այդ ասության, ընթերցողի համար կստացվի բոլորովին հակառակ արդյունքը. իսկ թե որն է լավի հակառակը, պետք է որ ամեն ոք շատ լավ հասկանա, նույնիսկ թուրքով չտառապողը:

Կարճ ասած, եթե ես, իմ արտոնությունից օգտվելով, իմ ձեռքը վերցնեմ մահակի լավ ծայրը, ապա վատ ծայրն անխուսափելիորեն կկոտրվի «ընթերցողի գլխին»:

Դա իսկապես կարող է տեղի ունենալ, քանի որ ռուսերենով հնարավոր չէ արտահայտել փիլիսոփայական հարցերի, այսպես կոչված, «նրբությունները», ինչպիսիք ես մտադիր եմ բավականին լիարժեք կերպով արծարծել իմ գրվածքներում: Թեև հայերենով այդ բանը հնարավոր է անել, սակայն, ի դժբախտություն ժամանակակից հայերի, ժամանակակից հասկացությունների կիրառությունն այդ լեզվում արդեն դարձել է լիովին անիրագործելի խնդիր:

Որպեսզի մեղմեմ ներքին վիատության առաջ բերած դառնությունը, պետք է ասեմ, որ վաղ պատանեկության շրջանում, երբ ես հետաքրքրված ու շատ կլանված էի բանասիրական հարցերով, հայերենը գերադասում էի իմ իմացած բոլոր լեզուներից, նույնիսկ իմ մայրենի լեզվից:

Ես այն ժամանակ սիրում էի հայերենը գլխավորապես այն պատճառով, որ այն ինքնատիպ էր և ոչ մի ընդհանուր բան չուներ հարևան ու ազգակից լեզուների հետ:

Ինչպես ասում են գիտուն բանասերները, այդ լեզվի բոլոր «տոնայնությունները» հատուկ են միայն իրեն, և նույնիսկ, ըստ իմ այն ժամանակվա հասկացողության, այն լիովին համապատասխանում է հայագրի մարդկանց հոգեկառույցին:

Սակայն վերջին երեսուն կամ քառասուն տարիների իմ դիտումները ցույց են տալիս, որ այդ լեզվում այնպիսի փոփոխություններ են տեղի ունեցել, որ հեռավոր դարերի խորքից ուրույն և անաղարտ կերպով մեզ հասած այդ լեզուն արդեն դարձել է այնպիսին, որ առանձնահատուկ և ինքնուրույն լինելով հանդերձ՝ վերածվել է, եթե կարելի է այսպես ասել, տարբեր լեզուների խառնուրդից ստացված մի խեղկատակության, որի հնչերանգների ողջ համախումբը, եթե հասնում է քիչ թե շատ գիտակից ու հասկացող մարդու ականջին, հնչում է այնպես, ինչպես թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն, քրդերեն և ռուսերեն բառերի տոնային մի խառնուրդ՝ գումարած «դժվարամարս» ու անհողաբաշխ աղմուկներ:

Համարյա նույնը կարելի է ասել նաև իմ մայրենի լեզվի՝ հունարենի վերաբերյալ, որով խոսել եմ իմ մանկության տարիներին և, եթե կարելի է այսպես ասել, դեռևս պահպանում եմ իմ մեջ այդ լեզվի «ինքնաբերական ասոցիատիվ ուժի համը»: Կարծում եմ, հիմա կկարողանայի այդ լեզվով արտահայտել այն ամենը, ինչ ուզում եմ, բայց գրվածքիս համար այն չեմ կարող գործածել այն պարզ ու բավականին ծիծաղաշարժ պատճառով, որ ինչ-որ մեկը պետք է հետո արտագրի իմ գրածը և դրանք թարգմանի այլ լեզուների: Իսկ ո՞վ կարող է դա անել...

Վստահությամբ կարելի է ասել, որ ժամանակակից հունարենի ամենալավ մասնագետն անգամ պարզապես ոչինչ չէր հասկանա այն ամենից, ինչ ես կգրեի մանուկ հասակում յուրացրած իմ մայրենի լեզվով, քանի որ իմ սիրելի, եթե կարելի է այսպես կոչել, «հայրենակիցները», նույնպես համակված լինելով նաև իրենց լեզվով ժամանակակից քաղաքակրթության ներկայացուցիչներին նմանվելու ցանկությամբ, այս վերջին երեսուն-քառասուն տարում վերափոխել են իրենց լեզուն ճիշտ այնպես, ինչպես հայերն իրենցը՝ ձգտելով դասվել ռուս մտավորականության շարքը:

Այն հունարենը, որի ոգին ու էությունը փոխանցվել են ինձ ժառանգաբար, և այն լեզուն, որով հիմա խոսում են ժամանակակից հույները, նման են իրար այնքան, որքան «մեխը հոգեհանգստին», ինչպես կասեր Մոլլա Նասրեդինը:

Ի՛նչ անել հապա...

Է՛, գրողը տանի, առանձնապես ոչի՛նչ, ո՛վ, իմ իմաստակությունների հարգարժան գնո՛րդ: Ֆրանսիական արմանյակն ու «խազարյան»⁵ բաստուրման» եթե պակասություն չանեն, ապա ես էլք կգտնեմ նույնիսկ այս դժվարին իրավիճակից:

Դրանում ես մեծ փորձ ունեմ:

Կյանքում այնքան հաճախ եմ հայտնվել դժվարին իրավիճակներում և դուրս եկել դրանցից, որ դա համարյա սովորություն է դարձել ինձ համար:

Առայժմ կգրեմ մասամբ ռուսերեն և մասամբ էլ հայերեն, առավել ևս, որ մշտապես «իմ շուրջը պտտվող» մարդկանց մեջ կան մի քանիսը, որոնք քիչ թե շատ «գլուխ հանում են» այդ երկու լեզվից, ուստի ես առայժմ հույս եմ փայփայում, որ նրանք բավականին լավ կարտագրեն և կթարգմանեն այդ լեզուներով գրածներս:

Ամեն դեպքում ես նորից եմ կրկնում, որպեսզի դուք լավ հիշեք՝ ոչ այն բաների պես, որոնց հիման վրա սովոր եք ուրիշներին կամ հենց ինքներդ ձեզ տրված խոսքը պահել. անկախ իմ օգտագործած լեզվից՝ միշտ և ամեն ինչում ես կխուսափեմ այն բանից, ինչը ես անվանեցի «լավ տոնով գրականության լեզու»:

Այդ առումով չափազանց հետաքրքրաշարժ և վերին աստիճանի (ավելի բարձր աստիճանի, քան դուք եք կարծում) ձեր հետաքրքրասիրությանն արժանի փաստ է այն, որ վաղ մանկությունից, այսինքն այն օրից սկսած, երբ ծտերի բները քանդելու և ընկերներիս քույրերի հոգիների հետ խաղալու պահանջ էի զգում, իմ «մուրակային մարմնում», ինչպես դա անվանել են հին թեոսոֆները, և, չգիտես ինչու, գլխավորապես դրա «աջ կեսում» ծագել է բնագործին-ինքնաբուխ մի զգացողություն, որն իմ կյանքի հենց այն շրջանում, երբ պարուսույց եմ դարձել, աստիճանաբար որոշակիացել է որպես ուրույն զգացմունք, իսկ հետո, երբ նույն այդ մասնագիտության բերումով շփվել եմ բազմաթիվ ու տարբեր «տիպի» մարդկանց հետ, իմ «բանականություն» ասվածի մեջ սկսել է նաև համոզմունք ձևավորվել, որ այդ լեզուները մարդիկ են կազմավորել կամ, ավելի ճիշտ՝ «քերականները», որոնք տվյալ լեզվի իրենց իմացությամբ նման են այն երկոտանի կենդանիներին, որոնց պատվարժան Մոլլա Նասրեդինը բնորոշում է հետևյալ բառերով. «Նրանք դրանից այնքան են հասկանում, որքան խոզերը նարնջից»:

Մեզ հետ ապրող նման մարդիկ, որոնք վերածվել են մեր նախնիների ու ժամանակի կողմից ստեղծված ու մեզ ավանդված ամեն բարիք փչացնող, այսպես ասած, «ցեցերի», ոչ մի գաղափար չունեն և, հնարավոր է, նույնիսկ երբեք չեն լսել այն աչք ծակող ու ակնհայտ փաստի մասին, որ նախապատրաստական տարիքում ամեն մի էակի ու նաև մարդու ուղեղի գործունեության ընթացքում ձեռք է բերվում որոշակի մի յուրահատկություն, որի ինքնաբերական առարկայացումն ու դրսևորումը հինավուրց կորկոլաններն անվանել են «նմանազգացության օրենք», չեն լսել նաև այն մասին, որ ամեն մի նյութի և հատկապես մարդու մտածողությունն ընթանում է բացառապես այդ օրենքին համապատասխան:

Կապված այն բանի հետ, որ այստեղ պատահաբար անդրադարձա մի հարցի, որին, այսպես ասած, «պինդ կպել էի» ոչ վաղ անցյալում, այն է՝ մարդկային մտածողությանը, հնարավոր եմ համարում այդ հարցը լուսաբանել հենց հիմա, այս առաջին գլխում՝ նախքան դրա համար իմ կողմից նախատեսված տեղին հասնելը, որպեսզի գոնե ինչ-որ բան ասած լինեմ պատահաբար ինձ հայտնի դարձած նախադրույթի վերաբերյալ, ըստ որի՝ Երկրում անցած դարերի ընթացքում ընդունված է եղել, որ ցանկացած մարդ, ով հանդգնում է ուրիշների և իր իսկ կողմից համարվել «գիտակից մտածող էակ», իր պատասխանատու գոյության հենց առաջին տարիներին պետք է տեղեկացած լինի այն մասին, որ մարդ արարածն ընդհանուր առմամբ օժտված է երկու տեսակի մտածողությամբ. առաջին տեսակն այն է, երբ մարդ մտածում է բառերով, որոնք միշտ հարաբերական իմաստ են ունենում, իսկ մյուս տեսակն այն է, որը բնորոշ է ինչպես մարդուն, այնպես էլ բոլոր կենդանիներին, և որը ես կանվանեի «պատկերային մտածողություն»:

⁵ ռուսերեն տարբերակում՝ «хайзарьян», անգլերեն տարբերակում՝ Khaizarian

Մտածողության երկրորդ տեսակը՝ «պատկերային մտածողությունը», որի օգնությամբ, խստորեն ասած, նաև պետք է ըմբռնվի և արդեն ձեռք բերած տեղեկությունների հետ գիտակցական համադրության միջոցով յուրացվի ամբողջ գրվածքի ճշգրիտ իմաստը, մարդկանց մոտ ձևավորվում է՝ կախված աշխարհագրական վայրից, կլիմայական և ժամանակային պայմաններից և, ընդհանուր առմամբ, այն ամբողջ շրջապատից, որում հայտնվել է տվյալ մարդը և հասել իր գոյության հասուն տարիքին:

Ըստ այդմ, տարբեր ռասաների ներկայացուցիչները, որոնք ապրում են տարբեր պայմաններում և տարբեր աշխարհագրական վայրերում, միևնույն իրի կամ գաղափարի վերաբերյալ իրենց ուղեղներում ունենում են մի քանի բոլորովին անկախ պատկերներ, որոնք ուղեղի գործունեության ընթացքում, այսինքն՝ նմանազգացությամբ, իրենց էության ներսում ստանում են այս կամ այն զգացողությունը, որով որոշակի պատկերացում է գոյանում, իսկ այդ պատկերացումն էլ իր հերթին արտահայտվում է այս կամ այն բառով, որն ընդամենը դրա արտաքին, սուբյեկտիվ դրսևորումն է լինում:

Այդ իսկ պատճառով, ամեն մի բառ, որը համապատասխանում է որևէ իրի կամ գաղափարի, տարբեր ռասաների պատկանող կամ տարբեր աշխարհագրական վայրերում ապրող մարդկանց համար համարյա միշտ ձեռք է բերում խիստ որոշակի ու մյուսներից բոլորովին տարբեր, այսպես ասած, «ներքին բովանդակություն»:

Այլ խոսքերով ասած՝ եթե այս կամ այն տարածքում ձևավորված մարդու ներքին կառույցում առանձնահատուկ տեղային ազդեցությունների ու տպավորությունների արդյունքում կազմավորվել է ինչ-որ մի «մտապատկեր», որն ըստ նմանազգացության նրա ներսում առաջացնում է որոշակի «ներքին բովանդակության» զգացողություն և, հետևաբար, որոշակի տեսարանի կամ որոշակի հասկացության զգացողություն, որի համար նա ի վերջո օգտագործում է իր համար սովորական դարձած և, ինչպես նշեցի, սուբյեկտիվ բնույթ կրող այս կամ այն բառը, ապա մի ուրիշը, լսելով նրանից այդ բառը և իր ներսում ձևավորված ունենալով մի այլ «ներքին բովանդակությամբ» մտապատկեր, միշտ կընկալի և, իհարկե, անխուսափելիորեն կհասկանա այդ նույն բառը բոլորովին այլ իմաստով:

Այդ փաստն, իմիջիայլոց, կարելի է լիովին պարզորոշ ի հայտ բերել, եթե ուշադիր և անկողմնակալ կերպով կարծիքների փոխանակություն դիտվի երկու անձերի միջև, որոնք պատկանում են տարբեր ժողովուրդների կամ ծնվել ու ձևավորվել են տարբեր աշխարհագրական վայրերում:

Եվ այսպես, ո՞վ, իմաստակություններիս անվիատ ու ինքնավստահ հավանական գնորդ, նախազգուշացնելով քեզ, որ պատրաստվում եմ գրել ոչ այնպես, ինչպես սովորաբար գրում են «արհեստավարժ գրողները», այլ բոլորովին այլ կերպ, նաև խորհուրդ եմ տալիս, որ, նախքան հետագա գրվածքներս կարդալուն ձեռնամուխ լինելը, լրջորեն կշռադատես և նոր անցնես այդ գործին: Հակառակ դեպքում ես երկյուղ եմ կրում քո լսողության և մյուս զգայարանների համար, որոնք երևի այնքան հիմնովին են վարժվել ներկա ժամանակաշրջանում Երկրի վրա գոյություն ունեցող «ինտելիգենտական գրականության լեզվին», որ իմ գրվածքները կարող են քեզ թվալ շատ ու շատ անբարեհունչ. իսկ դրա արդյունքում գիտե՞ս, թե ինչո՞ւ կարող ես կորցնել... Միրածո կերակուրն ուտելու ցանկությունը և կարծիքդ քո հոգևոր բացառիկության մասին, որն ամենից շատն է գրգիռ տալիս քո «ներսին» և իսկույն տպվում դեմքիդ, հենց որ սևահեր հարևանուհիդ հայտնվում է քո տեսադաշտում:

Որ այդպիսի հետևանք կարող է թողնել իմ լեզուն, ավելի ճիշտ՝ իմ մտածելակերպը, անցյալի բազմակի փորձերիս արդյունքում իմ ողջ էությամբ ես արդեն համոզված եմ ճիշտ այնպես, ինչպես «զտարյուն ավանակն» է համոզված իր համառության իրավացիության ու օրինականության մեջ:

Հիմա, երբ զգուշացրի քեզ ամենազվազվորից, հետագա ամեն ինչի համար ես արդեն հանգիստ եմ: Նույնիսկ եթե ինչ-որ թյուրիմացություն ծագի իմ գրվածքների շուրջ, ապա դրա համար միայն դու մեղավոր կլինես, իսկ իմ խիղճը հանգիստ կլինի այնպես, ինչպես, ասենք... փոխկանցլեր Վիլհելմինը:

Ամենայն հավանականությամբ դու հիմա մտածում ես, որ ես, իհարկե, երիտասարդ եմ՝ հաճելի արտաքինով և, ինչպես ոմանք են արտահայտվում, «կասկածելի ներքինով», և որ, սկսնակ լինելով գրողական գործում, ես, ըստ երևույթին, դիտմամբ ջանում եմ «ինքնատիպ» երևալ, որպեսզի փառքի արժանանամ և այդ եղանակով փող վաստակեմ:

Եթե դու իրոք այդպես ես մտածում, ապա շատ ու շատ սխալվում ես:

Նախ ասեմ, որ երիտասարդ չեմ. ես արդեն այնքան եմ ապրել, որ, ինչպես ասում են, «անցել եմ հրի, ջրի և պղնձե փողերի միջով», և երկրորդ՝ ես ոչ կարիերայի համար եմ գրում, ոչ էլ այն բանի համար, որ, ինչպես ասում են, «ոտքերիս տակ ամուր հող ունենամ» այդ մասնագիտության շնորհիվ: Վերջինիս վերաբերյալ հարկ եմ համարում ավելացնել, որ, իմ կարծիքով, դրանով զբաղվողն ուղիղ ճանապարհով «Դժոխք» գնալու թեկնածու է դառնում (ենթադրելով, իհարկե, որ նման գործով զբաղվողներն ընդհանուր առմամբ իրենց լինելիությամբ ունակ են հասնելու այդ աստիճանի կատարելության) այն պատճառով, որ իրենք, բացարձակապես ոչինչ չիմանալով, գրում են զանազան «ճոճոռան խոսքեր» և դրանով իսկ հեղինակություն վաստակում. իսկ դա երևի թե այն գլխավոր գործոններից մեկն է, որոնք, տարեցտարի կուտակվելով, թուլացնում են մարդկանց առանց այդ էլ բավականին թուլացած հոգեկան ներաշխարհը:

Իսկ ինչ վերաբերում է իմ անձնական կարիերային, ապա ասեմ, որ բոլոր վերին ու ստորին, եթե կուզեք՝ նաև աջ ու ձախ, ուժերի շնորհիվ ես վաղուց արդեն «ոտքերիս տակ ամուր հող ունեմ», և ոտքերս էլ շատ պինդ են. ավելին ասեմ՝ վստահ եմ, որ դեռ շատ տարիներ պինդ կլինեն՝ ի հեճուկս իմ անցյալ, ներկա և ապագա թշնամիների:

Հա՛, մեկ էլ կարծում եմ, որ արժե ձեզ պատմել հենց նոր իմ խելառ ուղեղում ծագած մի գաղափարի մասին, այն է՝ կլինդրեմ հրատարակչին, որին պետք է հանձնեմ իմ առաջին գիրքը, որ նա տպի առաջին գլուխն այնպես, որպեսզի ամեն ոք կարողանա այն կարդալ՝ առանց բուն գրքի էջերը կտրելու, երբ իմանա, որ այն սովորական հանգով չի գրված, այսինքն այնպես, որ օգնի հեշտ ու հանգիստ հուզախառն տեսարաններ ու օրոքուն երազներ մտակառուցել. նման դեպքում, եթե ընթերցողն ուզում է, առանց մի խոսքի կարող է գիրքը հետ տալ գրավաճառին և հետ ուզել իր փողը, որն ինքը գուցե վաստակել է ճակատի քրտինքով:

Ես սա անպայման կանեմ, առավել ևս այն պատճառով, որ այս պահին կրկին հիշեցի անդրկովկասցի քրդի հետ պատահած դեպքը՝ մի պատմություն, որը ես լսել եմ վաղ պատանեկությանս տարիներին, իսկ վերջին տարիներին, երբ համապատասխան դիպվածների բերումով հիշում եմ այն, իմ ներսում կայուն ու անմար մի քնքշություն է ծլում: Կարծեմ եմ, որ թե՛ ինձ, թե՛ ձեզ համար շատ օգտակար կլինի, եթե որոշ մանրամասներով հիմա պատմեմ այդ պատմությունը:

Օգտակար կլինի գլխավորապես այն պատճառով, որ արդեն որոշել եմ այդ պատմությունը որպես «աղ» օգտագործել կամ, ինչպես ժամանակակից հրեա գործարարը կասեր, «ցիմես» անել, որպես նոր գրական ձևի հիմնական սկզբունքներից մեկը՝ այն նպատակին հասնելու համար, որը հիմա իմ առջև դրել եմ իմ այս նոր մասնագիտությամբ:

Այս անդրկովկասցի քուրդը մի անգամ իրենց գյուղից իրեն հայտնի ինչ-որ գործով քաղաք է գնում և այնտեղ շուկայում կանգ առնում մրգավաճառի՝ տարատեսակ ու գեղեցիկ շարված մրգերով լի կրպակի առաջ:

Նրա ուշադրությունը գրավում է մի «միրգ», որի թե՛ գույնը, թե՛ ձևը շատ սիրուն են երևում իրեն: Երևակայությունն այնպես է գրգռվում, ախորժակն էլ՝ իր հերթին, որ թեն գրպանում համարյա փող չի ունենում, որոշում է Մայր Բնության այդ բարիքից գոնե մի հատ գնել և համտես անել:

Եվ ահա, խիստ անհամբեր և իրեն ոչ բնորոշ խիզախությամբ, նա մտնում է կրպակ, կոշտուկապատ մատը մեկնում դեպի իր երևակայությունը շարժած «միրգը» և մրգավաճառից հարցնում դրա գինը: Մրգավաճառն ասում է, որ դրա մի ֆունտն⁶ արժե երկու կոպեկ:

Գտնելով, որ այդ հիասքանչ «միրգը» բոլորովին էլ թանկ չէ, մեր քուրդը որոշում է մի ֆունտ դրանից գնել:

Քաղաքում գործերն ավարտելով՝ հենց այդ նույն օրը քուրդը կրկին ոտքով ճամփա է ընկնում դեպի իրենց գյուղը:

Մայրամուտին, երբ մեր քուրդն անցնում էր սար ու ձորով, կամա-ակամա նրա աչքը շոյում էին Մեծ Բնության՝ Ամենքիս Մոր գրկի գեղատեսիլ մասերը, ակամա մաքուր օդ էր շնչում, որն աղտոտված չէր արդյունաբերական քաղաքների արտազատումներով, ուստի, բնականաբար, հանկարծ ցանկություն զգաց իրեն հաճույք պատճառել նաև սովորական սննդի միջոցով. նստեց ճամփի եզրին, խուրջինից հաց հանեց ու իր գնած «միրգը», որն այնքան հավանել էր, և անշտապ սկսեց ուտել:

⁶ 1 ֆունտ(անգլ.) = 453.6 գ

Բայց, ո՞վ սարսափ... Շատ շուտով նրա ամբողջ ներսը սկսեց վառվել: Այնուամենայնիվ շարունակեց ուտել:

Եվ մեր հարազատ մոլորակի այդ թշվառ երկոտանի էակը շարունակեց ուտել՝ շնորհիվ առանձնահատուկ, մարդուն բնորոշ և իմ կողմից հիշատակված այն հատկանիշի, որի սկզբունքը ես մտադրվեցի, որոշելով այն դնել իմ ստեղծած նոր գրական ձևի հիմքում, դարձնել, այսպես ասած, «ուղեցույց աստղ», որն ինձ կհասցնի այն նպատակին, որի էությունն ու նշանակությունը, ես վստահ եմ, ձեզ հասու կդառնա (իհարկե, կախված ձեր ըմբռնողականության աստիճանից) իմ գրվածքի ցանկացած հաջորդական գլուխը կարդալու ընթացքում, եթե, իհարկե, խիզախեք շարունակել կարդալը (կամ էլ, հնարավոր է՝ գուցե հենց այս գլխի վերջում դուք արդեն ինչ-որ բանի «հոտն առած կլինեք»):

Եվ ահա, այն պահին, երբ մեր քրդին անսովոր զգացողություններ էին պատել, որոնք նրա ներսում ծագել էին Բնության գրկում տեղի ունեցած արտասովոր ընթրիքի հետևանքով, այդ նույն ճանապարհով անցնում է շատ խելացի ու բանիմաց մարդու համարում ունեցող նրա համագյուղացին, որը տեսնելով, որ մեր քրդի քթից մուխ է դուրս գալիս, աչքերից էլ արցունքներ են ցայտում, բայց, անկախ այդ ամենից, կարևոր պարտականություն կատարելու պես, խեղճը շարունակում է կարմիր պղպեղ ուտել, ասում է.

– Այդ ի՞նչ ես անում, երիքովյա՛ն ավանակ, ախր ողջ-ողջ կայրվես... Մի՛ կեր այդ տարօրինակ բույսը, որն այդքան խորթ է քեզ համար:

Բայց մեր քուրդը պատասխանեց.

– Չէ՛, աշխարհում ոչինչ ինձ չի կանգնեցնի, մեկ է, պիտի ուտե՛մ: Ախր, ունեցածս վերջին երկու կոպեկով եմ առել... Նույնիսկ եթե հոգիս մարմնիցս դուրս գա ու երկինք թռչի, միևնույնն է, կշարունակեմ ուտել:

Այս ասելուց հետո էլ մեր անընկճելի քուրդը (ստիպված ենք, իհարկե, ընդունել, որ նա այդպիսին էր) կանգ չառավ, այլ նորից շարունակեց հատ-հատ ուտել կարմիր տաքդեղի սուրքիթ կոները:

Այն բանից հետո, ինչը հենց նոր իմացար, հույս ունեմ, որ քո մտածողության մեջ, հնարավոր է, կծագի համապատասխան նմանազգացություն, որը, ինչպես երբեմն լինում է ժամանակակից մարդկանց հետ, ի վերջո քո ներսում կհանգեցնի մի բանի, որին սովորաբար հասկանալ են կոչում, և ներկա դեպքում դու կհասկանաս, թե ես ինչու, լավ իմանալով, որ մարդուն բնորոշ է (ինչի համար ես հաճախ կարեկցում եմ նրան) մի հատկանիշ, որի անխուսափելի դրսևորումն այն է լինում, որ եթե ինչ-որ բանի համար փող է ծախսում, ապա պետք է այդ բանն օգտագործի մինչև վերջ, այնուհանդերձ ամբողջ իմ կառույցով ոգևորվեցի իմ մտածողության մեջ ծագած այն գաղափարով, որ պետք է ձեռնարկեմ բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի դու, ո՞վ «ախորժակով ու հոգով իմ եղբայրակի՛ց», եթե պարզվի, որ թեև արդեն սովորել ես կարդալ ամեն տեսակի գրքեր, բայց դրանք բոլորն անխտիր գրված են եղել վերը նշածս «ինտելիգենտական լեզվով», փող ես ծախսել, որ ձեռք բերես իմ գրվածքը, բայց հետո պարզել ես, որ այն գրված չէ սովորական, հարմարավետ ու հեշտ կարդացվող լեզվով, ստիպված չլինես մարդուն բնորոշ այն հատկանիշի հետևանքով, որի մասին վերը նշեցի, ամեն գնով իմ գրվածքը կարդալ մինչև վերջ՝ անդրկովկասցի այն խեղճ քրդի պես, որն ստիպված շարունակում էր ուտել մի բան, որն իրեն միայն արտաքին տեսքով էր դուր եկել, և բոլորովին ցանկություն չուներ «կատակ անելու» ազնվացեղ կարմիր տաքդեղի հետ:

Եվ ըստ այդմ, որպեսզի որևէ թյուրիմացություն չծագի այդ հատկանիշի պատճառով, որի գծերը ժամանակակից մարդու մոտ ձևավորվում են, ըստ երևույթին, հաճախակի կլինո գնալուց, նաև այն պատճառով, որ նա երբեք հակառակ սեռի ներկայացուցչի ձախ աչքի շարժին հետևելու առիթը չի փախցնում, ես ուզում եմ, որ իմ գրվածքի այս սկզբնական գլուխը տպվի վերը նշածս ձևով՝ այնպես, որ ամեն ոք կարողանա այն կարդալ, առանց կտրելու բուն գրքի էջերը:

Հակառակ դեպքում գրավաճառը կսկսի, ինչպես ասում են, «կոտրատվել» և անպայման իրեն կպահի բոլոր գրավաճառների հիմնական սկզբունքին համապատասխան, որը ձևակերպվում է հետևյալ կերպ. «Դու ձկնորս չես համարվի, այլ տխմարի մեկը, եթե թույլ տաս, որ արդեն խայծը կով տված ձուկը ձեռքից փախչի», նա կիրաժարվի հետ վերցնել գիրքը, որի էջերը կտրել ես: Ես բոլորովին չեմ կասկածում, որ դա հնարավոր բան է. իրոք որ՝ նման անխղճության դրսևորում գրավաճառներից կարելի է սպասել:

Իսկ գրավաճառների անխղճության նկատմամբ իմ այս վստահությունն իմ մեջ ձևավորվել է դեռևս այն ժամանակ, երբ ես, լինելով արհեստավարժ «հնդիկ դերվիշ», կարիք ունեցա մի «գերփիլիսոփայական» հարցի լիարժեք լուսաբանման նպատակով ծանոթանալու, ամեն ինչից զատ, նաև ժամանակակից գրախառնությունների տերերի ու գրավաճառների հոգեկառույցում ինքնաբերաբար կազմավորված նմանազգացական գործընթացի դրսևորմանը, երբ նրանք իրենց գրքերը «սաղացնում են» գնորդների վրա:

Իսկ այն դեպքում, երբ, հակառակ իմ նախագգուշացման, դու այնուամենայնիվ ուզենաս ծանոթանալ իմ գրվածքի հետագա բովանդակությանը, ապա ինձ ոչինչ չի մնա անելու, քան իմ ամբողջ հոգով մաղթել քեզ շատ լավ ախորժակ, որ կարողանաս «մարսել» այն ամենը, ինչ կկարդաս՝ ի շահ ոչ միայն քո, այլ նաև քո շուրջը եղածների առողջության:

Ես ասացի՝ «ամբողջ հոգով», քանի որ վերջին ժամանակներում ապրելով Եվրոպայում և հաճախակի շփվելով այնպիսի մարդկանց հետ, որոնք սիրում են ամեն մի հարմար կամ ոչ հարմար առիթով անտեղի օգտագործել սուրբ բառեր, որոնք միայն մարդու ներքին կյանքի առանձնաշնորհը պետք է լինեն, այլ կերպ ասած՝ այնպիսի մարդկանց հետ, որոնք դատարկ տեղը երդումներ են շռայլում, ես, ինչպես արդեն խոստովանել եմ, լինելով դարերի բովով անցած ժողովրդական իմաստության ասացվածքների ոչ միայն տեսական, այլև, ի տարբերություն ժամանակակից մարդկանց, նաև գործնական կիրառության հետևորդ, մասնավորապես՝ այն ասացվածքի, որն ասում է. «գայլի հետ ապրողը գայլի պես էլ կոռնա», որոշել եմ, Եվրոպայում այժմ հաստատում գտած այն սովորությունն հակառակ չգնալով, որը թույլ է տալիս սովորական խոսակցության ժամանակ երդումներ ուտել և միաժամանակ հետևել Սուրբ Մովսեսի բարեպաշտ շուրթերից ելած այն պատվիրանին, որն ասում է՝ *քո Տեր Աստծո անունն անտեղի մի՛ տուր*, օգտվել ժամանակակից «նորաթուխ» ու մոդայիկ լեզուներից մեկից՝ անգլերենից. ուստիև բոլոր անհրաժեշտ դեպքերում արդեն երդվում եմ իմ «անգլիական հոգով»:

Բանն այն է, որ այդ մոդայիկ լեզվով “soul” (հոգի) բառը և ձեր ոտքի ներբանը՝ “sole”, արտասանվում և համարյա գրվում են նույնանման:

Չգիտեմ, թե ինչպես է քո դեպքում, որ մասամբ արդեն դարձել ես իմ գրվածքների հավանական գնորդ, իսկ իմ դեպքում իմ յուրահատուկ խառնվածքը մտավոր ամենամեծ ցանկության դեպքում անգամ չի կարող չվրդովվել այն փաստից, որը դրսևորվում է ժամանակակից քաղաքակրթության կրողների կողմից, այն է՝ Ամենքիս Արարիչ Հոր կողմից հատուկ սիրո արժանացած և մարդու մեջ ամենաբարձրի համարում ունեցող բանն իրոք այդ պատճառով կարող է, և այն էլ՝ շատ հաճախ, նախքան մարդը կհասցնի պարզել, թե հատկապես ինչն է նկատի առնվում տվյալ դեպքում, հանկարծ հասկացվել որպես մի բան, որը մարդու ամենաստորին ու կեղտոտ մասն է:

Դե լավ, այսքանով ավարտենք «բանասիրելը»: Վերադառնանք սույն առաջին գլխի գլխավոր խնդրին, որն այլ բաներից զատ նպատակ ունի մի կողմից արթնացնելու թե՛ իմ, թե՛ ընթերցողի ննջած մտքերը, իսկ մյուս կողմից՝ ընթերցողին զերծ պահելու որոշակի վտանգից:

Այսպես ուրեմն, ես արդեն իմ գլխում կազմել եմ հղացածս գրվածքի շարադրման պլանն ու հաջորդականությունը, բայց, թե ինչ տեսք կունենա այդ ամենը թղթի վրա, անկեղծ ասած, ես ինքս դեռ չգիտեմ իմ գիտակցությամբ, սակայն ենթագիտակցությամբ արդեն որոշակիորեն զգում եմ, որ ընդհանուր առմամբ դա կլինի մի բան, որը, այսպես ասած, «կծու համ կունենա» և ամեն մարդու ողջ կառույցի վրա կազդի ճիշտ այնպես, ինչպես կարմիր տաքդեղի կոներն են ազդել խեղճ անդրկովկասցի քրդի վրա:

Դե, իսկ հիմա, երբ դուք տեղը տեղին տեղեկացաք մեր ընդհանուր հայրենակցի՝ անդրկովկասցի քրդի պատմությանը, ես արդեն իմ պարտքն եմ համարում խոստովանություն անել և, ըստ այդմ, նախքան շարունակելն այս գլուխը, որն, ըստ էության, իմ հետագա կանխորոշված ողջ գրվածքների ներածական մասն է, նախ ուզում եմ ձեր, այսպես կոչված, «արթնի գիտակցությանը» հասցնել այն փաստը, որ այս նախագգուշական գլխին հետևող գրվածքներում ես իմ մտքերը դիտմամբ կշարադրեմ այնպիսի հաջորդականությամբ և այնպիսի «տրամաբանական համակցությամբ», որ որոշ ճշմարիտ հասկացությունների էությունն ինքնըստինքյան ու ինքնաբերաբար այդ «արթնի գիտակցությունից», որը մարդկանց մեծամասնությունն անգիտության պատճառով իսկական գիտակցության տեղ է ընդունում (իսկ ես պնդում եմ և փորձնական ճանապարհով ապացուցում, որ այն ընդամենը երևակայության արդյունք է), կանցնի ենթագիտակցական կոչվածին, որը պիտի որ, ինչպես ես եմ

կարծում, հենց իսկական մարդկային գիտակցությունը լինի, և այնտեղ ինքնուրույնաբար կենթարկվի այնպիսի վերափոխության, ինչպիսին ընդհանուր առմամբ պետք է տեղի ունենա մարդու կառույցում և նրա սեփական մտածողությունից կրիսեցնի հարկ եղած այնպիսի արդյունքներ, որոնք սազական են հենց մարդ արարածին, այլ ոչ թե ընդամենը միատուղեղ կամ երկուղեղ կենդանիներին:

Ես որոշել եմ անպայման հասնել այդ բանին, որպեսզի սույն սկզբնական գլուխը, որն, ինչպես ասել եմ, կոչված է արթնացնելու ձեր գիտակցությունը, լիարժեքորեն կատարի իր գործը և, ներթափանցելով ոչ միայն ձեր այն գիտակցության մեջ, որն իմ կարծիքով ընդամենը երևակայական «գիտակցություն» է, այլ նաև ձեր իսկական գիտակցության մեջ, այսինքն՝ այն տեղը, որին դուք ենթագիտակցություն եք անվանում, ստիպի ձեզ, որ առաջին անգամ իսկապես ակտիվորեն մտածեք:

Անկախ ժառանգականությունից և դաստիարակությունից՝ ամեն մարդու կառույցում ձևավորվում են երկու անկախ գիտակցություններ, որոնք, ինչպես գործունեությամբ, այնպես էլ դրսևորումներով, իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն: Դրանցից մեկը ձևավորվում է զանազան պատահական կամ դիտավորյալ ստեղծված մեխանիկական տպավորությունների ընկալման միջոցով, որոնց շարքին պետք է դասել նաև տարբեր բառերի «հնչողությունը» (ըստ էության, ինչպես ասում են՝ սին), իսկ մյուս գիտակցությունը ձևավորվում է ժառանգաբար մարդուն փոխանցված, այսպես ասած, «նախկինում արդեն կազմավորված նյութական արդյունքներով», որոնք միահյուսվում են տվյալ մարդու կառույցի համապատասխան մասերի հետ, ինչպես նաև այնպիսի տվյալների ազդեցությամբ, որոնք միտումնավոր կերպով նմանազգացական համախմբություններ են առաջացնում մարդու մեջ արդեն առկա այդ «նյութականացված տվյալների» հետ:

Կառույցն իր ամբողջությամբ, ներառյալ նաև մարդու երկրորդ գիտակցությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ «ենթագիտակցություն» կոչվածը, և որը ձևավորվում է ժառանգաբար ստացված «նյութականացված արդյունքներով» և հենց մարդու կողմից միտումնավոր ստեղծված համախմբություններով, որը, ըստ իս, կազմավորվել է բացառիկ բարենպաստ պայմանների առկայությամբ կատարված փորձարարական հետազոտությունների հիման վրա, պետք է տիրապետող դիրք գրավի մարդու ընդհանուր ներկայության մեջ:

Իմ այս համոզմունքի պատճառով, որն անկասկած առայժմ ձեզ կթվա խաթարված մտքի երևակայության արգասիք, ես այժմ չեմ կարող, ինչպես հասկանում եք, անտեսել այդ երկրորդ գիտակցությունը, ուստի, էությանս խորքից խթան ստանալով, ստիպված եմ իմ գրվածքի արդեն իսկ այս գլխի (գլուխ, որը մնացած ամբողջի համար նախաբան պետք է ծառայի) ընդհանուր շարադրանքը կառուցել այնպես, որ այն մուտք գործի ձեր այն պատկերացումների մեջ, որոնք կուտակված են ձեր երկու գիտակցություններում, և իմ առջև դրված նպատակի պահանջած չափով մի լավ խառնշտորի դրանք:

Այդ հաշվարկով շարունակելով իմ շարադրանքը՝ ես նախ և առաջ ձեր երևակայական գիտակցությանը պետք է տեղյակ պահեմ, որ շնորհիվ որոշակի երեք յուրօրինակ գծերի, որոնք իմ կառույցում բյուրեղացել են իմ նախապատրաստական տարիքի տարբեր ժամանակահատվածների ընթացքում, ես իրոք առանձնահատուկ շնորհ ունեմ, այսպես ասած, «խառնաշփոթ ստեղծելու» բոլոր այն հասկացություններում ու համոզմունքներում, որոնք պինդ նստած են համարվում այն մարդկանց հոգեկառույցում, որոնց հետ հաղորդակցվում եմ:

Վա իս-վա իս-վա իս... Ես արդեն զգում եմ, որ ձեր կեղծ, բայց ձեր կարծիքով՝ «իսկական» գիտակցության մեջ «անհանգստացած մեղուների» պես սկսում են իրար անցնել բոլոր այն գլխավոր տվյալները, որոնք ժառանգաբար ձեզ են անցել ձեր քեռուց ու մայրիկից. տվյալների այդ համախումբը միշտ և ամեն ինչում, ինչքան չլինի, այնուամենայնիվ մի չափազանց լավ բան է ծնում ձեր մեջ, ինչպես սույն դեպքում, այն է՝ հետաքրքրասիրության ազդակ, որ հնարավորինս շուտ իմանաք, թե ինչու ես՝ գրողական գործում սկսնակս, որի անունը երբևէ չի հիշատակվել թերթերում, հանկարծ այսպես առանձնահատուկ ու չտեսնված եմ դարձել:

Բա՛ն չկա... Անձամբ ես շատ գոհ եմ այդ հետաքրքրասիրության ծագման համար, չնայած որ այն միայն ձեր կեղծ գիտակցության մեջ է ծագել: Քանզի փորձից գիտեմ, որ մարդուն ոչ վայել այդ ազդակը երբեմն կարող է այդ գիտակցությունից անցում կատարել մարդու ներքին բնույթի մեջ և վերածվել արժանավայել ազդակի՝ իմացության ծարավի, որն իր հերթին նպաստում է ցանկացած առարկայի էության առավել լավ ընկալմանը և նույնիսկ դրա ավելի ճշգրիտ ըմբռնմանը, որի վրա, ինչպես երբեմն պատահում է, կարող է կենտրոնանալ ժամանակակից մարդու ուշադրությունը: Այդ իսկ պատճառով

ես նույնիսկ հաճույքով եմ պատրաստ բավարարել ներկայումս ձեր մեջ ծագած այդ հետաքրքրասիրությունը:

Դե, հիմա լսեք և ջանացեք արդարացնել իմ հույսերը, այլ ոչ թե հիասթափություն պատճառեք ինձ: Իմ անձի այդ ինքնատիպությունը, որն արդեն «մի լավ տնտղել են» Անաչառ արդարադատություն ապահովող Գերագույն Աստանի երկու երգչախմբերի մի քանի որոշակի անհատականություններ, ինչպես նաև այստեղ՝ Երկրի վրա, դեռևս շատ սահմանափակ քանակի մարդիկ, հիմնված է, ինչպես արդեն ասել եմ, երեք առանձնահատուկ գծերի վրա, որոնք կազմավորվել են իմ նախապատրաստական տարիքի տարբեր ժամանակահատվածներում:

Դրանցից առաջինը դեռևս իր ծագման հենց ամենասկզբից դարձել է, այսպես ասած, իմ ամբողջ կառույցի գլխավոր ուղղորդիչ լծակը, իսկ մյուս երկուսը այդ առաջին գծի համար «կենարար աղբյուրի» դեր են կատարել, որպեսզի սնուցեն ու կատարելագործեն այն:

Այս առաջին գիծը ձևավորվել է, երբ ես դեռ, ինչպես ասում են, «թմբիկ ճստիկ» եմ եղել: Այդ ժամանակ իմ հանգուցյալ տատիկը դեռևս կենդանի էր, տարիքն էլ հարյուրից անց էր:

Երբ նա, Աստված հոգին լուսավորի, արդեն մահանում էր, իմ մայրը, ինչպես այն ժամանակ ընդունված էր, ինձ մոտեցրեց նրա մահճին. և երբ ես համբուրում էի նրա աջ ձեռքը, իմ շատ սիրելի, ներկայումս հանգուցյալ տատիկն իր արդեն թուլացող ձախ ձեռքը դրեց իմ գլխին և շշուկով, բայց շատ հստակ լսելի ասաց.

– Իմ ավագ թո՛ռ, լսիր և միշտ հիշի՛ր իմ խիստ պատգամը քեզ. երբեք կյանքում մի՛ արա այնպես, ինչպես ուրիշներն են անում:

Այդ ասելուց հետո նա իր սևեռուն հայացքը հառեց իմ քթարմատին և, հավանաբար նկատելով, որ տարակուսած եմ ու այնքան էլ լավ չեմ հասկացել իր ասածը, մի փոքր սրտնեղած ու ազդեցիկ տոնով ավելացրեց.

– Կամ ոչինչ մի՛ արա, ուղղակի դպրոց գնա ու արի, կամ էլ արա այնպիսի մի բան, որ էլ ոչ ոք չի անում:

Դրանից հետո նա, առանց տատանվելու և իրեն շրջապատող ամեն ինչի նկատմամբ որևէ արհամարանքի զգալի նշան ցույց տալու, գովելի ինքնագիտակցությամբ իր հոգին հանձնեց ուղիղ Նորին Արդարացիություն Գաբրիել Հրեշտակապետի ձեռքը:

Կարծում եմ, որ ձեզ համար հետաքրիր և նույնիսկ ուսանելի կլինի, եթե իմանաք, որ այդ ամենն ինձ վրա այնքան ուժեղ ազդեց, որ ինձ համար հանկարծ անտանելի դարձավ իմ կողքին որևէ մեկի ներկայությունը տեսնելը: Ուստիև, հենց որ դուրս եկանք այն սենյակից, որտեղ պատկած էր իմ ծագման պատճառի մեռյալ «մոլորակային մարմինը», ես շատ հանդարտ, որպեսզի ուշադրություն չգրավեմ, քաշվեցի մի կողմ և մտա սնդուկի մեջ, որում մեծ պասի օրերին թեփ ու կարտոֆիլի կճեպ էինք լցնում մեր «սանիտարների», այսինքն՝ խոզերի համար: Պատկեցի այնտեղ առանց հաց ու ջրի, հուզումնալից ու խառնիխուռն մտքերի մեջ խրված, որոնց քանակը, ի բարեբախտություն ինձ, իմ մանկական ուղեղում դեռևս շատ սահմանափակ էր: Մնացի այնքան, մինչև գերեզմանից վերադարձավ մայրս, որն ինձ կորած տեսնելուց և անարդյունք փնտրելուց հետո այնպիսի մի լաց դրեց, որ իմ ներսում ամեն ինչ վերջնականապես, այսպես ասած, «փուլ եկավ»: Այդ ժամանակ ես իսկույն դուրս եկա սնդուկից, մի պահ կանգնեցի դրա եզրին՝ չգիտես ինչու, ձեռքս առաջ պարզած, այնուհետև վազեցի մորս կողմը, կառչեցի նրա շրջագգեստից, սկսեցի ակամա դոփել ոտքերով, որից հետո, չգիտեմ, թե ինչու, ձայնս նմանեցրի մեր հարևան դատական կատարածուի ավանակի գոռոցին:

Թե ինչու այն ժամանակ այդ դրվագն այդպիսի տպավորություն թողեց ինձ վրա, և թե ինչու համարյա ինքնաբերաբար ես այդպես տարօրինակ պահեցի ինձ, մինչև այժմ չեմ կարողանում հասկանալ, թե՛ն վերջին տարիներին, հատկապես Բարեկենդանի օրերին, ես շատ եմ մտորել՝ հիմնականում ջանալով հասկանալ դրա պատճառը:

Ես միայն տրամաբանական ենթադրություն կարողացա անել, որ այդ ամենը տեղի է ունեցել միայն այն բանի պատճառով, որ այն սենյակը, որում այն ժամանակ ընթացել է այդ սուրբ ներկայացումը, որը հսկայական նշանակություն է ունեցել իմ հետագա կյանքի վրա, ամբողջովին ներծծված է եղել հատուկ խունկի բույրով, որը բերված է եղել «Հին Աֆոն» վանքից՝ լինելով շատ հարգի քրիստոնեական կրոնի բոլոր դավանաբանությունների ներկայացուցիչների համար: Ինչ որ է, այդ փաստն ինձ համար դեռևս մնում է որպես մերկ մի փաստ:

Այդ իրադարձությանը հաջորդած օրերի ընթացքում իմ ընդհանուր վիճակի մեջ որևէ նշանակալի քան տեղի չի ունեցել, եթե չհաշվենք այն, որ այդ օրերի ընթացքում ես սովորականից ավելի հաճախ էի քայլում ոտքերս դեպի վեր ցցած, այսինքն՝ ձեռքերիս վրա:

Իմ առաջին արարքը, որը բացահայտորեն տարբեր եղավ ուրիշների արարմունքից, թեև, ճիշտն ասած, կատարվեց առանց ոչ միայն իմ գիտակցության, այլ նաև իմ ենթագիտակցության մասնակցության, տեղի ունեցավ տատիս մահից ուղիղ քառասուն օր հետո, երբ մեր ողջ ընտանիքն ու հարազատները, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր հարգում էին սիրելի տատիկիս հիշատակը, ընդունված կարգի համաձայն հավաքվեցին գերեզմանոցում, որպեսզի հողին հանձնված նրա ոսկորների համար «հոգեհանգստի» արարողություն կատարեն: Ահա հենց այդ ժամանակ, ոչ դեռ, ոչ դեռ, փոխանակ անեմ այն, ինչ ընդունված է ամեն կարգի պայմանական ու ոչ պայմանական բարոյականության ու նյութական կարողության տեր մարդկանց մոտ, այն է՝ վշտաբեկ տեսքով, կսկիծը դեմքին և նույնիսկ, եթե հնարավոր է, արցունքոտված աչքերով, խոնարհ կանգնել շիրիմի մոտ, ես հանկարծ սկսեցի, կարծես պար գալով, թռչկոտել գերեզմանի շուրջն ու երգել.

*«Օյ, օյ, օյ, գա հոգուն
Սրբերի հետ հանգիստ քուն,
Մեկ որ գնաց տուն դարձյալ՝
Իր աշխարհը հանդերձյալ:
Օյ, օյ, օյ, գա հոգուն
Սրբերի հետ հանգիստ քուն...»*

և այլ նման բաներ:

Ահա այդ պահից սկսած՝ ամեն մի, այսպես ասած, «կապկելու» պարագայում (այսինքն՝ երբ ուրիշները սովորական ձևով մեխանիկորեն նմանակում են իրենց շրջապատում եղածներին), իմ մեջ առաջացել է «մի բան», որը միշտ և ամեն տեղ իմ ներսում գործի է գցել այն, ինչը հիմա ես կանվանեի ոչինչ ուրիշների պես չանելու «անհաղթահարելի ձգտում»:

Այդ հասակում ես վարվում էի, օրինակ, հետևյալ կերպ:

Եթե, ասենք, խաղի նպատակը աջ ձեռքով գնդակը բռնել սովորելն էր լինում, եղբայրս, քույրերս և մեզ հետ խաղալու եկած հարևան երեխաները գնդակը նախ վեր էին նետում, իսկ ես, նույն նպատակն ունենալով, գնդակը ուժգին գետնին էի զարկում և ապա, այն ընթացքում, երբ այն դեպի վեր էր թռչում, ես նախ պտտաթռիչք էի կատարում, հետո նոր բռնում գնդակը՝ այն էլ ձախ ձեռքի բուխով ու միջնամատով. կամ, եթե մյուս երեխաները բլրակից սահում էին դեմքով դեպի առաջ, ապա ես աշխատում էի նույն բանն անել դեմքով դեպի ետ և ամեն անգամվա հետ ավելի ու ավելի էի կատարելագործում այդ ձևը. կամ, եթե մեզ՝ երեխաներիս, տարբեր տեսակի «ապարանյան»⁷ բլիթներ» էին տալիս, ապա բոլոր մյուս երեխաները նախքան բերանը տանելը լիզում էին դրանք, հավանաբար որպեսզի նախ համտես անեն և երկարացնեն հաճույքը, իսկ ես... դրանք նախ հոտոտում էի տարբեր կողմերից, երբեմն էլ, հնարավոր է, որ մոտեցնում էի ականջիս, ուշադիր ականջ դնում և հետո, թեև համարյա ենթագիտակցաբար, բայց ամեն դեպքում լրջորեն դնում էի ինքս ինձ.

*«Միայն այսպես, միայն այսպես,
Չիժոճեմ հիմարի պես:
Ախորժակս թե չփակեմ,
Շատ ուտելուց կտրաքեմ»,*

երգիս ռիթմին համաչափ կծում էի միայն մի կտոր և առանց առանձնակի հաճույքի կուլ տալիս այն, և այլն, և այլն:

Առաջին իրադարձությունը, որի ընթացքում իմ մեջ սկզբնավորվեց վերը նշածս երկու գծերից մեկը, որոնք «կենարար աղբյուրի» դեր են կատարում տատիկիս պատվիրանով շարժվելու գծի սնուցման ու կատարելագործման համար, պատահեց իմ այն տարիքում, երբ ես արդեն «թմբլիկ

⁷ ռուս. տարբերակում՝ «абажанские», անգլ. տարբերակում՝ Abaramian

ճատիկից» վերածվել էի «ջահել անբանի» և արդեն ուր որ է դառնում էի, ինչպես երբեմն ասվում է, «հաճելի արտաքինով ու կասկածելի ներքինով» երիտասարդի թեկնածու:

Այդ իրադարձությունը տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում, որոնք, հնարավոր է, հատուկ դասավորված էին հենց Ճակատագրի կողմից:

Ինձ նման մի քանի ջահել անբանների ընկերակցությամբ մի անգամ հարևանի տան տանիքին զբաղված էի աղավնի բռնելու թակարդներ դնելով, երբ տանիքին ինձնից վեր կանգնած տղաներից մեկը, որն ուշադիր հետևում էր ինձ, հանկարծ ասաց.

– Ես կարծում եմ, որ ձիու մազից պատրաստված թակարդը պետք է դնել այնպես, որ դրա մեջ աղավնու մեծ մատը չմտնի, որովհետև, ինչպես մի քանի օր առաջ բացատրեց մեր կենսաբանության ուսուցիչը, շարժումների ընթացքում հենց այդ մատի մեջ է կենտրոնանում աղավնու պահուստային ուժը. այդ պատճառով, հենց որ այդ մատը հայտնվի թակարդի մեջ, աղավնին, իհարկե, կարող է հանգիստ կտրտել այն:

Տղաներից մյուսը, որը կռացած դիրքով գտնվում էր ինձնից մի փոքր ավելի վեր և որը, իմիջիայլոց, խոսելու ընթացքում բոլոր ուղղություններով առատորեն փսիհնք էր ցայտեցնում, վրա պրծավ դիտողություն անող առաջին տղային հետևյալ խոսքերով, որոնց ուղեկցում էր առատ փսիհնքը.

– Փակի՛ր ռեխո, ա՛յ խղճուկ հոտենդոտյան վիժվածք, դու նույնքան տհաս ես, որքան քո այդ ուսուցիչը... Եթե աղավնու ոչ մեծ ֆիզիկական ուժը կենտրոնացած է նրա մեծ մատում, ապա առավել ևս մենք պետք է աշխատենք, որ հենց այդ մատը հայտնվի թակարդի մեջ: Միայն այդ դեպքում մեր նպատակը, որն այդ թշվառ աղավնիներին բռնելն է, որևէ իմաստ կունենա այն ուղեղային առումով, որը բնորոշ է այդ փափուկ ու լարծուն «բանն» ունեցողներին, ըստ որի՝ եթե ինչ-որ այլ գործողությունների հետևանքով, որոնցից կախված է դրա դրսևորման չնչին ունակությունը, առաջանում է պարբերական, անհրաժեշտ ու օրինաչափ, այսպես կոչված, «ներկայության փոփոխություն», ապա այդ ոչ մեծ «օրինաչափ խառնաշփոթ» կոչվածում (ինչը պետք է առկա լինի, որպեսզի ընթացք տա իր ընդհանրական գործունեության մնացած պրոցեսներին) անմիջապես ամբողջ գործունեության ծանրության կենտրոնի ժամանակավոր տեղաշարժի հնարավորություն է ծագում (դրանում այդ լարծուն «բանն» առանձնապես մեծ դեր չի խաղում) իր սովորական դիրքից սարբեր դիրքի, ինչի հետևանքով ամբողջ այդ գործունեությունը ծավալող կառույցում ստացվում են այնպիսի անսպասելի արդյունքներ, որոնք անհեթեթության աստիճանի ծիծաղաշարժ են:

Այս շարադրանքի վերջին բառերն ուղեկցվեցին փսիհնքի այնպիսի մի շատրվանով, որ ինձ թվաց, թե երեսս պահել եմ գերմանական արտադրության փոշեցիրի շիթի դեմ (ընդ որում՝ ոչ «էրգաց» արտադրության), որն օգտագործվում է զանազան առարկաներ անիլինային ներկով պատելու համար:

Դրան ես անկարող էի դիմանալ, ուստի, իմ ծնկաչոք դիրքից վեր ցատկելով, անմիջապես նետվեցի խոտդի կողմը և գլխով այնպես ուժգին հարվածեցի նրա ստամոքսին, որ նա ակնթարթորեն փովեց ու, ինչպես ասում են, «կորցրեց գիտակցությունը»:

Ես չգիտեմ և չեմ էլ ուզում իմանալ, թե ձեր մտածողության մեջ ինչպես է ձևավորվում այս արտառոց, իմ կարծիքով, կենսական հանգամանքների զուգադիպմանը վերաբերող տեղեկատվության արդյունքը, որը ես այստեղ ուզում եմ նկարագրել, մինչդեռ իմ մտածողության համար այդ զուգադիպությունը հրաշալի մի նյութ եղավ, որը հաստատում է այն բանի հնարավորությունը, որ իմ պատանեկության տարիներին տեղի ունեցած այդ դեպքը, որը հիմա պատմում եմ, ոչ թե պատահական էր, այլ դիտմամբ սարքված էր ինչ-որ արտաքին ուժերի կողմից:

Բանն այն է, որ այդ ճարպիկ հնարքն այդ դեպքից մի քանի օր առաջ ինձ սովորեցրել էր Թուրքիայից եկած մի հույն քահանա, որն այնտեղից փախել էր քաղաքական հայացքների համար թուրքերի կողմից հետապնդվելու պատճառով: Հասնելով մեր քաղաքը՝ նա իմ ծնողների կողմից վարձվել էր, որպեսզի ինձ ժամանակակից հունարեն ուսուցանի: Ես չգիտեմ, թե ինչ տվյալների վրա էին հիմնված նրա քաղաքական հայացքներն ու գաղափարները, բայց շատ լավ հիշում եմ, որ այդ հույն քահանայի բոլոր խոսածներից, նույնիսկ այն դեպքերում, երբ նա ինձ համար լուսաբանում էր հինավուրց ու ժամանակակից հունարենի միջանկյալ բառերի միջև եղած տարբերությունները, իրոք միշտ շատ հստակ զգացվում էր, որ նա երագում է հնարավորինս շուտ վերադառնալ Կիպրոս կղզին, որպեսզի այնտեղ իրեն դրսևորի այնպես, ինչպես սազական է իսկական հայրենասերին:

Այսպես ուրեմն, աչքի առաջ ունենալով իմ այդ արվեստի հետևանքները, պետք է խոստովանեմ, որ ես խիստ վախեցա, քանի որ այդ տեղին ստացած հարվածի նման արդյունքի մասին ոչինչ չգիտեի ու մտածեցի, որ սպանել եմ նրան:

Այն պահին, երբ ես վախից քարացել էի, ուրիշ մի տղա՝ ընկածի զարմիկը, տեսնելով, թե ինչպես իր ազգականը զոհ դարձավ իմ, այսպես կոչված, «ինքնապաշտպանական մարտարվեստին», առանց հապաղելու և համակված «բարեկամական զգացմունքներով», անմիջապես հարձակվեց ինձ վրա և, մի լավ թափ առնելուց հետո, բռունցքով ուժգին հարվածեց իմ ծնոտին:

Այդ հարվածից, ինչպես ասում են, իմ աչքերից կայծեր դուրս թռան, միևնույն ժամանակ բերանս այնպես լիքը թվաց, կարծես լցված լինեի կերով, որը կբավարեր առնվազն հազար հատ ճուտ կերակրելու համար:

Որոշ ժամանակ անց, երբ այդ տարօրինակ զգացողություններն իմ մեջ հանդարտվեցին, ես իսկապես իմ բերանում ինչ-որ օտար մարմին հայտնաբերեցի, և երբ մատներով այն դուրս հանեցի, պարզվեց որ հսկայական չափերով ու տարօրինակ ձև ունեցող ատամ է:

Տեսնելով, որ հայացքս հառել եմ այդ արտասովոր ատամին, բոլոր տղաները հավաքվեցին իմ շուրջը և նույնպես սկսեցին այն դիտել մեծ հետաքրքրությամբ ու անսովոր լռությամբ:

Այդ ընթացքում, տապալված ու անշարժացած տղան ուշքի եկավ և ոտքի կանգնելով ինքն էլ միացավ ատամս գննող տղաներին, կարծես ոչինչ չէր պատահել:

Այդ արտառոց ատամը յոթ արմատ ուներ, ամեն արմատին՝ արյան մի կաթիլ, և ամեն մի առանձին կաթիլի միջով հստակ ու պայծառ լուսանցում էր սպիտակ լույսի երևակման յոթ բաղադրիչներից մեկը:

Մեզ նման «ջահել անբանների» համար անսովոր այդ լռությունից հետո նորից սովորական աղմուկ-աղաղակ բարձրացավ, և այդ ձայնային իրարանցման մեջ որոշում կայացվեց անհապաղ գնալ սափրիչի մոտ, որը նաև ատամ քաշելու մասնագետ էր, և հարցնել, թե ինչու է այդ ատամն այդպիսին:

Եվ այսպես, բոլորս մի մարդու պես իջանք տանիքից և գնացինք սափրիչին գտնելու: Իսկ ես, որպես «օրվա հերոս», բոլորից առաջ էի ընկել:

Սափրիչը, անտարբեր մի հայացք նետելով, ասաց, որ դա սովորական «իմաստության ատամ» է, և որ այդպիսի ատամ արական սեռին պատկանող բոլորն են ունենում, որոնք նախքան «պապա» և «մամա» ասելը կերակրվում են միայն իրենց հարազատ մոր կաթով և ունակ են բազմաթիվ այլ դեմքերի շարքում հենց առաջին հայացքից ճանաչելու իրենց հարազատ հոր դեմքը:

Այս դեպքի բոլոր հետևանքների ընդհանուր արդյունքում, որի իրական զոհը եղավ իմ «իմաստության ատամը», ոչ միայն իմ գիտակցությունն սկսեց ամեն ինչից ներքաշել իր մեջ իմ հանգուցյալ տատիկի (Աստված հոգին լուսավորի) պատվիրանի էության իմաստը, այլ նաև այդ ժամանակ, քանի որ ես չդիմեցի որակյալ ատամնաբույժի, որպեսզի դուրս թռած ատամիս տեղը դատարկ չմնա (ինչը, իմիջիայլոց, չէի կարող անել, որովհետև մեր տունը չափազանց հեռու էր գտնվում ամեն տեսակի կուլտուրական կենտրոններից), այդ դատարկ խոռոչից մշտապես ծորում էր «ինչ-որ բան», որը, ինչպես միայն վերջերս ինձ բացատրեց շատ հայտնի մի օդերևութաբան, որի հետ ինձ բախտ վիճակվեց, ինչպես ասում են, «սրտակից ընկերություն անել» Մոնմարտրի գիշերային ռեստորաններում ունեցած մեր հաճախակի հանդիպումների շնորհիվ, հետաքրքրություն գրգռելու հատկություն ուներ ամեն մի կասկածելի «իրական փաստի» պատճառները որոնելու ու պարզելու նկատմամբ, և այդ հատկությունը, որն իմ կառույցին ժառանգաբար չէր անցել, աստիճանաբար ու ինքնաբերաբար հանգեցրեց նրան, որ ես ի վերջո բոլոր այն կասկածելի երևույթների հետազոտման մասնագետը դարձա, որոնք, ինչպես դա հաճախ էր պատահում, հայտնվում էին իմ ճանապարհին:

Այդ հատկությունը, որն իմ մեջ սկսեց ձևավորվել այդ դեպքից որոշ ժամանակ անց, երբ ես արդեն վերածվել էի իմ նկարագրած երիտասարդին (իհարկե, ոչ առանց Համընդհանուր Տիրակալ Անողոր Շերոպասի⁸ մասնակցության), ինձ համար դարձավ գիտակցականության իսկական, անմարելի ու մշտապես բռնկուն օջախ:

Իմ հիշատակած կենարար գործոններից երկրորդը, որն այս անգամ նպաստում էր իմ ամբողջական անհատականության բոլոր գծերի հետ տատիկիցս ստացած պատվիրանի լիակատար միաձուլմանը, այն տպավորությունների համախմբությունն էր, որոնք ես ստանում էի այստեղ՝ Երկրի

⁸ ռուս. տարբերակում՝ Геропаз, անգլ. տարբերակում՝ Heropass

վրա, մեր միջավայրում տեղի ունեցող այն իրադարձությունների վերաբերյալ պատահականորեն ձեռք բերված տեղեկությունների ազդեցությամբ, որոնք բացահայտում են այն «սկզբունքի» ծագումը, որը, ինչպես ինձ համար պարզ դարձավ միսոսր Ալան Քարդելի՝ «հույժ գաղտնի» հոգեկանչական սեանսի ժամանակ տված բացատրությունից, հետագայում Մեծ Տիեզերքի բոլոր այլ մոլորակներում ծնունդ առնող ու բնակվող բոլոր մեզ նման էակների համար ամենուրեք դարձել է «կյանքի գլխավոր սկզբունքներից» մեկը:

Այդ «կյանքի համատիեզերական սկզբունքի» բառային ձևակերպումը հետևյալն է.

«Ման գալ է՝ ման գալ. նան փոստային ծախսերը փակենք»:

Քանի որ արդեն համընդհանուր դարձած այդ «սկզբունքը» ծագել է նույն այն մոլորակի վրա, որտեղ աշխարհ էք եկել և դուք, և դեռ ավելին՝ որի վրա համարյա միշտ անհոգ կյանք էք վարում ու հաճախ ֆոքստրոտ պարում, ապա կարծում եմ, որ ես իրավունք չունեմ ձեզնից թաքցնելու ինձ հայտնի դարձած այն տեղեկությունները, որոնք լուսաբանում են այդ համընդհանուր սկզբունքի ծագման որոշ մանրամասները:

Այդ նոր հատկության, այսինքն՝ ամեն մի «իրական փաստի» իսկական պատճառները պարզելու անհասկանալի այդ ձգտման՝ իմ բնույթի մեջ ներդրվելուց քիչ ժամանակ անց՝ Ռուսաստանի Մոսկվա քաղաք կատարած իմ առաջին այցի ընթացքում, որտեղ ես այլ բան չգտա իմ հոգեբանական պահանջմունքները բավարարելու համար, քան ռուսական առասպելների ու ասացվածքների ուսումնասիրությունն է, մի անգամ, ոչ այն է՝ պատահաբար, ոչ այն է՝ ինձ անհայտ օբյեկտիվ օրինաչափությունների արդյունքում, ինձ բախտ վիճակվեց իմանալու, իմիջիայնոց, հետևյալի մասին:

Մի անգամ մի ռուս մարդ, արտաքինով՝ պարզապես առևտրական, գավառական իր քաղաքից պետք է ինչ-որ գործով մեկնեք Մոսկվա՝ Ռուսաստանի այդ երկրորդ մայրաքաղաքը, և որդին, որը նրա սիրելին էր մորը նման լինելու պատճառով, նրան խնդրում է այնտեղից իր համար ինչ-որ մի գիրք բերել:

Երբ «կյանքի համատիեզերական սկզբունքի» այդ ակամա մեծ հեղինակը հասնում է Մոսկվա, գործընկերոջ հետ «տեղը տեղին» կոնծում է իսկական «ռուսական օղի», ինչպես միշտ եղել է ու կլինի այնտեղ:

Կարճ ասած՝ երբ երկուստանի ու շնչող էակների խիստ նշանակալից ու ժամանակակից խմբավորման այդ երկու ներկայացուցիչները հարկ եղածի չափ «ռուսական բարիք» տակով արեցին և քննարկեցին «ժողովրդին կրթելու» խնդիրը, որով վաղուց է, ինչ սկսվում է ցանկացած զրույց, մեր առևտրականն ըստ դրա նմանազգացության հանկարծ հիշեց սիրելի որդու խնդրանքը և որոշեց ընկերոջ հետ անհապաղ գնալ գրախանութ ու գնել այդ գիրքը:

Գրախանութում, պահանջված գիրքը գնելուց հետո, առևտրականը գրավաճառից հարցրեց դրա գինը:

Գրավաճառն ասաց, որ գիրքն արժե վաթսուն կոպեկ:

Նկատելով, որ գրքի կազմի վրա 45 կոպեկ է նշված, առևտրականն սկզբում մտորեց արտառոց, ընդհանուր առմամբ, ռուսներին ոչ բնորոշ ձևով, որից հետո ուսերը թոթվեց, ապա, գվարդիական սպայի պես կուրծքը ցցած դիրք ընդունելուց ու որոշ ժամանակ լռելուց հետո, շատ հանգիստ, բայց խիստ հեղինակավոր տոնով հարցրեց.

– Բայց այստեղ 45 կոպեկ է նշված. ինչու՞ էք դուք 60 կոպեկ ուզում:

Դրան ի պատասխան վաճառողը նախ դեմքին «մեղրածոր» արտահայտություն տվեց, ինչը բնորոշ է բոլոր վաճառողներին, որից հետո բացատրեց, որ թեև գիրքն իսկապես 45 կոպեկ արժե, բայց պետք է ծախվի 60 կոպեկով, քանի որ 15 կոպեկ էլ հավելվում է փոստային ծախսերից:

Ստանալով այդ պատասխանը՝ մեր ռուս առևտրականը նախ տարակուսեց այդ երկու հակասական, բայց, ըստ երևույթին, անկասկած համադրելի փաստերից, և նկատելի էր, որ նրա ներսում ինչ-որ բան է կատարվում. հայացքն առաստաղին հառելով՝ նա նորից սկսեց մտորել (այս անգամ՝ այն անզլիացի պրոֆեսորի նման, որը գերչակի ձեթի համար պարկուճ է հորինել), հետո հանկարծ շրջվեց ընկերոջ կողմն ու Երկրի վրա առաջին անգամ արտաբերեց այն բառային բանաձևը, որն, իր էությանը արտահայտելով անառարկելի օբյեկտիվ ճշմարտություն, այդ օրվանից ձեռք է բերել նաև ասացվածքի բնույթ:

Այն ժամանակ ռուս առևտրականի ընկերոջ ականջին դա հնչեց հետևյալ ձևակերպումով.

- Բա՛ն չկա, եղբա՛յրս, մենք կգնե՛նք գիրքը: Շեչ որ չլինի՝ մենք այսօր ման գալու գործի վրա ենք: Ման գալ է՝ ման գալ. փոստային ծախսերն էլ փակենք:

Ինչ վերաբերում է ինձ, ում, դժբախտաբար, վիճակված է արդեն իսկ կյանքի ընթացքում ճաշակել «Դժոխքի քաղցրությունները», հենց որ ականատես եղա այդ ամենին, իմ ներսում անհապաղ սկիզբ առավ ու բավական երկար ընթացավ ինչ-որ շատ տարօրինակ մի բան, որը ես չեմ զգացել ո՛չ դրանից առաջ, ո՛չ հետո. այնպիսի տպավորություն էր, կարծես իմ ներսում, ինչպես ժամանակակից «հայվանդցիներն»⁹ են ասում, ամեն տեսակի «ձիարշավներ» էին սկսվել տարբեր ծագման նմանազգացությունների ու այն ապրումների միջև, որոնք սովորաբար լինում են իմ ներսում:

Միննույն ժամանակ ամբողջ ողնաշարիս երկայնքով սկսվեց ուժեղ, համարյա անտանելի մի քոր, իսկ արևահյուսակիս ուղիղ կենտրոնում զգացի սուր ցավ, որը նույնպես անտանելի էր: Այդ երկու իրար փոխադարձաբար զրգռող զգացողությունները որոշ ժամանակ անց հանկարծակի փոխարինվեցին այնպիսի մի ներքին անդորրով, ինչպիսին հետագա կյանքում ես վերապրել եմ ընդամենը մի անգամ, երբ ձեռնադրման ծես էի անցնում «Օղից յուղ քամելու գործի հիմնադիրների» Եղբայրությունում: Իսկ ավելի ուշ, երբ «ԵՍ», այսինքն՝ այդ իմ «անհայտ բանը», որին հինավուրց ժամանակներում ոմն ցնդաբանող (որին կողքիններն անվանում էին, ինչպես հիմա մենք ենք անվանում «գիտնական») բնորոշել է որպես «հարաբերական տեղաշարժեր ընդունող գոյացություն՝ կախված մտածողության, զգացմունքի ու ֆիզիկական ավտոմատիզմի որակից», իսկ ըստ մի ուրիշի, նույնպես հին գիտնականի՝ արաբ Մալ-էլ-Լելի¹⁰ (սրա բնորոշումը, իմիջիայլոց, ժամանակներ անց փոխառել ու յուրովի կրկնել է ոչ պակաս հայտնի հույն գիտնական Քսենոֆոնը) նույն այդ «անհայտ բանը» բնորոշել է որպես «գիտակցության, ենթագիտակցության և բնագոյի համադրյալ արդյունք», և ահա, երբ նույն այդ «ԵՍ»-ն այդ վիճակում ապշահար ուշադրությունս հառեց իմ ներսին, ապա առաջին հերթին շատ հստակ արձանագրեց, որ, այն ամենը, ինչով բացատրվում է տվյալ մեջբերումը (ընդհուպ մինչև դրա ամեն մի բառը), որը դարձել է «կյանքի համատիեզերական սկզբունք», իմ մեջ վերափոխվել է հատուկ տիեզերական սուբստանցիայի և, իմ մեջ շատ ավելի վաղ բյուրեղացված տվյալների հետ միախառնվելով, որոնք իմ հանգուցյալ տատիկի պատվիրանի հետևանքն են եղել, այդ տվյալները վերածել է «ինչ-որ բանի», իսկ այդ «ինչ-որ բանն» էլ իր հերթին, անցնելով իմ կառույցի բոլոր մասերով, անդառնալիորեն տնավորվել է կառույցս կազմող բոլոր ատոմներում. և երկրորդ՝ իմ այդ չարաբաստիկ «ԵՍ»-ն անմիջապես պարզորոշ զգաց և հնազանդության ազդակով հասկացավ ինձ համար տխրալի այն փաստը, որ այդ պահից սկսած՝ կամա-ակամա ստիպված եմ լինելու միշտ և ամեն տեղ ինձ դրսևորել բացառապես այդ անքակտելի հատկությանը համապատասխան, որը ձևավորվել է իմ մեջ ո՛չ ժառանգականության օրենքներով, ո՛չ էլ նույնիսկ արտաքին հանգամանքների ազդեցությամբ, այլ ծագել է իմ կառույցում երեք արտաքին ու պատահական պատճառների ազդեցությամբ, որոնք իրար հետ որևէ կերպ կապված չեն: Դրանք են՝ առաջին հերթին այն անձի պատվիրանը, ով, անկախ իմ կողմից որևէ ցանկություն արտահայտելու, դարձել է իմ ծագման պատճառի պասիվ պատճառը, երկրորդ՝ իմ ատամներից մեկը, որն իր տեղից դուրս է թռել ինչ-որ քրջոտ տղայի հարվածից, որն ստացել եմ նրա պես ևս մեկ ուրիշի փալնքոտության երեսից և երրորդ՝ բառային ձևակերպում, որը հարբած վիճակում արտաբերել է ինձ բոլորովին անծանոթ մեկը՝ «մոսկովյան մակնիշի» ոմն առևտրական:

Եթե նախքան այդ «կյանքի համատիեզերական սկզբունքի» հետ ծանոթանալն իմ բոլոր դրսևորումներն այլ կերպ էի արտահայտում, քան ինձ նման մյուս երկոտանի կենդանիները, որոնք միննույն մոլորակի վրա ինձ հետ ծլում էին ու աճում, ապա դա անում էի ինքնաբերաբար, և միայն երբեմն՝ կիսագիտակցաբար. բայց այդ դեպքից հետո դա սկսեցի անել գիտակցաբար, ընդ որում՝ բավարարվածության ու գիտակցության երկու միախառնվող ազդակների բնագոյային մի զգացողությամբ, որ ճիշտ ու արժանավայել կերպով իմ պարտքն եմ կատարում Մեծ Բնության հանդեպ:

Հարկ է նույնիսկ ընդգծել, որ թեև նախքան այդ դեպքը ես արդեն իսկ ամեն ինչ անում էի ոչ այնպես, ինչպես ուրիշները, սակայն իմ արարքներն առանձնապես չէին գրավում իմ շուրջը եղած հայրենակիցներին ուշադրությունը. բայց այն պահից սկսած, երբ իմ բնույթին հասու դարձավ կյանքի

⁹ Խորեզմի խանության (1512-1920) պատմական տարածքում ապրողները

¹⁰ ռուս. տարբերակում՝ Маль-эль-Лель, անգլ. տարբերակում՝ Mal el-Lel

այդ սկզբունքի էությունը, ապա մի կողմից իմ բոլոր դրսևորումները՝ թե նպատակամղվածները, թե՛ պարզապես, այսպես ասած, «պարապությունից ծնվածները», կենսականությունն ձեռք բերեցին և «աչք ծակող» դարձան անխտիր բոլոր ինձ նման էակների համար, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ուշադրություն էին դարձնում իմ գործողություններին, և մյուս կողմից՝ հենց ինքս սկսեցի իմ բոլոր գործողությունները կատարել իմ հանգուցյալ տատիկից ստացած պատվիրանին հնարավորինս մոտ համապատասխանությամբ: Արդյունքում ինքնաբերաբար ձեռք բերեցի հետևյալ սովորությունը. ամեն մի նոր բան սկսելուց առաջ, ինչպես նաև ամեն մի քիչ թե շատ նշանակալի փոփոխության դեպքում միշտ մտովի կամ բարձրաձայն արտասանել.

– *Ման գալ է՝ ման գալ. նաև փոստային ծախսերը փակենք:*

Ահա, օրինակ, սույն դեպքում նույնպես, քանզի ինձնից անկախ պատճառների բերումով, որոնք սկիզբ են առել իմ կյանքի անսովոր ու պատահական հանգամանքներից, ինձ վիճակվել է գիրք գրել, և ես ստիպված եմ դա անել նույն այդ սկզբունքին համապատասխան, որն աստիճանաբար որոշակիացել է այն զանազան արտասովոր համախմբությունների շնորհիվ, որոնք հենց ինքը կյանքն է հրամցրել, և որը միաձուլվել է իմ կառույցի ամեն մի ատոմի հետ:

Այս անգամ իմ այդ հոգեֆիզիկական սկզբունքը ես կսկսեմ ի կատար ածել այնպես, որ չեմ հետևի բոլոր գրողների համար վաղուց սովորություն դարձած այն դրվածքին, որ իրենց բազմազան գրվածքների թեմաների համար պետք է ընտրեն ենթադրաբար Երկրի վրա տեղի ունեցած կամ տեղի ունեցող ինչ-որ իրադարձություններ, այլ դրա փոխարեն որպես իմ գրվածքի իրադարձությունների թատերաբեմ կընտրեմ ամբողջ Տիեզերքը: Եվ այսպես, սույն դեպքում նույնպես. «*Ընտրել է՝ ընտրել...*», այսինքն թե. «*Ման գալ է՝ ման գալ. նաև փոստային ծախսերը փակենք:*»

Ամեն մի գրող կարող է գրել Երկրի մասշտաբի սահմաններում, բայց ես «ամեն մի» գրողներից մեկը չեմ:

Մի թե կարող եմ ես ինձ սահմանափակել մեր այս, օբյեկտիվ իմաստով ասած՝ «խղճուկ Երկիր մոլորակով»: Իմ գրվածքների համար նույն այն թեմաները վերցնել, որոնցից սովորաբար օգտվում են մյուս գրողները, ինձ չի կարելի թեկուզև այն պատճառով, որ հանկարծ ճիշտ դուրս կգա այն, ինչը պնդում են հոգի կանչող մեր գիտնականները, և իմ տատիկը կիմանա իմ արածի մասին. պատկերացնում էք, թե այդ դեպքում ինչ կկատարվի իմ սիրելի տատիկի հետ. դազադում շուտ չի՞ գա արդյոք, ընդ որում՝ ոչ թե մի անգամ, ինչպես ասում են, այլ, որքան ես գիտեմ նրան (հատկապես հիմա, երբ «հմտորեն» կարողանում եմ ինձ դնել ուրիշի վիճակում) նա իր տեղում շուտ կգա այնքան անգամ, որ ուղղակի «հոլի» կնմանվի:

Ընթերցող, խնդրում եմ, մի՛ անհանգստացիր... Ես, իհարկե, նաև Երկրի մասին կգրեմ, բայց այնպիսի անաչառությամբ, որ համեմատաբար փոքր այս մոլորակը, իր վրա եղած-չեղածով հանդերձ, գրավի իր այն տեղը, որն իրապես զբաղեցնում է: Նաև դու ինքդ, առաջնորդվելով քո սեփական առողջ տրամաբանությամբ (որն այդպիսին կդառնա, իհարկե, իմ առաջնորդությամբ) մեր փոքրիկ մոլորակին մեր Մեծ Տիեզերքում այն տեղը կհատկացնես, որին նա արժանի է:

Ես, իհարկե, նաև պարտավոր եմ իմ այս գրվածքների «հերոսներ» դարձնել ո՛չ Չատիին, Մատիին, Հուդիին կամ Հադիին, որոնք ընդամենը թյուրիմացության արդյունք են և իրենց ձևավորման ողջ գործընթացում, ընդհուպ մինչև իրենց կյանքի «պատասխանատու» ժամանակները, բացարձակապես ոչինչ ձեռք չեն բերում, որ համապատասխանի ըստ Աստծո պատկերի իրենց արարմանը, այսինքն՝ մարդուն, և որոնք անխոնջ կերպով, մինչև վերջին շունչը փչելն իրենց մեջ կուտակում են միայն այնպիսի հրաշալիքներ, ինչպիսիք են՝ «ցանկասիրությունը», «փսլնքոտությունը», «կնասիրությունը», «չարակամությունը», «փոքրոգությունը», «նախանձությունը» և մարդուն ոչ վայել շատ այլ արատներ:

Ես մտադիր եմ իմ գրվածքների համար այնպիսի հերոսներ ընտրել, որ ամեն ոք, ինչպես ասում են, «կամա-ակամա» իր ողջ էությանբ զգա նրանց իրական լինելը, և յուրաքանչյուր ընթերցողի ներսում բյուրեղանան տվյալներ, որ իմ գրքի հերոսներն են դարձել ոչ թե «ով պատահի», այլ նրանք, ովքեր իրապես «ինչ-որ բան» են ներկայացնում իրենցից:

Այս վերջին շաբաթներում, ամբողջովին հիվանդ մարմնով անկողնում պառկած, ես մտովի նախագծեցի իմ ապագա գրվածքների համառոտ բովանդակությունը, կշռադատեցի դրանց շարադրման ձևն ու հաջորդականությունը և որոշեցի իմ գրվածքների առաջին մասի գլխավոր հերոս վերցնել գիտե՞ք ում... Մեծն Բեհեդգեբուդին, չնայած այն բանին, որ իմ այդ ընտրությունը հենց սկզբից ընթերցողների մեծամասնության մտածողության մեջ կառաջացնի այնպիսի մտային

նմանազգացություններ, որոնք նրանց մեջ կծնեն ամեն տեսակի ինքնաբերական ու հակասական ազդակներ՝ այն տվյալների բազմության ազդեցությամբ, որոնք անխուսափելիորեն մարդկանց հոգեկառույցում ձևավորվում են մեր արտաքին կյանքում հաստատված բոլոր աննորմալ պայմանների հետևանքով, որոնք էլ իրենց հերթին, ընդհանուր առմամբ, մարդկանց ներսում բյուրեղանում են հանրահայտ, մեր կյանքում գոյություն ունեցող ու խոր արմատներ ձգած, այսպես կոչված, կրոնական բարոյախոսության հետևանքով: Եվ, հետևաբար, ընթերցողների մոտ պետք է որ անբացատրելի թշնամանք ծագի անձամբ իմ նկատմամբ:

Բայց, գիտե՛ս ինչ կա, ընթերցող:

Այն դեպքում, եթե դու, անկախ իմ Նախագգուշացումից, խիզախես շարունակել իմ հետագա գրվածքներին ծանոթանալը, միշտ ջանաս դրանք ընկալել անաչառության մղումով և ըմբռնես այն հիմնախնդրի բուն էությունը, որը ես որոշել եմ լուսաբանել, ինչպես նաև հաշվի առնելով մարդկային հոգեկառույցին բնորոշ այն յուրահատկությունը, որ բարու անարգել ընկալումը հնարավոր է լինում բացառապես միայն այն դեպքում, երբ հաստատված է լինում, այսպես կոչված, «անկեղծ վստահության փոխադարձ կապ», այժմ ես ուզում եմ քեզ մատուցել իմ անկեղծ խոստովանությունն իմ ներսում առաջացած այն նմանազգացությունների վերաբերյալ, որոնց հետևանքով իմ գիտակցության համապատասխան տիրույթում գոյացել են այն տվյալները, որոնք դրդում են իմ ողջ անհատականությանը, որ իմ գրվածքի գլխավոր հերոս ընտրեմ հատկապես այն անհատին, որը քո ներքին հայացքի դեմ հանում է որպես հենց ինքը՝ պարոն Բեհեդգեբուղը:

Դա ես անում եմ ոչ առանց խորամանկության: Իմ այդ խորամանկությունը պայմանավորված է այն տրամաբանական ենթադրությամբ, որ եթե ես նրան շնորհեմ իմ ուշադրությունը, ապա նա անհապաղ (դրան ես բոլորովին չեմ կասկածում) կդրսևորի իր երախտագիտությունը և իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով ինձ կօգնի, որ ավարտին հասցնեմ մտադրվածս գրվածքները:

Թեև պարոն Բեհեդգեբուղը, ինչպես ասում են, «ուրիշ խմորից է հունցված», սակայն, քանի որ Նա նաև մտածել գիտի և, որ շատ կարևոր է (ինչպես վերջերս իմացա հայտնի կաթոլիկ քահանա եղբայր Բալդավոնի գրած տրակտատից)՝ պոչի վրա հյուսք ունի, ապա ես, իմ փորձով լիովին համոզված լինելով, որ հյուսքը երբեք բնական ձևով չի աճում, այլ ստացվում է զանազան միտումնավոր ձեռնածություններով, գրքեր կարդալու արդյունքում իմ գիտակցության մեջ ձևավորված հիերոմանտիայի¹¹ «առողջ տրամաբանությունը» համապատասխան եզրակացնում եմ, որ պարոն Բեհեդգեբուղը նաև զգալի փառասիրությամբ է օժտված, ուստիև ծայրահեղ անհարմար կզգա, եթե չօգնի նրան, ով գովազդում է իր անունը:

Իզուր չէ, որ մեր փառապանծ ու անմահ ուսուցիչ Մովսես Նապրեդինը հաճախ ասում էր. «Եթե ձեռք չյուղես, ոչ մի տեղ չես կարողանա ո՛չ յուր գնալ, ո՛չ էլ անգամ շնչել»: Իսկ մի ուրիշ, նույնպես նշանավոր իմաստուն, որն այդպիսին է դարձել մարդկային անանց հիմարության շնորհիվ, և որի անունն է Թիլ Ուլենշպիգել, նույն այդ միտքն արտահայտել է հետևյալ բառերով. «Չյուղես՝ առաջ չես գնա»:

Այս և էլի շատ ուրիշ ժողովրդական իմաստության ասույթներ իմանալով՝ ես որոշել եմ «յուղել» հենց իրեն՝ պարոն Բեհեդգեբուղին, որը, ինչպես ամեն ոք հրաշալի հասկանում է, հնարավորությունների ու գիտելիքների առատ պաշար ունի:

Շերի ք է, ծերու՛կ, մի կողմ դիր կատակներդ, թեկու՛զ՝ փիլիսոփայական: Քո բոլոր այդ շեղումներով հանդերձ՝ կարծես թե խախտեցիր մեկն այն գլխավոր սկզբունքներից, որոնք մշակվել են քո ներսում և դրվել այն համակարգի հիմքում, որի օգնությամբ, նախապես կշռադատված ձևով, այս նոր մասնագիտության միջոցով պետք է քո երազանքները կյանքի կոչեիր. այդ սկզբունքն այն էր, որ միշտ հիշես ու հաշվի առնես այն հանգամանքը, որ ժամանակակից ընթերցողի մտածողությունը թուլացած է, և չարժե կարճ ժամկետի ընթացքում նրան հոգնեցնել չափից դուրս շատ գաղափարներով:

Ավելին, երբ ես խնդրեցի մեկին, որն ինձ շրջապատող մարդկանցից է՝ նրանցից, որոնք պատրաստ են «Դրախտ մտնել ուղղակի տրեխներով», որ նա բարձրաձայն կարդա այն ամենը, ինչ ես արդեն գրել էի իմ այս ներածական գլխում, այնժամ այն, ինչ ես իմ «ԵՄ»-ն եմ անվանել (իհարկե՛ն՝ այն ամբողջ տվյալների մասնակցությամբ, որոնք իմ յուրահատուկ հոգեկառույցում ի մի են եկել անցած

¹¹ Զոհաբերված կենդանիների փորոտիքով կատարվող գուշակություն

տարիների ընթացքում, որոնք էլ, այլ բաներից զատ, ինձ օժտել են ինձ նման արարածների ուրիշ տարատեսակների հոգեկերպերը հասկանալու ունակությամբ), փաստեց ու համոզվեց, որ անխտիր բոլոր ընթերցողների ներսում, հենց միայն այս առաջին գլուխը կարդալուց հետո, անխուսափելիորեն պետք է որ առաջանա «մի բան», որն ինքնաբերաբար անբարյացակամություն կծնի անձամբ իմ հանդեպ:

Ճիշտն ասած, ինձ հիմա գլխավորապես ոչ թե դա է մտահոգում, այլ այն, որ այդ ընթերցանությունից հետո ես նաև ինձ համար փաստեցի, որ այս գլխի ողջ շարադրվածի արդյունքում, որում վերը հիշատակած «ԵՄ»-ն առանձնապես մեծ դեր չի խաղացել, իմ արարմունքը լիակատար հակասության մեջ է ընկել իմ կողմից առանձնահույժ հարգանքի արժանացած Համընդհանուր Ուսուցիչ Մոլլա Նասրեդինի այն պատվիրանի հետ, որն ասում է. «Ճիպտիդ ծայրով շնաճանճերի բույնը մի՛ բզբզիր»:

Հուզմունքը, որը ծագեց իմ գիտակցության մեջ ու տիրեց իմ ողջ օրգանիզմին՝ ազդելով զգացմունքներիս վրա, թե ընթերցողի մոտ ոչ բարեկամական զգացմունք կծագի իմ նկատմամբ, անմիջապես մարեց, հենց որ ես հիշեցի ռուսական մի հին ասացվածք. «Շատ որ մանրանա՝ այլուր կդառնա»:

Բայց հիմա ինձ լրջորեն անհանգստացնում է ոչ միայն իմ օրգանիզմում առաջացած հուզմունքը՝ կապված այն բանի հետ, որ չեմ հետևել Մոլլա Նասրեդինի պատգամին. հենց որ ես սա հասկացա, իմ ներսում էլ ավելի սաստկացավ շատ տարօրինակ մի գործընթաց, որն սկզբնավորվեց վերջերս իմ հայտնաբերած երկու «հոգիներում» և վերածվեց անսովոր քորի, այնպես որ այն հիմա անտանելի ցավ է առաջացնում իմ առանց այն էլ ծանրաբեռնված արևահյուսակի աջ մասից ներքև:

Սպասի՛ր... Ոնց որ թե այդ գործընթացը նույնպես դադարում է, և իմ գիտակցության բոլոր խոր անկյուններում ու նույնիսկ, առաջժմ ասենք, «ենթագիտակցությունից էլ ցած», արդեն սկսում է կազմավորվել լիակատար վստահության համար անհրաժեշտ ամեն ինչ, քանի որ ես հիշեցի կենցաղային իմաստության ևս մի կտոր, որի շուրջ խորհրդածելն իմ միտքը հանգեցրեց այն կարծիքին, որ, եթե ես վարվել եմ գերապատիվ Մոլլա Նասրեդինի պատվիրանին հակառակ, այնուամենայնիվ ակամա գործել եմ վերին աստիճանի համակրելի, Երկրի վրա ոչ այնքան հայտնի, բայց իրեն ճանաչողների և թեկուզ մեկ անգամ հանդիպածների համար անմոռանալի, թիֆլիսցի Կարապետի՝ այդ իսկական գանձի սկզբունքին համապատասխան:

Ոչինչ չես կարող անել... Մեկ որ իմ այս ներածական գլուխն այսքան երկար ստացվեց, մեծ դժբախտություն չի լինի, եթե մի քիչ էլ երկարացնեմ և պատմեմ չափազանց համակրելի թիֆլիսցի Կարապետի մասին:

Նախ և առաջ պետք է ասեմ, որ քսան-քսանհինգ տարի առաջ Թիֆլիսի երկաթգծի կայարանում «շոգեշշակ» էր գործում:

Սուլոցը տրվում էր ամեն առավոտ, որպեսզի երկաթուղայիններն ու կայարանի բանվորներն արթնանան, բայց, քանի որ կայարանը բլրի վրա էր, այդ սուլոցը լսվում էր ամբողջ քաղաքում՝ արթնացնելով ոչ միայն երկաթուղագործներին, այլ նաև Թիֆլիսի բոլոր բնակիչներին:

Թիֆլիսյան տեղական իշխանությունները, որքան հիշում եմ, նույնիսկ գրագրություն են վարել երկաթգծի ղեկավարության հետ խաղաղ քաղաքացիների վաղորդյան քունը խանգարելու հարցով:

Շչակի համար շոգի տալը հենց այդ Կարապետի պարտականությունն էր, որը կայարանի աշխատողներից էր:

Եվ այսպես, երբ ամեն առավոտ նա մոտենում էր այն պարանին, որի օգնությամբ շոգի էր տալիս շչակին, սովորաբար նախքան պարանը քաշելը ձեռքը թափ էր տալիս բոլոր ուղղություններով և, այնպես հանդիսավոր, ինչպես մոլլան է ձայնը զլում մինարեթից, բարձրաձայն գոչում էր.

– Ձեր մերը..., ձեր հերը..., ձեր պապը՝ ավելի վատ..., թող ձեր աչքերը, ականջները, քիթը, փայծաղը, լյարդը, կոշտուկները...,– և այլն, և այլն:

Կարճ ասած՝ ամեն հանգով իրեն հայտնի բոլոր անեծքները տալիս էր, նոր քաշում պարանը:

Երբ ես լսեցի այդ Կարապետի և նրա այդ սովորության մասին, մի անգամ երեկոյան գործից հետո այցելեցի նրան՝ հետո տանելով կախեթյան գինու ոչ մեծ մի տիկ: Տեղական ծիսակարգով պարտադիր համարվող «հանդիսավոր կենացների» ավարտից հետո ես հարցրի (իհարկե, հարկ եղած ձևով պահպանելով տեղական կանոններով հաստատված, փոխհարաբերություններում արտահայտվող «հարգ ու պատիվը»), թե ինչու է նա այդպես անում:

Մի շնչով բաժակը դատարկելուց և մի հատված «Խմածներս մի բան չէր...» հայտնի վրացական երգից երգելուց հետո, որն անպայման երգվում է կոնծարանելիս, նա անշտապ ինձ այսպես պատասխանեց.

– Քանի որ Դուք գինին այնպես չէք խմում, ինչպես հիմա են խմում, այսինքն՝ ոչ թե ձևի համար, այլ իսկապես անկեղծ, ապա ես դրանից գլխի եմ ընկնում, որ Դուք այդ մասին ուզում եք իմանալ ոչ թե հետաքրքրասիրությունից դրդված, ինչպես մեր ինժեներներն ու տեխնիկները, այլ իսկապես գիտելիքի եք ձգտում. դրա համար էլ ես ոչ միայն ուզում եմ, այլ նաև պարտավոր եմ անկեղծորեն Ձեզ հայտնել իմ այն ներքին, այսպես ասած, «նրբին դատողությունների» պատճառը, որոնք հանգեցրին այդ սովորությանը և կամաց-կամաց իմ մեջ ամրապնդեցին այն:

Հետո նա պատմեց հետևյալը.

«Առաջ այս կայարանում ես գիշերներն էի աշխատում. շոգեկաթասներն էի մաքրում, բայց, երբ այս շոգեշշակը հայտնվեց այստեղ, կայարանի պետը, հավանաբար հաշվի առնելով իմ տարիքն ու ծանր աշխատանք կատարելու անկարողությունս, հրամայեց, որ զբաղվեմ միայն այդ շշակի համար շոգի տալով, որի համար ես պետք է ամեն առավոտ և ամեն երեկո որոշակի ժամերի գայի գործի:

Իմ այդ նոր աշխատանքի հենց առաջին շաբաթում ես մի անգամ նկատեցի, որ իմ այդ պարտականությունը կատարելուց հետո, ամբողջ մեկ կամ երկու ժամ, ես ինձ ինչ-որ անսովոր եմ զգում: Բայց երբ այդ տարօրինակ զգացողությունն օր օրի սկսեց ուժեղանալ և ի վերջո վերածվել որոշակի բնագոյային անհանգստության, ինչի հետևանքով նույնիսկ իմ սիրած մախոխից¹² սկսեցի հետ քաշվել, այդ ժամանակվանից սկսած, ես սկսեցի հա՛ մտածել ու մտածել, որպեսզի պարզեմ դրա պատճառը: Ես այդ ամենի մասին ինչ-որ պատճառով հատկապես լարված էի մտածում այն ժամանակ, երբ գալիս էի գործի կամ վերադառնում էի տուն, բայց, որքան էլ ջանում էի, գոնե մոտավոր կերպով ինձ համար բացարձակապես ոչինչ չէի կարողանում պարզել:

Այդպես համարյա երկու տարի շարունակվեց, և, վերջապես, երբ պարանը քաշելուց առաջացած կոշտուկներն իմ ափերի մեջ արդեն լավ պնդացել էին, ես լիովին պատահականորեն ու անսպասելիորեն հասկացա, թե ինչու է ինձ մոտ առաջանում այդ անհանգստությունը:

Ճիշտ հասկանալուս համար, որի արդյունքում իմ մեջ անկոտրում համոզմունք ձևավորվեց դրա վերաբերյալ, խթան հանդիսացավ այն, որ մի անգամ, բավականին յուրօրինակ հանգամանքներում, պատահաբար մի բացականչություն լսեցի:

Մի անգամ առավոտյան, երբ ես դեռ քնաթաթախ էի, քանի որ գիշերվա առաջին կեսին ներկա էի եղել իմ հարևանի իններորդ աղջկա կնունքին, իսկ երկրորդ կեսին մի շատ հետաքրքիր գիրք էի կարդացել, որը պատահաբար էի ձեռք բերել, և որի վերնագիրը «Երագներ ու կախարդանքներ» էր, շտապում էի սուլոց տալու, երբ փողոցի անկյունում հանկարծ տեսա ինձ ծանոթ սափրիչին, որն աշխատում էր քաղաքային վարչությունում. սա նշան արեց, որ կանգնեմ:

Այդ ինձ ծանոթ սափրիչի պարտականությունն այն էր, որ որոշակի ժամանակ իր օգնականի հետ հատուկ կահավորված սայլակով պետք է ման գար քաղաքում և հավաքեր այն անտեր շներին, որոնց վզակապերի վրա չէր լինի մետաղական այն հատուկ ամրակներից, որոնք տեղական իշխանությունները շնատերերին բաժանում են հարկերը վճարելուց հետո: Հավաքած շներին նա պետք է հասցներ քաղաքային սպանդանոց, որտեղ պետական ծախսով դրանց երկու շաբաթ պահում էին՝ կերակրելով սպանդանոցի թերմացքներով: Եթե այդ ժամկետի ընթացքում շնատերերը չէին հայտնվում, որպեսզի մուծեն սահմանված հարկը, ապա այդ շներին զգալի հանդիսավորությամբ որոշակի անցուղով քշում էին ուղիղ դեպի իրենց համար հատուկ պատրաստված վառարանը:

Շուտով այդ նշանավոր ու եկամտաբեր վառարանի մյուս ծայրից ախորժալի բլթոցով քաղաքի այրերի համար դուրս էր հոսում որոշակի քանակությամբ թափանցիկ ու կատարյալ մաքուր ճարպ, որից օձառ էին արտադրում և, հնարավոր է, էլի ինչ-որ բան, ինչպես նաև, ականջի համար ոչ պակաս ախորժալի խոխոջունով, վառարանից դուրս էր հոսում բավականին շատ օգտակար պարարտանյութ:

Այդ իմ սափրիչ ընկերը շներին որսում էր հետևյալ պարզ ու զարմանալի ճարպիկ հնարքով:

Նա ինչ-որ տեղից մի սովորական, մեծ ու հին ուռկան էր ճարել, որը մեր քաղաքի ետնախորշերով իր յուրահատուկ արշավանքների ընթացքում հատուկ ձևով ծալծլած վիճակում կրում էր իր ամուր

¹² հայկական ազգային ճաշատեսակ

ուսերի վրա, և երբ որևէ «անանձնագիր» շուն հանկարծ հայտնվում էր նրա ամենատես ու շնային ցեղի համար սարսափելի տեսադաշտում, նա, առանց շտապելու, հովազային փափկությամբ մոտենում էր գոհին և, ընտրելով այնպիսի հարմար պահ, երբ շան ուշադրությունը գրավված էր լինում ինչ-որ բանով, նետում էր իր ուռկանը, բռնում շանը և արագորեն քաշում սայլակի մոտ, ապա բաց թողնում նրան այնպես, որ հայտնվի սայլակին ամրացված վանդակի մեջ:

Երբ իմ ընկեր սափրիչն ինձ կանգ առնելու նշան արեց, հենց այդ պահին նշան էր բռնում, որպեսզի հարմար պահի իր ցանցը նետի հերթական գոհի վրա, որը պոչը խաղացնելով գնում էր մի էգ շան: Ընկերս արդեն ուր որ է ցանցը պիտի նետեր, երբ հանկարծ հնչեցին հարևան եկեղեցու զանգերը՝ հավատացյալ ժողովրդին կանչելով առավոտյան հաղորդության:

Վաղորդյան անդորրում հնչած այդ անսպասելի դողանջից շունը վախեցավ և, մի կողմ ցատկելով, իր ամբողջ շնային արագությամբ հրացանի գնդակի պես սլացավ անմարդ փողոցով:

Սափրիչն այնպես կատաղեց, որ նույնիսկ կոնատակերի մագերը բիզ-բիզ կանգնեցին: Նա ցանցը շարժեց սալարկին և, թքելով ձախ ուսի վրայից, բացականչեց.

-Թու՛, սատանա... Ժամանակ գտան զանգ հնչեցնելու:

Հենց որ սափրիչի այդ բացականչությունը հասավ իմ գանգոլեղին, նրանում սկսեցին զանազան մտքեր խռնվել, որոնք էլ, ինչպես կարծում եմ, հանգեցրին այն բանի ճիշտ ըմբռնմանը, թե ինչու է իմ մեջ ծագում այդ բնագոյային անհանգստությունը:

Առաջին պահին, երբ ես դա հասկացա, ինքս ինձ հանդիմանեցի, թե ինչու մինչ այդ իմ մտքում չէր ծագել այդքան պարզ ու ակնհայտ միտքը:

Իմ ամբողջ էությանմբ ես հասկացա, որ շրջապատի կյանքի վրա թողած իմ ազդեցությունը չէր էլ կարող այլ արդյունքի հանգեցնել, քան այն գործընթացն է, որն անընդհատ շարունակվում էր իմ ներսում:

Եվ իսկապես, բոլոր նրանք, որոնց արթնացնում էր իմ հնչեցրած շչակի աղմուկը, իրենց խանգարված քաղցր քնի պատճառով պե տք է որ անկասկած ինձ հայհոյեին «աշխարհիս տակ եղած» բոլոր հայհոյանքներով. հենց ինձ՝ այդ դժոխային ոռնոցի հեղինակիս, և դրա հետևանքով, իհարկե, բոլոր կողմերից դեպի իմ անձի կողմն էին հոսում չարակամության ամեն տեսակի թրթիռներ:

Այդ հիշարժան առավոտյան, երբ ես իմ պարտականությունը կատարելուց հետո հարևան դուքանում սխտորով խաշ էի ուտում, այդ ընթացքում շարունակում էի մտածել և հանգեցի հետևյալ եզրակացության. եթե ես կանխավ հայհոյեմ բոլոր նրանց, որոնց համար իմ աշխատանքը խանգարիչ աղմուկ է (նրանցից ոմանց համար օգտակար լինելով հանդերձ), ապա, համաձայն այն գրքի բացատրության, որը կարդացել էի նախորդ գիշերը, որքան էլ ինձ հայհոյեն նրանք, որոնք գտնվում են, այսպես ասած, «ապուշության տիրություն», այսինքն՝ կեսքուն-կեսարթուն վիճակում, դրանք ինձ վրա ոչ մի ազդեցություն չեն թողնի, ինչպես ասվում էր այդ նույն գրքում:

Եվ իրոք, այն ժամանակից ի վեր, երբ ես այդ միջոցը կիրառում եմ, այլևս չեմ զգում նշածս բնագոյային անհանգստությունը:»

Դե, իսկ այժմ, ո՛վ իմ համբերատար ընթերցող, ես պետք է իսկապես ավարտեմ իմ այս ներածական գլուխը: Մնում է միայն ստորագրել:

Նա, ում...

Հո՛ւ պ... Այստեղ զգուշություն է պետք:

Ստորագրության հետ չի կարելի կատակ անել, այլապես ձեզ հետ կվարվեն այնպես, ինչպես վարվում են Կենտրոնական Եվրոպայի մի կայսրությունում. ձեզ ստիպում են տասը տարվա վարձակալական վարձ վճարել այն տան համար, որում ընդամենը երեք ամիս եք ապրել, միայն այն պատճառով, որ անզգուշաբար ստորագրել էք այն թղթի տակ, որը ձեզ պարտավորեցնում է ամեն տարի պայմանագիրը թարմացնել:

Պարզ է, որ այս և իմ կենսափորձի այլ օրինակներից ելնելով՝ ամեն դեպքում ես պետք է շատ ու շատ զգույշ լինեմ իմ անձնական ստորագրությունը որևէ տեղ դնելիս:

Ինչ որ է՝

*Նա, ում մանուկ հասակում «Թաթախ» են ասել,
վաղ պատանեկության շրջանում՝ «Չոռնի»,*

ավելի ուշ՝ «Չոռնի Գրեկ»,
միջին տարիքում՝ «Թուրքեստանի Վագր»,
իսկ հիմա՝ ոչ այլ ոք, քան «մայր» կամ «միստր» Գյուրջին,
կամ՝ «իշխան Մուխրանսկու ազգական»,
կամ, վերջապես, ուղղակի «Պարուսույց»

ԳԼՈՒԽ Բ

Թե ինչու էր Բեհեդգեբուղը հայտնվել մեր Արեգակնային համակարգությունում

Սա եղել է, ըստ օբյեկտիվ ժամանակագրության, Աշխարհի արարումից 223 տարի անց, կամ, ինչպես այստեղ՝ Երկրում կասեին, Քրիստոսի Ծննդից հետո 1921 թվականին:

Տիեզերքով սուրում էր «միջտարածական» հաղորդակցության Քարնակ տիեզերանավը: Այն «Ասուպարածկաթի»¹³, այսինքն՝ Ծիր-Կաթինի տարածության Քարատակ¹⁴ մոլորակից թռչում էր դեպի Պնդացնոդ¹⁵ արևային համակարգը, որի արևը կոչվում է նաև «Բնեռային Աստղ»:

Նշածս միջտարածական տիեզերանավում Բեհեդգեբուղն էր իր ազգականների ու մերձակիցների հետ:

Նա ուղևորվում էր դեպի Բիվոզվրադենդր¹⁶ մոլորակը, որտեղ հասուն կամաժողով պետք է տեղի ունենար, որին նա խոստացել էր մասնակցել իր վաղեմի բարեկամների խնդրանքով:

Միայն այդ վաղեմի բարեկամության հուշն էր ստիպել նրան, որ ընդունի հրավերը, քանի որ արդեն ջահել չէր, իսկ այդպիսի երկարատև ճամփորդությունն իր անկանխատեսելի անհարմարություններով հանդերձ հեշտ գործ չէր նրա տարիքն ունեցող մեկի համար:

Այդ ճամփորդությունից ոչ շատ վաղ Բեհեդգեբուղը վերադարձել էր Քարատակ մոլորակը՝ իր սկզբնավորման վայրը, որից շատ հեռու, իր էությունից անկախ հանգամանքների բերումով, բազմաթիվ տարիներ էր անցկացրել այնպիսի պայմաններում, որոնք իր բնույթին համապատասխան չէին եղել:

Իրեն չհամապատասխանող այդ երկարամյա գոյությունը, իր բնույթին անհարիր տպավորություններով և էությանը խորթ ապրումներով հանդերձ, չէր կարող նրա ընհանուր ներկայության վրա զգալի հետք չթողնել:

Դրանից գատ, նաև ժամանակն էր խաղացել իր անխուսափելի դերը, և Բեհեդգեբուղին, այն նույն Բեհեդգեբուղին, որն արտակարգ առողջ, բուռն ու հրաշալի երիտասարդություն էր ունեցել, գոյության վերը նշածս անսովոր պայմանները հասցրել էին նույնքան անսովոր ծերության:

Վաղուց, շատ վաղուց, երբ Բեհեդգեբուղն ապրում էր Քարատակ մոլորակի վրա, խելքի արտասովոր ստեղծարարության շնորհիվ նրան ծառայության էին կանչել Բացարձակ Արև, որն Իր

¹³ ռուս. տարբերակում՝ «Ассопарата», անգլ. տարբերակում՝ “Assooparatsata”

¹⁴ ռուս. տարբերակում՝ «Каратас», անգլ. տարբերակում՝ “Karatas”

¹⁵ ռուս. տարբերակում՝ «Пандецнох», անգլ. տարբերակում՝ “Pandetznokh”

¹⁶ ռուս. տարբերակում՝ «Ревозвradендр», անգլ. տարբերակում՝ “Revozvrarendr”

Գտնվելու հիմնական վայր է ընտրել մեր Բարձրագույն Տիրակալ Անսահմանությունը, և այնտեղ Բեհեղզեբուղը մի քանի իր նմանների հետ դարձել էր Նորին Անսահմանության մերձակիցը:

Հենց այդ ժամանակ էր, որ, ջահելության պատճառով դեռևս չկազմավորված Բանականության, ինչպես նաև մտածողության տհասության ու բռնկունության հետևանքով, որը պայմանավորված էր հասկացողության սահմանափակությամբ (ինչը բնորոշ է դեռևս որոշակիորեն պատասխանատու չդարձած էակներին), Աշխարհի ղեկավարման գործում Բեհեղզեբուղը մի անգամ ինչ-որ «անտրամաբանական» բան նկատեց և, այդ հարցում համախոհներ գտնելով իր նման դեռևս չկազմավորված ընկերների շրջապատում, սկսեց միջամտել իրեն չվերաբերող գործին:

Բեհեղզեբուղի բնավորության բռնկուն ուժի հետևանքով նրա և նրա ընկերների այն ժամանակվա միջամտությունը շուտով բոլորի խելքները տարավ՝ դրանով իսկ Մեզալակոսմոսի կենտրոնական պետությանը կանգնեցնելով համարյա թե հեղափոխության եզրին:

Իմանալով այդ Նորին Անսահմանությունը, չնայած իր Ամենասիրությանն ու Ամենաներումին, ստիպված եղավ Բեհեղզեբուղին իր ընկերների հետ աքսորել Տիեզերքի հեռավոր շրջաններից մեկը՝ հենց այն Արգ¹⁷ արևային համակարգությունը, որին դրա բնակիչներն անվանում են ուղղակի «Արեգակնային համակարգություն»: Որպես նրանց հիմնական բնակության վայր ընտրվեց այդ համակարգի մոլորակներից մեկը՝ Մարսը. նաև թույլ տրվեց, որ ապրեն նաև այլ մոլորակների վրա՝ միայն թե սովյալ արևային համակարգության սահմաններում գտնվող:

Բեհեղզեբուղի ընկերներից բացի, աքսորյալների խմբում կային նաև նրա մի քանի ուղղակի ցավակիցները, ինչպես նաև նրա և նրա ընկերների մերձավորներն ու ենթակաները:

Բոլոր նրանք իրենց յուրայիններով ժամանեցին այդ հեռավոր անկյունը, և շուտով այնտեղ՝ Մարս մոլորակի վրա, մեր Համայն Տիեզերքի կենտրոնական մասի զանազան մոլորակներից եկած եռակենտրոն էակների մի ամբողջ զաղուրթ կազմավորվեց:

Նշված մոլորակի համար անսովոր այդ բնակչությունը կամաց-կամաց հարմարվեց նոր բնակավայրի պայմաններին: Շատերն այնտեղ նույնիսկ տարբեր զբաղմունքներ գտան, որպեսզի դրանով կարճեն աքսորի երկարամյա ժամկետը:

Զբաղմունք գտան ինչպես հենց Մարսի վրա, այպես էլ հարևան մոլորակների վրա, հենց այն մոլորակների, որոնք համարյա լիովին բարձիթողի վիճակում էին՝ կենտրոնից հեռու գտնվելու և իրենց բոլոր կազմավորումների աղքատության պատճառով:

Տարիների ընթացքի հետ շատերը կամ սեփական նախաձեռնությամբ, կամ էլ ընդհանուր բնույթի կարիքներից դրդված, աստիճանաբար Մարսից տեղափոխվեցին այլ մոլորակներ, իսկ ինքը՝ Բեհեղզեբուղը, իր յուրայիններով մնաց Մարս մոլորակի վրա, որտեղ արդեն քիչ թե շատ տանելի գոյություն էր ապահովել իր համար:

Նրա գիավոր զբաղմունքներից մեկը Մարսի վրա աստղադիտարանի կառուցումն էր, որպեսզի դրանով դիտի ինչպես Տիեզերքի հեռավոր կետերը, այնպես էլ հարևան մոլորակներում ապրող էակների կյանքի պայմանները, և այդ աստղադիտարանը, ինչպես այստեղ տեղին է նշել, հետագայում լավ հայտնի դարձավ և նույնիսկ նշանավոր համարվեց Համայն Տիեզերքում ամենուրեք:

Թեև Արգ արևային համակարգն անուշադրության էր մատնված կենտրոնից հեռու լինելու և մի շարք այլ պատճառներով, այնուամենայնիվ մեր Բարձրագույն Տիրակալը ժամանակ առ ժամանակ Իր Բանագնացներին առաքում էր դեպի այդ համակարգության մոլորակները, որպեսզի քիչ թե շատ կարգավորի դրանցում ծնունդ առնող եռուղեղ էակների կենցաղային գոյությունը և այն համաձայնեցնի ընդհանուր Համաշխարհային Ներդաշնակության հետ:

Դրան համապատասխան, մի անգամ այդ արևային համակարգության մոլորակներից մեկը՝ Երկիր մոլորակ, մեր Անսահմանության կողմից առաքվեց այդպիսի մի Բանագնաց՝ ուն Աշխաթա Շիեմաշ: Քանի որ այդ ժամանակ Բեհեղզեբուղը նրա այդ առաքելությանն անհրաժեշտ ինչ-որ բան արեց, ապա նշածս Բանագնացը, վերադառնալով Բացարձակ Արև, եռանդագին խնդրեց Նորին Անսահմանությանը ներում շնորհել երբեմնի երիտասարդ ու բռնկուն, իսկ այժմ արդեն ծերացած Բեհեղզեբուղին:

¹⁷ ռուս. տարբերակում՝ «Ор», անգլ. տարբերակում՝ «Ors»

Ընդառաջ գնալով Աշխաթա Շիեմաշի խնդրանքին, ինչպես նաև հաշվի առնելով հենց իր Բեհեդզեբուդի համեստ ու իմացության ձգտող գոյատևումը՝ մեր Ստեղծարար Արարիչը ներեց նրան և թույլ տվեց, որ վերադառնա իր սկզբնավորման վայրը:

Ահա թե ինչու Բեհեդզեբուդը երկար բացակայությունից հետո այժմ նորից հայտնվեց Տիեզերքի կենտրոնում:

Աքսորված լինելու ընթացքում նրա ազդեցությունն ու հեղինակությունը ոչ միայն չնվազեցին, այլև, ընդհակառակը, շատ ու շատ աճեցին, քանի որ նրա շրջապատում գտնվողները հստակ հասկանում էին, որ վերը նշված արտասովոր պայմաններում նրա երկարատև գոյության շնորհիվ նրա գիտելիքներն ու փորձը պետք է որ անխուսափելիորեն աճած ու խորացած լինեին:

Եվ ահա, երբ Պնդացնող արևային համակարգի մոլորակներից մեկում շատ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան, Բեհեդզեբուդի վաղեմի ծանոթները որոշեցին անհանգստացնել նրան և հրավիրեցին այդ իրադարձությունների հետ կապված համաժողովին մասնակցելու:

Եվ հենց դրա արդյունքում էր, որ Բեհեդզեբուդը Քարնակ տիեզերանավով Քարատակ մոլորակից երկարատև ճամփորդության էր դուրս եկել դեպի Բիվոզվրադենդր մոլորակը:

«Քարնակ» կոչվող այդ հսկա տիեզերանավի ուղևորներն էին Բեհեդզեբուդի ազգականներն ու մերձակիցները, ինչպես նաև շատ այլ էակներ, որոնք սպասարկում էին տիեզերանավը:

Հենց այն ժամանակ, որը համընկնում է մեր այս պատումին, բոլոր ուղևորները զբաղված էին կամ իրենց պարտականությունների կատարմամբ, կամ ուղղակի ի կատար էին ածում այն, ինչը կոչվում է «գործուն կենսական մտածողություն»:

Տիեզերանավի բոլոր ուղևորների մեջ աչքի էր ընկնում մի շատ գեղեցիկ պատանի. նա միշտ Բեհեդզեբուդի կողքին էր լինում:

Դա Հասեինն էր՝ Բեհեդզեբուդի սիրելի որդի Թուլուփի որդին:

Աքսորից տուն վերադառնալով՝ Բեհեդզեբուդն իր այդ թոռանը տեսավ առաջին անգամ, գնահատեց նրա բարի սիրտը և, այսպես կոչված, «արյան կանչով» միանգամից սիրեց նրան:

Եվ քանի որ այդ ժամանակը պատահաբար համընկավ այն շրջանին, երբ փոքրիկ Հասեինի Բանականությունը զարգացման կարիք ուներ, Բեհեդզեբուդը, բավականաչափ ազատ ժամանակ ունենալով, ինքը սկսեց զբաղվել թոռան դաստիարակության գործով և, այդ պահից սկսած, ամենուրեք իր հետ տանում էր Հասեինին:

Ահա թե ինչու Հասեինն այժմ ուղեկցում էր Բեհեդզեբուդին՝ լինելով նրա մերձավորների թվում:

Եվ Հասեինն էլ իր հերթին այնքան էր սիրում իր պապին, որ չէր ուզում առանց նրա որևէ քայլ անել և ազահաբար կլանում էր այն ամենը, ինչ ասում և ուսուցանում էր իր պապը:

Այն ժամանակի ընթացքում, որին վերաբերում է մեր այս պատումը, Բեհեդզեբուդը Հասեինի և իր հավատարիմ ծառայի՝ Ահունի հետ, որը միշտ և ամենուրեք ուղեկցում էր նրան, նստած էին ամենաբարձր «կասնիկում»¹⁸, ասինքն՝ Քարնակի վերին հարթակում, «կալնոկրանոնիսի»¹⁹ տակ, որը փոքր-ինչ հիշեցնում էր այն, ինչը մենք «ապակե գմբեթ» կանվանեինք. նրանք այնտեղ զրուցում էին՝ միաժամանակ դիտելով անսահման տարածությունը:

Բեհեդզեբուդը պատմում էր այն արևային համակարգության մասին, որտեղ անց էր կացրել երկար տարիներ:

Այժմ պատմում էր հենց այն մոլորակի բնության յուրահատկությունների մասին, որը «Վեներա» է կոչվում:

Ջրույցի ընթացքում Բեհեդզեբուդին զեկուցեցին, որ նրա հետ ուզում է խոսել տիեզերանավի նավապետը, և այդ խնդրանքին Բեհեդզեբուդը չընդդիմացավ:

¹⁸ ռուս. տարբերակում՝ «касник», անգլ. տարբերակում՝ “kasnik”

¹⁹ ռուս. տարբերակում՝ «калнокрапоис», անգլ. տարբերակում՝ “kalnokranonis”

ԳԼՈՒԽ Գ
Քարնակ տիեզերանավի
անկման հապաղման պատճառը

Դրանից քիչ անց նավապետը ներս մտավ և, Բեհեդզեբուդին մեծարելով նրա դիրքին արժանի պատիվներով, ասաց.

– Ձե՛րդ Գերապատվություն, թույլ տվեք Ձեր հեղինակավոր կարծիքն իմանալ մի «անխուսափելիության» վերաբերյալ, որը հայտնվել է մեր թռիչքագծի վրա և խանգարում է ամենակարճ ուղով սահուն անկում կատարելուն:

Բանն այն է, որ եթե մեր նավն ընթանա նախանշված ուղով, ապա երկու «կիլպրենո»²⁰ հետո պետք է անցնի «Վուանիկ»²¹ արևային համակարգության միջով:

Բայց հենց այն տեղով, որտեղով պետք է անցնի մեր նավը, մոտավորապես մեկ կիլպրենո առաջ անցած կլինի այդ համակարգությանը պատկանող հսկա «Մակուր» գիսավորը, որը երբեմն անվանում են «Գլխակեր»²²:

Ուստի, եթե մենք հետևենք նախանշված ուղուն, ապա անխուսափելիորեն կհատենք այն տարածքը, որով արդեն անցած կլինի այդ գիսավորը:

Ձերդ Գերապատվությունն իհարկե գիտի, որ այդ «Գլխակեր» գիսավորն իր հետևից «զիլնոտրագո»²³-ի ահագին զանգված է թողնում, որը, հայտնվելով որևէ էակի մոլորակային մարմնում, խաթարում է նրա օրգանների մեծ մասի գործունեությունը, քանի դեռ ամբողջովին չի ցնդել դրանց միջից:

Սկզբում մտածեցի,– շարունակեց նավապետը,– նավը վարել այնպես, որ շրջանցենք զիլնոտրագոյի այդ տիրույթները, բայց դրա համար հարկ կլինի մեծ շրջանցում կատարել, որի հետևանքով մեր ճամփորդությունը զգալիորեն կերկարի: Մյուս կողմից՝ ինչ-որ տեղ զիլնոտրագոյի ցրվելուն սպասելն ավելի երկար ժամանակ կլիալի:

Հաշվի առնելով այդ այլընտրանքային տարբերակների միջև եղած զգալի տարբերությունը՝ ես չեմ կարող ինքնուրույն որոշում կայացնել, թե ինչ անենք տվյալ դեպքում, ուստի հանդգնեցի անհանգստացնել Ձերդ Գերապատվությանը, որպեսզի հեղինակավոր խորհուրդ ստանամ այդ առթիվ:

Երբ նավապետն ավարտեց իր խոսքը, Բեհեդզեբուդը մի փոքր խորհելուց հետո ասաց հետևյալը.

– Ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչ խորհուրդ տամ, սիրելի՛ նավապետ: Այն, հա՛... Այն արևային համակարգությունում, որտեղ ես երկար ժամանակ եմ անցկացրել, կա մի մոլորակ, որը Երկիր է կոչվում: Այնտեղ ծնվել և մինչև հիմա էլ ծնվում են շատ տարօրինակ եռակենսոտն էակներ: Ահա այդ մոլորակի «Ասիա» կոչվող աշխարհամասում մի ժամանակ ծնվել ու ապրել է շատ իմաստուն մի եռակենսոտն էակ, որի անունը Մոլլա Նասրեդին էր:

Այդ էակների կյանքի ամեն մի յուրահատուկ իրավիճակի համար՝ լինել դա նշանակալից կամ ոչ նշանակալից, այդ երկրային իմաստուն Մոլլա Նասրեդինը պահած ուներ դիպուկ ու պատկերավոր մի ասույթ:

Քանի որ նրա այդ ասույթներն արտացոլում էին այնտեղի գոյատևման ճշմարիտ ոգին, ես ինքս էլ էի առաջնորդվում դրանցով, որպեսզի ինձ համար քիչ թե շատ տանելի դարձնեմ այդ մոլորակի էակների միջավայրում իմ գոյատևումը:

Ահա սույն դեպքում նույնպես, սիրելի՛ նավապետ, ես մտադիր եմ օգտվել նրա իմաստուն ասույթներից մեկից:

Նման իրավիճակում, որը հիմա մեր գլխին է եկել, նա հավանաբար կասեր. «Գլխիցդ վեր չես թռչի, ոչ էլ արմունկդ կկծես, թեև բերանիցդ շատ հեռու չէ»:

²⁰ «կիլպրենո»-ն այն ժամանակահատվածն է, որը մոտավորապես հավասար է մեր մեկ ժամին

²¹ ռուս. տարբերակում՝ «Вуаник», անգլ. տարբերակում՝ “Vuaniк”

²² Ռուսերենում՝ «сорми-голова» (թոկից փախած), անգլերենում՝ “Madcap”, որը նույն իմաստն ունի. երկուսն էլ ընդունելի չեմ համարում, քանի որ իմաստային առումով չեն համընկնում «Մակուր» անվան հետ, որն, ըստ էության, հայերենի սակրն է՝ տապարաձև գլխով ու երկար պոչով ռազմական զենք, որը հենց գիսավոր է հիշեցնում:

²³ թունավոր գազ, ցիանաթթու կամ կապտաթթու

Հիմա ես, քեզ այդ նույն բանն ասելով, ավելացնում եմ՝ ոչինչ չես կարող անել. եթե վրա է հասնում դեպքը, որին ծնունդ են տվել մեր սեփական ուժերից ավելի զորեղ ուժեր, ապա պետք է հնազանդվենք դրան:

Հարցը միայն այն է, թե քո առաջարկած տարբերակներից հատկապես ո՞րն ընտրվի՝ ինչ-որ տեղ սպասելով երկարացնե՞նք մեր ճամփորդությունը, թե՞ շրջանցում կատարենք:

Ինչպես ասում ես, առաջինն ավելի երկար ժամանակ կլսվի, քան երկրորդը:

Շատ լավ, սիրելի՛ նավապետ. ենթադրենք, թե շրջանցման գնալով մի փոքր ժամանակ կլինայենք: Բայց, ի՞նչ ես կարծում, արժե՞ արդյոք մաշեցնել մեր նավի սարքավորումների մասերը, որպեսզի մի փոքր ավելի շուտ տեղ հասնենք:

Եթե այդ շրջանցումը թեկուզ մի չնչին վնաս կարող է պատճառել մեր նավին, ապա, իմ կարծիքով, պետք է ընտրել առաջին տարբերակը, այսինքն՝ սպասենք ինչ-որ վայրում, մինչև մեր ճանապարհը մաքրվի այդ վնասակար զիլնոտրագոյից: Այդ եղանակով մենք մեր նավը կփրկենք ավելորդ վնասից:

Իսկ այդ չնախատեսված հապաղման հետևանքով գոյացած ժամանակը կաշխատենք լցնել բոլորիս համար օգտակար ինչ-որ բանով:

Օրինակ՝ անձամբ ես մեծ հաճույք կստանամ, եթե քեզ հետ զրուցեմ ժամանակակից նավերի մասին և մասնավորապես մեր նավի մասին:

Իմ բացակայության ընթացքում այդ բնագավառում շատ նոր բաներ են եղել, որոնց մասին ես դեռ ոչինչ չգիտեմ:

Իմ ջահել ժամանակ այդ հսկա միջտարածական տիեզերանավերն այնքան բարդ էին ու վիթխարի, որ դրանց հզորության համարյա կեսը ծախսվում էր շարժման հնարավորության համար անհրաժեշտ նյութերը կրելու վրա:

Իսկ ժամանակակից նավերն իրենց պարզությամբ ու ընդարձակությամբ ուղղակի «երանելի ստոկիրն²⁴» են:

Էակների համար դրանց վրա ապրելն այնքան դյուրին է դարձել, և այնքան ազատ են զգում իրենց կենցաղային կարիքները հոգալիս, որ երբեմն մոռանում ես, որ դու ինչ-որ մտլորակի վրա չես:

Եվ այսպես, սիրելի՛ նավապետ, ես շատ կուզեի իմանալ, թե ինչպես է կառուցվել սույն բարիքը, և ինչ սկզբունքով են աշխատում ժամանակակից տիեզերանավերը:

Առայժմ գնա և զբաղվիր պահանջված կանգառի համար անհրաժեշտ ամեն բան նախապատրաստելու գործով: Իսկ հետո, երբ գործից ազատ կլինես, կրկին արի, և մենք այդ ստիպողական հապաղումը բոլորիս համար օգտակար կդարձնենք զրույցի միջոցով:

Հենց որ նավապետը գնաց, Հասեինը հանկարծ տեղից թռավ, սկսեց պար գալ, ծափ զարկել ու գոչել.

– Ու՛ իս, ինչ լա՛վ է, ինչ լա՛վ է, ես շա՛տ, շա՛տ ուրախ եմ...

Բեհեղզեբուրը քնքշորեն նայեց իր սիրեցյալի ցնծության այդ դրսևորմանը, իսկ Ահունը չլիմացավ և, հանդիմանանքով գլուխն օրորելով, պատանուն կիսաձայն «աճող եսասեր» անվանեց:

Լսելով դա, Հասեինը կանգնեց նրա դիմաց և, կայտառ հայացքը նրան հառելով, ասաց.

– Մի՛ բարկանա ինձ վրա, ծե՛ր Ահուն: Իմ ուրախության պատճառը եսասիրությունը չէ, այլ այն, որ ամեն ինչ այսպես հաջող դասավորվեց ինձ համար: Չէ՞ -որ ինքդ լսեցիր: Իմ սիրելի պապիկը որոշեց ոչ միայն սովորական կանգառ անել, այլ նաև խոստացավ նավապետին, որ նրա հետ զրույց կվարի...

Չէ՞ -որ գիտես, որ սիրելի պապիկիս զրույցները միշտ պատմություններ են պարունակում այն տեղերի մասին, որտեղ ինքը եղել է, և նաև գիտես, թե որքան հիանալի կերպով է նա պատմում, և որքան նոր ու հետաքրքիր տեղեկություններ են այդ պատմություններից անցնում ու բյուրեղանում մեր ներկայության մեջ:

Այստեղ ո՞րն է եսասիրությունը... Մի՞ թե այդ չնախատեսված դեպքի բոլոր հանգամանքներն իր իմաստուն բանականությամբ կշռադատելուց հետո հենց ինքն իր կամքով չորոշեց, որ կանգառ անենք, ինչը կարծես այնքան էլ շատ չի խանգարի իր պլաններին:

Ինձ թվում է, որ իմ սիրելի պապիկը շտապելու կարիք չունի. «Քարնակ»-ի վրա նրա հարմարավետ հանգստի համար ամեն ինչ կա, այստեղ են նաև նրանցից շատերը, որոնք իրեն սիրում են, և որոնց սիրում է ինքը:

²⁴ ռուս. տարբերակում՝ «стокирно», անգլ. տարբերակում՝ “stokirno”

Մի թե չես հիշում նրա հենց նոր ասած խոսքը, որ «մենք չպետք է հակադրվենք մեր ուժերից ավելի գորեղ ուժերին», որին հետո հավելեց, որ «ոչ միայն չպետք է հակադրվենք, այլև պետք է ենթարկվենք և դրանց արգասիքն ընդունենք ամենայն ակնածանքով՝ գովաբանելով ու փառաբանելով Մեր Արարիչ Աստծո հրաշափառ ու նախախնամական գործերը:

Ես ոչ թե այդ չար դիպվածի առիթով եմ ուրախացած, այլ վերից մեզ հասած ու չնախատեսված իրադարձությամբ, որի շնորհիվ մեզ բախտ է վիճակվում մեկ անգամ ևս լսելու իմ սիրելի պապիկի պատմությունները:

Մի թե իմ մեղքով է, որ հանգամանքները պատահաբար դասավորվեցին ինձ համար ամենացանկալի ու հաջող կերպով:

Ո՛չ, սիրելի Ահուն, դու ինձ ոչ միայն չպետք է մեղադրես, այլև, ինչպես ես եմ անում, քո երախտագիտությունը պետք է հայտնես նման բարենպաստ արդյունքներ ստեղծող աղբյուրին:

Ամբողջ այս ընթացքում Բեհեդզեբուդն ուշադրությամբ ու ժպիտով լսում էր իր սիրեցյալի ճտպտանքը, և երբ այն հասավ ավարտին, ասաց.

– Դու ճիշտ ես, ո՛վ իմ սիրելի Հասեին, ուստի ինչ էլ որ ուզես, կպատմեմ նույնիսկ նախքան նավապետի գալը:

Այս լսելուն պես տղան իսկույն մոտ վազեց ու նստեց Բեհեդզեբուդի ոտքերի մոտ և մի փոքր մտածելուց հետո ասաց.

– Սիրելի՛ պապիկ, դու ինձ այնքան շատ ես պատմել այն արևային համակարգության մասին, որտեղ այդքա՛ն երկար տարիներ ես անցկացրել, որ հիմա ես, հնարավոր է, կկարողանայի, հենվելով զուտ տրամաբանության վրա, քո փոխարեն շարունակել մեր Տիեզերքի այդ յուրահատուկ անկյունի բնության մանրամասն նկարագրությունը:

Բայց հիմա ինձ հետաքրքիր է իմանալ՝ այդ արևային համակարգության մոլորակներում բնակվում են արոյոք եռուղեղ էակներ, և հանդերձավորվա՞ծ են արոյոք նրանց «բարձրագույն լինելիական մարմինները»: Խնդրո՞ւմ եմ, սիրելի՛ պապիկ, հիմա հենց այդ մասի՛ն պատմիր,– սիրով դեպի վեր՝ Բեհեդզեբուդին նայելով, իր խոսքն ավարտեց Հասեինը:

«Այո,– սկսեց պատմել Բեհեդզեբուդը,– այդ արևային համակարգության համարյա բոլոր մոլորակներում բնակվում են եռուղեղ էակներ, և համարյա բոլորի բարձրագույն լինելիական մարմինները կարող են հանդերձավորված լինել:

Բարձրագույն լինելիական մարմին կամ, ինչպես այդ արևային համակարգության որոշ մոլորակներում են ասում՝ «հոգի», ունենում են բոլոր մոլորակների վրա բազմացող եռուղեղ էակները, բացառությամբ այն մոլորակների, որոնց մեր Գերսրբազնագույն Բացարձակ Արևի ճառագումները հասնում են միայն այն բանից հետո, երբ բազմակի բախումներից հետո դրանք աստիճանաբար կորցրած են լինում իրենց գործության ամբողջականությունը՝ ի վերջո զրկվելով բարձրագույն լինելիական մարմին հանդերձավորելու կենարար ունակությունից:

Իհարկե, տղա՛ս, նաև այդ արևային համակարգության ամեն մի առանձին մոլորակի վրա բնակվող եռուղեղ էակների մոլորակային մարմիններն են հանդերձավորվում և ստանում այնպիսի արտաքին տեսք, որն ամենաշատն է համապատասխանում տվյալ մոլորակի բնությանը, և իրենց բոլոր մանրամասներով հարմարվում են իրենց շրջապատող բնությանը:

Օրինակ՝ այն մոլորակի վրա, որը բոլոր աքսոբյալներիս համար հանգրվան էր կանխորոշված, ասինքն՝ Մարսի վրա, եռուղեղ էակներն այնպիսի մոլորակային մարմիններ ունեն, որոնք, ինչպե՛ս ասեմ, կարծես «քառունու²⁵» ձևն են հիշեցնում. նրանք երկարավուն է ու լայն, ճարպոտ իրան ունեն, իսկ գլուխներին՝ դուրս ցցված, լուսաճառագ աչքեր: Նրանց հսկայակազմ մոլորակային մարմնի թիկունքին մի գույգ խոշոր թևեր կան, իսկ ստորին մասում՝ համեմատաբար փոքր ոտքեր՝ շատ ուժեղ ճանկերով:

Այդ վիթխարի մոլորակային մարմնի ամբողջ ուժը բնության կողմից հարմարեցված է այնպես, որ էներգիա մատակարարի աչքերին ու թևերին:

Արդյունքում այդ մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակներն ամեն ինչ տեսնում են, որքան էլ թանձր լինի «կլոսածախտին²⁶», և նրանք կարող են ազատորեն տեղաշարժվել ոչ միայն մոլորակի

²⁵ չորս եռանկյուն նիստեր ունեցող ծավալային մարմին (տետրաէդր)

²⁶ խավար, մթություն

մակերևույթի վրայով, այլ նաև մթնոլորտում. որոշներին նույնիսկ հաջողվում է տեղաշարժվել մթնոլորտի սահմաններից դուրս:

Մարսից մի փոքր ավելի ցած գտնվող մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների մոլորակային մարմինները, այնտեղի խիստ ցրտերի պատճառով, պատված են թավ, փափուկ բրդով:

Արտաքին տեսքով նրանք «թզուկներ»²⁷ են հիշեցնում. մարմինները կարծես մեկը մյուսի վրա դրված երկու գնդեր լինեն: Վերին գնդի մեջ նրանց մոլորակային մարմնի գլխավոր օրգաններն են գտնվում, իսկ ստորին գնդի մեջ այն օրգաններն են, որոնք ծառայում են առաջին և երկրորդ լինելիական սնունդների փոխակերպությանը:

Վերին գնդի վրա կան դեպի դուրս բացվող երեք անցքեր: Դրանցից երկուսը տեսողությունն են ապահովում, իսկ երրորդը՝ լսողությունը:

Ստորին գունդը միայն երկու անցք ունի. մեկը մարմնի առջևի մասում է, որով ներս են անցնում առաջին և երկրորդ լինելիական սնունդները, իսկ հետևի անցքով օրգանիզմից դուրս են թափվում չմարսված մնացորդները:

Ստորին գնդի ներքևի մասում նաև կան ուժեղ մկաններով ոտքեր, որոնց վերջույթները նույն դերն ունեն, ինչ մեզ համար մատները:

Այդ արևային համակարգում, սիրելի՛ թոռնիկս, կա նաև շատ փոքրիկ մի մոլորակ, որը Լուսին է կոչվում:

Իր շարժման ընթացքում այդ յուրահատուկ փոքրիկ մոլորակը հաճախ անցնում է մեր Մարսին շատ մոտ, և ես ամբողջ կիլպրենտներով մեծ հաճույքով իմ աստղադիտարանի «տեսքահանով»²⁸ դիտում էի դրա վրա ապրող եռուղեղ էակների գոյատևման գործընթացը:

Թեև այդ մոլորակի էակները շատ փխրուն մոլորակային մարմիններ ունեն, բայց, մյուս կողմից, շատ ուժեղ են ոգով, որի շնորհիվ արտակարգ համառ են և աշխատունակ:

Արտաքին տեսքով նրանք նման են մեծ մրջյունների, և հենց դրանց պես էլ անընդհատ դեսուդեն են վազվզում՝ աշխատանք կատարելով ինչպես մոլորակի մակերևույթին, այնպես էլ ընդերքում:

Նրանց այդ անդադար ու անխոնջ գործունեության արդյունքները հիմա արդեն լավ տեսանելի են:

Ես մի անգամ պատահաբար նկատեցի, որ մեր երկու տարում նրանք թունելներով ծայրեծայր «ծվատել են» իրենց ամբողջ մոլորակը:

Նրանք ստիպված են եղել ձեռնամուխ լինել այդ գործին, քանի որ տեղական կլիմայական պայմանները չափազանց անբարենպաստ են: Դրա պատճառն այն է, որ այդ մոլորակը հանկարծակի է կազմավորվել, և Բարձրագույն Ուժերը չեն հասցրել նախապես կարգավորել ու ներդաշնակել դրա կլիման: Այն կարծես «խելակորույս» է և կարող է մի քանի միավորով հանգիստ առաջ գցել այն նյարդային ու հիստերիկ կանանց, որոնք ապրում են այդ նույն արևային համակարգության մի ուրիշ մոլորակի վրա, որի մասին նույնպես կպատմեմ քեզ:

Երբեմն այդ «Լուսին» կոչվող մոլորակի վրա այնպիսի ցրտեր են լինում, որ ամեն ինչ սառչում է, և էակների համար անհնարին է դառնում բաց մթնոլորտի պայմաններում շնչելը. հետո էլ հանկարծ այնպիսի շոգ է սկսվում, որ այդ նույն մթնոլորտում հնարավոր է դառնում մի ակնթարթում ձու խաշել:

Այդ արտառոց մոլորակի վրա միայն երկու կարճատև ժամանակահատվածի ընթացքում, այն է՝ հարևան ավելի մեծ մոլորակի շուրջ պտույտներ կատարելուց անմիջապես առաջ և հետո, եղանակն այնքան հրաշալի է դառնում, որ ամբողջ մոլորակը փթթում է և, ընդամենը մի քանի պտույտի ընթացքում, էակների առաջին լինելիական սննդի համար տալիս է զանազան մթերքների այնպիսի առատ բերք, որը զգալիորեն գերազանցում է նրանց պահանջարկը՝ ներմոլորակային յուրօրինակ թագավորությունում իրենց գոյատևման ընթացքում, որտեղ նրանք պաշտպանված են լինում «խելացնոր» կլիմայի քմահաճություններից, որն այդպես աններդաշնակորեն փոխում է մթնոլորտի կազմը:

Այդ փոքրիկ մոլորակին ամենամոտ գտնվողը մի ուրիշ մեծ մոլորակ է, որը նույնպես երբեմն շատ է մոտենում Մարսին և կոչվում է Երկիր:

Հիշյալ Լուսինն ընդամենը Երկրի մի մասն է, և վերջինս հիմա մշտապես պետք է հոգ տանի Լուսնի գոյատևման համար:

²⁷ ռուս. տարբերակում՝ «Тусук», անգլ. տարբերակում՝ “Тоosook”

²⁸ ռուս. տարբերակում՝ «Тескуано», անգլ. տարբերակում՝ “Teskoosano”; դիտախոնդովակով

Իսկ հենց նոր հիշատակած Երկրի վրա նույնպես կազմավորվում են եռուղեղ էակներ, և նրանք նույնպես բոլոր նախադրյալներն ունեն, որ ծածկեն իրենց Բարձրագույն լինելիական մարմինները:

Բայց «ոգու ուժով» նրանք անհամեմատ զիջում են այն էակներին, որոնք ապրում են նշած փոքր մոլորակի վրա: Երկրի վրա բնակվող այդ եռուղեղ էակների մոլորակային մարմինների արտաքին տեսքը շատ նման է մերինին. միայն թե նախ՝ նրանց մաշկը մի փոքր ավելի լարծուն է, քան մերը, և երկրորդ՝ նրանք պոչ ու պոզեր չունեն: Ավելի վատ վիճակում են նրանց ոտքերը, քանի որ գուրկ են սմբակներից. ճիշտ է, նրանք արտաքին ազդեցություններից պաշտպանվելու նպատակով, այսպես կոչված, «ոտնամաններ» են հորինել, բայց այդ գյուտը նրանց առանձնապես չի օգնում:

Արտաքին տեսքի այդ անկատար բաներից գատ՝ նրանց Բանականությունն էլ «դուրս է ամեն մի չափ ու պատկերացումից»:

Նրանց լինելիական Բանականությունը, բազմաթիվ պատճառների բերումով, որոնց մասին երբևէ կպատմեմ քեզ, աստիճանաբար այլասերվել է և ներկայումս շատ ու շատ տարօրինակ է ու չափազանց խայտաբղետ»:

Բեհեղզեբուղն, անշուշտ, կշարունակեք պատմելը, եթե այդ պահին նավապետը ներս չգար: Ուստի Բեհեղզեբուղը թոռանը խոստացավ, որ Երկիր մոլորակի էակների մասին կպատմի մի ուրիշ անգամ, որից հետո սկսեց զրուցել նավապետի հետ:

Նա նախ խնդրեց, որ նավապետը պատմի, թե որքան վաղուց է նավապետ եղել, այդ գործն իրեն դուր է գալիս, թե ոչ, ապա խնդրեց, որ նա որոշ մանրամասներ պատմի ժամանակակից տիեզերանավերի վերաբերյալ:

Դրան ի պատասխան՝ նավապետն ասաց.

«Ձե՛րդ Գերապատվություն, հենց որ ես հասա պատասխանատու էակի տարիքի, հայրս որոշեց, որ ես հենց այս գործով պետք է ծառայեմ մեր Անսահման Արարչին:

Միջտարածական տիեզերանավերի վրա ամենացածր պաշտոններից սկսելով՝ ես ի վերջո արժանացա նավապետի պարտականություններ կատարելու պատվին, և ահա ութ տարի է արդեն, ինչ որպես նավապետ եմ ծառայում հեռավոր նավարկության տիեզերանավերի վրա:

Որպես Քարնակի նավապետ իմ այս վերջին պաշտոնը ես զբաղեցրի՝ փոխարինելով հորս, որն Աշխարհի արարման համարյա սկզբից սկսած՝ նավապետի պաշտոնով անթերի ծառայում էր Նորին Անսահմանությանը, որի շնորհիվ էլ ի վերջո արժանացավ «Կալման»²⁹ կոչվող արևային համակարգության Տիրակալի պաշտոնին:

Կարճ ասած,– շարունակեց նավապետը,– ես իմ ծառայությունը սկսել եմ հենց այն ժամանակ, երբ Ձերդ Գերապատվությունը մեկնում էր դեպի իր աքսորավայրը:

Այդ տարիներին հեռավոր նավարկության տիեզերանավերի վրա ես ընդամենը «հատակ ավլող» էի:

Այո՛, երկար, շա՛տ երկար ժամանակ է անցել...

Ամեն ինչ արդեն փոխվել է և շարունակում է փոխվել: Միայն մեր Տերն ու Տիրակալն է անփոփոխ մնում. թող օրհնյալ լինի Նրա Անփոփոխությունը հավիտյանս հավիտենից, Ամենզանո...

Դուք, Ձե՛րդ Գերապատվություն, բարի եղաք ամենայն արդարացիությամբ նկատել, որ նախկին տիեզերանավերը շատ անհարմար ու վիթխարի էին:

Այո՛, իրոք, այն ժամանակ դրանք այդպիսին էին: Ես նույնպես լավ հիշում եմ դրանք: Ներկայիս ու այն ժամանակվա տիեզերանավերի միջև հսկայական տարբերություն կա:

Ձեր երիտասարդ ժամանակ նման տիեզերանավերը, լինեին դրանք միջհամակարգային, թե միջմոլորակային հաղորդակցության, բոլորն էլ աշխատում էին «էլեկտրոնագտիզեն»³⁰ տիեզերական նյութի հիման վրա, որն ամենաթափանց «Ոգիդնողի»³¹ երկու առանձին մասերից բաղկացած մի միասնություն է:

Եվ հենց այդ միասնությունը ստանալու համար էր, որ նախկին նավերն իրենց ներսում անհրաժեշտաբար պետք է կրեին բազմաքանակ նյութեր:

²⁹ ռուս. տարբերակում՝ «Калман», անգլ. տարբերակում՝ "Kalman"

³⁰ Հեղինակը, ըստ իս, միտումնավոր կերպով ծածկագրել է «էլեկտրոնագտիզեն» գիտական տերմինը

³¹ ռուս. տարբերակում՝ «Окиданок», անգլ. տարբերակում՝ "Okidanokh"

Սակայն այդ նավերը Ձեր հեռանալուց հետո կարճ ժամանակ օգտագործվեցին, քանի որ շուտով դրանք փոխարինվեցին Սուրբ Վենուսի տիեզերանավերով»:

ԳԼՈՒԽ Դ Անկման օրենքը

Նավապետը շարունակեց.

«Դա տեղի ունեցավ օբյեկտիվ ժամանակագրության 185 թվականին:

Վաստակը հաշվի առնելով՝ Սուրբ Վենուսին Մուրտ³² մոլորակից տարել էին Սուրբ Քավարան մոլորակը, որտեղ նա նոր շրջապատին ու իր նոր պարտականություններին ծանոթանալուց հետո իր ամբողջ ազատ ժամանակը նվիրում էր իր սիրած գործին:

Նրան շատ էր հետաքրքրում այն, թե ի՞նչ նոր երևույթներ ի հայտ կգան, եթե տարբեր համակցություններ կազմվեն արդեն հայտնի և օրինաչափ երևույթներից:

Որոշ ժամանակ անց, նման զբաղմունքների արդյունքում, Սուրբ Վենուսը տիեզերական օրենքների բնագավառում առաջին անգամ փաստեց այն, ինչը հետագայում նշանավոր հայտնագործության վերածվեց և նրա կողմից անվանվեց «Անկման Օրենք»:

Այդ տիեզերական օրենքը, որն այն ժամանակ Սուրբ Վենուսը բացահայտեց, նրա կողմից ձևակերպվեց այսպես.

«Աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ անկում է կատարում դեպի ներքև: Իսկ Համայն Տիեզերքի ցանկացած մասում ներքև է հանդիսանում մոտակա «կայունությունը», որն այն վայրն է կամ կետը, որին զուգամիտում են շրջակա բոլոր ուղղություններից եկող ուժագծերը»:

Տիեզերքում գոյություն ունեցող բոլոր աստղերի ու մոլորակների կենտրոնները հենց այդպիսի «կայունություններ» են: Դրանք ամենացածր կետերն են տարածության այն տիրույթներում, ուր բոլոր ուղղություններից մղվում և խտանում են Տիեզերքի այդ մասում գոյություն ունեցող բոլոր ուժերը: Այդ կետերում հավասարակշռություն է ստեղծվում, որի շնորհիվ արևներն ու մոլորակները կարողանում են պահպանել իրենց դիրքը:

Օրենքի իր ձևակերպման մեջ Սուրբ Վենուսը հետագայում նաև ասում է, որ դեպի բաց տարածություն նետված ամեն ինչ, որտեղ էլ դա տեղի ունենա, ձգտում է անկում կատարել դեպի այս կամ այն աստղը կամ մոլորակը, որի մոտակայքում այն վեր է նետված, քանզի տվյալ աստղը կամ մոլորակը տարածության այդ տիրույթի համար «կայունության» կետ կամ ներքև է հանդիսանում:

Ելնելով դրանից՝ իր հետագա հետազոտությունների ընթացքում Սուրբ Վենուսն այսպես էր դատում.

«Եթե այդպես է, ապա չի՞ կարելի արդյոք տիեզերական այդ առանձնահատկությունն օգտագործել տիեզերքում միջտարածական թռիչքներ իրականացնելու համար»:

Ուստիև դրանից հետո սկսեց աշխատել այդ ուղղությամբ:

Նրա հետագա աստվածահաճո աշխատանքները ցույց տվեցին, որ թեև դա ընդհանուր առմամբ հնարավոր է, բայց իր հայտնաբերած Անկման օրենքը լրիվությամբ այդ նպատակին ծառայեցնելը, այնուամենայնիվ, հնարավոր չէ: Դրա պատճառն այն է, որ տիեզերական խտացումների մեծ մասն իրենց շուրջը մթնոլորտ ունեն, որն էլ խոչընդոտում է դեպի տարածություն նետված առարկայի ազատ անկումը:

Փաստելով նաև այդ հանգամանքը՝ Սուրբ Վենուսն իր ուշադրությունը սկսեց բևեռել այն բանի վրա, որ մի միջոց գտնի Անկման սկզբունքով թռչող տիեզերանավերի շարժման նկատմամբ մթնոլորտների առաջացրած դիմադրությունը չեզոքացնելու համար:

Եվ ահա, երեք «լունիաս»³³ անցնելուց հետո, Սուրբ Վենուսը գտավ նման հնարավորություն, և երբ նրա ղեկավարությամբ ավարտին հասավ համապատասխան կառույցի շինարարությունը, անցավ գործնական փորձարկումներին:

³² ռուս. տարբերակում՝ «Сурт», անգլ. տարբերակում՝ “Soort”

Այդ հաստուկ կառույցը նման էր հսկա գետեղարանի, որի պատերը ապակուն նմանվող հաստուկ նյութից էին պատրաստված:

Դրսի բոլոր կողմերից այդ հսկա գետեղարանը ծածկաշերտեր ուներ, որոնք պատրաստված էին կոսմիկական «էլեկտրոլիտազոտիզեն» նյութի բաղադրիչների համար անթափանց նյութից: Այդ ծածկաշերտերը, թեև կիպ մոտ էին գտնվում գետեղարանի պատերին, այնուամենայնիվ կարող էին սահել բոլոր ուղղություններով:

Ձետեղարանի ներսում հաստուկ մարտկոց էր տեղադրված, որը զրգռում ու դեպի դուրս էր առաքում էլեկտրոլիտազոտիզենը:

Ես ինքս, Ձե՛րդ Գերապատվություն, անձամբ ներկա եմ եղել Սուրբ Վենոմի այդ փորձարկումներին:

Ամբողջ գաղտնիքն այն էր, որ երբ էլեկտրոլիտազոտիզենի ճառագայթները, գետեղարանի պատերով անցնելով, հայտնվում էին տարածության հարկ եղած տիրույթում, այնտեղ եղած բոլոր նյութերը, լինեին դրանք որևէ մոլորակի մթնոլորտը կազմող օդը, զանազան գազեր, մառախուղ, թե այլ մի բան՝ անմիջապես քայքայվում էին: Արդյունքում տարածության այդ մասը դառնում էր, ըստ էության, բացարձակապես դատարկ և ո՛չ դիմադրություն էր առաջացնում, ո՛չ ճնշում. այնպես որ, եթե նույնիսկ երեխա-էակը թեթևակի հրեր այդ հսկա կառույցը, ապա այն փետուրի թեթևությամբ կտեղաշարժվեր:

Այդ յուրահաստուկ կառույցի մի կողմում թևեր հիշեցնող հարմարանքներ կային, որոնք շարժման մեջ էին դրվում նույն այդ էլեկտրոլիտազոտիզենի միջոցով, և ծառայում էին այն բանին, որ հրող ուժ հաղորդեն և հսկա կառույցը տեղաշարժեն հարկ եղած ուղղությամբ:

Երբ Ադոսիա Հրեշտակապետի գլխավորած Ընդունող Հանձնաժողովը հավանություն տվեց և օրհնեց տվյալ հետազոտությունների արդյունքները, սկսվեց այդ սկզբունքով գործող մեծ տիեզերանավի շինարարությունը:

Այն շուտով շահագործման հանձնվեց: Դրանից հետո կամաց-կամաց բոլոր միջհամակարգային հաղորդակցության ուղիներում սկսեցին օգտվել բացառապես այդ սկզբունքով գործող տիեզերանավերից:

Թեև ավելի ուշ, Ձե՛րդ Գերապատվություն, աստիճանաբար այդ համակարգի թերություններն ավելի ու ավելի ակնառու էին դառնում, այնուամենայնիվ այն շարունակում էր գործածությունից դուրս մղել նախկինում գործող համակարգերը:

Չպետք է ժխտել այն, որ այդ նոր համակարգով գործող նավերն անթերի էին անմթնոլորտ տարածքներում և սլանում էին «էծիքոլնյանախյան»³⁴ ճառագայթների արագությամբ, սակայն երբ մոտենում էին որևէ արևի կամ մոլորակի մերձակա տարածքներին, դրանց կառավարումն իսկական տանջանքի էր վերածվում, քանի որ շատ բարդ խուսավարումներ էր պահանջում:

Նման խուսավարումների անհրաժեշտությունն էլ հենց պայմանավորված էր Անկման Օրենքով:

Պատճառն այն էր, որ երբ նավը հանկարծ ներխուժում էր շրջանցման ենթակա որևէ արևի կամ մոլորակի մթնոլորտային միջավայրի սահմաններից ներս, ապա անմիջապես սկսում էր անկում կատարել դեպի տվյալ աստղը կամ մոլորակը, և, ինչպես արդեն ասել եմ, նշանակալից գիտելիքներ ու մեծ ուշադրություն էր պահանջվում, որպեսզի նավը չշեղվի իր ուղուց:

Երբ տիեզերանավերի ուղեգիծը շատ մոտ էր անցնում որևէ արևից կամ մոլորակից, հարկ էր լինում նրանց սովորական արագությունը նվազեցնել հարյուրապատիկ անգամ:

Կառավարումն առանձնապես դժվարանում էր այն տարածքներում, որտեղ ասուպների մեծ կուտակումներ էին լինում:

Այդ էր պատճառը, որ մեծ պահանջներ էին դրվում այն էակների առջև, որոնք պետք է ղեկավարեին այդ տիեզերանավերը, ուստի նրանց այդ գործին նախապատրաստում էին շատ բարձր Բանականություն ունեցող էակները:

Սակայն, չնայած Սուրբ Վենոմի համակարգի նշած թերություններին, այնուամենայնիվ, ինչպես արդեն ասացի, այն աստիճանաբար գործածությունից դուրս էր մղում նախկին համակարգերը:

Երբ Սուրբ Վենոմի համակարգով աշխատող տիեզերանավերն արդեն քսաներեք տարի էր, ինչ գոյություն ունեին, առաջին անգամ լուր տարածվեց այն մասին, որ Հարիթոն Հրեշտակապետը

³³ օբյեկտիվ ժամանակագրության մեկ օրը

³⁴ ռուս. տարբերակում՝ «эциколноахные», անգլ. տարբերակում՝ «etzikolniahnian»

միջհամակարգային և միջմոլորակային հաղորդակցության համար նոր տիպի տիեզերանավ է հնարել»:

ԳԼՈՒԽ Ե **Հարիթոն Հրեշտակապետի համակարգը**

«Եվ իրոք, այդ լուրը տարածվելուց շատ չանցած, նորից նույն Մեծն Հրեշտակապետ Ադոսիայի գլխավորությամբ, բոլորի համար բաց, գործնական փորձարկումներ իրականացվեցին, որոնք կապված էին այդ նոր և հետագայում նշանավոր դարձած հայտնագործության հետ:

Այդ նոր համակարգը միահամուռ կերպով ճանաչվեց լավագույնը և շատ շուտով ընդունվեց որպես համատիեզերական հաղորդակցության միջոց, որից հետո բոլոր նախկին համակարգերն աստիճանաբար դուրս մղվեցին գործածությունից:

Ահա այդ նոր համակարգը, որի հեղինակը Մեծն Հրեշտակ, ներկայումս՝ Հրեշտակապետ, Հարիթոնն է, այժմ ամենուրեք գործածության մեջ է:

Տիեզերանավը, որով այժմ թռչում ենք, այդ համակարգին է պատկանում և նույն կառուցվածքն ունի, ինչպիսին Հարիթոն Հրեշտակապետի համակարգով կառուցված բոլոր նավերն ունեն:

Այդ համակարգն այնքան էլ բարդ չէ: Այդ մեծ հայտնագործությունն, ըստ էության, ընդամենը մի «գլան» է, որն իր արտաքին տեսքով նմանվում է սովորական տակառի:

Գլանի գաղտնիքը նրա ներքին մակերևույթը կազմող նյութերի դասավորության մեջ է:

Այդ նյութերը դասավորված են որոշակի կարգով և իրարից մեկուսացված են սաթով: Դրանք ունեն այն յուրահատկությունը, որ երբ դրանցով պարփակված տարածության մեջ որևէ տիեզերական գազակերպ նյութ է հայտնվում, լինի դա մթնոլորտ, օդ, եթեր թե տիեզերական միասեռ տարրերի մի այլ համակցություն, այն անմիջապես ընդարձակվում է նշածս գլանի ներքին պատերի վրա հատուկ ձևով դասավորված նյութերի ազդեցության շնորհիվ:

Գլանաձև տակառի հատակը մշտապես հերմետիկորեն փակ է լինում, իսկ կափարիչը, թեև նույնպես կարող է հերմետիկորեն փակվել, բայց բացվելու ու փակվելու հնարավորություն ունի՝ կախված գլանի ներսի ճնշման մեծությունից:

Այդպիսով, Ձե՛րդ Գերապատվություն, եթե գլանաձև տակառը լցված է լինում մթնոլորտային օդի կամ դրա նման որևէ նյութի զանգվածով, ապա այդ յուրակառույց գլանի պատերի ազդեցությամբ տեղի է ունենում ընդարձակում, կափարիչը բացվում է, ներսի գազերը դուրս են գալիս, և կափարիչը նորից փակվում է: Եվ քանի որ Բնությունը դատարկություն չի սիրում, ապա ներսի գազերի դուրս գալու հետ միաժամանակ գլանաձև տակառի մեջ նոր նյութեր են ներթափանցում, որոնց հետ նորից նույն բանն է տեղի ունենում, և այդպես անվերջ:

Այսպիսով, գլանաձև տակառում մշտապես նյութափոխանակություն է կատարվում, և գլանաձև տակառի կափարիչը հաջորդաբար բացվում ու փակվում է:

Այդ նույն կափարիչին շատ պարզ կառուցվածքի լծակ է հարմարեցված, որը գործում է կափարիչի շարժմանը համընթաց և իր հերթին շարժման մեջ է դնում որոշակի, նույնպես պարզ կառուցվածք ունեցող ատամնանիվներ, որոնք էլ պտույտ են հաղորդում նավակողերին ու խելին ամրացված թիանիվներին:

Այդպիսով, Ձե՛րդ Գերապատվություն, այն տարածքներում, որտեղ դիմադրություն չկա, մեր նավի տիպի ժամանակակից տիեզերանավերը պարզապես անկում են կատարում մոտակա «կայունության» ուղղությամբ, իսկ այն տարածքներում, որտեղ դիմադրություն ցույց տվող կոսմիկական գոյացություններ կան, դրանց կազմի մեջ մտնող նյութերը, անկախ իրենց խտությունից՝ ներթափանցում են գլանի մեջ և նավին տալիս ընտրված ուղղությամբ շարժվելու հնարավորություն:

Հետաքրքիր է, որ ինչքան մեծ է տիեզերական տվյալ տարածքի միջավայրի խտությունը, այնքան ավելի եռանդուն և ուժեղ է կատարվում գլանաձև տակառի լցման ու դատարկման գործընթացը՝ համապատասխան մեծ ուժ հաղորդելով լծակներին:

Այնուամենայնիվ, կրկնում եմ՝ այնպիսի անմիջապես տարածքը, որտեղ միայն համաշխարհային «Եթերնոկրիլնո»³⁵ է առկա, ժամանակակից նավերի համար էլ է լավ միջավայր հանդիսանում, որովհետև զուրկ է որևէ դիմադրությունից և, հետևաբար, նման դեպքերում կարելի է օգտվել Անկման Օրենքից՝ առանց գլանի աշխատանքի օգնությանը դիմելու:

Դեռ ավելին, ժամանակակից նավերի առավելությունն է և այն, որ անմիջապես տարածություններում նրանց կարելի ընթացք հաղորդել ցանկացած ուղղությամբ, ուստի նրանք կարող են անկում կատարել հենց այնտեղ, ուր որ հարկն է՝ չպահանջելով այն բարդ խուսավարումները, որոնք անխուսափելի էին Սուրբ Վենամի համակարգով գործող նավերի համար:

Կարճ ասած, Ձեռք Գերապատվություն, ժամանակակից նավերն անհամեմատ ավելի պարզ կառուցվածք ունեն և անհամեմատ ավելի հարմարավետ են, քան նախկին նավերը, որոնք, բարդ կառուցվածք ունենալով հանդերձ, չունեին այն հնարավորությունները, որոնցից մենք այժմ օգտվում ենք»:

ԳԼՈՒԽ Զ Հավերժական շարժիչ

«Սպասիր, սպասի՛ր, – նավապետին ընդհատեց Բեհեդզեբուդը, – այն, ինչ հենց նոր նկարագրեցիր, անշուշտ պետք է որ այն կարճակյաց գաղափարը լինի, որը Երկրի վրա բազմացող տարօրինակ եռուղեղ էակները «հավերժական շարժիչ» են անվանել, և ժամանակին դրա երեսից նրանցից շատերը, ինչպես իրենք են ասում, ամբողջովին «խելքները թոցրել են», ոմանք էլ դրա պատճառով վերջնականապես կործանվել են:

Այդ չարաբաստիկ մոլորակի վրա մի անգամ մեկի գլխում ինչ-որ ձևով մի միտք է ծագել, ինչպես ասում են, «գառանցական գաղափար», որ ինքը կարող է մի այնպիսի «շարժիչ» սարքել, որը հավերժ կարող է աշխատել՝ առանց դրսից որևէ նյութ ներմուծելու պահանջի:

Այդ գաղափարն այնքան է դուր եկել բոլորին, որ այդ յուրօրինակ մոլորակի շատ խենթեր սկսել են երկար մտածել դրա մասին և փորձել են այդ հրաշքն իրականացնել գործնականում:

Այդ անցողիկ գաղափարի վրա որքան նյութական ու հոգևոր կարողություններ վատնվեցին, որոնք նրանք ավելի վաղ ձեռք էին բերել մեծագույն դժվարությամբ:

Նրանցից յուրաքանչյուրն այս կամ այն պատճառով համակված էր վճռական համոզմունքով, որ ինքը կարող է իրականություն դարձնել այն, ինչն իր կարծիքով ընդամենը «հասարակ մի բան» է:

Եթե արտաքին հանգամանքները թույլ էին տալիս, շատերը ձեռնամուխ էին լինում «հավերժական շարժիչ» հնարելու գործին՝ առանց դրա համար ներքին տվյալներ ունենալու. ոմանք հենվում էին իրենց «գիտելիքների» վրա, ոմանք՝ «բախտը բանելու», իսկ մեծամասնությունը դրանով զբաղվում էր պարզապես լիակատար ցնդած լինելու հետևանքով:

Կարճ ասած, «հավերժական շարժիչ» հնարելու գործը, ինչպես ասում են, «խանգարվածության» արգասիք էր, և ամեն մի խենթ պարտավորված էր զգում այդ հարցով հետաքրքրվելու:

Մի անգամ ես եղա նրանց քաղաքներից մեկում, որտեղ ի մի էին բերված ամեն տեսակի մոդելներ և «պերպետում մոբիլե»-ի առաջարկվող «մեխանիզմների» բազմաքանակ «նկարագրություններ»:

Ինչ ասես, որ այնտեղ չէիր գտնի... Որքան «խորամանկ» ու բարդ մեքենաներ տեսա ես այնտեղ... Իմ տեսած ամեն մի այդպիսի մեխանիզմում ավելի շատ գաղափարներ ու իմաստակություններ էին պարփակված, քան Աշխարհի արարման ու Աշխարհի գոյության բոլոր օրենքներում:

Այն ժամանակ ես նկատեցի, որ առաջարկվող մեխանիզմների այդ անթիվ մոդելներում ու նկարագրություններում գերակշռողը «ծանրության ուժի» օգտագործումն էր: Այդ ուժի օգտագործման գաղափարը նրանք հետևյալ կերպ էին ներկայացնում. շատ բարդ կառուցվածք ունեցող մեխանիզմը պետք է վեր բարձրացներ որևէ ծանրություն, որն էլ, վերևից ընկնելով, պետք է իր անկման շնորհիվ նորից գործի գցեր այդ նույն մեխանիզմը, դրա հետևանքով նորից վեր բարձրանար, նորից ընկներ և այդպես շարունակ:

³⁵ ռուս. տարբերակում՝ «Эфирокрилно», անգլ. տարբերակում՝ «ethernokrilno»

Նման գաղափարների արդյունքում հազարավոր մարդիկ հայտնվեցին «գժանոցներում», ևս մի քանի հազարն էլ՝ այդ գաղափարն իրենց երազանքը դարձնելով, կա՛մ լրիվ հրաժարվեցին նույնիսկ իրենց սովորական, կենցաղային պարտականությունները կատարելուց, որոնց երկար տարիների ընթացքում այսպես թե այնպես կատարում էին, կա՛մ էլ այդ պարտականությունները սկսեցին կատարել «վատից էլ վատ»:

Ես չգիտեմ, թե ինչով կվերջանար այդ ամենը, եթե այնտեղ չհայտնվեր ամբողջովին ցնդած մի էակ, որի մի ոտքն արդեն գերեզմանում էր՝ այնպիսին, որին հենց իրենք անվանում են «ծեր հիմար»։ սա նախկինում արդեն ինչ-որ կերպ հասցրել էր հեղինակավոր դառնալ, ուստի միայն իրեն հայտնի «հաշվարկներով» ապացուցեց, որ «պերպետում մոբիլե» բացարձակապես հնարավոր չէ սարքել:

Ահա հիմա՝ քո բացատրություններից հետո, ես արդեն շատ լավ հասկանում եմ, թե ինչպես է աշխատում Հարիթոն Հրեշտակապետի հորինած համակարգի գլանը: Դա հենց այն է, ինչի մասին այնտեղ երագում էին այդ թշվառները:

Իրոք, Հարիթոն Հրեշտակապետի գլանի մասին լիովին կարելի է ասել, որ միմիայն մթնոլորտի առկայության դեպքում այն հավերժ կաշխատի՝ առանց դրսից ներմուծված այլ նյութեր ծախսելու պահանջի:

Իսկ քանի որ աշխարհն առանց մոլորակների և, հետևաբար, առանց մթնոլորտների չի կարող գոյություն ունենալ, ապա Հարիթոն Հրեշտակապետի հնարած գլանաձև տակառները միշտ կաշխատեն:

Հիմա ինձ միայն մի հարց է հետաքրքրում՝ ի՞նչ նյութից է պատրաստված այդ գլանաձև տակառը:

Ես շատ կուզեմայի, սիրելի՛ նավապետ, որ դու ընդհանուր գծերով պատմեիր, թե ինչ նյութեր են այնտեղ օգտագործված, և որքան երկար կարող են դիմանալ դրանք»,- խնդրեց Բեհեզգեբուդը:

Այդ հարցին նավապետը հետևյալ կերպ պատասխանեց.

«Թեև գլանաձև տակառը հավերժական չէ, բայց, անշուշտ, շատ երկար է դիմանում:

Դրա հիմնական մասը պատրաստված է պլատինե օղակներ ունեցող սաթից, իսկ պատերի ներքին հատվածները՝ անտրացիտից, պղնձից, փղոսկրից և շատ դիմացկուն մագնաքից, որի վրա չեն ագում ո՛չ 1) «պախսչակիրա³⁶»-ն, ո՛չ 2) «տաինոլաիրա³⁷»-ն, ո՛չ 3) «սալիաքուոիափան³⁸», ո՛չ էլ նույնիսկ տիեզերական խտացումների ճառագայթումները:

Բայց դրա մյուս մասերը,- շարունակեց նավապետը,- ինչպիսիք են՝ արտաքին լծակները, ատամնանիվները, իհարկե, ժամանակ առ ժամանակ պետք է նորացվեն, քանի որ, թեև պատրաստված են ամենաամուր մետաղներից, այնուամենայնիվ երկարատև գործածությունից մաշվում են:

Իսկ ինչ վերաբերում է հենց տիեզերանավի իրանին, ապա, իհարկե, չենք կարող երաշխավորել, որ այն կարող է շատ երկար դիմանալ»:

Նավապետը մտադիր էր էլի ինչ-որ բաներ ավելացնել, բայց այդ պահին նավով մեկ մի դողանց տարածվեց, որի թրթիռները հիշեցնում էին հեռվում նվազող փողային նվազախմբի հնչեցրած մինորային ակորդի երկարատև հնչողություն:

Նավապետը, ներողություն խնդրելով, ոտքի կանգնեց և պատրաստվեց դուրս գալու՝ այդ ընթացքում բացատրելով, որ հավանաբար իրեն կանչում են ինչ-որ կարևոր գործի առիթով, քանի որ բոլորը գիտեն, որ ինքը Նորին Գերապատվության մոտ է և չէին համարձակվի Նորին Գերապատվությանն անհանգստացնել ինչ-որ դատարկ բանի պատճառով:

³⁶ ռուս. տարբերակում՝ «паисчакира», անգլ.-ում՝ “paischakir” - տաքություն

³⁷ ռուս. տարբերակում՝ «таинолаира», անգլ.-ում՝ “tainolair” - սառնություն

³⁸ ռուս. տարբերակում՝ «саялюкряпы», անգլ.-ում՝ “saliakooriap” - ջուր կամ խոնավություն

ԳԼՈՒԽ Է Լինելիության ճշմարիտ պարտքի գիտակցում

Նավապետի գնալուց հետո Բեհեղգերուղը հայացք նետեց թոռան վրա և, նկատելով նրա անսովոր վիճակը, հոգածու և մի փոքր անհանգստացած տոնով հարցրեց.

– Ի՞նչ պատահեց, սիրելի՛ տղաս. ինչո՞վ ես այդպես խորը մտահոգված:

Տխրամած աչքերով պապին նայելով՝ Հասեինը մտախոհ ասաց.

– Չգիտեմ, թե ինչ պատահեց, սիրելի՛ պապիկ, բայց նավապետի հետ քո գրույցն իմ մեջ որոշ չափազանց տխուր մտքեր արթնացրեց՝ բաներ, որոնց մասին նախկինում երբեք չէի մտածել, իսկ հիմա ծագել են իմ ներսում:

Ձեր գրույցի շնորհիվ իմ գիտակցությանը աստիճանաբար շատ պարզ դարձավ, որ մեր Անսահմանության Տիեզերքում ամեն ինչը չէ, որ միշտ եղել է այնպես, ինչպես ես հիմա տեսնում եմ ու հասկանում:

Օրիակ՝ նախկինում ես երբեք չէի ենթադրում, որ իմ ներսով նմանազգացորեն կարող է անցնել այնպիսի մի միտք, որ այն տիեզերանավը, որով մենք հիմա թռչում ենք, միշտ այնպես չի եղել, ինչպես հիմա է՝ այս պահին:

Միայն հիմա՝ եմ ես սկսում պարզորոշ հասկանալ, որ այն ամենը, ինչ ներկայումս ունենք և ինչից օգտվում ենք, մի խոսքով՝ բոլոր ժամանակակից հարմարությունները և հարմարավետ ու բարեկեցիկ գոյության համար անհրաժեշտ մյուս բաները միշտ չէ, որ գոյություն են ունեցել և այնքան էլ հեշտությամբ չեն տրվել մեզ:

Երևում է՝ որոշ էակներ անցյալում երկար ժամանակ չարչարվել ու շատ տառապանքներ են կրել դրան հասնելու համար, թեև, հնարավոր է, նրանք նման տառապանքներ կրելու անհրաժեշտություն չեն ունեցել:

Նրանք տառապել ու չարչարվել են միայն այն բանի համար, որ այժմ մենք այս ամենն ունենանք և դրանից օգտվենք՝ հանուն մեր բարեկեցության:

Գիտակցաբար, թե անգիտակցաբար՝ նրանք այդ ամենն արել են հենց մեզ համար, այսինքն՝ իրենց կատարելապես անձանոթ և իրենց նկատմամբ բոլորովին անտարբեր էակների համար:

Իսկ հիմա մենք ոչ միայն մեր երախտագիտությունը չենք հայտնում նրանց, այլև նույնիսկ ոչինչ չգիտենք նրանց մասին՝ դա ընդունելով որպես ինքնին հասկանալի մի բան և դրա մասին ատանձնապես չմտածելով ու բոլորովին չանհանգստանալով:

Ես, օրինակ, այսքան տարի գոյություն ունեմ Տիեզերքում, բայց մինչև հիմա իմ գլխում նույնիսկ չի ծագել այն միտքը, որ, հնարավոր է, եղել է նաև այնպիսի ժամանակ, երբ այն ամենը, ինչ հիմա իմ շուրջը տեսնում եմ և ունեմ, գոյություն չի ունեցել, և որ ամեն ինչ չի ծնվել ինձ հետ միաժամանակ, ինչպես, ասենք, իմ քիթը:

Եվ ահա, իմ բարի ու սիրելի՛ պապիկ, հիմա, երբ նավապետի հետ ունեցած քո գրույցի շնորհիվ ես աստիճանաբար իմ ողջ ներկայությամբ այդ ամենը գիտակցեցի, դրա հետ մեկտեղ իմ ներսում պահանջ եմ զգում, որ բացատրեմ իմ Բանականությանը, թե ինչու՞ անձամբ ես ունեմ բոլոր այս հարմարավետությունները, որոնցից այժմ օգտվում եմ, և թե ինչո՞վ եմ պարտական այդ ամենի համար:

Հատկապես դրանո՞վ է պայմանավորված այն, որ իմ ներսում հիմա «խղճի խայթոց» եմ զգում:

Այս ամենն ասելով՝ Հասեինը գլուխը կախեց և լռեց, իսկ Բեհեղգերուղը, քնքշանքով նրան նայելով, ասաց հետևյալը.

– Ես քեզ խորհուրդ եմ տալիս, սիրելի՛ Հասեին, որ առայժմ ինքդ քեզ նման հարցեր չտաս: Անհամբեր մի՛ եղիր: Միայն այնժամ, երբ կհասնես այդպիսի էական հարցադրումներ անելու և դրանք խորապես գիտակցելու քո տարիքին և կսկսես գործուն կերպով խորհրդածել դրանց շուրջ, կհասկանաս, թե ինչ պետք է անես, որ հատուցես դրանց դիմաց:

Քո այժմյան տարիքը դեռևս քեզ չի պարտավորեցնում, որ վճարես գոյությանդ համար: Քո այս տարիքում ոչ թե պետք է հատուցես գոյությանդ համար, այլ նախապատրաստվես քո այն ապագային ու պարտականություններին, որոնք սազական են պատասխանատու եռուղեղ էակին:

Ուստի գոյատևի՛ր, ինչպես կաս: Միայն մի՛ մոռացիր մի բան. քո այս տարիքում անհրաժեշտ է, որ ամեն օր՝ արևածագին, դիտելով դրա հրաշափառ արտացոլանքը, կարողանաս կապ ստեղծել քո

գիտակցության և քո ընդհանրական ներկայության զանազան ենթագիտակցական մասերի հետ: Աշխատիր երկարաձգել այդ վիճակը և անգիտակից մասերիդ համոզել (ո՛չ այնպես, ինչպես եթե դրանք գիտակից լինեին), որ եթե իրենք խանգարեն քո ընդհանուր գործունեությանը, ապա քո պատասխանատու հասակում դրանք ոչ միայն չեն կարողանա գործել իրենց վայել բարիքը, այլ նաև քո ընդհանրական ներկայությունը, որի առանձին մասերն են իրենք, չի կարողանա լավ ծառայել Ամենքիս Անսահման Արարչին և այդ պատճառով նույնիսկ արժանիորեն չի հատուցի իր ծագման ու գոյության համար:

Ես մի անգամ էլ եմ կրկնում, սիրելի՛ տղաս, աշխատիր առայժմ չմտածել այնպիսի հարցերի շուրջ, որոնք քո տարիքին չեն համապատասխանում:

Ամեն ինչ իր ժամանակին:

Իսկ հիմա ասա, թե ինչ ես ուզում, որ քեզ պատմեմ, և ես սիրով կպատմեմ:

Քանի որ նավապետը մինչև հիմա հետ չի եկել, ուրեմն դեռ զբաղված է իր պարտականությունների կատարմամբ և, հավանաբար, այնքան էլ շուտ չի վերադառնա:

ԳԼՈՒԽ Ը

Հանդուգն պատանի Հասեինը՝ Բեհեզգեբուդի թոռը, համարձակվում է մարդանց «լորձոտներ» անվանել

Հասեինն անմիջապես նստեց Բեհեզգեբուդի ոտքերի մոտ և պապին զգվելով ասաց.

– Պատմի՛ր, ինչ ուզում ես, սիրելի՛ պապիկ: Ինչ էլ պատմես՝ ինձ համար մեծագույն ուրախություն կլինի, հենց միայն այն պատճառով, որ հատկապես դու՛ ես պատմում:

– Չէ՛, – հակառակվեց Բեհեզգեբուդը, – դու ի՛նքդ հարցրու այն, ինչը ամենաշատն է քեզ հետաքրքրում: Ներկա պահին ես մեծ հաճույք կստանամ, եթե պատմեմ հատկապես այն, ինչը դու շատ ես ուզում իմանալ:

– Այդ դեպքում, իմ սիրելի ու բարի՛ պապիկ, պատմիր ինչ-որ բան այն... մոռացա, ոնց էին կոչվում... հա՛, «լորձոտների» մասին:

– Ի՞նչ... Այդ ի՞նչ «լորձոտներ»-ի մասին է խոսքը, – թոռանը չհասկանալով՝ հարցրեց Բեհեզգեբուդը:

– Չե՛ս հիշում, պապի՛կ. այն ժամանակ, երբ պատմում էիր այն արևային համակարգությունում, որում երկար ժամանակ ապրել ես, եղած մոլորակների վրա բազմացող եռակենտրոն էակների մասին, հիշատակեցիր, որ դրանցից մեկի վրա, որի անունն արդեն մոռացել եմ, ապրում են եռակենտրոն էակներ, որոնք ընդհանուր առմամբ նման են մեզ, բայց իրենց մաշկը ավելի լարծուն է, քան մերը:

– Հա՛, – ծիծաղեց Բեհեզգեբուդը, – իհարկե, դու այն էակների մասին ես ասում, որոնք բազմանում են Երկիր կոչվող մոլորակի վրա և իրենք իրենց «մարդիկ» են անվանում:

– Այո՛, պապիկ, հենց դա՛ եմ ուզում: Մի փոքր ավելի մանրամասն պատմիր այդ «մարդ-էակների» մասին: Ես ուզում եմ նրանց մասին ավելի շատ բան իմանալ... – խնդրանքն ավարտեց Հասեինը:

Այնժամ Բեհեզգեբուդն ասաց.

– Նրանց մասին ես շատ բան կարող եմ պատմել, քանի որ բավական հաճախ եմ այցելել այդ մոլորակը, երկար ժամանակ գոյատևել եմ նրանց շրջապատում և նույնիսկ ընկերություն եմ արել այդ եռուղեղ էակներից շատերի հետ:

Իրոք, քեզ համար շատ հետաքրքիր կլինի այդ էակների մասին ավելի շատ բան իմանալը, քանի որ նրանք բավականին յուրահատուկ են:

Նրանք շատ այնպիսի բաներ ունեն, ինչպիսիք չես տեսնի մեր Տիեզերքում գոյություն ունեցող ոչ մի ուրիշ մոլորակի վրա բնակվող էակների մոտ:

Ես նրանց շատ լավ գիտեմ, որովհետև նրանց ծագումը, հետագա զարգացումը և ըստ իրենց ժամանակագրության՝ բազմաթիվ դարերի ընթացքում գոյատևումը, տեղի է ունեցել իմ աչքի առաջ:

Եվ ոչ միայն հենց նրանց ծագումն է տեղի ունեցել իմ աչքի առաջ, այլ նաև այն մոլորակի կազմավորման ավարտը, որի վրա նրանք ծնվում ու գոյատևում են:

Երբ դեռ նոր էինք մուտք գործել այդ արևային համակարգությունը և հաստատվել Մարս մոլորակի վրա, այդ Երկիր մոլորակի վրա, որն իր խտացումից հետո դեռևս չէր հասցրել սառչել, բացարձակապես ոչինչ գոյություն չունեի:

Հենց ամենասկզբից այդ մոլորակը շատ լուրջ տհաճություններ է պատճառել մեր Անսահմանությանը:

Եթե ուզում ես, նախ կպատմեմ այն համատիեզերական բնույթ ունեցող իրադարձությունների մասին, որոնք կապված էին այդ մոլորակի հետ և տհաճություններ պատճառեցին մեր Անսահմանությանը:

– Այո՛, սիրելի՛ պապիկ,– ասաց Հասեինը,– նախ դրա մասին պատմիր: Դա, անկասկած, ինձ համար նու՛յնպես հետաքրքիր կլինի, ինչպես այն ամենը, ինչ դու պատմում ես:

ԳԼՈՒԽ Թ Լուսնի առաջացման պատճառը

Բեհեզգեբուդն իր պատմությունն սկսեց հետևյալ կերպ.

«Այն բանից հետո, երբ հասանք մեր աքսորավայրը՝ Մարս մոլորակ, աստիճանաբար սկսեցինք հիմնավորվել այնտեղ:

Մենք դեռևս կազմակերպչական խառը հոգսերով էինք կլանված, որպեսզի քիչ թե շատ տանելի գոյություն ապահովենք մի բնության գրկում, որը խորթ էր մեզ համար, երբ հանկարծ, մեր զբաղվածության ամենախառն օրերից մեկում, ամբողջ Մարս մոլորակը ցնցվեց, իսկ քիչ ավելի անց այնպիսի մի խեղդիչ զարշահոտություն տարածվեց, որ սկզբում մեզ թվաց, թե ամբողջ Տիեզերքում ամեն ինչ խառնվել է, ուղղակի ասած, ինչ-որ «անասելի» մի բանի հետ:

Միայն բավականին երկար ժամանակ անցնելուց հետո, երբ այդ զարշահոտությունն արդեն ցրվել էր, մենք ուշքի եկանք և կամաց-կամաց սկսեցինք պարզել, թե իրականում ինչ է տեղի ունեցել:

Մենք հասկացանք, որ այդ սարսափազդու երևույթի պատճառը հենց այդ Երկիր մոլորակն է, որը ժամանակ առ ժամանակ շատ մոտ էր անցնում մեր Մարսից, և մենք հնարավորություն էինք ունենում դիտելու այն՝ նույնիսկ առանց «տեսքահանի» օգնությանը դիմելու:

Դեռևս մեզ անհայտ պատճառով այդ մոլորակը, ինչպես շուտով տեսանք, «պայթել էր», և նրանից բաժանված երկու կտորներ թռել էին դեպի բաց տարածություն:

Ես քեզ արդեն ասել եմ, որ այդ արևային համակարգությունն այն ժամանակ դեռևս կազմավորման փուլում էր և դեռ ամբողջությամբ չէր «միահյուսվել», այսպես կոչված, «Բոլոր Տիեզերական Խտացումների Ներդաշնակ Փոխօժանդակության» հետ:

Հետագայում պարզվեց, որ, համաձայն հենց այդ «Բոլոր Տիեզերական Խտացումների Ներդաշնակ Փոխօժանդակության», այդ համակարգում նաև պիտի գործեր արդեն կազմավորված և հսկայական ուղեծիր ունեցող «Կոնդուր» գիսավորը:

Այդ գիսավորը, թեև արդեն խտացած էր, նոր միայն առաջին անգամ ավարտում էր իր «ամբողջական ուղին»:

Որոշ քաջատեղյակ Սրբազան Անհատականություններ հետագայում գաղտնաբար մեզ նաև բացատրեցին, որ այդ գիսավորի և Երկիր մոլորակի ուղեծրային գծերն ընդհանրապես պետք է հատվեին, բայց ոմն Սրբազան Անհատականության հաշվարկներում թույլ տրված սխալի պատճառով, որն զբաղվում է Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման գործերով, այդ գիսավորի և տվյալ մոլորակի ուղեծրային գծերի հատման կետով անցնելու ժամանակները համընկել են, որի հետևանքով էլ տեղի է ունեցել բախում՝ այնքան ուժեղ, որ Երկիր մոլորակից երկու կտոր պոկվել են և նետվել դեպի բաց տարածություն:

Բախումը նման լուրջ հետևանքի է հանգեցրել այն պատճառով, որ մոլորակը նոր էր կազմավորվել, և դեռ ամբողջությամբ չէր գոյացել նրա մթնոլորտը, որը նման դեպքերում մեղմիչի՝ «բուֆերի» դեր է կատարում:

Եվ ահա, տղա՛ս, մեր Անսահմանությանն էլ անմիջապես զեկուցեցին այդ համատիեզերական դժբախտ պատահարի մասին:

Այդ զեկուցման արդյունքում, Գերսրբազնագույն Բացարձակ Արևի կողմից դեպի Արգ համակարգ առաքվեց մի ամբողջ հանձնախումբ, որը կազմված էր Աշխարհաստեղծման ու Աշխարհապահպանման գործերով զբաղվող Հրեշտակներից ու Հրեշտակապետներից՝ Մեծագույն Հրեշտակապետ Սակակիի գլխավորությամբ:

Բարձրագույն հանձնախումբը ժամանեց մեր Մարս մոլորակը, քանի որ այն ամենամոտն էր Երկրին, և հենց Մարսում էլ սկսեց իր հետաքննությունը:

Բարձրագույն հանձնախմբի սրբազան անդամներն անմիջապես հանգստացրին մեզ, ասելով, որ մեծ համատիեզերական աղետի վտանգն արդեն անցած է:

Իսկ Գերինժեներ Հրեշտակապետ Ալգամատանոն այնքան բարի գտնվեց, որ անձամբ մեզ բացատրեց, որ ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել հետևյալը.

«Երկիր մոլորակից պոկված բեկորները կորցրել են հարվածի հետևանքով ձեռք բերած իրենց շարժման իներցիան ավելի վաղ, քան կհասցնեին դուրս գալ այդ մոլորակի ազդեցության տարածքից, ուստի, համաձայն Անկման Օրենքի, նրանք սկսել են հետ ընթանալ դեպի մոլորակի մնացած, հիմնական մասը:

Սակայն, նախքան նորից հիմնական մասի վրա ընկնելը, նրանց վրա սկսել է ազդել մի այլ տիեզերական օրենք՝ Կապակցման Օրենքը, որի հետևանքով էլ նրանք այժմ էլի պսածն ուղեծրերով պետք է պտտվեն մոլորակի հիմնական մասի շուրջը ճիշտ այնպես, ինչպես Երկիր մոլորակն է պտտվում Արգի արևի՝ Արեգակի շուրջը:

Եվ այդպես միշտ կշարունակվի, եթե մի նոր անկանխատեսելի մեծամասշտաբ աղետ այս կամ այն կերպ չփոխի այդ իրավիճակը:

Փառք դիպվածին,– ավարտեց Նորին Ամենաչափությունը,– որ այս պատահարի հետևանքով համահամակարգային ներդաշնակ շարժումը չոչնչացվեց, և Արգ համակարգության խաղաղ գոյությունը շուտով վերականգնվեց»:

Այնուամենայնիվ, զավա՛կս, այդ Բարձրագույն հանձնախումբը, հաշվի առնելով բոլոր առկա փաստերը և նաև այն, թե ինչ կարող է տեղի ունենալ այդ ամենից հետո, հանգեց այն եզրակացությանը, որ, թեև Երկիր մոլորակի բեկորները դեռևս կարող են երկար մնալ իրենց ներկա վիճակով, սակայն հիմք ընդունելով հետագա, հանձնախմբի կողմից հնարավոր համարվող, այսպես կոչված, «տաստարտունարյան»³⁹ շեղումները», այդ բեկորներն ապագայում կարող են դուրս գալ իրենց հավասարակշռության դիրքից և բազմաթիվ անդառնալի վնասներ հասցնել ինչպես Արգ համակարգությանը, այնպես էլ հարևան արևային համակարգություններին:

Ուստի Բարձրագույն հանձնախումբը որոշեց միջոցներ ձեռնարկել, որպեսզի հետագայում նման դեպքերը բացառվեն:

Եվ նրանք որոշեցին, որ տվյալ դեպքում ամենալավ միջոցն այն կլինի, որ մոլորակից մնացած հիմնական մասը, այսինքն՝ Երկիրը, մշտապես իրենից առանձնացած բեկորներին առաքի, այսպես կոչված «սրբազան ազգոզին»⁴⁰–ի թրթիռներ, դրանց պահպանելու համար:

Այդ սրբազան սուբստանցիան մոլորակների վրա կարող է առաջանալ, երբ երկու հիմնական տիեզերական օրենքները՝ սրբազան «Յոթնապարապարշինողը»⁴¹ և սրբազան «Եռամասիկապողը»⁴², նրանց վրա գործում են, ինչպես ասվում է, «իլնոսոպարային»⁴³ ձևով, այսինքն՝ երբ նշված սրբազան օրենքները տվյալ տիեզերական խտացման մեջ գործում են ինքնուրույնաբար (իհարկե, ինքնուրույնաբար՝ որոշակի շրջանակներում):

Եվ այսպես, զավա՛կս, քանի որ նման տիեզերական գործառույթը կարելի էր իրականացնել միայն Նորին Անսահմանության թույլտվությամբ, ապա Մեծն Հրեշտակապետ Սակակին, Բարձրագույն

³⁹ ռուս. տարբերակում՝ «тастартунальные», անգլ. տարբերակում՝ “tastartunarian”

⁴⁰ ռուս. տարբերակում՝ «аскокия», անգլ. տարբերակում՝ “askokin”

⁴¹ ռուս. տարբերակում՝ «Гептапарашинох», անգլ. տարբերակում՝ “Heptaparaparshinokh”

⁴² ռուս. տարբերակում՝ «Триамазикамно», անգլ. տարբերակում՝ “Triamazikamno”

⁴³ ռուս. տարբերակում՝ «илносопарно», անգլ. տարբերակում՝ “ilnosoparnian”

Հանձնախմբի մի քանի ուրիշ սրբազան անդամների ուղեկցությամբ, անհապաղ մեկնեց Նորին Անսահմանության մոտ, որպեսզի ստանա այդ թույլտվությունը:

Եվ հետագայում, երբ նշածս Սրբազան Անհատականությունները Նորին Անսահմանությունից թույլտվություն ստացան, ապա, այդ պահից սկսած, նույն Մեծն Հրեշտակապետ Սակակիի դեկավարությամբ այդ մոլորակի վրա՝ էլ «իլնոտպարը» հաստատվեց, ինչպես շատ այլ մոլորակների վրա է, որի շնորհիվ էլ այդ երկու առանձնացված բեկորները մինչև այժմ գոյություն ունեն լայնամասշտաբ արհավիրքի վտանգ չպարունակելով:

Այդ երկու բեկորներից մեծն անվանվեց «Լուսնդերպերզո⁴⁴», իսկ փոքրը՝ «Անուլիոս⁴⁵»: Այն եռուղեղ էակները, որոնք հետագայում նաև այդ մոլորակի վրա սկզբնավորվեցին, սկզբում սովորաբար հենց այդպես էլ կոչում էին այդ բեկորները, բայց ավելի ուշ շրջանի նրանց հետնորդները տարբեր ժամանակներում տարբեր կերպ էին կոչում դրանց, ամենաուշ շրջանում էլ մեծ բեկորը Լուսին անվանվեց, իսկ փոքրի անունը աստիճանաբար մոռացվեց:

Ինչ վերաբերում է ներկայումս այնտեղ ապրող էակներին, ապա նրանք ոչ միայն իսպառ մոռացել են այդ բեկորներից փոքրի անունը, այլ նաև չեն էլ կասկածում դրա գոյության մասին:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ այդ մոլորակի հետագայում կործանված և «Ատլանտիդա» կոչված աշխարհամասում բնակվող էակները դեռևս գիտեին իրենց մոլորակի այդ երկրորդ բեկորի մասին և դրան դեռևս «Անուլիոս» էին կոչում, բայց այդ նույն աշխարհամասի ավելի ուշ շրջանի էակները, որոնցում ներդրված, այսպես կոչված, «Կունդաբուֆեր» օրգանի (դրա մասին հիմա, ինչպես երևում է, ես քեզ պետք է պատմեմ և նույնիսկ շատ մանրամասն) հետևանքների արդյունքներն արդեն սկսել էին բյուրեղանալ և դառնալ իրենց ընդհանուր ներկայության մի մասը, այդ բեկորին անվանում էին «Քիմեսփայ⁴⁶», որն իրենց լեզվով նշանակում էր «Հանգիստ քուն խանգարող»:

Այդ յուրահատուկ մոլորակի վրա բնակվող ժամանակակից եռուղեղ էակներն իրենց նախկին մոլորակի այդ երկրորդ բեկորի մասին ոչինչ չգիտեն գլխավորապես այն պատճառով, որ դրա փոքր չափերն ու շարժման ուղեծրի հեռու լինելն այն անտեսանելի են դարձնում իրենց տեսողության համար, ինչպես նաև այն պատճառով, որ ոչ մի տատիկ իրենց երբեք չի պատմել այն մասին, որ վաղեմի ժամանակներում իրենց մոլորակը նման փոքրիկ արբանյակ է ունեցել:

Եվ եթե նույնիսկ նրանցից մեկը հիմա իր, թեև լավ, բայց ամեն դեպքում՝ խաղալիք, դիտակ կոչվող սարքով պատահաբար տեսնի այն, ապա ոչ մի ուշադրություն չի դարձնի դրա վրա՝ համարելով, որ ուղղակի խոշոր երկնաքար է տեսնում:

Ժամանակակից էակները հավանաբար այն երբեք չեն տեսնի, քանի որ նրանց բնույթին հատուկ է դարձել միայն անիրական բաներ տեսնելը:

Պետք է արժանին մատուցել նրանց. վերջին հարյուրամյակների ընթացքում նրանք ինքնակամ, ամենաարտիստիկ ձևով, մեքենայական են դարձել և ոչ մի իրական բան չեն տեսնում:

Այսպիսով, զավա՛կս, այն ամենի հետևանքով, որ արդեն պատմել եմ, նաև ա՛յդ մոլորակի վրա են, ինչպես հարկն է, սկզբում կազմավորվել, այսպես կոչված, «Ամբողջի Նմանակներ», կամ «Միկրոկոսմեր» (նրանք այդպես էլ են կոչվում), որից հետո այդ «Միկրոկոսմերից» գոյացել է, այսպես կոչված, «օդուրիշտեղյան⁴⁷» և «բոլորմիտեղյան⁴⁸» բուսականություն:

Դրանից ավելի ուշ, ինչպես հաճախ է պատահում, այդ նույն «Միկրոկոսմերից» սկսել են խմբավորվել նաև բոլոր եռուղեղ համակարգերին հատուկ «տետարոդեկոսմոսների⁴⁹» տարբեր ձևեր:

Եվ այս վերջինների շարքում այնտեղ այնուհետև առաջին անգամ սկզբնավորվեցին հենց այն երկոտանի «տետարոդեկոսմոսները», որոնց դու քիչ առաջ «լորձոտներ» անվանեցիր:

Այն, թե ինչու և ինչպես են մոլորակների վրա կազմավորվում «Ամբողջի Նմանակները», երբ հիմնական սրբազան օրենքներն անցում են կատարում «իլնոտպարայինի», և թե ինչպիսի գործոններ են նպաստում այս կամ այն, այսպես կոչված, «լինելիական ուղեղի համակարգի» ձևավորմանը, նաև

⁴⁴ ռուս. տարբերակում՝ «Лундерперзо», անգլ. տարբերակում՝ “Loonderperzo”

⁴⁵ ռուս. տարբերակում՝ «Анулиос», անգլ. տարբերակում՝ “Anulios”

⁴⁶ ռուս. տարբերակում՝ «Кимеспай», անգլ. տարբերակում՝ “Kimyspai”

⁴⁷ ռուս. տարբերակում՝ «одуристельная», անգլ. տարբերակում՝ “oduristonian”

⁴⁸ ռուս. տարբերակում՝ «полормедехтная», անգլ. տարբերակում՝ “polormedekhtic”

⁴⁹ ռուս. տարբերակում՝ «Тетартокосмосов», անգլ. տարբերակում՝ “tetartocosmoses”: Ըստ իս, այստեղ նորից հեղինակը (մի փոքր այլ կերպ) գաղտնագրել է «տետրաեդր» (քառանի) բառը

այն, թե ինչ օրենքներ են գործում Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման գործընթացներում՝ ես այդ բոլորը հատուկ ձևով քեզ կբացատրեմ մի ուրիշ անգամ:

Իսկ հիմա իմացիր միայն, որ քեզ հետաքրքրող եռուղեղ էակները, որոնք կազմավորվում են Երկրի վրա, սկզբնական շրջանում ունեցել են բոլոր այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են լինելիական Բանականության ձեռք բերման գործառույթների կատարելագործման համար, ինչպիսիք ունենում են Համայն Տիեզերքում կազմավորվող բոլոր մյուս «տետարդեկոսմոսների» տեսակները:

Բայց հետո՝ հենց այն ժամանակահատվածում, երբ նրանք աստիճանաբար սկսեցին ոգի առնել, այսպես կոչված, «լինելիական բնագոյով» (ինչպես լինում է մեծ Տիեզերքի մյուս բոլոր նմանատիպ մոլորակների վրա), ահա հենց այդ ժամանակ, ի դժբախտություն իրենց, տեղի ունեցավ Վերնից չկանխատեսված մի աղետ, որը չափազանց տխուր հետևանքներ ունեցավ նրանց համար»:

ԳԼՈՒԽ Ժ

Թե ինչու «մարդիկ» կոչվողները մարդիկ չեն

Բեհեզգեբուղը խոր թառանչ քաշեց և շարունակեց պատմել.

«Այդ մոլորակի վրա «իլնոսոպարային» գործընթացի իրականացումից հետո, օբյեկտիվ ժամանակագրությամբ հաշված, անցել էր մեկ տարի:

Այդ ընթացքում մոլորակի վրա նաև աստիճանաբար հավասարակշռության էին բերվել համապատասխան գործընթացները, այսինքն՝ այնտեղ սկզբնավորվող ամեն ինչի ինվոյուցիան (հետընթացը) և էվոյուցիան (առաջընթացը):

Եվ, իհարկե, այնտեղի եռուղեղ էակների ներսում աստիճանաբար սկսում էին բյուրեղանալ այն տվյալները, որոնք անհրաժեշտ են օբյեկտիվ բանականություն ձեռք բերելու համար:

Կարճ ասած՝ այդ մոլորակում ևս ամեն ինչ սկսում էր ընթանալ սովորական, նորմալ կարգով:

Ուստի, զավա՛կս, եթե նույն այդ Հրեշտակապետ Սակակիի ղեկավարությամբ գործող Բարձրագույն հանձնախումբը տարվա վերջին նորից չհայտնվեր այնտեղ, ապա հնարավոր է, որ բոլոր հետագա թյուրիմացությունները, որոնք կապված էին այդ չարաբաստիկ մոլորակի վրա կազմավորվող եռուղեղ էակների հետ, ընդհանրապես չծագեին:

Բարձրագույն հանձնախմբի՝ դեպի այդ մոլորակ կատարած երկրորդ այցը բացատրվում էր նրանով, որ, չնայած ձեռնարկված այն միջոցներին, որոնց մասին պատմեցի, հանձնախմբի սրբազան անդամներից շատերի Բանականության մեջ դեռևս լիակատար վստահություն չէր բյուրեղացել, որ ապագայում այդ մոլորակի վրա որևէ անցանկալի անակնկալ չի ծագի, ուստիև այժմ կամենում էին տեղում ստուգել արդեն ձեռնարկված միջոցների արդյունքները:

Հատկապես այդ երկրորդ այցի ժամանակ էր, որ Բարձրագույն հանձնախումբը որոշեց ամեն դեպքում, թեկուզև սեփական հանգստության համար, որոշ հատուկ միջոցներ ևս ձեռնարկել, որոնցից մեկն էլ հենց այն միջոցն էր, որի հետևանքներն աստիճանաբար այդ չարաբաստիկ մոլորակի եռուղեղ էակների համար ոչ միայն ահավոր մղձավանջի վերածվեցին, այլ նաև, այսպես ասած, չարորակ խոց դարձան ամբողջ մեծ Տիեզերքի համար:

Հարկ է իմանալ, որ Բարձրագույն հանձնախմբի այդ երկրորդ այցի ժամանակաշրջանում այդ մոլորակի բնակիչների մոտ աստիճանաբար արդեն կազմավորման փուլ էր թնակոխում, բոլոր եռուղեղ էակներին բնորոշ, այսպես կոչված, «մեխանիկական բնագոյով»:

Բարձրագույն հանձնախմբի սրբազան անդամներն այն ժամանակ դատում էին այսպես. եթե մոլորակի այդ երկոտանի եռուղեղ էակների մեխանիկական բնագոյով սկսի զարգանալ Օբյեկտիվ Բանականություն ձեռք բերելու ուղղությամբ, ինչը սովորաբար եռուղեղ էակների համար ամենուրեք է տեղի ունենում, ապա լիովին հնարավոր է, որ նրանք, ժամանակից շուտ հասկանալով իրենց ծագման ու գոյության պատճառները, սկսեն բազմաթիվ անցանկալի տհաճություններ պատճառել: Կարող է այնպես պատահել, որ, հասկանալով իրենց ծագման պատճառը, որի էությունն իրենց գոյությամբ մոլորակից պոկված բեկորները պահպանելու մեջ է, և համոզվելով, որ ենթարկվում են

իրենց կատարելապես խորթ հանգամանքների՝ այլևս չուզենան շարունակել իրենց գոյությունը և, սկզբունքից ելնելով, գնան ինքնառնչացման:

Ուստի, զավա՛կս, ահա հենց դա հաշվի առնելով՝ Բարձրագույն հանձնախումբն այն ժամանակ որոշեց, որ այլ բաներից զատ՝ ժամանակավորապես այդ եռուղեղ էակների ընդհանուր ներկայության մեջ հատուկ օրգան ներդնի այնպիսի յուրահատկությամբ, որ, նախ և առաջ՝ նրանք իրականությունն ընկալեն գլխավայր շուռ տրված, և երկրորդ՝ ամեն մի դրսից եկած տպավորություն նրանց մեջ բյուրեղացնի այնպիսի նախադրյալներ, որոնք նրանց մեջ գրգռեն «հաճույքի» ու «վայելքի» գործոններ:

Եվ իրոք՝ դիմելով Համատիեզերական Գլխավոր Գերքիմիկոս-Ֆիզիկոս Հրեշտակ Լույսուսի օգնությանը, որն այդ Բարձրագույն հանձնախմբի անդամներից մեկն էր, նրանք այդ եռուղեղ էակների կառուցվածքի մեջ, հատուկ եղանակով, ողնաշարի ծայրի մոտ գտնվող պոչուկի հիմնամասում (նրանք այն ժամանակ պոչ ունեին, դեռ ավելին՝ նրանց ընդհանուր ներկայության այդ հատվածը դեռևս նորմալ արտաքին տեսք ուներ, ինչն իրենով, այսպես ասած, «լիակատար ներքին նշանակալիցություն» էր արտահայտում), աճեցրին «ինչ-որ բան», որը նպաստում էր վերը նշված հատկությունների առաջացմանը:

Եվ այդ «ինչ-որ բանը» նրանք այն ժամանակ առաջին անգամ անվանեցին «Կունդաբուֆեր»:

Այդ օրգանն աճեցնելով եռուղեղ էակների ներկայության մեջ և համոզվելով, որ այն կաշխատի՝ Սրբազան Անհատականություններից կազմված և Հրեշտակապետ Սակակիի ղեկավարությամբ գործող Բարձրագույն հանձնախումբը կենտրոն վերադարձավ վերջնականապես հանգիստ և մաքուր խղճով. մինչդեռ այնտեղ՝ քո երևակայությունը շարժած այդ Երկիր մոլորակում հենց առաջին օրից այդ զարմանահրաշ և չափազանց սրամիտ գյուտի ազդեցությունը սկսեց աճել ու աճել, ինչպես իմաստուն Մոլլա Նասրեդինը կասեր՝ «երիքովյան փողի անընդհատ ուժգնացող ձայնի պես»:

Ահա, ուրեմն, որպեսզի դու գոնե մոտավոր պատկերացում կազմես այդ օրգանի հատկությունների թողած հետևանքների մասին, որը հորինվեց ու գործի գցվեց աննման Հրեշտակ Լույսուսի կողմից (թող օրհնյա՛լ լինի այդ անունը հավիտյանս հավիտենից), անհրաժեշտ է, որ տեղակ լինես այդ մոլորակի եռուղեղ էակների այլազան դրսևորումներին, որոնք ոչ միայն այն ժամանակաշրջանում ի հայտ եկան, երբ նրանց ներկայության մեջ ներդրվեց Կունդաբուֆեր օրգանը, այլ նաև այն ավելի ուշ ժամանակահատվածներում, երբ, թեև այդ զարմանահրաշ օրգանն ու դրա հատկություններն արդեն ոչնչացված էին համարվում, բայց շատ պատճառներով այդ օրգանի հատկությունների հետևանքները նորից սկսել էին բյուրեղանալ նրանց ներկայության մեջ:

Բայց ես այդ ամենի մասին քեզ բացատրություններ կտամ ավելի ուշ:

Առայժմ պետք է ի գիտություն ընդունես, որ եղավ նաև Բարձրագույն հանձնախմբի երրորդ այցն այդ մոլորակ, երեք տարի անց՝ ըստ օբյեկիվ ժամանակագրության: Այս անգամ հանձնախումբը ղեկավարում էր Մեծն Մերովբեապետ Մեվոհտարտրան, քանի որ Մեծագույն Հրեշտակապետ Սակակին այդ ժամանակ արդեն արժանացել էր դառնալու Աստվածային Անհատականություն, ինչպիսին որ է հիմա, այսինքն՝ Համայն Տիեզերքի Քառուրտների չորս Պահապաններից մեկը:

Եվ հենց այդ երրորդ այցի ընթացքում Բարձրագույն հանձնախմբի սրբազան անդամների մանրագին քննության արդյունքում պարզ դարձավ, որ մոլորակից պոկված բեկորների գոյության պահպանման համար այլևս անհրաժեշտություն չկա շարունակելու միտումնավոր կերպով ձեռնարկվող նախազգուշական միջոցառումները, որից հետո, այլ միջոցներից զատ, հենց այդ նույն Գերքիմիկոս-Ֆիզիկոս Հրեշտակ Լույսուսի ձեռամբ, Երկրի եռուղեղ էակների ներկայության մեջ ոչնչացվեց նշածս Կունդաբուֆեր օրգանը՝ իր բոլոր զարմանահրաշ հատկություններն էլ հետը:

Բայց վերադառնանք սկսածս պատմությանը:

Ուրեմն, լսի՛ր: Երբ մեզ շփոթության մատնած արհավիրքը, որը վտանգի տակ էր դրել ամբողջ արևային համակարգության գոյությունը՝ հասավ իր ավարտին, մենք աստիճանաբար, այդ անսպասելի ընդմիջումից հետո, շարունակեցինք Մարս մոլորակի վրա մեր նոր բնակության վայրի հետագա յուրացման գործը:

Կամաց-կամաց ծանոթացանք տեղի բնությանը և համակերպվեցինք եղած պայմաններին:

Ինչպես արդեն ասել եմ, մեզնից շատերը վերջնականապես հաստատվեցին Մարսի վրա, իսկ մյուսները «Պատահար» տիեզերանավով, որը մեր ցեղի էակներին էր հատկացված միջմոլորակային հաղորդակցության համար, կա՛մ մեկնեցին, կա՛մ էլ պատրաստվում էին մեկնել այդ նույն արևային համակարգության մյուս մոլորակները, որպեսզի բնակություն հաստատեն դրանց վրա:

Ես ինքս իմ հարազատների և մի քանի մերձակիցների հետ, հաստատվեցի Մարսի վրա:

Հա՛, պետք է նաև հիշատակեն, որ հենց այդ ժամանակահատվածում, որին վերաբերում է իմ այս պատմությունը, իմ առաջին տեսքահանն արդեն տեղակայված էր այն աստղադիտարանում, որը կառուցեցի Մարսի վրա, ուստի ամբողջովին նվիրվել էի այդ աստղադիտարանի հետագա կազմակերպմանն ու կատարելագործմանը, որպեսզի կարողանամ ավելի մանրամասն գննել մեր մեծ Տիեզերքի հեռավոր խտացումներն ու այդ արևային համակարգության մոլորակները:

Իմ դիտած օբյեկտների թվում հաճախ հայտնվում էր նաև այդ Երկիր մոլորակը:

Ժամանակն առաջ էր գնում:

Այդ մոլորակի վրա գոյատևելու գործընթացն էլ էր աստիճանաբար ամրապնդվում, և կարելի էր կարծել, որ, ամենայն հավանականությամբ, գոյատևման այդ գործընթացը ճիշտ նույն կերպ է կատարվում, ինչպես մյուս մոլորակների վրա:

Սակայն ուշադիր դիտողը նախ և առաջ պարզորոշ կտեսներ, որ այդ եռուղեղ էակների քանակն աստիճանաբար աճում է, և երկրորդ՝ երբեմն կարելի էր նկատել նրանց կողմից մի շատ տարօրինակ դրսևորում. ժամանակ առ ժամանակ նրանք անում էին մի բան, որը մյուս մոլորակների եռուղեղ էակները երբևէ չեն անում, այն է՝ մեկ էլ հանկարծ, ոչ այս, ոչ այն, այդ մոլորակի էակները սկսում էին վերջ տալ մեկը մյուսի գոյությանը:

Մեկը մյուսի գոյությանը վերջ տալու այդ գործը երբեմն տեղի էր ունենում ոչ թե մեկ, այլ մի քանի տարածքներում միաժամանակ, և տևում էր ոչ թե մեկ, այլ շատ ու շատ «դիոնոսկ⁵⁰»-ներ, երբեմն էլ ամբողջական «օրնակրա⁵¹»-ներ:

Երբեմն շատ ակներև կերպով նկատվում էր նաև, որ այդ ահավոր գործընթացի հետևանքով նրանց քանակությունը շատ արագ նվազում էր, բայց և մյուս կողմից, երբ խաղաղ դադար էր լինում այդ գործընթացների միջև, նրանց քանակը նաև խիստ զգալի աճում էր:

Նրանց այդ յուրահաստկությանը մենք կամաց-կամաց վարժվեցինք՝ ինքներս մեզ բացատրելով, որ, ըստ երևույթին, ինչ-որ վերին դատողություններից ելնելով, այդ յուրահաստկությունն էլ է Բարձրագույն հանձնախմբի կողմից դիտավորյալ կերպով կցվել Կունդաբուֆեր օրգանին: Այլ կերպ ասած՝ տեսնելով այդ երկոտանի էակների բեղունությունը, մենք ենթադրեցինք որ շրջահայաց քայլ է արված՝ ելնելով այն բանից, որ այդ էակների այդքան մեծ քանակներով գոյակցությունն անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի պահպանել Համատիեզերական Ներդաշնակ Շարժումը:

Եթե այդ արտառոց յուրահաստկությունը չլիներ, ապա ոչ մեկի գլխում երբևէ միտք չէր ծագի այն մասին, որ այդ մոլորակի վրա «ինչ-որ բան այն չէ»:

Այն ժամանակահատվածի ընթացքում, որին վերաբերում են նախորդ պատմածներս, ես այցելել եմ այդ արևային համակարգության ինչպես բնակեցված, այնպես էլ չբնակեցված մոլորակների մեծ մասը:

Անձամբ ինձ ամենից շատը դուր են եկել Սատուրն անունով մոլորակում բնակվող եռուղեղ էակները, որոնք արտաքին տեսքով ոչ թե մեզ են նման, այլ թռչուն-էակ ազգավիին:

Իմիջիայլոց, հետաքրքիր է նշել, որ, ինչ-ինչ պատճառով, թռչուն-էակ ազգավիի տեսակները բազմանում են ոչ միայն այդ արևային համակարգության համարյա բոլոր մոլորակների վրա, այլ նաև համայն մեծ Տիեզերքի այն մոլորակների մեծամասնության վրա, որոնցում սկզբնավորվում և մոլորակային մարմիններ են առնում տարբեր արտաքին ձևեր և տարբեր ուղեղային համակարգեր ունեցող էակներ:

Սատուրնի ազգավների բառային հաղորդակցությունը որոշ չափով նման է մերինին:

Իսկ ինչ վերաբերում է նրանց առոգանությանը, ապա ինձ թվում է, որ ուրիշ ոչ մի տեղ ես նման գեղեցիկ առոգանություն չեմ լսել:

Այն կարելի է համեմատել միայն մեր ամենալավ երգիչների երգեցողության հետ, երբ նրանք իրենց ողջ էությամբ դայլայլում են մինորային տոնով:

Կարելի է միայն ասել, որ այդ թռչուն-էակների սրտերը ճիշտ այնպիսին են, ինչպիսիք ունեն մեր Անսահման Ստեղծարար Արարչին ամենամոտ կանգնած հրեշտակները:

Նրանք իրենց գոյության ընթացքում խստորեն ղեկավարվում են մեր Արարչի 9-րդ պատվիրանով, որն ասում է. «Ուրիշի ունեցվածքին վերաբերվիր այնպես, ինչպես քո սեփականին կվերաբերվեիր»:

⁵⁰ ռուս. տարբերակում՝ «дионоск», անգլ. տարբերակում՝ “dianosk” – նշանակում է օր

⁵¹ ռուս. տարբերակում՝ «орнакры», անգլ. տարբերակում՝ “ornakra” – նշանակում է ամիս

Ավելի ուշ ես անպայման քեզ կպատմեմ Սատուրնի վրա սկզբնավորվող ու գոյատևող եռուղեղ էակների մասին, քանի որ իմ ամենալավ ընկերներից մեկը այդ արևային համակարգությունում իմ աքսորված լինելու ամբողջ ընթացքում հենց այդ մոլորակի ծնունդ էր, արտաքին ծածկույթով ազոտով էր, և անունն էլ «Ղառղառ»⁵² էր:

ԳԼՈՒԽ ԺԱ

Ժամանակակից մարդու յուրօրինակ հոգեկառույցի մի հետաքրքրաշարժ գծի մասին

«Այժմ կրկին վերադառնանք Երկիր մոլորակի վրա սկզբնավորվող եռուղեղ էակներին, որոնք ամենից շատը հետաքրքրեցին քեզ, և դու էլ նրանց «լորձոտներ» անվանեցիր:

Նախ ուզում եմ ասել, որ ես շատ ուրախ եմ, որ դու հեռու ես գտնվում այդ եռուղեղ էակներից, որոնց կացրեցիր մի բառ, որը խիստ վիրավորական է նրանց արժանապատվության համար. ուրախ եմ նաև, որ հազիվ թե նրանք երբևէ իմանան այս մասին:

Գիտե՞ս արդյոք, ո՞վ իմ խեղճ, փոքրիկ ու դեռևս անգիտակից տղա՛, թե քեզ ինչ կանեին նրանք՝ հատկապես դրանց ժամանակակից տեսակները, եթե լսեին, թե ինչպես ես անվանել իրենց...

Ես սարսափում եմ հենց միայն այն մտքից, թե ինչպես կվարվեին քեզ հետ, եթե այնտեղ լինեիր, և իրենք էլ բռնեին քեզ: Լավագույն դեպքում նրանք քեզ կծեծեին այնպես, որ, ինչպես մեր Մոլլա Նասրեդինն է ասում, «ուշքի չէիր գա մինչև գանահարության ճիպոտների հաջորդ բերքը»:

Ամեն դեպքում, ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ ամեն մի նոր գործ սկսելուց առաջ միշտ փառք տաս Ճակատագրին և նրանից խնդրես, որ բարեհաճորեն քեզ պահպանի և Երկիր մոլորակի էակներին երբևէ թույլ չտա կասկածել, որ իմ սիրելի, իմ միակ թոռնիկն իրենց «լորձոտներ» է անվանել:

Դու պետք է իմանաս, որ, ինչպես Մարս մոլորակից նրանց դիտելու ընթացքում, այնպես էլ նրանց միջավայրում գոյատևելիս, ես շատ մանրագնին կերպով եմ ուսումնասիրել այդ արտառոց եռուղեղ էակների հոգեկառույցը, ուստի շատ լավ եմ պատկերացնում, թե ինչպես կվարվեին մեկի հետ, ով կհամարձակվեր իրենց նման մականուն կացնել:

Իհարկե, դու նրանց այդպես անվանեցիր քո մանկական միամտության հետևանքով, բայց այդ յուրօրինակ մոլորակի եռուղեղ էակները, հատկապես՝ ժամանակակիցները, նման նրբությունները հաշվի չեն առնում:

Ո՞վ է անուն կացրել, ինչու՞ և ի՞նչ հանգամանքներում՝ նրանց համար միևնույնն է: Իրենց հասցեին վիրավորական խոսք է արտաբերվել, և դա լիովին բավարար է:

Նման բաների մեջ խորանալը, ինչպես կարծում է նրանց մեծամասնությունը, իրենց իսկ խոսքով ասած՝ պարզապես «ջուրծեծոցի» է, և ուրիշ ոչինչ:

Այսպես թե այնպես, ամեն դեպքում քո կողմից անգգույշ քայլ էր Երկիր մոլորակում բազմացող էակներին այդպես անվանելը. նախ և առաջ՝ դու ինձ ստիպեցիր տազնապել, և երկրորդ՝ վտանգ ստեղծեցիր քո ապագայի համար:

Վիճակն այսպիսին է. թեև, ինչպես ասացի, դու հեռու ես գտնվում, և նրանց ձեռքը քեզ չի հասնի, այնուամենայնիվ, եթե նրանք պատահաբար իմանան՝ թեկուր քսաներորդ ձեռքից, թե դու ինչպես ես իրենց վիրավորել, ապա անմիջապես կարող ես վստահ լինել, որ կարժանանաս նրանց «անեծքին»: Իսկ այդ անեծքի մեծությունը կախված կլինի այն բանից, թե հենց այդ պահին ինչով հետաքրքրված կամ զբաղված կլինեն:

Երևի արժե՛ քեզ համար նկարագրել, թե ինչպես քեզ հետ կվարվեին Երկրի էակները, եթե պատահաբար իմանային, որ դու այդպես իրենց վիրավորել ես: Այդ նկարագրությունը նաև շատ լավ

⁵² ռուս. տարբերակում՝ «Хархарх», անգլ. տարբերակում՝ “Harharkh”

օրինակ կծառայի, որպեսզի քեզ համար պարզ դառնան քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հոգեկառույցի տարօրինակությունները:

Եթե բավականաչափ «ձանձրանալիս» լինեն, քանի որ իրենց հետաքրքրությանը հագուրդ տալու հերթական անհեթեթ քանը չունեն, ապա անմիջապես կօգտվեն քո վիրավորանքից նեղանալու միջադեպից և ինչ-որ տեղ՝ նախապես ընտրված վայրում, կհավաքեն նախապես ընտրված մարդկանց, որոնք էլ, նման դեպքերի համար հատուկ նախատեսված հանդերձանքով, կներկայանան «հանդիսավոր նիստի»:

Նախ և առաջ այդ «հանդիսավոր նիստը» վարելու համար իրենց միջից, այսպես ասած, նախագահ կընտրեն, որից հետո ձեռնամուխ կլինեն «դատավարությանը»:

Սկզբի համար, նրանք քեզ, ինչպես իրենք են ասում, «տեղը տեղին կքրքրեն», և ոչ միայն քեզ, այլ նաև հորդ, պապիդ, և այդպես՝ մինչև Ադամ:

Եթե, ինչպես այնտեղ սովորաբար լինում է, ձայների մեծամասնությամբ որոշեն, որ դու մեղավոր ես, ապա կկարդան քո դատավճիռը՝ ըստ իրենց օրինակարգի, որը ձևավորվել է նմանատիպ նախկին «տիկնիկային ներկայացումների» հիման վրա, որ ժամանակին բեմադրել են այն էակները, որոնց իրենք «մեր նախնիք» են անվանում:

Իսկ եթե այնպես պատահի, որ ձայների մեծամասնությամբ քո արարքի մեջ ոչ մի քրեորեն պատժելի բան չգտնեն (թեև նման դեպք նրանց մոտ խիստ հազվադեպ է պատահում), ապա ամբողջ այդ դատաքնության ընթացքն ամենայն մանրամասնությամբ կշարադրեն թղթի վրա, բոլորով կստորագրեն և կուղարկեն... ու՛ր, կարծում ես. անպետք թղթերի արկղ: Օ, ո՛չ, կհանձնեն համապատասխան մասնագետների: Կոնկրետ քո և նմանատիպ այլ դեպքերի համար՝ դա «Եկեղեցական իշխանություններն» են կամ «սրբազան Մինողը», որտեղ դատական գործընթացը կկրկնվի, միայն թե՛ ավելի «պատվարժան» էակների մասնակցությամբ:

Միայն այդ ամբողջ «ջուր ծեծելու» գործընթացի ամենավերջում է, որ նրանք կհանգեն իրենց գլխավոր եզրակացությանը. այն է՝ մեղադրյալն անհասանելի է:

Բայց ահա հենց այստեղ է, որ քո անձի համար կծագի ամենամեծ վտանգը: Երբ լիովին և առանց դույզն-ինչ կասկածի վստահանան, որ իրենց ձեռքը չի կարող քեզ հասնել, ապա միահամուռ կորոշեն, որ, ոչ ավել-ոչ պակաս՝ պետք է «անիծել քեզ»:

Իսկ դու գիտե՛ս, թե դա ինչ բան է, և ինչպես է արվում»:

–Ո՛չ..

– Ուրեմն լսիր ու փշաքաղվի՛ր:

««Ամենապատվարժան» այդ էակները մնացած էակներին կկարգադրեն, որ իրենց համապատասխան հաստատություններում, ինչպիսիք են եկեղեցիները, ժամատները, սինագոգները, քաղաքային վարչությունները և այլն, հատուկ պաշտոնատար անձինք, առիթը եղած դեպքում, հարկ եղած ծիսակարգով մտովի քեզ կամենան մոտավորապես հետևյալը.

«Ա՛նպոզ մնաս... Ջահել-ջահել գլխիդ բրդին ձյուն՝ իջնի... Կերածդ փորումդ մե՛խ դառնա դագաղիդ համար... Կին ունենաս՝ լեզուն օր օրի երկարի՛... Կծածդ քաղցր պատառը բերանումդ լեղի՛ դառնա...», և նույն ոգով՝ էլի շատ ու շատ բաներ:

Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչ մեծ վտանգների ես ենթարկել քեզ՝ այդ հեռավոր մոլորակի եռուղեղ այլանդակներին «լորձոտներ» անվանելով»:

Խոսքն այսպես ավարտելով՝ Բեհեդգեբուղը ժպտալով նայեց սիրեցյալ թոռնիկին:

ԳԼՈՒԽ ԺԲ Առաջին «որոտները»

Փոքր-ինչ դադար առնելուց հետո Բեհեդգերուդը խոսեց այսպես.

«Հենց նոր մի պատմություն հիշեցի նշածս «նզովքների» հետ կապված, որը կարող է ծառայել որպես շատ օգտակար նյութ, որպեսզի դու սկսես հասկանալ քո երևակայությունը շարժած մոլորակում բնակվող եռուղեղ էակների հոգեկառույցի տարօրինակությունը, և, բացի այդ, հիշածս պատմությունը կարող է քեզ մի փոքր հանգստացնել և հույս ներշնչել, որ եթե նույնիսկ այդ յուրօրինակ երկրային էակները պատահաբար իմանան, որ դու իրենց վիրավորել ես, և նզովեն քեզ, ապա հնարավոր է, որ այդ ամենի վերջնական արդյունքը քեզ համար այնքան էլ վատ չլինի:

Պատմությունը, որ հիմա ուզում եմ քեզ պատմել, այնքան էլ հին չէ և ժամանակակից եռուղեղ էակների բնակության վայրում տեղի է ունեցել բոլորովին վերջերս հետևյալ դեպքերի արդյունքում:

Նրանց մեծ հանրություններից մեկում մի սովորական էակ էր ապրում, որը, ինչպես իրենք են այնտեղ անվանում, մասնագիտությամբ «գրող» էր:

Պետք է ասել, որ վաղեմի ժամանակներում դեռևս կարելի էր հանդիպել այդ մասնագիտության տեր էակների, որոնք իրոք ինքնուրույնաբար ինչ-որ բան էին ստեղծում ու դա գրի առնում, բայց ավելի ուշ դարաշրջանների գրող-էակները, հատկապես՝ ժամանակակիցները, արդեն գոյություն ունեցող բազմաթիվ գրքերից պարզապես արտագրում են զանազան կտորներ ու գաղափարներ և, այդ ամենն ի մի բերելուց հետո, այն ներկայացնում են որպես իրենց «նոր գիրքը»:

Եվ այդ գործի համար նրանք գերադասում են հատկապես այն գրքերը, որոնք իրենց են հասել շատ հեռավոր նախնիներից:

Անհրաժեշտ է այստեղ ընդգծել, որ ժամանակակից «գրողների» այդ գրքերը, ընդհանուր առմամբ ու ամբողջությամբ, հենց այն գլխավոր պատճառն են, որ մնացած եռուղեղ էակների Բանականությունն ավելի ու ավելի է նմանվում մի բանի, որին հարգարժան Մուլա Նասրեդինը կանվաներ «զրրթուզիբիլ»:

Այսպիսով, տղա ս, այն ժամանակակից գրողը, որի մասին սկսեցի պատմել, պարզապես այդ «գրողներից» մեկն էր և իրենից առանձնապես բան չէր ներկայացնում:

Մի անգամ՝ հերթական գիրքն ավարտին հասցնելուց հետո, նա սկսեց մտածել, թե է՛լ ինչի մասին գրի, և այդ նպատակով որոշեց որևէ նոր «գաղափար» փնտրել իր գրադարանում եղած գրքերում, որոնք ամեն մի գրող պարտավոր է ունենալ:

Եվ ահա, երբ փնտրում էր, նրա ձեռքն ընկավ «Կտակարանը»: Այս անունը տրվել է մի գրքի, որը գրի են առել Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես կոչված անձինք Հիսուս Քրիստոսի մասին, որը մեր Անսահմանության կողմից Բանագնաց էր ուղարկվել այդ մոլորակը:

Այդ գիրքն այնտեղ լայնորեն տարածված է այն եռակենտրոն էակների շրջանում, որոնք իրենց կյանքում կանոնավորապես առաջնորդվում են այդ Բանագնացի պատվիրաններով:

Հենց որ այդ գիրքը հայտնվեց մեր այս գրողի ձեռքի տակ, նրա գլխում հանկարծ այսպիսի մի միտք ծագեց՝ ինչու՞ հենց ինքս մի որևէ «Կտակարան» չստեղծեմ:

Երբ ես, բոլորովին այլ պահանջներից դրդված, այնտեղ հերթական հետազոտությունն էի կատարում, պարզեցի, որ նա այն ժամանակ դատել է հետևյալ կերպ. «Ինչո՞ւ եմ ես վատ այդ հին բարբարոսներից՝ Մատթեոսից, Մարկոսից, Ղուկասից ու Հովնայից: Ամեն դեպքում՝ ես առավել կուլտուրական եմ և իմ ժամանակակիցների համար ավելի լավ «Կտակարան» կարող եմ գրել: Հատկապես «Կտակարան» գրելն է, որ հիմա ծայրահեղ անհրաժեշտություն է, քանի որ «անգլիացի» և «ամերիկացի» կոչվող ժամանակակից մարդիկ մեծ թուլություն ունեն այդ գրքի նկատմամբ, իսկ ֆունտի ու դոլարի փոխանակման կուրսն էլ վատը չէ:

Ասածն արած է:

Եվ այդ օրվանից՝ նա սկսեց իր իմաստակությունը բանեցնել իր նոր «Կտակարանի» վրա: Բայց այդ նոր «Կտակարանի» հետ կապված բոլոր գլխավոր իրադարձությունները սկսեցին տեղի ունենալ միայն այն բանից հետո, երբ նա իր գործն ավարտել էր և գիրքը հանձնել հրատարակման:

Ուրիշ մի ժամանակ երևի ոչ մի արտառոց բան տեղի չունենար, և այդ նոր «Կտակարանը» գրամոլների գրադարաններում պարզապես տեղ կզբաղեցներ նմանատիպ բազմաթիվ այլ գրքերի շարքում, որոնք իրենց մեջ անհաշիվ նմանատիպ «ճշմարտություններ» են պարունակում:

Բայց, ի բարեբախտություն ասեմ, թե ի դժբախտություն այդ գրողի՝ այնպես պատահեց, որ որոշ «իշխանություն ունեցող» էակների (որոնք հենց այն մեծ հանրությանն էին պատկանում, որի ներկայացուցիչն էր նաև այդ գրողը) բախտները չբանեց «ռուլետկայում» ու «բաքկարատում», ուստի նրանք «դրամ» կոչվող բանից պահանջեցին իրենց հանրությանը պատկանող մնացած շարքային էակներից: Դրա հետևանքով, քանի որ պահանջված գումարը դուրս էր ամեն մի չափ ու սահմանից, հանրության շարքային անդամները վերջապես արթնացան իրենց սովորական, այսպես ասած, ընդարմացած վիճակից և «իրար անցան»:

Այդ նկատելով՝ տանը մնացած «իշխանավորները» տագնապեցին և անմիջապես համապատասխան «միջոցներ» ձեռնարկեցին:

«Միջոցների» մեջ մտնում էր և այն, որ անհապաղ մոլորակի երեսից իսպառ ջնջեն վերջին ժամանակներում իրենց հայրենիքում ի հայտ եկած բոլոր այն բաները, որոնք կարող են ինչ-որ կերպ խանգարել իրենց շարքային հայրենակիցների կրկին արջաքուն մտնելուն:

Եվ հենց այդ ժամանակ էր, որ լույս աշխարհ եկավ հիշածս գրողի նոր «Կտակարանը»:

Դրա բովանդակության մեջ նույնպես «իշխանավոր» էակները գտան ինչ-որ բաներ, որոնք խանգարում են շարքային էակների արջաքուն մտնելու գործին և որոշեցին հնարավորինս շուտ գլուխներն ազատել և՛ այդ գրողից, և՛ նրա գրած «Կտակարանից», քանզի վերջին ժամանակներում լավ վարպետացել էին այն բազմաթիվ «դուրսպրծուկներից» ազատվելու գործում, որոնք համարձակվում էին քիթները խոթել իրենց չվերաբերող գործի մեջ:

Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ գրողի հետ հաշիվները մաքրել չկարողացան, ուստի ավելի անհանգստացան չիմանալով, թե հետո ինչ անել:

Մեկն ասում էր՝ նրան կոխենք այնտեղ, որտեղ շատ առնետներ ու ոջիլներ կան, մյուսը թե՛ ուղարկենք «Տիմուկտու»⁵³, և այլն, և այլն: Բայց վերջնական որոշումն այն եղավ, թե պետք է հրապարակավ նգովել այդ գրողին ու նրա «Կտակարանը»՝ բոլոր այն կանտոներով, որոնց մասին ասել եմ, և նույնպիսի «նգովքով», որով, անշուշտ, քեզ էլ կանիծեին, եթե իմանային, թե ինչպես ես իրենց վիրավորել:

Այսպիսով, զավա՛կս, այս անգամ այդ եռուղեղ էակների ժամանակակից տեսակի հոգեկառույցի տարօրինակությունն արտահայտվեց այն բանով, որ, երբ այդ գրողին ու նրա «Կտակարանն» արժանացրին «սրբազան նգովքի», դրա արդյունքը գրողի համար եղավ ոչ այլ ինչ, քան, ինչպես էլի նման դեպքերում պատվելի Մոլլա Նասրեդինը կասեր «համատարած վարդապսակներ»:

Իսկ կատարվեց հետևյալը:

Հիշատակածս հանրության շարքային էակները, հենց որ տեսան, որ իշխանություն ունեցողներն այդ գրողի անվան շուրջ այդպիսի աղմուկ են բարձրացրել, անչափ հետաքրքրվեցին նրա անձով, վրա պրծան ու գնեցին ոչ միայն նրա գրած նոր «Կտակարանը», այլ նաև նախկինում նրա գրած բոլոր մանր ու մեծ գրքերը:

Դրա հետևանքը, ինչպես սովորաբար լինում է այդ յուրահատուկ մոլորակի վրա բազմացող եռակենտրոն էակների մոտ, եղավ այն, որ նշածս հանրության էակների բոլոր մյուս հետաքրքրություններն աստիճանաբար մոռացության մատնվեցին, և նրանք մտածում ու խոսում էին միայն այդ գրողի մասին:

Եվ, մի բան, որ նույնպես պատահում է, մի մասն այդ գրողի անունը երկինք էր հանում, մի մասն էլ քննադատում ու ցեխն էր կոխում՝ այնքան, որ այդ քննարկումների ու խոսակցությունների արդյունքում այդ գրողով ու նրա գործով հետաքրքրվողների թիվն անշեղորեն աճեց ոչ միայն իր հարազատ հանրության, այլ նաև օտար հանրությունների պատկանող էակների շրջանում:

Եվ դա տեղի ունեցավ այն պատճառով, որ տվյալ հանրության իշխանավոր էակներից ոմանք, որոնց գրպանները սովորաբար տոգած էին լինում փողերով, դեռևս շարունակում էին իրենց հերթին իրենց գործն անել. այցելում էին այլ հանրություններ, որտեղ «ռուլետկան» ու «բաքկարատը» ծաղկում էին ապրում, խոսում էին այդ գրողի մասին և աստիճանաբար դրանով վարակում նաև օտար հանրությունների էակներին:

⁵³ հինավուրց քաղաք ներկայիս Մալի հանրապետության տարածքում

Կարճ ասած՝ նրանց հոգեկառույցի արտառոցության հետևանքով այնտեղ աստիճանաբար այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ նույնիսկ հիմա էլ, երբ այդ գրողի «Կտակարանը» վաղուց մոռացվել է, նա ամենուրեք հայտնի է որպես «գերազանց գրող»:

Հիմա ինչ էլ որ գրում է, անմիջապես ձեռքից ձեռք են թոցնում և դա համարում անատարկելի ճշմարտություն:

Ներկայումս նրա գրվածքներին բոլորը նույնպիսի պատկառանքով են վերաբերվում, ինչպես իրենց նախնիները վերաբերվում էին սուրբ Պյութիայի գուշակություններին:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ եթե հիմա այնտեղի էակներից որևէ մեկին հարցնես այդ գրողի մասին, ապա անպայման լսած կլինի նրա անունը և նրան կորակի որպես անսովոր ու հանճարեղ էակ:

Բայց եթե հարցնես, թե նա ինչ է գրել, ապա կպարզվի, որ նրանց մեծ մասը (եթե, իհարկե, ճշմարիտը խոստովանեն) այդ գրողի ոչ մի գիրքը չի կարդացել:

Այնուամենայնիվ շարունակում են խոսել նրա մասին, քննարկումներ են անում և, իհարկե, փրփուրը բերաններին պնդում են, որ նա «բացառիկ խելքի տեր էակ է» և առանձնահատուկ խորությամբ, հրաշալի պատկերացնում է Երկիր մոլորակի վրա բնակվող էակների հոգեկառույցի բոլոր առանձնահատկությունները»:

ԳԼՈՒԽ ԺԳ

Թե ինչու մարդու բանականությունը երևակայական ընդունում է իրականության տեղ

– Ո՛վ իմ սիրելի ու բարի պապի՛կ, խնդրում եմ, բարի եղիր և բացատրի՛ր ինձ՝ թեկուզև ընդհանուր գծերով, թե ինչու՞ են այդ էակներն ամեն մի երևակայական բան ընդունում իրականության տեղ:

Թոռան այդ հարցին Բեհեդգեբուդը պատասխանեց այսպես.

«Երկիր մոլորակի եռուղեղ էակներն իրենց հոգեկառույցի այդ յուրահատկությունը ձեռք են բերել ավելի ուշ ժամանակաշրջաններում. այդ յուրահատկությունը ձևավորվել է միայն այն պատճառով, որ նրանց կառույցի իշխող մասը (նման մաս ունենում են բոլոր եռուղեղ էակները) աստիճանաբար թույլ է տվել իրենց ընդհանուր ներկայության մնացած մասերին, որ ամեն մի նոր տպավորություն դրանք ընկալեն ոչ թե իրենց «լինելիական Պարտք-պարտավորությամբ», այլ ուղղակի այնպես, ինչպես այդ տպավորություններն ընկալվում են այդ եռուղեղ էակների կառույցի առանձին տեղայնացումերով, որոնք անվանվում են կենսական կենտրոններ, կամ, եթե իրենց լեզվով ասելու լինեմ՝ նրանք հավատում են ուրիշների ամեն մի ասածին, բայց հավատ չեն ընծայում այն ամենին, ինչն իրենք հնարավորություն ունեն գիտակցելու իրենց իսկ առողջ դատողությամբ:

Ընդհանուր առմամբ, այդ արտառոց էակների ներկայության մեջ որևէ նոր բան բյուրեղանում է միայն այն դեպքում, երբ պողոսը որևէ մեկի կամ ինչ-որ մի բանի մասին որոշակի կարծիք է հայտնում, և պետրոսն էլ նույնն է ասում. այդ դեպքում լսող էակը լիակատար համոզվում է, որ դա հենց այդպես է և ոչ այլ կերպ: Նրանց հոգեկառույցի այդ յուրահատկության հետևանքով, նաև այն փաստի առկայությամբ, որ հիշածս գրողի մասին այդքան շատ են խոսում, ինչպես քիչ առաջ պատմեցի, ներկայումս այնտեղ ապրող էակների մեծամասնությունը կատարելապես համոզված է, որ նա շատ խոշոր հոգեբան է և անգերազանցելի գիտելիքների է տիրապետում հարազատ մոլորակի էակների հոգեկառույցի վերաբերյալ:

Բայց իրականում բանն ուրիշ է. երբ վերջին անգամ եղա այդ մոլորակի վրա և լսեցի այդ գրողի մասին, մի անգամ բոլորովին այլ գործով ես այցելեցի նրան: Իմ կարծիքն այն եղավ, որ նա իր ծայրահեղ սահմանափակությամբ ոչ միայն ոչնչով չի տարբերվում այնտեղի ժամանակակից գրողներից, որոնք, ինչպես կասեր մեր սիրելի Մոլլա Նասրեղինը, «իրենց քթից այն կողմ ոչինչ չեն տեսնում», այլ նաև, իր նմանների հոգեկառույցի վերաբերյալ ունեցած գիտելիքների առումով, նրան հանգիստ կարելի է անվանել բացարձակ «բոբիկ»:

Կրկնում եմ, որ այդ գրողի պատմությունը մի շատ բնորոշ օրինակ է, որն ակնհայտորեն ցույց է տալիս, որ քո երևակայությունը շարժած եռուղեղ էակների մոտ, հատկապես ժամանակակիցների, իսպառ բացակայում է «լինելիական Պարտք-պարտականության» գիտակցումը. նաև այն է ցույց տալիս, որ նրանց մոտ երբեք չեն բյուրեղանում սեփական լինելիական համոզմունքներ (ինչպիսիք, ընդհանուր առմամբ, պետք է բյուրեղանան ամեն մի եռուղեղ էակի մոտ՝ հիմնված տրամաբանական դատողությունների վրա), այլ բյուրեղանում են միայն այնպիսի համոզմունքներ, որոնք կախված են բացառապես տվյալ հարցի շուրջ ուրիշների արտահայտած կարծիքներից:

Հենց միայն այն պատճառով, որ նրանք չեն գիտակցել «լինելիական Պարտք-պարտականությունը» (թեև միայն դրա գիտակցումն է հնարավորություն տալիս տեսնելու ճշմարիտ իրականությունը), նրանք այդ գրողի մեջ տեսնում են այնպիսի արժանիքներ, ինչպիսիք նա իրականում չունի:

Նրանց հոգեկառույցի այդ տարօրինակ գիծը, այն է՝ բավարարվել միայն այնքանով, ինչ ասում են պողոսն ու պետրոսը, նրանց մեջ արմատավորվել է արդեն շատ վաղուց, և հիմա նրանք այլևս չեն ուզում իմանալ որևէ բան, որը կարող է իրենց հասանելի դառնալ միայն սեփական գործուն խորհրդածությունների արդյունքում:

Այս ամենի վերաբերյալ պետք է նշել նաև, որ դրանում մեղք չունեն ո՛չ Կունդաբուֆեր օրգանը, որը ժամանակին ունեցել են նրանց նախնիները, ո՛չ էլ դրա թողած հետևանքները, որոնք մի քանի Սրբազան Անհատականությունների թույլ տված սխալի պատճառով բյուրեղացել են նրանց նախնիների մոտ և ապա՝ ավելի ուշ, ժառանգաբար փոխանցվել մի սերնդից մյուսին:

Դրանում միայն իրենք են մեղավոր, քանի որ հենց իրենք են աստիճանաբար իրենց շուրջը հաստատել սովորական լինելիական գոյության համար այնպիսի աննորմալ պայմաններ, որոնք կամաց-կամաց նրանց ընդհանուր ներկայության մեջ գոյացրել են հենց այն, ինչը նրանց ներքին «Չար Դևն» է և նաև «Ինքնասպիտփանք» անունն է կրում:

Բայց այդ ամենն ավելի ուշ դու ինքդ կհասկանաս, երբ ես, համաձայն իմ խոստումի, քեզ ավելի շատ տեղեկություններ կհաղորդեմ քո երևակայությունը գրգռած այդ մոլորակի մասին:

Ամեն դեպքում, մի անգամ էլ եմ ուզում խորհուրդ տալ քեզ. ապագայում, երբ խոսք կգնա այդ մոլորակի եռուղեղ էակների մասին, աշխատիր որևէ կերպ նրանց չվիրավորել: Այլապես, ինչպես իրենք են ասում. «սատանից ո՞վ է գլուխ հանում», նրանք կարող են իմանալ, որ իրենց վիրավորել ես և, իրենց իսկ բառով ասած՝ «կկալանավորեն» քեզ:

Եվ հիմա՝ էլ վնաս չի լինի, եթե մի անգամ ևս հիշենք մեր սիրելի Մոլլա Նասրեդինի իմաստուն ասույթներից մեկը. «Իսկապես որ, ի՛նչ ասես, որ չի կատարվում այս աշխարհում. լույն մեկ էլ տեսար փիղ կուլ տվեց»:

Բեհեղգեբուղն էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց այդ պահին ներս մտավ նավի ծառայողներից մեկը և հանձնեց նրա անունով ստացված մի «եթերագիր»:

Երբ Բեհեղգեբուղն ավարտեց այդ «եթերագրի» ունկնդրումը, և սպասավորն էլ դուրս գնաց, Հասեհնը կրկին դիմեց Բեհեղգեբուղին հետևյալ խոսքերով.

– Սիրելի՛ պապիկ, խնդրո՞ւմ եմ, շարունակի՛ր պատմել այդ Երկիր կոչվող հետաքրքիր մոլորակում սկզբնավորվող ու գոյատևող եռակենտրոն էակների մասին:

Բեհեղգեբուղն իր առանձնահատուկ ժպիտով կրկին նայեց թոռանը, ապա գլխով մի շատ տարօրինակ շարժում անելուց հետո շարունակեց այսպես.

ԳԼՈՒԽ ԺԴ **Հեռանկարներ, որոնք** **որևէ լավ բան չեն խոստանում**

«Նախ ես պետք է քեզ ասեմ, որ այդ մոլորակի եռուղեղ էակները սկզբում նույնպիսի ներկայություն ունեին, ինչպիսին ընդհանրապես ունենում են «Կեսչափմարդական»⁵⁴ կոչվող եռակենտրոն էակները,

⁵⁴ ռուս. տարբերակում՝ «Кесчапмартные», անգլ. տարբերակում՝ “keschapmartnian”

որոնք սկզբնավորվում են մեր համայն մեծ Տիեզերքի համապատասխան մոլորակներում, և նրանց, այսպես կոչվող, «գոյության տևողությունն» էլ այնքան էր, որքան մյուս բոլոր եռուղեղ էակներինը:

Նրանց ներկայության մեջ բոլոր այլազան փոփոխությունները մեծ մասամբ տեղի ունեցան այն բանից հետո, երբ այդ մոլորակին երկրորդ դժբախտությունը պատահեց, որի ընթացքում այդ չարաբաստիկ մոլորակի գլխավոր աշխարհամասը, որն այն ժամանակ «Ատլանտիդա» էր կոչվում, սուզվեց մոլորակի խորքը:

Ահա այդ ժամանակից և այն բանին զուգընթաց, որ նրանք քիչու միչ իրենց արտաքին լինելիական գոյության համար զանազան պայմաններ ստեղծեցին, որոնցով նրանց ճառագայթումների որակն անշեղորեն ավելի ու ավելի էր վատանում, Մեծ Բնությունն ստիպված եղավ տարբեր զիջումների ու փոփոխությունների միջոցով փոխակերպել նրանց ընդհանրական ներկայությունը, որպեսզի դրանցով լավացնի նրանց թրթիռների ճառագայթումների որակը, ինչի կարիքն առավելապես այն բանի համար էր զգացվում, որ պահպանվի մոլորակի աշխարհամասերի բարօրությունը:

Նույն այդ պատճառով Մեծ Բնությունն աստիճանաբար այնքան մեծացրեց իր գրկում բնակվող էակների քանակը, որ նրանք այժմ բազմանում են մոլորակի վրա կազմավորված բոլոր աշխարհամասերում:

Նրանց բոլորի մոլորակային մարմինների արտաքին տեսքը նույնն է, իսկ ինչ վերաբերում է չափսերին և մյուս սուբյեկտիվ առանձնահատկություններին, ապա նրանցից յուրաքանչյուրը հանդերձավորված է, իհարկե, ինչպես և մենք, ժառանգականության, բեղմնավորման պահին առկա պայմանների և այլ գործոնների դրսևորմանը համապատասխան, որոնք, ընդհանուր առմամբ, հենց ամեն մի էակի սկզբնավորման և կազմավորման պատճառներն են:

Նրանք իրարից տարբերվում են նաև մաշկի գույնով ու մազածածկությամբ, և նրանց ներկայության այդ առանձնահատկությունները, ինչպես և ամենուրեք է լինում, պայմանավորված են մոլորակի մակերևույթի այն մասի ազդեցությամբ, որտեղ սկզբնավորվում են այդ էակները և աճում մինչև պատասխանատու տարիքին հասնելը կամ, ինչպես իրենք են ասում, «չափահաս» դառնալը:

Ինչ վերաբերում է նրանց ընդհանուր հոգեկառույցին և դրա հիմնական գծերին, ապա, անկախ այն բանից, թե մոլորակի մակերևույթի ո՞ր մասում են նրանք սկզբնավորվել, այդ գծերը ճիշտ և ճիշտ նույն առանձնահատկություններն ունեն, որոնց մեջ նաև այնտեղի էակներին բնորոշ այն առանձնահատկությունն է, որի պատճառով, համայն Տիեզերքում իր տեսակով միակ այդ տարօրինակ մոլորակի վրա եռուղեղ էակները ձեռնամուխ են լինում այն ահավոր գործընթացին, որը կոչվում է «մեկմեկու գոյությանը վերջ տալ» կամ, ինչպես այդ չարաբաստիկ մոլորակի վրա են ասում, «պատերազմ»:

Նրանց ընդհանուր հոգեկառույցի այդ գլխավոր առանձնահատկությունից զատ, ամբողջովին բյուրեղացել և նրանց ընդհանուր ներկայության անքակտելի մասն են դարձել (անկախ ծագման ու գոյատևման վայրից) այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են «եսամոլությունը», «ինքնասիրահարվածությունը», «փառամոլությունը», «սնապարծությունը», «ինքնահավանությունը», «ոյուրահավատությունը», «ներշնչվողությունը» և բազմաթիվ այլ հատկանիշներ, որոնք կատարելապես աննորմալ բնույթ ունեն և եռուղեղ էակին ընդհանրապես սազական չեն:

Անձամբ նրանց համար այդ աննորմալ լինելիական առանձնահատկություններից ամենաահավորն այն է, որը կոչվում է «ներշնչվողություն»:

Այդ չափազանց արտառոց ու ապշեցուցիչ հոգեկան առանձնահատկությանը ես երբևէ հատուկ կանդրադառնամ քեզ համար»:

Այս ասելուց հետո Բեհեղզեբուղը մտորումների մեջ ընկավ, այս անգամ՝ սովորականից ավելի երկար, որից հետո նորից շրջվեց թոռան կողմը և ասաց.

«Տեսնում եմ, որ այդ Երկիր կոչվող յուրօրինակ մոլորակի վրա սկզբնավորվող ու գոյատևող եռուղեղ էակները շատ են հետաքրքրում քեզ, և, քանի որ Քարնակով մեր ճամփորդելու ընթացքում կամա-ակամա ստիպված ենք գրուցել շատ բաների մասին, որպեսզի կարճենք ժամանակը, ապա, որքան կարող եմ, քեզ կպատմեմ հատկապես այդ եռուղեղ էակներին վերաբերող ամեն ինչ»:

Կարծում եմ՝ որպեսզի հստակ պատկերացնես Երկրի վրա սկզբնավորվող եռուղեղ էակների հոգեկառույցի անսովորությունը, ամենալավն այն կլինի, որ հերթականությամբ նկարագրեմ իմ անձնական վայրէջքներն այդ մոլորակի վրա և պատմեմ դրանց ընթացքում տեղի ունեցած այն իրադարձությունների մասին, որոնց ականատեսն եմ եղել:

Երկրի մակերևույթի վրա անձամբ եւ վայրէջք եւ կատարել ընդամենը վեց անգամ, և իմ ամեն մի անձնական այցը պայմանավորված է եղել տարբեր հանգամանքներով:
Հիմա եւ կատարեմ իմ առաջին վայրէջքի մասին»:

ԳԼՈՒԽ ԺԵ **Բեհեզգերուդի առաջին վայրէջքը Երկիր մուտրակ**

«Այդ Երկիր մուտրակի վրա,– սկսեց պատմել Բեհեզգերուդը,– եւ առաջին անգամ վայրէջք կատարեցի մեր ցեղի մի երիտասարդ էակի պատճառով, որը դժբախտություն էր ունեցել կապվելու այդ մուտրակի մի եռուղեղ էակի հետ, ինչի հետևանքով խրվել էր մի շատ հիմար պատմության մեջ:

Մի անգամ Մարսի իմ տանն ինձ այցելեցին Մարսում բնակվող մեր ցեղի էակներից մի քանիսը և հետևյալ խնդրանքով դիմեցին ինձ.

«Մեր երիտասարդ ազգականներից մեկը,– պատմեցին նրանք,– 350 մարսյան տարիներ առաջ մեկնել է Երկիր մուտրակի վրա բնակվելու, և վերջերս նրա հետ տեղի է ունեցել մի դեպք, որը բավականին տհաճ է մեզ՝ նրա ազգականների համար»:

Հետո նրանք պատմեցին.

«Մենք՝ նրա ազգականները, որ ապրում ենք ինչպես Մարսի, այնպես էլ Երկրի վրա, սկզբում մտադիր էինք մեր սեփական միջոցներով գլուխ հանել այդ գործից, սակայն, չնայած մեր ջանքերին ու տրամադրած միջոցներին, դեռևս ոչինչ չի հաջողվել անել այդ վիճակը շտկելու համար:

Եվ հիմա, երբ վերջնականապես համոզվել ենք, որ չենք կարող այդ տհաճ գործը հարթել մեր ուժերով, համարձակվում ենք անհանգստացնել Ձեզ, Ձե՛րդ Գերապատվություն, և աղերսագին խնդրում ենք, որ չմերժեք մեր խնդրանքը և մի իմաստուն խորհուրդ տաք մեզ, թե ինչպես դուրս գանք ստեղծված իրավիճակից»:

Այնուհետև նրանք մանրամասն բացատրեցին ինձ, թե որն էր իրենց բաժին հասած այդ դժբախտությունը:

Նրանց պատմածից ինձ համար պարզ դարձավ, որ այդ դեպքը ոչ միայն հենց այդ երիտասարդ էակի ազգականների համար կարող է տհաճությունների առիթ դառնալ, այլ նաև մեր ամբողջ ցեղի համար:

Ուստի անմիջապես որոշեցի ձեռնամուխ լինել նրանց օգնություն ցուցաբերելու գործին, որպեսզի նրանք կարողանան դուրս գալ այդ դժվարին կացությունից:

Նախ փորձեցի օգնել՝ Մարսից չհեռանալով, սակայն, երբ համոզվեցի, որ Մարսից որևէ գործուն բան ձեռնարկել հնարավոր չէ, որոշեցի վայրէջք կատարել Երկրի վրա և հենց տեղում որևէ ելք գտնել: Որոշում կայացնելուս հաջորդ օրը հավաքեցի ձեռքիս տակ եղած բոլոր անհրաժեշտ բաները և «Պատահար» տեխեզերանավով մեկնեցի դեպի Երկիր:

Հիշեցնեմ քեզ, որ «Պատահարը» հենց այն նույն նավն է, որով մեր ցեղակիցները մուտք էին գործել այդ արևային համակարգությունը, և, ինչպես արդեն ասել եմ, այդ նավը մեզ էր թողնվել միջմուտրակային հաղորդակցություն իրականացնելու համար:

Տիեզերանավի մշտական կայանը Մարսի վրա էր, և Վերնից հենց ինձ էր հանձնարարված դրա գերագույն կառավարման գործը:

Եվ այսպես, «Պատահար» տիեզերանավով եւ առաջին անգամ վայրէջք կատարեցի Երկրի վրա:

Իմ այդ առաջին այցի ժամանակ մեր նավն իջավ հենց այն աշխարհամասի ավերին, որն այդ մուտրակի հետ տեղի ունեցած երկրորդ խոշոր արհավիրքի հետևանքով ամբողջովին չբացավ մուտրակի մակերևույթից:

Այդ աշխարհամասը կոչվում էր «Ատլանտիդա», և ինչպես բնիկ եռուղեղ էակների, այնպես էլ մեր ցեղի էակների մեծամասնությունը բնակվում էր այդտեղ:

Տեղ հասնելով՝ ես անմիջապես «Պատահար» նավից մեկնեցի «Սամլիոս» կոչվող քաղաքը, որն այդ աշխարհամասի վրա էր գտնվում, և որում ապրում էր իմ վայրէջքի պատճառ դարձած ու մեր ցեղին պատկանող այդ դժբախտ էակը:

Այն ժամանակ Սամլիոսը հսկա քաղաք էր և Երկրի վրա բնակվող եռուղեղ էակների ամենամեծ հանրության մայրաքաղաքն էր: Այն նաև այդ մեծ հանրության արքա Ապոլիսի աթոռանիստ քաղաքն էր:

Եվ հենց այդ Ապոլիս արքայի հետ էր կապի մեջ մտել մեր այդ երիտասարդ, անփորձ ցեղակիցը:

Սամլիոսում ինձ համար վերջնականապես պարզ դարձան այդ գործի բոլոր մանրամասները:

Իմացա, որ նախքան այդ դեպքը մեր դժբախտ ցեղակիցն ինչ-ինչ պատճառներով բարեկամական հարաբերությունների մեջ է մտել Ապոլիս արքայի հետ և հաճախ այցելել է նրա տունը:

Ինչպես պարզվեց, մի անգամ, երբ նա հյուր է գնացել Ապոլիս արքային, զրույցի ընթացքում գրագ է եկել նրա հետ, որն էլ հենց հանդիսացել է հետագայում տեղի ունեցած բոլոր դեպքերի պատճառը:

Նախ թող քեզ հայտնի լինի, որ ինչպես հանրությունը, որի գլուխ կանգնած էր Ապոլիս արքան, այնպես էլ նրա աթոռանիստ Սամլիոս քաղաքն ամենամեծն ու հարուստն էին Երկրի վրա այն ժամանակ գոյություն ունեցող բոլոր հանրությունների ու քաղաքների մեջ:

Այդ հարստությունն ու հոյակերտությունը պահպանելու համար Ապոլիս արքան շատ «դրամ» պետք է ունենար և դրա համար պետք է գործի դներ իր հանրության բոլոր շարքային էակներին:

Իմացիր նաև, որ այդ մոլորակի վրա կատարած իմ առաջին անձնական վայրէջքի ժամանակաշրջանում քեզ հետաքրքրող այդ եռուղեղ էակներն արդեն զուրկ էին Կունդաբուֆեր օրգանից:

Եվ միայն որոշ եռուղեղ էակների մոտ էր, որ արդեն սկսում էին բյուրեղանալ իրենց համար կործանարար այդ օրգանի հատկությունների տարբեր հետևանքները:

Այն ժամանակահատվածում, որին վերաբերում է իմ այս պատմությունը, այդ օրգանի վերջին հատկություններից մեկը, որն արդեն հիմնովին բյուրեղացել էր մի շարք էակների մոտ, հենց այն վերջին հատկությունն էր, որը, դեռևս այն ժամանակ, երբ այդ օրգանը նրանց մոտ կար, թույլ էր տալիս նրանց, որ առանց «խղճի խայթ զգալու» կամավոր կերպով չկատարեն հենց իրենց հանձն առած կամ վերադաս ինչ-որ մեկից որպես հանձնարարություն ստացած պարտավորությունները: Ամեն մի այդպիսի պարտավորություն նրանք կատարում էին միայն արտաքին «սպառնալիքի» առկայության դեպքում:

Այդ ժամանակահատվածում ապրող էակներից ոմանց մոտ արդեն հիմնավորապես բյուրեղացած այդ նույն հատկանիշի հետևանքն էր հենց այդ ամբողջ եղելության պատճառը, որի մասին հիմա պատմում եմ:

Եվ այսպես, տղա՛ս, ահա թե ինչպես էր դա տեղի ունեցել: Ապոլիս արքան, որն արտակարգ բարեխղճորեն էր կատարում իրեն վստահված հսկա հանրությունը պահպանելու պարտականությունները, ո՛չ իր սեփական ջանքերն էր խնայում, ո՛չ հարստությունը և միաժամանակ նույն բանը պահանջում էր իր ողջ հանրության բոլոր էակներից:

Բայց, ինչպես արդեն ասացի, քանի որ Կունդաբուֆեր օրգանի նշածու հետևանքներն այդ ժամանակ նրա հպատակներից ոմանց մոտ վերջնականապես բյուրեղացել էին, նա ստիպված էր լինում ամեն տեսակի «սպառնալիքներ» բանեցնել, որպեսզի յուրաքանչյուրից ստանար այն, ինչն անհրաժեշտ էր իրեն վստահված հանրության վեհությունը պահպանելու համար:

Նրա մեթոդներն այնքան բազմազան և միաժամանակ այնքան խելամիտ էին, որ նույնիսկ այն հպատակ-էակները, որոնցում նշածու հետևանքներն արդեն բյուրեղացել էին, չէին կարող չհարգել նրան, չնայած՝ երբեմն նրա անվանը, իհարկե թիկունքից, կպնում էին «զերխորամանկ» մականունը:

Եվ ահա, տղա՛ս, այն միջոցները, որոնց միջոցով Ապոլիս արքան իր հպատակներից պոկում էր իրեն վստահված հանրության վեհությունը պահպանելու համար անհրաժեշտ ամեն բան, ինչ-ինչ պատճառներով մեր երիտասարդ ցեղակցի աչքին անարդարացի էին երևացել, և, ինչպես ինձ ասացին, նա հաճախ տարակուսում և բորբոքվում էր, երբ լսում էր Ապոլիս արքայի մոզոնած որևէ նոր հնարքի մասին, որով արքան հասնում էր իր ուզածին:

Ի վերջո, մի անգամ արքայի հետ զրուցելիս մեր միամիտ ու ջահել ցեղակիցն այլևս չի համբերում և հենց արքայի երեսին արտահայտում է իր տարակուսանքն ու կարծիքը հպատակների նկատմամբ ցուցաբերած նրա «անխիղճ» վերաբերմունքի մասին:

Ապոլիս արքան ոչ միայն ավերից դուրս չի գալիս, ինչպես սովորաբար լինում է Երկիր մոլորակի վրա, երբ որևէ մեկն իր քիթը խոթում է իրեն չվերաբերող գործերի մեջ, այլև պատրաստակամություն է հայտնում այդ հարցը քննարկել մեր այդ ցեղակցի հետ և նրան բացատրել իր «խստության» պատճառները:

Նրանք այդ թեմայով երկար զրուցում են, և այդ զրույցի վերջնական արդյունքն այն է լինում, որ գրագ են գալիս իրար հետ. պայման են կապում և այն գրի առնում, որից հետո կողմերից ամեն մեկն իր արյունով ստորագրություն է դնում:

Այդ համաձայնագրի կետերի մեջ խոսք էր գնում այն մասին, որ Ապոլիս արքան այսուհետև իր հպատակներից բոլոր անհրաժեշտ բաները պահանջելիս պարտավորվում է ձեռնարկել միայն այն քայլերն ու միջոցները, որոնք նրան կառաջարկի մեր ցեղակիցը:

Եվ այն դեպքում, եթե բոլոր հպատակներն ըստ ընդունված կարգի չբերեն պահանջված բաները, այդ ամենի համար պատասխան պետք է տա մեր ցեղակիցը. վերջինս, ըստ համաձայնագրի, պարտավորություն էր վերցնում արքայի գանձարանը լցնել այնքան, որքան անհրաժեշտ է ամբողջ հանրության և մայրաքաղաքի հետագա բարգավաճման համար:

Եվ ահա, զավակս, Ապոլիս արքան, իրապես տեր կանգնելով համաձայնագրում նշված իր խոստմանը, շատ ազնիվ կերպով կատարում էր իր պարտավորությունը և իր երկրի ամբողջ կառավարումը համապատասխանեցնում էր մեր երիտասարդ ցեղակցի ցուցումներին: Մակայն, շատ շուտով, նման կառավարման արդյունքները մեր ջահել միամիտը սպասածի ճիշտ հակառակն են ստացվում:

Այդ հանրության հպատակները՝ գլխավորապես, իհարկե, նրանք, որոնց մոտ արդեն բյուրեղացել էին Կունդաբուֆեր օրգանի յուրահատկությունների հետևանքները, ոչ միայն դադարեցրին Ապոլիս արքայի գանձարանը լցնելու գործը, ինչպես որ պահանջվում էր, այլև նույնիսկ սկսեցին այնտեղից դեպի իրենց կողմը քաշել նախկինում կուտակվածը:

Քանի որ մեր ցեղակիցը պակասածը լրացնելու պարտավորություն էր վերցրել և, դեռ ավելին՝ իր այդ պարտավորությունն ամրագրել էր իր արյունով (իսկ դու, իհարկե, գիտես, թե մեր ցեղակիցներն ինչպես են վերաբերվում իրենց վերցրած պարտավորությանը, մանավանդ եթե այն կնքված է լինում արյունով), ապա շատ շուտով ստիպված է լինում զբաղվել գանձարանի պակասը լրացնելու գործով:

Սկզբում նա այնտեղ է տանում իր ողջ ունեցածը, հետո այն ամենը, ինչ կարողանում է պոկել հարազատներից, որոնք իր նման բնակվում էին Երկիր մոլորակում: Իսկ երբ արդեն լրիվությամբ ցամաքեցրել էր իր հարազատների ունեցվածքը, ստիպված օգնության է կանչում նաև Մարսի վրա բնակվող իր մերձավորներին:

Շատ շուտով Մարսի վրա եղածն էլ է ցամաքում, իսկ Սամիոս քաղաքի գանձարանը շարունակում է պահանջել էլի ու էլի, և այդ պահանջումներն իրենց չի երևում:

Այնժամ մեր այդ ցեղակցի բոլոր ազգականները տագնապահար են լինում, որի հետևանքով էլ որոշում են դիմել ինձ, որպեսզի ստեղծված դժվարին դրությունից մի էլք գտնեմ իրենց համար:

Ուստի, զավակս, երբ մենք հասանք նշածս քաղաքը, մեծով-փոքրով ինձ դիմավորելու եկան մեր ցեղին պատկանող բոլոր էակները, որոնք մնացել էին այդ մոլորակում:

Նույն օրվա երեկոյան ընդհանուր ժողով հրավիրվեց, որպեսզի խորհրդակցենք և որևէ էլք գտնենք ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Մեր այդ ժողովին հրավիրված էր նաև Ապոլիս արքան, որի հետ մեր ավագ ցեղակիցներն արդեն բազմիցս զրուցել էին այդ գործի առնչությամբ:

Եվ մեր այդ առաջին ընդհանուր ժողովի ժամանակ Ապոլիս արքան բոլոր ներկաներին դիմեց հետևյալ խոսքերով.

«Ո՛վ անաչառ բարեկամներ, իմ խորին ցավակցությունն եմ հայտնում կատարվածի առիթով, որն այդքան շատ տհաճություններ է պատճառել այստեղ հավաքվածներին: Իմ ողջ էությամբ դառնացած եմ, որ առաջիկա դժվարություններից ձեզ ազատելը վեր է իմ իշխանությունից:

Ձեզ պետք է որ հայտնի լինի, իհարկե,– շարունակեց Ապոլիս արքան,– որ իմ հասարակության կառավարման մեխանիզմը, որը կարգավորվել էր շատ հարյուրամյակների ընթացքում, ներկայումս արմատապես փոխվել է, և այլևս հնարավոր չէ վերադառնալ հին կարգին՝ խուսափելով լրջագույն հետևանքներից, որոնք, անշուշտ, խիստ վրդովմունք կպատճառեն իմ հպատակների մեծամասնությանը: Ներկա դրությունն այնպիսին է, որ ես միայնակ չեմ կարող ի չիք դարձնել այն, ինչ

արվել է՝ առանց նշաձու լրջագույն հետևանքներն առաջացնելու, և ըստ այդմ՝ խնդրում եմ ձեզ, որ հանուն Արդարության օգնեք ինձ, որ կարողանամ դրությունը շտկել:

Դեռ ավելին,– ավելացրեց նա,– բոլորիդ ներկայությամբ ես դառնորեն կշտամբում եմ ինքս ինձ, քանզի ես նույնպես շատ մեղավոր եմ ամբողջ այս դժբախտությունը հարուցելու գործում:

Մեղավոր եմ այնքանով, որ պետք է կանխատեսեի, թե ինչ տեղի կունենա, քանի որ այստեղի պայմաններում ես ավելի երկար եմ գոյատևել, քան ինձ հետ գրագ եկողն ու ձեր ցեղակիցը, որի հետ համաձայնագիր կնքեցի:

Ճշմարիտն ասած, իմ կողմից աններելի քայլ էր նման պայման կապելը մի էակի հետ, որը թեև գուցե ավելի բարձր բանականություն ունի, քան ես, բայց նման գործերում նույնքան փորձ չունեի, որքան ես:

Մեկ անգամ ևս խնդրում եմ բոլորին և հատկապես Նորին Գերապատվությանը, որ ներեք ինձ ու օգնեք դուրս գալ այս ողբալի վիճակից և ինձ հնարավորություն ընձեռեք, որ մի ելք գտնեմ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Ներկա իրավիճակում ես կարող եմ անել միայն այն, ինչ դուք կորոշեք»:

Երբ Ապոլիս արքան հեռացավ, մենք որոշեցինք նույն երեկոյան մեր միջից ընտրել մի քանի փորձառու տարեցների, որպեսզի նրանք հենց տեղում կշռադատեն բոլոր տվյալները և կազմեն մեր հետագա գործողությունների մոտավոր պլանը:

Բոլոր մնացածները ցրվեցին այն պայմանով, որ հաջորդ երեկոյան կրկին հավաքվեն նույն տեղում. բայց մեր այդ հաջորդ խորհրդակցությանը Ապոլիս արքան չհրավիրվեց:

Երբ հաջորդ երեկոյան հավաքվեցինք, նախորդ օրն ընտրված տարեց էակներից մեկը նախ գեկուցեց հետևյալը.

«Ամբողջ գիշեր մենք խորհրդակցեցինք և քննարկեցինք այս դառնադետ դեպքի բոլոր մանրամասները և արդյունքում միահամուռ հանգեցինք հետևյալ եզրակացությանը. նախ՝ այլ ելք չենք տեսնում, քան վերադառնալ նախկին կառավարման համակարգին: Այնուհետև, բոլորս միահամուռ կարծում ենք, որ նախկին կառավարման կարգին վերադառնալն, անշուշտ, կապտամբեցնի հանրության քաղաքացիներին և, իհարկե, այդ ապստամբությունն անկասկած իր հետ կբերի այնպիսի հետևանքներ, որոնք Երկրի վրա եղած ներկա պայմաններում արդեն անխուսափելի են դարձել:

Եվ իհարկե, ինչպես արդեն սովորական բան է դարձել այստեղ, բազմաթիվ, այսպես կոչված, «իշխանավոր» էակներ ահավոր կտուժեն դրա արդյունքում. հնարավոր է՝ բանը կհասնի նրանց լիակատար ոչնչացմանը և, դեռ ավելին՝ ամենայն հավանականությամբ, հենց ինքը՝ Ապոլիս արքան էլ չի կարողանա խուսափել նման ճակատագրից:

Դրանից հետո մենք երկար մտածեցինք, որպեսզի հնարավորության դեպքում ինչ-որ միջոց գտնենք այդ չարադետ հետևանքներից գոնե հենց իրեն՝ Ապոլիս արքային, զերծ պահելու համար:

Եվ մենք անչափ շատ ջանքեր թափեցինք նման միջոց գտնելու համար, քանզի մեր երեկվա ժողովի ընթացքում Ապոլիս արքան շատ անկեղծ ու բարեկամաբար էր տրամադրված մեր նկատմամբ, և մեզ համար անչափ ցավալի կլինի, եթե նա տուժի:

Հետագա երկարատև քննարկումների արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ Ապոլիս արքայից հարվածը շեղել հնարավոր կլինի, եթե միայն այդ ապստամբությանը մասնակցող ըմբոստ էակների ցասումն ուղղվի ոչ թե արքայի, այլ նրան շրջապատողների դեմ, այսինքն՝ նրանց դեմ, ովքեր «աշխատակազմ» անունն են կրում:

Բայց հետո մեզ մոտ այսպիսի մի հարց առաջացավ՝ կհամաձայնե՞նք արդյոք արքայի մերձակիցներն իրենց վրա վերցնել այդ ամենի հետևանքները:

Եվ մենք այն անառարկելի եզրակացությանը հանգեցինք, որ նրանք, իհարկե, չեն համաձայնի, քանի որ անշուշտ կմտածեն, որ այդ ամենի համար արքան է մեղավոր, և թող նա էլ հատուցի:

Բոլոր այս հետևություններին հանգելուց հետո մենք այս անգամ, կրկին միահամուռ, հետևյալ որոշումը կայացրինք.

Որպեսզի գոնե Ապոլիս արքային փրկենք վերահաս աղետից, մենք պետք է, ստանալով արքայի համաձայնությունը, հանրության բոլոր պաշտոնատար էակներին փոխարինենք մեր ցեղակիցներով, որոնցից յուրաքանչյուրը, հենց որ զանգվածային «հոգեգարությունը» հասնի իր գագաթնակետին, իր վրա վերցնի սպասվող հետևանքների մի մասը:»

Երբ մեր կողմից ընտրված այդ էակն ավարտեց իր զեկույցը, մեր կարծիքն արագորեն որոշակիացավ, և միահամուռ որոշում կայացվեց վարվել հենց այնպես, ինչպես խորհուրդ են տալիս մեր ցեղի տարեց էակները:

Դրանից հետո մենք նախ մեր տարեց էակներից մեկին ուղարկեցինք Ապոլիս արքայի մոտ, որպեսզի նրան տեղյակ պահենք մեր պլանի մասին: Արքան դրա հետ համաձայնեց՝ մեկ անգամ ևս պնդելով իր պատրաստակամությունը, որ կվարվի մեր ցուցումներին համապատասխան:

Այնուհետև մենք որոշեցինք այլևս չհապաղել և հենց հաջորդ օրվանից սկսեցինք պաշտոնատար անձանց փոխարինել մեր ցեղակիցներով:

Բայց երկու օր հետո պարզ դարձավ, որ Երկիր մուլորակի վրա մեր ցեղակիցներից բավարար չափով չկան, որպեսզի նրանցով փոխարինենք այդ հանրության բոլոր պաշտոնատար անձանց, ուստի անհապաղ «Պատահարն» ուղարկեցինք դեպի Մարս, որպեսզի այնտեղ բնակվող մեր ցեղակիցներից բերի Երկիր:

Այդ ընթացքում Ապոլիս արքան, ղեկավարվելով մեր ցեղի երկու տարեց էակներով, տարբեր պատրվակներով պաշտոնատար անձանց փոխարինում էր մերոնցով սկզբում հենց Սամլիոս մայրաքաղաքում:

Իսկ երբ մի քանի օր հետո «Պատահար» Մարսից վերադարձավ՝ բեռնված մեր ցեղի էակներով, նման փոխարինումներ տեղի ունեցան նաև գավառներում, և շուտով հանրության բոլոր ղեկավար պաշտոններն արդեն զբաղեցնում էին մեր ցեղի էակները:

Երբ բոլոր փոխարինումներն ավարտվեցին, Ապոլիս արքան, մշտապես ղեկավարվելով մեր ցեղի ավագների կողմից, սկսեց վերականգնել հանրության կառավարման նախկին օրինակարգը:

Այդ գործընթացի համարյա հենց առաջին օրերից, ինչպես և սպասվում էր, հանրության այն անդամները, որոնց մոտ արդեն ամբողջությամբ բյուրեղացել էին Կունդաբուֆեր կործանարար օրգանի հատկությունների հետևանքները, ազդեցություն գործեցին հանրության մնացած էակների ընդհանուր հոգեկառույցների վրա:

Այսպիսով, սպասված դժգոհությունը դրանից հետո օր օրի աճում էր, մինչև որ մի անգամ իրականացավ այն, ինչը հետագա բոլոր ժամանակաշրջաններում բնորոշ դարձավ այդ եռուղեղ էակների ներկայությանը, այն է՝ ժամանակ առ ժամանակ ի կատար ածել մի գործընթաց, որն իրենք ներկայումս «հեղափոխություն» են անվանում:

Իսկ այն ժամանակվա հեղափոխության ընթացքում նրանք ոչնչացրին (ինչը նույնպես բնորոշ դարձավ մեր Մեծ Տիեզերքի այդ եռուղեղ բացառիկների համար) շատ հարյուրամյակներով կուտակված ունեցվածքի մի մեծ զանգված, նաև կորավեց նախկինում ձեռք բերված գիտելիքների մեծ պաշար: Վերջ տրվեց նաև իրենց նման այն էակների գոյությանը, որոնք հասցրել էին միջոց գտնել Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից ձեռքագատվելու համար:

Այստեղ չափազանց հետաքրքիր կլինի նշել մի ծայրահեղ ապշեցուցիչ ու անըմբռնելի փաստի մասին:

Բանն այն է, որ նմանատիպ հերթական հեղափոխությունների ժամանակ այնտեղի համարյա բոլոր եռուղեղ էակները, ամեն դեպքում՝ նրանց ճնշող մեծամասնությունը, նման հոգեգարության մեջ հայտնվելով, ինչ-որ պատճառով վերջ են տալիս իրենց նման էակների հենց այն մասի գոյությանը, որոնց ինչ-որ ձևով քիչ թե շատ հաջողված է լինում միջոց գտնել իրենց համար կործանարար Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացումից զերծ մնալու համար, մի օրգանի, որն իրենց նախնիները դժբախտաբար ունեցել են:

Քանի դեռ, տղա՛ս, հեղափոխությունն ընթանում էր իր հունով, ինքը՝ Ապոլիս արքան, պատասպարվել էր Սամլիոս քաղաքի մերձակայքում գտնվող իր պալատներից մեկում:

Նրան մատով անգամ չդիպան, քանի որ մեր էակներին հաջողվել էր քարոզչության միջոցով ամբողջ մեղքն արքայի վրայից հանել և զցել նրա շրջապատի կամ, այլ կերպ ասած, նրա աշխատակազմի վրա:

Դեռ ավելին՝ հոգեգարության մեջ հայտնված էակները նույնիսկ «վշտակցում» և խղճում էին իրենց արքային՝ ասելով, որ այդ անցանկալի հեղափոխությունը տեղի ունեցավ միայն այն պատճառով, որ իրենց «խեղճ արքան» շրջապատված է եղել այդպիսի անամոթ ու երախտամոռ ենթականերով:

Իսկ երբ հեղափոխական հոգեգարությունը բոլորովին մարեց, Ապոլիս արքան նորից վերադարձավ Սամլիոս և, կրկին մեր ավագ էակների օգնությամբ, սկսեց աստիճանաբար հետ փոխել

մեր ցեղակիցներին կա՛մ դեռևս կենդանի մնացած իր նախկին ենթականերով, կա՛մ նոր էակներով, որոնց ընտրում էր իր հպատակների միջից:

Եվ երբ Ապոլիս արքան վերականգնեց հպատակների նկատմամբ վարած իր նախկին քաղաքականությունը, ապա հանրության քաղաքացիները սովորականի պես նորից սկսեցին փողով լցնել գանձարանը: Նրանք կատարում էին արքայի հրամանները, և հանրության գործերը նորից մտան նախկին կայուն ռիթմի մեջ:

Ինչ վերաբերում է մեր դժբախտ ու միամիտ հայրենակցին, որն այդ ամենի պատճառն էր հանդիսացել, ապա նա այնպես էր տանջվում, որ այլևս չուզեցավ մնալ մի մոլորակի վրա, որն իր համար այդքան չարաղետ էր եղել, ուստի մեզ հետ տեղափոխվեց Մարս:

Հետագայում նա հրաշալի պարագլուխ դարձավ մեր ցեղի բոլոր էակների համար⁵⁵:

ԳԼՈՒԽ ԺԶ

Ժամանակի հարաբերականության ըմբռնումը

«Նախքան Երկրի վրա բազմացող և քո երևակայությունը շարժած եռուղեղ էակների մասին պատմություններս շարունակելը, կարծում եմ, որպեսզի ավելի պարզ պատկերացնես նրանց հոգեկառույցի արտառոցությունը և, ընդհանրապես, ավելի լավ հասկանաս այն ամենը, ինչ վերաբերում է նրանց յուրահատուկ մոլորակին, բացարձակապես անհրաժեշտ է, որ ճշգրիտ պատկերացում ունենաս ժամանակի հաշվարկման նրանց ընդունած կարգի և այն մասին, թե ինչպես է եղել, որ, այսպես կոչված, «ժամանակի հոսքի» լինելիական զգացողությունն այդ մոլորակի եռուղեղ էակների ներկայության մեջ աստիճանաբար փոխվել է, և թե ինչպես է այդ փոփոխությունը ներկայումս ընթանում այնտեղի ժամանակակից եռուղեղ էակների մոտ:

Դա պետք է անպայման պարզ լինի քեզ համար, քանզի միայն այդ դեպքում հնարավորություն կունենաս պատկերացնելու և հասկանալու այնտեղի իրադարձությունները, որոնց մասին կամ արդեն պատմել եմ, կամ էլ դեռ պիտի պատմեմ:

Նախ և առաջ պետք է իմանաս, որ այդ մոլորակի եռուղեղ էակները ժամանակի որոշման համար որպես հիմնական միավոր վերցնում են «տարին», ճիշտ այնպես, ինչպես և մենք, և հենց մեզ նման էլ տարվա տևողությունը չափում են իրենց մոլորակի որոշակի շարժման ժամանակով, որը տեղի է ունենում տիեզերական մի ուրիշ որոշակի խտացման նկատմամբ. այսինքն՝ որպես «տարի» նրանք ընդունում են այն պարբերությունը, որի ընթացքում իրենց մոլորակը, ենթարկվելով «Անկման» և «Կապակցման» օրենքներին, իր շարժման ընթացքում կատարում է մեկ, այսպես կոչված, «կրենտոնալ պտույտ»⁵⁵ իր արևի շուրջ:

Դա նման է մեր Քարատակ մոլորակի «տարվա» հաշվին, որը հավասար է «Սամոս» և «Սելիոս» արևների երկու հաջորդական ամենամոտ դիրքերում հայտնվելու միջև ընկած ժամանակահատվածին:

Երկրի էակներն իրենց հարյուր այդպիսի տարին անվանում են «դար»: Նաև մի տարին բաժանում են տասներկու մասի և ամեն մի այդպիսի մասն անվանում են «ամիս»:

Իրենց այդ ամիսների տևողությունները որոշելու համար նրանք օգտվում են այն մեծ բեկորի լրիվ պտույտի ժամանակից, որը պոկվել է իրենց մոլորակից, հիմա կոչվում է «Լուսին» և, ըստ Անկման ու Կապակցման օրենքների՝ կրենտոնալ պտույտ է կատարում իրենց մոլորակի շուրջ:

Հարկ է նշել, որ Լուսնի տասներկու կրենտոնալ պտույտների հանրագումարը ճշգրիտ չի համընկնում նրանց մոլորակի մեկ լրիվ կրենտոնալ պտույտին, ուստի նրանք ստիպված են որոշակի «նահանջ» կատարել իրենց բռնած դիրքից, որպեսզի քիչ թե շատ համապատասխանություն հաստատվի իրական ժամանակի հետ:

⁵⁵ ռուս. տարբերակում՝ «Крентональные обороты», անգլ. տարբերակում՝ “krentonalnian revolution”

Այնուհետև նրանք ամիսը բաժանում են երեսուն «օրերի», որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է այն ժամանակահատվածին, որի ընթացքում իրենց մոլորակը մեկ լրիվ պտույտ է կատարում իր առանցքի շուրջը՝ ըստ հիշատակված տիեզերական օրենքների:

Իմիջիայլոց, հիշիր, որ նրանք նաև «ցերեկ» հասկացությունն ունեն, երբ իրենց մոլորակի մթնոլորտում (ինչպես և, ընդհանրապես, բոլոր մոլորակների, որոնց վրա, ինչպես արդեն ասել եմ, տեղի է ունենում տիեզերական «իլնոստպարային» պրոցես) պարբերաբար տեղի է ունենում «տրոգոավտոդոկրատական» պրոցես, որը մենք անվանում ենք «կշտածավախտ»⁵⁶, իսկ իրենք այդ տիեզերական երևույթին անվանում են «ցերեկային լույս»:

Օրվա մյուս կեսի ընթացքում դրան հակառակ երևույթն է տեղի ունենում, որին մենք անվանում ենք «կլղածախտ»⁵⁷, իսկ իրենք ասում են «գիշեր» կամ «մթություն»:

Եվ այսպես, ամփոփենք, թե Երկրի վրա բազմացող եռուղեղ էակներն ինչպես են հաշվում ժամանակը.

ամենամեծ միավորն անվանում են «դար», որը բաղկացած է հարյուր «տարիներից»;

տարին ունի 12 «ամիս»;

ամիսը միջին հաշվով ունի երեսուն «օր»;

այնուհետև նրանք օրը բաժանում են 24 «ժամի», ժամը՝ 60 «րոպեի», րոպեն՝ 60 «վայրկյանի»:

Բայց, տղա՛ս, քանի որ ընդհանուր առմամբ դու դեռ շատ բան չգիտես ժամանակի՝ այդ տիեզերական բացառիկ յուրահատուկ երևույթի մասին, ապա նախ քեզ պետք է հայտնեմ, որ ճշմարիտ Օբյեկտիվ Գիտությունն այսպես է բնորոշում այդ երևույթը:

Ժամանակն ինքնին գոյություն չունի. դա սոսկ տվյալ վայրում առկա բոլոր տիեզերական երևույթներից բխած արդյունքների համախմբությունն է:

Ժամանակի էությունը ոչ մի էակ չի կարող ո՛չ հասկանալ բանականությամբ, ո՛չ էլ այն ընկալել արտաքին կամ ներքին որևէ լինելիական գործառույթով: Այն հնարավոր չէ ընկալել նույնիսկ բնագրի որևէ աստիճանով, որը ծագում և գոյություն է ունենում ամեն մի քիչ թե շատ անկախ տիեզերական խտացման մեջ:

Ժամանակի մասին հնարավոր է լինում դատել միայն այն դեպքերում, երբ համեմատվում են միևնույն վայրում և միևնույն պայմաններում տեղի ունեցող տիեզերական երևույթները, որոնց ընթացքում ժամանակը փաստագրվում է և հաշվառվում:

Անհրաժեշտ է նշել, որ Մեծ Տիեզերքում ընդհանրապես, առանց բացառության, բոլոր երևույթները, որտեղ էլ դրանք ծագեն և դրսևորվեն, պարզապես մի որևէ ամբողջական երևույթի օրինաչափ ու հաջորդական «հատվածներ» են, որն ի սկզբանե տեղի է ունեցել Սրբազնագույն Բացարձակ Արևում:

Եվ, հետևաբար, բոլոր տիեզերական երևույթները, որտեղ էլ դրանք տեղի ունենան, «օբյեկտիվ» իմաստ ունեն:

Իսկ այդ հաջորդական «հատվածները» բոլոր առումներով՝ նույնիսկ ինվոյուցիայի և էվոյուցիայի իմաստով, իրականանում են շնորհիվ սրբազան «Յոթնապարապարշինողի»՝ տիեզերական գլխավոր օրենքի:

Միայն ժամանակն է, որ օբյեկտիվ իմաստ չունի, քանի որ այն ինչ-որ որոշակի տիեզերական երևույթների հատվածաբաժանման արդյունք չէ: Եվ այն ոչ թե ծագում է ինչ-որ բանից, այլ մշտապես միախառնվում է ամեն ինչի հետ և դառնում ինքնուրույն ու անկախ: Ուստի ամբողջ Տիեզերքում միայն ժամանակը կարելի է անվանել ու հռչակել որպես «Միակ Իդեալական Սուբյեկտիվ Երևույթ»:

Այսպիսով, զավա՛կս, բացառապես միայն ժամանակն է, կամ, ինչպես երբեմն անվանում են՝ Հերոպասն է, որ սկզբնաղբյուր չունի, որից կախված լինի իր ծագումը, և այն «Աստվածային Միքո» պես միշտ հոսում է, ինչպես ասել եմ, ինքնուրույնաբար և համամասնորեն միախառնվում է բոլոր այն երևույթների հետ, որոնք առկա են տվյալ վայրում և մեր Մեծ Տիեզերքի տվյալ սկզբնավորումներում:

Կրկնում եմ՝ իմ այս ասածները դու հստակ կհասկանաս միայն այնժամ, երբ քեզ, խոստացածիս համաձայն, ավելի ուշ կպատմեմ Աշխարհարարման և Աշխարհապահպանման հիմնական օրենքների մասին:

⁵⁶ ռուս. տարբերակում՝ «кшатрасавакт», անգլ. տարբերակում՝ “kshtatsavakht”

⁵⁷ ռուս. տարբերակում՝ «клдасакт», անգլ. տարբերակում՝ “kldatsakhti”

Առայժմ միայն հիշիր նաև, որ, քանի որ Ժամանակը չունի իր սկզբնավորման աղբյուրը և բոլոր տիեզերական ոլորտներում առկա բոլոր տիեզերական երևույթների պես չի կարող որոշակիորեն հաստատել իր ներկայությունը, ապա դրա հետևանքով հիշատակած Օբյեկտիվ Գիտությունը, որպեսզի կարողանա այն ուսումնասիրել, մտցնում է Ժամանակի չափման միավոր, ինչպես դա ընդհանրապես արվում է մեր Մեծ Տիեզերքի բոլոր վայրերում ու ոլորտներում գոյություն ունեցող տիեզերական սուբստանցիաների խտության ու որակի (թրթիռների կենսականության իմաստով) ճշգրիտ կիրառման պարագայում:

Եվ Ժամանակի այդ միավորի սահմանման համար վաղուց ի վեր ընտրվել է, այսպես կոչված, սրբազան «էգոկոլնազպարային»⁵⁸ զգացողության» պահը, որը միշտ զգում են Սրբազնագույն Բացարձակ Արևի վրա բնակվող Սրբազնագույն Տիեզերական Անհատականությունները, երբ մեր Ամենագոյ Անսահմանության հայացքն ուղղված է տարածությանը և անմիջականորեն առնչվում է նրանց ներկայություններին:

Օբյեկտիվ Գիտության կողմից չափման այդ միավորը մտցվել է, որպեսզի հնարավոր դառնա ճշգրիտ որոշել ու համեմատել առանձին գիտակից Անհատականությունների սուբյեկտիվ զգացական պրոցեսների աստիճանակարգային տարբերությունները, ինչպես նաև զանազան օբյեկտիվ տիեզերական երևույթների «տարբեր տեմպերի» աստիճանակարգային տարբերությունները, որոնք դրսևորվում են մեր Մեծ Տիեզերքի տարբեր ոլորտներում և իրականացնում մեծ ու փոքր տիեզերական ամեն տեսակի սկզբնավորումներ:

Տարբեր մասշտաբի տիեզերական սկզբնավորումների ներկայությունների մեջ ընթացող Ժամանակի հոսքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն ամենուրեք միատեսակ է ընկալվում և ընթանում միևնույն հաջորդականությամբ:

Որպեսզի գոնե մոտավոր պատկերացնես այն, ինչը հենց նոր ասացի, օրինակի համար դիտարկենք Ժամանակի ընթացքը ջրի ամեն մի կաթիլի մեջ, որը լցված է ահա այն սեղանին դրված սափորի մեջ:

Սափորի ջրի ամեն մի կաթիլն ինքնին մի ամբողջ ինքնուրույն աշխարհ է՝ «Միկրոկոսմոս»:

Եվ այդ փոքրիկ աշխարհում, ինչպես բոլոր տիեզերքներում, նույնպես սկզբնավորվում և գոյատևում են հարաբերական անկախություն ունեցող փոքրագույն «անհատականություններ» ու «էակներ»:

Եվ այդ փոքրածավալ աշխարհի էակների համար նույնպես Ժամանակը հոսում է նույն հաջորդականությամբ, ինչպես դա ընկալվում է բոլոր մյուս տիեզերքների անհատականությունների կողմից: Այդ փոքրագույն էակների համար նույնպես բոլոր ընկալումների ապրումները որոշակի տևողություն ունեն, ինչպես դա ընկալում են այլ «տրամաչափի» տիեզերքների էակները: Եվ հենց դրանց նման էլ այդ փոքրագույն էակները Ժամանակի ընթացքը զգում են՝ այն համեմատության մեջ դնելով իրենց շրջապատում տեղի ունեցող երևույթների տևողությունների հետ:

Ուրիշ տիեզերքների էակների նման նրանք էլ են ծնվում, հասակ առնում, միավորվում ու բաժանվում, այսպես կոչված, «սեռական արդյունքների» հասնելու մղումով. նրանք ևս հիվանդանում են ու տառապում և, ի վերջո, ինչպես գոյություն ունեցող ամեն ինչ, որում հաստատված չէ Օբյեկտիվ Բանականությունը, նրանք էլ են ընդմիջոտ ոչնչանում:

Այդ փոքրագույն աշխարհի փոքրագույն էակների գոյության ամբողջ պրոցեսի ընթացքում նույնպես Ժամանակը հոսում է նրանց շրջապատող այն երևույթների որոշակի տևողություններին համապատասխան, որոնք դրսևորվում են տվյալ «տիեզերական սանդղակում»:

Նրանց սկզբնավորման ու կազմավորման գործընթացների, ինչպես նաև ընդհուպ մինչև նրանց լիակատար ու վերջնական ոչնչացման հասնելը տևող գոյության ընթացքում տեղի ունեցող զանազան գործընթացների համար ևս Ժամանակի որոշակի տևողություններ են պահանջվում:

Ջրի ամեն մի կաթիլի միջի էակների գոյության ողջ ընթացքի համար նույնպես պահանջվում են Ժամանակի հոսքի համապատասխան հաջորդական, այսպես կոչված, «հատվածներ»:

Որոշակի Ժամանակահատվածներ են պահանջում և՛ նրանց ուրախությունները, և՛ տրտմությունները, և՛ մնացած բոլոր լինելիական ապրումները՝ ներառյալ նաև «ձախորդության շրջաններն» ու «ինքնակատարելագործման ձգտելու շրջանները»:

⁵⁸ ռուս. տարբերակում՝ «Эгокулнацпарный», անգլ. տարբերակում՝ "egokoolnatsnarnian"

Կրկնում եմ՝ նրանց համար նույնպես Ժամանակի հոսքն ունի իր ներդաշնակ հաջորդականությունը, որը բխում է նրանց շրջապատող բոլոր երևույթների ամբողջությունից:

Ժամանակի հոսքի գործընթացի տևողությունն ընդհանրապես նույնանման է ընկալվում ու զգացվում բոլոր իմ հիշատակած տիեզերական Անհատականությունների և արդեն ամբողջովին կազմավորված, այսպես կոչված, «բնագոյականացված» անհատների կողմից. տարբերություններ առաջանում են միայն այդ տիեզերական սկզբնավորումների յուրաքանչյուր տվյալ պահի ներկայությունների ու վիճակների առանձնահատկությունների հետևանքով:

Սակայն հարկ է նշել, զավա՛կս, որ, թեև ցանկացած տիեզերական միավորում գոյություն ունեցող առանձին անհատների համար որոշվող Ժամանակի հոսքն ընդհանուր առմամբ օբյեկտիվ չէ, այնուամենայնիվ հենց իրենց համար այն օբյեկտիվ իմաստ է ստանում, քանի որ Ժամանակի հոսքն իրենց կողմից ընկալվում է իրենց սեփական ներկայության ավարտունությանը համապատասխան:

Նույն այդ ջրի կաթիլը, որը մենք որպես օրինակ վերցրինք, կարող է օգնել, որպեսզի դու ավելի հստակ հասկանաս իմ արտահայտած այս միտքը:

Թեև ընդհանուր Համատիեզերական Օբյեկտիվության առումով Ժամանակի հոսքի ամբողջ ընթացքը տվյալ ամբողջությամբ վերցրած կաթիլի համար սուբյեկտիվ բնույթ ունի, սակայն այդ նույն կաթիլի ներսի էակներն այդ նույն Ժամանակի հոսքն ընկալում են որպես օբյեկտիվ:

Որպեսզի ասածս ավելի պարզ դառնա, վերցնենք քո երևակայությունը շարժած մոլորակի վրա բնակվող եռուղեղ էակներից նրանց, որոնք «մելամաղձոտ» են կոչվում:

Այդ երկրային մելամաղձոտներին հաճախ թվում է, թե Ժամանակն անսահման դանդաղ ու երկար է հոսում և, ինչպես իրենք են արտահայտվում՝ «ձգվում է չափազանց ձանձրալի»:

Ուստի նույն կերպ՝ ջրի այդ կաթիլի ներսում գոյություն ունեցող փոքրագույն էակներից ոմանց նույնպես կարող է թվալ (եթե իհարկե ենթադրենք, որ նրանց մեջ էլ կան «մելամաղձոտներ»), թե Ժամանակը հոսում է շատ դանդաղ ու «չափազանց ձանձրալի»:

Բայց իրականում, Երկրի վրա բնակվող քո սիրած էակների տեսակետից վերցրած՝ «Միկրոկոսմոսի» էակների կյանքի տևողությունն ընդամենը մի քանի րոպե է կազմում, երբեմն էլ՝ մի քանի վայրկյան:

Եվ ահա, որպեսզի դու ավելի լավ հասկանաս Ժամանակն ու նրա առանձնահատկությունները, մենք կարող ենք քո տարիքը համեմատել Երկիր մոլորակի վրա բնակվող համապատասխան էակների տարիքի հետ, որոնք քեզ հասակակից են համարվում:

Եվ էլի՛ այդ համեմատության համար մենք պետք է օգտվենք Ժամանակի չափման այն նույն միավորից, որը, ինչպես քեզ արդեն ասել եմ, նման հաշվարկների համար կիրառում է Օբյեկտիվ Գիտությունը:

Նախ և առաջ հիշիր, որ համաձայն այն տվյալների, որոնց մասին նույնպես կիմանաս, երբ հատուկ քեզ կբացատրեմ Աշխարհարարման և Աշխարհապահպանման հիմնական օրենքները, նույն այդ Օբյեկտիվ Գիտության կողմից նաև հաստատված է, որ ընդհանրապես բոլոր նորմալ եռուղեղ էակները, որոնց թվում նույնիսկ նաև մեր Քարատակ մոլորակում սկզբնավորվող էակներն են, որոշակի Ժամանակի սրբազան «էզոկուլնագպար» գործողությունն ընկալում են 49 անգամ ավելի դանդաղեցված, քան Սրբազնագույն Բացարձակ Արևի սուրբ Անհատականությունները:

Հետևաբար, մեր հարազատ Քարատակի եռուղեղ էակների համար Ժամանակի հոսքը 49 անգամ ավելի արագ է, քան Բացարձակ Արևի էակների համար, և, այդպիսով, իրավիճակը նույնն է նաև Երկիր մոլորակի վրա բազմացող էակների համար:

Հաշվված է նաև, որ Ժամանակի այն հատվածի ընթացքում, որն ընկած է «Մամոս» և «Մելոս» արևների երկու առավելագույն մոտեցումների միջև և համարվում է Քարատակի մեկ տարին, Երկիր մոլորակն իր Արգ արևի շուրջ կատարում է 389 կրենտոնալ պտույտ:

Դրանից հետևում է, որ մեր մեկ «տարին», ըստ օբյեկտիվ Ժամանակագրության՝ 389 անգամ ավելի երկար է տևում Ժամանակի այն հատվածի համեմատությամբ, որին քո սիրելիներն իրենց «տարին» են համարում:

Երևի քեզ հետաքրքիր կլինի իմանալ, որ բոլոր այս հաշվարկները մասամբ ինձ բացատրել է Մեծն Տիեզերական Գերինժեներ, Նորին Չափիմացություն Ալգամատանտ Հրեշտակապետը: Թող Նա կատարյալ դառնա Սուրբ Անկլանդի պես...

Նա տվեց ինձ այս բացատրությունները, երբ Երկիր մոլորակի հետ կատարված առաջին մեծ արհավիրքի առիթով այցելեց Մարս՝ լինելով երրորդ Բարձրագույն հանձնախմբի սրբազնագույն անդամներից մեկը և միաժամանակ «Ամենաթափանց» միջտարածական տիեզերանավի նավապետը: Սույն բացատրությունների մի մասը նա ինձ հասանելի դարձրեց համատեղ ճամփորդության ժամանակ ունեցած մեր գրույցների ընթացքում, իսկ մնացած մասը՝ այն ժամանակ, երբ ես աքսորից վերադառնում էի տուն:

Եվ այսպես, այնուհետև հարկ է նշել, որ դու՝ որպես Քարատակում սկզբնավորված եռուղեղ էակ, ներկայումս ընդամենը տասներկուամյա պատանի ես, և Լինելիության ու Բանականության առումով ճիշտ այնպիսին ես, ինչպիսին դեռևս չձևավորված ու ինքնագիտակցություն չունեցող տասներկուամյա պատանին է լինում Երկիր մոլորակի վրա՝ լինելիական մի տարիք, որով անցնում են այնտեղ կազմավորվող բոլոր եռուղեղ էակները և հասնում իրենց Լինելիության պատասխանատու տարիքին:

Քո ամբողջ Հոգեկառույցի բոլոր գծերը՝ «բնավորությունը», «խառնվածքը», «հակումները» և, կարճ ասած, քո հոգեկառույցի բոլոր արտաքին դրսևորվող առանձնահատկությունները ճիշտ այնպիսին են, ինչպես դրանք դրսևորվում են այնտեղի դեռևս չհասունացած ու խակ 12-ամյա եռուղեղ էակի մոտ:

Եվ այսպես, ասվածից հետևում է, որ, թեև ըստ մեր ժամանակի հաշվարկի դու նույն տարիքն ունես, ինչպիսին ունի դեռևս չկազմավորված ու ինքնագիտակցություն չունեցող 12-ամյա պատանին Երկրի վրա, սակայն, ըստ ժամանակի հոսքի նրանց սուբյեկտիվ հասկացության ու լինելիական զգացողության՝ դու արդեն գոյություն ունես ոչ թե 12 տարի, այլ, ըստ նրանց հաշվարկի համակարգի, չորս հազար վեց հարյուր վաթսուներեք տարի:

Շնորհիվ այն ամենի, ինչ ես քեզ ասացի, դու ձեռքի տակ նյութ կունենաս, որպեսզի քեզ համար հասկանալի դարձնես այն փաստերը, որոնք պատճառ հանդիսացան, որ հետագայում նրանց կյանքի միջին տևողությունը աստիճաբար նվազի՝ օբյեկտիվ իմաստով ներկայումս արդեն մոտենալով «գրոյի»:

Խստորեն ասած՝ այդ չարաբաստիկ մոլորակի եռուղեղ էակների գոյատևման միջին տևողության աստիճանական նվազումը, որի հետևանքով այդ տևողությունն արդեն գրոյի է հավասարվում, պայմանավորված է ոչ թե մեկ, այլ մի շարք տարբեր պատճառներով:

Եվ այդ բազմաքանակ ու այլազան պատճառների շարքում ամենաառաջինն ու գլխավորն այն է, իհարկե, որ Բնությունը համապատասխան ձևով պետք է այնպես հարմարվեր, որպեսզի աստիճանաբար փոխեր նրանց ներկայությունը և ի վերջո այն դարձներ այնպիսին, ինչպիսին հիմա իրենք ունեն:

Իսկ ինչ վերաբերում է մնացած պատճառներին, ապա Արդարությունը պահանջում է, որ նախ և առաջ ես ընդգծեմ, որ այդ չարաբաստիկ մոլորակի վրա այդ պատճառներից ոչ մեկը կարող էր և չծագել, եթե չլինեք ամենաառաջին պատճառը, որից էլ, ինչպես գոնե ես եմ կարծում, առաջացել են բոլոր մյուսները՝ թեև, իհարկե, չափազանց դանդաղ:

Այդ ամենը դու կհասկանաս այդ եռուղեղ էակներին վերաբերող իմ հետագա պատմությունների ընթացքում, իսկ առայժմ ես միայն կպատմեմ ամենաառաջին ու գլխավոր պատճառի մասին, այսինքն, թե ինչու ինքը՝ Մեծ Բնությունը, ստիպված եղավ վերլուծելու նրանց ներկայությունը և այն ձևափոխելու այդպիսի նոր ներկայության:

Ամենից առաջ պետք է ասեմ քեզ, որ Տիեզերքում ընդհանրապես գոյություն ունեն լինելիական գոյության տևողության երկու «տեսակներ» կամ «սկզբունքներ»:

Լինելիական գոյության առաջին տեսակը կամ սկզբունքը, որը կոչվում է «փուլհասնիտամյան»⁵⁹ բնորոշ է մեր Մեծ Տիեզերքի բոլոր մոլորակների բոլոր եռուղեղ էակների գոյությանը, և այդ էակների գոյության հիմնական նպատակն ու իմաստն այն է, որ նրանց միջոցով տեղի է ունենում տիեզերական սուբստանցիաների ձևափոխություն, ինչն անհրաժեշտ է «համատիեզերական տրոգոավտոեգոկրատական գործընթացի» համար:

Իսկ բոլոր միաուղեղ և երկուղեղ էակները, որտեղ էլ որ սկզբնավորվելու լինեն, ընդհանրապես գոյատևում են լինելիական գոյության երկրորդ սկզբունքին համապատասխան, և այդ գոյության իմաստն ու նպատակը նույնպես այն է, որ տիեզերական սուբստանցիան ձևափոխության ենթարկվի,

⁵⁹ ռուս. տարբերակում՝ «Фуласнитамный», անգլ. տարբերակում՝ “fulasmtamnian”

սակայն ոչ թե համատիեզերական նպատակների համար, այլ միայն այն արևային համակարգության կամ նույնիսկ այն մոլորակի համար, որտեղ սկզբնավորվում են այդ միատուղեղ և երկուղեղ էակները:

Ամեն դեպքում, քո երևակայությունը շարժած այդ եռուղեղ էակների հոգեկառույցի արտառոցության հետագա պարզաբանման համար դու պետք է իմանաս նաև այն, որ սկզբում, երբ Կունդաբուֆեր օրգանն իր բոլոր հետևանքներով հանդերձ հեռացվել էր նրանց ներկայությունից, նրանց գոյության տևողությունը համապատասխանում էր «փուլհասնիտամական» սկզբունքին, այսինքն՝ նրանք ստիպված էին լինում գոյատևել այնքան ժամանակ, քանի դեռ Բանականության կողմից լրիվությամբ չէր հանդերձավորվել ու կատարելագործվել իրենց «Կեսջան-մարմինը»⁶⁰, կամ, ինչպես հետագայում իրենք սկսեցին անվանել իրենց այդ լինելիական մասը՝ «աստեղային մարմինը», որի մասին, իմիջիայլոց, ժամանակակից էակներն ականջի ծայրով են միայն լսել:

Եվ ահա, տղա՛ս, երբ ավելի ուշ, որոշ պատճառների բերումով, որոնց մասին քեզ կպատմեմ իմ հետագա գրույցներում, նրանց գոյատևումը չափից դուրս աննորմալացավ՝ դառնալով եռուղեղ էակներին բոլորովին չսագող, նաև երբ դրա հետևանքով նրանք մի կողմից դադարեցին այնպիսի թրթիռներ ճառագել, ինչպիսիք Բնությունը պահանջում էր իրենց մոլորակից պոկված բեկորները պահպանելու համար, մյուս կողմից էլ՝ իրենց տարօրինակ հոգեկառույցի գլխավոր առանձնահատկության դրդումով սկսեցին ոչնչացնել իրենց մոլորակի այլ տեսակի էակներին՝ դրանով իսկ աստիճանաբար նվազեցնելով այդ նպատակի համար պահանջվող աղբյուրների քանակը, այնժամ Ինքը՝ Բնությունը, ստիպված էր աստիճանաբար այդ եռուղեղ էակների ներկայությունն ապահովել ըստ երկրորդ սկզբունքի, որն «իթոկլանոց»⁶¹ է կոչվում. այսինքն՝ այնպիսի սկզբունքով, ինչպիսի սկզբունքով Նա ստեղծում է միատուղեղ և երկուղեղ էակներին, որպեսզի պահանջված թրթիռների հավասարակշռություն հաստատի՝ ինչպես քանակի, այնպես էլ որակի առումներով:

«Իթոկլանոց» սկզբունքի իմաստի մասին ես երբևէ քեզ հատուկ կպատմեմ:

Իսկ առայժմ հիշիր. թեև այդ մոլորակի եռուղեղ էակների գոյության տևողության նվազեցման հիմնական շարժառիթները պայմանավորված էին իրենցից անկախ պատճառներով, այնուամենայնիվ՝ հետագայի բոլոր ցավալի արդյունքների համար գլխավոր հիմք են ծառայել (և հատկապես հիմա էլ շարունակում են ծառայել) արտաքին լինելիական գոյության այն աննորմալ պայմանները, որոնք հենց իրենք են հաստատել իրենց համար: Այդ պայմանների հետևանքով ընդհուպ մինչև ներկա ժամանակները նրանց գոյատևման ժամանակը շարունակաբար կարճացել ու կարճացել է, և ներկայումս այնքան է նվազել, որ համայն Տիեզերքի մյուս մոլորակների եռուղեղ էակների գոյության տևողության և Երկիր մոլորակի եռուղեղ էակների գոյության տևողության միջև եղած տարբերությունը նույն կարգի է դարձել, ինչպիսին կա նրանց գոյության իրական տևողության և այն փոքրագույն էակների գոյության տևողության միջև, որոնք ապրում են ջրի այն կաթիլի ներսում, որը մենք որպես օրինակ էինք վերցրել:

Հիմա հասկանում ես, զավակս, որ նույնիսկ Մեծագույն Հերոպաս Ժամանակն է ստիպված եղել ակնհայտ անհեթեթություններ մտցնել այդ դժբախտ եռուղեղ էակների ներկայությունների մեջ, որոնք սկզբնավորվում և գոյատևում են այդ չարաբաստիկ Երկիր մոլորակի վրա:

Եվ հիմա, շնորհիվ այն ամենի, ինչ հենց նոր քեզ բացատրեցի, դու կարող ես քեզ պատկերացնել Հերոպասի վիճակում և հասկանալ նրան, որը թեև անխնա, բայց արդար է գործում:»

Ավարտելով իր խոսքը, Բեհեզդեբուղը լռեց, իսկ երբ նորից դիմեց թոռանը, նախ ծանր հոգոց քաշեց.

«Ա՛խ, սիրելի զավակս...

Հետագայում, երբ այդ չարաբաստիկ Երկիր մոլորակի եռուղեղ էակների մասին էլի բաներ կպատմեմ քեզ, դու ինքդ ամեն ինչ կհասկանաս և քո սեփական կարծիքը կկազմես այդ ամենի վերաբերյալ:

Ի՛նքդ շատ լավ կհասկանաս, որ, թեև այդ չարաբաստիկ մոլորակի վրա այժմ թագավորող քառսի հիմնական պատճառները եղել են որոշ Սրբազան Անհատականությունների միջոցով Վերևից պարտադրված «անկանխատեսելի հետևանքներով» քայլերը, այնուամենայնիվ, հետագա չարիքների

⁶⁰ ռուս. տարբերակում՝ «тело-Кесджан», անգլ. տարբերակում՝ “kesdjan body”

⁶¹ ռուս. տարբերակում՝ «Итокланос», անգլ. տարբերակում՝ “itoklanotz”

գլխավոր պատճառները լինելիական գոյության այն աննորմալ պայմաններն են, որոնք հենց իրենք աստիճանաբար հաստատել և շարունակում են հաստատել՝ ընդհուպ մինչև ներկա ժամանակները:

Ամեն դեպքում, սիրելի՛ զավակս, երբ ավելի շատ բան իմանաս քո այդ սիրեցյալ էակների մասին, ապա դու ոչ միայն, կրկնում եմ, հստակ կտեսնես, թե աստիճանաբար որքա՛ն չնչին է դարձել այդ դժբախտների գոյության տևողությունը գոյության այն նորմալ տևողության համեմատ, որը վաղուց օրենք է դարձել մեր Տիեզերքի բոլոր մյուս եռուղեղ էակների համար, այլ նաև կհասկանաս, որ նույն պատճառներով այդ դժբախտներն աստիճանաբար սկսել են կորցնել և հիմա ամբողջովին զրկվել են ցանկացած տիեզերական երևույթի վերաբերյալ քիչ թե շատ նորմալ լինելիական ընկալումներից:

Թեև, ըստ ավանդական օբյեկտիվ ժամանակագրության, այդ չարաբաստիկ մոլորակի էակները սկզբնավորվել են շատ տասնամյակներ առաջ, նրանք ոչ միայն տիեզերական երևույթների լինելիական ընկալում չունեն, ինչը հարկ է, որ ունենան մեր ամբողջ Տիեզերքի եռակենտրոն էակները, այլ նաև այդ թշվառների Բանականության մեջ գոնե մոտավոր պատկերացում չկա այդ երևույթների իրական պատճառների վերաբերյալ:

Նրանք նույնիսկ մոտավոր ճիշտ պատկերացում չունեն այն տիեզերական երևույթների վերաբերյալ, որոնք իրենց շուրջը տեղի են ունենում հենց իրենց սեփական մոլորակի վրա»:

ԳԼՈՒԽ ԺԷ

Գերանհեթեթություն: Բեհեղզեբուղի պնդմամբ՝ մեր Արեգակը ոչ լույս է տալիս, ոչ ջերմություն

«Իմ սիրելի Հասեի՛ն, որպեսզի թեկուզ մոտավոր պատկերացում ունենաս նաև այն մասին, թե ինչպես է, որ «իրականության բնագոյային ընկալում» կոչվող գործառույթը, որը բնորոշ է մեր Մեծ Տիեզերքի ամեն մի եռակենտրոն էակի, իսպառ բացակայում է Երկիր մոլորակի վրա բազմացող եռակենտրոն էակների ներկայություններում և, հատկապես՝ վերջին ժամանակաշրջանների նրանց ներկայացուցիչների մեջ, կարծում եմ, սկզբի համար բավարար կլինի, եթե ես հիմա պատմեմ թեկուզ այն մասին, թե ինչպես են նրանք հասկանում ու բացատրում այն պատճառները, որոնք ընկած են այն պարբերական տիեզերական երևույթների հիմքում, որոնք իրենք անվանում են «ցերեկային լույս», «մթություն», «ջերմություն», «սառնություն» և այլն:

Այդ մոլորակի անխտիր բոլոր պատասխանատու տարիքին հասած եռուղեղ էակները, նույնիսկ այնտեղ գոյություն ունեցող բազմաթիվ ու բազմազան «գիտություններ» կոչվող «իմաստակությունները», անառարկելիորեն պնդում են, թե բոլոր թվարկածս երևույթները մոլորակին են հասնում, ասպես ասած, լիակատար պատրաստի վիճակում՝ «ուղիղ գծով» իրենց սեփական Արեգակից, և, ինչպես նման դեպքերում Մոլլա Նասրեդինը կասեր՝ «առանց որևէ ֆոկուսի»:

Տվյալ պարագայում ամենազարմանալին այն է, որ նրանցից ոչ ոքի մոտ, բացառությամբ մի քանի էակների, որոնք այնտեղ գոյություն են ունեցել մինչև երկրորդ Տրանսապալյան խոտորումը, որևէ կասկած չի առաջացել իրենց այդ համոզվածության առումով:

Ունենալով բանականություն՝ թեկուզև տարօրինակ, բայց ոչ բոլորովին գուրկ որոշակի առողջ տրամաբանությունից, նրանցից ոչ ոք ոչ միայն կասկածներ չի ունեցել նշված երևույթների պատճառների առումով, այլ նաև նրանցից ոչ ոք այդ տիեզերական երևույթների նկատմամբ չի ցուցաբերել իրենց ընդհանուր հոգեկառույցի այն արտառոց յուրահատկությունը, որը նույնպես բնորոշ է դարձել միայն այդ մոլորակի եռուղեղ էակների համար և անվանվում է «երևակայությանը գոռ տալ»:

Այս վերջին բառերն արտաբերելուց հետո Բեհեղզեբուղը մի փոքր դադար առավ, որից հետո դառը քմծիծաղով շարունակեց.

«Դու, օրինակ, եռուդեղ էակի նորմալ ներկայություն ունես, և քո այդ ներկայության մեջ նպատակամղված կերպով դրսից ներմուծվել է «ոսկիանո»⁶², կամ, ինչպես Երկրի վրա են ասում, «դաստիարակություն», որը հիմնված է մի բարոյախոսության վրա, որի հիմքում դրված են հենց Իր՝ Ամենագոյի և Իրեն մերձակից Սրբազան Անհատականությունների պատվիրաններն ու ցուցումները: Այնուհանդերձ, եթե պատահեր այնպես, որ նրանց շրջապատում լինեիր, ապա չէիր կարողանա քո մեջ զսպել «լինելիական փարիսիտոզով»⁶³ պոռթկումը՝ մի գործընթացի, որին Երկրի վրա անվանում են «անզսպելի ներքին քրքիջ», այսինքն՝ ծիծաղող չէիր կարողանա զսպել, եթե նրանք հանկարծ ինչ-որ ձևով հստակ ընկալեին ու հասկանային՝ այնպես, որ այլևս որևէ կասկած չմնար, որ ի սկզբանե իրենց Արեգակից իրենց մոլորակին ոչ միայն «լույսին», «խավարին» կամ «ջերմությանը» նմանվող որևէ բան չի հասնում, այլ նաև այն, որ հենց ինքը՝ ենթադրյալ «լույսի և ջերմության աղբյուրը», համարյա միշտ սառչում է, ինչպես մեր պատվարժան Մոլլա Նասրեդինի «մազաթափ շունը»:

Իրականում իրենց «ջերմության աղբյուրի» մակերևույթը, ինչպես սովորաբար մեր Մեծ Տիեզերքի բոլոր արևների, գուցե ավելի շատ է սառույցով պատված, քան այն տեղի մակերևույթը, որն իրենք «Հյուսիսային բևեռ» են անվանում:

Անկասկած է, որ այդ «ջերմության օջախը» հենց ինքը մի քիչ ջերմություն փոխ կառներ «տիեզերական սուբստանցիայի» մի որևէ ուրիշ աղբյուրից, քան թե իր սեփական ջերմությունը կառաքեր որևէ մոլորակի, հատկապես այն մեկին, որը, թեև նույն համակարգությանն է պատկանում, սակայն իրենից բեկորներ պոկվելու հետևանքով վերածվել է «ծուռտիկ ցուցանքի»՝ խեղճ Արգ համակարգության համար դառնալով «ամոթի ու խայտառակության» աղբյուր:

Իսկ դու, զավակս, ինքդ գիտե՛ս, թե ինչու և ինչպես են որոշ մոլորակների մթնոլորտներում տրոգոավտոէոկրատական գործընթացների ժամանակ տեղի ունենում «կշտածավախտ», «կլլածախտ», «տայնոլաիր», «պախչակիր» և այլ այնպիսի երևույթները, որոնց քո սիրելի էակներն անվանում են «ցերեկային լույս», «խավար», «սառնություն», «տաքություն» և այլն»,- հարցրեց Բեհեղեբուրը Հասեինին, ապա շարունակեց.

«Եթե հստակ չես պատկերացնում, ապա ես մի քիչ էլ կբացատրեմ: Թեև խոստացել էի ավելի ուշ քեզ մանրամասնորեն բացատրել Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման բոլոր հիմնական օրենքները, սակայն այստեղ անհրաժեշտություն ծագեց գոնե համառոտակի շոշափել տիեզերական օրենքներին վերաբերող հարցեր՝ չսպասելով խոստացածս հատուկ գրույցներին:

Ուղղակի անհրաժեշտ է, որ դու կարողանաս ավելի լավ հասկանալ այն ամենը, ինչի մասին հիմա խոսում ենք. նաև անհրաժեշտ է, որ քո ներսում ճիշտ նախադրվեն մինչև այժմ ասածներս:

Նախ և առաջ պետք է ասել, որ համայն Տիեզերքում ամեն ինչ՝ ինչպես նպատակային արարվածները, այնպես էլ ինքնաբերաբար սկզբնավորվածները, գոյություն ունի և պահպանվում է բացառապես, այսպես կոչված, համատիեզերական «տրոգոավտոէոկրատական պրոցեսի» շնորհիվ:

Այդ Մեծագույն համատիեզերական տրոգոավտոէոկրատական գործընթացը գործի է զգվել մեր Անսահման Ամենագոյի կողմից, երբ արդեն գոյություն ունեւր մեր Մեծագույն ու Սրբազնագույն Բացարձակ Արևը, որն իր համար գտնվելու գլխավոր վայր է ընտրել ու պահել մեր Ամենաբարեգութ Անսահման Արարիչը:

Այդ համակարգը, որով պահպանվում է սկզբնավորված և գոյատևող ամեն ինչ, մեր Անսահման Արարչի կողմից գործի զգվել, որպեսզի Տիեզերքի ամբողջ գոյում տեղի ունենա «նյութափոխանակություն» կամ «փոխսնուցում», նաև որպեսզի անզիջում Հերոպասն իր կործանարար ազդեցությունը չգործի Բացարձակ Արևի վրա:

Նույն այդ Մեծագույն համատիեզերական տրոգոավտոէոկրատական գործընթացը միշտ և ամեն ինչում ընթանում է երկու հիմնական տիեզերական օրենքների հիման վրա, որոնցից առաջինը կոչվում է «Հիմնական Առաջնային Սրբազան Յոթնապարապարշինող», իսկ երկրորդը՝ «Հիմնական Առաջնային Սրբազան Եռամասիկապող»:

Շնորհիվ այդ երկու սրբազան օրենքների՝ որոշակի պայմաններում, «եթերնոկոիլնո» կոչվող նախանյութից սկզբում առաջանում են, այսպես կոչված, «բյուրեղացումներ», որոնցից էլ, երևի թե

⁶² ռուս. տարբերակում՝ «Оскиано, անգլ. տարբերակում՝ “oskiano”

⁶³ ռուս. տարբերակում՝ «Наркитрогул», անգլ. տարբերակում՝ “parkhitrogool”

կրկին որոշակի պայմանների առկայության դեպքում, սկզբնավորվում են բոլոր մեծ ու փոքր, քիչ թե շատ անկախ որոշակի տիեզերական կազմավորումները:

Այդ տիեզերական կազմավորումների ներսում և դրանց վրա է հենց, որ ընթանում են արդեն կազմավորված խտացումների ինվոյուցիայի և էվոյուցիայի գործընթացները, ինչպես նաև նշածս բյուրեղացումները (իհարկե, նշածս երկու հիմնական սրբազան օրենքներին համապատասխան) և դրանց հետևանքով մթնոլորտներում գոյացած արդյունքները, այնուհետև նույն այդ մթնոլորտների միջոցով առաջացած գոյացությունները միախառնվում են, որպեսզի ընթանա նշածս նյութափոխանակությունը և ծառայեցվի մեծագույն համատիեզերական տրոգոավտոէգոկրատի նպատակներին:

Եթերնոկոիլոնն այն առաջնային սուբստանցիան է (նախանյութը), որով լեցուն է ամբողջ Տիեզերքը, և որը հիմք է ծառայում ամբողջ գոյի սկզբնավորման ու պահպանման համար:

Այդ եթերնոկոիլոնն ոչ միայն հիմք է ծառայում առանց բացառության բոլոր փոքր ու մեծ տիեզերական խտացումների սկզբնավորման համար, այլ նաև հենց այդ տիեզերական սուբստանցիայում են տեղի ունենում ընդհանրապես բոլոր տիեզերական երևույթները, երբ որևէ փոխակերպություն է կատարվում, կամ երբ ընթանում են տարբեր բյուրեղացումների (կամ, ինչպես քո սիրելիներն են ասում՝ ակտիվ տարրերի) ինվոյուցիան և էվոյուցիան. բյուրեղացումներ, որոնք արդեն սկզբնավորվել և դեռ շարունակում են սկզբնավորվել այդ հիմնական տիեզերական նախանյութից:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ հենց դրա պատճառով է Օբյեկտիվ Գիտությունը պնդում, որ «Տիեզերքում բացարձակապես ամեն ինչ նյութական է»:

Դու պետք է նաև գիտենաս, որ կա միայն մեկ տիեզերական բյուրեղացում՝ «Ամենաթափանց Ոգիդոնողը», որն իր առաջնային սկզբնավորումն ստանում է Թեոմերտավոգոսի երեք սուրբ աղբյուրներից, այսինքն՝ Սրբազան Բացարձակ Արևի ճառագումներից, թեև, վերջին հաշվով, բյուրեղացվում է էլի նույն եթերնոկոիլոնից:

Տիեզերքում ամենուրեք այդ «Ամենաթափանց Ոգիդոնողը» կամ «Ամենաթափանց Ակտիվ Տարրը» մասնակցություն է ունենում բոլոր մեծ ու փոքր կազմավորումներում և ընդհանրապես հանդիսանում է տիեզերական երևույթների մեծ մասի հիմնական պատճառը, և հատկապես այն երևույթների, որոնք տեղի են ունենում մթնոլորտներում:

Որպեսզի գոնե մոտավոր պատկերացում կազմես այդ Ամենաթափանց Ոգիդոնողի մասին, ամեն ինչից առաջ ես քեզ պետք է ասես, որ երկրորդ հիմնական տիեզերական օրենքը՝ Սրբազան Եռամասիկապողը, բաղկացած է երեք անկախ ուժերից, այսինքն՝ այդ սրբազան օրենքը Տիեզերքում ամենուրեք, առանց բացառության, հանդես է գալիս երեք առանձին ու անկախ ասպեկտներով:

Տիեզերքում այդ երեք ասպեկտները գոյություն ունեն հետևյալ անվանումներով.

առաջին՝ «Սուրբ Հաստատող»,

երկրորդ՝ «Սուրբ Ժխտող» և

երրորդ՝ «Սուրբ Հաշտեցնող»:

Եվ հենց այդ պատճառով նաև այդ սրբազան օրենքի և նրա երեք անկախ ուժերի համար հիշատակածս Օբյեկտիվ Գիտությունն այլ ձևակերպումների շարքում տալիս է և հետևյալ ձևակերպումը. «Օրենքը, որը միշտ անցնում է հետևանքի՝ պատճառ դառնալով հետագա հետևանքների, և որը միշտ գործում է իր մեջ թաքնված, իրարից անկախ և կատարելապես հակադիր բնորոշ դրսևորումների միջոցով, աներևույթ է և անզգալի»:

Եվ մեր սրբազան Թեոմերտավոգոսի՝ մեր Սրբազանագույն Բացարձակ Արևի սկզբնական ճառագումը հենց այդ նույն օրինականությունն է ձեռք բերել իր սկզբնավորման ժամանակ և նաև իր հետագա իրացումներում արդյունքի է հասնում այդ օրենքին համապատասխան:

Եվ այսպես, զավա՛կս, Ամենաթափանց Ոգիդոնողն իր նախնական սկզբնավորումն ստանում է Սրբազանագույն Բացարձակ Արևից դուրս տարածությունում երեք անկախ ուժերի միավորումից և իր հետագա ինվոյուցիաների ընթացքում համապատասխանաբար փոխվում է, այսպես կոչված, «կենարար թրթիռների» առումով, երբ անցում է կատարում հիմնական համատիեզերական սրբազան

Յոթնապարապարշինողի, այսպես կոչված, «ստոպինդիրներով»⁶⁴ կամ, այլ կերպ ասած, «ծանրության կենտրոններով»:

Կրկնում եմ՝ մի շարք այլ, արդեն որոշակիացված տիեզերական բյուրեղացումներում Ամենաթափանց Ոգիդնողն անպայման միշտ մասնակցություն է ունենում ինչպես խոշոր, այնպես էլ մանր տիեզերական կազմավորումներում, որտեղ և ինչպիսի արտաքին շրջակա պայմաններում էլ դրանք ծագելիս լինեն Տիեզերքում:

Այդ «Համատիեզերական Եզակի Բյուրեղացումը» կամ «Ակտիվ Տարրն» ունի մի քանի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն իրեն, և շնորհիվ հենց այդ առանձնահատկությունների են, որ տեղի է ունենում Տիեզերական երևույթների մեծ մասը՝ ներառյալ նաև, իմիջիայլոց, որոշ մոլորակների մթնոլորտներում տեղի ունեցող հիշատակաձև երևույթները:

Ամենաթափանց Ակտիվ Տարրի առանձնահատկությունները մի քանիսն են, բայց մեր գրույցի թեմայի սահմաններում բավարար կլինի միայն դրանցից երկուսին ծանոթանալը:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ երբ խտանում է որևէ նոր տիեզերական միավոր, ապա Ամենաթափանց Ակտիվ Տարրն ամբողջությամբ չի միախառնվում այդ նոր կազմավորման հետ և ամբողջովին չի փոխակերպվում ինչ-որ որոշակի հատկացված վայրում (ինչպես նշած տիեզերական կազմավորումներում է տեղի ունենում բոլոր մյուս տիեզերական բյուրեղացումների դեպքում), այլ հենց որ այն ամբողջովին մուտք է գործում որևէ տիեզերական միավորի մեջ, այնտեղ տեղի է ունենում, այսպես կոչված, «ջարդըլում»⁶⁵, այսինքն՝ այն տարբաժանվում է երեք հիմնական աղբյուրների, որոնցից ինքը սկզբնավորվել է, և միայն դրանից հետո այդ երեք աղբյուրներն առանձին-առանձին տվյալ տիեզերական միավորի երեք համապատասխան կազմավորումների ներսում սկզբնավորում են անկախ խտացումներ:

Այդպիսով, այդ Ամենաթափանց Ակտիվ Տարրը հենց ամենասկզբում ամեն մի այդպիսի նոր կազմավորման մեջ ներդնում է իր սեփական Եռամասիկապող սրբազան օրենքի հնարավոր դրսևորման աղբյուրները:

Անպայման պետք է նաև նշել, որ, յուրաքանչյուր տիեզերական կազմավորման մեջ նշված երեք աղբյուրները, ինչպես ընկալման, այնպես էլ հետագա համապատասխան թարմացման նպատակով Ամենաթափանց Ակտիվ Տարրի այդ հատկության օգտագործման համար, քանի դեռ տվյալ տիեզերական միավորը գոյություն ունի՝ հարատևում և պահպանում են իրենց գործելու հնարավորությունը:

Եվ միայն այն բանից հետո, երբ նշված տիեզերական միավորն ամբողջովին ոչնչանում է, սրբազան Եռամասիկապողի այդ սուրբ աղբյուրները, տեղայնացվելով Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողի մեջ, կրկին միախառնվում և նորից փոխակերպվում են Ոգիդնողի, բայց արդեն ունենում են կենարար թրթիռների նոր որակ:

Ինչ վերաբերում է Ամենաթափանց Ոգիդնողի երկրորդ առանձնահատկությանը, որը նույնպես հատուկ է միայն իրեն, և որի մասին նույնպես հարկ է պարզություն մտցնել մեր այս գրույցի շրջանակներում, ապա դու դրանից կկարողանաս գլուխ հանել միայն այն դեպքում, երբ որոշ բաներ իմանաս ևս մի երկրորդ կարգի տիեզերական հիմնական օրենքի վերաբերյալ, որը գործում է Տիեզերքում և կոչվում է «Սրբազան այվայվույ»⁶⁶:

Այդ տիեզերական օրենքի էությունն այն է, որ ամեն մի մեծ կամ փոքր կազմավորման ներսում, երբ այն ուղիղ կապի մեջ է լինում կա՛մ Բացարձակ Արևի, կա՛մ որևէ ուրիշ արևի ճառագումների հետ, ծագում է «խղճի խայթ», այսինքն՝ մի գործընթաց, երբ Սրբազան Եռամասիկապողի ցանկացած սուրբ աղբյուրից առաջացած ամեն մի մասն այդ ժամանակ, այսպես ասած, «ըմբոստանում» և «դատապարտում է» իր ամբողջի մի ուրիշ մասի նախկին անարժան ընկալումներն ու դրսևորումները, որն իր հերթին առաջացել է նույն հիմնական սուրբ Տիեզերական Սրբազան Եռամասիկապողի Օրենքի մի ուրիշ սուրբ աղբյուրից:

⁶⁴ ռուս. տարբերակում՝ «Стопидеры», անգլ. տարբերակում՝ “stopinders”

⁶⁵ ռուս. տարբերակում՝ «Джартклом», անգլ. տարբերակում՝ “djartklom”

⁶⁶ ռուս. տարբերակում՝ «Аизисисуса?», անգլ. տարբերակում՝ “Aieioiua”: Մեկնաբանությունները, կարծում եմ, ավելորդ են:

Եվ այդ «այվայվույ» կամ «խղճի խայթ» կոչվող սրբազան գործընթացը նույնպես միշտ տեղի է ունենում Ամենաթափանց Ոգիդնող Տարրի հետ:

Ոգիդնողի այդ սրբազան գործընթացի ժամանակ դրսևորվող առանձնահատությունն այն է, որ երբ սրբազան Թեոմերումալոգոսի կամ մի ուրիշ սովորական արևի ճառագումների անմիջական ազդեցությունը պարուրած է լինում նրա ամբողջ ներկայությունը, ապա այդ Ակտիվ Տարրը ստորաբաժանվում է երեք նախասկզբնական մասերի, որոնք այդ դեպքում իրարից համարյա անկախ են լինում. իսկ երբ նշած անմիջական ազդեցությունը վերանում է, ապա այդ մասերը կրկին միախառնվում են՝ շարունակելով գոյատևել որպես մեկ ամբողջություն:

Այստեղ, կարծում եմ, կարելի էր և քեզ պատմել, իմիջիայլոց, իմ նկատած մի հետաքրքիր փաստի մասին, որը դրսևորվել է քեզ աչքեցրած մոլորակի սովորական եռուղեղ էակների միջավայրում և վերաբերում է նրանց արտառոց հոգեկառույցի այն դրսևորումներին, որոնք իրենք «գիտական հիպոթեզներ» են անվանում:

Նրանց հոգեկառույցի իմ բազմադարյան դիտման ու հետազոտման ընթացքում ինձ մի քանի անգամ բախտ է վիճակվել փաստելու, որ, թեև նրանց «գիտությունը» ծագել է իրենց սկզբնավորման հենց ամենասկզբից և, կարելի է ասել, պարբերաբար, ինչպես այնտեղի մնացած ամեն ինչը, երբեմն հասել է իր կատարելության քիչ թե շատ բարձր աստիճանին, նաև չնայած այն բանին, որ նման ժամանակահատվածներում, հարկավ, ծնունդ են առել և ոչնչացել բազմամիլիոն այնպիսի եռուղեղ էակներ, որոնք «գիտնական» են կոչվել, այնուհանդերձ, նրանցից ոչ ոքի գլխում՝ բացառությամբ Չուն Կիլ Տեց անունով մի չինացու, ում մասին ավելի ուշ մանրամասնորեն քեզ կպատմեմ, չի ծագել այն միտքը, որ «ճառագում» և «ճառագայթում» կոչվող երկու տիեզերական երևույթների միջև ինչ-որ տարբերություն գոյություն ունի:

Այդ «վայ-գիտնականներից» որևէ մեկը երբևէ չի մտածել, որ այդ երկու տիեզերական պրոցեսներն իրար այնքան են նման, որքան... ավելի լավ է՝ ես դա արտահայտեմ պատվարժան Մոլլա Նասրեդինի խոսքերով, որը մի առիթով այսպես ասաց. «Դրանք իրար նման են այնպես, ինչպես հանրահոչակ անգլիացի Շեքսպիրի մորուքն է նման ոչ պակաս հանրահոչակ ֆրանսիական արմանյակին»:

Մթնոլորտներում տեղի ունեցող և ընդհանրապես Ամենաթափանց Ակտիվ Տարրին առնչվող երևույթների հետագա պարզաբանման համար դու պետք է նաև իմանաս ու հասկանաս, որ այն ժամանակահատվածների ընթացքում, երբ, շնորհիվ Այվայվույ սրբազան գործընթացի՝ Ոգիդնողում ջարդքում է տեղի ունենում, այդ ընթացքում ժամանակավորապես արտագատվում է մաքուր ու անխառն մի որոշակի քանակություն այն եթերնոկոմիլնոյից, որն անպայմանորեն առկա է լինում բոլոր տիեզերական կազմավորումներում և ծառայում է, այսպես ասած, որպես կապ՝ այդ կազմավորումների բոլոր գործուն տարրերի միջև. իսկ հետո, երբ երեք բաղադրիչ մասերը կրկին միախառնվում են, ապա եթերնոկոմիլնոյի նշած արտագատված մասը նորից վերականգնվում է:

Այժմ անհրաժեշտ է անդրադառնալ, և, իհարկե, կրկին համառոտակի, մի ուրիշ հարցի, այն է՝ ինչպե՞ս է առնչվում Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողն ամեն մի էակի ընդհանուր ներկայությանը, և ի՞նչ տիեզերական արդյունքներ են ի հայտ գալիս դրա շնորհիվ:

Այդ հարցին պետք է անդրադառնալ գլխավորապես այն նպատակով, որ դու ձեռքի տակ ունենաս ևս մեկ շատ վառ արտահայտված փաստ, ինչը կնպաստի, որ դու ավելի լավ հասկանաս էակների տարբեր ուղեղային համակարգերի միջև եղած տարբերությունները, հատկապես այն համակարգերի միջև, որոնք անվանվում են «միաուղեղ», երկուղեղ» և եռուղեղ»:

Իմացի՛ր նախ և առաջ, որ ընդհանրապես տիեզերական ամեն մի նման կազմավորում, որն «ուղեղ» է կոչվում, կազմավորվում է այն բյուրեղացումներից, որոնց համար, սրբազան Եռամասիկապողին համապատասխան՝ կազմավորման աղբյուր է ծառայում սուրբ ուժերից որևէ մեկը, որը համապատասխանաբար տեղայնացված է Ամենաթափանց Ոգիդնողում: Եվ այդ նույն սուրբ ուժերի հետագա գործառություններն էակների ներկայություններում ընթանում են հատկապես այդ տեղայնացումների միջոցով:

Ապագայում երբևէ ես քեզ կպատմեմ էակների ներկայություններում համապատասխան լինելիական ուղեղների կազմավորման բուն գործընթացի մասին, բայց առայժմ եկ խոսենք, թեև ոչ շատ մանրամասն, այն արդյունքների մասին, որոնք Ամենաթափանց Ոգիդնողն իրականացնում է այդ լինելիական ուղեղներում:

Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողն էակների մեջ ներթափանցում է լինելիական սննդի բոլոր երեք տեսակների միջոցով:

Եվ, ինչպես արդեն քեզ ասել եմ, դա տեղի է ունենում այն պատճառով, որ այդ Ոգիդնողը մշտապես ներկա է լինում և անպայմանորեն մասնակցություն է ունենում բոլոր տեսակի մթերքների ձևավորման գործում, որոնք ընկած են բոլոր երեք տեսակի սնունդների հիմքում:

Եվ ահա, զավա՛կս, Ամենաթափանց Ոգիդնողի գլխավոր յուրահատկությունը տվյալ պարագայում այն է, որ նրա ջարդքլումի գործընթացը տեղի է ունենում նաև ամեն մի էակի ներկայության ներսում, բայց ո՛չ որևէ մի տիեզերական մեծ խտացման ճառագումների հետ կապի մեջ լինելու ազդեցությամբ, այլ դրա համար գործոն են ծառայում կա՛մ Պարտք-պարտականության գիտակցական գործընթացների արդյունքները, որոնք դրսևորվում են հենց էակների կողմից (այդ գործընթացների մասին ես քեզ ավելի մանրամասն հետո կպատմեմ), կա՛մ էլ հենց Մեծ Բնության այն գործընթացը, որը կոչվում է «կերկուլտուր»⁶⁷ իրացում», որը բնորշվում է որպես «պահանջվող թրթիռների համախմբության ստացում՝ հարմարվելու ճանապարհով»:

Այս վերջին գործընթացն էակների ներսում տեղի է ունենում բացարձակապես առանց նրանց գիտակցության մասնակցության:

Երկու դեպքում էլ, երբ Ոգիդնողը մուտք է գործում էակի ներկայության մեջ, և նրանում տեղի է ունենում ջարդքլումի գործընթացը, այնժամ դրա հիմնական մասերից յուրաքանչյուրը միախառնվում է այն ընկալումների հետ, որոնք ըստ «թրթիռների հարազատության» համապատասխանում են իրեն և առկա են էակի ներսում տվյալ պահին. այնուհետև այդ մասերը խտանում են համապատասխան տեղայնացման մեջ, այսինքն՝ համապատասխան ուղեղում: Իսկ այդ միախառնումների արդյունքները կոչվում են «լինելիական իմպուլսակիրներ»⁶⁸:

Այնուհետև պետք է նշել, որ այդ տեղայնացումները կամ ուղեղներն էակներին որպես ապարատ են ծառայում Մեծագույն Համատիեզերական Տրոգավտոեզոկրատի նպատակներով համապատասխան տիեզերական սուբստանցիաների ձևափոխության համար, բայց նաև այն միջոցն են, որն էակներին գիտակցորեն ինքնակատարելագործվելու հնարավորություն է տալիս:

Այս վերջին նպատակը կախված է լինելիական իմպուլսակիրների առկայության որակից, որոնք կենտրոնացվում են, կամ, այլ կերպ ասած, նստվածք են տալիս նշված համապատասխան լինելիական ուղեղներում:

Լինելիական իմպուլսակիրների որակի վերաբերյալ տրված մեր Համընդգրկուն Անսահմանության ցուցումների շարքում նույնիսկ հատուկ ցուցում կա, որին խստորեն հետևում են մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակները, և որն արտահայտվում է հետևյալ բառերով. «Մշտապես խուսափեք այնպիսի ընկալումներից, որոնք կարող են խաթարել ձեր ուղեղների մաքրությունը»:

Եռուղեղ էակները հնարավորություն ունեն անձամբ ինքնակատարելագործվելու, քանի որ նրանցում տեղայնացված են իրենց ընդհանուր ներկայության երեք կենտրոնները կամ ուղեղները, որոնց վրա հետագայում, երբ Ամենաթափանց Ոգիդնողում տեղի է ունենում ջարդքլումի գործընթացը, վերադրվում են Սրբազան Եռամասիկապողի երեք սուրբ ուժերը և հնարավորություն ձեռք բերում իրենց հետագա՝ այս անգամ արդեն անկախ, իրացումների համար:

Բանն էլ հենց այդ է, որ եռուղեղային համակարգ ունեցող էակները կարող են լինելիական Պարտք-պարտականության գիտակցական ու նպատակամղված կատարման ճանապարհով օգտագործել Ամենաթափանց Ոգիդնողի այդ ջարդքլում գործընթացով առաջացող երեք սուրբ ուժերն իրենց սեփական ներկայության համար, որպեսզի այն բերեն «սակրոնուլանձակային»⁶⁹ վիճակի». այսինքն՝ նրանք կարող են դառնալ այնպիսի անհատներ, որոնք իրենց սեփական եռամասիկապող օրենքն ունեն և, դրանով հանդերձ, հնարավորություն ունեն իրենց ընդհանուր ներկայության մեջ ներառել ու փակել այն ամբողջ «Սուրբը», որն, իմիջիայլոց, օգնում է նաև, որ այդ տիեզերական միավորներում ի կատար ածվեն Օբյեկտիվ կամ Աստվածային Բանականության գործառույթները:

Ավա՛դ, զավա՛կս, ամբողջ դժբախտությունն էլ հենց այն է, որ, թեև Երկրի վրա բազմացող և քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մոտ սկզբնավորվում և ընդհուպ մինչև լրիվ ոչնչանալն

⁶⁷ ռուս. տարբերակում՝ «Керкулионарной», անգլ. տարբերակում՝ “kerkoolnooarnian”

⁶⁸ ռուս. տարբերակում՝ «Импульсакрами», անգլ. տարբերակում՝ “impulsakri”

⁶⁹ ռուս. տարբերակում՝ «Секронуланзакное», անգլ. տարբերակում՝ “sakronoolantsaknian”

առկա են լինում այդ երեք անկախ տեղայնացումները կամ, այլ կերպ ասած, լինելիական երեք ուղեղները, որոնց միջոցով առանձին-առանձին փոխակերպվում ու հետագա համապատասխան իրացումներին են անցնում Եռամասիկապողի բոլոր երեք սուրբ ուժերը, որոնք նրանք կարող են օգտագործել նաև իրենց սեփական կատարելագործման համար, սակայն, գլխավորապես իրենց լինելիական գոյության ոչ ճիշտ պայմանների պատճառով, որոնք հենց իրենք են հաստատել, այդ հնարավորություններն անհիմաստ կորչում են՝ թների անտեղի թափահարման պես:

Հետաքրքիր է նշել, որ Երկիր մոլորակի վրա բազմացող այդ եռուղեղ էակների նշած լինելիական ուղեղները գտնվում են իրենց մոլորակային մարմինների մոտավորապես այն մասերում, ինչպես մեզ մոտ է լինում, այսինքն՝

1. Ուղեղը, որը Մեծ Բնության կողմից նախատեսված է կենտրոնացման և սրբազան Եռամասիկապողի այն առաջին սուրբ ուժի արտահայտման համար, որը Սուրբ Հաստատող է կոչվում, տեղայնացված է լինում նրանց գլխում:

2. Երկրորդ ուղեղը, որը փոխակերպում և բյուրեղացնում է սրբազան Եռամասիկապողի երկրորդ սուրբ ուժը՝ Սուրբ Ժխտողը՝ ինչպես իրենց, այնպես էլ մեր ներկայություններում տեղաբաշխված է լինում մեջքի երկայնքով՝ «ողնաշար» կոչվածի մեջ:

3. Բայց, ա՛յ, այնտեղի եռուղեղ էակների սրբազան Եռամասիկապողի երրորդ սուրբ ուժի՝ Սուրբ Հաշտեցնողի կենտրոնացման և հետագա դրսևորման աղբյուրի գտնվելու տեղն ու այդ լինելիական ուղեղի արտաքին ձևը մերի հետ ոչ մի նմանություն չունեն:

Հարկ է նշել, որ այնտեղի եռուղեղ էակների նախատիպերի՝ այդ երրորդ լինելիական ուղեղ տեղայնացված էր լինում իրենց մոլորակային մարմնի հենց այն մասում, ինչպես մեզ մոտ է լինում, և արտաքին ձևն էլ ճշտորեն մերինի պես էր, սակայն, բազմաթիվ պատճառների բերումով, որոնք մենք կկարողանանք պարզաբանել մեր հետագա զրույցների ընթացքում, Մեծ Բնությունն ստիպված է եղել կամաց-կամաց վերափոխել այդ ուղեղը և դրան տալ հենց այն ձևը, որն այժմ այնտեղի ժամանակակից էակներն ունեն:

Այդ լինելիական ուղեղն այնտեղի եռուղեղ էակների մարմնում չի տեղայնացված մի ընդհանուր զանգվածում, ինչպես մեր Մեծ Տիեզերքի բոլոր մյուս եռուղեղ էակների մոտ է լինում, այլ մաս առ մաս տեղայնացված է նրանց մոլորակային մարմնի տարբեր հատվածներում՝ կախված դրանց «գործառային առանձնահատկություններից»:

Սակայն, թեև իր արտաքին ձևով նրանց այդ լինելիական կենտրոնն այժմ ապակենտրոնացված է տարբեր տեղերում, այնուամենայնիվ դրա բոլոր առանձնակի գործառությունները համապատասխանաբար կապված են իրար հետ, այնպես որ այդ մասնատված մասերի ընդհանրական համախմբությունն ի վիճակի է գործելու այնպես, ինչպես հարկն է:

Իրենք այդ առանձին տեղայնացումները, որոնք կան իրենց ընդհանրական ներկայության մեջ, անվանում են «նյարդային հանգույցներ»:

Հետաքրքիր է նաև նշել, որ այդ լինելիական ուղեղի առանձնացված մասերի մեծ մասը նրանց մոտ տեղայնացված է իրենց մոլորակային մարմնի հենց այն մասում, որտեղ պետք է լիներ այդ ուղեղը նորմալ լինելու դեպքում, այսինքն՝ կրծքի հատվածում. կրծքի վրայի նյարդային հանգույցների այդ համախմբությունը նրանք անվանում են «արևահյուսակ»:

Եվ այսպես, տղա՛ս, քո բոլոր այդ սիրելիների ներկայություններում, Ամենաթափանց Ոգիդնողում տեղի է ունենում ջարդքլումի գործընթաց, և դրա բոլոր երեք սուրբ ուժերը նրանցում նաև ինքնուրույնաբար միախառնվում են ուրիշ տիեզերական բյուրեղացումների հետ և բերում համապատասխան իրացումների, սակայն, քանի որ նրանք ամբողջովին դադարացրել են իրենց Պարտք-պարտականության կատարումը (գլխավորապես լինելիական գոյության՝ իրենց իսկ կողմից աստիճանաբար հաստատված աննորմալ պայմանների պատճառով), ապա ամբողջ գոյի այդ երեք սուրբ աղբյուրներից ոչ մեկը, բացառությամբ՝ Ժխտող աղբյուրի, իր սեփական ներկայության համար չի վերարտադրվում:

Այն բյուրեղացումները, որոնք իրենց ներկայություններում սկզբնավորվում են առաջին և երկրորդ սուրբ ուժերից, համարյա ամբողջությամբ ծախսվում են միայն համատիեզերական տրոգոավտեզոկրատական գործընթացի սպասարկման համար, այն դեպքում, երբ իրենց սեփական ներկայության հանդերձավորման համար մնում են միայն Ամենաթափանց Ոգիդնողի երկրորդ մասի՝

Սուրբ Ժխտողի բյուրեղացումները, որի հետևանքով էլ նրանց մեծ մասի ներկայությունը բաղկացած է լինում միայն մոլորակային մարմնից, ուստիև իրենք իրենց համար այդպիսով ընդմիջտ ոչնչանում են:

Ինչ վերաբերում է այն առանձնահատկություններին, որոնք բնորոշ են միայն ամենահաս ու ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողին, նաև այն հետագա արդյունքներին, որոնք դրսևորվում են այդ առանձնահատկություններով, ապա դրանց մասին դու լրիվ պատկերացում կկազմես միայն այն բանից հետո, երբ, իմ խոստման համաձայն, քիչ թե շատ մանրամասն ես քեզ կպատմեմ Աշխարհարարման ու Աշխարհապահպանման հիմնական օրենքների մասին:

Իսկ առայժմ ես քեզ կպատմեմ այն պարզաբանող փորձերի մասին, որոնք վերաբերում են ամենահաս տիեզերական բյուրեղացմանը, և որոնց ես անձամբ ներկա եմ եղել:

Բայց պետք է քեզ ասեմ, որ այդ պարզաբանող փորձերին ես վկա եմ եղել ո՛չ քո երեկակայությունը շարժած Երկիր մոլորակի վրա, և քո սիրած էակնե՛րը չեն այդ փորձերը դրել. դրանք ընթացել են Սատուրն մոլորակի վրա, իսկ փորձարարը եղել է այն եռուղեղ էակը, որն իմ իսկական ընկերն է եղել այն արևային համակարգությունում անցկացրած իմ ամբողջ աքսորի ընթացքում, որի մասին վերջերս ես քեզ խոստացա պատմել մի փոքր ավելի մանրամասն»:

ԳԼՈՒԽ ԺԸ Գերհրաշալի

Բեհեղգեբուդն իր գրույցը շարունակեց այսպես.

«Իմ հանդիպման պատճառն այն եռուղեղ էակի հետ, որը դրանից հետո դարձավ իմ էակից ընկերը, և որի մոտ ես վկա դարձա Ամենաթափանց Ոգիդնողին վերաբերող նշածս փորձերին, հետևյալն է եղել:

Նախ, որպեսզի դու ավելի լավ պատկերացնես իմ այս պատմության դեպքերը, պետք է իմանաս, որ այդ արևային համակարգությունում անցկացրած իմ աքսորի սկզբում իմ որոշ էակից ընկերներ, որոնք անմիջական մասնակցություն չէին ունեցել այն իրադարձություններին, որոնց պատճառով ես աքսորվեցի, իմ անձի նկատմամբ իրականացրին այն սրբազան գործընթացը, որը Տիեզերքում հայտնի է «սրբազան վզնուշլիցվալ⁷⁰» անվամբ, այն է՝ մի ուրիշ սրբազան գործընթացով, որը կոչվում է «ասկալնուազար⁷¹», այդ եռուղեղ էակների ներկայություններում իմ անձի նկատմամբ ներդրվեց այն, ինչն Օբյեկտիվ Գիտությունը բնորոշում է «ուրիշին վստահիր, ինչպես ինքդ քեզ» արտահայտությամբ:

Եվ ահա, Արգ արևային համակարգություն իմ ժամանումից հենց անմիջապես հետո, երբ ես սկսեցի այցելել այնտեղի տարբեր մոլորակները և առաջին անգամ վայրէջք կատարեցի Սատուրն մոլորակի մակերևույթին, վերևում ասածիս առումով ինձ համար պարզ դարձավ, որ այն էակներից մեկը, որոնք սրբազան վզնուշլիցվալի էին ենթարկվել իմ անձի նկատմամբ, ինչպես այնտեղ են ասում՝ «դառադոադոուդոին» էր բոլոր այն եռակենտրոն էակների, որոնք սկզբնավորվում և գոյատևում են Սատուրն մոլորակի վրա:

Սատուրնի վրա դառադոադոուդոին են կոչում այն էակին, որը մոլորակի բոլոր էակների գլխավորն է:

Նման գլխավորող էակներ գոյություն ունեն նաև բոլոր այն մոլորակների վրա, որոնցում բազմանում են եռուղեղ էակներ: Տարբեր մոլորակների վրա նրանք տարբեր կերպ են կոչվում. օրինակ՝ քո այդ Երկիր մոլորակում այդ գլխավոր էակին «արքա» են կոչում: Տարբերությունը միայն այն է, որ եթե բոլոր մյուս վայրերում, նույնիսկ՝ հենց այդ նույն համակարգության մյուս մոլորակներից յուրաքանչյուրում, ընդամենը մեկ այդպիսի «արքա» կա ամբողջ մոլորակի համար, ապա Երկիր մոլորակի քո սիրելի էակների ամեն մի պատահաբար կազմավորված խումբ իր առանձին արքան է ունենում, երբեմն էլ՝ միանգամից մի քանիսը:

⁷⁰ ռուս. տարբերակում՝ «Взиушлицвал», անգլ. տարբերակում՝ “vznooshltzval”

⁷¹ ռուս. տարբերակում՝ «Аскалнуазар», անգլ. տարբերակում՝ “askalnooazar”

Շարունակեմ խոսքս:

Երբ առաջին անգամ իջա Սատուրնի վրա և սկսեցի հաղորդակցվել այնտեղի եռակենսորոն էակների հետ, պատահեց այնպես, որ հենց հաջորդ օրն ինձ վիճակվեց հանդիպել Սատուրն մոլորակի դառադոադոուդոի հետ, և մեր, այսպես կոչված, «կարծիքների օբյեկտիվ փոխանակության» ընթացքում նա ինձ առաջարկեց, որ ինձ համար բնակության վայր ընտրեմ իր «դառոդոի⁷²», այսինքն՝ իր սեփական պալատը:

Ես հենց այդպես էլ վարվեցի:

Եվ այսպես, զավակս, երբ մի անգամ մենք պարզապես գրուցում էինք, այսպես կոչված, «լինելիական նմանագագական մտածողության» ընթացքին համապատասխան, և այլ բաների շարքում պատահաբար շոշափեցինք նաև այն հարցը, թե որքա՞ն տարօրինակ արդյունքներ են ի հայտ գալիս Ամենաթափանց Ոգիդնողի առանձնահատկությունների դրսևորումներում, Սատուրն մոլորակի պատվարժան դառադոադոուդոին նախապես հիշատակեց, որ իր հպատակ-էակներից մի գիտնական, որի անունը Ղառղառ է, այդ տիեզերական սուբստանցիայի նախկինում անբացատրելի շատ հատկությունների բացատրման նպատակով վերջերս հնարել է չափազանց հետաքրքիր մի սարքավորում, որն ինքը կոչել է «դրոդադրոախր⁷³», իսկ դրա գլխավոր ցուցադրական մասը՝ «դրոդադրոժախա⁷⁴»:

Այնուհետև նա առաջարկեց կարգավորել անհրաժեշտ ամեն բան, որպեսզի, եթե կամենում եմ, ինձ ցույց տան այդ նոր գյուտը, և տան ինձ դրան վերաբերող բոլոր հնարավոր բացատրությունները:

Այդ ամենի արդյունքում հենց հաջորդ օրը պատվարժան դառադոադոուդոու և պալատականներից մեկի ուղեկցությամբ ես մեկնեցի գոռնաղառ Ղառղառի բնակության վայրը, որտեղ էլ առաջին անգամ Ամենաթափանց Ոգիդնողի հետ առնչվող նոր բացահայտիչ փորձերի ակննատեսը դարձա:

Գոռնաղառ Ղառղառը, որը հետագայում, ինչպես արդեն քեզ ասել եմ, դարձավ իմ էակից ընկերը, այն ժամանակ համարվում էր ամբողջ Տիեզերքի սովորական եռուղեղ էակների ամենաակնավոր գիտնականներից մեկը, և նրա բոլոր փաստարկումները, ինչպես նաև նրա հնարած բոլոր պարզաբանիչ սարքերը, տարածված էին ամենուրեք, և տարբեր մոլորակների ուրիշ գիտուն էակներ ավելի ու ավելի շատ էին օգտվում դրանցից:

Վնասակար չի լինի այստեղ նշել, որ ես նույնպես, հենց միայն նրա գիտունության շնորհիվ, ավելի ուշ Մարսի վրա տեսքահան ունեցա, որը վերջնական տեղադրումից հետո իմ տեսողությանը հնարավորություն ընձեռեց առանձին տիեզերական խտացումները դիտել 7 285 000 անգամ խոշորացված:

Խստորեն ասած՝ հենց այդ տեսքահանի շնորհիվ էր, որ հետագայում իմ աստղադիտարանը համարվեց համայն Տիեզերքի լավագույն կառույցներից մեկը, և ամենակարևորն այն է, որ հետագայում այդ տեսքահանի շնորհիվ, նույնիսկ մնալով Մարսի իմ տանը, ես կարողացա համեմատաբար ավելի հեշտ դիտել և տեսնել այդ արևային համակարգության մյուս մոլորակների մակերևույթների վրա ընթացող բոլոր այն գոյաբանական գործընթացները, որոնք, համատիեզերական Ներդաշնակ Շարժմանը համապատասխան, լինելիական տեսողությանս մատչելի էին դառնում տվյալ պահին:

Երբ գոռնաղառ Ղառղառին հայտնեցին մեր այցի նպատակը, նա մոտեցավ մեզ և անհապաղ շատ սիրալիք սկսեց իր բացատրությունները:

Նախքան այդ բացատրությունները շարադրելը՝ կարծում եմ՝ ավելորդ չի լինի նաև ապագայի համար քեզ հայտնի դարձնել, որ զանազան եռակենսորոն էակների հետ ունեցած իմ զրույցները, որոնք տեղի են ունեցել այդ համակարգության տարբեր մոլորակների վրա, որոնց միջավայրում ես ստիպված եղա գոյատևել «ջահել ժամանակվա մեղքերիս» պատճառով, և այդ զրույցներից մեկն էլ հենց սա է՝ գոռնաղառ Ղառղառի հետ, որի բովանդակությունը հիմա պատրաստվում եմ վերապատմել քեզ համար, քանի դեռ Քարնակ տիեզերանավով ճամփորդում եմք, ահա բոլոր այդ զրույցներն ընթացել են այնպիսի լեզուներով, որոնք բոլորովին անձանոթ են քեզ, ի դեպ՝ երբեմն էլ

⁷²ռուս. տարբերակում՝ «хархри», անգլ. տարբերակում՝ “harkhookhry”

⁷³ռուս. տարբերակում՝ «рхарахр», անգլ. տարբերակում՝ ?

⁷⁴ռուս. տարբերակում՝ «рхарапаха», անգլ. տարբերակում՝ “hrakhartzakha”

նույնիսկ այնպիսի լեզուներով, որոնց հնչողություն «դժվարամարս» է այդ նպատակի համար նախատեսված նորմալ լինելիական գոծառություններով ընկալման համար:

Ահա թե ինչու, զավա՛կս, ես այդ գրույցը հիմա չեմ կրկնի բառ առ բառ, այլ մեր լեզվով քեզ կփոխանցեմ դրա իմաստը՝ շարունակելով, իհարկե, կիրառել այն տերմիններն ու «հատուկ անվանումները» կամ, ավելի շուտ՝ «լինելիական ձայնալարերով» արտաբերվող այն հնչողությունները, որոնցից օգտվում են նաև Երկիր մոլորակի քո սիրելիները, և որոնք, իմ գրույցների ընթացքում բազմիցս կրկնվելու շնորհիվ, քեզ համար արդեն սովորական ու հեշտ ընկալելի են դարձել:

Հա՛, չմոռանամ նշել, որ «գոռնադառ» բառը հարգալից վերաբերմունքի նշան է Մատուրն մոլորակի եռուղեղ էակների լեզվում. այն միշտ արտաբերվում է այն էակի անունից առաջ, ում դիմում են:

Նույն բանը կա նաև Երկիր մոլորակի քո սիրելիների դեպքում: Նրանք նույնպես ամեն մարդու ազգանվան դիմաց ավելացնում են «պարոն» բառը, երբեմն էլ մի ամբողջ իմաստագործ արտահայտություն, որը հասկանալու վերաբերյալ մեր պատվարժան Մոլլա Նասրեդինը մի այսպիսի ասույթ ուներ. «Այնուհանդերձ, դրանում ավելի շատ իրական բան կա, քան մարտիշկիյան աշխատանքի «մասնագետի» իմաստակություններում»:

Դե լավ, տղա՛ս, շարունակեմ...

Երբ հետագայում իմ էակից ընկերը դարձած գոռնադառ Ղառղառը տեղեկացավ, թե ինչ է պահանջվում իրենից, մեզ նշան արեց, որ մոտենանք իր պատրաստած սարքերից մեկին, որը, ինչպես հետո պարզվեց, նա անվանել էր «ղըռղաղըռճախա»:

Երբ մենք մոտեցանք այդ հատուկ և շատ արտառոց սարքավորմանը, նա աջ թևով փետրացույց արեց սարքը և ասաց.

– Այս հատուկ սարքն իմ ամբողջ նոր գյուտի գլխավոր մասն է, և հենց սրանում են ի հայտ գալիս ու դրսևորվում «Համաշխարհային Ամենաթափանց Ոգիդնող սուբստանցիայի համարյա բոլոր առանձնահատկությունների արդյունքները»:

Ապա, ցույց տալով «ղըռղ⁷⁵»-ում գտնվող նաև մյուս հատուկ սարքերը, նա ավելացրեց.

– Ինձ հաջողվել է արտակարգ կարևոր բացահայտումներ ստանալ Ամենաթափանց Ոգիդնողի վերաբերյալ, քանի որ իմ գյուտի այս առանձին հատուկ սարքերի շնորհիվ նախ հնարավոր դարձավ բոլոր վեր- և ներմոլորակային պրոցեսներից ստանալ Ամենաթափանց Ոգիդնողի բոլոր երեք հիմնական մասերը, որից հետո դրանք միախառնել մեկ ամբողջության մեջ, և երկրորդ՝ արհեստական ճանապարհով հաջողվեց այդ մասերը տարբաժանել և իրականացնել ամեն մի առանձին մասին հատուկ դրսևորումները:

Դրանից հետո նա կրկին ցույց տվեց զրըռղաղըռճախան և ավելացրեց, որ այդ պարզաբանիչ սարքի միջոցով ամեն մի սովորական էակ կարող է ոչ միայն հստակ հասկանալ այդ բացարձակ անկախ մասերի հատկությունների նրբությունները, որոնք իրենց դրսևորումներով որևէ ընդհանուր բան չունեն ամբողջական Եզակի Ակտիվ Տարրի հետ, որի առանձնահատկությունները Տիեզերքի ամենայն գոյի պատճառ են հանդիսանում, այլ նաև ամեն մի սովորական էակ կարող է լիովին համոզվել, որ այդ Ամենաթափանց Համաշխարհային Սուբստանցիայի շնորհիվ նորմալ ընթացող պրոցեսների արդյունքները երբևէ չեն կարող ընկալվել ու զգացվել որևէ էակի կողմից. սակայն որոշ լինելիական գործառական օրգաններ կարող են ընկալել նշված պրոցեսների միայն այն արդյունքները, որոնք նորմալ չեն ընթանում այս կամ այն արտաքին պատճառով՝ պատճառներ, որոնք ծագում են կա՛մ գիտակցական աղբյուրներից, կա՛մ պատահական մեխանիկական արդյունքներից:

Գոռնադառ Ղառղառի նոր գյուտի այն մասը, որն ինքն անվանել է զրըռղաղըռճախա և համարել ամենակարևորը, արտաքին տեսքով շատ նման էր «տզզիկհանողի⁷⁶», կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «հսկա էլեկտրական լամպի»:

Այդ հսկա շինության ներսի մասը նման էր ոչ մեծ մի սենյակի, որի դուռը կարելի էր հերմետիկորեն փակել:

Այդ ինքնատիպ շինության պատերը շինված էին ինչ-որ թափանցիկ նյութից, որի արտաքին տեսքն ինձ հիշեցնում էր այն, ինչին քո մոլորակի վրա «ապակի» են անվանում:

⁷⁵ ռուս. տարբերակում՝ «хрх», անգլ. տարբերակում՝ “khrkh”

⁷⁶ ռուս. տարբերակում՝ «тирзикиано», անգլ. տարբերակում՝ “tirzikiano”

Ինչպես հետո իմացա, այդ թափանցիկ նյութի գլխավոր առանձնահատկությունը հետևյալն էր. թեև էակներն իրենց տեսողական օրգանի միջոցով կարող էին ընկալել զանազան տիեզերական խտացումների տեսարաններ, սակայն որևէ պատճառով առաջացած ոչ մի ճառագայթ, ոչ ներսի, ոչ էլ դրսի կողմից, չէր կարող անցնել այդ պատերի միջով:

Երբ ես նայեցի նշածս զարմանալի լինելիական գյուտի այդ հատվածին, կարողացա թափանցիկ պատերի միջով ներսի մասի կենտրոնում պարզորոշ զանազանել կարծես թե սեղան՝ իր երկու աթոռներով. սեղանից վեր կախված էր «էլեկտրական լամպ», իսկ դրա տակ՝ երեք միանման առարկաներ, որոնցից յուրաքանչյուրը «մոմոնոդուար» էր հիշեցնում:

Սեղանի վրա և դրա կողքին կային մի քանի տարբեր սարքեր ու գործիքներ, որոնք ինձ անծանոթ էին:

Հետագայում պարզվեց, որ այդ դրողադրոճախայի ներսում գտնվող բոլոր նշածս առարկաները, ինչպես նաև այն հանդերձները, որ հետո մեզ վիճակվեց հագնել, պատրաստված էին հատուկ նյութերից, որոնք ստացել էր ինքը՝ գոռնադառ Ղառղառը:

Այդ նյութերի մասին ես քեզ հետո ավելի մանրամասն կպատմեմ հարկ եղած ժամանակ, երբ պատմելիս կլինեմ գոռնադառ Ղառղառի մասին:

Հիմա միայն հիշիր, որ նրա դրողում կամ արհեստանոցում, հիշատակածս դրողադրոճախայից բացի, կային նաև մի քանի մեծ ու առանձին սարքավորումներ, որոնցից երկուսը կատարելապես առանձնահատուկ էին և կոչվում էին «կենսաչաղաններ⁷⁷» կամ, գոռնադառ Ղառղառի լեզվով ասած՝ «դրոճիդրոճներ⁷⁸»:

Հետաքրքիր է նշել, որ քո սիրելիներն էլ իրենց մոտ նմանատիպ մի բան ունեն, որին անվանում են «դինամո-մեքենա»:

Ղրողում կար ևս մեկ առանձին սարքավորում, որը, ինչպես հետո պարզվեց, հատուկ կառուցվածքի «սուլուդնորադունա⁷⁹» էր, որին քո սիրելիները կանվանեին «բարդ կառուցվածքի օդահան պոմպ» բացարձակ վակուում ստանալու համար»:

Մինչ ես զարմանքով դիտում էի այդ ամենը, գոռնադառ Ղառղառը մոտեցավ նշածս հատուկ կառուցվածքով պոմպին և տեղաշարժեց դրա դետալներից մեկը, որից հետո պոմպում սկսեց գործել ինչ-որ մեխանիզմ: Հետո նա նորից մոտեցավ մեզ և իր աջ թևի ցուցափետուրն ուղղելով դեպի ամենամեծ կենսաչաղանը՝ դրոճիդրոճին կամ դինամո-մեքենան, շարունակեց տալ իր բացատրությունները:

Նա ասաց.

– Այս հատուկ սարքավորման օգնությամբ սկզբում դուրս են քաշվում մթնոլորտից կամ մոլորակային որևէ այլ ներքին կամ արտաքին կազմավորումից դրա մեջ եղած Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողի բոլոր երեք անկախ մասերը, և միայն այն բանից հետո, երբ այդ առանձնացված անկախ մասերը որոշակի ձևով արհեստական ճանապարհով կրկին դրողոճում ներսում միախառնվում են մեկ ամբողջության մեջ, Ոգիդնողն արդեն իր սովորական վիճակով հոսում ու խտանում է այնտեղ՝ այ, այն զետեղարանում,– այս ասելով, նա իր նույն ցուցափետուրով ինչ-որ բան ցույց տվեց, որը նմանվում էր, այսպես կոչված, «գեներատորի»:

– Հետո այդտեղից,– շարունակեց նա,– Ոգիդնողը հոսում է ահա այստեղ՝ դրոճիդրոճի կամ դինամո-մեքենայի մեջ, որտեղ ենթարկվում է ջարդոլումի. այնուհետև դրա ամեն մի առանձին մասը կուտակվում է ահա այս զետեղարաններում,– այս անգամ նա ցույց տվեց սարքեր, որոնք հիշեցնում էին «ակումուլյատորներ»,– և միայն այդ ամենից հետո ես այդ երկրորդ զետեղարաններից տարբեր արհեստական սարքավորումների օգնությամբ, դուրս եմ հանում Ոգիդնողի ամեն մի ակտիվ մասն առանձին, որպեսզի դրանցով կատարեմ իմ պարզաբանիչ փորձերը:

– Սկզբում ես ձեզ համար կցուցադրեմ,– շարունակեց նա,– արդյունքներից մեկը, որն ստացվում է, երբ այս կամ այն պատճառով Ամենաթափանց Ոգիդնողի ակտիվ մասերից մեկը բացակայում է «մեկ ամբողջության մեջ միախառնվելու ձգտման» գործընթացում: Այս պահին այս հատուկ կառույցի տարածքն իսկապես իրենից ներկայացնում է բացարձակ վակուումի վիճակ, որը, պետք է ասել,

⁷⁷ ռուս. տարբերակում՝ «жизнечакан», անգլ. տարբերակում՝ “life-chakhan”

⁷⁸ ռուս. տարբերակում՝ «крхррхихрхи?», անգլ. տարբերակում՝ “khrikhirkhis”

⁷⁹ ռուս. տարբերակում՝ «солухнорахуна», անգլ. տարբերակում՝ “solookhnorakhoona”

ստացվել է առաջին հերթին հատուկ կառուցվածք ունեցող պոմպի և որոշ նյութերի յուրօրինակ հատկությունների շնորհիվ, որոնցից պատրաստված են այն գործիքները, որոնց առկայությունն էլ հենց հնարավոր է դարձնում փորձը բացարձակ վակուումի պայմաններում. իսկ երկրորդ հերթին՝ վակուումի ստացումը հնարավոր է դարձել այն նյութի ամրության և այլ հատկությունների շնորհիվ, որից պատրաստված են իմ նոր գյուտի այս հատվածի պատերը:

Այս ասելուց հետո նա մի ուրիշ բռնակ տեղաշարժեց և կրկին շարունակեց.

– Այս բռնակի դիրքի տեղաշարժի շնորհիվ վակուումում սկսվեց մի գործընթաց, որի արդյունքում Ամենաթափանց Ոգիդնոդի առանձին մասերը, այսպես ասած, «ձգտում են կրկին մի ամբողջություն կազմել»: Բայց քանի որ «քաջատեղյակ Բանականության» (տվյալ դեպքում՝ իմ) կողմից միտումնավոր կերպով Ոգիդնոդի երրորդ մասի մասնակցությունը, որը հայտնի է «Բարիջրադացպանիուս⁸⁰» անունով, արհեստականորեն հանված է նշածս գործընթացից, ապա այդ գործընթացն այժմ այնտեղ ընթանում է միայն երկու մասերի միջև, այն է՝ երկու անկախ մասերի միջև, որոնց գիտությունն անվանում է «անողային» և «կատողային» մասեր: Եվ դրա հետևանքով նշածս գործընթացի պարտադիր ու օրինաչափ արդյունքների փոխարեն այժմ իրականանում է այն ոչ օրինաչափ արդյունքը, որը կոչվում է «երկու հակադիր ուժերի փոխադարձ ոչնչացման արդյունք», կամ, ինչպես շարքային էական են ասում, «արհեստական լույսի աղբյուր»: Ամենաթափանց Ոգիդնոդի երկու առանձին մասերի՝ «կրկին մի ամբողջություն կազմելու ձգտումը», որը ներկա պահին տեղի է ունենում վակուումում, օժտված է մի ուժով, որն Օբյեկտիվ Գիտության հաշվարկների համաձայն կազմում է 3 040 000, այսպես կոչված, «վոլտ», և այդ ուժը հիմա ցույց է տալիս ա յ, այն սարքի սլաքը:

Փետրացույց անելով «ինչ-որ բան», որը շատ նման էր մի սարքի, որին քո այդ մոլորակի վրա «վոլտմետր» են ասում՝ Ղառղառն այնուհետև ասաց.

– Այս երևույթի ցուցադրման համար նախատեսված իմ նոր գյուտի մի առավելությունն այն է, որ չնայած այժմ այնտեղ ընթացող այդ «ձգուման» գործընթացի անսովոր ուժին՝ «սալնիչիզինուարյան շարժման թրթիռները⁸¹», որոնք էականի մեծամասնությունը նաև «ճառագայթներ» է անվանում, և որոնք պետք է որ այդ գործընթացով ստացվեն ու դուրս ելնեն, այնուամենայնիվ դուրս չեն ելնում իրենց գոյացման վայրից, այսինքն՝ այս շինությունից, որը նախատեսված է Ամենաթափանց Ոգիդնոդի հատկությունների բացահայտման համար: Եվ որպեսզի այն էակաները, որոնք կհայտնվեն իմ գյուտի [կառույցի] այդ հատվածում, այնուհանդերձ հնարավորություն ունենան պարզելու տվյալ գործընթացի ուժը, պատի մի հատվածում ես նյութն այնպես եմ ընտրել, որ այդ հատվածն իր միջով անցկացնի նշված «սալնիչիզինուարյան շարժման թրթիռները» կամ «ճառագայթները»:

Այս ասելուց հետո նա մտտեցավ դրողադրոճախային և ինչ-որ կոճակ սեղմեց: Դրա արդյունքում հսկա դրողը կամ արհեստանոցը հանկարծակի այնպես լուսավորվեց, որ մեր տեսողական օրգանները ժամանակավորապես դադարեցին գործելուց, և միայն բավականին երկար ժամանակ անցնելուց հետո մենք մեծ դժվարությամբ կարողացանք բաց անել մեր կոպերը և նայել մեր շուրջը:

Երբ վերջապես ուշքի եկանք, գոռնադառ Ղառղառը ևս մի բռնակ պտտեցրեց, որից հետո ամբողջ շրջակա տարածությունը նորից իր նախկին տեսքը ստացավ. հետո նա սկզբում իր սովորական հրեշտակային ձայնով մեր ուշադրությունը հրավիրեց վոլտմետրի վրա, որի սլաքը միշտ նույն դիրքն էր ցույց տալիս, ապա դրանից հետո շարունակեց.

– Ինչպես տեսնում եք, թեև Ամենաթափանց Ոգիդնոդի միևնույն հզորության «ձգուման ուժով» օժտված երկու հակադիր բաղադրիչ մասերի բախման գործընթացը դեռևս շարունակվում է, և այս շինության մակերևույթի մի մասը, որը նշածս ճառագայթները բաց թողնելու ունակություն ունի, դեռևս բաց է, սակայն, չնայած այդ ամենին, այլևս չի դիտվում այն երևույթը, որին շարքային էական են անվանում են «լույսի արհեստական աղբյուր»: Եվ այդ երևույթն այլևս այնտեղ չի ընթանում միայն այն պատճառով, որ, երբ ես վերջին անգամ որոշակի բռնակ տեղաշարժեցի, դրանով Ամենաթափանց Ոգիդնոդի երկու բաղադրիչ մասերի բախման գործընթացին մասնակից դարձրի նաև Ոգիդնոդի երրորդ անկախ բաղադրիչի հոսքը, որը որոշակի հարաբերակցությամբ սկսեց միախառնվել մյուս երկու բաղադրիչների հետ. դրա հետևանքով, արդյունքը, որը ստացվեց Ամենաթափանց Ոգիդնոդի

⁸⁰ ռուս. տարբերակում՝ «Париджрахатпатиус», անգլ. տարբերակում՝ “Parijrahathnatus”

⁸¹ ռուս. տարբերակում՝ «вибрации Салничизинуарного движения», անգլ. տարբերակում՝ “salnichissinooarnian momentum-vibrations”

բոլոր երեք մասերի միախառնումով, ի տարբերություն դրա միայն երկու մասերի ոչ օրինաչափ միախառնման արդյունքի՝ չի կարող ընկալելի դառնալ էակների որևէ լինելիական գործառույթի [զգայարանի] համար:

Բոլոր այդ բացատրությունները տալուց հետո գոռնադառ Ղառղառն ինձ առաջարկեց խիզախել և իր հետ միասին մուտք գործել իր նոր գյուտի ցուցադրական հատվածը, որպեսզի հենց ներսից սեփական աչքերով տեսնեմ Ամենահաս ու Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողի յուրահատուկ դրսևորումները:

Իհարկե, երկար չմտածելով, ես անմիջապես որոշում կայացրի և համաձայնեցի:

Անմիջապես համաձայնեցի գլխավորապես այն պատճառով, որ ակնկալում էի իմ էության մեջ ստանալ անմոռանալի «օբյեկտիվ-էական բավարարվածություն»:

Երբ իմ այդ ապագա էակից ընկերը ստացավ իմ համաձայնությունը, իսկույն անհրաժեշտ հրահանգներ տվեց իր օգնականներին:

Պարզվեց, որ նրա առաջարկի իրականացման համար սկզբում պետք է որոշ նախապատրաստական միջոցներ ձեռնարկել:

Ամենից առաջ օգնականներն ինձ ու գոռնադառ Ղառղառին հազգրին շատ ծանր հատուկ հանդերձներ, որոնք հիշեցնում էին քո սիրելիների «ջրասուզակային արտահագուստը». սակայն դրանց վրա նաև «հեղույսների» ցցված գլխիկներ կային, և երբ այդ չափազանց տարօրինակ հանդերձներն արդեն մեր հագին էին, օգնականները որոշակի կարգով այդ հեղույսները ձգեցին:

Այդ ջրասուզակային արտահագուստների ներսի կողմից հեղույսների ծայրերին հատուկ թիթեղներ կային, որոնք որոշակի ձևով հավում էին մեր մոլորակային մարմինների տարբեր մասերին:

Հետագայում ինձ համար լրիվ պարզ դարձավ, որ դա անհրաժեշտ էր, որպեսզի հանկարծ մեր մոլորակային մարմինների հետ «տարանուրայնորա⁸²» տեղի չունենա, կամ, այլ կերպ ասած, մեր մոլորակային մարմինները չտրոհվեն մանր կտորների, ինչը սովորաբար տեղի է ունենում ցանկացած վեր- կամ ներ-մոլորակային կազմավորման հետ, երբ նրանք հայտնվում են բացարձակ անօդ տարածության մեջ:

Այդ հատուկ հանդերձների հետ մեկտեղ նաև մեր գլուխներին «ինչ-որ բան» հազգրին, որը հիշեցնում էր «ջրասուզակի գլխարկ», բայց ուներ շատ բարդ, դուրս ցցված «լարամիացումներ»:

Այդ լարամիացումներից մեկը կոչվում էր «դրողորդինդրադ⁸³», ինչը նշանակում է «բաբախումների պահպանիչ». այն իրենից ներկայացնում էր երկար, ռետինե խողովակ: Դրա մի ծայրը բարդ հանգուցամասերի միջոցով հերմետիկորեն կապված էր գլխարկի վրայի շնչառական օրգանի համար նախատեսված մասում, իսկ մյուս ծայրը, երբ արդեն մուտք էինք գործել այդ տարօրինակ դրողորդործախայի ներսը, միացվեց մի ցուցիչ սարքի, որն էլ իր հերթին միացված էր այն տարածքի հետ, որի «ներկայությունը» համապատասխանում էր երկրորդ լինելիական սննդին:

Գոռնադառ Ղառղառի և իմ միջև նաև հատուկ լարանցում կար, որի միջոցով մենք կարող էինք հաղորդակցվել, քանի դեռ գտնվում էինք դրողորդործախայի ներսում, որից օդը լրիվ դուրս էր հանված վակուում ստանալու նպատակով:

Մեզ իրար միացնող լարի մի ծայրը գլխարկի վրայի հատուկ հարմարանքների միջոցով միացված էր իմ լսողական և խոսակցական օրգաններին, իսկ մյուս ծայրը՝ գոռնադառ Ղառղառի համանման օրգաններին:

Այդպիսով, այդ լարանցման օգնությամբ իմ և իմ ապագա էակից ընկերոջ միջև ստեղծված էր, ինչպես կասեին քո սիրելիները, յուրօրինակ մի «հեռախոս»:

Առանց այդ կապի հարմարանքի մենք չէինք կարող իրար հետ հաղորդակցվել գլխավորապես այն պատճառով, որ այդ ժամանակ գոռնադառ Ղառղառը այնպիսի էակ էր, որի կատարելությունը հասել էր դեռևս միայն այն աստիճանին, որը կոչվում է «սրբազան ինքնասատող⁸⁴». նման ներկայություն ունեցող էակը ոչ միայն չի կարող ինքնադրսևորվել բացարձակ դատարկ տարածությունում, այլ նաև

⁸² ռուս. տարբերակում՝ «тарануранура, անգլ. տարբերակում՝ “taranooranoora”

⁸³ ռուս. տարբերակում՝ «хархринхарх, անգլ. տարբերակում՝ “harinkhrarkh”

⁸⁴ ռուս. տարբերակում՝ «Инкозарно, անգլ. տարբերակում՝ “Inkotsarno”

չի կարող այնտեղ գոյատևել նույնիսկ այն դեպքում, եթե նրա մեջ արհեստականորեն ներարկվեն բոլոր երեք տեսակի լինելիական սնունդները:

Հանդերձների ու գլխարկների վրա եղած լարակապերից ամենահետաքրքրաշարժը կամ, ինչպես ասում են, ամենասրամիտ ու խորամանկ կառուցվածք ունեցողն այն մեկն էր, որը մեծ գիտնական գոռնադատ Ղառղառը ստեղծել էր, որպեսզի շարքային էակների տեսողական օրգանին հնարավորություն տա «բացարձակ դատարկ տարածությունում» տեսագալու ամենաբազմազան շրջակա իրերի տեսապատկերներ:

Այդ զարմանալի լարանցման մի ծայրը, կրկին գլխարկի վրայի հարմարանքի միջոցով, որոշակի ձևով հավում էր մեր քունքերին, իսկ մյուս ծայրը միացված էր, այսպես կոչված, «ամսկապաբաշխիչին»⁸⁵, որն էլ իր հերթին, որոշակի ձևով՝ այսպես կոչված, «լարափնջերով», միացված էր ինչպես ղրողաղըռծախայի ներսում, այնպես էլ դրսում գտնվող առարկաներին, որոնք պետք է տեսանելի դառնային փորձերի ընթացքում:

Այստեղ շատ հետաքրքիր է նշել, որ եռակենտրոն էակի սովորական Բանականության համար համարյա անհավանական այդ հարմարանքի ամեն ծայրամասին միացված էին լարային անկախ միացումներ, որոնցով դրսից ներս էին հոսում հատուկ մագնիսական հոսքեր:

Ինչպես հետո ինձ մանրամասն բացատրեցին, այդ միացումներն ու նշածս հատուկ մագնիսական հոսքերը, հավանաբար, այդ իրոք մեծ գիտնական գոռնադատ Ղառղառի կողմից ստեղծված էին, որպեսզի գիտուն եռակենտրոն էակների ներկայությունները՝ նույնիսկ սրբազան ինքնասատողի վիճակին դեռ չհասածներինը, կարողանան մագնիսական հոսքի մի հատկության շնորհիվ՝ «արտացոլվել» իրենց սեփական էության համար, իսկ այդ նույն հոսքի մի այլ հատկության շնորհիվ՝ կարողանան «արտացոլվել» նաև նշածս առարկաների ներկայությունները. դրանով իսկ վակուումում ապահովվում է շրջակա առարկաների իրականության ընկալումն իրենց անկատար լինելիական տեսողության միջոցով՝ իր մեջ չներառելով տարբեր տիեզերական խտացումների և ոչ մի գործոն, որոնցից ստացված թրթիռներով է հենց հնարավոր դառնում ամեն մի լինելիական օրգանի գործունեությունը:

Մեզ վրա հարմարեցնելով ու կարգավորելով այդ շատ ծանր հարմարանքները, որոնք էակներին հնարավորություն են տալիս դիմանալու իրենց համար խորթ միջավայրում, այն ժամանակ արդեն մեծանուն համատիեզերական գիտնական գոռնադատ Ղառղառի օգնականները, նորից օգտվելով հատուկ հարմարանքներից, մեզ տեղավորեցին ղրողաղըռծախայի մեջ, դրանից դուրս եկող բոլոր լարանցումների ազատ ծայրերը միացրին դրսի համապատասխան սարքերի հետ, որից հետո դուրս եկան ղրողաղըռծախայից և իրենց հետևից հերմետիկորեն փակեցին այն միակ ուղին, որով հնարավոր կլիներ, եթե ընդհանրապես դա հնարավոր էր, կապ հաստատել ամբողջ արտաքին աշխարհի հետ:

Երբ մենք մենակ մնացինք ղրողաղըռծախայի ներսում, գոռնադատ Ղառղառը մի անջատիչ շրջեց և ասաց.

– Պոմպը սկսեց աշխատել, և շուտով այն այստեղից դուրս կհանի, առանց բացառության, բոլոր տիեզերական գործընթացների արդյունքները, ինչպիսին էլ որ դրանք լինեն: Այդ գործընթացների արդյունքների համախումբը, ներառյալ և հենց իրենք՝ գործընթացները, «համայն աշխարհի» ողջ գոյի պահպանման հիմքն են ու իմաստը:

Այնուհետև կիսաձաղրական տոնով նա ավելացրեց.

– Շուտով մենք կատարելապես կմեկուսանանք համայն Տիեզերքի ողջ գոյից և այն ամենից, ինչ գործում է այնտեղ, բայց մյուս կողմից, նախ և առաջ՝ իմ նոր գյուտի շնորհիվ, և երկրորդ՝ մեր արդեն ձեռք բերած գիտելիքների շնորհիվ, մենք հիմա ոչ միայն հնարավորություն ունենք վերադառնալու իմ նշած աշխարհը և վերածվելու այնտեղի գոյի մի մասնիկի, այլ նաև հիմա մենք անմասնակից ականատեսները կդառնանք որոշ համաշխարհային օրենքների, որոնց շարքային տգետ եռակենտրոն էակներն անվանում են «Բնության մեծ ու անիմանալի գաղտնիքներ», թեև դրանք իրականում բնական և շատ պարզ արդյունքներ են, որոնք «ինքնաբերաբար բխում են մեկը մյուսից»:

⁸⁵ ռուս. տարբերակում՝ «амскомунатор?», անգլ. տարբերակում՝ “ams-commutator”

Քանի դեռ նա այդպես խոսում էր, կարելի էր զգալ, թե ինչպես է պոմպը՝ նոր գյուտի ոչ պակաս կարևոր մասերից մեկը, հրաշալի կատարում իր այն գործը, որն իր համար նախատեսված էր Բանական էակի կողմից:

Որպեսզի հնարավորություն տամ, որ դու ավելի լավ պատկերացնես ու հասկանաս գոնադառ Ղառղառի նոր գյուտի նաև այդ մասի կատարյալ լինելը, անպայման քեզ պետք է պատմեմ նաև հետևյալը.

Թեև անձամբ ես՝ լինելով եռուդեղ էակ, որոշ լիովին առանձնահատուկ պատճառով շատ հաճախ եմ բախտ ունեցել հայտնվելու անօդ տարածություններում, և պետք է գոյատևի դրանցում երբեմն երկար ժամանակ՝ ապավինելով միայն սրբազան «կրիմբուլաժումարին»⁸⁶, և, թեև հաճախակի կրկնության շնորհիվ իմ ներկայության մեջ արդեն սովորության էր վերածվել մի ոլորտից մյուսին աստիճանական անցում կատարելը՝ իմ ներկայության մեջ համարյա ոչ մի անհարմարություն չզգալով երկրորդ լինելիական սննդի փոփոխությունից, որը տեղի էր ունենում այն տիեզերական նյութերի առկայության պատճառով, որոնք փոխակերպության էին ենթարկվում և մշտապես առկա են բոլոր մանր ու մեծ տիեզերական խտացումներում, նաև, թեև հենց իմ սկզբնավորման և հետագա լինելիական գոյության պատճառները դասավորված են եղել կատարելապես առանձնահատուկ ձևով, որի հետևանքով իմ լինելիական ընդհանուր գոյության մեջ առկա տարբեր լինելիական գործառույթներն անհրաժեշտության դրդմամբ նույնպես աստիճանաբար դարձել են առանձնահատուկ, այնուհանդերձ, անկախ այդ ամենից, պոմպի կողմից օդի դուրս մղումն ընթանում էր այնպիսի ուժով, որ իմ ամբողջ ներկայության առանձին մասերի վրա դրոշմվում էին այնպիսի զգացողություններ, որ նույնիսկ հիմա՝ էլ ես կարող եմ պարզորոշ զգալ, թե իմ վիճակն ինչպես էր փոխվում այն ժամանակ, և այդ ամբողջը հիմա քեզ պատմել ամենայն մանրամասնությամբ:

Այդ արտառոց վիճակն իմ մեջ սկիզբ առավ այն բանից քիչ հետո, երբ գոնադառ Ղառղառը կիսաձաղրական տոնով արտահայտվեց ակնկալվող դրության մասին:

Իմ բոլոր «լինելիական կենտրոններում», այսինքն՝ այն երեք կենտրոններում, որոնք տեղայնացված են լինում ամեն մի եռակենտրոն էակի ներկայության մեջ և կոչվում են համապատասխանաբար «մտային», «զգացական» և «շարժունակային» կենտրոններ, ահա այդ կենտրոններում, առանձին ու իրարից անկախ, սկսեցին շատ տարօրինակ ու անսովոր ձևով ընկալվել խիստ որոշակի տպավորություններ, որ իմ մոլորակային մարմնի առանձին մասերում ընթանում է սրբազան «ռասկուարնոյի»⁸⁷ ինքնուրույն գործընթաց, և որ տիեզերական բյուրեղացումները, որոնցով կազմավորվել են այդ մասերը, «ապարդյուն» են եղել:

Սկզբում իմ, այսպես կոչված, «փաստման նախաձեռնությունը» կատարվում էր սովորական ձևով, այսինքն՝ այսպես կոչված «նմանազգացական ապրումի ծանրության կենտրոնին» համապատասխան, սակայն հետո, երբ ամբողջ տեղի ունեցողի այդ «փաստման նախաձեռնությունը» իմ ներսում աստիճանաբար ու համարյա աննկատելի կերպով վերածվեց սուկ իմ էության գործառույթի, ապա վերջինս ոչ միայն դարձավ իմ ներսում տեղի ունեցող ամեն ինչի միակ և համապարփակ փաստման նախաձեռնողը, այլ նաև ամեն ինչ՝ ներառյալ նաև այն, որը դեռ նոր էր տեղի ունենում, սկսեց ընկալվել իմ էության կողմից և հաստատագրվել դրանում:

Այն պահից սկսած, երբ իմ էությունն սկսեց անմիջականորեն ընկալել տպավորությունները և փաստել դրանք՝ անկախ տեղի ունեցածից, իմ ընդհանուր ներկայության մեջ ամբողջովին, այսպես ասած, փլուզվեցին իմ մոլորակային մարմնի մասերը, որից հետո՝ կամաց-կամաց նաև իմ երկրորդ և երրորդ լինելիական կենտրոնների տեղայնացումները: Միննույն ժամանակ որոշակիորեն զգացվեց, որ այդ վերջին երկու կենտրոնների գոծառույթներն աստիճանաբար անցում են կատարում իմ «մտային կենտրոնին» և դառնում դրան հատուկ՝ այն արդյունքով, որ «մտային կենտրոնն», իր գործելու ուժի մեծացումով հանդերձ, վերածվում է այն ամենի «միակ հզոր ընկալիչի», ինչ տեղի է ունենում իրենից դուրս, ինչպես նաև դառնում է այն ամենի անկախ փաստման նախաձեռնողը, ինչը տեղի է ունենում իմ ամբողջ ներկայության մեջ և դրանից դուրս:

Մինչ իմ ներսում տեղի էին ունենում այդ տարօրինակ և այն ժամանակվա իմ Բանականության համար դեռևս անհասանելի լինելիական ապրումները, ինքը՝ գոնադառ Ղառղառը, զբաղված էր

⁸⁶ ռուս. տարբերակում՝ «Кримбулазумары», անգլ. տարբերակում՝ “kreemboolatsoomara”

⁸⁷ ռուս. տարբերակում՝ «Раскуарно», անգլ. տարբերակում՝ “rascooarno”. մոլորակային մարմնի մահ է նշանակում:

բռնակներ ու փոխանջատիչներ պտտացնելով, որոնցից շատ կային այն սեղանի եզրերին, որի կողքին մենք գտնվում էինք:

Իմ բոլոր այդ լինելիական ապրումներն ընդհատվեցին մի միջադեպով, որը տեղի ունեցավ գոռնադառ Ղառղառի հետ, և որով իմ ընդհանուր ներկայության մեջ վերկանգնվեցին սովորական «ներքին լինելիական ապրումները»:

Տեղի ունեցավ հետևյալը:

Գոռնադառ Ղառղառը, բոլոր անսովոր ծանր հարմարանքներով ու հանդերձանքով, որ նաև ինքն էր կրում, հանկարծ հայտնվեց սեղանից որոշակի բարձրության վրա և սկսեց թաքտալ, ինչպես մեր սիրելի Մոլլա Նասրեդինը կասեր՝ «խոր լճակի մեջ ընկած շան լակոտի պես»:

Ինչպես հետո պարզվեց, իմ ընկեր գոռնադառ Ղառղառը հիշատակաձու բռնակներն ու փոխանջատիչները շարժելիս սխալ էր թույլ տվել, որի հետևանքով նրա մոլորակային մարմնի որոշ մասեր պահանջվածից ավելի շատ էին լարվել: Արդյունքում նրա ներկայությունը, իր վրայի ամբողջ եղած-չեղածով հանդերձ, հրվել և կինետիկ էներգիա էր ձեռք բերել, և իր ներկայության ներսում ռիթմիկ կերպով երկրորդ լինելիական սննդի ընդունման, ինչպես նաև այն պատճառով, որ բացարձակ դատարկ միջավայրում ամեն մի դիմադրություն բացակայում էր, սկսեց ճախրել կամ, ինչպես արդեն ասացի, թաքտալ «լճակի մեջ ընկած շան լակոտի պես»:

Այսքանը ժպտալով ասելուց հետո Բեհեղդեբուղը լռեց. քիչ անց, ձախ ձեռքով մի շատ տարօրինակ շարժում արեց և իր ձայնին ոչ հատուկ առոգանությամբ շարունակեց.

«Այն բանին զուգընթաց, որ ես մտաբերելով պատմում եմ քեզ այս ամենի մասին, որ վերաբերվում է իմ գոյության վաղուց անցած ժամանակներում տեղի ունեցած իրադարձություններին, իմ մեջ ցանկություն է առաջանում քեզ մի անկեղծ խոստովանություն անելու. հենց քեզ՝ իմ արյունակից ժառանգորդներից մեկին, որն անխուսափելիորեն պետք է դառնա իմ ողջ լինելիական գոյության ընթացքում կատարած բոլոր գործերիս արդյունքները ներկայացնողը: Ես անկեղծորեն ուզում եմ քեզ խոստովանել, որ երբ իմ էությունն իրեն ենթակա իմ ներկայության մասերից մեկով որոշում ընդունեց մասնակցելու գոռնադառ Ղառղառի նոր գյուտի ցուցադրական մասում կատարվող այդ գիտական պարզաբանիչ փորձերին, երբ կողքից ոչ ոք չէր ստիպում դա անել, այնուհանդերձ, չնայած այդ ամենին, իմ էությունը հանդուրժեց, որ նշածս տարօրինակ ապրումներից բացի՝ իր մեջ խցկվի ու գլուխ բարձրացնի հանցավոր-եսասիրական անհանգստություն՝ կապված իմ անձի անվտանգ գոյության հետ:

Սակայն, զավակս, որպեսզի դու այս պահին շատ չնեղսրտվես, ավելորդ չի լինի ասել, որ այն ժամանակ այդ բանն ինձ հետ պատահեց առաջին և վերջին անգամ՝ իմ լինելիական գոյության բոլոր ժամանակահատվածներում:

Բայց, երևի թե, առայժմ լավ կլինի չորշափենք այնպիսի հարցեր, որոնք բացառապես մեր ընտանիքի համար են հետաքրքրություն ներկայացնում:

Արի, ավելի լավ է, վերադառնանք Ամենաթափանց Ոգիդնողի վերաբերյալ իմ սկսած զրույցին և խոսենք իմ էակից ընկեր գոռնադառ Ղառղառի մասին, որին, իմիջիայլոց, մի ժամանակ ամենուրեք շարքային եռուղեղ էակները համարում էին «մեծ գիտնական», իսկ հիմա, թեև նա դեռ շարունակում է իր գոյությունը, բայց ոչ միայն «մեծ» չի համարվում, այլև իր սեփական արդյունքի, այսինքն՝ իր սեփական որդու շնորհիվ դարձել է այնպիսին, որին մեր սիրելի Մոլլա Նասրեդինը կանվաներ «նախկին», կամ, ինչպես երբեմն ասում էր նման դեպքերում, «նա հիմա սատկած է՝ է ման գալիս, որ նալերը հանի»:

Եվ այսպես, գոռնադառ Ղառղառը, թաքտալով, շատ բարդ ու առանձնահատուկ շրջադարձեր անելով, մի կերպ կարողացավ իջեցնել իր մոլորակային մարմինը, որը ծանրաբեռնված էր զանազան անսովոր ծանր հարմարանքներով, և նորից հասավ աթոռին. այս անգամ նա ինքն իրեն ամրացրեց աթոռի վրա այդ նպատակով տեղադրված հեղույսների միջոցով, իսկ երբ մենք երկուսով քիչ թե շատ հարմար դիրք գրավեցինք, և մեր միջև հնարավոր դարձավ հիշատակաձու արհեստական միացումներով հաղորդակցվելը, նա նախ իմ ուշադրությունը հրավիրեց սեղանից վերև կախված սարքավորումների վրա, որոնք, ինչպես արդեն քեզ ասել եմ, շատ նման էին մոմոնոդուարների:

Մոտիկից նայելիս դրանք բոլորն իրար նման էին և երեք միանման «պարկուճների» դեր էին կատարում. դրանցից ամեն մեկի ծայրից ածխե էլեկտրոդ էր դուրս ցցված, ինչպիսիք սովորաբար այն

սարքերն են ունենում, որոնց քո սիրելիներն անվանում են «էլեկտրական աղեղային պարպման լամպեր»:

Իմ ուշադրությունը հրավիրելով այդ երեք պարկուճի նմանվող մոմոնոդուարների վրա՝ նա ասաց.

– Արտաքինից իրար նմանվող այդ երեք սարքերից յուրաքանչյուրն ուղղակիորեն միացված է այն երկրորդական զետեղարանների հետ, որոնք ցույց տվեցի Ձեզ, երբ մենք դեռ դրսում էինք. դրանցում արհեստական ջարդաբլուրից հետո ընդհանուր զանգվածի մեջ է հավաքվում Ոգիդնոդի երեք ակտիվ մասերից յուրաքանչյուրը: Այդ անկախ սարքերը ես այնպես եմ հարմարեցրել, որ այստեղի բացարձակ դատարկ տարածության մեջ մենք կարող ենք այդ երկրորդական զետեղարաններից մաքուր վիճակում ստանալ, ինչ քանակությամբ որ ուզենանք, Ոգիդնոդի ամեն մի ակտիվ մասից. նաև կարող ենք, ըստ մեր ցանկության, փոխել «մեկ ամբողջության մեջ միախառնվելու ձգտման» ուժը, որը դրանցում գոյանում է իրենց զանգվածին բնորոշ կոնցենտրացիայի՝ խտության աստիճանին համապատասխան: Եվ այստեղ՝ այս բացարձակ դատարկ տարածքում, ես ձեզ նախ և առաջ կցուցադրեմ հենց այն ոչ օրինաչափ երևույթը, որը մենք քիչ առաջ դիտեցինք՝ գտնվելով այն վայրից դուրս, որտեղ դա տեղի էր ունենում: Այսինքն՝ ես ձեզ համար հատկապես կցուցադրեմ այն Համաշխարհային երևույթը, որը տեղի է ունենում, երբ օրինաչափորեն ընթացած ջարդաբլուրից հետո ամբողջական Ոգիդնոդից առանձնացված մասերն իրար են հանդիպում իրենց օրինաչափ սկզբնավորման տարածությունից դուրս և մասերից մեկի բացակայության պայմաններում «ձգտում միախառնվել մեկ ամբողջության մեջ»:

Այս ասելուց հետո նա սկզբում փակեց դրոդադրոծախայի մակերևույթի այն հատվածը, որն իր միջով «ճառագայթներ» անցկացնելու ունակություն ուներ, որից հետո շրջեց երկու փոխանջատիչ և սեղմեց ինչ-որ կոճակ: Դրա արդյունքում սեղանի վրա դրված փոքրիկ թիթեղը, որը պատրաստված էր ինչ-որ հատուկ խեժից, ինքնաբերաբար սկսեց շարժվել դեպի նշած ածխե էլեկտրոդները: Այնուհետև նա իմ ուշադրությունը կրկին հրավիրեց ամպերմետրի և վոլտմետրի վրա և ավելացրեց.

– Ես նորից Ոգիդնոդի երկու մասերի հոսք բաց թողեցի՝ անողայինի ու կատոդայինի, որոնք օժտված են «մեկ ամբողջության մեջ միախառնվելու ձգտման» հավասար ուժով:

Ամպերմետրի և վոլտմետրի ցուցմունքներին նայելով՝ ես իրոք տեսա, որ դրանց սլաքները խոտորվեցին և կանգ առան նույն այն թվերի վրա, որոնք ինձ համար նախապես նշել էի առաջին անգամ, երբ դեռ մենք դրոդադրոծախայի մեջ չէինք. ես խիստ զարմացած էի, քանի որ, անկախ սլաքների ցուցմունքներից ու հենց գոռնադառ Ղառառոի տված բացատրությունից, ես որևէ փոփոխություն չնկատեցի ու չզգացի շրջապատի առարկաների իմ տեսողական ընկալման մեջ:

Ուստի, չսպասելով հետագա բացատրություններին, ես իմ տարակուսանքը հայտնեցի նրան.

– Բայց, ախր, Ոգիդնոդի մասերի այդ օրինաչափ «մեկ ամբողջության մեջ միախառնվելու ձգտումը» ոչ մի արդյունք չի տալիս...

Նախքան իմ այդ տարակուսանքը փարատելը՝ նա անջատեց միակ լամպը, որն աշխատում էր հատուկ մագնիսական հոսքով: Իմ զարմանքն ավելի մեծացավ, քանի որ, թեև ակնթարթորեն խավար տիրեց, սակայն դրոդադրոծախայի պատերի միջով կարելի էր պարզորոշ տեսնել, որ ամպերմետրի և վոլտմետրի ցուցմունքները նորից նույնն են մնացել:

Միայն այն բանից հետո, երբ ես մի փոքր համակերպվեցի նման զարմանալի փաստի հետ, գոռնադառ Ղառառոն ասաց.

– Ես արդեն ասել եմ Ձեզ, որ այն կառույցի պատերը, որի ներսում մենք այժմ գտնվում ենք, ոչ մի թրթիռ իրենց միջով բաց չեն թողնում, ինչ աղբյուրից էլ որ այն առաջացած լինի. բացառություն են կազմում այն թրթիռները, որոնք ծագում են մոտիկ գտնվող խտացումներից, և դրանք կարող են ընկալվել եռուղեղ էակների տեսողության օրգաններով, եթե, իհարկե, դրանք նորմալ էակներ են: Դեռ ավելին՝ համաձայն այն օրենքի, որը կոչվում է «Հետերատոգետար»⁸⁸, սալինիչիզինուարյան շարժման թրթիռները կամ «ճառագայթներն» ունակ են դառնում ազդելու էակների զգայարանների վրա միայն այն բանից հետո, երբ նրանք անցած են լինում այն շերտ, որը գիտության կողմից բնորոշվում է այսպես. «դրսևորման արդյունքը համեմատական է հրումից ստացված մղման ուժին»: Եվ այդ պատճառով, քանի որ Ոգիդնոդի երկու մասերի բախման տվյալ գործընթացն օժտված է վիթխարի

⁸⁸ ռուս. տարբերակում՝ «Тераторетар», անգլ. տարբերակում՝ “Heterato-getar”

հզորությամբ, ապա այդ բախման արդյունքը դրսևորվում է իր ծագման վայրից բավականաչափ հեռու: Իսկ հիմա՝ տեսնե՛ք:

Այս ասելով՝ նա սեղմեց ինչ-որ մի ուրիշ կոճակ, և հանկարծակի դրոշադրոծախայի ներսի տարածքը ողողվեց ճիշտ այնպիսի կուրացուցիչ լույսով, ինչպիսին, ինչպես արդեն պատմել եմ, ես տեսել էի դրոշադրոծախայից դուրս եղածս ժամանակ:

Պարզվեց, որ նշված լույսը ծագել է այն պատճառով, որ կոճակը սեղմելով՝ գոռնադառ Ղառղառը բաց է արել դրոշադրոծախայի պատերի այն հատվածը, որը «ճառագայթներն» իր միջով անցկացնելու ունակություն ուներ:

Հետո նա նաև բացատրեց, որ այդ լույսն ընդամենը Ոգիդնողի մասերի «մեկ ամբողջություն կազմելու ձգտման» արդյունքի հետևանքն է՝ մի գործընթացի, որն ընթացել է դրոշադրոծախայի ներքին դատարկ տարածքում, իսկ լույսը երևացել է՝ դեպի իր ծագման վայրն անդրադառնալու շնորհիվ:

Այդ ամենից հետո նա իր խոսքը շարունակեց այսպես.

– Այժմ ես կցուցադրեմ, թե տարբեր խտության այնպիսի կազմավորումները, ինչպիսիք են «միներալները», «գազերը», «մետալոիդները», «մետաղները» և այլ, այսպես կոչված՝ «հանքանյութերը», որոնք թվարկվածս կազմավորումների ներքին ներկայությունն են կազմում մոլորակների վրա, ինչպե՞ս և ինչպիսի համակցություններով են կազմավորվում ջարդքլումի և Ոգիդնողի ակտիվ մասերի «մեկ ամբողջի մեջ միախառնվելու ձգտման» գործընթացների արդյունքում. նաև այն, թե այդ կազմավորումներն այնուհետև, նույն այդ գործոնների ազդեցությամբ, ինչպես են փոխակերպվում մեկը մյուսին, և թե այդ փոխակերպումների հետևանք հանդիսացող թրթիռներն ինչպես են գոյացնում հենց այն «թրթիռների համախմբությունը», որը մոլորակների համար կայունություն է ապահովում այն գործընթացում, որը կոչվում է «Համահամակարգային ներդաշնակ շարժում»: Իմ նպատակադրած այդ ցուցադրումների համար ես, ինչպես միշտ, դրսից պետք է ստանամ անհրաժեշտ նյութեր, որոնք իմ աշակերտներն ինձ կփոխանցեն իմ կողմից նախատեսված հարմարանքների օգնությամբ:

Հետաքրքիր է նշել, որ խոսելու ընթացքում նա իր ձախ ոտքով կտկտացնում էր «ինչ-որ բանի» վրա, որը շատ նման էր այն սարքին, որին քո սիրելիները Մորգեի հանրահայտ հաղորդիչ կանվանեին, հանրահայտ, իհարկե, մեր մեջ ասած, միայն Երկիր մոլորակի վրա:

Դրանից մի փոքր անց դրոշադրոծախայի ստորին մասում դանդաղ վեր բարձրացավ տուփի նմանվող և թափանցիկ պատերով ինչ-որ փոքրիկ բան, որի ներսում, ինչպես հետո պարզվեց, կային որոշակի նմուշներ՝ հանքանյութեր, մետաղներ, հեղուկ և պինդ վիճակում գտնվող տարբեր գազեր:

Հետո նա, սեղանի մի կողմում գտնվող զանազան հարմարանքների օգնությամբ բարդ շարժումներ կատարելով, տուփի միջից նախ հանեց մի քիչ, այսպես կոչված, «կարմիր պղինձ», դրեց հիշատակված թիթեղի վրա և ասաց.

– Այս մետաղը որոշակի մոլորակային բյուրեղացման արդյունք է և այնպիսի խտություն ունի, որը բավարար է իմ նշած այն գործընթացի համար, որը կոչվում է «Համահամակարգային ներդաշնակ շարժում»: Սա մի կազմավորում է, որին նախորդել են Ամենաթափանց Ոգիդնողի մասերի գործընթացները, իսկ հիմա ես ուզում եմ հնարավորություն տալ, որպեսզի արհեստական և արագացված եղանակով տեղի ունենա այս մետաղի հետագա փոխակերպման գործընթաց՝ նույն այդ գործոնների առանձնահատկությունների օգնությամբ:

Ես մտադիր եմ արհեստականորեն նպաստել դրա տարբերի ինվոյուցիային և էվոյուցիային՝ կա՛մ դեպի խտության աճման կողմը, կա՛մ հակառակը՝ դեպի նախնական վիճակը:

Որպեսզի Ձեզ համար ավելի պարզ դարձնեմ այս պարզաբանիչ փորձերի պատկերը, կարծում եմ, որ նախ պետք է Ձեզ հայտնեմ, թեկուզ համառոտակի, իմ երկու անձնական գիտական եզրակացությունները, որոնք վերաբերում են պատճառների և պայմանների այն ակնհայտությանը, որոնց շնորհիվ մոլորակների վրա տեղի է ունենում Ոգիդնողի առանձին մասերի բյուրեղացում՝ թվարկվածս այս կամ այն կազմավորման տեսքով:

Ակնհայտ է նախ և առաջ այն, որ բոլոր մոլորակների ներկայությունների մեջ առկա Ամենաթափանց Ոգիդնողի ցանկացած ոչ օրինաչափ ջարդքլումի ընթացքում նրա առանձին մասերը տեղայնացվում են տվյալ մոլորակի ներկայության հենց այն մասերի միջավայրում, այսինքն՝ այն հանքանյութում, որը տվյալ պահին գտնվում է հենց այն տեղում, որտեղ տեղի է ունենում նշված ոչ օրինաչափ ջարդքլումը:

Ուստի, եթե նշված միջավայրի տարրերի խտության թրթիռները «համահունչ են» Ամենաթափանց Ոգիդնողի հիշյալ ակտիվ մասի թրթիռների հետ, ապա, համաձայն այն Համաշխարհային օրենքի, որը կոչվում է «Միմետրիկ ներթափանցում», այդ ակտիվ մասը միախառնվում է նշված միջավայրի ներկայության հետ և դառնում դրա անբաժանելի մասը: Եվ այդ պահից սկսած՝ Ամենաթափանց Ոգիդնողի տվյալ մասերը, նշված միջավայրի նշված տարրերի հետ համատեղ, իրենցից ներկայացնում են համապատասխան խտացումներ, ինչպիսիք պահանջում են մոլորակները. դրանք այն մետալոիդների կամ մետաղների տարբեր տեսակներն են, ինչպիսին, օրինակ, իմ կողմից այստեղ բերված մետաղն է, որում հիմա իմ ցանկությամբ արհեստականորեն տեղի կունենա Ոգիդնողի մասերի «մեկ ամբողջության մեջ միախառնվելու ձգտում» գործողությունը, և որը գոյություն ունի «կարմիր պղինձ» անունով:

Այդ եղանակով առաջանալով մոլորակների վրա, այնուհետև նշված մետալոիդներն ու մետաղները, համատեղեցրած օրենքին համապատասխան, որը կոչվում է «ամբողջ գոյի փոխադարձ մաշեցում», սկսում են իրենց ներկայություններից ճառագել իրենց ներքին նյութափոխանակության արդյունքները, ինչն ընդհանրապես բնորոշ է ցանկացած կազմավորմանը, որում առկա է Ոգիդնողը կամ դրա ակտիվ մասերից որևէ մեկը:

Երբ տարբեր խտություն ունեցող նշված զանգվածները, որոնք այդ եղանակով մոլորակներում առաջանում են շրջապատի նորմալ պայմաններում, իրենց ընդհանուր ներկայությունից ճառագում են այնպիսի թրթիռներ, ինչպիսիք պահանջում է «ամբողջ գոյի փոխադարձ մաշեցում» կոչվող Համաշխարհային օրենքը, ապա այդ տարաբնույթ թրթիռների միջև փոխազդեցություն է հաստատվում՝ շնորհիվ հիմնարար «Երեքըմիտեղբեր»⁸⁹ Համաշխարհային օրենքի:

Եվ այդ փոխազդեցության արդյունքը հենց այն գլխավոր գործոնն է, որն ընկած է մոլորակներում տարբեր խտությունների աստիճանական փոփոխության հիմքում:

Իմ բազմամյա դիտումները համարյա լիովին համոզել են ինձ, որ հասկապես միայն այդ փոխազդեցության և դրա արդյունքների շնորհիվ է ապահովվում «մոլորակների ներդաշնակ հավասարակշռության կայունությունը»:

Այս մետաղը՝ կարմիր պղինձը, որը ես հիմա տեղադրել եմ Ոգիդնողի ակտիվ մասերի գործողության՝ իմ առաջարկած արհեստական իրականացման ոլորտում, այս պահին ունի այնպիսի, այսպես կոչված, «տեսակարար խտություն», որը սրբազան Թեոմերտոմալոգոս տարրի խտության միավորի նկատմամբ հաշված՝ հավասար է 444-ի, այսինքն՝ այդ մետաղի ատոմը 444 անգամ ավելի խիտ է և նույնքան անգամ ավելի քիչ կենսատու, քան սրբազան Թեոմերտոմալոգոսի ատոմը:

Իսկ հիմա նայեցեք, թե ինչ կարգով կընթանան արհեստականորեն արագացված փոխակերպումները:

Այս ասելուց հետո նախ նա իմ տեսողական զգայարանի առաջ տեղադրեց ավտոմատ կառավարվող տեսքահան, որից հետո որոշակի հերթականությամբ միացրեցու անջատեց մի քանի փոխանջատիչներ: Եվ, մինչ ես տեսքահանով նայում էի, ինձ բացատրեց հետևյալը.

– Այս պահին ես Ոգիդնողի բոլոր երեք մասերին «ներհոսք եմ հաղորդում» դեպի այն տիրույթը, որտեղ այդ մետաղն է դրված, և, քանի որ բոլոր երեք մասերն ունեն միատեսակ «խտություն» և, հետևաբար, նաև միատեսակ «ձգտման ուժ», ապա այդ տիրույթում դրանք կմիախառնվեն մեկ ամբողջի մեջ՝ առանց մետաղի ներկայության մեջ որևէ փոփոխություն առաջացնելու: Ուստի այդ եղանակով ստացված Ամենաթափանց Ոգիդնողն իր սովորական վիճակով դուրս կհոսի դրողադրոճախային միացած հատուկ խողովակով դեպի այն գետեղարանը, որը Դուք արդեն տեսել եք:

Իսկ հիմա նայե՛ք. ես դիտմամբ մեծացնում եմ Ոգիդնողի միայն մեկ ակտիվ մասի ձգտման ուժը, օրինակ՝ կատողային կոչվածինը: Դրա հետևանքով, Դուք տեսնում եք, թե ինչպես են կարմիր պղինձի ներկայությունը կազմող բաղադրիչ տարրերը հետզարգացում ապրում դեպի այն նյութերի որակի կողմը, որոնք կազմավորում են մոլորակների սովորական ներկայությունները:

Բացատրելուն զուգընթաց՝ նա որոշակի հերթականությամբ միացնում-անջատում էր տարբեր փոխանջատիչներ:

⁸⁹ ռուս. տարբերակում՝ «Троюмедехфе», անգլ. տարբերակում՝ “Troemedekhfe”

Թեև, տղա՛ս, ես դիտում էի շատ մեծ ուշադրությամբ, և այն ամենը, ինչ տեսա, տպավորվեց իմ էության մեջ «պեստոլնուտիար»⁹⁰ ձևով, այսինքն՝ հավերժորեն, այնուամենայնիվ, որքան էլ ցանկանամ, չեմ կարողանա բառերով քեզ պատմել թեկուզ հարյուրերորդական մասն այն ամենի, ինչ տեղի էր ունենում ներմուտրակային գոյացության այդ ոչ մեծ կտորում:

Եվ չեմ էլ փորձի բառերով քեզ բացատրել այն, ինչ այն ժամանակ տեսա, քանի որ հենց նոր մտքովս անցավ այդ ամենն իրականում քեզ ցույց տալու հնարավորությունը. այդ դեպքում դու նույնպես վկա կդառնաս այդ տարօրինակ ու զարմանալի տիեզերական գործընթացին:

Բայց առայժմ ես ուզում եմ քեզ ասել, որ կարմիր պղնձի այդ կտորում տեղի էր ունենում մի այնպիսի բան, որը որոշ չափով ինձ հիշեցնում է այն ահավոր տեսարանները, որոնք իմ մարսյան տեսքահանով ես տեսա Երկիր մուտրակի քո սիրելի էակների մոտ:

Ես ասացի «որոշ չափով» է հիշեցնում, քանի որ այն, ինչ տեղի էր ունենում քո սիրելիների մոտ, միայն սկզբում էր մատչելի դիտման համար, այնինչ՝ կարմիր պղնձի հետ տեղի ունեցողի տեսանելիությունն անընդհատ էր մինչև փոխակերպության ավարտը:

Կարելի է կոպիտ զուգահեռ անցկացնել այն բանի միջև, ինչ երբեմն տեղի է ունենում քո այդ մուտրակի վրա, և այն բանի միջև, ինչ տեղի էր ունենում պղնձի այդ փոքրիկ կտորում, եթե պատկերացնես, որ շատ մեծ բարձրությունից նայում ես մի լայնարձակ հրապարակի, որում հազարավոր քո սիրելիներ, հոգեգարության վիճակի մեջ ընկած, իրենց կողմից հնարված բազմաթիվ գործիքներով ու միջոցներով վերջ են տալիս մեկմեկու գոյությանը, որի արդյունքում կենդանի էակները վերածվում են դիակների, որոնք էլ, դեռևս չոչնչացված էակների գազանությունների հետևանքով զգալիորեն փոխում են իրենց գույնը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է այդ լայնարձակ հրապարակի ընդհանուր տեսքի աստիճանական փոփոխությանը:

Այնուհետև, զավա՛կս, հետագայում իմ էակից ընկերը դարձած գոռնադառ Ղառղառը, միացնելով և անջատելով Ոգիդնողի երեք ակտիվ մասերի ներհուսքերը և փոփոխելով դրանց ձգտման ուժերը, փոխեց նշված մետաղի տարրերի խտությունը և, դրանով իսկ, կարմիր պղինձը փոխակերպեց բոլոր մյուս, կրկին որոշակի, ներմուտրակային մետաղների, որոնք ավելի ցածր կամ ավելի բարձր կենսարարություն ունեին:

Եվ այստեղ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հոգեկառույցի տարօրինակությունը բացատրելու համար շատ կարևոր և հետաքրքիր կլինի նշել, որ երբ գոռնադառ Ղառղառն իր նոր գյուտի օգնությամբ արհեստականորեն և միտումնավոր կերպով կարմիր պղնձի տարրերի խտության ու կենսարարության ինվոյուցիայի և էվոյուցիայի գործընթացներ էր իրականացնում, ես շատ հստակ նկատեցի, որ այդ ընթացքում մի անգամ այդ մետաղը հիշյալ թիթեղի վրա փոխակերպվեց հենց այն մետաղին, որի շուրջ քո մուտրակի վաղ-գիտնականներն իմաստակություններ էին բանեցնում իրենց սկզբնավորման ու գոյատևման համարյա բոլոր ժամանակահատվածներում՝ հուսալով, որ մյուս մետաղները կփոխակերպեն այդ մետաղին: Դրանով հանդերձ՝ նրանք մշտապես ուղուց շեղում էին արդեն իսկ բավականաչափ մուտրված իրենց եղբայրակիցներին:

Այդ մետաղն այնտեղ «ոսկի» են անվանում:

Ոսկին ոչ այլ ինչ է, քան մի մետաղ, որը մենք «պրծածհալավոր»⁹¹ ենք ասում, և որի տեսակարար կշիռը, Թեոմերտմալոգոս սրբազան տարրից հաշված՝ հավասար է 1439. այսինքն այդ տարրն ավելի քան 3 անգամ պակաս կենարար է, քան կարմիր պղինձ մետաղի տարրը:

Թե ինչու ես հանկարծ որոշեցի չփորձել բառերով մանրամասն քեզ պատմել այն ամենը, ինչ այն ժամանակ տեղի էր ունենում հիշյալ կարմիր պղնձի կտորի մեջ՝ ենթադրելով, որ շուտով հնարավոր կլինի քեզ ցույց տալ Ոգիդնողի ակտիվ մասերի դրսևորումների զանազան համակցություններով ընթացող պրոցեսները որոշակի ներքին կազմավորումներում, ապա դա միայն այն պատճառով, որ հանկարծ մտաբերեցի ամենաբարեգութ այն խոստումը, որն ինձ տվել էր Համայն Քառույրտների Պահապան, Մեծագույն Քերովբեապետ Փեշտվոդները⁹²:

Իսկ այդ ամենաբարեգութ խոստումն ինձ տրվել է այն ժամանակ, երբ ես վերադարձել էի աքսորից և պետք է առաջին հերթին ներկայանայի Քառույրտների Պահապան, Մեծագույն Քերովբեապետ

⁹⁰ ռուս. տարբերակում՝ «пестолнуетиарно», անգլ. տարբերակում՝ “pestolnootiarly”

⁹¹ ռուս. տարբերակում՝ «прцатхалавр», անգլ. տարբերակում՝ “prtzathalavr”

⁹² ռուս. տարբերակում՝ «Пештвогнер», անգլ. տարբերակում՝ “Peshtvogner”

Փեշտվողներին, ծնկի գայի նրա առջև և նրան տայի, այսպես կոչված, «էությամբ սրբազան այլամիգուրնակալ⁹³»:

Դա ես պետք է անեի ջահել ժամանակվա մեղքերիս պատճառով: Պարտավոր էի, քանի որ երբ ներվեցի Նորին Ամենագոյ Անսահմանության կողմից, և ինձ թույլ տրվեց վերադառնալ իմ հարազատ աշխարհը, որոշակի Սրբազան Անհատականություններ որոշեցին համենայն դեպս պահանջել, որ իմ էության հետ ի կատար ածվի այդ սրբազան գործընթացը, որպեսզի այլևս ինձ ջահել ժամանակվա պես չպահեն, և այստեղ՝ Մեծ Տիեզերքի կենտրոնում բնակվող անհատների մեծամասնության Բանականության մեջ էլի նույն բանը տեղի չունենա:

Դու երևի դեռ չգիտե՞ս, թե ինչ է նշանակում «էությամբ սրբազան այլամիգուրնակալ» կոչվածը: Ավելի ուշ ես դրա մասին մանրամասն կպատմեմ, իսկ առայժմ բավարարվիր մեր սիրելի Մոլլա Նասրեդինի խոսքերով, որն այսպես է բացատրում այդ գործընթացի էությունը. «ազնիվ խոսք տուր, որ այլևս քիթո՞չ ես խոթի իշխանությունների գործերի մեջ»:

Կարճ ասած՝ երբ ես ներկայացա Նորին Համայն Քառույրտների Պահապանին, նա ինձ բարեհաճեց ամեն ինչից զատ նաև հարցնել ինձ, թե արդո՞ք ես վերցրել եմ ինձ հետ բոլոր այն լինելիական առարկաները, որոնք շարժել են իմ հետաքրքրությունը, կամ որոնք հավաքել եմ այն արևային համակարգության մոլորակներից, որտեղ գոյատևել եմ իմ աքսորի ընթացքում:

Ես պատասխանեցի, որ վերցրել եմ ամեն ինչ՝ բացառությամբ այն վիթխարի սարքերի, որոնք Մարսի վրա ինձ համար կառուցել է իմ ընկեր գոռնադառ Ղառդառը:

Նա անմիջապես խոստացավ հոգ տանել, որ այն ամենը, ինչ ես կուզենամ, առաջին իսկ հնարավորության դեպքում ինձ համար կբերվի միջտարածական «Ամենաթափանց» տիեզերանավի միջոցով:

Ահա թե ինչու, զավա՛կս, ես լիահույս եմ, որ անհրաժեշտ ամեն բան կբերվի մեր Քարատակ մոլորակը, և երբ մենք վերադառնանք այնտեղ, դու ինքդ քո սեփական աչքերով կտեսնես, և ես էլ կկարողանամ այդ ամենը քեզ մանրամասն բացատրել գործնականում:

Իսկ քանի դեռ գտնվում ենք այստեղ՝ միջտարածական Քարնակ տիեզերանավի վրա, ես քեզ կպատմեմ, ինչպես խոստացել էի, իմ հերթական վայրէջքների մասին դեպի քո այդ մոլորակը, ինչպես նաև այն պատճառների մասին, որոնք ստիպել են ինձ անձամբ երևալ այնտեղ»:

ԳԼՈՒԽ ԺԹ

Բեհեդգեբուդի պատմածը Երկիր մոլորակի վրա իր երկրորդ վայրէջքի մասին

Բեհեդգեբուդն սկսեց այսպես.

«Երկրորդ անգամ ես քո այդ Երկիր մոլորակի վրա իջա առաջին վայրէջքից իրենց հաշվարկով տասնամեկ հարյուրամյակ անցնելուց հետո միայն:

Այդ մոլորակի մակերևույթին իմ այդ առաջին վայրէջքից շատ չանցած՝ մոլորակի հետ տեղի ունեցավ երկրորդ լուրջ արհավիրքը, բայց այն տեղային բնույթ ուներ և չէր կարող դառնալ տիեզերական մեծ մասշտաբի աղետի պատճառ:

Այդ երկրորդ լուրջ արհավիրքի ժամանակ մոլորակի Ատլանտիդա աշխարհամասը, որն ամենամեծն էր և գլխավոր լինելիական բնակության վայրն էր այդ մոլորակի եռուղեղ էակների մեծամասնության համար, ցամաքի մեծ ու փոքր այլ հատվածների հետ սուզվեց մոլորակի ընդերքը՝ իր հետ տանելով իր վրա եղած բոլոր եռուղեղ էակներին, ինչպես նաև համարյա այն ամենը, ինչին նրանք հասել ու ձեռք էին բերել նախորդ բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում:

Դրանց տեղում այնուհետև առաջացան ցամաքի այլ մասեր, որոնք կազմավորեցին նոր աշխարհամասեր ու կղզիներ, որոնց մեծ մասը գոյություն ունի մինչև հիմա:

⁹³ ռուս. տարբերակում՝ «Алямизурнакалу», անգլ. տարբերակում՝ “aliamizoornakalu”

Հիշյալ Ատլանտիդա աշխարհամասի վրա էր գտնվում Մամլիոս քաղաքը, որտեղ, հիշում էս, էս մի անգամ ասացի, որ ապրում էր մեր հայրենակիցներից մեկը, որն իմ անձնական առաջին վայրէջքի պատճառը հանդիսացավ:

Այդ մոլորակի վրա տեղի ունեցած երկրորդ մեծ աղետի ժամանակ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներից ոմանք կենդանի մնացին իրարից տարբեր շատ իրադարձությունների շնորհիվ, և հիմա հատկապես նրանց հետնորդներն են, որ չափազանց բեղուն սերունդ են տալիս մոլորակի վրա:

Իմ երկրորդ վայրէջքի օրոք նրանք արդեն այնքան էին բազմացել, որ ապրում էին համարյա բոլոր նոր կազմավորված ցամաքային հատվածների վրա:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչ օրինաչափ պատճառներ էին ընկած նրանց խիստ բազմացման հիմքում, ապա դրա պատասխանը դու կստանաս իմ հետագա գրույցների ընթացքում:

Կարծում եմ, հավանաբար մտածեցիր նաև այն մասին, թե այդ ինչպե՞ս է եղել, որ մեր ցեղին պատկանող եռուղեղ էակները, որոնք այդ մեծ աղետի ժամանակ ապրում էին այդ մոլորակի վրա, կարողացել են խուսափել այդ անխուսափելի, այսպես կոչված, «աշխարհակործան վերջից»:

Նրանք դրանից փրկվել են հետևյալ պատճառներով:

Մեր նախորդ գրույցների ընթացքում էս մի անգամ քեզ պատմել եմ, որ մեր ցեղին պատկանող այն էակների մեծամասնությունը, որոնք իրենց համար գոյության վայր էին ընտրել քո այդ մոլորակը, իմ առաջին վայրէջքի օրոք գլխավորապես բնակվում էին Ատլանտիդա աշխարհամասի վրա:

Այնպես է պատահել, որ նշածս աղետից մեկ տարի առաջ մեր, ինչպես այնտեղ է անվանվում, «ներցեղային պյութիան» գուշակություն է արել և մեր ցեղակիցներին առաջարկել է վերաբնակվել մոտակա ոչ մեծ աշխարհամասի մակերևույթի այն հատվածներում, որոնք նա անվտանգ է համարել:

Այդ ոչ մեծ աշխարհամասն այն ժամանակ կոչվում էր «Գրաբոնզի»⁹⁴, և պյութիայի նախանշած մասն իրոք զերծ է մնացել այն ահավոր խոտորումից, որն այն ժամանակ տեղի է ունեցել այդ չարաբաստիկ մոլորակի ներկայության բոլոր մնացած մասերում:

Հիշյալ խոտորման հետևանքով այդ ոչ մեծ աշխարհամասը, որն այսօր գոյություն ունի «Աֆրիկա» անունով, անհամեմատ մեծացել է, քանի որ նրան աստիճանաբար կցվել են մոլորակի ջրային տարածքներից վեր էլած ցամաքի նոր հատվածներ:

Այսպիսով, տղա ս, այնտեղի մեր ներցեղային պյութիային հաջողվել է ժամանակին զգուշացնել մեր այն ցեղակիցներին, որոնք ստիպված ապրում էին այդ մոլորակի վրա, և դրանով իսկ փրկել է նրանց, ինչպես արդեն ասացի, այդ անխուսափելի «աշխարհակործան ճակատագրից»՝ սուկ այն լինելիական հատկության շնորհիվ, որն, իմիջիայլոց, էակները կարող են ձեռք բերել նպատակամղված կերպով՝ կիրառելով, այսպես կոչված, լինելիական Պարտք-պարտականությունը, որի մասին էս քեզ կպատմեմ ավելի ուշ:

Այդ մոլորակի մակերևույթի վրա երկրորդ անգամ վայրէջք կատարելուս պատճառները բխում էին հետևյալ իրադարձություններից:

Մի անգամ, երբ դեռ Մարսի վրա էինք, Կենտրոնում եթերագիր ստացանք այն մասին, որ շուտով Մարսի վրա պետք է հայտնվեն որոշ Սրբազան Անհատականություններ. և իրոք՝ մարսյան կես տարի էլ չէր անցել, երբ այնտեղ հայտնվեցին մի քանի Հրեշտակապետեր, Հրեշտակներ, Քերովբեներ և Մերովբեներ, որոնց մեծ մասն այն Բարձրագույն հանձնախմբի անդամ էին, որը ժամանակին իջել էր Մարսի վրա՝ քո այդ մոլորակի առաջին մեծ աղետի կապակցությամբ:

Եվ կրկին այդ Բարձրագույն Սրբազան Անհատականությունների շարքում էր Նորին Օրթոդոքսալություն, այն ժամանակ՝ Հրեշտակ, հիմա արդեն՝ Հրեշտակապետ Լույսոսը, որի մասին, ինչպես հիշում էս, ոչ շատ վաղուց արդեն պատմել եմ քեզ, որ Երկիր մոլորակի առաջին մեծ աղետի ժամանակ նա այն կարգավորիչներից մեկն էր, որոնք պետք է վերացնեին այդ համատիեզերական աղետի հետևանքները:

Ահա և, զավա՛կս... նշածս Սրբազան Անհատականությունների ժամանման հենց հաջորդ օրը Նորին Օրթոդոքսալությունն իր Մերովբեններից մեկի՝ իր երկրորդ օգնականի ուղեկցությամբ հայտնվեց իմ տանը:

Համատեղ գոհաբանական աղոթքից և Մեծ Կենտրոնին վերաբերվող իմ տված հարցերին պատասխանելուց հետո Նորին Օրթոդոքսալությունը բարեհաճեց ամեն ինչից զատ ինձ հայտնել նաև

⁹⁴Ռուս. տարբերակում՝ «Грабоны», անգլ. տարբերակում՝ «Grabonzi»

այն մասին, որ Կոնդուր գիսավորի և Երկիր մոլորակի բախումից հետո ինքը կամ ուրիշ տիեզերական Անհատականություններ, որոնք զբաղվում են «Ներդաշնակ խաղաղ գոյակցության» հարցերով, հաճախ իջել են այդ արևային համակարգությունը, որպեսզի հետևեն այն միջոցների ի կատար ածման ընթացքին, որոնք իրենք ձեռնարկել էին համատիեզերական այդ դժբախտ պատահարի հետևանքների վերացման նպատակով:

«Մենք հաճախակի իջնում էինք,- շարունակեց Նորին Օրթոդոքսալությունը,- որովհետև թեև այն ժամանակ ձեռնարկել էինք բոլոր հնարավոր միջոցները և բոլորին վստահեցրել, որ հետո ամեն ինչ լավ կլինի, բայց ինքներս լիովին համոզված չէինք, որ այնտեղ երբևէ կրկին տեղի չի ունենա որևէ անկանխատեսելի անակնկալ:

Մեր մտավախությունները հաստատվեցին, թեև, փառք Պատահականությանը, դա այնքան էլ լուրջ տեսք չընդունեց և չստացավ համատիեզերական մասշտաբներ, քանի որ նոր աղետը վնաս պատճառեց միայն Երկիր մոլորակին:

Երկիր մոլորակի այդ երկրորդ արհավիրքը,- շարունակեց Նորին Օրթոդոքսալությունը,- տեղի ունեցավ հետևյալ պատճառով: Երբ առաջին դժբախտության ժամանակ այդ մոլորակից պոկվեցին երկու զգալիորեն խոշոր բեկորներ, այդ ժամանակ նրա ամբողջ ներկայության, այսպես կոչված, «ծանրության կենտրոնը» չէր հասցրել անմիջապես գրավել իրեն համապատասխանող նոր դիրքը, որի հետևանքով ընդհուպ մինչև երկրորդ արհավիրքը այդ մոլորակը գոյատևում էր սխալ դասավորված ծանրության կենտրոնով, ինչը հանգեցրել էր այն բանին, որ այդ ամբողջ ժամանակի ընթացքում նրա շարժումը համաչափորեն ներդաշնակ չէր, և ինչպես նրա ընդերքում, այնպես էլ մակերևույթի վրա հաճախ տեղի էին ունենում տարբեր ցնցումներ ու զգալի տեղաշարժեր:

Իսկ նշված երկրորդ արհավիրքը տեղի ունեցավ վերջերս, երբ մոլորակի ծանրության կենտրոնը վերջապես գրավեց իր իսկական տեղը:

Բայց հիմա արդեն,- ինքնագոհության նրբերանգով ավելացրեց Նորին Օրթոդոքսալությունը,- այդ մոլորակի գոյատևումը կընթանա լրիվ նորմալ հունով՝ համատիեզերական ներդաշնակությանը համապատասխան:

Երկիր մոլորակի այս երկրորդ արհավիրքն ի վերջո մեզ բոլորիս հանգստացրեց և համոզեց, որ այդ մոլորակի պատճառով այլևս մեծ մասշտաբի աղետներ տեղի չեն ունենա:

Այժմ ոչ միայն հենց ինքը մոլորակն է համատիեզերական հավասարակշռությանը համապատասխանող նորմալ շարժում ձեռք բերել, այլև նրանից պոկված երկու բեկորները, որոնք, ինչպես քեզ արդեն ասել եմ, կոչվում են Լուսին և Անուլիոս և, թեև իրենց չափսերով փոքր են, սակայն ինքնուրույն «կոֆենշարներ⁹⁵» են, այսինքն՝ դարձել են Արգ արևային համակարգության լրացուցիչ մոլորակները:

Այնուհետև մի փոքր մտորելուց հետո Նորին Օրթոդոքսալությունն ինձ ասաց.

«Ձե՛րդ Գերապատվություն, ես հենց այն նպատակով եմ հիմա եկել Ձեզ մոտ, որպեսզի միասին քննարկենք այդ մոլորակից պոկված մեծ բեկորի հետագա բարօրության հարցը, այն բեկորի, որը հիմա գոյություն ունի Լուսին անունով:

Այդ բեկորը,- շարունակեց Նորին Օրթոդոքսալությունը,- ոչ միայն ինքնուրույն մոլորակ է դարձել, այլև դրա վրա սկսել է մթնոլորտ ձևավորվել, ինչն անհրաժեշտություն է ամեն մի մոլորակի համար և ծառայում է Մեծագույն համատիեզերական Տրոգոավտոէգոկրատի գործընթացի իրականացմանը:

Ներկայումս, Ձե՛րդ Գերապատվություն, նշածս մթնոլորտի կազմավորումն այդ փոքրիկ, անկանխատեսելիորեն առաջացած մոլորակի վրա հապաղում է անցանկալի հանգամանքներով, որոնց պատճառն այդ Երկիր մոլորակի վրա սկզբնավորվող և գոյատևող էակներն են:

Եվ հենց այդ կապակցությամբ եմ ես հիմա դիմում Ձեզ, Ձե՛րդ Գերապատվություն, և խնդրում, որ հանուն Համագոյ Արարչի, փորձեք հանձն առնել մեզ ազատել այն ծայրահեղ սրբազան գործընթացի կիրառումից, որն անարժան է եռուղեղ էակների համար, և փորձեք այդ անցանկալի երևույթի առաջն առնել որևէ սովորական եղանակով՝ նրանց ներկայության մեջ առկա լինելիական Բանականությանը դիմելու ճանապարհով»:

Եվ իր հետագա մանրամասն բացատրություններով Նորին Օրթոդոքսալությունն ամեն ինչից գատ նան տեղեկացրեց, որ Երկրի այդ երկրորդ արհավիրքից պատահաբար ազատված երկոտանի եռուղեղ

⁹⁵ ռուս. տարբերակում՝ «кофеншарными», անգլ. տարբերակում՝ “kofenshars”

Էակաները կրկին բազմացել են, և որ այժմ նրանց լինելիական գոյատևման գործընթացը կենտրոնացած է մի ուրիշ, նոր կազմավորված աշխարհամասում, որը կոչվում է «Աշխարհք»⁹⁶, նաև՝ որ այդ Աշխարհք մեծ աշխարհամասում կազմավորվել են երեք ինքնուրույն մեծ խմբեր, որոնցից առաջինը գոյացել է այն ժամանակ «Թիքյամիշ»⁹⁷ կոչվող տարածքում, երկրորդը՝ «Պախրակարան»⁹⁸ կոչվող տարածքում, իսկ երրորդը՝ մինչև հիմա գոյություն ունեցող մի տարածքում, որն այն ժամանակ կոչվում էր «Գաղտակուրհանդա»⁹⁹: Տեղեկացրեց նաև, որ բոլոր երեք խմբավորումներին պատկանող էակաների հոգեկառույցներում ձևավորվել են ինչ-որ յուրօրինակ «հավատորոնողներ»¹⁰⁰, այսինքն՝ որոշակի հոգեկան նկրտումներ, որոնց գործընթացների համախմբությունն իրենք «կրոն» են անվանում:

«Թեև այդ հավատորոնողները կամ կրոններն իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն,– շարունակեց Նորին Օրթոդոքսալությունը,– այնուհանդերձ՝ իրենց այդ յուրահատուկ կրոն կոչվածի բոլոր երեք տարատեսակներում էլ այդ էակաների մոտ լայն տարածում է գտել միննույն սովորույթը, որն իրենց մոտ «գոհամատուցում» է անվանվում:

Այդ սովորույթը խարսխված է մի պատկերացման վրա, որը կարող էր հորինվել բացառապես միայն նրանց տարօրինակ Բանականության կողմից. նրանք կարծում են, որ եթե վերջ տան այլ տեսակի էակաների գոյությանը՝ ի պատիվ իրենց աստվածների և կուռքերի, ապա իրենց այդ երևակայական աստվածներն ու կուռքերը շատ ու շատ գոհ կմնան և անպայման կօգնեն իրենց, որպեսզի բավարարություն տան իրենց բոլոր վայրի ու ֆանտաստիկ քմայքներին:

Ներկայումս այդ սովորույթն այնքան շատ է տարծված այնտեղ, և այդ հանցավոր նպատակով տարբեր տեսակի էակաների ոչնչացումն այնպիսի չափերի է հասել, որ արդեն առկա է սրբազան «ազգոզինի»¹⁰¹ ավելցուկ, որը Երկիր մոլորակը պետք է հատկացնի իրենից պոկված բեկորներին, այսինքն՝ այնպիսի թրթիռների ավելցուկ, որոնք առաջանում են սրբազան «ռասկուարնո» պրոցեսից, որն ընթանում է ցանկացած արտաքին տեսք ունեցող բոլոր այն էակաների մոտ, որոնք սկզբնավորվում և գոյատևում են այն մոլորակի վրա, որից պահանջվում է հիշյալ տիեզերական սրբազան գոյացությունը:

Նոր կազմավորված Լուսին մոլորակի մթնոլորտի նորմալ ձևավորման գործում սրբազան ազգոզինի այդ ավելցուկն արդեն լուրջ խոչընդոտներ է հարուցում, որի հետևանքով ճիշտ չի ընթանում բուն Լուսին մոլորակի և նրա մթնոլորտի միջև կատարվող նյութափոխանակությունը, և արդեն մտավախություն է առաջացել, որ դրա արդյունքում այդ մթնոլորտը կկազմավորվի ոչ ճիշտ և խանգարիչ հանգամանք կդառնա ամբողջ Արգ հակարգության ներդաշնակ շարժման համար, իսկ դա, շատ հնարավոր է, կրկին կծնի այնպիսի գործոններ, որոնք կսպառնան առաջացնել համատիեզերական մասշտաբի ավելի մեծ ևս մի արհավիրք:

Այսպիսով, Ձե՛րդ Գերապատվություն, ինչպես արդեն ասել եմ, իմ խնդրանքն այն է, որ, քանի որ սովորություն ունեք այցելելու այս համակարգության տարբեր մոլորակները, ապա համաձայնեք հանձն առնել ացելելու Երկիր մոլորակ և փորձեք հենց տեղում այդ արտառոց եռուղեղ էակաների գիտակցության մեջ ներարկել իրենց այդ պատկերացման անմտության մասին միտքը»:

Եվս մի քանի խոսք ասելուց հետո Նորին Օրթոդոքսալությունը տեղից վեր կացավ, և երբ արդեն ահագին բարձրության էր հասել, բարձր ձայնով ավելացրեց.

– Այդ գործն անելով, Ձե՛րդ Գերապատվություն, Դուք մե՛ծ ծառայություն մատուցած կլինեք Միագո Համընդգրկուն Անսահմանությանը:

Երբ սրբազան Անհատականություններն արդեն լքել էին Մարս մոլորակը, ես որոշեցի ամեն գնով կատարել նշված առաջադրանքը և արժանի դառնալ, թեկուզև մեր Եզակի Ժամանակակից Անսահմանությանը բացահայտ օգնություն ցուցաբերելու միջոցով, Տիեզերքի համայն գոյի թեկուզ ինքնուրույն մի մասնիկը լինելուն:

⁹⁶ ռուս. տարբերակում՝ «Ашхарк», անգլ. տարբերակում՝ “Ashhark”

⁹⁷ ռուս. տարբերակում՝ «Тиклямиш», անգլ. տարբերակում՝ “Tikliamish”

⁹⁸ ռուս. տարբերակում՝ «Маралплейси», անգլ. տարբերակում՝ “Maralpleicie”

⁹⁹ ռուս. տարբերակում՝ «Жемчания», անգլ. տարբերակում՝ “Pearl-land”

¹⁰⁰ ռուս. տարբերակում՝ «Хаватверноны», անգլ. տարբերակում՝ “havatviernonis”

¹⁰¹ ռուս. տարբերակում՝ «Аскокин», հետո մի այլ տեղ՝ «Аскокив», անգլ. տարբերակում՝ “askokin”

Եվ այսպես, գավա՛կս, այդ մտքերով տոգորված՝ նույն «Պատահար» տիեզերանավով հենց հաջորդ օրը Մարսից երկրորդ անգամ ուղղություն վերցրի դեպի Երկիր:

Այս անգամ մեր նավը վայրէջք կատարեց մի ծովում, որը նոր էր առաջացել երկրորդ մեծ արհավիրքի ժամանակ այդ մոլորակի վրա տեղի ունեցած խոտորման հետևանքով և ժամանակի այդ հատվածում «Կոլխիդյան» անունն էր կրում:

Այդ ծովը գտնվում էր հենց այն նոր կազմավորված Աշխարհք մեծ աշխարհամասի հյուսիսարևմտյան կողմում, որն այդ ժամանակ արդեն դարձել էր եռուղեղ էակների գոյատևման գլխավոր կենտրոնը:

Այդ ծովի մյուս ափերին տեղաբաշխված էին ոչ վաղ անցյալում վեր էլած ցամաքի հատվածներ, որոնք արդեն միացել էին Աշխարհք աշխարհամասին և իրար հետ առանձին սկզբում կոչվում էին «Ֆրիանկծանարալիս¹⁰²», իսկ ավելի ուշ՝ «Կոլխիջիսի¹⁰³»:

Պետք է նշել, որ այդ ծովն ու հիշյալ առափնյա ցամաքի հատվածները մինչև այժմ գոյություն ունեն, բայց, իհարկե, այլ անուններ են կրում. օրինակ՝ Աշխարհքն այսօր «Ասիա» է կոչվում, Կոլխիդյան ծովը՝ «Կասպից ծով», իսկ Ֆրիանկծանարալին՝ «Կովկաս»:

«Պատահարը» վայրէջք կատարեց Կոլխիդյան կամ Կասպից ծովի վրա, որովհետև այդ վայրն ամենահարմարն էր մեր նավի կայանման և իմ հետագա ճամփորդությունների համար:

Այդ վայրը հարմար էր իմ հետագա ճամփորդությունների համար այն պատճառով, որ արևելքից այդ ծովի մեջ էր թափվում մի մեծ գետ, որը ոռոգում էր համարյա ամբողջ Թիքլամիշ երկիրը, և դրա ափին էր կառուցված այդ երկրի «Քուոկալա¹⁰⁴» կոչվող մայրաքաղաքը:

Քանի որ քո սիրելիների գոյատևման ամենամեծ կենտրոնն այն ժամանակ Թիքլամիշ երկիրն էր, ես որոշեցի սկզբում գնալ այնտեղ:

Այստեղ երևի հարկ է նշել, որ թեև այդ մեծ գետը, որ այն ժամանակ «Օքսուերիա¹⁰⁵» էր կոչվում, մինչև այժմ էլ գոյություն ունի, բայց հիմա այն այլևս չի թափվում Կասպից ծովը, քանի որ տեղական մոլորակային ցնցումների պատճառով իր ճամփի կեսից աջ է թեքվել և հիմա թափվում է Աշխարհք աշխարհամասի գոգավորություններից մեկի մեջ, որտեղ անսպասելիորեն մի ոչ մեծ ծով է գոյացել, որը դեռ գոյություն ունի և կոչվում է «Արայան». սակայն Ամուդարյա կոչվող այդ մեծ գետի հունի նախկին կեսը դեռևս հնարավոր է նշմարել, եթե լավ գնես:

Իմ այդ երկրորդ անձնական վայրէջքի օրոք Թիքլամիշը համարվում էր, և իրականում էլ այդպես էր, մոլորակի ցամաքային մասերից ամենահարուստն ու արգավանդը, որը հարմար էր սովորական լինելիական գոյատևման համար:

Բայց երբ այդ չարաբաստիկ մոլորակում տեղի ունեցավ երրորդ մեծ արհավիրքը, այն ժամանակվա այդ ամենաբարեբեր երկիրն իր շուրջը եղած բոլոր ավելի կամ պակաս բարեբեր ցամաքային հատվածների հետ մեկտեղ ծածկվեց «քաշումանհունով¹⁰⁶», կամ, ինչպես իրենք են ասում, «ավազներով»:

Այդ երրորդ արհավիրքից հետո երկար ժամանակ ամբողջ այդ Թիքլամիշ երկրին պարզապես անվանում էին «մերկ անապատ», իսկ հիմա դրա տարբեր մասերը տարբեր անուններ ունեն. նախկին գլխավոր մասն, օրինակ, կոչվում է «Կարակում», այսինքն՝ «սև ավազ»:

Իմ այդ այցի ժամանակահատվածում, քո այդ մոլորակի եռուղեղ էակների ևս մի անկախ խումբ բնակվում էր Աշխարհք աշխարհամասի այն երկրամասում, որը Պախրակարան էր կոչվում:

Ավելի ուշ, երբ այդ երկրորդ խումբն իր գոյատևման կենտրոնն ունեցավ, այն կոչվեց «Գոբ¹⁰⁷ քաղաք», իսկ նրանց երկիրը երկար ժամանակ անվանում էին «Գոբիստան¹⁰⁸»:

Այդ երկրամասը հետագայում նույնպես ծածկվեց քաշումանհունով, իսկ այդ նախկինում փթթուն երկրի գլխավոր մասն այժմ անվանվում է «Գոբի անապատ»:

¹⁰² ռուս. տարբերակում՝ «Фрианкцанарали», անգլ. տարբերակում՝ “Frianktzanaralis”

¹⁰³ ռուս. տարբերակում՝ «Колхиджиси», անգլ. տարբերակում՝ “Colhidchissi”

¹⁰⁴ ռուս. տարբերակում՝ «Куркалай», անգլ. տարբերակում՝ “Koorkalai”

¹⁰⁵ ռուս. տարբերակում՝ «Оксосерия», անգլ. տարբերակում՝ “Oxoseria”

¹⁰⁶ ռուս. տարբերակում՝ «кашманун», անգլ. տարբերակում՝ “kashmanoonoms”

¹⁰⁷ ռուս. տարբերակում՝ «Гоб», անգլ. տարբերակում՝ “Gob”

¹⁰⁸ ռուս. տարբերակում՝ «Гобландия», անգլ. տարբերակում՝ “Goblandia”

Ինչ վերաբերում է Երկիր մոլորակի այն ժամանակվա եռուղեղ էակների երրորդ անկախ խմբին, ապա դրանց բնակության վայրը գտնվում էր Աշխարհք աշխարհամասի հարավ-արևելյան կողմում՝ Թիքլյամիշի դիմաց, Աշխարհք աշխարհամասի այն աննորմալ ցցվածքների հետևում, որոնք նույնպես գոյացել են այդ չարաբաստիկ մոլորակի երկրորդ խոտորման ընթացքում:

Այդ երրորդ խմբի գոյատևման տարածքը, ինչպես արդեն քեզ ասել եմ, կոչվում էր Գաղտակուրհանդա:

Այդ տարածքի անունն էլ է բազմիցս փոխվել, և հիմա Երկրի մակերևույթի ցամաքային մասի մինչև այժմ գոյություն ունեցող այդ հատվածն անվանվում է «Հնդստան» կամ «Հնդկաստան»:

Անպայման հարկավոր է նշել, որ այդ ժամանակահատվածում, այսինքն՝ իմ երկրորդ անձնական վայրէջքի օրոք, քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակները, որոնք պատկանում էին թվարկածս երեք անկախ խմբերին, այն գործառույթի փոխարեն, որը կոչվում է «կենսական ձգտում դեպի ինքնակատարելագործում», և որը հարկ է, որ ունենան բոլոր նորմալ եռուղեղ էակները, ունեին արդեն բյուրեղացած այնպիսի «կենսական», բայց շատ տարօրինակ մի «ձգտում», որ իրենց մոլորակի մյուս բոլոր էակներն իրենց երկիրն անվանեն ամբողջ մոլորակի «մշակույթի կենտրոն»:

Այդ տարօրինակ «կենսական ձգտումն» առկա էր քո այդ մոլորակի բոլոր էակների մոտ, և յուրաքանչյուրի համար ծառայում էր որպես, այսպես կոչված, գոյության գլխավոր իմաստ ու նպատակ: Եվ դրա արդյունքում, այդ երեք խմբավորումների միջև մշտապես իրենց նպատակին հասնելու դաժան պայքար էր ընթանում՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգեբանական միջոցների կիրառությամբ:

Ահա այդպես, տղա՛ս:

Կոլիսիդական կամ, ինչպես հիմա են ասում, Կասպից ծովից մենք «սելչաններով¹⁰⁹», այսինքն՝ լաստերով լողացինք Օբսուսերիայի կամ, ինչպես հիմա են ասում, Ամուդարյայի հոսանքն ի վեր : Տասնհինգ երկրային օր հետո մենք վերջապես հասանք առաջին ասիական ցեղախմբի մայրաքաղաքը:

Երբ տեղ հասանք և մեզ համար մշտական կացարան պատրաստեցինք, ես սկզբում սկսեցի այցելել Քուռկալա քաղաքի «կրթարանները¹¹⁰», այսինքն՝ այն հաստատությունները, որոնք Աշխարհք աշխարհամասում հետագայում կոչվեցին «չայխանա», «աշխանա», «քարվանսարա» և այլն, իսկ այնտեղի «Եվրոպա» աշխարհամասում ապրող ներկայիս եռուղեղ էակներն անվանում են «սրճարան», «ռեստորան», «ակումբ», «պարասրահ», «ժողովարան» և այլն:

Ես սկզբում այդ հաստատություններն այցելեցի այն պատճառով, որ Երկիր մոլորակի վրա ինչպես ներկայումս, այնպես էլ վաղեմի ժամանակներում, ոչ մի ուրիշ վայրում չէս կարող ավելի լավ տեսնել և ուսումնասիրել տվյալ երկրամասի էակների հոգեկառույցի առանձնահատկությունները, քան հենց այդ հավաքատեղիներում, իսկ ես հենց դրա կարիքն ունեի, որպեսզի ինձ համար պարզեմ նրանց իրական, էությունից բխող վերաբերմունքը զոհամատուցման իրենց սովորույթի նկատմամբ, և դրանով իսկ հնարավորություն ստանամ համեմատաբար հեշտ ու արագ գործողությունների պլան մշակելու այն հիմնական նպատակին հասնելու համար, որին նվիրված էր իմ այդ երկրորդ այցելությունն այնտեղ:

Այդ կրթարաններն ացելելու ընթացքում ես ծանոթացա մի քանի էակների հետ, որոնցից մեկի հետ իմ հանդիպումները բավականին հաճախակի դարձան:

Այնտեղացի այդ եռուղեղ էակին Աբդիլ էին կոչում, իսկ իր գիտելիքների բնույթով նա պատկանում էր «քրմերի» խմբին:

Քանի որ, տղա՛ս, այդ երկրորդ այցի ընթացքում իմ ամբողջ անձնական գործունեությունն առնչվեց այդ քուրմ Աբդիլի հետ կապված արտաքին հանգամանքներին, որի պատճառով ինձ վիճակվեց շատ տհաճություններ ունենալ, ապա ես քեզ ավելի մանրամասն կպատմեմ այնտեղացի այդ եռուղեղ էակի մասին. նաև նրա մասին իմ պատմածներից դու կհասկանաս, թե ինչ արդյունքների ես հասա, երբ փորձում էի քո սիրելիների հոգեկառույցից արմատախիլ անել այլ էակների կյանքին վերջ տալու պահանջմունքը, որով նրանք փորձում էին «հաճոյանալ» իրենց աստվածներին ու կուռքերին և շահել վերջիններիս «բարեհաճությունը»:

¹⁰⁹ ռուս. տարբերակում՝ «сельчанах», անգլ. տարբերակում՝ “selchanakhs”

¹¹⁰ ռուս. տարբերակում՝ «калтааны», անգլ. տարբերակում՝ “kaltaani”

Թեև հետագայում ինձ համար հարազատ դարձած այդ երկրային էակը բարձրակարգ քրմերից չէր, սակայն քաջատեղյակ էր այն կրոնական ուսմունքի մանրամասներին, որն այն ժամանակ տիրապետող էր Թիբլյամիշում, ծանոթ էր այդ կրոնի հետևորդների հոգեկառույցին և հատկապես լավ գիտեր այն էակների հոգեկառույցի նրբությունները, որոնք պատկանում էին այն «հոտին», որի քուրմն ինքն էր:

Շատ շուտով, երբ արդեն մեր միջև «ընկերական հարաբերություններ» էին հաստատվել, ինձ համար պարզ դարձավ, որ այդ քուրմ Աբդիլի էության մեջ շատ ու շատ արտաքին հանգամանքների շնորհիվ, որոնց մեջ մտնում էին նաև ժառանգականությունն ու այն պայմանները, որոնցում նա հասել էր իր պատասխանատու տարիքին, դեռևս լրիվությամբ հետաձ չէր ապրել այն գործառույթը, որը «խիղճ» է կոչվում և անպայման պետք է գործի ամեն մի եռակենտրոն էակի էության մեջ: Ուստի, երբ նրա Բանականությանը հասու դարձան որոշ տիեզերական ճշմարտություններ, որոնք ես նրան բացատրեցի, նա անմիջապես իր ներկայության մեջ իրեն շրջապատող իր նման էակների նկատմամբ ձեռք բերեց համարյա այնպիսի վերաբերմունք, ինչպիսին պետք է ունենան համայն Տիեզերքի բոլոր նորմալ եռուղեղ էակները, այսինքն՝ նա սկսեց, ինչպես այնտեղ են ասում, «հոգաձուլությամբ ու կարեկցանքով» վերաբերվել իր շրջապատում եղած էակներին:

Նախքան Աբդիլի մասին իմ պատմությունը շարունակելը ես նախ պետք է քո Բանականության համար պարզաբանեմ, որ այդ ժամանակահատվածում Աշխարհք աշխարհամասում գոհամատուցման հիշյալ սովորույթն իր «ծաղկման» գագաթնակետին էր գտնվում, և զանազան միաուղեղ և երկուղեղ թույլ էակների ոչնչացման գործն ընթանում էր ամենուրեք և անհավատալի մեծ չափերով:

Ցանկացած տան մեջ, երբ որևէ առիթ էր ծագում դիմելու այս կամ այն երևակայական աստծուն կամ հնարովի «սրբին», նրանք անպայման խոստանում էին, որ հաջողության հասնելու դեպքում, ի պատիվ իրենց աստվածների կամ սրբերի, վերջ կտան մի որևէ էակի կամ միանգամից մի քանիսի գոյությանը: Եվ էթե այնպես էր պատահում, որ բախտները բերում էր, նրանք իրենց խոստումը կատարում էին մեծագույն երանությամբ. իսկ էթե հակառակն էր լինում, ապա էլ ավելի մեծաքանակ էին դարձնում սպանող, որպեսզի վերջին հաշվով շահեն իրենց երևակայական հովանավորի բարեհաձույթունը:

Այդ նպատակով, քո այդ սիրելիները բոլոր մյուս տեսակի էակներին բաժանել էին «մաքուրների» և «պիղծերի»:

«Պիղծ էին համարվում էակների այն տեսակները, որոնց ոչնչացումն իրենց աստվածներին հաճո չէր համարվում, և «մաքուր» էին համարվում այն էակները, որոնց գոյությանը վերջ տալը անչափ հաճելի էր դիտվում այն այլազան երևակայական կուռքերի համար, որոնց իրենք պաշտում էին:

Այդ գոհաբերությունները նրանք կատարում էին ոչ միայն իրենց սեփական տան պատերի ներսում և առանձին էակների նկատմամբ, այլև ոչնչացնում էին դրանց ամբողջական խմբեր, երբեմն՝ հրապարակայնորեն: Նման սպանողի համար գոյություն ունեին հատուկ տեղեր, որոնք գլխավորապես տեղաբաշխված էին լինում այն շինությունների մոտակայքում, որոնք նվիրված էին լինում ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկին՝ որևէ սրբի, որին, իհարկե, հենց իրենք էին «սրբերի կարգը» դասել:

Թիբլյամիշ երկրում այն ժամանակ կային մի քանի այդպիսի հասարակական վայրեր, որոնցում գոհաբերում էին զանազան արտաքին տեսքի էակների, և այդ վայրերի շարքում կար առանձնապես նշանավոր մեկը, որը գտնվում էր մի ոչ մեծ սարի գագաթին. համարվում էր, որ հենց այդտեղից է ուն Ալիման, վաղեմի ինչ-որ ժամանակ, կենդանի մարմնով վեր հանվել «այս թե այն երկինքը»:

Այդ վայրում, ինչպես նաև նմանատիպ շատ վայրերում, հատկապես տարվա որոշակի շրջանում նրանք մորթում էին անթիվ քանակով էակներ՝ «ցուլեր», «աղավնիներ» և այլն, նույնիսկ իրենց նմաններին:

Վերջին դեպքում սովորաբար ուժեղները գոհաբերում էին իրենցից թույլերին. օրինակ՝ հայրը իր որդուն, ամուսինը՝ կնոջը, ավագ եղբայրը՝ կրտսեր եղբորը և այլն: Բայց մեծ մասամբ գոհաբերվում էին «ստրուկները», որոնք, ինչպես այժմ, «գերիներն» էին, այսինքն՝ պարտության մատնված այն հանրությանը պատկանող էակները, որն այդ ժամանակահատվածում, այսինքն՝ մի շրջանում, երբ փոխադարձ ոչնչացման նրանց կենսական ձգտումն իրենց ներկայության մեջ առավել ցայտուն էր դրսևորված, իրենց այդ գլխավոր առանձնահատկության իմաստով, ըստ իրենց, այսպես կոչված «Սոլիունենսիուսի» օրենքի, ավելի փոքր նշանակություն ուներ:

Ուրիշ էակների ոչնչացման ճանապարհով իրենց «աստվածներին հաճոյանալու» այդ սովորույթը մինչև այժմ էլ տարածված է քո այդ մուրրակի վրա, բայց ոչ այն մասշտաբներով, որոնցով այդ զազրելի սովորույթն այն ժամանակ գործադրվում էր Աշխարհք աշխարհամասում:

Եվ այսպես, զավա՛կս, Քուռկալայում գտնվելուս առաջին օրերին տարբեր թեմաներով ես հաճախ գրուցում էի հիշյալ ընկերոջս՝ քուրմ Աբդիլի հետ, բայց, իհարկե, երբեք չէի շոշափում այնպիսի հարցեր, որոնցով կարող էր բացահայտվել իմ իրական բնույթը:

Այդ մուրրակի բոլոր այն եռուղեղ էակների նման, որոնց հետ ես հանդիպել եմ իմ վայրէջքների ընթացքում, նա նույնպես ինձ ընդունում էր իր հարազատ մուրրակին պատկանող էակի տեղ, բայց ինձ համարում էր շատ գիտուն ու մեծ հեղինակություն՝ իր նման էակների հոգեկառույցի իմացության առումով:

Շենց մեր առաջին հանդիպումների ժամանակ, երբ գրուցում էինք իր նման ուրիշ էակների մասին, ինձ խորապես հուզեցին նրանց նկատմամբ Աբդիլի հոգատարությունն ու ապրումները: Եվ երբ իմ Բանականությամբ ես լիովին համոզվեցի, որ եռակենտրոն էակների համար հիմնական հանդիսացող խղճի գործառույթը, որը ժառանգաբար նրան էր փոխանցվել, դեռևս ամբողջովին հետաճ չի ապրել, այդ պահից սկսած՝ իմ ներկայության մեջ աստիճանաբար սկսեց ձևավորվել և արդյունքում բյուրեղացավ «իրապես գործող կենսական ձգտում» նրա նկատմամբ՝ որպես իմ եղբայրակցի:

Այդ պահից սկսած՝ նա նույնպես, համաձայն տիեզերական այն օրենքի, որն ասում է «ամեն մի պատճառ ծնում է իր համապատասխան հետևանքը», բնականաբար, սկսեց իմ նկատմամբ տածել «սիլնեդորթբան¹¹¹» կամ, ինչպես այնտեղի քո սիրելիներն են ասում՝ «վստահել մեկ ուրիշին, ինչպես ինքդ քեզ»:

Եվ այսպես, տղա՛ս, հենց որ դա հստակորեն փաստագրվեց իմ Բանականության մեջ, իմ գլխում միտք ծագեց, որ այդ իմ առաջին երկրային ընկերոջ միջոցով սկսեմ կատարել այն առաջադրանքը, հանուն որի կայացել էր իմ այդ երկրորդ անձնական այցը:

Ուստի դիտմամբ սկսեցի մեր բոլոր գրույցները կապել զոհամատուցման սովորույթի խնդրին:

Թեև, զավա՛կս, իմ այդ երկրային ընկերոջս հետ ունեցած գրույցներից շատ երկար ժամանակ է անցել, սակայն երևի թե կկարողանամ բառ առ բառ կրկնել այն ժամանակվա մեր գրույցներից մեկը:

Ես ուզում եմ մտաբերել ու կրկնել հատկապես մեր այն գրույցը, որը վերջինը եղավ և մեկնակետ ծառայեց հետագա բոլոր իրադարձությունների համար, որոնք, թեև իմ այդ երկրային ընկերոջ մուրրակային գոյությունը հասցրին տանջալից ավարտի, այնուամենայնիվ, մոտեցրին նրա ինքնակատարելագործման սկիզբն ու այն շարունակելու հնարավորությանը:

Այդ վերջին գրույցը կայացավ նրա տանը:

Ես բացահայտ կերպով նրան բացատրեցի զոհամատուցման այդ սովորույթի լիակատար հիմարությունն ու անհեթեթությունը:

Ասացի հետևյալը.

«Ասենք թե, լա՛վ, դուք կրոն ունեք՝ հավատ ինչ-որ բանի նկատմամբ: Հրաշալի՛ բան է ինչ-որ բանի նկատմամբ հավատ ունենալը, ինչ էլ որ այն լինի, նույնիսկ եթե ճշգրիտ չգիտեք, թե ինչին կամ ում եք հավատում, և անկարող եք պատկերացնել այն, թե ինչ նշանակություն կամ հնարավորություններ ունի ձեր հավատի առարկան, հավատալը, գիտակցաբար թե՛ անգիտակցաբար՝ շատ անհրաժեշտ և ցանկալի է ամեն մի էակի համար:

Ցանկալի է այն պատճառով, որ միայն հավատի շնորհիվ է էակը ձեռք բերում եռանդուն լինելիական ինքնագիտակցություն, որն անհրաժեշտություն է ամեն մի էակի համար, ինչպես նաև իր անձնական Լինելիության արժեքավորության զգացողություն՝ որպես համայն Տիեզերքի Ամենայն Գոյի մի մասնիկը:

Բայց ի՞նչ կապ ունի դրա հետ մի այլ էակի գոյությունը, որին դուք վերջ եք տալիս, և դեռ ավելին՝ վերջ եք տալիս այդ էակի գոյությանը՝ հանուն նրա Արարչի:

Մի թե Արարչի համար այդ էակի կյանքը նույնը չէ, ինչ ձերն է՝ Արարչի համար, որը ստեղծել է ինչպես ձեզ, այնպես էլ այդ մյուս էակին:

¹¹¹ ռուս. տարբերակում՝ «Силнегордпану», անգլ. տարբերակում՝ “silnegordpana”

Շնորհիվ ձեր հոգեկան ուժի և խորամանկության՝ ձեզ բնորոշ հատկանիշների, որոնք բոլորիս Ընդհանուր Արարիչը հատկացրել է ձեզ, որպեսզի կատարելագործեք ձեր Բանականությունը, դուք օգտվում եք մյուս էակների հոգեկան թուլությունից և վերջ տալիս նրանց գոյությանը:

Դուք հասկանում եք, ո՞վ թշվառ արարածներ, թե օբյեկտիվ իմաստով ինչ չարագործություն եք կատարում:

Նախ և առաջ՝ վերջ տալով ուրիշ էակների գոյությանը, դուք ձեզ համար փոքրացնում եք այն արդյունքների համախմբությանը պատկանող գործոնների քանակը, միայն որոնցով կարող են գոյանալ ձեզ նման էակների ինքնակատարելագործման համար անհրաժեշտ պայմանները, և երկրորդ՝ ձեր այդ վարմունքով որոշակիորեն փոքրացնում եք կամ ամբողջովին ի չիք եք դարձնում մեր Ընդհանուր Հայր Արարչի հույսերն այն հնարավորությունների նկատմամբ, որոնք ներդրված են ձեր ներսում՝ որպես եռուղեղ էակների, որոնց հետ Նա հույսեր է կապում, որ հետագայում կդառնաք Իր օգնականները:

Նման ահավոր լինելիական գործողության ակնհայտ անհեթեթությունը պարզ է դառնում հենց միայն այն բանից, որ դուք երևակայում եք, թե իբր, ոչնչացնելով ուրիշ էակների, դրանով ինչ-որ հաճելի բան եք անում Նրա համար, Ով որոշակի նպատակամղվածությամբ ստեղծել է նաև այդ էակներին:

Մի թե՛ ձեր գլխում երբևէ չի ծագել այն միտքը, որ եթե մեր Ընդհանուր Հայր Արարիչը ստեղծել է նաև այդպիսի կյանք, ապա Նա հավանաբար դա արել է ինչ-որ որոշակի նպատակով:

Խորհեցե՛ք, - այնուհետև ասացի ես, - խորհեցեք ո՛չ այնպես, ինչպես սովոր եք մտածել ձեր ողջ գոյության ընթացքում, այսինքն՝ ինչպես «խորասանյան ավանակ», այլ խորհեցեք ազնիվ ու անկեղծ, ինչպես վայել է այն էակին, որը, ինչպես դուք եք ասում, «ստեղծված է ըստ Աստծո պատկերի և նմանության»:

Երբ Աստված արարում էր ձեզ և այն էակներին, որոնց գոյությանը դուք վերջ եք տալիս, կարո՞ղ էր արդյոք մեր Արարիչը նրանցից որոշների ճակատին գրել, թե դրանք պետք է ոչնչացվեն Իր պատվին և ի փառս Իրեն:

Եթե որևէ մեկը՝ նույնիսկ «Ալբիոն կղզու ամենահետին ապուշը, այդ մասին խորի լրջորեն ու անկեղծ, ապա կհասկանա, որ այդպիսի բան լինել չէր կարող:

Այն, որ իրենք ստեղծված են «ըստ Աստծո պատկերի և նմանության», հորինել և ասում են միայն մարդիկ, ոչ թե Նա, Ով արարել է ինչպես մարդկանց, այնպես էլ տարբեր տեսակի այլ էակների, որոնց մարդիկ ոչնչացնում են՝ երևակայելով, թե Նրան հաճույք են պատճառում:

Նա ոչ մի տարբերություն չի դնում մարդկանց կյանքի և ցանկացած այլ էակների կյանքի միջև:

Մարդը կյանք է, ուրիշ արտաքին տեսք ունեցող էակները ևս կյանք են:

Նա Իր բարձրագույն իմաստությամբ նախատեսել է, որ Բնությունը զանազան արտաքին տեսք ունեցող էակներին համապատասխանաբար հարմարեցնի այն պայմաններին և հանգամանքներին, որոնցում նախանշված է, որ ընթանա այդ զանազան արտաքին տեսք ունեցող էակների կյանքը:

Օրինակ՝ հենց ձեզ վերցրեք. կարո՞ղ էիք դուք, ձեր ներքին ու արտաքին օրգաններով հանդերձ, գնալ հիմա ջուրը նետվել և լողալ ձկան պես:

Իհարկե ոչ, որովհետև դուք ո՛չ խոիկներ ունեք, ո՛չ լողակներ, ո՛չ էլ այնպիսի պոչ, ինչպիսին ձուկն ունի, այսինքն՝ չունեք կենսական այն հատկանիշները, որոնք նախատեսված են ջրում ապրելու համար:

Եթե այնուամենայնիվ հանկարծ ջուրը նետվեք, ապա անմիջապես կխեղդվեք և կհայտնվեք հատակում՝ կեր դառնալով հենց այն ձկների համար, որոնք իրենց համապատասխանող միջավայրում, բնականաբար, անհամեմատ ավելի ուժեղ են, քան դուք:

Նույնը նաև ձկներին է վերաբերում: Կարո՞ղ էր արդյոք դրանցից մեկը հենց հիմա գալ այստեղ, նստել մեր սեղանի շուրջ և ըմպել այն կանաչ թեյից, որը հիմա մենք ըմպում ենք:

Իհարկե, նույնպես ո՛չ, քանի որ նա դրա համար համապատասխան օրգաններ չունի: Նա ջրում ապրելու համար է ստեղծված և նրա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին օրգանները հարմարեցված են ջրին, ուստի միայն իրեն համապատասխանող այդ միջավայրում ապրելով նա կարող է արդյունավետ ու հաջողությամբ հասնել Արարչի կողմից կանխորոշված իր գոյության նպատակին:

Նմանապես, ձեր արտաքին ու ներքին բոլոր օրգաններն էլ են մեր Ընդհանուր Արարչի կողմից ստեղծված՝ համապատասխան ձեր միջավայրին. ոտքեր ունեք, որպեսզի քայլեք, ձեռքեր ունեք,

որպեսզի պատրաստեք ու վերցնեք ձեզ անհրաժեշտ կերակուրը. ձեր քիթն ու դրա հետ կապված բոլոր օրգանները նախատեսված են այն բանի համար, որ կլանեք ու ձեր ներսում փոխակերպության ենթարկեք այն Համաշխարհային սուբստանցիաները, որոնցով պարուրված են ձեզ նման բոլոր եռուղեղ էակների երկու բարձր լինելիական մարմինները, որոնցից մեկի հետ մեր Ընդհանուր Համընդգրկուն Արարիչը հույսեր է կապում, որ դրա օգնությամբ կհոգա Իր այն նպատակների հետ կապված հոգսերը, որոնք Իր կողմից նախատեսված են Համայն Գոյի բարօրության իրականացման համար:

Կարճ ասած՝ համապատասխանության սկզբունքը նախատեսված է մեր Ընդհանուր Արարչի կողմից և տրվել է Բնությանը, որպեսզի Նա կարողանա ձեր բոլոր ներքին ու արտաքին օրգանները կառուցել ու հարմարեցնել այն միջավայրին, որում նախատեսված է, որ ընթանա ձերինի պես ուղեղային համակարգ ունեցող էակների գոյատևումը:

Ասվածն ավելի լավ բացատրելու համար շատ լավ օրինակ կարող է ծառայել ձեր սեփական ավանակը, որը հիմա կապված է ձեր ախտում:

Նույնիսկ ձեր այդ սեփական ավանակի նկատմամբ եք դուք չարաշահում այն հնարավորությունները, որոնք ձեզ են տրված մեր Ընդհանուր Արարչի կողմից, քանի որ, եթե այդ ավանակն ստիպված է իր կամքին հակառակ կանգնել ախտում, ապա դա անում է միայն այն պատճառով, որ նրա ամբողջ ներկայության այդպիսի դրվածքն անհրաժեշտություն է մոլորակների վրա համատիեզերական գոյության համար:

Ուստի ձեր ավանակի ներկայության մեջ օրինաչափորեն բացակայում է մտածողության տրամաբանական գործընթացի հնարավորությունը, և, հետևաբար, նա օրինաչափորեն պետք է լինի, ինչպես դուք եք ասում, «հիմար» կամ «անհասկացող»:

Թեև դուք մոլորակների վրա համատիեզերական գոյության նպատակներով եք ստեղծված, թեև ստեղծված եք որպես «հույսի դաշտ» մեր Ընդհանուր Ամենաբարեգութ Արարչի ապագա ակնկալիքների համար, այսինքն՝ ստեղծված եք «Բարձրագույն Սրբազան» մարմին ունենալու հնարավորությամբ, որի հնարավոր կազմավորման համար էլ հենց արարված է ներկայումս գոյություն ունեցող մեր Աշխարհը, նաև՝ չնայած ձեզ տրված հիշյալ հնարավորությանը, այսինքն՝ որ ստեղծված եք տրամաբանական մտածողության հնարավորություն ունեցող եռուղեղ էակի տեսքով, այնուամենայնիվ դուք ձեր այդ սուրբ հասկանիչը չեք օգտագործում նրա կանխորոշված նշանակությամբ, այլ դա որպես «խորամանկություն» եք բանեցնում Նրա կողմից ստեղծված այլ էակների նկատմամբ, որոնցից մեկն էլ ձեր սեփական ավանակն է:

Եթե հաշվի չառնենք ձեր ներկայության նշած «Բարձրագույն-Սրբազան» մասը գիտակցորեն կազմավորելու ձեր ունեցած հնարավորությունը, ապա ձեր ավանակը նույնպիսի արժեք ունի համատիեզերական գործընթացի համար և, հետևաբար, նաև մեր Ընդհանուր Արարչի համար, ինչպիսին դուք ունեք, քանզի ձեզնից յուրաքանչյուրը նախատեսված է որոշակի նպատակի համար, իսկ այդ առանձին նպատակներն էլ՝ որպես մի ամբողջություն, կազմում են Համայն Գոյի իմաստը:

Ձեր ու ձեր սեփական ավանակի միջև տարբերությունը միայն ձեր ընդհանուր ներկայության ներքին ու արտաքին կառույցների գործառությունների ձևի ու որակի մեջ է:

Օրինակ՝ դուք միայն երկու ոտք ունեք, իսկ ավանակը՝ չորսը, որոնցից ամեն մեկն անհամեմատ ավելի ուժեղ է, քան ձերը:

Կարո՞ղ եք, օրինակ, ձեր այդ թույլ ոտքերով այնքան բեռ կրել, որքան ձեր ավանակը:

Պարզ է, որ ոչ, քանի որ ձեր ոտքերը միայն այն բանի համար են նախատեսված, որ տանեք ինքներդ ձեզ և այն ոչ շատ բաները, որոնք անհրաժեշտ են այնպիսի եռուղեղ էակի նորմալ գոյատևման համար, ինչպիսին նրան նախատեսել է Բնությունը:

Ուժերի և դիմացկունության նման բաշխումը, որն առաջին հայացքից թվում է անարդարացի քայլ մեր Արդարագույն Արարչի կողմից, Մեծ Բնությունը կարգավորել է պարզապես այն պատճառով, որ տիեզերական սուբստանցիաների այն ավելցուկը, որն Արարչի ու Բնության կողմից կանխորոշվել է ձեզ համար, որպեսզի դա ծառայեցնեք ձեր ինքնակատարելագործման նպատակներին, տրված չեն ավանակին, բայց դրա փոխարեն Ինքը՝ Մեծ Բնությունը, տիեզերական սուբստանցիաների այդ ավելցուկն ավանակի ներկայության մեջ փոխակերպում է նրա որոշ օրգանների ուժի և դիմացկունության, որպեսզի նա հիմա գոյատևի, բայց, իհարկե, առանց դա գիտակցելու, և դրանով իսկ ավանակին հնարավորություն է տալիս այդ ուժը դրսևորելու անհամեմատ ավելի լավ, քան դուք:

Եվ տարբեր տեսակի էակների կողմից տարբեր ուժերի դրսևորումները հենց այն արտաքին պայմանների համախմբությունն են կազմավորում, որի առկայության դեպքում է միայն հնարավոր, որ ձեռք նմանները, այսինքն՝ եռուղեղ էակները, գիտակցաբար կատարելագործեն իրենց ներկայության մեջ ներդրված «Բանականության սաղմերը», մինչև հասնեն Մաքուր Օբյեկտիվ Բանականության անհրաժեշտ աստիճանին:

Կրկնում եմ՝ առանց բացառության բոլոր ուղեղային համակարգերին պատկանող բոլոր մեծ ու փոքր էակները, որոնք սկզբնավորվում և գոյատևում են Երկրի վրա՝ լինեն դրանք ցամաքում, օդում թե ջրի տակ, հավասարապես պետք են մեր Ընդհանուր Արարչին Համայն Գոյի գոյություն ընդհանուր ներդաշնակության համար:

Եվ քանի որ թվարկված բոլոր տեսակի էակներն իրար հետ միասին հենց այն գործընթացի տեսակն են իրականացրել, որը պետք է մեր Արարչին Համայն Գոյի գոյության համար, ապա բոլոր էակների էությունները հավասարապես թանկ ու սիրելի են Նրան:

Մեր Ընդհանուր Արարչի համար բոլոր էակներն ընդամենը այն միասնական էության գոյության մաս են, որին հենց Ինքն է շունչ տվել:

Իսկ հիմա ի՞նչ ենք մենք տեսնում այստեղ:

Իր կողմից արարված էակների մի տեսակը, որոնց ներկայության մեջ Նա ներդրել է իր բոլոր հույսերն ու ակնկալիքները՝ կապված Համայն Գոյի ապագա բարօրության հետ, օգտվում է իր այդ առավելությունից և աջ ու ձախ նեղում ու ոչնչացնում է մյուս տեսակներին, դեռ ավելին, դա անում է իբր հանուն Նրա:

Ամենաահավորն այն է, որ թեև այդ աներևակայելի անաստված արարքն այստեղ գործվում է ամեն տան մեջ և ամեն հրապարակում, սակայն այդ թշվառներից որևէ մեկի գլխում երբևէ չի ծագում այն միտքը, որ այն էակները, որոնց ինքը կամ բոլոր իր նմաններն այժմ ոչնչացնում են, հավասարապես սիրելի են Այն Միակին, Ով դրանց արարել է, և որ եթե Նա նաև ուրիշ տեսակի արարածներ էլ է արարել, ինչպես մեզ, ապա երևի ինչ-որ մի նպատակ է ունեցել»:

Այս ամենը քուրմ Արդիլին ասելուց հետո ես շարունակեցի.

«Իսկ ամենացավալին այն է, որ յուրաքանչյուր մարդ, ոչնչացնելով ուրիշ էակների՝ ի փառս իր պաշտելի կուռքերի, դա անում է սրտանց և լիովին համոզված, որ «բարի գործ» է անում:

Ես լիովին վստահ եմ, որ եթե նրանցից որևէ մեկը գիտակցի, որ ուրիշի գոյությանը վերջ տալով ինքը ոչ միայն չար արարք է կատարում ճշմարիտ Աստծո և բոլոր իսկական Մրբերի դեմ, այլ նաև նրանց էությանը տրտմություն ու դառնություն է պատճառում այն առումով, որ Մեծ Տիեզերքում գոյություն ունեն «Աստծո պատկերով և նմանությամբ» ստեղծված հրեշ-էակներ, որոնք մեր Ընդհանուր Արարչի մյուս արարածների հետ այդքան անխիղճ ու դաժան են վարվում. կրկնում եմ՝ եթե նրանցից որևէ մեկը գիտակցեր դա, ապա ի սրտե այլևս չէր կամենա գոհամատուցման նպատակով վերջ տալ ուրիշ տեսակի որևէ էակի գոյությանը:

Այդ դեպքում գուցե Երկրի վրա կսկսեր իրականանալ մեր Ընդհանուր Արարչի 18-րդ պատվիրանը, որ ասում է. «Մեր տածեք այն ամենի նկատմամբ, ինչ շնչում է»:

Ուրիշ արարածների գոյությանը վերջ տալու ճանապարհով Աստծուն զոհ մատուցելը նման է այն բանին, որ ինչ-որ մեկը փողոցից ներխուժեր ձեր տունը և, ոչ այս, ոչ այն, սկսեր ոչնչացնել այն ամբողջ «բարիքը», որի ստեղծման համար դուք երկար տարիներով ջանք եք թափել ու տառապել:

Խորհեցե՛ք, բայց էլի անկեղծորեն, և մի պահ պատկերացրեք այն ամենը, ինչ հենց նոր ասացի և պատասխանե՛ք ինձ. նման արարքը ձեզ դուր կգա՞ր, և արդյո՞ք շնորհակալ կլինե՞իք այն անպատկառ ավազակին, որը ներխուժել է ձեր տուն:

Իհարկե՞ ո՛չ: Հազա՞ր անգամ՝ ո՛չ:

Ընդհակառակը՝ ձեր ողջ էությամբ դուք կբողոքե՞իք դրա դեմ, կուզենա՞յիք պատժել այդ ավազակին և ձեր հոգեկառույցի բոլոր նյարդալարերով կփորձե՞իք վրեժի միջոց գտնել:

Ամենայն հավանականությամբ դուք հիմա կպատասխանե՞իք այսպես, թեև դա իսկապես իրավացի կհնչեր. «Ես, ավա՞ դ, ընդամենը մարդ արարած եմ...»:

Դա ճիշտ է. դուք ընդամենը մարդ արարած եք: Եվ լավ է, Որ Աստված էլ Աստված է և մարդու պես վրիժառու ու չարամիտ չէ:

Անշուշտ, Նա ձեզ չի պատժի և վրեժ չի լուծի ձեզնից, ինչպես ինքներդ կվարվե՞իք այն ավազակի նկատմամբ, որը կոչնչացնե՞ր տարիներով կուսակած ձեր ողջ կարողությունն ու բարիքը:

Ինքնին հասկանալի է, որ Աստված ներում է ամեն ինչ, դա նույնիսկ օրենք է դարձել Համայն Աշխարհում:

Բայց Նրա արարածները, տվյալ դեպքում՝ մարդիկ, չպետք է չարաշահեն Նրա Ամենաբարեգութ և Ամենաթափանց Բարությունը. նրանք պետք է ոչ միայն հոգան Նրա բոլոր արարածների մասին, այլ նաև պահպանեն դրանց գոյությունը:

Իսկ այստեղ՝ Երկրի վրա, մարդիկ նույնիսկ բոլոր տեսակի արարածներին բաժանել են երկու խմբերի՝ մաքուրների և պիղծերի:

Ասացե՛ք խնդրեմ. ինչո՞ւ է նրանք առաջնորդվել նման բաժանում կատարելիս:

Ինչու՞, օրինակ, ոչխարը մաքուր է, իսկ առյուծը՝ պիղծ: Մի՞ թե երկուսն էլ հավասար չեն որպես արարածներ:

Դա էլ է մարդկանց կողմից հնարված բան: Իսկ ո՞րն է նման բաժանման պատճառը. պարզապես այն, որ ոչխարը շատ թույլ արարած է ու նաև հիմար, ուստի մարդիկ կարող են նրա հետ վարվել այնպես, ինչպես կուզենան: Իսկ առյուծին պիղծ են համարում միայն այն պատճառով, որ նրա հետ չեն կարող վարվել այնպես, ինչպես ուզում են:

Առյուծն ավելի խելոք է և, դեռ ավելին՝ ուժեղ է իրենցից: Առյուծը ոչ միայն թույլ չի տա, որ իրեն ոչնչացնեն, այլև նույնիսկ չի թողնի, որ մոտ գան իրեն: Եթե որևէ մի մարդ հանդգներ մոտենալ, ապա պարոն առյուծը թաթով այնպես կգարկեր այդ խիզախի գլխին, որ նրա կյանքը կթռչեր այնտեղ, որտեղ դեռևս չեն եղել «Ալբիոն կղզու բնակիչները»:

Ընդգծում եմ՝ առյուծը պիղծ է համարվում միայն այն պատճառով, որ մարդիկ վախենում են նրանից: Նա հարյուր անգամ բարձր և ուժեղ է մարդկանցից: Դե, իսկ ոչխարը մաքուր է, քանի որ անհամեմատ թույլ է նրանցից և, էլի եմ կրկնում, անհամեմատ հիմար է, քան նրանք:

Ամեն մի էակ, իր բնույթին և իր նախնիներից ժառանգած Բանականության աստիճանին համապատասխան, իր որոշակի տեղն է զբաղեցնում մնացած բոլոր տեսակի էակների շարքում:

Հենց նոր ասածիս բացատրության համար լավ օրինակ կարող է ծառայել ձեր շան և ձեր կատվի հոգեկառույցների արդեն որոշակիորեն բյուրեղացված ներկայությունների տարբերությունը:

Եթե շոյեք ձեր շանը և նրան վարժեցնեք ձեր ուզած ձևով, ապա նա հնազանդ ու բարեհաճ կլինի և նույնիսկ կհանդուրժի ձեր ստորացումները:

Նա ձեր հետևից կվազի և զանազան հնարքներ կբանեցնի, որպեսզի է՛լ ավելի հաճոյանա ձեզ:

Դուք կարող եք նրա հետ գլուխ չդնել, կարող եք ծեծել և ցավ պատճառել. մինևնույն է, նա ձեզ վրա չի հարձակվի, այլ միշտ կաշխատի ավելի շատ զգվել ձեզ:

Բայց հապա փորձեք նույնը անել կատվի հետ: Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք նա շան պես կհանդուրժի ձեր ծանակումները և հնազանդորեն հնարքներ կբանացնի, որպեսզի դուր գա ձեզ: Իհարկե՝ ոչ:

Կատուն, եթե նույնիսկ այնքան էլ ուժեղ չէ, որ անմիջապես ձեզ վարձահատույց լինի, երկար կհիշի ձեր վատ վերաբերմունքը և վաղ թե ուշ վրեժ կլուծի:

Օրինակ՝ ասում են, որ այնքան էլ քիչ չի պատահել, որ կատուն կրծի քնած մարդու կոկորդը: Ես լիովին կարող եմ հավատալ դրան՝ լավ իմանալով, թե կատուն ինչպիսի հիմքեր կարող է ունենալ նման բան անելու համար:

Չէ՛, կատուն ինքն իրեն կպաշպանի. նա լավ գիտե իր գինը. նա հպարտ է, քանի որ գիտե, որ ինքը կատու է և գտնվում է Բանականության ճիշտ այն աստիճանի վրա, որն իրեն բաժին է հասել իր արժանապատիվ նախնիներից:

Ամեն դեպքում, ոչ մի էակ և ոչ մի մարդ դրա համար չպետք է նեղանա կատվից:

Մի՞ թե մեղավոր է, որ կատու է և իր արժանապատիվ նախնիների շնորհիվ գտնվում է «ինքնագիտակցության» նման աստիճանի վրա:

Չարժե՛ ո՛չ նրան արհամարել, ո՛չ դնգստել, ո՛չ էլ, ընդհանրապես, վատ վերաբերվել նրա հետ: Ընդհակառակը, նրան պետք է արժանին մատուցել, որ «ինքնագիտակցության» սանդուղքի այդպիսի բարձր աստիճանի վրա է գտնվում»:

Իմիջիայլոց, սիրելի՛ զավակս, էակների փոխհարաբերությունների առիթով «Դեսագրոանսկրադ»¹¹² կոչվող մոլորակի նախնին նշանավոր մեծ մարգարե Առհունեդոսը¹¹³, որն այժմ համայն Տիեզերքի

¹¹² ռուս. տարբերակում՝ «Десagroанскрад», անգլ. տարբերակում՝ “Desagroanskrad”

¹¹³ ռուս. տարբերակում՝ «Архунило», անգլ. տարբերակում՝ “Arhoonilo”

Օբյեկտիվ Բարոյագիտության գծով գլխավոր հետազոտողի տեղակալն է, մի անգամ այսպես ասաց. «Եթե տվյալ էակն իր բանականությամբ բարձր է ձեզնից, ապա պետք է միշտ խոնարհվեք նրա առաջ և աշխատեք ամեն ինչով նմանվել նրան, իսկ եթե ձեզնից ցածր է կանգնած, ապա պետք է արարամիտ լինեք նրա նկատմամբ, քանի որ դուք էլ եք երբևէ նրա այդ աստիճանի վրա գտնվել՝ բանականության աստիճանավորման այն սրբազան չափին համապատասխան, որը սահմանել է բոլորիս Արարիչն ու Պահապանը»:

Այսպիսով, սիրելի՛ տղաս, իմ երկրային ընկերոջ վրա այդ վերջին գրույցն այնպիսի ուժեղ ազդեցություն գործեց, որ դրան հաջորդած երկու օրվա ընթացքում նա ոչինչ չէր անում, այլ միայն մտածում էր ու մտածում:

Կարճ ասած՝ այդ ամենի վերջնական արդյունքն այն եղավ, որ այդ քուրմ Աբդիլն ի վերջո գոհամատուցման սովորույթի նկատմամբ սկսեց այնպիսի զգացմունք տածել, ինչպիսին պետք է որ տածեր իրականում:

Մեր գրույցից մի քանի օր հետո ամբողջ Թիքլամիշում տոնում էին կրոնական տոներից մեկը՝ Զատիկը, և հենց այն տաճարում, որտեղ իմ ընկեր Աբդիլը գլխավոր քուրմ էր, փոխանակ տաճարի ծիսակատարությունը ավարտից հետո, սովորական քարոզ կարդալու, հանկարծ սկսեց խոսել գոհամատուցման մասին:

Այդ օրը ես էլ էի գտնվում այդ մեծ տաճարում և լսեցի նրա ճառը:

Թեև ճառի թեման անսովոր էր այդ դեպքի և այդ տեղի համար, այնուամենայնիվ այն ներկաների վրա ցնցող տպավորություն գործեց, քանի որ նա խոսում էր արտակարգ ճարտար ու գեղեցիկ:

Իրոք, նա այնքան լավ ու անկեղծ խոսեց և իր ճառում այնքան շատ համոզիչ ու վառ օրինակներ բերեց, որ նրա ելույթի ընթացքում Քուռկալա քաղաքի այն բնակիչները, որոնք ներկա էին այնտեղ, նույնիսկ սկսեցին հոնգուր-հոնգուր լաց լինել:

Նրա ասածներն այնքան ուժեղ տպավորություն թողեցին նրա հոտի վրա, որ թեև ճառը սովորական կես կամ մեկ ժամի փոխարեն երկարաձգվեց մինչև հաջորդ օրը, այնուամենայնիվ, նույնիսկ այն ժամանակ, երբ նա արդեն իր ճառն ավարտել էր, ոչ ոք չէր ուզում հեռանալ, և բոլորը քարացած կանգնել էին:

Դրանից հետո նրա ճառի առանձին հատվածները սկսեցին տարածվել նրանց միջև, ովքեր անձամբ չէին լսել այն:

Հետաքրքիր է նշել, որ, այն ժամանակվա ընդունված կարգի համաձայն, քրմերն իրենց գոյությունը պահպանում էին միայն տաճարի այցելուների բերած կերակուրներով, և Աբդիլը նույնպես իր սովորական գոյապահպանման համար այցելուներից ընդունում էր զանազան էակների, ինչպիսիք են՝ «հավերք», «ոչխարները», «սագերը» և այլն, եփած կամ տապակած «դիակներ»: Բայց նրա այդ նշանավոր ճառից հետո նրան այլևս նման բաներ չէին մատուցում, այլ նրա համար բերում կամ ուղարկում էին միայն մրգեր, ծաղիկներ, ձեռագործ աշխատանքներ և այլն:

Իր այդ ճառից մեկ օր անց իմ այդ երկրային ընկերն անմիջապես Քուռկալա քաղաքի բնակիչների համար «մոդայիկ քուրմ» դարձավ, և իբր քիչ էր, որ այն տաճարը, որում նա սպասավորում էր աստծուն, միշտ լեփ-լեցուն էր լինում Քուռկալա քաղաքի էակներով, նրան համոզեցին, որ ելույթ ունենա նաև քաղաքի մյուս տաճարներում:

Նա նման շատ ճառեր արտասանեց գոհամատուցման վերաբերյալ, և ամեն անգամվա հետ նրա երկրպագուների քանակն աճում էր ու աճում, այնպես որ շուտով նա հանրահայտ դարձավ ոչ միայն Քուռկալայի, այլ նաև ամբողջ Թիքլամիշի էակների համար:

Ես չգիտեմ, թե այդ ամենն ինչով կվերջանար, եթե ամբողջ քրմական դասը, որին պատկանում էր իմ այդ ընկերը, չսկսեր տագնապել և անհանգստանալ նրա այդ հանրահայտության պատճառով և չընդդիմանար այն ամենին, ինչ նա քարոզում էր:

Ակնհայտորեն նրա գործընկերները երկյուղում էին, որ եթե գոհամատուցման սովորույթը վերանա, կչքանան նաև իրենց հրաշալի եկամուտները, որից հետո իրենց իշխանությունը կսկսի թուլանալ և վերջնականապես կփլուզվի:

Օր օրի քուրմ Աբդիլի թշնամիների քանակն աճեց, և նրանք սկսեցին նրա մասին տարածել նորանոր բամբասանքներ ու գրպարտություններ, որպեսզի նվազեցնեն նրա համբավն ու հեղինակությունը:

Իրենց տաճարներում նրա գործընկերները էլույթ էին ունենում և ապացուցում այն բանի ճիշտ հակառակը, ինչ քարոզում էր Աբդիլը:

Ի վերջո բանը հասավ նրան, որ քրմերը սկսեցին կաշառել «տհասնամուսական»¹¹⁴ հատկություններ ունեցող էակների, որպեսզի վերջիններս կազմակերպված մահափորձեր կատարեն խեղճ Աբդիլի դեմ: Եվ իրոք, նշված հատկություններով օժտված այդ երկրային ոչնչությունները մի քանի անգամ փորձեցին վերջ տալ նրա գոյությանը՝ թույն շաղ տալով նրա համար որպես նվիրատվություն բերված կերակուրների վրա:

Չնայած այդ ամենին՝ նրա քարոզների երկրպագուների քանակն օր օրի շարունակում էր աճել:

Վերջիվերջո քրմական միաբանությունն այլևս չկարողացավ հանդուրժել նրա գոյությունը, և իմ այդ ընկերոջ համար ցավալի մի օր նրա դեմ համակեղեցական դատ կազմակերպվեց, որը տևեց չորս օր:

Համակեղեցական այդ ժողովի դատավճռով իմ այդ երկրային ընկերոջը ոչ միայն իսպառ հեռացրին քրմերի դասից, այլ նաև այդ ժողովի ընթացքում նրա գործընկերները նրան հետագա հալածանքների ենթարկելու եղանակներ մշակեցին:

Իհարկե, այդ ամենն աստիճանաբար սկսեց ուժեղ ազդել շարքային էակների հոգեկառույցի վրա, այնպես որ նույնիսկ նրա շրջապատում եղածներից նրանք, ովքեր նախկինում պաշտում էին նրան, նույնպես սկսեցին աստիճանաբար խուսափել նրանից և զանազան գրպարտական հորինվածքներ կրկնել նրա մասին: Եվ նույնիսկ նրանք, ովքեր դեռ երեկ ծաղիկներ ու զանազան նվերներ էին ուղարկում նրան, շատ շուտով, անընդհատ կրկնվող բամբասանքների ազդեցության տակ, վերածվեցին այնպիսի կատաղի թշնամիների, կարծես նա ոչ միայն վիրավորել էր իրենց, այլև կոտորել էր իրենց բոլոր հարազատներին:

Ահա այդպիսին է այդ յուրօրինակ մոլորակի էակների հոգեկառույցը:

Կարճ ասած, շրջապատողներին անկեղծորեն բարին կամենալու պատճառով իմ այդ բարի ընկերը շատ տառապանքներ կրեց: Գուցե այդքանի վրա կարելի կլիներ և աչք փակել, եթե իմ այդ ընկերոջ գործընկերների և իրեն շրջապատող երկրային «աստվածաման» էակների ծայրահեղ անգիտակացականությունը չհանգեր վերջնական հանգուցալուծման. նրան պարզապես սպանեցին:

Դա տեղի ունեցավ հետևյալ կերպ:

Քուռկալա քաղաքում այդ ընկերս հարազատներ չունեի, քանի որ ծնունդով ինչ-որ հեռավոր վայրից էր: Իսկ ինչ վերաբերում է հարյուրավոր ծառաներին և մյուս երկրային սովորական ոչնչություններին, որոնք իր նախկին դիրքի շնորհիվ շրջապատում էին նրան, ապա դրանք բնականաբար կամաց-կամաց, լքել էին նրան, քանի որ ընկերս նախկին կշիռը չունեի:

Վերջում նրա կողքին ընդամենը մի ծեր էակ էր մնացել, որը շատ երկար ժամանակ ծառայել էր նրան: Ճիշտը որ ասենք, այդ ծերուկն էլ նրա մոտ մնացել էր իր այն գառամ վիճակի պատճառով, որին հասնում են այնտեղի բոլոր էակները իրենց աննորմալ լինելիական գոյության պատճառով, այսինքն՝ լինելիական գոյատևման այնտեղի պայմաններում իրենցից պահանջվող որևէ բանի պիտանի չլինելու պատճառով:

Ծերունին այլևս ուրիշ գնալու տեղ չունեի, դրա համար էլ չէր լքում ընկերոջս նույնիսկ այն ժամանակ, երբ նա լրիվ գրկվել էր իր դիրքից և ենթարկվում էր հալածանքների:

Մի տխուր առավոտ մտնելով ընկերոջս սենյակը՝ ծերունին տեսնում է, որ նա սպանված է, իսկ մոլորակային մարմինը՝ կտոր-կտոր արված:

Գիտենալով, որ ես նրա ընկերն եմ, ծերունին անմիջապես եկավ ու հայտնեց ինձ այդ մասին:

Ես արդեն քեզ ասել եմ, որ արդեն սկսել էի սիրել այդ ընկերոջս՝ որպես իմ մտերիմներից մեկին: Ուստի, երբ ես իմացա այդ ահավոր փաստը, իմ ողջ ներկայության մեջ քիչ էր մնում «սկինիկուոնարձին»¹¹⁵ տեղի ունենար, այսինքն՝ մի գործընթաց, երբ խափանվում է առանձին լինելիական կենտրոնների միջև եղած կապը:

Սակայն ես մտավախություն ունեի, որ օրվա ընթացքում հենց նույն կամ ուրիշ տգետ էակներ կարող են նոր անարգանքների ենթարկել իմ ընկերոջ մոլորակային մարմինը, ուստի որոշեցի գոնե նման հնարավորության առաջն առնել:

¹¹⁴ ռուս. տարբերակում՝ «хаснамусские», անգլ. տարբերակում՝ “hasnamussian”

¹¹⁵ ռուս. տարբերակում՝ «Скиникунарцино», անգլ. տարբերակում՝ “skinikoonartsino”

Այդ նպատակով, բարձր գին տալով մի քանի հարմար էակներ վարձեցի և, ոչ ոքի ոչինչ չասելով, ընկերոջս մոլորակային մարմինը ժամանակավորապես տեղափոխեցի իմ սելչանը, այսինքն՝ լաստը, որը կայանված էր մոտակայքում, Օքսոսերիա գետի վրա, և որը հատուկ պահել էի, որպեսզի դրանով լողամ դեպի Կոլխիդյան ծով ու հասնեմ «Պատահար» տիեզերանավին:

Իմ ընկերոջ այդ ցավալի վախճանը չխանգարեց, որպեսզի զոհամատուցման սովորույթին վերջ տալու նրա քարոզներն ու համագմունքներն ուժեղ ազդեն շատերի, նույնիսկ շատ շատերի վրա:

Եվ իրոք, զոհամատուցման նպատակով սպանությունների քանակը սկսեց զգալիորեն նվազել, և կարելի էր նկատել, որ եթե նույնիսկ այդ սովորությունը ժամանակի ընթացքում լրիվ չվերանա, ապա գոնե բավականին կթուլանա:

Իսկ դա ինձ համար առայժմ բավարար արդյունք էր:

Քանի որ այլևս այդտեղ մնալու պատճառ չունեի, որոշեցի վերադառնալ Կոլխիդյան ծով և այնտեղ մտածել, թե հետո ինչպես վարվեմ իմ ընկերոջ մոլորակային մարմնի հետ:

Երբ հասա «Պատահար» նավը, այնտեղ արդեն Մարսից եթերագիր ստացվել, որով ինձ հայտնում էին, որ Մարսի վրա Քարատակի էակների նոր խումբ է ժամանել, ուստի ցանկալի է, որ շտապ վերադառնամ Մարս:

Այդ եթերագրի շնորհիվ իմ գլխում մի անսովոր միտք ծագեց, այն է՝ փոխանակ իմ ընկերոջ մարմինը հողին հանձնեմ Երկիր մոլորակի վրա, կարող եմ ինձ հետ տանել և այն հանձնել Մարս մոլորակի ներկայությունը:

Ես որոշեցի այդ գաղափարն իրականացնել, քանի որ մտավախություն ունեի, որ իմ ընկերոջ նկատմամբ ստելությունը համակված նրա թշնամիները կարող են որոնել այդ մոլորակային մարմինը, և եթե այն իրենց մոլորակի վրա որևէ տեղ, ինչպես իրենք են ասում, «թաղված» գտնեն, անշուշտ դուրս կհանեն հողից և կանարգեն այն:

Եվ այսպես, Կոլխիդյան ծովից ես շուտով «Պատահար» նավով թռա դեպի Մարս, որտեղ մեր էակներն ու մի քանի բարի մարսեցիներ, որոնք արդեն տեղյակ էին Երկրի վրա տեղի ունեցած իրադարձությունների մասին, հարկ եղած պատիվը տվեցին այն մոլորակային մարմնին, որն ինձ հետ տարել էի Մարս:

Նրանք այդ մարմինը թաղեցին Մարս մոլորակի սովորական ծիսակարգով, և այդ տեղում համապատասխան շինություն կառուցեցին:

Ինչ որ է, դա եղավ առաջին և, անկասկած, կլինի վերջին երկրացու, ինչպես իրենք են ասում, «գերեզմանը», որը երկրացիներն ունեցան իրենց Երկիր մոլորակին այդքան մոտ գտնվող, բայց իրենց համար բոլորովին անմատչելի Մարս մոլորակի վրա:

Ես հետագայում իմացա, որ այդ պատմությունը հասել է մինչև Նորին Համայնապահություն Մեծագույն Հրեշտակապետ «Մետրենոցինարկոյին»¹¹⁶՝ Տիեզերքի այն հատվածի Բոլոր Քառույրտների Պահապանին, որին պատկանում է նաև Արգ համակարգությունը, և Նա հավանություն է տվել՝ ում որ հարկն է հանձնարարականներ տալով իմ այդ երկրային ընկերոջ հոգու վերաբերյալ:

Մարս մոլորակի վրա իսկապես ինձ սպասում էին մեր ցեղի մի քանի էակներ, որոնք նոր էին ժամանել Քարատակ մոլորակից: Իմիջիպայոց, նոր եկածների մեջ էր նաև քո տատիկը, որը, Քարատակ մոլորակի գլխավոր Զըռլիկների¹¹⁷ որոշմամբ, ընտրվել էր որպես իմ պասիվ կեսը՝ տոհմիս շարունակման համար»:

¹¹⁶ ռուս. տարբերակում՝ «Сетреноцинарко», անգլ. տարբերակում՝ “Setrenotsinarko”

¹¹⁷ ռուս. տարբերակում՝ «Зирликнеров», անգլ. տարբերակում՝ “zirlikner”. ենթադրում եմ՝ ծերակույտի կամ ավագանու անդամներ

ԳԼՈՒԽ Ի
Բեհեղզեբուղի երրորդ թոփշը
դեպի Երկիր մուտրակ

Մի փոքր լռելուց հետո Բեհեղզեբուղը շարունակեց պատմել հետևյալը.

«Այս անգամ ես իմ տանը, այսինքն՝ Մարս մուտրակում, շատ քիչ մնացի՝ միայն այնքան, որ հասցնեմ հանդիպել ու գրուցել նոր եկածների հետ և տալ համացեղային բնույթի որոշ ցուցումներ:

Նշածս գործերը վերջացնելուց հետո ես նորից վայրէջք կատարեցի քո այդ մուտրակի վրա՝ նպատակ ունենալով հասնել իմ խնդրի վերջնական լուծմանը, այն է՝ այդ արտառոց եռակենտրոն էակների միջից արմատախիլ անել այն ահավոր սովորույթը, որով նրանք իբր աստվածահաճո գործ էին կատարում՝ վերջ տալով ուրիշ ուղեղային համակարգ ունեցող էակների գոյությանը:

Այս անգամ «Պատահար» տիեզերանավը վայրէջք կատարեց ոչ թե Կոլխիդյան ծովի վրա, որը հիմա Կասպից է կոչվում, այլ մի ուրիշ ծովի վրա, որին այն ժամանակ «Բարեգթության ծով» էին անվանում:

Մենք որոշեցինք այդ ծովի վրա իջնել այն պատճառով, որ այնտեղից այս անգամ ուզում էի մեկնել դեպի Աշխարհք աշխարհամասի էակների երկրորդ խմբի մայրաքաղաքը, որն այն ժամանակ Գոբ էր կոչվում և գտնվում էր այդ ծովի հարավ-արևելյան ափին:

Գոբն այն ժամանակ մեծ քաղաք էր և ամբողջ մուտրակում հայտնի էր իր լավագույն գործվածքներով և լավագույն, այսպես կոչված, «թանկարժեք զարդեղենով»: Քաղաքը փոված էր Բարեգթության ծով թափվող մեծ գետի գետաբերանների երկու հովիտներում: Այն սկիզբ էր առնում այդ երկրի արևելյան կողմում գտնվող լեռներից և կոչվում էր «Կերյա-չի»:

Մի ուրիշ մեծ գետ Բարեգթության ծով էր թափվում դրա արևմտյան մասից և կոչվում էր «Նարյա-չի»:

Հենց այդ երկու գետերի հովիտներում էլ բնակվում էր Աշխարհք աշխարհամասի էակների երկրորդ խումբը:

Եթե ուզում ես, սիրելի՛ զավակս, ես մի փոքր կպատմեմ Աշխարհք աշխարհամասի այդ երկրորդ խմբի էակների ծագման պատմությունից»,- դիմեց Բեհեղզեբուղը Հասեինին:

– Այո՛, պապիկ, ուզո՞ւմ եմ: Ես քեզ կլսեմ մեծ հետաքրքրությամբ ու մեծ երախտագիտությամբ,– պատասխանեց թոռը:

Այնժամ Բեհեղզեբուղը պատմեց.

«Դեռևս այն ժամանակից շատ առաջ, որին վերաբերում է իմ ներկա պատմությունը, այսինքն՝ այդ չարաբաստիկ մուտրակի երկրորդ մեծ արհավիրքից շատ առաջ, երբ Ատլանտիդան դեռ գոյություն ուներ և գտնվում էր իր շքեղության ծաղկման շրջանում, այդ աշխարհամասի շարքային եռուղեղ էակներից մեկը մի անգամ «գյուտ արեց» (ես դա հետագայում պարզեցի իմ մանրակրկիտ հետազոտությունների շնորհիվ), որ որոշակի արտաքին տեսք ունեցող և այն ժամանակ «պիրմարալ¹¹⁸» կոչվող էակի պոզի մանրացված փոշին շատ գործուն կերպով օգնում է ամենատարբեր, այսպես կոչված, «հիվանդություններից» ազատվելուն: Այդ «գյուտը» դրանից հետո, զանազան «ցնդածների» ջանքերով, լայն տարածում գտավ քո այդ մուտրակում: Դրան զուգընթաց այնտեղի սովորական էակների բանականության մեջ աստիճանաբար բյուրեղանում էր մի երևակայական տիրապետող գործոն, որով, իմիջիայլոց, քո սիրելիներից ամեն մեկի ներկայության մեջ, հատկապես՝ ժամանակակիցների, ձևավորվում էր իրենց, այսպես կոչված, «արթմնի վիճակի» բանականությունը, և այդ գործոնը նրանց կուտակված համոզմունքների հաճախակի փոփոխման հիմնական պատճառն էր:

Իրենց ներկայության մեջ բյուրեղացված հենց այդ գործոնի հետևանքով էր, որ քո այդ մուտրակի եռուղեղ էակներն այն ժամանակ իրենց համար կանոն էին դարձրել, որ եթե ինչ-որ մեկը «հիվանդացել է» այս կամ այն հիվանդությամբ, ապա նրան անպայման պետք է մանրացված պոզի այդ փոշուց տալ, որ կուլ տա ու լավանա:

¹¹⁸ ռուս. տարբերակում՝ «пирмарал», անգլ. տարբերակում՝ “pirmaral”

Անհետաքրքիր չի լինի նշելը, որ պիրմարալները հիմա էլ են բազմանում այդ մոլորակի վրա, բայց չունեն իրենց առանձնահատուկ անունը, քանի որ ժամանակակից էակները դրանց պարզապես համարում են այն կենդանու մի տարատեսակը, որին իրենք հիմա «եղջերու» են անվանում:

Եվ այսպես, զավա՛կս, քանի որ Ատլանտիդա աշխարհամասի էակներն այդ տեսակի կենդանուց անչափ շատ ոչնչացրին դրանց պոզերը ձեռք գցելու նպատակով, ապա դրանք շատ շուտով իսպառ վերացան այնտեղ:

Այնժամ այդ աշխարհամասի որոշ էակներ, որոնք մասնագիտացել էին այդ կենդանիներին որսալու մեջ, ստիպված եղան դրանց փնտրել ուրիշ աշխարհամասերում ու կղզիներում:

Պիրմարալներ որսալը շատ դժվար գործ էր, քանի որ այդ որսին միանգամից շատ որսորդ-էակներ պետք է մասնակցեին. ուստի նրանք այդ գործն անում էին ամբողջ ընտանիքներով:

Մի անգամ մի քանի այդպիսի ընտանիքներ հավաքվեցին և պիրմարալի որսի նպատակով հասան մինչև հեռավոր մի աշխարհամաս, որն այն ժամանակ «Իրանան»¹¹⁹ էր կոչվում, իսկ հետագայում, երբ երկրորդ արհավիրքի հետ կապված փոփոխությունները տեղի ունեցան, այն անվանվեց «Աշխարհք» աշխարհամաս:

Դա հենց այն նույն աշխարհամասն էր, որը հիմա քո ժամանակակից սիրելիներն անվանում են «Ասիա»:

Քո հետաքրքրությունը շարժած այդ եռուղեղ էակներին վերաբերվող իմ հետագա պատմությունների համար, կարծում եմ, օգտակար կլինի, եթե այստեղ հատուկ ընդգծեմ, որ երկրորդ արհավիրքին ուղեկցած զանազան տեղաշարժերի հետևանքով Իրանան աշխարհամասի որոշ հատվածներ սուղվեցին մոլորակի ընդերքը, որից հետո ցամաքի նոր հատվածներ առաջացան և կցվեցին այդ աշխարհամասին, ինչի արդյունքում այն զգալիորեն կերպափոխվեց և դարձավ նույնքան մեծ չափերով աշխարհամաս, ինչպիսին Երկիր մոլորակի համար Ատլանտիդան էր՝ նախքան արհավիրքը:

Եվ ահա, տղա՛ս, այն ժամանակ այդ որսորդական ընտանիքների խումբը մի անգամ, հետապնդելով պիրմարալների նախիրը, հասավ մինչև այն ջրային տարածքի ափերը, որն ավելի ուշ անվանվեց Բարեգթության ծով:

Ե՛վ ծովը, և՛ դրա հարուստ ու բարեբեր ափերն այնքան դուր եկան որսորդների խմբին, որ նրանք այլևս չկամեցան վերադառնալ Անտլանտիդա աշխարհամաս և, այդ ժամանակվանից սկսած, հաստատվեցին այդ ծովի ափերին:

Այդ երկրամասն այն ժամանակ իրոք այնքան հրաշագեղ և այնքան «սուրբտաննման»¹²⁰ էր ամեն մի սովորական լինելիական գոյության համար, որ չէր կարող դուր չգալ որևէ բանական էակի:

Քո այդ մոլորակի ցամաքային մակերևույթի այդ մասի վրա այն ժամանակ կային ոչ միայն երկուղեղ էակի այդպիսի արտաքին տեսք ունեցող կենդանիների՝ պիրմարալների՝ հսկա նախիրներ, այլև այդ ջրային տարածքի շուրջ կային բազմաթիվ զանազան մրգատու ծառեր, որոնց պտուղները դեռ այն ժամանակվանից «առաջին լինելիական սնունդ» էին ծառայում քո սիրելիների համար:

Այնքան շատ կային նաև միաուղեղ և երկուղեղ այն էակներից, որոնց քո սիրելիները «թռչուն» են անվանում, որ երբ դրանց երամներն օդ էին բարձրանում, ինչպես քո սիրելիներն են ասում, «երկինքը խավարում էր»:

Այդ երկրամասի կենտրոնում գտնվող և Բարեգթության ծով կոչվող ջրային տարածքն այնքան առատ էր ձկներով, որ դրանցից հանգիստ կարելի էր բռնել, ինչպես իրենք են ասում, «համարյա մերկ ձեռքերով»:

Իսկ ինչ վերաբերում է հողերին, որոնք տեղաբաշխված էին Բարեգթության ծովի առափնյա տարածքներում և դրա մեջ թափվող երկու գետերի հովիտներում, ապա դրանց ցանկացած հատվածը կարելի էր հեշտորեն հարմարեցնել ցանկացած բույս աճեցնելու համար:

Կարճ ասած՝ ինչպես այդ երկրամասի կլիման, այնպես էլ մնացած ամեն ինչն այնքան դուր եկան այդ որսորդներին և նրանց ընտանիքներին, որ, ինչպես արդեն ասացի, ոչ ոք այլևս Անտլանտիդա աշխարհամաս վերադառնալու որևէ ցանկություն չէր դրսևորում. այդ ժամանակից սկսած՝ նրանք

¹¹⁹ ռուս. տարբերակում՝ «Иранан», անգլ. տարբերակում՝ “Iranan”

¹²⁰ ռուս. տարբերակում՝ «сунтаниальной», անգլ. տարբերակում՝ “sooptanialnian”

մնացին այդտեղ և, շատ շուտով հարմարվելով տեղի պայմաններին, սկսեցին բազմանալ ու գոյատևել «անհոգ ու երջանիկ»:

Իմ պատմության այս մասում ես պետք է քեզ տեղյակ պահեմ նաև մի շատ անսովոր գուգադիպության մասին, որը հետագայում լուրջ հետևանքներ ունեցավ ինչպես այդ երկրորդ խմբի առաջին էակների, այնպես էլ մինչև վերջին ժամանակներ հասած նրանց հետևորդների համար:

Պարզվում է, որ այն ժամանակ, երբ հիշյալ որսորդներն Ատլանտիդա աշխարհամասից եկան հասան Բարեգթության ծովի ափերին և որոշեցին այդտեղ բնակություն հաստատել, նույն այդ ծովի ափերին արդեն Ատլանտիդայից եկած մի էակ գոյություն ուներ: Այն ժամանակվա պատկերացումներով այդ էակը շատ նշանավոր էր և պատկանում էր «աստղասովորների»¹²¹ աղանդին. նա մի գիտական միավորման անդամ էր, որի նմանը մինչև այժմ այլևս չի եղել Երկիր մոլորակի վրա և, հավանաբար, այլևս չի էլ լինի:

Այդ գիտական ընկերությունն այն ժամանակ կոչվում էր «Ախալդան»¹²²:

Ախալդանի այդ անդամը Բարեգթության ծովի ափերին հայտնվել էր հետևյալ հանգամանքներում:

Անմիջապես երկրորդ մեծ արհավիրքին նախորդող ժամանակահատվածում Ատլանտիդայում գոյություն ունեցող իրապես գիտուն էակները, որոնք իրոք խոշոր նշանակության գիտական միաբանություն էին ստեղծել, ինչ-որ ձևով իմացել էին, որ բնության մեջ ինչ-որ շատ լուրջ բան պետք է կատարվի, ուստի սկսել էին մանրագնին դիտել իրենց աշխարհամասում տեղի ունեցող բոլոր երևույթները, բայց, որքան էլ ջանում էին, չէին կարողանում պարզել, թե հատկապես ինչ պետք է տեղի ունենա:

Որոշ ժամանակ անց նրանք իրենց միաբանության մի քանի անդամների այդ նպատակով ուղարկում են ուրիշ աշխարհամասեր ու կղզիներ, որպեսզի ընդհանրական դիտումների օգնությամբ հնարավորություն ստանան պարզելու, թե ինչ պետք է տեղի ունենա:

Ուղարկված անդամները ոչ միայն Երկիր մոլորակի բնության երևույթները պետք է դիտեին, այլև ամեն տեսակի, ինչպես իրենք էին ասում, «երկնային երևույթները»:

Այդ անդամներից մեկը՝ հիշյալ նշանավոր էակը, որն իր դիտումների վայր էր ընտրել Իրանան աշխարհամասը և, իր սպասավորների հետ տեղափոխվելով այնտեղ, հիմնավորվել էր հիշյալ ջրային տարածքի ափերին, որը հետո անվանվեց Բարեգթության ծով:

Եվ Ախալդան միաբանությանը պատկանող այդ գիտուն այրը մի անգամ, պատահաբար, հիշյալ Բարեգթության ծովի ափին հանդիպում է մի քանի որսորդների և տեղեկանալով, որ նրանք նույնպես Ատլանտիդա աշխարհամասից են եկել, շատ է ուրախանում և սկսում նրանց հետ կապ պահպանել:

Եվ երբ դրանից որոշ ժամանակ անց Ատլանտիդա աշխարհամասն ամբողջությամբ սուզվում է Երկրի ընդերքը, Ախալդանի այդ գիտնականն այլևս վերադառնալու տեղ չի ունենում և որսորդների հետ միասին շարունակում է ապրել հետագայում Պախրակարան կոչված այդ տարածքում:

Այնուհետև որսորդների խումբն այդ գիտուն էակին՝ որպես իրենց միջի ամենախելոքի, առաջնորդ է ընտրում, իսկ ավելի ուշ Ախալդան մեծ միաբանության այդ անդամն ամուսնանում է որսորդներից մեկի աղջկա հետ, որի անունը Ռիմալա էր. դրանից հետո նրա հետագա ողջ կյանքն անցնում է Իրանան աշխարհամասը բնակեցրած այդ երկրորդ խմբի էակների հետ, որոնց երկիրն այժմ կոչվում է «Ասիա»:

Շատ ժամանակ անցավ:

Երկիր մոլորակի այդ վայրում ապրող էակներն առաջվա պես ծնվում ու ոչնչանում էին, և դրանով իսկ այդ երկրային էակների հոգեկառույցի ընդհանուր մակարդակը փոխվում էր, երբեմն՝ դեպի լավը, երբեմն՝ դեպի վատը:

Բազմանալով՝ այդ էակներն աստիճանաբար այդ երկրամասում տարածվեցին ավելի ու ավելի հեռու, թեև միշտ գերադասում էին ապրել Բարեգթության ծովի ափերին և այդ ծովը թափվող նշածս մեծ գետերի հովիտներում:

Անհամեմատ ավելի ուշ շրջանում նրանց սովորական գոյատևման կենտրոնը կազմավորվեց ծովի հարավ-արևելյան ափին և կոչվեց Գոբ քաղաք: Այդ քաղաքը նաև Աշխարհք աշխարհամասի երկրորդ խմբի էակների ղեկավարի հիմնական բնակության վայրն էր, որին իրենք «արքա» էին կոչում:

¹²¹ ռուս. տարբերակում՝ «Астросовор», անգլ. տարբերակում՝ “astrosovor”

¹²² ռուս. տարբերակում՝ «Ахалдан», անգլ. տարբերակում՝ “Akhldanns”

Արքայի պարտականություններն այստեղ նույնպես փոխանցվում էին ժառանգաբար, և դա սկիզբ առավ հենց այն հիշյալ գիտուն այրից, որն Ախալքան միաբանության անդամ էր:

Այն ժամանակ, որին վերաբերում է իմ սկսած այս գրույցը, այդ երկրորդ խմբի էակների արքան նրա ծոռի թոռն էր՝ «Կոնյուցիոն»¹²³ անունով:

Իմ վերջին մանրագնին հետազոտություններն ու ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ Կոնյուցիոն արքայի կողմից չափազանց իմաստուն և վերին աստիճանի օգտակար միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի ճակատագրի կամոք իր հպատակները դարձած էակների միջից արմատախիլ արվի ահավոր մի չարիք: Նշածս վերին աստիճանի իմաստուն և օգտակար միջոցառումները նա իրականացրել է հետևյալ պատճառով:

Կոնյուցիոն արքան մի անգամ իր համար փաստեց, որ իր հանրության էակներն ավելի ու ավելի անաշխատունակ են դառնում, և նրանց մեջ աճում է հանցավորությունը՝ կողոպուտները, բռնությունները և նմանատիպ այլ բաներ, որոնք նախկինում կա՛մ երբեք չէին լինում, կա՛մ էլ լինում էին կատարելապես բացառիկ դեպքերում:

Ստեղծված իրավիճակը զարմացրեց և միաժամանակ տրտմեցեց Կոնյուցիոն արքային, ուստի նա, երկար մտորելուց հետո, որոշեց անպայման պարզել այդ ցավալի երևույթի պատճառը:

Երկարատև դիտարկումներից հետո նա վերջապես իր համար պարզեց, որ այդ երևույթի պատճառն իր հանրության էակների նոր սովորությունն է, այն է՝ նրանք սկսել էին ծամել «գյուլգյուլյան»¹²⁴ կոչվող ծաղկի սերմերը: Այդ մոլորակային բուսատեսակը հիմա էլ է աճում Երկիր մոլորակի երեսին, և քո այն սիրելիները, որոնք իրենք իրենց «ույալ» են համարում, դրան անվանում են «պապավերուն»¹²⁵, իսկ շարքային էակները՝ պարզապես «կակաչ»:

Հարկ է այստեղ անպայման նշել, որ Պախրակարանի էակները մոլուցք էին ձեռք բերել ծամելու այդ բուսատեսակի սերմերը, որոնք պետք է հավաքվեին միայն այդ բույսի հասուն շրջանում:

Իր հետագա մանրակրկիտ դիտումների ու քննարկումների ընթացքում Կոնյուցիոն արքան հստակ հասկացավ, որ այդ սերմերն «ինչ-որ բան» են պարունակում իրենց մեջ, որը ժամանակավորապես լիովին փոխում է այն էակների հոգեկառույցում հաստատված սովորությունները, որոնք ընդունում են այն «ինչ-որ բանը, և դրա արդյունքում նրանք տեսնում, հասկանում, զգում, ընկալում և վարվում են բոլորովին ուրիշ կերպ, քան նախքան դա անելը:

Օրինակ՝ ագռավը նրանց աչքին սիրամարգ է երևում, տաշտով ջուրը՝ ծով, շխկոց-թիկոցը՝ երաժշտություն, բարյացկամությունը՝ թշնամություն, վիրավորանքը՝ սեր և այլն, և այլն:

Երբ Կոնյուցիոն արքան լիովին համոզվեց դրանում, իր հավատարիմ ու վստահելի հպատակների միջոցով ամենուրեք իր անունից հրաման առաքեց, որ իր հանրության էակներն այլևս հիշյալ բույսի սերմերը չծամեն: Նա նաև պատիժ ու տուգանք սահմանեց նրանց համար, ովքեր չեն ենթարկվի իր հրամանին:

Այդ միջոցառման շնորհիվ, սկզբում թվում էր, թե Պախրակարանում այդ սերմից ծամողների թիվը պակասում է, բայց շատ շուտով պարզվեց, որ այդ թիվը ոչ միայն չի պակասում, այլ դեռ մի բան էլ ավելանում է:

Իմանալով այդ՝ իմաստուն Կոնյուցիոն արքան որոշեց ավելի խիստ պատիժ սահմանել նրանց համար, ովքեր կշարունակեն ծամել բացի այդ, նաև ուժեղացրեց հսկողությունն ինչպես հպատակների, այնպես էլ մեղավորներին պատժելու պահանջված խստության վրա: Նաև անձամբ սկսեց շրջագայել Գոբ քաղաքում, անձամբ հարցաքննել մեղավորներին և նրանց զանազան ֆիզիկական ու բարոյական պատիժների դատապարտել:

Չնայած այդ ամենին՝ նա ցանկալի արդյունքի չհասավ: Հենց բուն Գոբ քաղաքում ծամողների թիվն ավելանում էր ու ավելանում, էլ չասած, որ այդ թվի աճման մասին ամեն օր իրեն տեղեկություններ էին հասնում նաև իր տիրության մնացած տարածքներից:

Պարզ դարձավ, որ ծամողների թիվն ավելանում է նաև այն պատճառով, որ այն եռուղեղ էակները, որոնք նախկինում այդ արատը չունեին, սկսում են ծամել զուտ հետաքրքրասիրությունից դրդված, ինչը քո հետաքրքրությունը շարժած մոլորակի եռուղեղ էակների հոգեկառույցի

¹²³ ռուս. տարբերակում՝ «Конузюн», անգլ. տարբերակում՝ “Koniution”

¹²⁴ ռուս. տարբերակում՝ «гулгулян», անգլ. տարբերակում՝ “gulgulian”

¹²⁵ ռուս. տարբերակում՝ «папаверун», անգլ. տարբերակում՝ “papaveroon”

առանձնահատկություններից մեկն է. նրանք պարզապես ուզում էին իմանալ, թե ինչ ազդեցություն է գործում այդ սերմը ծամելը, որ արքան այդպիսի համառությամբ ու անխիղճ խստությամբ արգելում է դա և պատժում դրա համար:

Ես պետք է այստեղ ընդգծեմ, որ նշված առանձնահատկությունը քո սիրելիների մոտ սկսել էր բյուրեղանալ Ատլանտիդայի կործանումից անմիջապես հետո, սակայն նախորդ դարաշրջաններում նրանցից ոչ մեկի մոտ այն այսքան ընդգծված չի գործել, որքան ժամանակակից եռուղեղ էակների մոտ է դա դրսևորվում. սրանց մոտ հետաքրքրասիրությունն ավելի առատ է, քան թզուկի մարմնի վրայի մազերը:

Ահա այդպես, զավա՛կս...

Երբ իմաստուն արքա Կոնյուցիոնն ի վերջո լիովին համոզվեց, որ գյուլգյուլյանի սերմ ծամելու մոլուցքը նման մեթոդներով հնարավոր չէ վերացնել, դեռ ավելին՝ դրանց միակ արդյունքը եղավ ընդամենը մի քանի պատժվածների մահը, ապա դադարեցրեց այդ միջոցների կիրառումը և կրկին սկսեց լրջորեն մտորել, որպեսզի իր հանրության համար ողբալի դարձած այդ չարիքի դեմ մի ուրիշ գործուն միջոց գտնի:

Ինչպես շատ ավելի ուշ իմացա շատ հնուց պահպանված մի հուշարձանի շնորհիվ՝ մեծ արքա Կոնյուցիոնը մտել է իր կացարանը և, ամբողջ տասնութ օր ոչինչ չուտելով ու չխմելով, շատ լրջորեն միայն մտածել է ու մտածել:

Ամեն դեպքում այստեղ հարկ է նշել, որ իմ այդ հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կոնյուցիոն արքան հատկապես մտահոգված էր ու շահագրգռված այդ չարիքը վերացնելու հարցով, քանի որ նրա հանրության գործերը գնալով վատանում էին:

Ծամելու այդ կիրքն ունեցող էակները համարյա չէին աշխատում. արքայական գանձարան մուտք գործող փողերի հոսքը լրիվ դադարել էր, և հանրության վերջնական սնանկացումն արդեն անխուսափելի մի բան էր թվում:

Ի վերջո իմաստուն արքան որոշեց այդ չարիքի հախից գալ կողմնակի ճանապարհով, այն է՝ խաղալով իր հանրության էակների հոգեկառույցի թուլությունների վրա: Այդ նպատակով նա հնարեց մի ինքնատիպ «կրոնական ուսմունք», որը համապատասխանում էր այդ ժամանակվա էակների հոգեկառույցին, և սկսեց իր այդ գյուտն իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով լայնորեն տարածել իր հպատակների միջավայրում:

Ամեն ինչից գատ՝ այդ կրոնական ուսմունքում խոսվում էր այն մասին, որ մեր Աշխարհք աշխարհամասից շատ հեռու կա մի կղզի, որտեղ ապրում է ինքը՝ «պարոն Աստված»:

Պետք է ասեմ քեզ, որ այն ժամանակ շարքային էակներից ոչ ոք չգիտեր, որ իրենց Երկիր մոլորակից բացի գոյություն ունեն նաև այլ տիեզերական խտացումներ:

Երկիր մոլորակի այն ժամանակվա էակները նույնիսկ համոզված էին, որ հեռու տարածության մեջ հազիվ երևացող «սպիտակ կետերն» ընդամենը նախազգարողներ են «աշխարհի ծածկոցի» վրա, իսկ որպես «աշխարհ» նկատի ունեին միայն իրենց մոլորակը. այդպիսին էր նրանց աշխարհընկալումն այն ժամանակ:

Նրանք նաև համոզված էին, որ այդ «ծածկոցը» ամպհովանու պես պահվում է հատուկ սյուների վրա, որոնց հիմքերն իրենց մոլորակի վրա են:

Իմաստուն Կոնյուցիոն արքայի այդ սրամիտ ու ինքնատիպ կրոնական ուսմունքում նաև ասվում էր, որ պարոն Աստված դիտմամբ մեր հոգիներին ամրացրել է օրգաններ և վերջույթներ, որպեսզի մեզ պաշտպանի շրջապատի միջավայրից և մեզ հնարավորություն տա, որ ծառայենք ինչպես անձամբ Իրեն, այնպես էլ այն հոգիներին, որոնք արդեն տարվել են Իր կղզին:

Երբ մենք մահանում ենք, և մեր հոգին ազատվում է իր վրա ամրացված բոլոր օրգաններից ու վերջույթներից, նա դառնում է այնպիսին, ինչպիսին իրականում պետք է լինի, որից հետո անհապաղ հայտնվում է Նրա կղզու վրա. այնտեղ մեր պարոն Աստված, նայելով այն բանին, թե մեր հոգին, իր վրա ամրացված օրգաններով հանդերձ, ինչպես է գոյատևել այնտեղ՝ Աշխարհքում, դրան համապատասխան տեղ է հատկացնում մեր հոգուն Իր կղզու վրա հետագա գոյատևման համար:

Եթե հոգին այստեղ իր պարտականությունները կատարած է լինում ազնիվ ու բարեխիղճ ձևով, ապա պարոն Աստված նրան սիրով պահում է Իր կղզու վրա հետագա կատարելագործման համար, իսկ եթե հոգին Աշխարհքում պարապ թրև է եկել կամ ծուլորեն ու անփութությամբ է կատարել իր պարտականությունները, կարճ ասած, գոյատևել է միայն իրեն ամրացված օրգանների

ցանկությունները բավարարելով և չի կատարել Իր պատվիրանները, ապա պարոն Աստված նրա հետագա գոյության համար տեղ է հատկացնում հարևան, ավելի փոքր կղզու վրա:

Այստեղ՝ Աշխարհք աշխարհամասում, գոյություն ունեն անտեսանելի և հավատարմորեն Նրան ծառայող «ոգիներ», որոնք շրջում են մարդկանց մեջ և պարոն Աստծուն տեղյակ են պահում այստեղ կատարված բոլոր արարքների մասին կամ զեկուցում են Նրան, երբ վրա է հասնում «Ահեղ դատաստանի Օրը»:

Մենք ոչ մի կերպ չենք կարող թաքցնել նրանցից ո՛չ մեր արարքները, ո՛չ էլ մտքերը:

Ուսմունքում այնուհետև ասվում էր, որ և՛ մեր Աշխարհք աշխարհամասը, և՛ բոլոր մյուս աշխարհամասերն ու կղզիները ստեղծված են պարոն Աստծո կողմից և գոյություն ունեն միայն այն բանի համար, որ ծառայեն Նրան և այն արժանավոր «հոգիներին», որոնք արդեն գտնվում են Նրա կղզու վրա:

Համայն աշխարհի բոլոր աշխարհամասերն ու կղզիները ստեղծված են ընդամենը որպես նախապատրաստական վայրեր ու պահեստարաններ այն ամենի համար, ինչ անհրաժեշտ է Նրա կղզու համար:

Այն կղզին, որի վրա ապրում են Ինքը՝ պարոն Աստված, և բոլոր արժանավոր հոգիները, կոչվում է «Դրախտ». այնտեղ ապրելն ուղղակի «երանություն» է:

Այնտեղի գետերով կաթ է հոսում, ափերն էլ քաղցր օշարակի համ ունեն. այնտեղ չարչարվելու և աշխատելու կարիք չկա. այնտեղ միշտ կա անհրաժեշտ ամեն ինչ, որ կյանքը հոսի անհոգ ու երջանիկ: Իսկ այդ անհրաժեշտ բաներն այնտեղ են հասնում մեր սեփական աշխարհամասից և մնացած աշխարհամասերից ու կղզիներից:

Այդ Դրախտ կղզում կան այշխարհի տարբեր ժողովուրդների ու ռասաների պատկանող բազմաթիվ երիտասարդ ու զեղեցիկ կանայք: Կարող ես ընտրել՝ որին սիրող կուզի:

Այդ հրաշագեղ կղզու մի շարք հասարակական հրապարակների վրա զանազան զարդարանքների սարեր են կիտված՝ սկսած ամենապսպղուն ադամանդից, վերջացրած ամենամուգ գույնի փիրուզով, և ամեն մի հոգի լիովին անարգել կարող է վերցնել ինչ ուզում է և ինչքան ուզում է:

Երանելի այդ կղզու ուրիշ հասարակական հրապարակների վրա քաղցրավենիքներ են դիզված՝ համեմված կակաչի և հաշիշի հատուկ բնահյութով, և ամեն մի հոգի կարող իր սրտի ուզածի չափ դրանցից օգտվել օրվա բոլոր ժամերին:

Այնտեղ հիվանդություններ չկան, և, իհարկե, չկան այն ճանճերն ու լվերը, որոնք այստեղ մեզ հանգիստ չեն տալիս՝ դառնացնելով մեր գոյությունը:

Մյուս՝ ավելի փոքր կղզին, ուր մեր պարոն Աստված ուղարկում է այն հոգիներին, որոնց ժամանակավոր օրգաններն այստեղ ծուլություն են արել և չեն կատարել Իր պատվիրանները, կոչվում է «Դժոխք»:

Այդ կղզու բոլոր գետերով եռացող կուպր է հոսում: Օդն անասելի գարշահոտ է: Ամեն մի հրապարակի վրա ահավոր էակների ամբոխներ կան, որոնք սուլում են ոստիկանական սուլիչներով: Տների ամբողջ կահույքը՝ գորգերը, մահճակալները և այլն, պատրաստված են դեպի դուրս ցցված սուր ասեղներից:

Այդ կղզու վրա գտնվող ամեն մի հոգուն օրական մի անգամ աղի բաղարջ են տալիս, և չկա ոչ մի կաթիլ խմելու ջուր: Այնտեղ կան նաև բազմաթիվ այնպիսի ահավոր բաներ, որոնց Երկրի վրա ապրող էակները ոչ միայն երբևէ հանդիպել, այլև նույնիսկ պատկերացնել չէին ուզենա:

Երբ ես առաջին անգամ հայտնվեցի Պախրակարան երկրում, այնտեղի բոլոր եռուղեղ էակներն արդեն այն «կրոնի» հետևորդներն էին, որը հիմնված էր վերոհիշյալ սրամիտ «կրոնական ուսմունքի» վրա, և այդ «կրոնն» այդ շրջանում իր բուռն ծաղկումն էր ապրում:

Այդ սրամիտ «կրոնական ուսմունքի» հեղինակի, այսինքն՝ իմաստուն արքա Կոնյուցիոնի հետ, դրանից շատ առաջ սրբազան ռասկուարնո էր տեղի ունեցել, ասել է թե՛ նա վաղուց «մահացել էր»:

Բայց, ի՛նչ ասել կուզի, շնորհիվ էլի քո սիրելիների հոգեկառույցի արտառոցության՝ նրա հորինվածքն այնպիսի ուժեղ ազդեցություն էր թողել, որ Պախրակարանի ոչ մի էակ, իմ այնտեղ եղած ժամանակ, մի պահ անգամ չէր կասկածում նրա մտցրած յուրահատուկ դոգմաների ճշմարտացիությանը:

Այնտեղ Գոբ քաղաքում, հենց առաջին օրվանից ես սկսեցի այցելել «կրթարանները», որոնք արդեն «չայխանա» էին կոչվում:

Պետք է ասել, որ, թեև գոհամատուցման սովորույթը ծաղկում էր ապրում նաև Պախրակարանում, բայց չունեի այնպիսի մեծ ընդգրկում, ինչպես Թիքյամիշ երկրում:

Գոբ քաղաքում ես դիտավորյալ փնտրում էի հարմար մի էակի, որպեսզի նրա հետ ընկերանամ, ինչպես դա արեցի Քուռկալա քաղաքում:

Եվ իրոք, ես շուտով գտա նման մի ընկեր, բայց այս անգամ նա մասնագիտությամբ քուրմ չէր:

Իմ այդտեղի ընկերը մի մեծ չայխանայի տեր էր, և, թեև մեր միջև շատ լավ հարաբերություններ հաստատվեցին, ես նրա հետ չէի զգում այն յուրօրինակ «կապվածությունը», որն իմ մեջ ծագել էր Քուռկալա քաղաքի քուրմ Աբդիլի հանդեպ:

Թեև մի ամբողջ ամիս ապրեցի Գոբ քաղաքում, այդպես էլ չհանգեցի որևէ կոնկրետ որոշման և ոչ մի գործնական քայլ չձեռնարկեցի իմ նպատակին հասնելու ուղղությամբ: Ես պարզապես թափառում էի քաղաքում՝ նախ այցելելով տարբեր չայխանաներ, և միայն ամենավերջում՝ իմ նոր ընկերոջ չայխանան:

Այդ ընթացքում ես ծանոթացա այդ երկրորդ խմբի էակների շատ բարքերին ու սովորույթներին, ինչպես նաև ուսումնասիրեցի նրանց կրոնի նրբությունները, և ի վերջո որոշեցի իմ նպատակին հասնել՝ օգտվելով հենց այդ կրոնից:

Լուրջ մտորումներից հետո ես անհրաժեշտ համարեցի որոշ բաներ ավելացնել արդեն առկա «կրոնական ուսմունքի» մեջ՝ հուսալով, որ այդ հավելումների տարածման գործն ինձ կհաջողվի այնպես, ինչպես ժամանակին իմաստուն արքա Կոնյուցիոնին էր հաջողվել:

Հենց այդ ժամանակ էլ ես հորինեցի, որ այն անտեսանելի «ոգիները», որոնք, ինչպես ասվում է այդ մեծ ուսմունքի մեջ, հետևում են մեր արարքներին ու մտքերին, որ հետո զեկուցեն մեր պարոն Աստծուն, ոչ այլ ինչ են, քան ուրիշ տեսք ունեցող այն էակները, որոնք ապրում են հենց մեր կողքին:

Այդ, հենց դրանք են, որ հետևում են մեր ամեն քայլին և ապա ամեն ինչի մասին զեկուցում մեր պարոն Աստծուն:

Իսկ մենք՝ մարդիկս, ոչ միայն հարկ եղած պատիվն ու հարգանքը չենք մատուցում նրանց, այլև նույնիսկ վերջ ենք տալիս նրանց գոյությանը, որպեսզի նրանց մարմիններով և՛ կերակրվենք, և՛ գոհամատուցում անենք:

Իմ քարոզներում ես հատուկ ընդգծում էի, որ մենք ոչ միայն չպետք է այլ տեսակի էակների գոյությանը վերջ տանք ի պատիվ պարոն Աստծո, այլ, ընդհակառակը, պետք է ձգտենք շահել նրանց բարեհաճությունը և աղաչենք, որ նրանք պարոն Աստծուն չպատմեն մեր մանրամուտը վատ արարքների մասին, որ ակամա գործում ենք:

Ահա հենց իմ այդ հավելումը ես սկսեցի տարածել բոլոր հնարավոր միջոցներով, իհարկե, պահպանելով խիստ զգուշավորություն:

Սկզբում իմ այդ հորինվածքը ես տարածեցի իմ նոր ընկերոջ՝ չայխանայի տիրոջ միջոցով:

Պետք է քեզ ասեմ, որ նրա չայխանան երևի ամենամեծն էր Գոբ քաղաքում և հռչակվել էր իր կարմավուն հեղուկով, որը շատ են սիրում ըմպել Երկիր մուրակի էակները:

Ուստի այնտեղ մշտապես շատ այցելուներ էին լինում, և այն օր ու գիշեր բաց էր լինում:

Այնտեղ այցելում էին ոչ միայն Գոբ քաղաքի բնակիչները, այլև ամբողջ Պախրակարանից մայրաքաղաք եկածները:

Շուտով ես լիովին վարպետացա չայխանայում գտնվող առանձին այցելուների հետ զրույց սկսելու և նրանց իմ համոզմունքները փոխանցելու գործում:

Չայխանայատեր իմ նոր ընկերն այնպես հիմնովին էր հավատացել իմ հորինվածքին, որ անցյալի մեղքերի պատճառով «իր տեղը չէր գտնում»:

Նա միշտ հուզվում ու դառնորեն զոջում էր զանազան այլ տեսակի էակների նկատմամբ ունեցած իր նախկին «անհարգալից» վերաբերմունքի համար:

Օր օրի դառնալով իմ հորինվածքի եռանդուն քարոզիչը՝ նա դրանով հանդերձ ոչ միայն օգնեց, որ այն տարածվի իր սեփական չայխանայում, այլև սեփական նախաձեռնությամբ սկսեց այցելել Գոբ քաղաքի մյուս չայխանաները, որպեսզի տարածի իրեն այդպես հուզած «ճշմարտությունը»:

Նա քարոզում էր նաև շուկաների հրապարակներում, մի քանի անգամ էլ այդ նպատակով հատուկ այցելեց այն սրբավայրերը, որոնցից այն ժամանակ շատ կային Գոբ քաղաքի շրջակայքում, և դրանցից ամեն մեկը նվիրված էր ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի:

Այստեղ շատ հետաքրքիր կլինի նշել, որ այն տեղեկությունները, որոնց հիման վրա Երկիր մոլորակի վրա սրբավայրեր են գոյանում, իրենց ծագման համար պարտական են այնպիսի երկրային էակների, որոնք «ստախոս» են կոչվում:

«Ստախոսություն» հիվանդությունը լայնորեն տարածված է այնտեղ: Այդ մոլորակի վրա մարդիկ ստում են ն՛ գիտակցաբար, ն՛ անգիտակցաբար: Գիտակցաբար ստում են այն դեպքում, երբ կարող են դրանով հասնել որևէ անձնական, նյութական շահի, իսկ անգիտակցաբար՝ այն դեպքերում, երբ հիվանդ են լինում «հիստերիա» կոչվող հիվանդությամբ:

Գոբ քաղաքի այդ չայխանայի տիրոջից բացի, ինձ շատ շուտով սկսեցին անգիտակցաբար օգնել նաև մի քանի ուրիշ էակներ, որոնք նրա պես այդ ընթացքում հասցրին դառնալ իմ հորինվածքի եռանդուն պաշտպանները: Շատ շուտով ասիացի էակների այդ երկրորդ խմբի համարյա բոլոր ներկայացուցիչները իմ այդ հորինվածքի տարածման գործով էին զբաղված. իրար համոզում ու հայտնում էին անառարկելի «ճշմարտությունը», որն այդպես հանկարծ բացահայտվել էր իրենց համար:

Այդ ամենի արդյունքում Պախրակարան երկրում ոչ միայն իրոք պակասեցին զոհամատուցումները, այլ նաև այլ տեսակի էակների նկատմամբ սկսեցին ցուցաբերել անսովոր ուշադրություն:

Շուտով այնտեղ այնպիսի կատակերգություններ սկիզբ առան, որ, թեև իս ինքս էի այդ հորինվածքի հեղինակը, այնուհանդերձ երբեմն շատ մեծ դժվարությամբ էի կարողանում ծիծաղս գսպել:

Օրինակ՝ այսպիսի մի բան տեղի ունեցավ. Գոբ քաղաքի շատ հարգված ու հարուստ մի վաճառական առավոտ վաղ իր ավանակով գնալիս է լինում դեպի իր կրպակը, և այդ ճանապարհին խառնիճաղանձ ամբոխը նրան իջեցնում է ավանակի վրայից և մի լավ դնգստում, քանի որ հանդգնել էր բազմել խեղճ կենդանու մեջքին: Այնուհետև ամբոխը խոնարհ գլուխ տալով մի փոքր ուղեկցում է ավանակին, ապա բարեհաճորեն թույլ տալիս, որ գնա իր ուզած ուղղությամբ:

Կամ մի փայտահատ իր սեփական ջորիներով անտառից փայտ է բերում քաղաքի շուկա: Քաղաքացիները նրան կոպտորեն ցած են իջեցնում իր սայլի վրայից, կողերը մի լավ ջարդում, որից հետո քնքշորեն լուծը հանում են ջորիների վզից և վերջիններիս ուղեկցում իրենց ուզած տեղը: Իսկ, որպեսզի սայլը չխանգարի երթևեկությանը, նրանք դա հենց իրենք են քարշ տալիս մինչև շուկայի մի անկյունը և այնտեղ թողնում բախտի քմահաճույքին:

Իմ այդ հորինվածքի շնորհիվ Գոբ քաղաքում շատ շուտով սկսեցին ձևավորվել բոլորովին նոր սովորույթներ:

Օրինակ՝ սովորույթ տարածվեց կերակրամաններ դնել Գոբ քաղաքի բոլոր հրապարակներում, հասարակական վայրերում և խաչմերուկներում, որոնց մեջ քաղաքացիներն առավոտյան ընտիր կերակուրներ էին լցնում շների և այլ տեսակի անապաստան էակների համար: Նաև լուսաբացին առատ ու բազմազան սնունդ էին լցնում Բարեգթության ծովը, որպեսզի «ձուկ» կոչվող էակները վայելեն:

Բայց ամենայուրահաստուկ սովորույթը տարբեր տեսակի կենդանիների ձայներին ուշադրություն դարձնելն էր: Հենց որ որևէ էակի ձայն հասնում էր նրանց ականջին, անմիջապես փառաբանում էին իրենց աստվածների անունները և նրանցից շնորհ ակնկալում: Աքաղաղը կկանչեր, շունը կհաչեր, կատուն կմլավեր, թե կապիկը կճչար՝ բոլոր այդ ձայները լսում էին սրտի առանձնահաստուկ թրթիռով:

Հետաքրքիր է նշել, որ, չգիտես ինչու, նրանք նման դեպքերում հայացքները հառում էին դեպի վեր, թեև, համաձայն նրանց դավանաբանության՝ համարվում էր, որ իրենց աստվածն ու նրա օգնականները նույն մակարդակի վրա են գտնվում, որտեղ իրենք են, այլ ոչ թե այնտեղ, ուր ուղղում էին իրենց հայացքներն ու աղոթքները:

Ա՛յ թե հետաքրքիր էր նման պահերին նրանց դեմքերին նայելը...»

– Կներեք, Ձե՛րդ Գերապատվություն,– միջամտեց այդ պահին Բեհեդգեբուղի ծեր ու հավատարիմ ծառա Ահունը, որը նույնպես մեծ ուշադրությամբ լսում էր նրա պատմությունը,– հիշո՛ւ՛մ էք, թե քանի՛ անգամ մեզ բախտ վիճակվեց բուն Գոբ քաղաքի փողոցներում երեսնիվայր գետին փովել զանազան տեսակի էակների արձակած ձայները լսելիս:

Այդ միջամտությանը Բեհեդգեբուղը պատասխանեց այսպես.

«Իհարկե հիշում եմ, սիրելի Ահուն: Մի՞թե հնարավոր է մոռանալ այդ կատագրական դրվագների տպավորությունները... Դու պետք է իմանաս,– շարունակեց նա՝ խոսքն ուղղելով Հասեիին,– որ Երկիր մոլորակի էակներն աներևակայելի հպարտ ու նեղացկոտ են: Եթե որևէ մեկը չի կիսում նրանց հայացքները կամ չի վարվում այնպես, ինչպես իրենք, կամ էլ, ասենք, քննադատում է իրենց վարքը, ապա, օ, շատ են զայրանում ու վիրավորվում:

Եթե իշխանություն տաս, ապա յուրաքանչյուրին, ով կհանդգնի իրենց պես չվարվել կամ քննադատել իրենց վարքը, առնվազն կփակեն մի այնպիսի խցում, որտեղ սովորաբար վիստում են առնետներն ու ոջիլները:

Երբեմն էլ, եթե նեղացածի ուժը տեղն է լինում, և իրեն ատելի իշխանավորի աչքն էլ այդ պահին վրան չի լինում, ապա նեղացնողի «բանը բուրդ է լինում»:

Շատ լավ իմանալով նրանց տարօրինակ հոգեկերտվածքի այդ կողմի մասին, ես առանձնապես ցանկություն չէի ունենում նրանց վիրավորելու և վաստակելու նրանց ցասումը. բացի այդ՝ ես շատ լավ հասկանում էի, որ որևէ մեկի կրոնական զգացմունքները վիրավորելն ընդհանրապես հակառակ է ամեն մի բարոյականության, ուստի, բնակվելով նրանց շրջապատում, միշտ ջանում էի ամեն ինչում վարվել իրենց պես, որպեսզի որևէ բանով աչքի չընկնեմ և ինձ վրա առանձնապես շատ ուշադրություն չհրավիրեն:

Վնաս չի լինի, եթե այստեղ նշեմ, որ այդ արտառոց մոլորակի քեզ դուր եկած եռուղեղ էակների սովորական գոյատևման աննորմալ պայմանների արդյունքում հատկապես վերջին հարյուրամյակներում աչքի են ընկնում և հարգանքի արժանանում այն էակները, որոնք ոչ թե մեծամասնության պես են վարվում, այլ այս կամ այն չափով անհեթեթ բաներ են անում. և որքան ավելի անհեթեթ են լինում դրանց դրսևորումները, որքան ավելի հիմար, ստոր ու ցինիկ «օյիներ» են բանեցնում, այնքան ավելի շատ են ուշադրության արժանանում և հայտնի դառնում, այնքան ավելի շատ էակներ են տվյալ աշխարհամասում անձամբ կամ գոնե միայն անունով ճանաչում նրանց:

Մյուս կողմից՝ ոչ մի ազնիվ էակ, եթե նա անհեթեթ բաներ չի անում, ապա երբեք հայտնի կամ նշանավոր չի դառնում մնացած էակների շրջապատում, որքան էլ բարի ու խելացի լինի:

Այսպիսով, զավա՛կս, այն, ինչ Ահունն այդպես նենգորեն իմ երեսով տվեց, վերաբերում է Գոբ քաղաքում ձևավորված այն սովորույթին, թե ինչպես էին այնտեղի բնակիչներն արձագանքում ու մեծ նշանակություն տալիս տարբեր տեսակի էակների ձայներին և հատկապես՝ «ավանակների», որոնք ինչ-ինչ պատճառներով շատ առատ էին Գոբ քաղաքում:

Այդ մոլորակի բոլոր մյուս էակներն էլ իրենց առանձնահատուկ ձայներն ունեն, բայց դրանք սովորաբար իրենց ձայները հնչեցնում են որոշակի ժամի: Օրինակ՝ արաղաղը կանչում է կեսգիշերին, կապիկը ճչում է առավոտյան, երբ սոված է լինում, և այլն, և այլն, իսկ, այ, ավանակն իր ձայնը զլում է, երբ խելքին փչում է, ինչի հետևանքով այդ տխմար էակի գոռոցն այնտեղ կարող է լսելի դառնալ օրվա ցանկացած ժամի:

Եվ ահա, զավա՛կս, Գոբ քաղաքում ընդունված էր, որ հենց ավանակի գոռոց լսվի, բոլորն անհապաղ պետք է երեսնիվայր գետնին փռվեն և այդ վիճակում աղոթեն իրենց աստվածներին ու կուռքերին. այստեղ իմ կողմից պետք է ավելացնեմ, որ բնությունն այդ էակին այնպիսի բարձր ձայն է տվել, որ այն լսելի է լինում շատ հեռվից:

Դե, իսկ մենք էլ, երբ Գոբ քաղաքի փողոցներով անցնելիս տեսանք, թե ինչպես են քաղաքացիները գետնին փռվում այդ էակի ձայնը լսելուց հետո, նրանց պես ստիպված եղանք մենք էլ այդպես վարվել, որպեսզի մնացածներից չառանձնանանք: Ահա այդ ծիծաղաշարժ դրվագն է, որ, ինչպես տեսնում եմ, կարգին զվարճացրեց մեր ծեր Ահունին:

Հապա դու մի տե՛ս, իմ սիրելի Հասեի՛ն, թե այդքան հարյուրամյակներ անցնելուց հետո մեր ծերուկ Ահունն ի՛նչ թունոտ հաճույքով է ինձ հիշեցնում այնժամանակվա իմ ծիծաղելի վիճակը»:

Այս ասելով՝ Բեհեղգեբուղը դեմքին ժպիտ խաղացրեց և շարունակեց սկսած գրույցը.

«Կարիք կա՞ ասելու, որ քո այդ մոլորակի Աշխարհք աղխարհամասում բազմացող եռուղեղ էակների այդ երկրորդ կուլտուրական կենտրոնում նույնպես ամբողջովին վերացավ գոհամատուցման նպատակով այլ տեսակի էակների գոյությանը վերջ տալու սովորույթը, և եթե առանձին դեպքեր լինում էին, ապա այդ խմբի էակները հենց իրենք էին անխնա հաշվեհարդար տեսնում սովորույթը խախտողների հետ:

Այդպիսով համոզվելով, որ Աշխարհք աշխարհամասի այդ երկրորդ խմբի էակների մոտ նույնպես ինձ հեշտությամբ հաջողվեց երկար ժամանակով արմատախիլ անել գոհամատուցման սովորույթը, ես որոշեցի հեռանալ այդտեղից, բայց ամեն դեպքում մտադիր էի այցելել նաև մոտակա մյուս խոշոր բնակավայրերը, որտեղ նույնպես այդ երկրորդ խմբի էակներն էին բնակվում, ուստի այդ նպատակի համար ընտրեցի Մարյա-չի գետի շրջակա տարածքը:

Այդ որոշումը կայացնելուց հետո Ահունի հետ հասանք այդ գետի գետաբերանը և լողացինք հոսանքն ի վեր: Շուտով համոզվեցինք, որ ուրիշ էակների կյանքին վերջ տալով գոհամատուցում անելու հետ կապված նոր սովորույթներն ու հասկացությունները հաջողությամբ Գոբ քաղաքից տարածվում են նաև մյուս խոշոր կենտրոններում:

Ի վերջո մենք հասանք «Արգենիա¹²⁶» կոչվող մի ոչ մեծ քաղաք, որն այն ժամանակ համարվում էր Պախրակարանի ամենաձայրամասային բնակավայրը:

Այստեղ նույնպես այդ ասիական երկրորդ խմբին պատկանող զգալի քանակությամբ էակներ էին ապրում, որոնց գլխավոր զբաղմունքը բնությունից փիրուզ կորզելն էր:

Այդ Արգենիա կոչվող ոչ մեծ քաղաքում սովորականի պես ես կրկին սկսեցի այցելել չայխանաները՝ շարունակելով իմ սովորական դարձած գործելակերպը»:

ԳԼՈՒԽ ԻԱ

Բեհեղգերուղի առաջին այցը Հնդկաստան

Բեհեղգերուղն իր խոսքը շարունակեց այսպես.

«Մի անգամ, երբ նստած էի Արգենիա փոքրիկ քաղաքի չայխանաներից մեկում, ինձնից ոչ շատ հեռու նստած մի խումբ էակների խոսակցություն լսեցի, որոնք քննարկում էին այն հարցը, թե երբ և ինչպես քարավան կազմեն և մեկնեն Գաղտակուրհանդա երկիրը:

Ականջ դնելով նրանց խոսակցությանը՝ ես հասկացա, որ նրանք ուզում են գնալ այդ երկիրը, որպեսզի իրենց ունեցած փիրուզը փոխանակեն այնտեղի մարգարիտի հետ:

Այստեղ, իմիջիայլոց, հարկ եմ համարում քո ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ ինչպես վաղեմի, այնպես էլ ներկա դարաշրջանի քո սիրելիները միշտ սիրել և հիմա էլ սիրում են մարգարիտ, փիրուզ և էլի շատ ուրիշ «թանկարժեք զիզի-պիզի բաներ» կրել իրենց վրա, որպեսզի դրանցով, ինչպես իրենք են ասում, «գեղեցկացնեն» իրենց արտաքինը: Իսկ եթե ուզում ես իմ կարծիքն իմանալ, ապա նրանք դա անում են, անշուշտ, բնագոյաբար, որպեսզի դրանով փոխհատուցեն իրենց, այսպես ասած, «ներքին թերաբժեքության զգացումը»:

Այն ժամանակաշրջանում, որին վերաբերում է իմ այս գրույցը, մարգարիտը հազվագյուտ բան էր ասիական այդ երկրորդ խմբի էակների միջավայրում և թանկ էր գնահատվում: Իսկ Գաղտակուրհանդա երկրում այդ նույն ժամանակ մարգարիտ շատ կար ու շատ էժան էր, քանի որ այն հայթայթվում էր բացառապես այդ երկրամասի շուրջը եղած ջրային տարածքներից:

Էակների հիշյալ խոսակցությունը, որն ընթանում էր Արգենիա փոքրիկ քաղաքի չայխանայում իմ նստած տեղից մի փոքր հեռու, անմիջապես գրավեց իմ ուշադրությունը, քանի որ հենց այդտեղից ես մտադրություն ունեի մեկնելու այդ նույն Գաղտակուրհանդա երկիրը, և ավելի լավ կլինեք, եթե միանայի այդ էակների մեծ քարավանին, քան եկածս ճամփով վերադառնալի Բարեգթության ծով և հետո նոր այնտեղից «Պատահարով» մեկնելի այդ երկիրը:

Թեև այդ ճանապարհորդությունն այն օրերին համարյա անհնարին մի բան էր Երկիր մոլորակի էակների համար և կարող էր շատ ժամանակ խլել, սակայն Բարեգթության ծով հետ դառնալու տարբերակը, իր անկանխատեսելի բարդություններով հանդերձ՝ հազիվ թե զգալիորեն ավելի քիչ ժամանակ պահանջեր:

Այդ զգացողությունն իմ մտածողության մեջ այն ժամանակ առաջացավ հիմնականում այն պատճառով, որ ես վաղուց էի լսել քո այդ յուրահատուկ մոլորակի այդ տարածքների բնության

¹²⁶ ռուս. տարբերակում՝ «Аргения», անգլ. տարբերակում՝ «Arguenia»

հազվագյուտ առանձնահատկությունների մասին, որոնցով պետք է անցնենք քարավանի ենթադրյալ ուղին: Ուստի՛ն՝ «գիտելիքի ծարավը», որն իմ մեջ արդեն բյուրեղացած էր, խթան ստանալով իմ բոլոր լսածներից, անհապաղ իմ ընդհանուր ներկայությունը թելադրեց, որպեսզի գնամ և այդ լսածներիս մեջ անձամբ համոզվեմ իմ սեփական տեսողական զգայարանի օգնությամբ:

Ուստի, զավա՛կս, ելնելով այն ամենից, ինչ հենց նոր ասացի, ես դիտմամբ մոտեցա այդ զրուցող էակներին և մասնակցեցի նրանց քննարկումներին:

Արդյունքը եղավ այն, որ մենք նույնպես ընդգրկվեցինք այդ քարավանի մասնակիցների ցուցակում և երկու օր հետո նրանց հետ միասին ճամփա ընկանք դեպի Գաղտակուրհանդա:

Ահունի հետ մենք այն ժամանակ անցանք հիրավի անսովոր վայրերով, որոնք անսովոր էին նույնիսկ այդ յուրահատուկ մոլորակի համար, որի առանձին մասերը, իմիջիայլոց, այդպիսին են դարձել միայն այն պատճառով, որ այդ չարաբաստիկ մոլորակն արդեն երկու անգամ Տրանսսապալյան խոտորումներ էր ապրել, որոնք աննախադեպ էին Տիեզերքում:

Հենց առաջին օրվանից մեզ վիճակվեց անցնել բացառապես զանազան-զարմանազան «ցամաքային ցցվածքների» տարածքներով, որոնք իրենց ընդերքում պարունակում էին ամեն տեսակի ներմոլորակային հանքանյութերի համակցություններ:

Եվ միայն ճամփորդության սկզբից այնտեղի ժամանակով հաշված մեկ ամիս անց Արգենիայից դուրս եկած մեր քարավանը հասավ մի վայր, որի հողաշերտերում դեռևս ամբողջովին չէր սպառվել Բնության կողմից վերակերևոյթային գոյացությունների կազմավորման և զանազան միատուղ ու երկուդեղ էակների սկզբնավորման ու գոյատևման համար անհրաժեշտ համապատասխան պայմանների ստեղծման հնարավորությունը:

Ամեն տեսակի դժվարություններ հաղթահարելուց հետո մենք վերջապես՝ մի անձրևոտ առավոտ, մի բարձրադիր վայրից հանկարծ հորիզոնում նշմարեցինք մի հսկա ջրային տարածքի ուրվագծերը, որը ողողում էր Աշխարհք աշխարհամասի ծայրամասային այն երկիրը, որն այն ժամանակ կոչվում էր Գաղտակուրհանդա:

Իսկ դրանից չորս օր հետո մենք հասանք երրորդ խմբի էակների բնակության գլխավոր կենտրոնը, որն այն ժամանակ «Քայամոն¹²⁷» անունն էր կրում:

Մեր մշտական բնակության վայրը կահավորելուց հետո առաջին երեք օրերին ոչինչ չէինք անում, այլ միայն թափառում էինք քաղաքի փողոցներով և դիտում այդ երրորդ խմբի էակների սովորական գոյատևման ընթացքում դրսևորվող յուրօրինակությունները:

Ուրիշ ճար չկա, սիրելի՛ Հասեին. մեկ որ Աշխարհք աշխարհամասի երկրորդ խմբի էակների ծագումնաբանությունն արդեն պատմել եմ, ստիպված եմ պատմել նաև այդ երրորդ խմբի էակների ծագման մասին:»

– Անպայման պատմի՛ր, ո՛վ իմ շատ սիրելի պապի՛կ,– խանդավառությամբ բացականչեց Հասեինը և, ձեռքերը վեր կարկառելով, այս անգամ մեծագույն ակնածանքով ու սրտանց շարունակեց,– թո՛ղ որ իմ սիրելի ու բարի պապիկն արժանանա սրբազան «Անկլադի» կատարելության աստիճանին...

Դրան չարձագանքելով՝ Բեհեդգեբուղը միայն ժպտաց և շարունակեց պատմել.

«Ասիացի էակների այդ երրորդ խմբի պատմությունն սկսվում է անմիջապես այն բանից հետո, երբ Ատլանտիդայից եկած և պիրամիդների որսով զբաղվող որսորդների ընտանիքներն առաջին անգամ ոտք դրեցին Բարեգթության ծովի ափերին և, այնտեղ բնակություն հաստատելով, ստեղծեցին ասիական էակների երկրորդ խումբը:

Քո սիրելիների ժամանակակից տեսակի համար շատ վաղեմի այդ ժամանակներում էր հենց, որ քո այդ չարաբաստիկ մոլորակի վրա տեղի ունեցած երկրորդ Տրանսսապալյան խոտորումից ոչ շատ առաջ Ատլանտիդա աշխարհամասի եռուդեղ էակների ներկայություններում արդեն սկսել էին բյուրեղանալ Կունդաբուֆեր օրգանի հատկությունների որոշ հետևանքներ, ինչը նրանց մոտ առկա և եռուդեղ էակներին անհարիր այլ պահանջմունքների շարքում նաև պահանջմունք էր առաջացրել, որ իրենց վրա կրեն, ինչպես արդեն քեզ պատմել եմ, զանազան զիզի-պիզի բաներ (իբր՝ գեղեցկանալու համար), ինչպես նաև՝ այսպես կոչված, «թալիսման», որն էլի իրենց հնարածն էր:

Այն ժամանակ Ատլանտիդա աշխարհամասում, ինչպես և Երկիր մոլորակի ներկայիս աշխարհամասերում, այդ զիզի-պիզի բաներից մեկը եղել և մնում է մարգարիտը:

¹²⁷ ռուս. տարբերակում՝ «Каймон», անգլ. տարբերակում՝ “Kaiamon”

Հիշյալ մարգարիտն առաջանում է միառուղեղ էակների մեջ, որոնք բազմանում են քո այդ Երկիր մոլորակի սալիաքուռիափայում, այսինքն՝ մոլորակի այն մասում, որը կոչվում է «հենդրալիցբանա»¹²⁸ կամ, ինչպես կասեին քո սիրելիները՝ մոլորակի արյունը, որից ամեն մի մոլորակի ընդհանուր ներկայության մեջ լինում է, և որը ծառայում է համատիեզերական Մեծագույն Տրոգավտոեզոկրատի գործընթացի ի կատար ածմանը. քո այդ մոլորակի վրա այդ մասը «ջուր» է անվանվում:

Այդ միառուղեղ մարգարտաբեր էակը, [որը հայերենում գաղտակուր է կոչվում, ուստի հետայսու՝ *գաղտակուր – թ.*], նախկինում բազմանում էր Ատլանտիդա աշխարհամասի ավերը ողողող «սալիաքուռիափային» կամ ջրային տարածքներում, բայց, քանի որ մարգարիտի պահանջարկը շատ մեծ էր, հետևաբար, համատարած ոչնչացման հետևանքով, շուտով այդ ավերում գաղտակուր չմնաց: Դրա հետևանքով՝ երբ այն եռուղեղ էակները, որոնք իրենց կյանքի հիմնական իմաստն ու նպատակն էին դարձրել միառուղեղ գաղտակուրների ընդհանուր ներկայության մի մասը իսկը, այսինքն՝ մարգարիտ հանելը, որպեսզի դրանով բավարարություն տան իրենց կատարելապես անհեթեթ եասիրությանը, այլևս գաղտակուր չէին գտնում Ատլանտիդայի առափնյա ջրային տարածքներում, ապա նրանք՝ այդ «մասնագետները» սկսեցին այն փնտրել ավելի հեռավոր ջրային տարածքներում և աստիճանաբար ավելի ու ավելի էին հեռանում իրենց հարագատ աշխարհամասից:

Այդ որոնումների ընթացքում մի անգամ այնպես պատահեց, որ սալիաքուռիափային խոշոր տեղաշարժերի կամ, ինչպես իրենք են ասում, տևական «փոթորիկների» հետևանքով նրանց նավերն անսպասելիորեն հայտնվեցին մի վայրում, որտեղ մեծ քանակությամբ գաղտակուրներ կային, և տեղն էլ շատ հարմար էր դրանց ոչնչացման համար:

Այդ վայրը, որտեղ այդքան շատ գաղտակուրներ կային, հենց այն ջրային տարածքն էր, որը մինչև այսօր ողողում է այն ժամանակ Գաղտակուրհանդա կոչված երկրի ավերը, որը հիմա կոչվում է Հնդստան կամ Հնդկաստան:

Սկզբում երկրային այդ վաղեմի «արհեստավարժ մասնագետները», որոնք պատահաբար էին հայտնվել այդ վայրերում, միայն զբաղվում էին արդեն իրենց ներկայության բնորոշ գիծը դարձած այդ հակմանը հագուրդ տալով՝ իրենց մոլորակի միառուղեղ էակներին ոչնչացնելով: Բայց ավելի ուշ, երբ նույնպես պատահաբար հայտնաբերեցին, որ իրենց սովորական գոյատևման համար անհրաժեշտ համարյա ամեն բան առատորեն կարելի է գտնել առափնյա ցամաքի վրա, որոշեցին այլևս չվերադառնալ Ատլանտիդա և մշտական բնակություն հաստատեցին այդ վայրերում:

Գաղտակուր ոչնչացնող էակներից մի քանիսը վերադարձան Ատլանտիդա աշխարհամաս, այնտեղ իրենց ունեցած մարգարիտը փոխանակեցին զանազան առարկաների հետ, որոնցից չկային իրենց բնակության նոր վայրում, որից հետո, ինչպես իրենց, այնպես էլ նոր վայրում մնացածների ընտանիքներն իրենց հետ վերցնելով, նորից նավարկեցին դեպի իրենց գտած նոր երկիր:

Հետագայում ևս այդ առաջին նորաբնակներից ոմանք ժամանակ առ ժամանակ ապրանքափոխանակության նպատակով այցելում էին իրենց նախկին հայրենիքը, և ամեն անգամ իրենց հետ ավելի ու ավելի շատ հարագատներ, ազգակիցներ կամ պարզապես բանող ձեռքեր էին բերում նոր երկիր:

Այսպիսով, զավա՛կս, Երկիր մոլորակի մակերևույթի այդ մասն էլ այդ ժամանակվանից հայտնի դարձավ այնտեղի բոլոր եռուղեղ էակներին՝ որպես «Բարեգլխության երկիր»:

Այդպիսով կարող ենք ասել, որ նախքան Երկիր մոլորակի երկրորդ մեծ արհավիրքը Ատլանտիդա աշխարհամասի շատ էակներ արդեն հաստատվել էին Աշխարհք աշխարհամասի նաև այդ հատվածում, և երբ երկրորդ համադեղ տեղի ունեցավ, Ատլանտիդայի պատահաբար ողջ մնացած էակները՝ գլխավորապես նրանք, ովքեր ազգականներ ունեին Գաղտակուրհանդայում, աստիճանաբար իրենք էլ հավաքվեցին այդ երկրամասում:

Եվ քանի որ, ինչպես միշտ, աչքի էին ընկնում բեղունությամբ, շուտով այնքան բազմացան, որ իրենց մոլորակի ցամաքի այդ մասն էլ համարյա լրիվ բնակելի դարձրին:

Ամենասկզբում միայն Գաղտակուրհանդայի երկու որոշակի շրջաններ էին բնակելի դարձել, այն է՝ երկու մեծ գետերի գետաբերանները, որոնք, այդ երկրի խորքից սկիզբ առնելով, գալիս թափվում էին հենց այն ջրային մեծ տարածքը, որտեղ հիշյալ գաղտակուրներն առատորեն բազմացել էին:

¹²⁸ ռուս. տարբերակում՝ «хентралиспана», անգլ. տարբերակում՝ “hentralispana”; ենթադրաբար՝ «հենց-դրանից-լից-բերանը»

Բայց երբ բնակչությունն այնտեղ չափազանց շատ աճեց, նրանք սկսեցին բնակեցնել նաև Աշխարհք աշխարհամասի այդ հատվածի խորքային շրջանները, թեև իրենց սիրելի վայրերը նորից շարունակում էին համարել այդ երկու մեծ գետերի հովիտները:

Եվ այսպես, տղա՛ս, երբ առաջին անգամ հայտնվեցի Գաղտակուրհանդայում, այնտեղ ևս որոշեցի իմ նպատակին հասնել՝ դիմելով այնտեղ տարածում գտած հավատորոնողի, այսինքն՝ կրոնի օգնությանը:

Սակայն պարզվեց, որ Աշխարհք աշխարհամասի այդ երրորդ խմբի էակներն այդ ժամանակ միանգամից երեք հավատորոնող կամ կրոն ունեն, որոնցից յուրաքանչյուրը հիմնված էր իր առանձին, մյուսների հետ ոչ մի կապ չունեցող, այսպես կոչված, «կրոնական ուսմունքի» վրա:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ես սկզբում լրջորեն ուսումնասիրեցի այդ կրոնական ուսմունքները և պարզելով, որ դրանցից մեկը, որը հիմնված է մեր Համընդհանուր Անսահման Արարչի ճշմարիտ և հետագայում Սուրբ Բուդդա կոչված Բանագնացի ուսմունքի վրա, ավելի շատ հետևորդներ ունի, քան մյուս երկուսը, ես այդ մեկին ավելի շատ ուշադրություն էի հատկացնում, քան մյուսներին:

Նախքան Երկիր մոլորակի մակերևույթի հատկապես այդ հատվածի վրա բազմացող եռուղեղ էակների մասին քեզ պատմելը, կարծում եմ, անհրաժեշտ է, թեկուզ համառոտակի, նշել այն մասին, որ հենց այն ժամանակից սկսած, երբ քո սիրելիների մոտ ծագել ու շարունակել է գոյատևել յուրահատուկ լինելիական հավատորոնողներ կամ կրոններ ունենալու սովորույթը, գոյություն է ունեցել և հիմա էլ գոյություն ունի կրոնական ուսմունքի երկու հիմնական տեսակ:

Առաջին տեսակի կրոնական ուսմունքները հորինվել են հենց այդ եռուղեղ էակների կողմից՝ նրանց կողմից, որոնց հոգեկառույցի գործունեությունն այս կամ այն պատճառով ընթանում է տհասանամուսներին բնորոշ ձևով, իսկ երկրորդ տեսակի կրոնական ուսմունքները հիմնված են այն մանրամասն ցուցումների վրա, որոնք ուսուցանվում են, այսպես ասած, ճշմարիտ Վերին Բանագնացների կողմից, որոնք, իրոք, ժամանակ առ ժամանակ, որպես մեր Համընդհանուր Արարչի կողմից առաքված լինելիական օգնականներ, գալիս են, որպեսզի քո այդ մոլորակի եռուղեղ էակներին օգնեն իրենց ներկայությունից թոթափելու Կունդաբուֆեր օրգանի հատկությունների բյուրեղացված հետևանքները:

Այն կրոնը, որին հետևում էր Գաղտակուրհանդա երկրի էակների մեծամասնությունը, և որին հատկացրի իմ ուշադրությունն ու որի մասին հիմա հարկ եմ համարում պատմել, այնտեղ ծագել է հետևյալ հանգամանքներում:

Ինչպես ես հետագայում իմացա, այդ երրորդ խմբի էակների բազմացմանը զուգընթաց՝ նրանցից շատերը ձևավորվել են որպես տհասանամուսական որակներ ունեցող պատասխանատու էակներ, և երբ վերջիններս սկսել են այդ երրորդ խմբի էակների միջավայրում տարածել սովորականից ավելի չարանենգ գաղափարներ, ապա այդ խմբին պատկանող էակների մեծ մասի ներկայությունների մեջ սկսել է բյուրեղանալ հատուկ տեսակի հոգեկան հատկանիշ, որն իր ամբողջության մեջ իր հերթին ծնել է մի գործոն, որը խիստ խանգարել է այն նորմալ «նյութափոխանակությանը», որն իրականացվում է համատիեզերական Մեծագույն Տրոգոստոգոկրատի կողմից: Եվ ահա, հենց որ այդ ցավալի արդյունքն ի հայտ է եկել՝ բխելով նաև բուն մոլորակից, այն նկատվել է մի քանի Գերսրբազան Անհատականությունների կողմից, որոնք էլ հայտ են ներկայացրել, որպեսզի այդ խմբի էակների մոտ առաքվի համապատասխան Սրբազան Անհատականություն՝ այն նպատակով, որ նրանց լինելիական գոյությունը քիչ թե շատ կարգավորվի և համապատասխանեցվի ամբողջ այդ արևային համակարգության գոյության հետ:

Հենց այդ ժամանակ էլ այնտեղ է առաքվել մի Սրբազան Անհատականություն, որը երկրային էակի մոլորակային մարմին առնելուց հետո կոչվել է, ինչպես ասացի, Սուրբ Բուդդա:

Այդ Սրբազան Անհատականությունն այնտեղ երկրային էակի մոլորակային մարմին էր առել իմ՝ այդ երկիրը կատարած այցից մի քանի հարյուրամյակ առաջ»:

Բեհեղգեբուդի գրույցի այս մասում Հասեինը շրջվեց նրա կողմը և ասաց.

– Միրելի՛ պապիկ, քո գրույցների ընթացքում դու արդեն մի քանի անգամ օգտագործել ես «տհասանամուս» հասկացությունը: Մինչև հիմա ես միայն քո ձայնի առողջությունից եմ գլխի ընկել, որ դու այդ բառով բոլոր այնտեղի եռուղեղ էակներից առանձնացնում ես նրանց, ովքեր արժանի են

«օբյեկտիվ արհամարհանքի»: Խնդրում եմ, ինչպես միշտ, բարի եղիր և բացատրիր ինձ այդ բառի ճշգրիտ ու ճշմարիտ իմաստը:

Դրան Բեհեդգերուդն իրեն բնորոշ ժպիտով պատասխանեց այսպես.

– Եռուղեղ էակների այդ «տիպականության» վերաբերյալ, որոնց նկատմամբ ես կիրառում եմ այդ բառային սահմանումը, ես քեզ կպատմեմ հարկ եղած ժամանակ. իսկ առայժմ միայն իմացիր, որ այդ բառը վերաբերում է ամեն մի այնպիսի եռուղեղ էակի արդեն «որոշակիացված» ընդհանուր ներկայությանը, որը բաղկացած է միայն մոլորակային մարմնից, նաև այն էակներին, որոնց բարձրագույն լինելիական մարմինները թեև հանդերձավորված են, բայց, այս կամ այն պատճառով, դրանցում չեն բյուրեղացվել նախադրյալներ այն Աստվածային ազդակի համար, որն «Օբյեկտիվ Խիղճ» անունն է կրում:

Սահմանափակվելով «տհասնամուս» բառի այսօրինակ բացատրությամբ՝ Բեհեդգերուդը շարունակեց պատմել.

«Հիշյալ կրոնական ուսմունքը մանրագնին ուսումնասիրելիս ես պարզեցի նաև, որ երբ այդ Սրբազան Անհատականությունն այնտեղ արդեն հանդերձավորվել էր եռուղեղ էակի ներկայությամբ և լրջորեն խորհում էր, թե ինչպես իրականացնի Վերնից իր վրա դրված առաքելությունը, ի վերջո որոշեց դա անել նրանց Բանականությունը լուսավորելու ճանապարհով:

Այստեղ պետք է անպայման նշել, որ, ինչպես պարզ դարձավ իմ մանրագնին հետազոտությունից, Սուրբ Բուդդայի ներկայության մեջ արդեն այդ ժամանակ բյուրեղացել էր այն ըմբռնումը, որ Երկիր մոլորակի եռուղեղ էակների բանականությունն իր աննորմալ կազմավորման հետևանքով վերածվում է մի այնպիսի «բնագոյային-թերբեռնյալ¹²⁹» բանականության տեսակի, որը գործում է միայն դրսից համապատասխան խթաններ ստանալով: Այնուհանդերձ, չնայած դրան, Սուրբ Բուդդան որոշեց ի կատար ածել իր առաքելությունը հենց այդպիսի բանականության օգնությամբ, որը բնորոշ էր այնտեղի եռուղեղ էակներին. ուստի նախ և առաջ նա սկսեց նրանց այդ յուրահատուկ բանականությանը հայտնի դարձնել հնարավոր ամեն տեսակի օբյեկտիվ ճշմարտություններ:

Սուրբ Բուդդան նախ իր շուրջը հավաքեց այդ երրորդ խմբի էակների շատ առաջնորդների և այսպես դիմեց նրանց.

«Ո՛վ, Համընդհանուր Արարչի ներկայությանը նմանվող ներկայություն ունեցող էակներ, Տիեզերքի համայն գոյի սրբազնագույն վերջնական դրսևորումների ում ամենալուսավորյալ և ամենաարդարամիտ առաջնորդի կողմից իմ էությունն առաքված է ձեզ մոտ՝ որպես մի գործոն, որը կնպաստի ձեզնից յուրաքանչյուրի լինելիական այն աննորմալ հատկությունների հետևանքներից ձերբազատվելու ձգտմանը, որոնք, ծայրաստիճան կարևոր համատիեզերական պահանջների բերումով, ժամանակին ներդրվել են ձեր նախնիների ներկայություններում և, ժառանգաբար սերնդեսերունդ փոխանցվելով, հասել են ձեզ...»

Սուրբ Բուդդան այս մասին ավելի մանրամասն է խոսել, բայց միայն այն ժամանակ, երբ զրուցում էր իր կողմից ձեռնադրված մի քանի էակների հետ:

Այդ երկրորդ անգամ, պարզվում է, նա այսպես է ասել.

«Ո՛վ, մեր Համընդհանուր Արարչի հույսերն արդարացնելուն ունակ ներկայություն ունեցող էակներ, համարյա այն ժամանակ, երբ արդեն սկզբնավորվում էր ձեր տեսակը, մեր արևային համակարգության օրինաչափ գոյության ընթացքում տեղի է ունեցել անկանխատեսելի մի պատահար, որը լուրջ վտանգ է առաջացրել համայն գոյի համար:

Այդ համատիեզերական աղետը կարգավորելու համար այն ժամանակ, այլ միջոցառումներից զատ, ինչպես ինձ բացատրել են որոշ Բարձրագույն Սրբազնագույն Անհատականություններ, ձեր նախնիների ընդհանուր ներկայությունների գործունեության մեջ մտցվել են որոշակի փոփոխություններ, այն է՝ նրանց ներկայությունների մեջ հավելվել է հատուկ հատկություններ ունեցող մի օրգան, որի հետևանքով իրենց այդ ներկայություններով դրսից ընկալվող և իրենց սեփական հանդերձավորումը ձևավորող ամեն ինչը հետայդու դրսևորվել է ո՛չ իրականությանը համապատասխան:

Որոշ ժամանակ անց, երբ ձեր արևային համակարգության գոյության բնականոն ընթացքը կայունացել է, և վերացել է հատուկ նպատակամղված միջոցառումներ ձեռնարկելու

¹²⁹ ռուս. տարբերակում՝ «инстинкто-теребильным», անգլ. տարբերակում՝ “instincto-titillarian”

անհրաժեշտությունը, մեր Ամենաբարեգութ շամբնդհանուր Հայրը չի հապաղել հրահանգ տալ, որպեսզի անհապաղ ի չիք դարձվեն արհեստական բնույթի միջոցները, և դրանց թվում վերացվի նաև ձեր նախնիների ներկայություններում ներդրված ու արդեն ավելորդ դարձած Կունդաբուֆեր օրգանը՝ իր բոլոր արհեստածին յուրօրինակ հատկություններով հանդերձ: Այդ հրահանգն անհապաղ ի կատար է ածվել տիեզերական կենսագործումները կառավարելու կոչված համապատասխան Սրբազան Անհատականությունների կողմից:

Բայց երբ անցել է զգալի ժամանակ, հանկարծ պարզվել է, որ թեև հիշյալ Սրբազան Անհատականությունների միջամտությամբ այդ օրգանն իրոք հեռացվել է ձեր նախնիների ներկայություններից, այնուամենայնիվ ինչ-որ տիեզերական օրինաչափ արդյունք, որը «հակվածություն» է կոչվում և ծագում է ամեն մի քիչ թե շատ ինքնուրույն տիեզերական ներկայությունում, երբ դրանում որևէ գործառույթ կրկնողական բնույթ է ստանում, չի կանխատեսվել և չի ոչնչացվել նրանց ներկայություններում:

Ստացվել է, որ այդ հակվածությունը, որը նաև ժառանգաբար փոխանցվելու հատկություն ունի, հանգեցրել է այն բանին, որ նրանց հետնորդների ներկայություններում սկսել են աստիճանաբար բյուրեղանալ այդ Կունդաբուֆեր օրգանի շատ հատկությունների հետևանքներ:

Հենց որ Երկիր մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների ներկայություններում դրսևորվող այդ ողբալի փաստը հաստատվել է, Ամենաբարեգութ մեր Արարչի թույլտվությամբ անհապաղ այստեղ է առաքվել համապատասխան Սրբազան Անհատականություն, որպեսզի նա, ձեզ նման հանդերձավորվելուց և արդեն այստեղ առկա պայմաններում իր Օբյեկտիվ Բանականությամբ կատարելության հասնելուց հետո, կարողանա ավելի լավ բացատրել և մի միջոց ցույց տալ, որ էակներն իրենց ներկայություններից արմատախիլ անեն Կունդաբուֆեր օրգանի հատկությունների արդեն բյուրեղացվող հետևանքներն ու նոր բյուրեղացումների ժառանգական հակվածությունները:

Այն ժամանակաշրջանում, երբ ձեզ նման մարմնավորված և արդեն եռուղեղ էակին համապատասխանող պատասխանատու տարիքին հասած հիշյալ Սրբազան Անհատականությունն անմիջականորեն սկսեց դեկավարել ձեր նախնիների սովորական լինելիական գոյատևումը, նրանցից շատերն իրապես ամբողջովին ձերբազատվեցին Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից և, դրանով կա՛մ Լինելիություն ձեռք բերեցին իրենց համար, կա՛մ նորմալ կազմավորման աղբյուրներ հանդիսացան իրենց նման էակների նորմալ ներկայության սկզբնավորման համար:

Սակայն, այն փաստի հետևանքով, որ հիշյալ Սրբազան Անհատականության ձեր մեջ ներկա գտնվելու ժամանակից առաջ արդեն անսասանորեն ձեր իսկ կողմից հաստատված սովորական գոյության աննորմալ պայմանների պատճառով ձեր գոյատևման տևողությունն անբնականորեն կարճացել էր, ապա շատ շուտով այդ Սրբազան Անհատականության հետ նույնպես պետք է տեղի ունենար սրբազան ռասկուարնո, այսինքն՝ նա նույնպես, ինչպես դուք, պետք է վաղաժամ մահանար, իսկ նրա մահից հետո աստիճանաբար կրկին վերահաստատվեցին նախկին պայմանները, ինչը տեղի ունեցավ մի կողմից արդեն հաստատում գտած սովորական գոյատևման աննորմալ պայմանների պատճառով, մյուս կողմից՝ ձեր հոգեկառույցի այն չարաղետ առանձնահատկության պատճառով, որը իմաստակություն է կոչվում:

Ձեր հոգեկառույցի այդ առանձնահատկության դրսևորումը հանգեցրեց այն բանին, որ Վերից ուղարկված հիշյալ Սրբազան Անհատականության ժամանակակիցներից ընդամենը երկու սերունդ անց աստիճանաբար փոփոխության ենթարկվեցին նրա բոլոր բացատրություններն ու պատվիրանները՝ ընդհուպ մինչև դրանց լիակատար ոչնչացում:

Այնուհետև նույն բանը կրկին ու կրկին ի կատար է ածվել Ամենաբարձրագույն Համատիեզերական Ավարտուն Արդյունք-էակների կողմից, և ամեն անգամ նրանց այդ ջանքերն ի դերն են ելել:

Եվ ահա, ժամանակի ներկա հատվածում, երբ ձեր մոլորակի եռուղեղ էակների լինելիական գոյատևման աննորմալ պայմանները հատկապես ընդգծված են դրսևորվում Երկիր մոլորակի մակերևույթի Գաղտակուրհանդա կոչվող այս հատվածում՝ լքողներն խաթարելով ամբողջ արևային համակարգության բնականոն գոյությունը, Վերնից ձեզ մոտ է առաքվել իմ Էությունը, որպեսզի հենց տեղում, ձեր սեփական էությունների հետ միասին, առկա պայմաններում ուղիներ և միջոցներ

գտնենք, որպեսզի դուք ձերբազատվեք ձեր ներկայություններում առկա այն հետևանքներից, որոնք ընդամենը Սրբազնագույն Տիեզերական Ավարտուն Արդյունք-Էակների մի վրիպման արդյունք են:»

Այսպես խոսելով՝ Սուրբ Բուդդան նրանց հետ զրուցելու ընթացքում նախ Իր համար պարզեց, ապա նաև մյուսներին բացատրեց, թե ինչպես պետք է վարեն իրենց գոյատևումը, ինչպես նաև՝ այն կարգը, թե ինչպես նրանց դրական մասը պետք է ղեկավարի անգիտակցական մասին, որպեսզի նրանց ընդհանուր ներկայություններից աստիճանաբար վերանան և՛ Կունդաբուֆեր օրգանի բյուրեղացված հետևանքները, և՛ դրանց նկատմամբ ժառանգական հակումը:

Ինչպես պարզեցի նույն այդ մանրագնին հետազոտությունների արդյունքում, ժամանակի այն հատվածում, երբ Երկրի մակերևույթի այդ մասի էակների ներքին հոգեկառույցը գտնվում էր Վերևից առաքված Սուրբ Բուդդայի ղեկավարության ներքո, նրանց համար այդքան չարաղետ դարձած նշածու հետևանքներն իրոք սկսում էին աստիճանաբար չքանալ նրանցից ումանց ներկայություններից:

Սակայն, ի ցավ ցանկացած աստիճանի Մաքուր Բանականության հասած ամեն մի Անհատականության և ի դժբախտություն այդ մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների բոլոր հետագա սերունդների, Վերևից առաքված Բանագնաց Սուրբ Բուդդայի ժամանակակիցներին հաջորդած հենց առաջին սերունդը նորից սկսեց, հոգեկառույցի նույն այն առանձնահատկության պատճառով, որ իմաստակություն է կոչվում և մինչև այսօր այնտեղ հաստատված սովորական լինելիական գոյատևման աննորմալ պայմանների գլխավոր արդյունքներից մեկն է, իմաստակություն բանեցնել Նրա թողած բոլոր ցուցումների ու խորհուրդների շուրջ, և այս անգամ «գերիմաստակությունն» այնքան հիմնովին էր, որ երրորդ կամ չորրորդ սերնդին ոչինչ չհասավ, բացի, ինչպես մեր պատվարժան Մոլլա Նասրեդինն է ասում՝ «տվյալներից, թե առաջ դրանից ինչ հոտ էր գալիս»:

Կամաց-կամաց նրանք այնքան փոխեցին Նրա պատվիրաններն ու խրատները, որ եթե դրանց Սուրբ Հեղինակը հանկարծ նորից հայտնվեր այնտեղ և այս կամ այն պատճառով կամենար ծանոթանալ դրանց հետ, ապա երբևէ չէր էլ կասկածի, որ այդ պատգամներն ու խրատները հենց Ինքն է տվել:

Այստեղ ես չեմ կարող զսպել իմ «Էաբուխ-սրտնեղվածությունը» այնտեղի քո սիրելիների մեջ հաստատված այն արտառոց վարվելակերպից, որը նրանց սովորական գոյատևման բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում աստիճանաբար արդեն, այսպես ասած, օրինաչափության է վերածվել:

Եվ այս դեպքում նույնպես այդ նույն կայունացած արտառոց վարվելակերպն էր, որ նպաստեց Սուրբ Բուդդայի տված բոլոր ճշմարիտ պատվիարանների ու ճշգրիտ խորհուրդների խիստ փոփոխությանը՝ դրանով հանդերձ ստեղծելով ևս մեկ գործոն, որ էլ ավելի թուլանա նրանց հոգեկառույցը:

Վաղուց կայունացած այդ վարվելակերպն արտահայտվում է նրանով, որ մի փոքրիկ, երբեմն շատ չնչին պատճառը բավարար է լինում, որպեսզի վատթարացնի կամ լիովին ոչնչացնի «բնականոն գոյատևման ռիթմի» ավելի վաղ հաստատված ամեն մի օբյեկտիվորեն գերադասելի վիճակ:

Քանի որ, տղա՛ս, այդ աննշան պատճառի ծագման մանրամասների լուսաբանումը, որը տվյալ դեպքում հիմք հանդիսացավ Վերևից ուղարկված ճշմարիտ Բանագնաց Սուրբ Բուդդայի բոլոր ճշմարիտ բացատրությունների ու ճշգրիտ պատվիրանների աղավաղման համար, հրաշալի նյութ կարող է ծառայել, որպեսզի ավելի լավ ծանոթանաս ու հասկանաս քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հոգեկերտվածքային տարօրինակությունները, ապա դրա մասին ես ավելի մանրամասն կպատմեմ և կբացատրեմ քեզ, թե հատկապես ի՛նչ հաջորդականությամբ այն ժամանակ այնտեղ դրսևորվեց հիշյալ վարվելակերպը, որը դեռևս շարունակում է ակնառու դրսևորվել, և որն այնտեղ հանգեցրեց հետևյալ ցավալի թյուրիմացությանը:

Բայց նախ ես քեզ պետք է տեղյակ պահեմ հետևյալ երկու փաստերի մասին:

Առաջինն այն է, որը այդ թյուրիմացությունը ես բացահայտեցի իմ կողմից այժմ նկարագրվող դեպքերից շատ ժամանակ անց. այլ բաների շարքում ես այդ բացահայտումն արեցի վեցերորդ անգամ այնտեղ իջնելուց հետո, երբ Սրբազան Աշխաթա Շիեմաշի հետ առնչվող մի հարցի կապակցությամբ, որի մասին ես շուտով մանրամասնորեն քեզ կպատմեմ, ինձ հարկ եղավ իմանալ Վերևից ուղարկված ճշմարիտ Բանագնաց Սուրբ Բուդդայի գործունեության մասին:

Իսկ երկրորդ փաստն այն է, որ, ցավոք, այդ ողբալի թյուրիմացության համար հիմք են ծառայել որոշ իրապես ասված խոսքեր, որոնք եղել են հենց Իր՝ Սուրբ Բուդդայի տված բացատրություններից մեկի մեջ:

Պարզվում է, որ իրոք՝ հենց Իր կողմից ձեռնադրված Իր մերձավորագույն նվիրյալների համար տված Իր բացատրություններում Ինքը՝ Սուրբ Բուդդան, որոշակիորեն կարծիք է հայտնել Կունդաբուֆեր օրգանի հատկությունների այն հետևանքների ոչնչացման վերաբերյալ, որոնք նրանց բնույթին փոխանցվում են ժառանգաբար:

Ի թիվս այլ բաների՝ Նա շատ որոշակիորեն ասել է հետևյալը.

– Ամենալավ միջոցներից մեկը, որով կարելի է ի չիք դարձնել Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացման նկատմամբ ձեր բնույթում առկա հակվածությունը՝ «կամավոր տառապանքն» է, իսկ ձեր ներկայության ամենամեծ կամավոր տառապանքն այն է, որ ի վիճակի լինեք հանդուրժելու «ուրիշների տհաճ վերաբերմունքը ձեր նկատմամբ»:

Սուրբ Բուդդայի այդ բացատրությունը, Նրա մյուս ճշգրիտ պատվիրանների հետ մեկտեղ, մերձավորագույն նվիրյալների ջանքերով տարածվել է շարքային էակների միջավայրում, իսկ երբ Նրա հետ սրբազան ռասկուարնո է տեղի ունեցել, այն փոխանցվել է մի սերնդից մյուսին:

Եվ ահա, զավա՛կս, երբ, ինչպես արդեն ասել եմ, Սուրբ Բուդդայի ժամանակակիցներից մի երկու-երեք սերունդ էր անցել, դեռևս Աստվանտիդայի կործանման ժամանակներից նրանց հոգեկառույցում արմատներ ձգած այն յուրահատկության դրոմամբ, որն անվանվում է «իմաստակելու օրգանական-հոգեկան պահանջ», ի դժբախտություն ինչպես իրենց, այնպես էլ հետագա սերունդների՝ ընդհուպ մինչև վերջին ժամանակները, նրանք սկսեցին զանազան իմաստակություններ բանեցնել Սուրբ Բուդդայի տված խորհուրդների շուրջ, և այն ժամանակ, որպես դրա անմիջական հետևանք՝ ամրապնդվեց և նույնպես սկսեց սերնդեսերունդ փոխանցվել շատ որոշակի մի պատկերացում, ըստ որի՝ Նրա ասած այդ «հանդուրժողականությունը» անպայման պետք է կոփվի մյուսներից լիակատար մեկուսացվածության պայմաններում:

Այս պարագայում քո սիրելիների հոգեկառույցի արտառոցությունը դստրվեց ճիշտ այնպես, ինչպես հիմա է դրսևորվում, այն է՝ նրանք հաշվի չառան և հաշվի չեն առնում այն ակնհայտ փաստը (ակնհայտ՝ քիչ թե շատ առողջ բանականություն ունեցողի համար), որ Աստվածային Ուսուցիչ Սուրբ Բուդդան, որը խորհուրդ էր տալիս «հանդուրժողականություն» կոփել, ի նկատի ուներ, որ դա պետք է արվի իրենց նմանների միջավայրում գոյատևելու ընթացքում, այսինքն՝ հաճախակի իրենց ներկայության մեջ սրբազան լինելիական իրացումներ գործադրելով իրենց համար տհաճ այն դրսևորումների նկատմամբ, որոնք ծնվում են իրենց նմանների ցուցաբերած վերաբերմունքից. դրանով հանդերձ նրանք իրենց մեջ կձևավորեին, այսպես կոչված, «տրենտրուդիանոներ»¹³⁰ կամ, ինչպես իրենք կասեին, «հոգեքիմիական արդյունքներ», որոնք ընդհանրապես բոլոր եռուղեղ էակների ներկայություններում կազմավորում են այն սրբազան լինելիական նախադրյալները, որոնց հիման վրա եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններն օժտվում են սրբազան լինելիական Եռամասիկապողի երեք սուրբ ուժերից մեկով, իսկ այդ սուրբ ուժը հաստատողի դեր է կատարում բոլոր այն ժխտող հատկությունների կողքին, որոնք արդեն առկա են իրենց մեջ:

Այսպիսով, զավա՛կս, այն ժամանակից սկսած, երբ գոյության իրավունք ստացավ նշված պատկերացումը, քո սիրելիները սկսեցին հեռանալ արդեն իսկ գոյացած լինելիական գոյակցության պայմաններից, որոնց պատճառով նրանց ներկայություններում ուժեղացել էր Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացման նկատմամբ հակվածությունը և որոնցում ինչպես կարծում էր Աստվածային Ուսուցիչ Բուդդան, «ուրիշների տհաճ վերաբերմունքը» հանդուրժելը կարող էր նրանց ընդհանուր ներկայության մեջ բյուրեղացնել այն Պարտք-պարտականությունը, որն ունենալն անհրաժեշտ է բոլոր եռուղեղ էակներին:

Եվ ահա, հանուն այդ նշանավոր «տառապանքի»՝ քո այդ մոլորակի շատ եռակենտրոն էակներ, միայնակ կամ գաղափարակիցների ամբողջ խմբերով, այդ ժամանակից սկսած՝ սկսեցին հեռանալ իրենց նմաններից:

¹³⁰ ռուս. տարբերակում՝ «трентрудiano», անգլ. տարբերակում՝ “trentroodianos”

Այդ նպատակով նրանք նույնիսկ հատուկ գաղութներ հիմնեցին, որոնցում, թեև համատեղ էին ապրում, այնուհանդերձ ամեն ինչ կազմակերպում էին այնպես, որ «հանդուրժողականություն» ձեռք բերեն միայնության մեջ:

Հենց այդ ժամանակ էր, որ սկսեցին կազմավորվել նշանավոր, այսպես կոչված, «վանքերը», որոնք գոյություն ունեն մինչև այսօր, և որոնցում քո սիրելի էակների ժամանակակից ներկայացուցիչներից ոմանք, ինչպես իրենք են ասում, «փրկում են իրենց հոգիները»:

Երբ առաջին անգամ այցելեցի Գաղտակուրհանդա, այնտեղի եռուղեղ էակների մեծամասնությունը, ինչպես արդեն ասել եմ, հենց այդ կրոնի հետևորդներն էին, որը հիմնված էր, Սրբազան Բուդդայի, այսպես ասած, ճշգրիտ խորհուրդների ու պատվիրանների վրա, և նրանցից յուրաքանչյուրի հավատն անկասելի էր և ամուր:

Այդ կրոնական վարդապետության նրբությունների ուսումնասիրության սկզբնական շրջանում ես դեռևս չէի կարողանում որոշում կայացնել, թե այն ինչպես օգտագործեմ իմ նպատակին հասնելու համար: Մակայն հետագա ուսումնասիրության ընթացքում ես ևս մեկ թյուրիմացություն հայտնաբերեցի, որը կրկին սկիզբ էր առել այդ կրոնի հետևորդների շատ որոշակի մի պատկերացումից՝ հիմնված Սուրբ Բուդդայի կողմից իրապես ասված խոսքերի վրա: Դրանից հետո ինձ համար անմիջապես պարզ դարձավ, թե հատկապես ի՞նչ գործողությունների դիմեմ՝ օգտվելով այդ յուրահատուկ հավատորոնողից կամ կրոնից:

Պարզվեց, որ Սուրբ Բուդդան տիեզերական ճշմարտությունների իր բացատրություններում, այլ բաներից զատ, նրանց նաև այն մասին է պատմել, որ ընդհանրապես բոլոր եռուղեղ էակները՝ լինեն դրանք համայն Մեծ Տիեզերքի տարբեր մոլորակների վրա, թե հենց Երկրի վրա, այլ բան չեն, քան այն Մեծագույն Ուժի առանձին մասերը, որը Համընդգրկողն է համայն գոյի, և որ այդ Մեծագույն Ուժի Հիմքը գտնվում է Վերևում, որպեսզի հարմար լինի համայն գոյի էությունն ընդգրկելը:

Այդ համայն գոյն ընդգրկող Մեծագույն Հիմքն իր ճառագումներով անընդհատ ողողում է ամբողջ Տիեզերքը և մոլորակների վրա եղած մասնիկներով հանդերձավորվում է որոշ եռուղեղ էակների տեսքով, որոնք իրենց ընդհանուր ներկայության մեջ ունակություն են ձեռք բերում սեփական գործունեություն ծավալելու երկու հիմնական տիեզերական օրենքներով՝ սրբազան Յոթնապարապարշիտողով և սրբազան Եռամասիկապողով, դրանով իսկ վերածվելով մի միավորի, որի մեջ միայն կարող է կենտրոնանալ և արմատներ ձգել Օբյեկտիվ Աստվածային Բանականությունը:

Եվ մեր Համընդհանուր Արարիչն է այդպես կանխատեսել ու արարել, որ իր Աստվածային Բանականությամբ արդեն ոգեկոչված Մեծ Համընդգրկողի առանձին մասնիկները կրկին վերադառնան և միավորվեն Համընդգրկուն Սկզբնաղբյուրի հետ և կազմեն մեկ Ամբողջություն, որն էլ հենց կարող է իրականացնել համայն Տիեզերքի իմաստն ու նպատակը, ինչպես դա ակնկալում է Համընդհանուր Անսահման Ամենագոյը:

Այնուհետև Սուրբ Բուդդան, ինչպես երևում է, նրանց ասել է հետևյալը.

– Դուք՝ Երկիր մոլորակի եռակենտրոն էակներդ, հնարավորություն ունենալով ձեռք բերելու ձեր ներսում գործող երկու հիմնական համընդհանուր սրբազան օրենքները, դրանով իսկ հնարավորություն ունեք ինքներդ ձեզ հանդերձավորելու համայն գոյի Մեծ Համընդգրկողի սրբազանագույն մատով և այն կատարելագործելու՝ Աստվածային Բանականության պարտադիր մասնակցությամբ: Եվ այդ Մեծ Համընդգրկողը, որն ընդգրկում է ընդգրկման ենթակա ամենայն ինչ, կոչվում է «Սուրբ Պրանա»:

Սուրբ Բուդդայի այդ լիովին հստակ բացատրությունը նրա ժամանակակիցները շատ լավ հասկացել են, և նրանցից շատերը, ինչպես արդեն ասել եմ, եռանդուն կերպով ձգտել են նախ կլանել, ապա իրենց ներկայության մեջ հանդերձավորել այդ Մեծագույն Ուժի մասնիկը, որից հետո՝ դրան «օժտել» Աստվածային Օբյեկտիվ Բանականությամբ:

Մակայն երբ Սուրբ Բուդդայի ժամանակակիցներից երկու-երեք սերունդ էր անցել, այնտեղի էակները սկսեցին իմաստակություն բանեցնել տիեզերական ճշմարտությունների վերաբերյալ տված Նրա բացատրությունների շուրջ՝ դա անելով իրենց յուրահատուկ Բանականության միջոցով, որի հետևանքով հանգեցին խիստ որոշակի և հետագայում սերնդեսերունդ փոխանցված մի պատկերացման, համաձայն որի՝ այդ նույն «պարոն Պրանան» արդեն իրենց մեջ է իրենց սկզբնավորման պահից սկսած:

Այդ թյուրիմացության պատճառով այն ժամանակվա էակներն ու նրանց հետագա բոլոր սերունդները՝ ներառյալ նաև ժամանակակիցները, երևակայում էին և մինչև հիմա շարունակում են երևակայել, որ, առանց որևէ լինելիական Պարտք-պարտականության, իրենք արդեն իսկ այն Մեծագույն Ուժի մասնիկներն են, որի մասին անձամբ Սուրբ Բուդդան ժամանակին իրենց շատ որոշակի բացատրություն է տվել:

Եվ ահա, զավա՛կս, հենց որ ես պարզեցի, որ այդպիսի թյուրիմացություն գոյություն ունի, և որ Գաղտակտորհանդա երկրի բոլոր էակներն առանց բացառության համոզված են, թե իրենք վաղուց արդեն «պարոն Պրանայի» մասնիկներն են, անմիջապես որոշեցի օգտվել այդ թյուրիմացությունից և այդ վայրում նույնպես, հենվելով իրենց իսկ կրոնի վրա, հասնել իմ նպատակին:

Նախքան այդ մասին իմ պատմությունը շարունակելու անպայման հարկավոր է նշել, որ ինչ վերաբերում է Սուրբ Բուդդայի ասածներին՝ հատկապես այն բանին, որ իբր Նա ասել է, թե էակներն արդեն իսկ իրենց սկզբնավորման պահից սկսած իրենց մեջ Մեծագույն Ուժի մասնիկ ունեն, իմ անձնական մանրամասն հետազոտություններն ամենայն հստակությամբ ցույց տվեցին, որ Նա նման բան չէր կարող ասած լինել:

Համաձայն իմ մանրագնին ուսումնասիրությունների՝ Նա չէր կարող նման բան ասած լինել թեկուզև այն պատճառով, որ երբ Նա գտնվում էր իր մերձավորագույն նվիրյալների հետ Մենկի-օրի վայրում էր, հստակորեն ասել է հետևյալը.

– Եթե այդ սրբազնագույն Պրանան բյուրեղացել է ձեր մեջ, լինի դա գիտակցաբար, թե ձեր Ես-ի կողմից չգիտակցված, դուք անպայման պետք է անհատական Բանականությունն իր բոլոր սրբագույն ատոմներով հանդերձ հասցնեք կատարելության հարկ եղած աստիճանին, այլապես այդ սրբագույն հանդերձը, փոխելով զանազան ձևեր, կտուժվի և հավերժ կտառապի:

Այստեղ հետաքրքիր է նշել նաև, որ այդ մասին նրանց զգուշացրել է մեկ ուրիշ Սուրբ Անհատականություն ևս՝ նույնպես Վերին ճշմարիտ Բանագնաց Սուրբ Կիրմինինաշան¹³¹:

Այդ Սուրբն ու ճշմարիտ Բանագնացն իր զգուշացումը ձևակերպել է հետևյալ խոսքերով.

«Երանելի է հոգի ունեցողը, երանելի է նաև այն չունեցողը, բայց վա՛յ նրան, ով դրա սաղմն ունի միայն»:

Այսպիսով, զավա՛կս, երբ այնտեղ՝ Գաղտակտորհանդայում, այդ ամենը պարզեցի, ես որոշեցի այդ մոլորությունն օգտագործել իմ նպատակին հասնելու համար:

Եվ ինչպես Գոբ քաղաքում, այնպես էլ Գաղտակտորհանդայում, ես հորինեցի «մանրակրկիտ մշակված մի հավելում», որը կարելի էր հանգիստ կցել նշված կրոնական ուսմունքին և սկսեցի տարածել այդ հորինվածքը բոլոր հնարավոր միջոցներով:

Գաղտակտորհանդայում ես սկսեցի տարածել մի պատկերացում, ըստ որի՝ այն «Սրբազնագույն Պրանան», որի մասին խոսում էր Աստվածային Ուսուցիչ Սուրբ Բուդդան, արդեն առկա է ոչ միայն մարդկանց, այլ նաև Երկրի վրա սկզբնավորվող և գոյատևող բոլոր մյուս էակների մեջ:

Այդ Ամենամեծագույն Համընդգրկողի, այսինքն՝ Սրբազնագույն Պրանայի մասնիկը ի սկզբանե տեղադրված է լինում ամեն տեսակի ու չափսի էակների մեջ, որոնք բազմանում են մոլորակի ցամաքում և ջրում, նաև մթնոլորտում:

Այստեղ ցավով պետք է խոստովանեմ, տղա՛ս, որ այն ժամանակ ես հաճախ ստիպված էի լինում պնդել, որ այդ բառերը նույնությամբ ժամանակին հնչել են հենց Իր՝ Սուրբ Բուդդայի շուրթերից:

Այնտեղի այն մի քանի էակները, որոնց հետ «ընկերական» հարաբերություններ էի հաստատել, և որոնց, առանց առանձնապես մեծ ջանքեր թափելու, առաջինը համոզեցի իմ հորինվածքի ճշմարտացիության մեջ, ոչ միայն անմիջապես հավատացին դրան, այլև հետագայում շատ գործունե կերպով, օգնեցին ինձ, իհարկե՝ անգիտակցաբար, որ լայնորեն տարածեմ իմ այդ նոր հորինվածքը:

Այստեղ նույնպես իմ ընկերներն ամենուրեք ու մշտապես շատ եռանդուն ու կրքոտ ապացուցում էին իրենց նմաններին, որ դա հենց այդպես է և այլ կերպ լինել չի էլ կարող:

Կարճ ասած, այնտեղ՝ Գաղտակտորհանդայում, իմ երկրորդ նոր հորինվածքը ցանկալի արդյունքներ տվեց անսպասելի արագությամբ:

Եվ Գաղտակտորհանդայում նույնպես, միայն շնորհիվ իմ այդ հորինվածքի, քո սիրելիներն այնքան խիստ փոխեցին իրենց էաբուխ վերաբերմունքն այլ տեսակի էակների նկատմամբ, որ ոչ միայն

¹³¹ ռուս. տարբերակում՝ «Кирминипаша», անգլ. տարբերակում՝ “Kirmininasha”

դադարեցին տխրահռչակ գոհամատուցման պատրվակով դրանց գոյությանը վերջ տալուց, այլ նաև սկսեցին շատ անկեղծորեն՝ իրենց ողջ էությանը, այլ տեսակի էակներին համարել ճիշտ այնպիսին, ինչպիսին իրենք են:

Եթե այդպես շարունակվեր, ապա ամեն ինչ շատ լավ կլիներ. սակայն, ինչպես դա եղավ Պախրակարանում, այստեղ նույնպես սկսեցին իրենց բնորոշ իմաստակությունը բանեցնել, ինչի հետևանքով շատ շուտով սկսեցին դրսևորել իրենց հավատորոնողի ծիծաղաշարժ կողմերը:

Օրինակ, իմ քարոզների սկզբից իրենց հաշվարկով քառորդ տարին դեռ չանցած՝ եթե անցնեիր Քայամոնի փողոցներով, ապա ամեն քայլափոխի կտեսնեիր էակների, որոնք քայլում են «ոտնացուպերով»: Այդպես էին քայլում, որ չտրորեին միջատներին՝ այն «փոքրիկ էակներին», որոնց իրենք ճիշտ իրենց նման էին համարում:

Շատերը վախենում էին աղբյուրից կամ գետից վաղուց վերցրած ջուր խմել, քանի որ կարծում էին, որ այդպիսի ջրում հաստատ կլինեն և ակամա կույ կգնան «մանրագույն էակներ», որոնց էությունը ճիշտ այնպիսին է, ինչպիսին իրենցն է:

Շատերը, զգուշավորությունից դրդված, հատուկ շորով փակում էին իրենց քիթ-բերանն ու ականջները, որպեսզի դրանց ծակերով պատահաբար ներս չանցնեն ճիշտ իրենց էությունն ունեցող մանրմունք էակներ, և այլն, և այլն:

Այդ ժամանակից սկսած՝ Գաղտակուրիանդայի մայրաքաղաք Քայամոնում և դրա շրջակայքում սկսեցին կազմավորվել զանազան ընկերություններ, որոնք նպատակ էին դնում պաշտպան կանգնելու այն «անպաշտպան» էակներին՝ ինչպես իրենց կողքին ապրողներին, այնպես էլ նրանց, որոնց իրենք «վայրի» էին կոչում:

Բոլոր ընկերությունները կանոնադրություններ ունեին, որոնցում արգելվում էր, ոչ միայն գոհամատուցման նպատակով այլ էակներ սպանելը, այլև դրանց մոլորակային մարմինների օգտագործումը՝ որպես «առաջին լինելիական սնունդ»:

Է՛հ, տղա՛ս...

Կրկին միայն և միայն նրանց հոգեկառույցի արտառոցության պատճառով՝ հատուկ իրենց համար և իրենց նման մոլորակային մարմին առած Սրբազան Անհատականություն Սուրբ Բուդդայի ինքնակամ տառապանքն ու գիտակցական գործունեությունն անտեղի օդում կախված են մնացել և դեռ էլի այդպես կմնան, իսկ նրանք ոչ միայն դեռևս որևէ շոշափելի արդյունքի չեն հասել Նրա պատգամների իրականացման բնագավառում, այլև ծնունդ են տվել և էլի շարունակում են ծնունդ տալ միայն այլազան կեղծ ուսմունքների, ինչպիսիք են, օրինակ, վերջերս ծագած «օկուլտիզմը», «թեոսոֆիան», «սպիրիտուալիզմը», «հոգեվերլուծությունը» և այլն, որոնք, ինչպես առաջ, այնպես էլ հիմա, միայն միջոց են ծառայում իրենց առանց այդ էլ մթագնած հոգեկառույցն է՛լ ավելի մթնեցնելու համար:

Հարկ կա՞ արդյոք ասելու, որ Սուրբ Բուդդայի տված ճշմարտություններից բացարձակապես ոչինչ չի մնացել և չի հասել մինչև ներկա ժամանակները:

Միայն Նրա բառերից մեկի կեսն է հասել այդ աննման մոլորակի ժամանակակից էակներին, իսկ թե դա ինչպես է պատահել, հիմա կպատմեմ:

Ամեն ինչից զատ՝ Սուրբ Բուդդան Գաղտակուրիանդայի էակներին իր ժամանակին նաև բացատրել է, թե ինչպես և իրենց նախնիների մարմինների հատկապես ո՞ր մասում է ներդրվել հիշյալ Կունդաբուֆեր օրգանը:

Նա պատմել է, որ Լույսու Հրեշտակապետը հատուկ եղանակով այդ օրգանն աճեցրել է նրանց նախնիների այն ուղեղի վերջնամասում, որը, ինչպես և քեզ մոտ է, Բնությունը տեղաբաշխել է մոլորակային մարմնի մեջքի երկայնքով, այսպես կոչված, «ողնաշարի» մեջ:

Պարզել եմ նաև, որ Սուրբ Բուդդան այն ժամանակ նաև ասել է, որ թեև այդ օրգանը նրանց նախնիների մարմնից արդեն հանված է, սակայն դրա նյութական կազմի վկայությունը մնացել է այդ ուղեղի ծայրամասում և, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել է մինչև իրենց:

– Այդ նյութական կազմավորումը,– ասել է Նա,– այժմ արդեն ոչ մի դեր չի խաղում և ժամանակի ընթացքում իսպառ կոչնչանա, եթե ձեր լինելիական գոյատևումն ընթանա այնպես, ինչպես սազական է եռակենտրոն էակներին:

Այնուհետև, երբ նրանք սկսել են իմաստակություն բանեցնել և իրենց նշանավոր «տառապանքի» համար նոր ձևեր հնարել, այդ բառի նկատմամբ էլ են որոշ «աճպարարություն» արել:

Նախ և առաջ, քանի որ այդ բառի երկրորդ արմատը պատահաբար համընկել է իրենց այն ժամանակվա լեզվի «խոկում» բառի հետ, և երկրորդ քանի որ նրանք միջոց գտան, որ այդ նյութական կազմավորումը վերացնեն արագորեն, ոչ թե ժամանակի ընթացքում, ինչպես իրենց ասել էր Սուրբ Բուդդան, ուստի նրանք իրենց աղքատիկ Բանականությամբ իմաստակություն արեցին հետևյալ կերպ. քանի որ այդ օրգանը դեռևս գործում է, ուրեմն դրա անվան մեջ պետք է որ «խոկում» բառը լինի. մյուս կողմից՝ քանի որ մենք ուզում ենք, որ այդ օրգանը վերանա, ուրեմն այդ անվանումը պետք է վերջանա «նախկին» բառով: Եվ, քանի որ այդ «նախկին» բառն այն ժամանակ հնչում էր «լինի», ապա Կունդաբուֆեր բառի երկրորդ արմատը փոխեցին դրանով և արդյունքում ստացան «Կունդալինի»:

Արդյունքում Կունդաբուֆեր բառի կեսը շատ կենսունակ դուրս եկավ և հասավ քո սիրելիների այսօրվա ներկայացուցիչներին՝ համեմված հարյուրավոր տարբեր բացատրություններով:

Նույնիսկ ներկայիս «գիտուն այրերն» են ողնուղեղի այդ հատվածին անուն կպցրել՝ կազմված համարյա անըմբռնելի լատինական արմատներից:

Այդ վայրում ներկայումս գործող «հնդկական փիլիսոփայությունը» հիմնված է նաև այդ նշանավոր Կունդալինիի վրա, իսկ բուն բառի վերաբերյալ գոյություն ունեն հազարավոր տարբեր օկուլտիստական, գաղտնի ու բաց «գիտություններ», որոնք ընդհանուր հաշվով ոչինչ չեն բացատրում:

Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե երկրային ժամանակակից գիտուն էակները, որոնք, այսպես կոչված, «ճշգրիտ գիտություններն» են ներկայացնում, ինչ բացատրություն են տալիս ողնուղեղի այդ հատվածի վերաբերյալ, ապա, տղա՛ս, դա մե՛ծ գաղտնիք է:

Եվ դա գաղտնիքի է վերածվել այն պատճառով, որ մի քանի դար առաջ, խիստ հանկարծակի և առանց որևէ պատճառի, այդ «բացատրությունը» խցկվել է Շեհերազադեի շատ սիրելի խալի մեջ, որը գտնվում է աննման երևակայությամբ օժտված այդ արաբուհու հրաշագեղ պորտից մի փոքր աջ:

Մինչև այսօր այդ «գիտական բացատրությունն» այնտեղ պահվում է լրիվ անխաթար վիճակում:

Երբ ես լիովին համոզվեցի, որ ինձ հեշտությամբ հաջողվել է հավանաբար երկար ժամանակով վերջ դնել Գաղտակուրհանդայում բնակվող երրորդ խմբի էակների այդ ահավոր սովորությանը, որոշեցի այլևս այդտեղ չմնալ, այլ վերադառնալ Բարեգթության ծովում գտնվող մեր «Պատահար» տիեզերանավը:

Երբ արդեն լրիվ պատրաստ էինք լքելու Գաղտակուրհանդան, հանկարծ գլխումս միտք ծագեց Բարեգթության ծով վերադառնալ ոչ թե մեր եկած ճանապարհով, այլ այն ժամանակների համար դեռևս անսովոր մի ուրիշ ճանապարհով. այն է՝ ես որոշեցի անցնել մի տեղանքով, որն ավելի ուշ ժամանակաշրջանում «Տիբեթ» անվանվեց:

ԳԼՈՒԽ ԻԲ

Բեհեղգերուն առաջին անգամ Տիբեթում

«Քանի որ այս անգամ մեր ենթադրյալ երթուղին կատարելապես անսովոր էր այն ժամանակվա եռուղեղ էակների համար, և, հետևաբար, մենք չէինք կարող հույս կապել նրանց որևէ մի քարավանի միանալու հետ, ստիպված եղա ինքս քարավան կազմել և հենց նույն օրը սկսեցի այդ նպատակի համար անհրաժեշտ բաները հավաքել:

Գնեցի մի քանի տասնյակ չորքոտանի էակներ, որոնք կոչվում են «ձի», «ջորի», «էշ», «չամիանական»¹³² այծ» և այլն, և վարձեցի քո սիրելի երկոտանի էակներից մի քանիսին, որ նշածս չորքոտանիներին խնամեին և կատարեին այն կիսագիտակցական աշխատանքը, որի անհրաժեշտությունը ծագում է նման ճամփորդությունների ընթացքում:

Երբ ամեն ինչն արդեն պատրաստ էր, ես ճամփա ընկա Ահունի ուղեկցությամբ:

¹³² ռուս. տարբերակում՝ «чамийскими», անգլ. տարբերակում՝ «Chamianian»

Այս անգամ մենք անցնում էինք այդ չարաբաստիկ մոլորակի ընդհանուր Բնության առավել անսովոր ու յուրօրինակ վայրերով, նաև մեր ճանապարհին հանդիպեցինք կամ, այլ կերպ ասած, մեր տեսադաշտում հայտնվեցին անհամեմատ ավելի մեծ քանակությամբ զանազան տեսակի միատուղեղ և երկուղեղ էակներ, որոնք «վայրի» են կոչվում և այդ ժամանակներում այդ վայրերն էին հասնում Աշխարհք մայրցամաքի շատ հեռավոր մասերից, որպեսզի, ինչպես այնտեղ է ասվում, «որս անեն»:

Այն ժամանակ նշված վայրի էակները «վտանգավոր» էին ինչպես այնտեղի եռուղեղ էակների, այնպես էլ այն տարբեր տեսակի չորքոտանի էակների համար, որոնց քո սիրելիներն իրենց բնորոշ «խորամանկությամբ» արդեն հասցրել էին ստրկացնել՝ դրանց ծառայացնելով բացառապես իրենց եսասիրական պահանջմունքների բավարարմանը:

Իսկ հիշյալ վայրի էակներն այն ժամանակ հատկապես վտանգավոր էին այն պատճառով, որ հենց այդ ժամանակ դրանց ներկայության մեջ բյուրեղացել էր մի առանձնահատուկ գործառույթ, որի ծագումը կրկին եռուղեղ էակների լինելիական գոյության այնտեղ արդեն հաստատված աննորմալ պայմանների հետևանքն էր, բայց այդ գործառույթի մասին ես քեզ առավել մանրամասն կպատմեմ ավելի ուշ:

Այն վայրերը, որոնցով այս անգամ անցնում էր մեր ուղին, համարյա անմատչելի էին այն ժամանակվա եռուղեղ էակների համար՝ գլխավորապես հենց այդ վայրի էակների պատճառով:

Այդ ժամանակներում եռուղեղ էակներն այդ վայրերով միայն, ինչպես իրենք են ասում, «ցերեկով» կարող էին անցնել, այսինքն՝ երբ իրենց մոլորակի Ոգիդնող Ակտիվ Տարրում տեղի է ունենում «այվայվույի» գործընթաց:

Ցերեկով կարող էին անվտանգ անցնել այն պատճառով, որ իրենց մոլորակն այդ ժամանակահատվածում իրենց արևի ճառագայթների նկատմամբ լինում է այն կրենտոնալ դիրքում, որի ընթացքում համարյա բոլոր վայրի էակները հայտնվում են «քուն» կոչվող լինելիական վիճակում, այսինքն՝ այնպիսի մի վիճակում, երբ իրենց ներկայություններում գոյանում է այն էներգիան, որն անհրաժեշտ է իրենց սովորական գոյատևման համար: Այդ էներգիան դրանց մոտ գոյանում է հենց այդ ժամանակահատվածի ընթացքում, մինչդեռ եռակենտրոն էակների մոտ լրիվ հակառակն է. այդ էներգիայի գոյացումը նրանց մոտ տեղի է ունենում ոչ թե այն ժամանակ, երբ իրենց մոլորակի մթնոլորտում ընթանում է նշած «այվայվույ» գործընթացը, այլ օրվա մյուս կեսին, որին քո սիրելիները «գիշեր» են անվանում:

Եվ ահա, զավա՛կս, այն ժամանակվա քո սիրելիներն այդ վայրերով կարող էին անցնել միայն ցերեկով: Իսկ գիշերվա ժամերին պահանջվում էր մեծ զգուշավորություն և հատուկ պատսպարանների առկայություն, որպեսզի այդ վայրի էակները վտանգ չներկայացնեն ո՛չ իրենց, ո՛չ էլ իրենց «ունեցվածքի» համար:

Երկիր մոլորակի գիշերային կրենտոնալ դիրքի ժամանակ այդ վայրի էակներն արթուն են լինում և ընդունում են իրենց առաջին լինելիական սնունդը, և, քանի որ այդ ժամանակներում նրանք արդեն սովորել էին համարյա միշտ որպես սնունդ օգտագործել բացառապես այլ տեսակի ավելի թույլ էակների մոլորակային մարմինները, ապա նրանք ժամանակի այդ հատվածում ձգտում էին որևէ այդպիսի թույլ էակ որսալ, որպեսզի դրանով բավարարեն իրենց այդ պահանջմունքը:

Այդ վայրի էակները, հատկապես ամենամանրերը, արդեն այդ ժամանակներում, իհարկե, կրկին եռուղեղ էակների սովորական լինելիական գոյության աննորմալ պայմանների հետևանքով, իդեալական կատարելության էին հասել զգուշավորության ու խորամանկության ասպարեզում:

Դրա արդյունքում ամբողջ այդ երկրորդ ճամփորդության ընթացքում մենք և հատկապես մեր բանվորները, որոնք կիսագիտակցական աշխատանք էին կատարում, գիշերային ժամերին պետք է լինեինք արտակարգ շրջահայաց և զգոն, որպեսզի պահպանեինք ինքներս մեզ, մեր չորքոտանիներին ու մեր պահուստները:

Ամեն գիշեր մեր ճամբարը վերածվում էր անտառային էակների «հավաքատեղիի», որոնք մոտ էին գալիս, որպեսզի որևէ հարմար բան փախցնեն իրենց առաջին սննդի համար, և այդ «հավաքատեղին» շատ նման էր քո սիրելիների այն «հավաքներին», որոնք գոյանում են, այսպես կոչված, «բաժնետոմսերի գնանշման» ժամանակ կամ այն դեպքերում, երբ տեղի է ունենում այս կամ այն ընկերության ներկայացուցիչների «ընտրություն», ինչը մեծ մասամբ նպատակ է հետապնդում համատեղ ուժերով միջոցներ փնտրել իրենց նման էակների երջանիկ գոյատևումն ապահովելու համար՝ անկախ ռասայական կամ կաստայական կամ կաստայական պատկանելությունից:

Թեև ամբողջ գիշեր թեժ խարույկներ էինք վառում, որպեսզի դրանցով վախեցնենք վայրի էակներին, և, թեև մեր երկոտանի բանվորները, չնայած իմ արգելքին, իրենց «էլնաֆարա»¹³³ կոչվող թունավոր նետերով սպանում էին մեր ճամբարին չափազանց շատ մոտեցած այդ էակներին, այնուհանդերձ չէր անցնում մի գիշեր, որ այդ «վագրերը», «առյուծներն» ու «բորենիները» մեր ունեցած չորքոտանի էակներից մեկին կամ մի քանիսին իրենց հետ չտանեին, ինչի հետևանքով դրանց քանակն օր օրի պակասում էր:

Թեև, զավակս, դեպի Բարեգթության ծով մեր վերադարձի ուղին անհամեմատ ավելի երկար տևեց, քան այնտեղ գնալն էր, այնուամենայնիվ այն ամենը, ինչ այն ժամանակ, այդ վայրերով անցնելով, մենք տեսանք ու իմացանք քո սիրելիների հոգեկառույցի տարօրինակությունների վերաբերյալ, լիովին փոխհատուցեց ավելորդ ծախսված ժամանակը:

Մենք այդպես ճամփորդեցինք իրենց ժամանակով հաշված մեկ ամսից ավելի և վերջապես հասանք եռուղեղ էակների մի ոչ մեծ բնակավայրի, որոնք, ինչպես հետո պարզվեց, Գաղտակուրհանդայից վերջերս էին այդտեղ տեղափոխվել:

Ինչպես հետո իմացանք, այդ բնակավայրը կոչվում է «Մինկրատորցա»¹³⁴, և երբ հետագայում այդ վայրը եռուղեղ էակների բնակության գլխավոր կենտրոնի է վերածվել, համապատասխան երկիրն էլ կոչվել է այդ նույն անունով:

Այնուհետև այդ վայրի անունը մի քանի անգամ նորից փոխվել է և այժմ կոչվում է «Տիբեթ»:

Քանի որ այդ վայրը հասանք, երբ արդեն գիշեր էր իջնում, ապա այդտեղի էակներից, ինչպես ասում են, «գիշերելու տեղ» խնդրեցինք:

Եվ երբ նրանք մեզ իրենց հարկի տակ առան, մենք շատ ուրախացանք գիշերը հանգիստ առնելու առիթով, քանի որ իսկապես այնքան էինք ուժասպառվել վայրի էակների հետ կռվելուց, որ և՛ մեզ, և՛ հատկապես մեր երկոտանի բանվորներին խիստ անհրաժեշտ էր գոնե մի գիշեր հանգիստ քնել:

Երեկոյան գրույցի ընթացքում պարզվեց, որ այդ բնակավայրի էակները պատկանում են մի աղանդի, որն այն ժամանակ Գաղտակուրհանդայում հայտնի էր «ինքնահնազանդեցնողներ» անվամբ և առաջացել էր հենց այն կրոնի ներսում, որի հետևորդները հավակնում էին ասելու, որ հետևում են Սուրբ Բուդդայի տված ուղղակի ցուցումներին:

Այդ կապակցությամբ վնաս չի լինի նշել, որ այդ մոլորակի էակները ևս մեկ առանձնահատկություն ունեին, որը վաղուց է միայն իրենց բնորոշ գիծ դարձել, այն է՝ հենց որ իրենց ներսում մի նոր հավատորոնող կամ կրոն է ծագում, անմիջապես դրա հետևորդները սկսում են բաժանվել տարբեր կուսակցությունների, որոնցից յուրաքանչյուրը շուտով ստեղծում է իր սեփական, այսպես կոչված, «աղանդը»:

Այդ առանձնահատկության ծայրահեղ արտառոցությունն այն է, որ այդ աղանդներին պատկանողները երբեք իրենք իրենց «աղանդավոր» չեն կոչում, քանի որ այդ բառը վիրավորական է համարվում. նրանց աղանդավոր են համարում միայն տվյալ աղանդին չհարողները:

Ցանկացած աղանդի հետևորդներ աղանդավոր են մնում այնքան ժամանակ, քանի դեռ բավարար քանակի թնդանոթներ ու նավեր չեն ունենում. հենց որ դրանց քանակը բավարար է դառնում, աղանդն իսկույն վերածվում է իշխող կրոնի:

Ե՛վ այդ բնակավայրի էակները, և՛ Գաղտակուրհանդայի ուրիշ շատ վայրերի էակները որպես աղանդներ բաժանվել էին այն կրոնից, որի ուսմունքը, ինչպես արդեն պատմել եմ, էս այնտեղ մանրագնին ուսումնասիրեցի, և որը հետագայում կոչվեց «բուդդայականություն»:

Այդ բնակավայրի աղանդավորները, որոնք իրենք իրենց «ինքնահնազանդեցնողներ» էին անվանում, կազմավորվել էին բուդդայական կրոնի այն աղճատված ըմբռնման հետևանքով, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, իրենք անվանում էին «տառապանք միայնության մեջ»:

Եվ հատուկ այն նպատակով, որ այդ նշանավոր «տառապանքը» կրեն առանց իրենց նմանների կողմնակի ու «վնասակար» միջամտության, այդ էակները, որոնց մոտ մենք գիշերեցինք, բնակություն էին հաստատել իրենց հայրենակիցներից բավականաչափ հեռու:

¹³³ ռուս. տարբերակում՝ «элнапары», անգլ. տարբերակում՝ “Elnapara”, մի այլ տեղ՝ “kilnapara”

¹³⁴ ռուս. տարբերակում՝ «Синкраторза», անգլ. տարբերակում՝ “Sinkratorsa”, մի այլ տեղ՝ “Sinkratorza”, կա նաև՝ “Sinkratorsta”

Այսպիսով, զավա՛կս, այն ամենը, ինչ այդ երեկո իմացա և հաջորդ օրը տեսա այդ աղանդի հետևորդների մոտ, ինձ վրա այնպիսի ծանր տպավորություն թողեց, որ դրանից իրենց ժամանակով շատ հարյուրամյակներ անցնելուց հետո էլ ես այդ մասին չէի կարողանում հիշել առանց, ինչպես ասում են, «փշաքաղվելու»՝ այնքան ժամանակ, քանի դեռ չէի պարզել ինձ համար քո այդ սիրելիների հոգեկառույցի տարօրինակությունների բոլոր պատճառները: Հիմա ես քեզ մանրամասն կպատմեմ այն ժամանակվա իմ տեսածն ու իմացածը:

Ինչպես այն ժամանակ երեկոյան զրույցի ընթացքում պարզեցի, նախքան այդ հեռավոր ու մեկուսի վայրում տվյալ աղանդի հետևորդների վերաբնակվելը նրանք, դեռևս Գաղտակուրհանդայում եղած ժամանակ, հնարել էին «տառապելու» հատուկ ձև. այն է՝ բնակվել այնպիսի մի անմատչելի վայրում, որտեղ չկարողանան ոտք դնել իրենց աղանդին չպատկանող իրենց նմանները, որոնք, հաղորդակից չլինելով իրենց «գաղտնիքներին», կարող են խանգարել իրենց կողմից հորինված «տառապելու» հատուկ գործընթացին:

Երկար որոնումներից հետո նրանք վերջապես գտել էին այն վայրը (հենց այն, որտեղ մենք պատահաբար երեկոյան կողմ հանգրվանեցինք), որը խիստ համապատասխանում էր այնպիսի նպատակին, ինչպիսին իրենցն էր, որից հետո, հիմնովին կազմակերպվելով ու նյութապես իրենց ապահովելով, իրենց ընտանիքներով հանդերձ, մեծ դժվարություններ հաղթահարելով, եկել հասել էին իրենց սովորական հայրենակիցների համար դժվարամատչելի այդ վայրը, որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, իրենց բնակության սկզբնական շրջանում կոչել են «Մինկրատորցա»:

Երբ դեռ նոր էին հաստատվել այդ նոր վայրում, նրանք քիչ թե շատ իրար հետ լեզու գտնում էին. բայց երբ սկսեցին գործնականում կիրառել իրենց հնարած «տառապանքի» հատուկ ձևը, ապա նրանց ընտանիքների անդամները, հատկապես՝ կանայք, տեսնելով, թե ինչ է իրենից ներկայացնում այդ հատուկ ձևի «տառապանքը»՝ ըմբոստացան և վճռականապես ընդդիմացան դրան, ինչն ի վերջո հանգեցրեց պառակտման:

Այդ պառակտումը տեղի էր ունեցել նրանց հետ մեր ունեցած հանդիպումից ոչ շատ առաջ, իսկ մեր այնտեղ եղած ժամանակ արդեն նրանցից ոմանք կամաց-կամաց տեղափոխվում էին ուրիշ վայրեր, որոնք նոր էին հայտնաբերվել և ավելի հարմար էին թվում մեկուսացած գոյատևման համար:

Որպեսզի հետագա իրադարձությունները քեզ համար հասկանալի լինեն, դու պետք է իմանաս, թե ինչն էր այդ աղանդի պառակտման հիմնական պատճառը:

Պարզվում է, որ դեռևս Գաղտակուրհանդայում եղած ժամանակ այդ աղանդի առաջնորդներն իրար հետ պայմանավորված են եղել ընդմիջո հեռանալ իրենց նմաններից և ոչնչի առաջ կանգ չառնել, մինչև որ լրիվությամբ ազատվեն այն օրգանի հետևանքներից, որի մասին ասել էր Աստվածային Ուսուցիչ Սուրբ Բուդդան:

Այդ պայմանավորվածության մեջ մտել է նաև այն, որ իրենց որոշած ձևով պետք է ապրեն մինչև իրենց մոլորակային մարմնի ոչնչացումը կամ, ինչպես իրենք են ասում՝ մինչև իրենց մահը, որպեսզի գոյատևման այդ հատուկ ձևի միջոցով մաքրեն իրենց, ինչպես իրենք են ասում, «հոգին» այն բոլոր խորթ շերտավորումներից, որոնք առաջացել են Կունդաբուֆեր օրգանի պատճառով, որը, համաձայն Բուդդայի ասածի, ունեցել են իրենց նախնիները, և, ազատվելով այդ հետևանքներից, հնարավորություն ստանան, ինչպես ասել է Աստվածային Ուսուցիչ Սուրբ Բուդդան, կրկին միավորվելու Համընդգրկուն Սուրբ Պրանայի հետ:

Եվ երբ, ինչպես արդեն նկարագրել եմ, նրանք հարմար տեղ են գտել, որպեսզի գործնականում կիրառեն «տառապանքի» իրենց հատուկ ձևը, իսկ նրանց կանայք, դրա իսկական բնույթը տեսնելով, ըմբոստացել են, նրանցից ոմանք, ընկնելով իրենց կանանց ազդեցության տակ, հրաժարվել են կատարել դեռևս Գաղտակուրհանդայում ստանձնած պարտավորությունները, որի հետևանքով էլ բաժանվել են երկու ինքնուրույն խմբի:

Ահա հենց այդ ժամանակից էլ նախկին «ինքնահնազանդեցնողները» տարբեր անուններ են ստացել. այն է՝ «ինքնահնազանդեցնողներից» նրանք, ովքեր հավատարիմ են մնացել իրենց վերցրած պարտավորություններին, հետայդու անվանվել են «օրթոդոքսհայդուակի¹³⁵», իսկ նրանք, ովքեր

¹³⁵ ռուս. տարբերակում՝ «ортодоксидураками», անգլ. տարբերակում՝ “Orthodoxhaidooraki”, մի այլ տեղ՝ “Orthodoxhydooraki”

իրենց կանանց պատճառով հրաժարվել են հայրենիքում ստանձնած պարտավորություններից՝ «կաթոշկիհայդուռակի»¹³⁶։

Նաև իմացանք, որ մեր այնտեղ եղած ժամանակ Մինկրատորցայի այն աղանդավորները, որոնք օրթոդոքսիադուռակի էին կոչվում, իրենց նախնական բնակության վայրից ոչ շատ հեռու ունեին լավ կազմակերպված վանք, որում արդեն ընթանում էր հիշյալ հատուկ տառապանքը։

Գիշերային հանգստից հետո մեր ճանապարհորդությունը սկսելուց որոշ ժամանակ անց մենք անցանք հենց այդ վանքի մոտով, որը պատկանում էր բուդդայական կրոնական ուսմունքի օրթոդոքսիադուռակի կոչվող աղանդին։

Օրվա այդ ժամին մենք սովորաբար դադար էինք առնում, որպեսզի կերակրենք մեր չորքոտանի բանողներին, ուստի այդ վանքի վանականներին խնդրեցինք, որ թույլ տան դադար առնել իրենց վանքի պատերի տակ։

Թեև կարող է տարօրինակ ու անսովոր թվալ, բայց այնտեղի վանական-էակները չմերժեցին մեր օբյեկտիվորեն արդարացի խնդրանքը և, առանց որևէ «սնապարծության» դրսևորման, ինչը բնորոշ է բոլոր դարերի և բոլոր ուսմունքների վանականներին ընդունեցին մեզ իրենց հարկի տակ։ Այդպիսով մենք մուտք գործեցինք այդ գաղտնախորհուրդ ուսմունքի սրբություն-սրբոցը՝ մի վայր, որը Երկիր մոլորակի էակներն իրենց սկզբնավորման օրից սկսած սովորել են շատ վարպետորեն թաքցնել նույնիսկ Մաքուր Բանականություն ունեցող Անհատականություններից։ Այլ կերպ ասած՝ նրանք շատ լավ տիրապետում են հարմար պատրվակ բստրելու դժվարին արվեստին, որպեսզի իրենց իմացածը ներկայացնեն որպես «գաղտնիք» և գանազան հնարքներով դա այնպես թաքցնեն ուրիշների աչքից, որ նույնիսկ Մաքուր Բանականություն ունեցող էակները չկարողանան թափանցել դրա մեջ։

Բուդդայական կրոնի օրթոդոքսիադուռակի աղանդին պատկանող այդ վանքը մեծ տարածք էր զբաղեցնում՝ շրջապատված ամրակուռ պարսպով, որը ներսում եղածներին հուսալիորեն պաշտպանում էր դրսի վայրի էակներից։

Այդ հսկայական պարսպապատ տարածքի կենտրոնական մասում մի մեծ, նույնպես ամրակուռ, շինություն կար, որն այդ վանական համալիրի գլխավոր մասն էր։

Այդ մեծ շինության մի կեսը նախատեսված էր սովորական լինելիական գոյատևման համար, իսկ մյուս կեսը՝ հատուկ ծիսական արարողությունների համար, որոնցով էլ հենց արտահայտվում էին այդ աղանդի հետևորդների հավատամքի առանձնահատկությունները՝ գաղտնի մնալով օտարներից։

Արտաքին հսկա պարսպի ներսի կողմի երկայնքով հիմնականառույց ոչ մեծ շինություններ կային, որոնք այնքան մոտ էին գտնվում իրար, որ փեթակի բջիջների տպավորություն էին թողնում։

Հենց այդ յուրահատուկ «բջիջներով» էլ այդ վանքը տարբերվում էր Երկրի վրա եղած մնացած բոլոր վանքներից։

Այդ կառույցները, որոնք նաև պահակակետային խցիկներ էին հիշեցնում, ամբողջովին պարսպի մեջ էին ու չորս կողմից փակ, միայն ստորին մասում հատուկ անցք ունեին, որով ձեռքդ հազիվ կարող էիր ներս մեկնել։

Այդ յուրատեսակ «պահակակետային խցերը» նախատեսված էին արդեն «արժանապատիվ» դարձած էակներին դրանց ներսում ցմահ փակելու համար, որտեղ վերջիններս պետք է իրենց նշանավոր ձեռնածություններն իրականացնեին իրենց, այսպես ասած, «հույզերի» ու «մտածմունքների» հետ՝ մինչև վրա հասնել իրենց մոլորակային մարմնի վախճանը։

Ահա հենց այս բանն իմանալուց հետո էր, որ «ինքնահնազանդեցնող» աղանդավորների կանայք վճռականորեն արտահայտել էին իրենց բողոքը։

Այդ աղանդի հիմնական կրոնական ուսմունքում սպառիչ կերպով բացատրվում էր, թե հատկապես ինչպես և ինչպիսի ձեռնածությունների պետք է ենթարկի ինքն իրեն հավատացյալը, որ արժանանա այդ ամուր խցերից մեկում փակվելու պատվին, որտեղ օրական տրվում էր մի կտոր հաց և մի փոքրիկ կուժ ջուր։

Այն ժամանակ, երբ մենք հայտնվեցինք այդ ահավոր վանքի պատերի ներսում, այդ բոլոր հրեշավոր բջիջներն արդեն զբաղված էին, և խցերում եղածներին օրական մի կտոր հաց և մի փոքրիկ կուժ ջուր տալու հոգսը նշված անցքերի միջոցով մեծագույն պատկառանքով հոգում էին այն

¹³⁶ ռուս. տարբերակում՝ «катошкихидураками», անգլ. տարբերակում՝ “Katoshkihaidooraki”, մի այլ տեղ՝ “Katoshkihydooraki”

աղանդավորները, որոնք նման խցում փակվելու թեկնածուներ էին և, իրենց հերթին սպասելով, ապրում էին վանական համալիրի հրապարակի կենտրոնում կառուցված մեծ շինության մեջ:

Խցերում փակված քո սիրելիներն, իրոք, այդ վանքապատկան դագաղներում էին անցկացնում իրենց գոյատևման վերջին կիսաքաղց ու կիսածարավ հատվածները՝ այդպես անշարժ դիրքում դրանց մեջ մնալով մինչև իրենց վերջին շունչը:

Երբ դրսում եղածներն իմանում էին այդ դագաղակերպ խցերում փակված իրենց ընկերներից որևէ մեկի վերջնական վախճանի մասին, նրա մոլորակային ինքնատչնչացված մարմինը դուրս էր հանվում իր խցից, և այդ տեղն անմիջապես զբաղեցնում էր այդ չարաղետ կրոնական ուսմունքի մի ուրիշ մոլեռանդ հետևորդ, իսկ այդ մոլեռանդ վանականների շարքերը համալրվում էին այդ արտառոց աղանդի նորանոր անդամներով, որոնց հոսքը Գաղտակուրհանդայից չէր դադարում:

Բուն Գաղտակուրհանդայում այդ աղանդի բոլոր հետևորդներն արդեն գիտեին այդ հատուկ «հարմար» վայրի գոյության մասին, որտեղ իրենք կարող էին հասնել իրենց կրոնական ուսմունքի ավարտին, մի ուսմունքի, որը հավակնում էր հիմնված լինել Սուրբ Բուդդայի ճշգրիտ պատվիրանների վրա: Բոլոր մեծ բնակավայրերում նրանք նույնիսկ ունեին իրենց գործակալները, որոնք ցանկացողներին օգնում էին հասնելու այդ հեռավոր ու դժվարամատչելի վայրը:

Հանգստանալով և կերակրելով մեր երկոտանի ու չորքոտանի բանողներին՝ մենք լքեցինք այդ մոռյլ վայրը, որտեղ զոհ էր մատուցվում այն չարաղետ օրգանին, որը, ըստ որոշ Բարձրագույն Տիեզերական Անհատականությունների մտահղացման, այս կամ այն պատճառով պետք է անպայման ներդրվեր այդ չարաբաստիկ մոլորակի առավել վաղ ապրած եռուղեղ էակների ներկայություններում:

Է հ, տղաս... Ինչպես դու հեշտությամբ կարող ես պատկերացնել, մենք այդ վայրից հեռացանք ոչ այնքան հաճելի զգացմունքներով կամ ուրախ մտքերով համակված:

Դեպի Բարեգթության ծով տանող մեր հետագա ուղին կրկին անցնում էր ցամաքային զանազան գոյացություններով, որոնք նույնպես հագեցած էին ներմոլորակային հանքանյութերի կուտակումներով, սակայն դրանք մոլորակի մակերևույթ էին ելել առավել մեծ խորություններից:

Այստեղ ես պետք է խոսեմ իմ կողմից հայտնաբերված մի չափազանց տարօրինակ բանի մասին, որը սերտորեն առնչվում է քո այդ մոլորակի մակերևույթի այն մասի հետ, որը Տիբեթ է կոչվում:

Այն ժամանակաշրջանում, երբ ես անցնում էի Տիբեթով, այնտեղի գագաթները, թեև անսովոր բարձր էին ցցված Երկրի մակերևույթի վրա, բայց դրանք իրենց բարձրությամբ առանձնապես շատ չէին տարբերվում ուրիշ մայրցամաքների նմանատիպ գագաթներից և հենց այդ նույն Աշխարհք կամ Ասիա կոչված մայրցամաքի բարձրադիր գագաթներից, որի մի մասն էլ հենց Տիբեթն էր կազմում:

Բայց երբ իմ վեցերորդ անձնական վայրէջքի օրոք ես կրկին այցելեցի ինձ համար հիշարժան այդ վայրերը, նկատեցի, որ մի քանի տասնյակ հարյուրամյակի ընթացքում այդ տեղանքն այնքան է վեր ցցվել մոլորակի մակերևույթից, որ մյուս վայրերում գտնվող գագաթներն այլևս չեն կարող համեմատելի լինել այդտեղի գագաթների հետ:

Օրինակ՝ այդ լեռնային երկրի գլխավոր լեռնաշարը, որի կողքով մենք անցնում էինք, և որին այնտեղի էակները «լեռնաշղթա» են կոչում, անցած ժամանակահատվածում այնքան էր վեր ցցվել, որ դրա առանձին գագաթներն արդեն ամենաբարձրն էին դարձել այդ տառապյալ մոլորակի մյուս բոլոր աննորմալ ցցվածքների շարքում: Եվ եթե բարձրանաս դրանց վրա, հնարավոր է, որ տեսքահանի միջոցով կարողանաս տեսնել այդ յուրահատուկ մոլորակի հակադիր կողմի կենտրոնը:

Երբ առաջին անգամ նկատեցի այդ տարօրինակ երևույթը, որը տեղի էր ունենում այդ զարմանալի և յուրօրինակ մոլորակի վրա, անմիջապես իմ գլխում միտք ծագեց, որ դրանում, ամենայն հավանականությամբ, հասունացող մի նոր համատիեզերական մեծ արհավիրքի սաղմ է պարունակվում, իսկ երբ այդ աննորմալ երևույթին վերաբերող վիճակագրական տվյալներ հավաքեցի, ապա իմ առաջին կանխագագցումն էլ ավելի ուժեղացավ:

Ուժեղացավ գլխավորապես այն պատճառով, որ այդ երևույթին վերաբերող իմ վիճակագրական տվյալների մեջ առկա ցուցանիշներից մեկն աճում էր ամեն տասնամյակի ընթացքում:

Տիբեթյան բարձրավանդակի հետ առնչվող այդ ցուցանիշը վերաբերում էր այն բանին, թե երկրային, այսպես կոչված, մոլորակային ցնցումների, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «երկրաշարժերի» ո՞ր մասն է պայմանավորված այդ մոլորակի չափից դուրս բարձր ցցվածքների առկայությամբ:

Թեև մոլորակային ցնցումները կամ երկրաշարժերն այդ մոլորակի վրա հաճախ տեղի են ունենում նաև այլ միջմոլորակային անհամապատասխանությունների պատճառով, որոնք նշածս երկու խոշոր Տրանսպայան խոտորումների հետևանք են, իսկ դրանց պատճառը ես հետագայում քեզ կբացատրեմ, այնուհանդերձ մոլորակային ցնցումների մեծ մասը, հատկապես վերջին հարյուրամյակներում, այդ մոլորակի վրա տեղի են ունեցել բացառապես հենց այդ չափից դուրս բարձր ցցվածքների պատճառով:

Եվ դրա պատճառն այն է, որ այդ չափից դուրս բարձր ցցվածքներն իրենց հետ նաև մոլորակի մթնոլորտի ներկայությունն են այդպիսին դարձրել, այսինքն՝ Երկիր մոլորակի մթնոլորտի, այսպես կոչված, «պայթյունաեզոկլորային»¹³⁷ եզրաշերտն իր առանձին մասերում ձեռք է բերել այդ արևային համակարգի մոլորակների ներկայությունների փոխադարձ միահյուսման համար չափից դուրս վերև ցցված նյութականացված ներկայություն, և դրա հետևանքով այդ «համահամակարգային ներդաշնակ ներկայության» մեջ ունեցած իր սեփական շարժման որոշակի ժամանակահատվածների ընթացքում մոլորակը կարծես «կառչում է» այդ համակարգությանը պատկանող մյուս մոլորակների կամ գիսավորների մթնոլորտներից:

Հենց այդ «կառչումների» պատճառով էլ քո այդ մոլորակի ընդհանուր ներկայության համապատասխան մասերում տեղի են ունենում հիշյալ մոլորակային ցնցումները կամ երկրաշարժերը:

Պետք է նաև պարզաբանեմ քեզ համար, որ այն, թե մոլորակի ընդհանուր ներկայության հատկապես ո՞ր տիրույթում պետք է նշածս պատճառով տեղի ունենան այդպիսի մոլորակային ցնցումներ, կախված է մոլորակի դիրքից, որը նա համահամակարգային ներդաշնակ շարժման ընթացքում գրավում է այդ համակարգությանը պատկանող մյուս խտացումների նկատմամբ:

Ամեն դեպքում, եթե տիբեթյան լեռների բարձրության այդ աննորմալ աճը շարունակվի նաև ապագայում, ապա վաղ թե ուշ համատիեզերական մասշտաբի մեծ արհավիրքն անխուսափելի կդառնա:

Սակայն, երբ այդ վտանգը, որը ես տեսնում եմ, արդեն ակնհայտ դառնա, Բարձրագույն Սրբազնագույն Տիեզերական Անհատականությունը, անկասկած, ժամանակին կձեռնարկի անհրաժեշտ նախագուշակյան միջոցներ:»

« Թույլ տվեք միջամտել, Ձե՛րդ Գերապատվություն,- Բեհեզգերուդին ընդհատեց Ահունը և մի շնչով վրա տվեց,- թույլ տվեք հայտնել Ձերդ Գերապատվությանը, որ ես պատահաբար տեղեկություններ եմ իմացել հենց այդ տիբեթյան լեռների բարձրության աճի վերաբերյալ, ինչի մասին Դուք հիմա ասում եք:

Երբ մենք արդեն պետք է հեռանայինք Քարատակ մոլորակից,- շարունակեց Ահունը,- ես հաճելի առիթ ունեցա հանդիպելու Վիլոյեր Հրեշտակապետին՝ մեր արևային համակարգի Տիրակալին, և Նորին Հրաշափառությունը բարեհաճեց ճանաչել ինձ ու խոսել հետս:

Հավանաբար հիշում եք, Ձե՛րդ Գերապատվություն, որ երբ մենք գոյատևում էինք Ձերնակուր մոլորակի վրա, Նորին Հրաշափառություն Վիլոյեր Հրեշտակապետը դեռևս սովորական հրեշտակ էր և հաճախ էր այցելում մեզ:

Ուստի, երբ մեր գրույցի ժամանակ Նորին Հրաշափառությունն իմացավ այն արևային համակարգության անունը, ուր մենք աքտորվել էինք, ինձ ասաց, որ վերջնականապես վերադարձած տիեզերական արդյունքների ամենավերջին բարձրագույն և սրբազնագույն ընդունելության ժամանակ մի Անհատականություն՝ ոմն Սուրբ Լամա, Բարձրագույն Անհատականությունների ներկայությամբ պատիվ է ունեցել Անսահման Ամենագույն ներկայացնելու ինչ-որ մի խնդրանք, որը վերաբերում էր կարծես թե հենց այդ արևային համակարգության ինչ-որ մի մոլորակի վրա գոյացած ցցվածքի բարձրության աննորմալ աճին: Այդ խնդրանքը ստանալով՝ Ամենաբարեգութ Անսահմանությունն անհապաղ հրամայել է Լույսու Հրեշտակապետին մեկնել այդ արևային համակարգությունը և, լավ ծանոթ լինելով այդ համակարգին, տեղում պարզել բարձրության այդ աննորմալ աճի դստորման պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Ահա թե ինչու՛ է ներկայումս Նորին Օրթոդոքսալություն Հրեշտակապետ Լույսուը հապճեպ ավարտում իր ընթացիկ գործերը, որպեսզի մեկնի այնտեղ»:

¹³⁷ ռուս. տարբերակում՝ «взрывоэгоклорная», անգլ. տարբերակում՝ “blastegoklornian”

«– Շատ լավ բան ասացիր, սիրելի՛ Ահուն,– արձագանքեց Բեհեզգեբուղը և ավելացրեց.– շնորհակալ եմ այդ տեղեկությունների համար... Փա՛ռք մեր Արարչին... Այն, ինչ հենց նոր ասացիր, հնարավոր է, կփարատի իմ ներկայության մեջ եղած անհանգստությունը, որը ծագեց այն ժամանակ, երբ առաջին անգամ նկատեցի տիբեթյան լեռների բարձրության այդ աննորմալ աճը, և հատկապես այն անհանգստությունը, որ տիբեթրբից կարող է ամբողջովին չքանալ մեր անսահման հարգելի և իմաստուններից իմաստուն Մոլլա Նասրեդինի թանկագին հիշատակը»:

Դեմքի սովորական արտահայտությունը վերականգնելու ընթացքում այսքանը բարբառելուց հետո Բեհեզգեբուղն իր պատմությունը շարունակեց այսպես.

«Տիբեթ՝ կոչվող այդ տարածքով մեր ճանապարհը շարունակելիս մենք ամեն տեսակի դժվարությունների հանդիպեցինք և վերջապես հասանք Կերյա-չի կոչվող գետի ակունքին, իսկ մի քանի օր հետո, այդ գետով իջնելով մինչև Բարեգթության ծով, հասանք մեր «Պատահար» տիբեթրանավին:

Թեև Երկիր մոլորակ կատարած իմ երրորդ վայրէջքից հետո երկար ժամանակով ես անձամբ այնտեղ չեմ եղել, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ ես քո սիրելիներին դիտում էի իմ մեծ տեսքահանով:

Եվ երկար ժամանակ այնտեղ մեկնելու կարիք չեմ ունեցել հետևյալ պատճառով:

Հասնելով Մարս մոլորակ՝ ես շուտով տարվեցի այն աշխատանքով, որը Մարս մոլորակի եռուղեղ էակները հենց այդ ժամանակ կատարում էին իրենց մոլորակի մակերևույթի վրա:

Որպեսզի հստակ հասկանաս, թե ինչ աշխատանքի մասին է խոսքը, դու նախ և առաջ պետք է իմանաս, որ Մարս մոլորակը, պատկանելով Արգ համակարգությանը, նրա համար կատարում է, այսպես կոչված, «մտնել-հայության-լինկ¹³⁸»-ի դեր տիբեթրական նախանյութերի փոխակերպության գործում, ուստի այդ մոլորակի մակերևույթը «կեսկեստաս-պինդ¹³⁹» վիճակում է, այսինքն՝ մակերևույթի մի կեսը ցամաքային ներկայություն ունի, իսկ մյուս կեսը՝ սալիաքուռիափային, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, այդ մոլորակի մի կեսը համատարած ցամաք է, իսկ մյուս կեսը՝ համատարած ջուր:

Եվ այսպես, տղա՛ս, քանի որ Մարս մոլորակի եռուղեղ էակները որպես առաջին լինելիական սնունդ օգտագործում են «նշխարքը», որին քո սիրելիները նաև «հաց» են ասում, ապա մարսեցիներն իրենց մոլորակի ցամաքային կեսում «ցորեն» կոչվող բույսն են աճեցնում. բայց քանի որ ցորենը, այսպես կոչված, ջարդթումի զարգացման ընթացքի համար անհրաժեշտ խոնավությունը միայն «ցողից» է ստանում, ապա արդյունքում ցորենի տված հացահատիկի բերքը սրբազան Յոթնապարապարշինողի ընդհանուր գործընթացի միայն յոթերորդ մասն է դառնում, այսինքն՝ «բերքատվությունն» այդպիսով ստացվում է ամբողջ հնարավորի միայն մեկ յոթերորդ մասը:

Քանի որ հացահատիկի այդ քանակությունը չէր բավարարում պահանջմունքը, ապա, որպեսզի բերքն ավելի առատ լինի, նրանք ստիպված պետք է մոլորակի սալիաքուռիափան օգտագործեին. ուստի այն ժամանակ եռակենտրոն էակներն անընդհատ խոսում էին այն մասին, թե ինչպես դրա անհրաժեշտ քանակությունը մոլորակի հակառակ երեսից տեղափոխեն իրենց լինելիական գոյատևման վայրերը:

Եվ երբ մի քանի տարի հետո վերջապես գտել էին այդ խնդրի լուծումը և արդեն նախապատրաստվում էին դա իրականություն դարձնել (Երկիր մոլորակից իմ այնտեղ վերադառնալուց անմիջապես առաջ), նրանք սկսեցին սալիաքուռիափան տեղափոխելու համար հատուկ ջրանցքներ փորել:

Եվ ահա, զավա՛կս, քանի որ այդ աշխատանքը չափազանց բարդ էր, նրանք անընդհատ նորանոր մեքենաներ ու սարքավորումներ էին հորինում:

Գյուտերի ու հայտնագործությունների մեջ կային շատ հետաքրքիր ու յուրօրինակ լուծումներ, և, քանի որ ես միշտ էլ հետաքրքրվել եմ ամեն տեսակի նոր գյուտերով, շատ մեծ հաճույքով էի մասնակցում Մարս մոլորակի բնակիչների այդ աշխատանքներին:

¹³⁸ ռուս. տարբերակում՝ «Иднел-сутянлинк?», անգլ. տարբերակում՝ “mdnel-haootian link”, մի այլ տեղ՝ “mdnel-outian-link”

¹³⁹ ռուս. տարբերակում՝ «нескестасантная», անգլ. տարբերակում՝ “keskestastasantnian”

Բարի մարտեցիների բարեհաճությունն ինձ թույլ էր տալիս, որ համարյա ամբողջ ժամանակս տրամադրեմ այդ աշխատանքներին, և այդ պատճառով շատ հազվադեպ էր պատահում, որ այց կատարեի դեպի այդ համակարգության մյուս մոլորակները:

Միայն երբեմն հանգստանալու նպատակով մեկնում էի Սատուրն՝ գոռնադառ Ղառղառի մոտ, քանի որ նա այդ ժամանակ իմ էակից-ընկերն էր դարձել և որի շնորհիվ էր իրականություն դարձել իմ մեծ տեսքահանը, որը, ինչպես քեզ արդեն ասել եմ, հեռավոր տեսանելի առարկաները խոշորացնում էր 7 285 000 անգամ»:

ԳԼՈՒԽ ԻԳ **Բեհեզգեբուդի չորրորդ** **անձնական այցը Երկիր մոլորակ**

Բեհեզգեբուդն իր գրույցը շարունակեց այսպես.

«Չորրորդ անգամ ես վայրէջք կատարեցի Երկիր մոլորակի վրա գոռնադառ Ղառղառի խնդրանքով:

Նախ ես պետք է քեզ ասեմ, որ այն բանից հետո, երբ հանդիպեցի և ընկերացա գոռնադառ Ղառղառի հետ, հետագա մեր հանդիպումների ժամանակ ես միշտ մեր «կարծիքների սուբյեկտիվ փոխանակությունների» ընթացքում կիսում էի նրա հետ իմ տպավորությունները քո այդ մոլորակի եռուղեղ էակների արտառոց հոգեկառույցի վերաբերյալ:

Քո սիրելիներին վերաբերող կարծիքների այդ փոխանակությունների արդյունքում նա այնքան շատ հետաքրքրվեց նրանցով, որ մի անգամ խնդրեց, այն էլ՝ շատ համառ կերպով, որ այդ էակների հետ կապված դիտումներս, գոնե մոտավոր կերպով, մշտապես փոխանցեմ իրեն. դրանից հետո, ինչպես իրեն, այնպես էլ քո քեռի Թույլանին¹⁴⁰ էի ուղարկում նրանց հոգեկառույցի առանձնահատկություններին վերաբերյալ արված իմ բոլոր նշումները:

Իսկ թե ինչպես գոռնադառ Ղառղառը պատճառ հանդիսացավ իմ չորրորդ վայրէջքի համար՝ հիմա կրթացատրեմ:

Արդեն ասել եմ քեզ, որ քո այդ մոլորակը կատարած իմ երրորդ անձնական այցից հետո ժամանակ առ ժամանակ հանգստանալու նպատակով բարձրանում էի Սատուրն մոլորակի վրա ապրող իմ այդ ընկերոջ մոտ:

Երբ այդ այցերիս ընթացքում համոզվեցի նրա մեծ գիտունության հարցում, մի անգամ իմ գլխում միտք ծագեց նրան հրավիրել ինձ հետ միասին «Պատահարով» իջնել Մարս մոլորակի վրա, որպեսզի նա հենց տեղում իր գիտելիքներով ինձ օգնի լուծելու իմ աստղադիտարանի կառուցման հետ կապված որոշ հարցեր, որն արդեն ավարտվելու վրա էր:

Այստեղ ավելորդ չի լինի ընդգծել, որ եթե իմ աստղադիտարանը հետագայում նշանավոր դարձավ և, ըստ էության, նմանատիպ կառույցների մեջ լավագույնը համարվեց համայն Տիեզերքում, ապա դրա համար ես գլխավորապես պարտական եմ իմ այդ էակից-ընկերոջ գիտելիքների մեծ պաշարին:

Եվ ահա, երբ իմ հրավերը հայտնեցի գոռնադառ Ղառղառին, նա առանց երկար մտածելու համաձայնեց, և մենք միասին սկսեցինք քննարկել, թե ինչպես իրականացնենք մեր այդ մտադրությունը:

Խնդիրն այն էր, որ Սատուրն մոլորակից դեպի Մարս մոլորակ տանող ուղին անցնում էր այնպիսի տիեզերական տիրույթներով, որոնք չէին համապատասխանում գոռնադառ Ղառղառի ներկայության տեսակին՝ մի էակի, որը դեռևս հնարավորություն ուներ գոյատևելու միայն սովորական մոլորակային պայմաններում:

Մեր քննարկումները հանգեցրին այն արդյունքին, որ հաջորդ օրը նրա գլխավորությամբ նրա գլխավոր օգնականը սկսեց «Պատահար» տիեզերանավի հենց ներսում հատուկ խուց պատրաստել՝

¹⁴⁰ ռուս. տարբերակում՝ «Туилану», անգլ. տարբերակում՝ “Tooilan”

այն հազեցնելով ամեն տեսակի հարմարանքներով ու սարքերով, որպեսզի դրանք արտադրեն այն նյութերը, որոնք կան Սատուրն մոլորակի մթնոլորտում, որի ներսում Բնությունը նախատեսել էր գոռնադառ Ղառղառի սովորական գոյատևումը:

Բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտվելուց հետո մեկ դրողը¹⁴¹ անց մենք թռանք դեպի Մարս և վայրէջք կատարեցինք իմ տան մոտ:

Քանի որ Մարսի մթնոլորտը համարյա Սատուրնի մթնոլորտի պես է, ապա իմ էակից-ընկեր գոռնադառ Ղառղառը շատ շուտով կլիմայափոխվեց և սկսեց համարյա ազատորեն գոյատևել:

Մարսի վրա եղած ժամանակ էլ հենց նա հնարեց այն տեսքահանը, որին քո սիրելիները աստղադիտակ են ասում, և գլխավորապես դրա շնորհիվ, ինչպես արդեն քեզ ասել եմ, իմ աստղադիտարանի փառքը տարածվեց համայն Տիեզերքով մեկ:

Նրա կառուցած այդ տեսքահանը հիրավի լինելիական Բանականության մի հրաշք է, քանի որ այն 7 285 000 անգամ մեծացնում է առանձին տիեզերական խտացումների տեսանելիությունը ինչպես այն ժամանակ, երբ այդ տիեզերական խտացումները շրջապատող մթնոլորտներում առկա կոսմիկական սուբստանցիաների հետ են տեղի ունենում որոշ գործընթացներ, այնպես էլ այն ժամանակ, երբ որոշ գործընթացներ են տեղի ունենում տիեզերական Եթերոկոիլոնոյի միջանկյալ տիրույթներում:

Այդ տեսքահանի շնորհիվ ես երբեմն լիովին կարողանում էի Մարսի իմ տնից դիտել համարյա այն ամենը, ինչ տեղի էր ունենում այդ արևային համակարգության մյուս բոլոր այն մոլորակների մակերևույթների վրա, որոնք համահամակարգային իրենց շարժման ընթացքում հայտնվում էին իմ աստղադիտարանի տեսադաշտում:

Եվ ահա, սիրելի՛ տղաս, այն ժամանակ, երբ գոռնադառ Ղառղառը հյուրընկալվել էր ինձ մոտ, մի անգամ միասին դիտում էինք քո սիրելիների գոյատևման ընթացքը և նկատեցինք մի փաստ, որը կարծիքների փոխանակման լուրջ առիթ հանդիսացավ մեր միջև քո այդ յուրօրինակ մոլորակի վրա գոյատևող եռուղեղ էակների վերաբերյալ:

Այդ կարծիքների փոխանակման հետևանքն այն եղավ, որ ես հանձն առա իջնել այդ մոլորակի մակերևույթի վրա և այնտեղից Սատուրն մոլորակ հասցնել մի քանի էակների, որոնք այդ մոլորակի վրա «կապիկ» են կոչվում: Դրա նպատակն այն էր, որ դրանց վրա որոշ պարզաբանող փորձեր կատարենք, որպեսզի հասկանանք այն փաստը, որը մեր դիտումների ընթացքում մեզ զարմանք էր պատճառել:

Բեհեղգեբուդի պատմության այս պահին նրան «լեյտուչանբրոս» բերեցին, այսինքն՝ հատուկ մետաղական թիթեղ, որի վրա որևէ տեղից ստացված եթերազրի տեքստ է գրանցվում. բավական է հասցեատերը դա մոտեցնի իր լսողության զգայարանին համապատասխանող օրգանին, որպեսզի լսի այն ամենը, ինչ հաղորդվում է իրեն:

Երբ Բեհեղգեբուդն ավարտեց իրեն հասցեագրված լեյտուչանբրոսի բովանդակության ունկնդրումը, շրջվեց թոռան կողմը և ասաց.

«Տեսնու՞մ ես, տղա՛ս, թե ինչպիսի գուգադիպություններ են լինում Մեծ Տիեզերքում: Այս եթերազրի բովանդակությունը վերաբերում է քո սիրելիներին և առնչվում է հենց այն կապիկ կոչվող էակներին, որոնց մասին քիչ առաջ հիշեցի:

Այդ եթերազրիը Մարսից է եկել, և դրանով ամեն ինչից գատ ինձ տեղյակ են պահում նաև այն մասին, որ Երկիր մոլորակի եռակենտրոն էակները կրկին այնտեղ վերածնել են, այսպես կոչված, «կապիկների հարցը»:

Նախ և առաջ պետք է քեզ ասեմ, որ այնտեղի նույն այն աննորմալ լինելիական գոյատևման պատճառով Երկիր մոլորակի վրա սկզբնավորվող և գոյատևող այդ տարօրինակ եռուղեղ էակների ներկայության մեջ վաղուց բյուրեղացել և պարբերաբար սաստկացնում է իր ազդեցությունը մի տարօրինակ գործոն, որը ժամանակ առ ժամանակ նրանց ներկայություններում «հարածուն պահանջ» է ծնում, որի ազդեցության տակ ամեն գնով նրանք փորձում են պարզել, թե իրենք են կապիկներից առաջացել, թե՞ կապիկներն՝ իրենցից:

Դատելով եթերազրից այդ հարցն այս անգամ հուզում է գլխավորապես այն երկոտանի էակներին, որոնք բազմանում են Ամերիկա կոչվող աշխարհամասում:

¹⁴¹ ռուս. տարբերակում՝ «xpx-xp-xy», անգլ. տարբերակում՝ “khrkh-khr-khroo”

Թեև այդ հարցն այնտեղ ծագում է ժամանակ առ ժամանակ, սակայն երբեմն այն երկար ժամանակով մնում է, ինչպես իրենք են ասում, օրախնդիր հարց:

Ես շատ լավ հիշում եմ, որ այդ կապիկների ծագման հարցի առիթով «մտախռովքներն» առաջին անգամ բորբոքվեցին այն ժամանակ, երբ, ինչպես իրենք են սիրում ներկայացնել, իրենց «կուլտուրական կենտրոնը» Թիքլյամիշն էր:

Այդ մտախռովքներին այնտեղ իր իմաստակությամբ առաջին անգամ սկիզբ դրեց Մենիտկել անունով ոմն «առաջադեմ գիտուն էակ»:

Այդ Մենիտկելն այն ժամանակ գիտուն էակի համբավ էր ձեռք բերեց առաջին հերթին այն բանի շնորհիվ, որ նրա անպտուղ մորաքույրը հայտնի էր որպես հիանալի խնամախոսուհի և հաճախ ծառայություններ էր մատուցում իշխանավոր էակներին, և երկրորդ՝ երբ նրա տարիքը հասավ պատասխանատու էակի լինելիական շեմին, իր ծննդյան օրվա առթիվ նվեր ստացավ մի գիրք՝ «Լավ վարվեցողության և սիրային նամակներ գրելու կանոններ» վերնագրով: Քեռուց՝ գրավատան նախկին տիրոջից, ստացած ժառանգության շնորհիվ նյութապես ապահովված և, հետևաբար, լիովին անկախ լինելով՝ ձանձրությից դրոպած նա մի «գիտական» աշխատություն մոգոնեց, որում կապիկների ծագման հարցի շուրջ «առաջ էր քաշում» ամեն տեսակի «տրամաբանական ապացույցներով» համեմված մի բարդ տեսություն, ինչպիսին կարող է հասունանալ ու բյուրեղանալ միայն քո հետաքրքրությունը շարժած արտառոց էակների Բանականության մեջ:

Այդ Մենիտկելն այն ժամանակ իր տեսությամբ «ապացուցեց», որ իրենց այդ «կապիկ-ընկերներն» առաջացել են, ոչ ավել, ոչ պակաս «վայրենացած մարդկանցից»:

Իսկ այդ ժամանակաշրջանի մյուս երկրային էակները, ինչպես իրենց արդեն բնորոշ է դարձել, առանց էապես քննադատական մոտեցում ցուցաբերելու, կուրորեն հավատացին այդ «մորաքրոջ սիրեցյալի» բարբաջանքներին, և այդ հարցն այն ժամանակ, հուզելով քո սիրելիների տարօրինակ Բանականությունը, բուռն քննարկումների թեմայի վերածվեց և մնաց այդ կարգավիճակում ընդհուպ մինչև, այսպես կոչված, «թվով յոթերորդ համամոլորակային փոխադարձ ոչնչացման գործընթացի» սկիզբը:

Այդ չարաղետ գաղափարի հետևանքով, քո այդ թշվառ էակների մեծամասնության բնագոյներում բույն դրեց ևս մեկ աննորմալ, այսպես ասած, «թելադրիչ գործոն», որը նրանց ընդհանուր ներկայություններում սկսեց ծնել մի կեղծ զգացում, որ իբր այդ կապիկ-էակները «սուրբ» կենդանիներ են. և այդ սրբապիղծ հակվածությանը ծնունդ տված աննորմալ գործոնը նույնպես, սերնդեսերունդ փոխանցվելով, նույնիսկ հասել է մինչև ներկայիս շատ ու շատ էակների բնագոյային ընկալումներին:

Այդ կեղծ գաղափարը, որը ծագել և ընդունելություն էր գտել հիշյալ գրավատան տիրոջ ժառանգորդի ջանքերով, համարյա երկու հարյուրամյակ պահպանեց իր գոյությունը՝ դառնալով այն ժամանակվա էակների Բանականության անբաժան մասը, և միայն հետագա զանազան իրադարձությունները, որոնք տեղի ունեցան հիշյալ համամոլորակային գործընթացի ժամանակ, ջնջեցին այն, մինչև որ լիովին չքացավ նրանց ընդհանուր ներկայությունից:

Սակայն երբ նրանց, այսպես կոչված, կուլտուրական գոյությունը կենտրոնացավ Եվրոպա կոչվող աշխարհամասում, և երբ «իմաստակություն» կոչվող իրենց տարօրինակ հիվանդության դրսևորումը հասավ իր առավելագույն աստիճանին (այդ հիվանդությունն, իմիջիայլոց, արդեն վաղուց ենթարկվում է Յոթնապարապարջինող տիեզերական հիմնական օրենքին, որի համաձայն՝ դրա գործունեության ինտենսիվությունը նույնպես պետք է կրի որոշակի պարբերական բնույթ), այնժամ, ի դժբախտություն համայն Տիեզերքի եռուղեղ էակների, այդ նույն կապկային հարցը, այն է՝ ով ումից է ծագել, կրկին վեր հառնեց և բյուրեղանալով կրկին դարձավ քո սիրելիների աննորմալ Բանականության մի մասը:

Կապկային հարցի վերածնունդն այնտեղ այս անգամ խթանեց ևս մի «գիտուն» էակ, և իհարկե՝ կրկին «մեծանուն», բայց այս անգամ՝ «նոր սերնդի» պատկանող «գիտնական», որի ազգանունը Դարվին էր:

Այդ մեծանուն և գիտուն էակը, նույն «տրամաբանությամբ» կառուցելով իր տեսությունը, սկսեց հակառակն «ապացուցել» այն ամենի, ինչ ասել էր Մենիտկելը, այսինքն՝ հենց իրենք են առաջացել այդ հարգարժան պարոն կապիկներից:

Իսկ ինչ վերաբերում է այդ երկու «մեծանուն» երկրային «գիտնականների» տեսություններին օբյեկտիվ ճշմարտացիությանը՝ այդ առթիվ հիշեցի մեր իմաստուն ու պատվարժան Մոլլա

Նասրեդինի մի արտահայտությունը, որն այսպես էր ասում. «Այդ երկուսին հաջողվել է, թեև, իհարկե, նաև բախտի բերմամբ, աննման Շեհերազադեի իրական կնքամորը գտնել հնացած գումաղբի կույտում»:

Ամեն դեպքում, դու պետք է իմանաս և հասկանաս, որ երկար դարերի ընթացքում հատկապես այդ հարցն է, որ, նմանատիպ վաղանցիկ հարցերի շարքում, քո սիրելիներին առատ նյութ է տվել այնպիսի մտածողության համար, որն իրենք անվանում են «Բանականության բարձրագույն դրսևորում»:

Քո այդ սիրելիները, իմ կարծիքով, կարող էին գտնել իրենց մշտապես հուզող այդ հարցի, այսինքն՝ կապկային հարցի ճշգրիտ պատասխանը, եթե տվյալ դեպքում կարողանային կիրառել կրկին մեր սիրելի Մուլա Նասրեդինի ասություններից մեկը, որը շատ դեպքերում նա արտահայտում էր այսպես. «Ամեն մի թյուրիմացության պատճառ պետք է միայն կնոջ մեջ փնտրել»:

Եթե այդ հանելուկային հարցի լուծումը նրանք փորձեին գտնել՝ օգտվելով այդ իմաստուն խոսքից, ապա հավանաբար ի վերջո կկարողանային իմանալ, թե որտեղից են ծագել իրենց այդ ցեղակիցները:

Քանի որ այդ կապիկների ծագումնաբանության հարցն այնտեղ իրոք չափազանց մութ է և անսովոր, ապա ես քո Բանականությանն այդ հարցի շուրջ տեղեկություններ կհաղորդեմ հնարավորինս բազմակողմանիորեն:

Իրականում ո՛չ իրենք են կապիկներից առաջացել, ո՛չ էլ կապիկներն՝ իրենցից: Կապիկների առաջացման պատճառը, ինչպես այս դեպքում, այնպես էլ այնտեղի բոլոր մնացած թյուրիմացությունների դեպքում՝ կանայք են:

Նախ ես քեզ պետք է ասեմ, որ կապիկ-էակների տեսակները, որոնք այնտեղ այժմ զանազան արտաքին տեսքեր ունեն, նախքան երկրորդ Տրանսապալյան խոտորումն այդ մոլորակի վրա որևէ տեղ գոյություն չունեին: Դրանց ծագումն ավելի ուշ շրջանում է սկսվել:

Այդ «անհասկանալի» էակի սկզբնավորման, ինչպես նաև այդ մոլորակի մակերևույթի վրա օբյեկտիվ իմաստով քիչ թե շատ լուրջ բնույթ կրող իրադարձությունների պատճառները բխում են իրար հետ բոլորովին կապ չունեցող երկու աղբյուրներից:

Դրանցից առաջինը, ինչպես միշտ Բարձրագույն Գերսրբագնագույն Տիեզերական Անհատականությունների կանխատեսման նույն անբավարարությունն է, իսկ երկրորդ աղբյուրը տվյալ դեպքում կրկին լինելիական գոյության այն աննորմալ պայմաններն են, որոնք հենց իրենք են հաստատել:

Բանն այն է, որ երբ այդ չարաբաստիկ մոլորակի հետ տեղի ունեցավ երկրորդ Տրանսապալյան խոտորումը, Ատլանտիդա գլխավոր աշխարհամասի հետ մեկտեղ մոլորակի ընդերքը սուզվեցին բազմաթիվ փոքր ու մեծ ցամաքային հատվածներ, իսկ դրանց փոխարեն կազմավորվեցին նոր ցամաքային հատվածներ:

Եվ այդ չարաբաստիկ մոլորակի ընդհանուր ներկայության առանձին մասերի տեղաշարժերն այդ խոտորման ժամանակ տևեցին մի քանի օր՝ ուղեկցվելով բազմակի մոլորակային ցնցումներով և այլ այնպիսի դրսևորումներով, որոնք չէին կարող սարսափ չառաջացնել բոլոր էակների գիտակցության ու զգացումների մեջ:

Եվ հենց այդ ժամանակաշրջանում քո սիրելիներից նրանք, ովքեր զանազան այլ տեսակի միաուղեղ և երկուղեղ էակների հետ պատահաբար փրկվել էին արհավիրքից, անսպասելիորեն հայտնվեցին նոր առաջացած ցամաքային հատվածների վրա, որոնք իրենց համար լրիվ անձանոթ էին:

Այնպես էր ստացվել, որ այդ տարօրինակ կեսչափմարդական եռուղեղ էակների ակտիվ և պասիվ սեռերը, որոնց իրենք «տղամարդիկ» և «կանայք» են կոչում, ստիպված էին բազմաթիվ տարիների ընթացքում իրարից առանձնացված ապրել:

Նախքան հետագայում տեղի ունեցածը նկարագրելու ես պետք է մի փոքր ավելի մանրամասն պատմեմ այն սրբազան նյութի մասին, որը բոլոր տեսակի լինելիական սնունդների էվոյուցիոն փոխակերպումների վերջնական արդյունքն է հանդիսանում՝ ուղեղային համակարգից անկախ ձևավորվելով յուրաքանչյուր էակի ներկայության մեջ:

Այդ սրբազան նյութը, որը գոյանում է բոլոր տեսակի էակների ներկայություններում, համարյա ամենուրեք «էքսիոէհարի»¹⁴² է անվանվում, բայց Երկիր մոլորակի քո սիրելիներն այն «սերմնահեղուկ» են կոչում:

Շնորհիվ մեր Համընդհանուր Հոր և Արարչի ամենաբարեգութ նախասահմանման ու հրահանգի, ինչպես նաև Մեծ Բնության իրականացմանը համապատասխան՝ այդ սրբազան նյութը բոլոր էակների ներկայություններում գոյանում է, անկախ նրանց ուղեղային համակարգերից և արտաքին հանդերձավորումներից, գլխավորապես այն բանի համար, որպեսզի նրանք դրա միջոցով, լինի դա գիտակցորեն, թե ինքնաբերաբար, կատարեն իրենց լինելիական պարտքի այն մասը, որը տեսակի շարունակմանն է վերաբերում. սակայն եռուղեղ էակների ներկայություններում այդ նյութը ձևավորվում է նաև այն բանի համար, որ նրանց ընդհանուր ներկայություններում գիտակցական փոխակերպության ենթարկվելու միջոցով կազմավորի նրանց սեփական Լինելիության բարձրագույն լինելիական մարմինը:

Երկրորդ Տրանսպարանս խոտորումից առաջ ընկած ժամանակահատվածում, որն այդ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակներն անվանում են «Ատլանտիդայի կործանումից առաջ», երբ նրանց ներկայություններում սկսել էին բյուրեղանալ Կունդաբուֆեր օրգանի հատկությունների տարբեր հետևանքներ, նրանց ներսում մի լինելիական ազդակ ձևավորվեց, որը հետագայում տիրապետող դարձավ:

Այդ ազդակն այժմ «վայելք» է կոչվում, և, որպեսզի դրան բավարարություն տան, նրանք արդեն սկսել են գոյատևել եռակենտրոն էակներին անարժան ձևով, այն է՝ աստիճանաբար նրանց մեծամասնությունը սկսեց այդ սրբազան նյութը հեռացնել, որպեսզի բավարավի հիշյալ ազդակը:

Ահա այդպե՛ս, տղա՛ս: Այն բանի հետևանքով, որ, այդ ժամանակներից սկսած, Երկիր մոլորակի եռուղեղ էակներից շատերն իրականացնում էին իրենց ներսում մշտապես գոյացող այդ սրբազան նյութն իրենցից հեռացնելու գործընթացը, և դա անում էին ժամանակի ոչ այն հատվածի ընթացքում, որը Մեծ Բնությունն իրենց համար նախատեսել էր տեսակը շարունակելու համար, նաև այն բանի հետևանքով, որ նրանցից շատերը դադարեցին այդ նյութը գիտակցորեն օգտագործել իրենց բարձրագույն լինելիական մարմինները հանդերձավորելու նպատակով, արդյունքում ստացվեց այնպես, որ եթե իրենք արդեն մեխանիկական դարձած եղանակով իրենցից չէին հեռացնում այդ նյութը, ապա, բնականաբար, ապրում էին, այսպես կոչված, «սիրկլինիամեն»¹⁴³-ի զգացողություն կամ, ինչպես ասում են քո սիրելիները՝ «ընկճվածություն». իսկ այդ վիճակն անփոփոխ կերպով միշտ ուղեկցվում է, այսպես կոչված, «մեխանիկական տառապանքով»:

Որևէ մի հարմար պահի ինձ կհիշեցնես, որ իրենց տեսակի շարունակման նպատակով տարբեր ուղեղային համակարգ ունեցող էակների կողմից էքսիոէհարիի նորմալ գործընթացն օգտագործելու Բնության կողմից հաստատված հիշյալ ժամանակահատվածների մասին քեզ պատմեմ ավելի մանրամասն:

Եվ ահա, վերը նշվածի և այն բանի հետևանքով, որ իրենք էլ մեզ նման ընդամենը կեսաչափմարդական էակներ են, և իրենց ներսում մշտապես գոյացող այդ նյութն իրենց ներկայությունից նորմալ ձևով պետք է հեռանա բացառապես միայն հակառակ սեռի հետ կենսակցելու դեպքում, երբ նրանք այդ նյութն օգտագործում են իրենց տեսակը շարունակելու համար անհրաժեշտ «էլմուարնո»¹⁴⁴ սրբազան գործընթացում, նաև այն բանի հետևանքով, որ նրանք դեռ սովոր չեն այդ նյութն օգտագործել իրենց բարձրագույն լինելիական մարմինները հանդերձավորելու նպատակով, այն էակները որոնք պատահաբար կենդանի էին մնացել, և հատկապես նրանք, որոնք գոյատևում էին եռուղեղ էակներին ոչ սազական ձևով, այսինքն՝ առանց իրենց կողքին հակառակ սեռի էակներ ունենալու, սկսեցին զանազան անբնական միջոցների դիմել, որպեսզի իրենցից հեռացնեն իրենց ներսում շարունակաբար գոյացող սրբազան էքսիոէհարի նյութը:

Արական սեռի էակներն այն ժամանակ սկսեցին այնպիսի անբնական միջոցների դիմել, որոնք կոչվում են «մուռտառդեն» և «անդրոպերաստի», կամ, ինչպես կասեին այնտեղի ժամանակակից

¹⁴² ռուս. տարբերակում՝ «эксиоэхари», անգլ. տարբերակում՝ “exioehary”

¹⁴³ ռուս. տարբերակում՝ «сирклинямен», անգլ. տարբերակում՝ “sirklinimana”, մի այլ տեղ՝ “sirkliniamen”

¹⁴⁴ ռուս. տարբերակում՝ «элмуарно», անգլ. տարբերակում՝ “elmoarno”

էակաները՝ «օնանիզմ» և «արվամուլություն», և այդ անբնական միջոցները լիովին բավարարում էին նրանց:

Սակայն պասիվ սեռի ներկայացուցիչների համար, որոնց իրենք «կանայք» են անվանում, նշված անբնական միջոցներն անբավար եղան, ուստի խեղճ «որբացած կանայք», քանի որ այն ժամանակ ավելի խորամանակ ու ձեռներեց էին, քան տղամարդիկ՝ սկսեցին փնտրել այլ տեսակի պատկանող էակաների, որպեսզի դրանց վարժեցնեն իրենց «գուզրնկերը» դառնալու:

Եվ ահա հենց այդ «գուզրնկերության» հետևանքով էլ մեր Մեծ Տիեզերքում առաջացան այնպիսի էականեր, որոնք ինքնին, ինչպես կասեր մեր սիրելի Մովսես Նասրեդինը՝ «ո՛չ էս են, ո՛չ էն»:

Իսկ ինչ վերաբերում է երկու տարբեր տեսակների պատկանող էքսիտեհարիների աննորմալ միացման հնարավորությանը, որ դա հանգեցնի էակաների նոր մոլորակային մարմնի սաղմնավորմանն ու սկզբնավորմանը, անհրաժեշտ է դրա համար տալ հետևյալ բացատրությունը:

Երկիր մոլորակի վրա, ինչպես նաև մեր Տիեզերքի մյուս մոլորակների վրա, որտեղ բազմանում և գոյատևում են կեսչափմարդական եռուղեղ էականեր, այսինքն՝ այնպիսի էականեր, որոնց մոտ էքսիտեհարիի գոյացումը նախասահմանված է նոր էակի ստեղծում առաջացնելու բացառապես երկու սեռերի կենսակցման եղանակով՝ այդ երկու սեռերի, այսինքն՝ «տղամարդկանց» և «կանանց» ներկայություններում գոյացող սրբազան էքսիտեհարիների միջև եղած հիմնական տարբերությունն այն է, որ տղամարդկանց մոտ գործում է սրբազան Եռամասիկապողի օրենքի տեղայնացված սուրբ «հաստատող» կամ «դրական» ուժը, մինչդեռ կանանց ներկայություններում էքսիտեհարիի ամբողջությամբ կազմավորվելու գործում մասնակցություն է ունենում նույն այդ օրենքի տեղայնացված «ժխտող» կամ «բացասական» ուժը:

Եվ էլի շնորհիվ մեր Համընդհանուր Հոր և Արարչի ամենաբարեգութ նախասահմանման ու հրահանգի, ինչպես նաև Մեծ Մայր Բնության իրականացումներին համապատասխան՝ շրջակա որոշակի պայմանների առկայության դեպքում և սրբազան Եռամասիկապողի երրորդ առանձին տեղայնացված սուրբ «հաշտեցնող» ուժի մասնակցությամբ երկու տարբեր էականերում կազմավորված այդ երկու էքսիտեհարիները միանում են սրբազան Էլմուարնոյի գործընթացի շնորհիվ, որը նոր էակի սաղմնավորումից առաջ տեղի է ունենում հակառակ սեռի ներկայացուցիչների միջև:

Տվյալ դեպքում՝ այն ժամանակ տարբեր տեսակների պատկանող էակաների էքսիտեհարիների աննորմալ միացման հնարավորությունը ծագել է որոշակի տիեզերական օրենքի հետևանքով, որը կոչվում է «թրթիռների համախմբությունների թվերի մոտիկություն», որը սկսել է գործել այդ չարաբաստիկ մոլորակի հետ տեղի ունեցած երկրորդ Տրանսապալյան խոտորումից հետո, ինչը դեռևս շարունակում էր գործել այդ մոլորակի սեփական ներկայության համար:

Նշածու տիեզերական օրենքի վերաբերյալ բացարձակ անհրաժեշտ է հիմա քեզ տեղեկացնել, որ Տիեզերքում այն ծագել և սկսել է գործել այն բանից հետո, երբ մեր Արարիչը Հերոպասին վնասազերծելու նպատակով փոփոխության ենթարկեց Եռամասիկապող հիմնական սրբազան օրենքը, ինչպես նաև այն բանից հետո, երբ այդ օրենքի նախկին բացարձակապես անկախ սուրբ մասերը կախման մեջ ընկան արտաքին բնույթի ուժերից:

Ինչպես հիշում ես, ես քեզ խոստացել եմ ամենայն մանրամասնությամբ երբևէ քեզ համար պարզաբանել Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման ընդհանրապես բոլոր հիմնական օրենքները, որոնց թվում կլինի նաև այն տիեզերական օրենքի բացատրությունը, որի մասին հիմա խոսում եմ:

Իսկ առայժմ այդ հարցի վերաբերյալ միայն իմացիր, որ ընդհանրապես ամենուրեք մեր Մեծ Տիեզերքում գոյություն ունեցող նորմալ մոլորակներում, էքսիտեհարին, որն առաջանում է այն եռուղեղ էակաների ներկայություններում, որոնք սրբազան Եռամասիկապողի սուրբ հաստատող մասի տեղայնացման համար ունեն համապատասխան ընկալող և փոխակերպող օրգաններ, այսինքն՝ պատկանում են կեսչափմարդական էակաների արական սեռին, համաձայն հենց նոր հիշատակած օրենքի՝ երբեք չի կարող միանալ այն էքսիտեհարիին, որն առաջանում է հակառակ սեռին պատկանող կեսչափմարդական որևէ երկուղեղ էակի մեջ:

Մինչդեռ ժամանակ իզական սեռի եռուղեղ էակի մեջ առաջացող էքսիտեհարին, այն դեպքերում, երբ տիեզերական ուժերի միահյուսման հատուկ համակցություն է ստացվում և սկսում է գործել նշած օրենքը, երբեմն կարող է, համապատասխան շրջակա պայմանների առկայության պարագայում, լիովին միանալ այն էքսիտեհարիի հետ, որն առաջանում է երկուղեղ

կեսչափմարդական էակի մեջ, բայց միայն էթե դա ակտիվ գործունի դեր է կատարում սրբազան հիմնարար Եռամասիկապողի իրականացման նմանատիպ գործընթացում:

Կարճ ասած՝ քո այդ մոլորակի պատմության այդ ահավոր տարիների ընթացքում ստացվել է մի արդյունք, որը շատ հազվադեպ է պատահում Տիեզերքում, այն է՝ իրար են միացել տարբեր ուղեղային համակարգերի հակադիր սեռերի պատկանող էակների էքսիտեհարիները, ինչի արդյունքում սկզբնավորվել են այն «անհասկանալի» էակների նախնիները, որոնք այժմ կապիկ են կոչվում և հանգիստ չեն տալիս քո սիրելիներին՝ ժամանակ առ ժամանակ հուզելով նրանց տարօրինակ Բանականությունը:

Բայց երբ քո այդ մոլորակի պատմության այդ ահավոր ժամանակահատվածն արդեն անցյալում էր, և կրկին սովորական գոյատևման համար համեմատաբար նորմալ վիճակ էր հաստատվել, և տարբեր սեռերի պատկանող քո սիրելիներն արդեն գտնում էին իրար և ապրում համատեղ կյանքով, միաժամանակ նաև կապիկ-էակների տեսակն էր շարունակվում իրենց նմանների միջավայրում:

Եվ այդ աննորմալ ձևով այնտեղ առաջացած կապիկ-էակների տեսակը շարունակվում էր այն պատճառով, որ այդ աննորմալ էակներից առաջինների սաղմնավորումը նույնպես տեղի էր ունեցել նույն այն արտաքին պայմաններում, որոնց շնորհիվ ընդհանրապես որոշվում են կեսչափմարդական էակների ակտիվ և պասիվ սեռերի ներկայությունները:

Քո այդ մոլորակի եռուղեղ էակների ամեն չափ ու սահման անցած այդ աննորմալ դրսևորման ամենահետաքրքիր արդյունքն այն եղավ, որ ներկայումս կապիկ-էակների հետնորդների՝ արտաքինով տարբերվող բազմաթիվ տեսակներ կան, և դրանցից յուրաքանչյուրը խիստ որոշակի նմանություն ունի այնտեղ մինչև այսօր գոյատևող որևէ չորքոտանի երկուղեղ էակի հետ:

Դրա պատճառն էլ այն է, որ իզական սեռին պատկանող կեսչափմարդական եռուղեղ էակների էքսիտեհարիներն այն ժամանակ միացել են հենց այնպիսի չորքոտանի էակների ակտիվ էքսիտեհարիների հետ, որոնց ներկայացուցիչներն այդ մոլորակի վրա մինչև այժմ գոյություն ունեն:

Եվ իսկապես, զավա կս, երբ Երկիր մոլորակ կատարած իմ վերջին այցի ընթացքում տեղի ունեցած իմ ճամփորդությունների ժամանակ ինձ վիճակվում էր հանդիպել կապիկների զանազան առանձնատուկ տեսակների ներկայացուցիչների, և երբ, իմ երկրորդ բնույթը դարձած սովորությանս համաձայն, հետևում էի նրանց, նկատեցի, որ դրանց մարմնական բոլոր ներքին ֆունկցիաներն ու, այսպես կոչված, «ինքնաբերական դիրքերը» ճիշտ և ճիշտ նույնն են, ինչ համապատասխան նորմալ ճանապարհով կազմավորված չորքոտանի էակների ներկայություններին՝ ներառյալ նաև, այսպես կոչված, «դիմագծերը». և մյուս կողմից՝ դրանց, այսպես կոչված, «հոգեկան գծերն» էլ, բոլոր մանրուքներով հանդերձ, բացարձակապես նույնական են այնտեղի իզական սեռի եռուղեղ էակների հոգեկառույցին բնորոշ հոգեկան գծերին»:

Իր գրույցի այս պահին Բեհեդգեբուղը երկար դադար տվեց և, հստակ արտահայտված երկիմաստ ծայրտով սիրելի թոռանը նայելով, ասաց.

«Շենց նոր իմ ստացած եթերագրում նաև ասվում է, որ, որպեսզի այս անգամ կարողանան վերջնական պատասխան գտնել, թե ով է ումից ծագել՝ կապիկը մարդու ց, թե՛ մարդը կապիկից, քո սիրելի ցնդածները որոշել են նույնիսկ «գիտական փորձեր» դնել. դեռ ավելին, նրանցից մի քանիսն արդեն մեկնել են Աֆրիկա աշխարհամաս, որտեղ այդ կապիկներից շատ են բազմանում, որպեսզի այնտեղից բավարար քանակի փորձանմուշներ բերեն իրենց «գիտական հետազոտությունների» համար:

Դատելով եթերագրի բովանդակությունից՝ Երկիր մոլորակի քո հետաքրքրությունը շարժած էակները կրկին, իրենց սովորության համաձայն, պատրաստվում են տեղը տեղին անսովոր «աճապարարություններ» բանեցնել:

Այն ամենից դատելով, ինչ էս իմացել եմ իմ այն ժամանակվա դիտարկումների արդյունքում, կարող եմ նախապես ասել, որ այդ «գիտափորձն», անշուշտ, խիստ կհետաքրքրի քո մյուս սիրելիներին նույնպես և որոշ ժամանակ նրանց արտառոց Բանականության համար անվերջ քննարկումների ու խոսակցությունների նյութ կծառայի:

Եվ այդ ամենն այնտեղ կընկալվի որպես լիովին հասկանալի մի բան:

Իսկ ինչ վերաբերում է Աֆրիկայից բերած փորձանմուշների հետ կատարվելիք «գիտափորձերին», ապա համոզված կարող եմ նախապես ասել, որ ամեն դեպքում դրա սկզբնական մասը, անշուշտ, «զարմանալիորեն լավ» կստացվի:

Բանն այն է, որ հենց իրենք՝ կապիկները, լինելով «թեթևաբար¹⁴⁵ վարքից ծնված» էակներ, արդեն իսկ իրենց բնույթով շատ են սիրում «ինքնավայելչությամբ» զբաղվել, և հենց առաջին օրից սկսած՝ անշուշտ մեծ սիրով կմասնակցեն այդ «գիտական փորձին» և կաշխատեն ամեն կերպ այդ հարցում օգտակար լինել քո «գիտուն» սիրելիներին:

Իսկ ինչ վերաբերում է այդ գիտափորձը սկսել ցանկացողներին և այն օգուտին, որն ակնկալում են դրանից ստանալ այնտեղի մնացած բոլոր եռուղեղ էակները, ապա այդ ամենը կարող ենք պատկերացնել, եթե հիշենք մեր պատվարժան Մոլլա Նասրեդինի չափազանց իմաստուն ասույթներից մեկը, որն այսպես է արտահայտվել. «Երջանիկ է այն հայրը, որի զավակը, թեկուզ զբաղվելով սպանություններով ու թալանով, ժամանակ չի գտնի, որ վարժվի «ինքնավայելչությամբ» զբաղվելու գործին»:

Հա՛, զավակս, կարծես ես դեռ քեզ չեմ ասել այն մասին, թե Արգ համակարգությունից հեռանալուցս հետո ով և ինչի համար է եթերագրերով ինձ տեղեկություններ հաղորդում այդ համակարգության տարբեր մոլորակների (դրանց թվում՝ նաև Երկիր մոլորակի) վրա տեղի ունեցող կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

Հիշո՛ւ մ ես, ես քեզ պատմել եմ, որ քո այդ մոլորակի մակերևույթի վրա կատարած իմ առաջին վայրէջքը կայացավ մեր ջահել ցեղակիցներից մեկի պատճառով, որն այլևս այնտեղ չուզեց մնալ և մեզ հետ վերադարձավ Մարս, որտեղ էլ հետագայում շատ լավ պարագլուխ դարձավ Մարսի վրա բնակվող մեր ցեղակիցների համար, իսկ ավելի ուշ՝ նաև բոլոր մեր այն ցեղակիցների համար, որոնք զանազան պատճառներով դեռևս շարունակում են գոյատևել այդ Արգ համակարգության որոշ մոլորակների վրա:

Ահա, տղա՛ս, նախքան այդ համակարգությունը լքելս ես նրան նվիրեցի իմ նշանավոր աստղադիտարանը՝ իր բոլոր սարքավորումներով հանդերձ, և ի նշան իր երախտագիտության՝ նա հանձն առավ ամեն ինձ ամիս հաղորդել՝ ըստ մարայան ժամանակի հաշվարկի, այդ համակարգության մոլորակներում տեղի ունեցող բոլոր կարևորագույն իրադարձությունների մասին:

Եվ այժմ այդ պարագլուխն ամենայն բարեխղճությամբ ինձ տեղեկություններ է հաղորդում լինելիական գոյությամբ բեռնավորված մոլորակների վրա տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ և, քանի որ լավ գիտի, որ շատ եմ հետաքրքրվում Երկիր մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակներով, ինչպես հիմա տեսնում եմ՝ անում է հնարավոր ամեն ինչ, որ ես այդ հարցում լավ տեղեկացված լինեմ: Այդ նպատակով նա տեղեկություններ է հաղորդում բոլոր այն դրսևորումների վերաբերյալ, որոնք ինձ հնարավորություն կընձեռեն հետևելու այնտեղի եռուղեղ էակների լինելիական գոյատևման ընթացքին, թեև ինքս արդեն անհասանելիորեն հեռու եմ գտնվում նույնիսկ նրանց մակերեսային մտքերի համար:

Այնտեղ մնացած մեր ցեղակիցների այդ պարագլուխը Երկիր մոլորակի եռուղեղ էակներին վերաբերող և ինձ ուղարկելու ենթակա տեղեկությունները հավաքում է կա՛մ իմ կողմից իրեն թողած մեծ տեսքահանով կատարած իր դիտումների միջոցով, կա՛մ այն տեղեկությունների հիման վրա, որոնք իրենց հերթին նրան են հաղորդում մեր ցեղի այն երեք էակները, որոնք որոշեցին ընդմիջտ մնալ Երկիր մոլորակի վրա. այդ երեքը ներկա ժամանակում գոյատևում են Եվրոպա կոչվող աշխարհամասում և զանազան ծանրակշիռ ու անկախ ձեռնարկություններ ունեն՝ մի բան, որ ներկա պայմաններում անհրաժեշտություն է այնտեղ գոյատևելու համար:

Նրանցից մեկն այնտեղի մեծ քաղաքներից մեկում «թաղման բյուրո» ունի. մյուսը մի ուրիշ մեծ քաղաքում, այսպես կոչված, ամուսնությունների և ամուսնալուծությունների գրասենյակ ունի, իսկ երրորդը տարբեր քաղաքներում անձամբ հիմնադրել է բազմաթիվ, այսպես կոչված, «տարադրամի փոխանակման» կետեր:

Սակայն, տղա՛ս, այդ եթերագրի պատճառով ես արդեն շատ շեղվեցի իմ սկսած պատմությունից:

Վերադառնանք մեր նախկին թեմային:

Եվ այսպես, դեպի Երկիր մոլորակ կատարած իմ չորրորդ թռիչքի ժամանակ «Պատահար» տիեզերանավը վայրէջք կատարեց, այսպես կոչված, «Կարմիր ծովի» վրա:

Մենք այդ ծովի վրա իջանք այն պատճառով, որ այն ողողում էր Գրաբոնզի կոչվող աշխարհամասի արևելյան ափերը. հենց այդ աշխարհամասն էի ես ուզում մուտք գործել, որն այժմ Աֆրիկա է կոչվում,

¹⁴⁵ ռուս. տարբերակում՝ «теремильный», անգլ. տարբերակում՝ "titillarian"

և որի վրա ինձ անհրաժեշտ կապիկ էակները բազմանում էին ավելի շատ, քան քո այդ մոլորակի մնացած բոլոր ցամաքային մակերևույթների վրա: Նաև այն պատճառով իջանք այդտեղ, որ այդ ժամանակահատվածում այդ ծովը հատկապես հարմար էր մեր «Պատահարի» կայանման համար, բայց ավելի կարևոր էր այն, որ այդ ծովի մի կողմում փոված էր մի երկիր, որն այն ժամանակ կոչվում էր «Նեդիա»¹⁴⁶, իսկ հիմա՝ Եգիպտոս, և հենց այդ երկրում էին ապրում մեր ցեղի այն էակները, որոնք վաղուց որոշել էին մնալ Երկիր մոլորակի վրա, և որոնց օգնությամբ մտադիր էի կապիկներ բռնել:

Եվ այսպես, իջնելով Կարմիր ծովի վրա, մենք այնուհետև «հիպոդրենեկների» միջոցով «Պատահար» նավից անցանք ափ, հետո ուղտերով գնացինք այն քաղաքը, որտեղ ապրում էին մեր ցեղակիցները, և որն այն ժամանակ Եգիպտոսի մայրաքաղաքն էր:

Այդ արևոտ քաղաքը Թեբե էր կոչվում:

Թեբե հասնելուս հենց առաջին օրը այնտեղ ապրող մեր ցեղակիցներից մեկը մեր զրույցի ընթացքում ամեն ինչից զատ պատմեց նաև այն մասին, որ Երկրի էակներն այդ վայրերում իրենց մոլորակի վրայից այլ տիեզերական խտացումներ դիտելու դիտակայան են կառուցել, և որ նրանք արդեն ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է դիտակայանը գործարկելու համար, և, բացի այդ, ինչպես այնտեղ բոլորն են խոսում, այդ նոր համակարգի հնարավորություններն ու հարմարություններն ուղղակի գերազանց են, և մինչև հիմա Երկրի վրա դրանց հավասարը չի եղել:

Եվ երբ նա պատմեց այն ամենը, ինչ իր աչքերով էր տեսել, ես անչափ հետաքրքրվեցի դրանով, քանի որ որոշ մանրամասների վերաբերյալ տված նրա տեղեկություններից ինձ թվաց, թե այդ երկրային էակները, հնարավոր է, գտել են այն անհարմարությունը հաղթահարելու միջոցը, որի մասին ինքս մինչև այդ շատ էի մտածել այն ժամանակ, երբ արդեն ավարտում էի մարսյան իմ աստղադիտարանի շինարարությունը:

Ուստի որոշեցի որոշ ժամանակով հետաձգել կապիկներ որսալու նպատակով դեպի այդ աշխարհամասի հարավային կողմը խորանալու սկզբնական մտադրությունս և նախ գնալ այն վայրը, որտեղ կառուցվել էր հիշյալ շինությունը, որպեսզի հենց տեղում համակողմանի ծանոթանամ և ինձ համար պարզեմ դրա հետ կապված ամեն ինչ:

Այսպիսով, մեր Թեբե հասնելու հաջորդ օրը, այնտեղ բազմաթիվ ընկերներ ունեցող մեր ցեղակիցներից մեկի, հիշյալ շինության գլխավոր ճարտարապետի, և, իհարկե, մեր Ահունի ուղեկցությամբ, այս անգամ «ջուրթեթի»¹⁴⁷ միջոցով իջանք այն մեծ գետի հոսանքն ի վար, որն այժմ «Նեդոս» է կոչվում:

Այն տեղից ոչ շատ հեռու, որտեղ այդ մեծ գետը թափվում է հսկա սալիաքուռիափային տարածքի մեջ, այդ ժամանակ արդեն ավարտին էր հասնում այն կառույցների շինարարությունը, որոնց մի մասն այն ժամանակ հետաքրքրեց ինձ:

Բուն այն տարածքը, որտեղ ընթանում էին, այսպես կոչված, «նոր աստղադիտարանի», ինչպես նաև մի քանի ուրիշ շինությունների կառուցման աշխատանքները, որոնք նախատեսված էին սովորական լինելիական գոյատևման համար, այն ժամանակ կոչվում էր «Ավազլին»¹⁴⁸, դրանից մի քանի տարի հետո՝ «Կահիրոնանա»¹⁴⁹, իսկ ներկայումս այդ վայրերը պարզապես անվանում են «Կահիրեի արվարձաններ»:

Նշված կառույցների շինարարությունը սկսել էր իրենց, այսպես կոչված, «փարավոններից» մեկը, ինչպես կոչում էին այդ վայրի էակներն իրենց արքային, Երկիր մոլորակ կատարած իմ այդ չորրորդ այցելության և այդ երկիրը կատարած առաջին այցիս օրոք նրա սկսած այդ հատուկ շինություններն արդեն ավարտին էր հասնում նրա թոռը, որը նույնպես փարավոն էր:

Թեև իմ հետաքրքրությունը շարժած աստղադիտարանի կառուցումը դեռևս ավարտված չէր, այնուհանդերձ այնտեղից արդեն կարելի էր դիտել տիեզերական երևացող խտացումները և ստանալ ինչպես դրանցից բխած արդյունքները, այնպես էլ այդ արդյունքների փոխազդեցությունը:

Այդ դիտումներով ու հետազոտություններով զբաղվող էակներն այն ժամանակ Երկրի վրա կոչվում էին «աստղաբաշխներ»:

¹⁴⁶ ռուս. տարբերակում՝ «Нилия», անգլ. տարբերակում՝ “Nilia”

¹⁴⁷ ռուս. տարբերակում՝ «чуртетеве», անգլ. տարբերակում՝ “choorteteff”

¹⁴⁸ ռուս. տարբերակում՝ «Авазлин», անգլ. տարբերակում՝ “Avazlin”

¹⁴⁹ ռուս. տարբերակում՝ «Каиронана», անգլ. տարբերակում՝ “Caironana”

Բայց երբ հետագայում իմաստակություն կոչվող հոգեկան հիվանդությունը վերջնականապես ամրապնդվեց այնտեղ, և դրա հետևանքով նրանց այդ մասնագետները ևս «հղփացան»՝ մասնագիտանալով միայն առանձին տիեզերական խտացումների համար անուններ հորինելու գործում, նրանց սկսեցին կոչել «աստղագետներ»:

Քանի որ շրջապատի մյուս էականների նկատմամբ ունեցած տարբերություններն ու դերը՝ քո սիրելիներից այն ժամանակ նման մասնագիտացում ունեցողների և հիմա, այսպես ասած, նույն մասնագիտությունն ունեցողների միջև նույնպես կարող են քեզ ցուցադրել բոլոր եռուղեղ էակների ներկայության մեջ անհրաժեշտ պայման հանդիսացող և «առողջ տրամաբանական մտածողություն» ծնող տվյալների «բյուրեղացման աստիճանի անշեղ վատացման անհերքելիությունը», որն առկա է քո սիրելիների ներկայություններում, անհրաժեշտ եմ համարում բացատրել և օգնել քեզ, որպեսզի գոնե մոտավոր պատկերացում ստանաս այդ տարբերությունների մասին, որոնք էլի շարունակում են գնալ դեպի վատը:

Այդ ժամանակահատվածում պատասխանատու տարիքին հասած այն երկրային եռուղեղ էակները, որոնց մյուսներն «աստղաբաշխներ» էին անվանում, այն բանից զատ, որ ընդհանուր երկրային գիտության իրենց ներկայացրած ճյուղում, այսպես կոչված, «մանրակրկիտության» հասնելու նպատակով դիտում և հետազոտում էին զանազան տիեզերական խտացումներ, նաև իրենց շրջապատի էակների նկատմամբ ցուցաբերվող մի քանի լրացուցիչ ու որոշակի էաբուխ-պարտավորություններ էին վերցնում իրենց վրա:

Այդ իրենց հիմնական որոշակի պարտավորությունների մեջ մտնում էր նաև այն, որ նրանք նույնպես, ինչպես մեզ մոտ Ջրովիկներն են անում, պետք է խորհուրդներ տային իրենց, այսպես կոչված, «հոտին» պատկանող բոլոր ամուսնական զույգերին, որոնք վերաբերում էին այդ զույգերի տիպային տեսակին, սուրբ էլմուարնոյի գործընթացի ժամանակին ու եղանակին, որպեսզի այդ զույգերը հարկ եղած ձևով սաղմնավորեին իրենց պտուղները. իսկ երբ այդ պտուղները կազմավորվում էին կամ, ինչպես իրենք են ասում, «լույս աշխարհ էին գալիս», նրանք պետք է նաև «օբլեկիոներիշ¹⁵⁰» կազմեին, որին քո սիրելիները «հորոսկոպ» են ասում, իսկ դրանից հետո կա՛մ հենց իրենք, կա՛մ իրենց փոխանորդներն այն ամբողջ ընթացքում, երբ տեղի էր ունենում նորածինների՝ որպես էակների, հասունացումը մինչև պատասխանատու գոյատևման տարիքին հասնելը, պետք է այդ օբլեկիոներիշին համապատասխան ուղղություն և ցուցումներ տային՝ հենվելով նաև տիեզերական օրենքների իրենց այն մշտական բացատրությունների վրա, որոնք վերաբերում էին մեծ տիեզերական գոյացությունների թողած ազդեցությանը, ինչն ընդհանրապես տեղի է ունենում բոլոր մոլորակների վրա լինելիական գոյություն ունեցող էակների նկատմամբ:

Նրանց այդ ցուցումներն ու, այսպես կոչված, «նախագուշացումները» կայանում էին հետևյալում:

Երբ իրենց հոտին պատկանող որևէ էակի ներկայության մեջ աններդաշնակացած էր լինում կամ սկսում էր աններդաշնականալ որևէ մի գործառույթ, ապա այդ էակը դիմում էր տվյալ տարածքի աստղաբաշխին, որն էլ իր կազմած հորոսկոպի և իր հաշվարկներից բխած այն ակնկալվող փոփոխությունների հիման վրա, որոնք պետք է տեղի ունենան մթնոլորտային այն պրոցեսների ընթացքում, որոնք էլ իրենց հերթին պայմանավորված են իրենց արևային համակարգությանը պատկանող մոլորակների ազդեցությամբ, ցուցում էր տալիս, թե իրեն դիմած էակն ինչպես պետք է վարվի իր մոլորակային մարմնի հետ՝ իրենց մոլորակի կրենտոնալ շարժման ժամանակահատվածներին համապատասխան. այսպես օրինակ՝ ի՛նչ ուղղությամբ պառկի, ինչպե՛ս շնչի, ո՞ր շարժումներն են ցանկալի, ինչպիսի՞ տիպերի հետ հաղորդակցվելուց խուսափի և նմանատիպ այլ բաներ:

Դրանից զատ, էակների գոյատևման յոթերորդ տարին լրանալուց հետո նույն այդ օբլեկիոներիշների հիման վրա նրանց համար ընտրում էին հակառակ սեռին պատկանող էակ, որպեսզի միասին կատարեն իրենց լինելիական գլխավոր պարտականություններից մեկը, այսինքն՝ շարունակեն իրենց ցեղը, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, իրար հետ «մարդ ու կին» դառնան:

Պետք է արժանին մատուցել այն ժամանակաշրջանի քո սիրելիներին, երբ նրանց կողքին կային այդ աստղաբաշխները. այդ շրջանում նրանք իրոք խստորեն հետևում էին այդ աստղաբաշխների

¹⁵⁰ ռուս. տարբերակում՝ «облекиунерिश», անգլ տարբերակում՝ “oblekioonerish”

տված ցուցումներին և ամուսնական գույգեր էին կազմում միայն այդ ցուցումներին համապատասխան:

Ուստի այդ ժամանակաշրջանում ամուսնական գույգ կազմած կողմերն իրենց տիպերով համապատասխանում էին իրար ճիշտ այնպես, ինչպես բոլոր մյուս մոլորակների վրա բազմացող կեսչափմարդական էակների մոտ է լինում:

Այդ հինավուրց երկրային աստղաբաշխները ճիշտ էին կազմում ամուսնական գույգերն այն պատճառով, որ թեև իրենց գիտելիքներով դեռ շատ հեռու էին տիեզերական տրոգոավտոեգոկրատական ճշմարտությունները հասկանալուց, այնուհանդերձ շատ լավ գիտեին իրենց մոլորակի վրա բազմացող էակների վրա իրենց համակարգի տարբեր մոլորակների ազդեցության օրինաչափությունների մասին՝ ինչպես ամեն մի էակի ծննդյան պահին, այնպես էլ հետագա հասունացման և պատասխանատու տարիքին համապատասխանող իրենց Լինելիությանը հասնելու ընթացքում:

Մերնդեսերունդ փոխանցված և իրենց հասած բազմադարյան գործնական գիտելիքների շնորհիվ նրանք արդեն շատ լավ գիտեին, թե պասիվ սեռի տվյալ տիպին ակտիվ սեռի ինչ տիպ կարող է համապատասխանել:

Դրա հետևանքով այն գույգերը, որոնք կազմվում էին այդ աստղաբաշխների ցուցումներին համապատասխան, համարյա միշտ ներդաշնակ էին լինում, և ոչ թե այնպես, ինչպես ներկա ժամանակներում է. հիմա ամուսնական գույգ կազմած էակների տիպերը համարյա երբեք չեն համապատասխանում իրար: Իսկ դա բերում է նրան, որ գույգ կազմելուն հետևած, ինչպես իրենք են ասում, «ամուսնական կյանքի» համարյա կեսից ավելին ծախսվում է միայն այն բանի վրա, որը մեր պատվարժան Մոլլա Նասրեդինն իր ասույթներից մեկում բնորոշում է հետևյալ կերպ. «Էլ ի՞նչ լավ ամուսին կամ լավ կին, որ ամբողջ ամուսնական կյանքում «իրար հոգի չուտեն»»:

Ամեն դեպքում, զավա՛կս, եթե այնտեղ այդ աստղաբաշխների գոյությունը շարունակական լիներ, ապա, իհարկե, նրանց գործունեության շնորհիվ այդ դժբախտ մոլորակի էակների կյանքը ներկայումս կլիներ այնպիսին, որ նրանց ընտանեկան հարաբերությունները գոնե մի քիչ կնմանվեին մեր Մեծ Տիեզերքի մյուս մոլորակների վրա ապրող էակների ընտանեկան հարաբերություններին:

Սակայն, ինչպես բոլոր այն օգտակար բաներն ու լավ նվաճումները, որոնք իրենց գոյության ընթացքում ժամանակին հաստատված են եղել այնտեղ, այդ մե՛կն էլ, դեռևս հարկ եղած չափով այն չօգտագործած, նետեցին Մոլլա Նասրեդինի ասած «խոզերի առաջ»:

Եվ այդ աստղաբաշխներն էլ, ինչպես միշտ է այնտեղ լինում՝ նախ սկսեցին աստճանաբար «խամրել», որից հետո կատարելապես, ինչպես ասում են, «չքացան»:

Երբ այդ աստղաբաշխների պարտականությունների կատարումն այնտեղ ամբողջովին ի չիք դարձավ, նրանց փոխարեն այդ նույն բնագավառում նոր մասնագետներ ի հայտ եկան, սակայն նրանք արդեն պատկանում էին «նոր կազմավորված գիտուն էակների» շարքին. սրանք նույնպես սկսեցին դիտել և հետազոտել զանազան տիեզերական մեծ խտացումների, այսպես կոչված, արդյունքները և դրանց թողած ազդեցությունն իրենց մոլորակի էակների վրա: Բայց քանի որ նրանց շրջապատի սովորական էակները շուտով նկատեցին, որ այդ նոր մասնագետների «դիտումներն ու հետազոտությունները» սահմանափակվում են միայն հեռավոր և իրենց համար ոչ մի նշանակություն չունեցող զանազան աստղերի ու մոլորակների համար անուններ հորինելով, որոնց քանակությունը Տիեզերքում միլիարդներ է կազմում, նաև այն բանով, որ միայն իրենց հայտնի և մասնագիտական գաղտնիք համարվող եղանակով չափում են տիեզերական այն կետերի միջև եղած հեռավորությունները, որոնք իրենց մոլորակից տեսանելի են լինում մանկական խաղալիք հիշեցնող իրենց, այսպես կոչված, «աստղադիտակներով», ապա այդ նոր մասնագետներին սկսեցին անվանել, ինչպես արդեն քեզ ասել եմ, աստղագետներ:

Իսկ այժմ, զավա՛կս, մեկ որ խոսեցինք քո սիրելիների թվին պատկանող ժամանակակից «գերերևակայողների» մասին, չի խանգարի, կրկին հետևելով մեր սիրելի ուսուցիչ Մոլլա Նասրեդինի մտածելակերպին ու բառային ձևակերպումներին՝ քեզ համար «լուսաբանել» նրանց նշանակությունը, որոնց այդքան վեր են հանում քո սիրելիները:

Նախ և առաջ դու պետք է իմանաս հենց այդ երկրային տիպերի մոտ իրողություն դարձած այն տիեզերական սովորական «ինչ-որ բանի» մասին, որն ընդհանրապես միշտ ինքնին իրողություն է դառնում ամեն մի տիեզերական առանձին միավորի մեջ և Օբյեկտիվ Բանականությամբ օժտված

Էակաների համար ծառայում է որպես, այսպես կոչված, «սկզբնաղբյուր» ամեն մի տվյալ տիեզերական արդյունքի մասին մտորելու համար:

Այդ երկրային էակաների ժամանակակից տիպի նշանակության բացահայտման համար որպես այդպիսի «ինչ-որ բան» և սկզբնաղբյուր կարող է ծառայել «խրթին» մի քարտեզ, որին իրենք, իհարկե, անգիտակցաբար, անվանել են «աստղային երկնքի նկարագրության քարտեզ»:

Մենք այստեղ կարիք չունենք որևէ ուրիշ տրամաբանական եզրակացություն անելու հատուկ նրանց կողմից կյանքի կոչված այդ սկզբնաղբյուրի վերաբերյալ. բավարար կլինի միայն, եթե ասենք, որ հենց այդ քարտեզի անվանումը ցույց է տալիս, որ նրանց կնքած անունները միայն հարաբերական կարող են լինել, քանի որ իրենց ձեռքի տակ եղած հնարավորություններով (թեև իրենք չեն զլանում իրենց հարգարժան գլուխները լցնել զանազան անվանումներով ու հաշվարկներով) իրենց մոլորակի մակերևույթից նրանք կարող են տեսնել միայն այն արևներն ու մոլորակները, որոնք, ի բարեբախտություն իրենց, շատ արագ չեն փոխում անկման ուղղությունն իրենց մոլորակի նկատմամբ և դրանով իսկ հնարավորություն են տալիս երկար ժամանակի ընթացքում (երկար, իհարկե, նրանց կարճատև կյանքի տևողության համեմատ) դիտելու այդ լուսատուները և, ինչպես իրենք են ասում, «գրանցելու դրանց դիրքը»:

Ամեն դեպքում, տղա՛ս, որքան էլ չնչին լինեն «գիտության» այդ ժամանակակից ներկայացուցիչների գործունեության արդյունքները, խնդրում եմ, մի՛ նեղացիր նրանցից: Եթե մյուս քո սիրելիներին նրանք ոչ մի օգուտ չեն տալիս, ապա գոնե առանձնապես մեծ վնաս էլ չեն տալիս:

Ի վերջո, ինչ-որ բանով պետք է զբաղվեն...

Հո իզու՛ր չեն գերմանական ակնոցներ կրում և անգլիական վերնաշապիկներ հագնում:

Հանգիստ թողնենք նրանց: Թո՛ղ զբաղվեն այդ գործով: Աստված իրենց հետ: Այլապես այնտեղի «բարձր թեմաներով» տարված ցնդածների մեծամասնության նման ձանձրույթից կսկսեն զբաղվել «հինգը մեկի դեմ կռիվ տալու» գործով:

Բոլորին է հայտնի, որ նման գործով զբաղված էականերն իրենց խիստ վնասակար թրթռուները փոխանցում են նաև շրջապատում եղած իրենց նման էականերին:

Ինչ որ է... Հանգիստ թողնենք այդ ժամանակակից «ինքնագոհացողներին» և շարունակենք մեր կիսատ թողած գրույցը:

Ելնելով այն բանից, զավա՛կս, որ այն ստեղծագործական ունակությունը, որը տվյալ դեպքում դրսևորվել էր մի այնպիսի շինության կառուցումով, որի նմանն այնտեղ չէր եղել ոչ դրանից առաջ, ոչ էլ եղավ հետո, և որը ես իմ աչքերով տեսա, նաև այն էակաների նվաճումների արգասիքն էր, որոնք պատկանում էին Ախալդան կոչվող գիտական խորհրդին, որը կազմավորվել էր Ատլանտիդա մայրցամաքում նախքան երկրորդ երկրային արհավիրքը, կարծում եմ, որ ամենալավն այն կլինի, եթե, նախքան այդ աստղադիտարանի և դրան կից այն շինությունների մասին պատմելս, որոնք նախատեսված էին սովորական լինելիական գոյատևման համար, թեկուզ համառոտակի քեզ պատմեմ այնտեղ կազմավորված և հիրավի մեծ այն գիտական ընկերության մասին, որն այնտեղի գիտուն եռուղեղ էակաները ստեղծել էին Ատլանտիդա մայրցամաքում և այն անվանել Ախալդան:

Այդ մասին քեզ տեղյակ պահելը խիստ անհրաժեշտ է, քանի որ Երկիր մոլորակի քեզ հետաքրքրած եռուղեղ էակաների վերաբերյալ իմ հետագա բացատրությունների ընթացքում, ամենայն հավանականությամբ, ես շատ անգամ ստիպված կլինեմ հիշատակելու այնտեղի գիտուն էակաների այդ ընկերության մասին:

Ես նաև այն պատճառով քեզ պետք է պատմեմ Ատլանտիդա աշխարհամասում կազմավորված ու գործած այդ ընկերության պատմությունը, որ դու նաև իմանաս, որ եթե քո այդ մոլորակի եռուղեղ էականերն այնտեղ իրենց լինելիական Պարտք-պարտականության շնորհիվ, այսինքն՝ շնորհիվ իրենց գիտակցական աշխատանքի ու կամավոր տառապանքի, երբևէ ինչ-որ արդյունքի հասնում են, ապա դա հիմնականում օգտագործում են հանուն իրենց սեփական Լինելիության, իսկ այդ նվաճումների որոշակի մասը, ինչպես մեր դեպքում է լինում, ժառանգաբար փոխանցվում է և բաժին հասնում նրանց անմիջական սերունդներին:

Նման օրինաչափություն դու այնտեղ կարող ես տեսնել հենց միայն այն փաստից, որ թեև Ատլանտիդա աշխարհամասի կործանումից առաջ արդեն սովորական լինելիական գոյության աննորմալ պայմաններ էին սկսում ձևավորվել, իսկ մեծ կործանումից հետո էլ դրանք ավելի էին վատանում այնպիսի տեմպերով, որ շատ շուտով վերջնականապես «ճնշեցին» եռուղեղ էականերին

բնորոշ որևէ կարողության դրսևորման իրենց ունեցած ամեն մի ունակություն, այնուհանդերձ նրանց գիտական նվաճումների մի մասը ժառանգաբար, թեև՝ մեխանիկորեն, փոխանցվել է իրենց հեռավոր անմիջական սերունդներին:

Նախ պետք է քեզ ասեմ, որ նրանց մասին այս պատմությունը ես իմացել եմ «թելաոգիների»¹⁵¹ շնորհիվ, որոնք ներկայումս գոյություն ունեն նաև քո այդ Երկիր մոլորակի մթնոլորտում:

Քանի որ դու, հավանաբար, դեռևս չգիտես, թե ինչ բան է այդ «թելաոգիներ» կոչվածը, ապա փորձիր քո ընդհանուր ներկայության համապատասխան մասերում ներառել այդ տիեզերական գոյացությանը վերաբերող սույն տեղեկությունը:

Թելաոգիները այն նյութականացված գաղափարներն ու մտքերն են, որոնք իրենց ծագումից հետո համարյա հավերժորեն մնում են այն մոլորակի մթնոլորտում, որի վրա ծագել են:

Թելաոգիները կարող են առաջանալ այնպիսի լինելիական մտասևեռումների արդյունքում, որոնք կարող են իրականացնել եռուղեղ էակներից միայն նրանք, ովքեր իրենց ընդհանուր ներկայություններում հանդերձավորել են իրենց բարձրագույն լինելիական մարմինները և իրենց բարձրագույն լինելիական Բանականությունը հասցրել են սրբազան «Մարդիոտի»¹⁵² աստիճանին:

Իսկ նման ձևով նյութականացված լինելիական գաղափարների հաջորդական շարքերը, որոնք վերաբերում են որևէ իրադարձության, կոչվում են «քոռկապթելային մտածապավեններ»¹⁵³: Պարզվում է, որ Ախալդան գիտական ընկերության պատմությանը վերաբերող հիշյալ քոռկապթելային մտածապավենները, ինչպես անհամեմատ ավելի ուշ ես պարզեցի, նպատակամղված ձևով արձանագրվել են Ասուչիլոն անունով և ներկայումս սուրբ մի «Անմահ Անհատականության» կողմից, որը քո այդ մոլորակի վրա տեղի ունեցած երկրորդ մեծ Տրանսպայան խոտորումից չորս հարյուրամյակ առաջ Ատլանտիդա աշխարհամասի վրա հանդերձավորվել է եռուղեղ էակի մոլորակային մարմնով և կոչվել Տետետոս¹⁵⁴:

Այդ քոռկապթելային մտածապավենները երբեք չեն քայքայվում, քանի դեռ տվյալ մոլորակը գոյատևում է իր, այսպես կոչված, «նախասկզբնական ծագման ռիթմով», և դրանք երբևէ փոխակերպության չեն ենթարկվում տիեզերական այն պատճառներով, որոնք իրենց ազդեցությունն են թողնում բոլոր մյուս տիեզերական սուբստանցիաների և բյուրեղացումների վրա:

Եվ, որքան էլ ժամանակ անցնի, ամեն մի եռուղեղ էակ, որն իր ներկայությամբ ունակություն է ձեռք բերել մտնելու, այսպես կոչված, «սուրբտաքալիքային»¹⁵⁵ մտասևեռման» լինելիական վիճակի մեջ, կարող է ընկալել ու հասկանալ այդ քոռկապթելային մտածապավենների գրառումները:

Այսպիսով, զավա՛կս, Ախալդան ընկերության առաջացման մանրամասները ես մասամբ իմացա հենց նոր իմ նշած թելաոգիների գրառումներից, մասամբ էլ իմ ստացած շատ տեղեկություններից, որոնք անհամեմատ ավելի ուշ են հասել ինձ, երբ շատ կարևոր մի գործոնով հետաքրքրված լինելով՝ կատարում էի իմ սովորական մանրամասն հետազոտությունները:

Համաձայն հիշյալ թելաոգիների գրառումների և հետազայում իմ ստացած տվյալների՝ հստակ ու որոշակիորեն ինձ հայտնի է դարձել, որ Ատլանտիդայում կազմավորված և Երկիր մոլորակի եռուղեղ էակներից բաղկացած այդ Ախալդան կոչվող գիտական ընկերությունը կազմավորվել է երկրորդ Տրանսպայան խոտորումից 735 տարի առաջ:

Այդ ընկերությունը հիմնվել է Բելկուլտազի¹⁵⁶ անունով այնտեղի մի էակի նախաձեռնությամբ, որն այն ժամանակ կարողացել է իր բարձրագույն լինելիական մասի զարգացումը հասցնել Սուրբ Անմահ Անհատականության Լինելիությանը, և նրա այդ բարձրագույն մասն այժմ ներկա է սուրբ Քավարան մոլորակի վրա:

Թե ինչպիսի ներքին ու արտաքին լինելիական ազդակներ ու դրսևորումներ են այն ժամանակ այդ Բելկուլտազիին դրդել, որ նա հիմնի սովորական եռուղեղ էակների այդ հիրավի մեծ ընկերությունը, մի ընկերություն, որին ժամանակին համայն Տիեզերքում համարում էին «ընդօրինակելու արժանի»,

¹⁵¹ ռուս. տարբերակում՝ «телеогиноура», անգլ. տարբերակում՝ “teleoghinaras”, մի այլ տեղ՝ “teleoghinooras”

¹⁵² ռուս. տարբերակում՝ «Мартфотая», անգլ. տարբերակում՝ “martfotai”

¹⁵³ ռուս. տարբերակում՝ «коркапильные мысле-шнуры», անգլ. տարբերակում՝ “korkaptilnian thought-tape”

¹⁵⁴ ռուս. տարբերակում՝ «Тететос», անգլ. տարբերակում՝ “Tetetos”

¹⁵⁵ ռուս. տարբերակում՝ «сурптакалкое», անգլ. տարբերակում՝ “soorptakalknian”

¹⁵⁶ ռուս. տարբերակում՝ «Белкултасси», անգլ. տարբերակում՝ “Belcultassi”

իմ հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ հետազայում Սուրբ Անհատականություն հռչակված Բեկուլտազին մի անգամ, ամեն մի նորմալ էակի սովորության համաձայն, երբ ձեռնամուխ է եղել մտասնեռման, և նրա մտքերն ըստ նմանագագացության կենտրոնացվել են իր ներսի, այսինքն՝ իր գոյության իմաստի ու նպատակի վրա, հանկարծ զգացել է ու գիտակցել, որ իր ամբողջ կառույցը մինչև այդ պահը գործել է ոչ այնպես, ինչպես պետք է գործեր առողջ տրամաբանության տեսակետից:

Այդ անսպասելի եզրակացությունն այնպես խորն է ցնցել նրան, որ դրանից հետո ամբողջովին նվիրվել է այն գործին, որ կարողանա ամեն գնով պարզել ու հասկանալ, թե դա ինչ է նշանակում:

Նախ և առաջ նա որոշել է անհապաղ հասնել այնպիսի «գորության», որ ուժ գտնի իր մեջ կատարելապես անկեղծ լինելու ինքն իր հետ, այսինքն՝ որ ի վիճակի լինի հաղթահարելու այն ազդակները, որոնք իր ընդհանուր ներկայության գործունեության մեջ սովորական էին դարձել՝ իր մեջ ծագելով ու ընթանալով բազմաթիվ այն զանազան նմանագագացություններից, որոնք իր ներսում սկիզբ էին առնում ամեն տեսակի դրսից ու ներսից եկած պատահական խթանների ազդեցությամբ. ազդակներ, որոնք «ինքնասիրություն», «հպարտություն», «սնապարծություն» և այլ անուններով են կոչվում:

Իսկ երբ անասելի, այսպես կոչված, «ֆիզիկական ու հոգևոր ջանքերի» գնով նա հասել է դրան, ապա, առանց իր ներկայությանը բնորոշ դարձած այդ լինելիական ազդակների նկատմամբ խղճահարություն տածելու, նա սկսել է մտածել և հիշել, թե երբ և ինչպիսի լինելիական ազդակներ են իր ներկայության մեջ ծագել նախկին ժամանակներում, և թե ինչպես է ինքը, գիտակցաբար թե անգիտակցաբար, արձագանքել դրանց:

Նման ինքնավերլուծության արդյունքում նա սկսել է հիշել, թե հատկապես ո՞ր ազդակն ինչպիսի՛ արձագանք է առաջացրել իր ոգի առած մասերում, այսինքն՝ մարմնում, զգացմունքներում ու մտքերում, ինչպես նաև իր էության մեջ, երբ քիչ թե շատ ուշադիր արձագանքել է որևէ բանի, և թե երբ և ինչպես է ինքը գործել կա՛մ իր գիտակից Ես-ով, կա՛մ ինքնաբերաբար՝ միայն և միայն իր բնագոյի դրդմամբ:

Հենց այդ ժամանակ էլ հետազայում Սուրբ Անհատականություն դարձած այդ Բեկուլտազին, այդպես հիշելով նախկինում ունեցած իր բոլոր ընկալումները, ապրումներն ու դրսևորումները՝ արդյունքում հստակորեն փաստեց, որ իր արտաքին դրսևորումները բոլորովին չեն համապատասխանում ո՛չ իր ներսում պարզորոշ կերպով ծագող ընկալումներին, ո՛չ էլ ազդակներին:

Այնուհետև նա նույն անկեղծությամբ սկսեց դիտարկել իր այն տպավորությունները, որոնք իր ընդհանուր ներկայության մեջ ընկալվում էին՝ ներմուծվելով դրսից, ինչպես նաև կազմավորվելով հենց իր ներսում, և նա այդ դիտարկումները կատարում էր նույնպիսի սպառիչ գիտակցական փաստումներով, թե ինչպես էին այդ տպավորություններն ընկալվում իր առանձին ոգի առած մասերով, և թե ինչպես և ո՞ր դեպքերում էին դրանք ապրումներ առաջացնում իր ողջ ներկայության մեջ և ո՞ր դրսևորումների համար էին որպես ազդակներ ծառայում:

Այդ սպառիչ գիտակցական դիտարկումներն ու անաչառ փաստումները վերջնականապես համոզեցին Բեկուլտազին, որ իր ընդհանուր ներկայության ներսում ինչ-որ բան այնպես չի տեղի ունենում, ինչպես պետք է տեղի ունենար ըստ առողջ լինելիական տրամաբանության:

Ինչպես ինձ համար պարզ դարձավ իմ հետազա մանրագնին հետազոտությունների արդյունքում, թեև Բեկուլտազին համոզվել էր իր ինքնագնումների անկասկածելի ճշգրտության մեջ, այնուհանդերձ դեռևս որոշ կասկածներ ուներ իր սեփական զգացողությունների ու ըմբռումների ճշմարտացիության և իր հոգևոր կառույցի նորմալ լինելու վերաբերյալ, ուստի իր առջև խնդիր էր դրել նախ և առաջ պարզելու այն հարցը, թե արդյո՞ք նորմալ վիճակում է ինքը եղել, որ այդ ամենը զգացել ու հասկացել է հենց այդպես, և ոչ ուրիշ կերպ:

Որպեսզի գտնի այդ հարցի պատասխանը, նա որոշեց պարզել, թե այդ ամբողջն ինչպես են զգում և հասկանում ուրիշները:

Այդ նպատակով նա սկսել է հարցուփորձ անել իր ընկերներին ու ծանոթներին, որպեսզի իմանա, թե նրանք ինչպես են զգում ու հասկանում իրենց նախկին ու ներկա ընկալումներն ու դրսևորումները, և, իհարկե, դա անում էր մեծագույն զգուշավորությամբ, որպեսզի չշարժի նրանց բնորոշ արդեն հիշատակած ազդակները, ինչպիսիք են՝ «իքնասիրությունը», «հպարտությունը» և այլն, որոնք սազական չեն եռուղեղ էակներին:

Այդ գրույցների շնորհիվ Բելկուլտագիին աստիճանաբար հաջողվել է անկեղծություն արթնացնել իր ընկերների ու ծանոթների մեջ, և դրա արդյունքում շուտով պարզվել է, որ նրանք բոլորը զգում և տեսնում են ճիշտ այնպես, ինչպես ինքը:

Եվ ահա, Բելկուլտագիի ընկերների ու ծանոթների մեջ եղել են մի քանի լուրջ էակներ, որոնք դեռևս հիմնովին չէին դարձել իրենց Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների ազդեցության ստրուկները, և, թափանցելով գործի էության մեջ, իրենք նույնպես լրջորեն հետաքրքրվել են դրանով և սկսել են և՛ հետևել հենց իրենց հետ տեղի ունեցող բաներին, և՛ ինքնուրույնաբար դիտել իրենց շուրջը եղածներին:

Դրանից քիչ անց Բելկուլտագիի նախաձեռնությամբ, նրանք սկսել են ժամանակ առ ժամանակ միասին հավաքվել և փոխանակել իրենց դիտումների և նոր փաստարկումների արդյունքները:

Երկարատև ստուգումներից, դիտումներից ու անաչառ փաստարկումներից հետո երկրային էակների այդ խումբը, ճիշտ այնպես, ինչպես հենց ինքը՝ Բելկուլտագին, լիովին համոզվեց, որ իրենք այնպիսին չեն, ինչպիսին հարկ է, որ լինեն:

Որոշ ժամանակ անց շատ շատերը, որոնք նման ներկայությամբ էին օժտված, միացան երկրային էակների այդ խմբին: Իսկ ավելի ուշ հիմնեցին ընկերություն, որն անվանեցին «Ախալդան Ընկերություն»: Ախալդան բառով այն ժամանակ արտահայտվում էր հետևյալ հասկացությունը. «էակների Լինելիության իմաստն ու նպատակը հասկանալու ձգտում»:

Ընկերության հիմնադրման սկզբնական շրջանում դրա գլուխ կանգնած էր հենց ինքը՝ Բելկուլտագին, և այդ ընկերության անդամների հետագա գործողությունները նա էր ղեկավարում:

Երկրային շատ տարիների ընթացքում ընկերությունը գործում էր նշված անունով, իսկ դրա անդամ-էակներն անվանվում էին «Ախալդանստվորներ¹⁵⁷». Բայց ավելի ուշ, երբ, ընդհանուր բնույթի նպատակներից ելնելով, ընկերության անդամները բաժանվեցին առանձին խմբերի, տարբեր խմբերի անդամներն արդեն տարբեր անուններով էին կոչվում:

Իսկ խմբերի բաժանվելը տեղի է ունեցել հետևյալ պատճառով:

Երբ նրանք վերջնականապես համոզվեցին, որ իրենց ներկայություններում ինչ-որ մի շատ անցանկալի բան գոյություն ունի, և սկսեցին միջոցներ ու հնարավորություններ փնտրել, որ ձերբազատվեն այդ ինչ-որ բանից և վերածվեն այնպիսի էակների, ինչպիսին առողջ տրամաբանությունն է թելադրում, որ լինեն՝ իրենց գոյության նպատակին ու իմաստին համապատասխան, և որի ինչ լինելը նրանք ցանկանում էին պարզել ամեն գնով՝ դա դարձնելով իրենց հիմնական խնդիրը, և ահա, երբ ձեռնամուխ եղան գործնական ճանապարհով այդ խնդիրը լուծելուն, որն առաջ էին քաշել իրենց Բանականությամբ, շատ շուտով պարզվեց, որ դրա համար խիստ անհրաժեշտ է գիտելիքների զանազան հատուկ բնագավառների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ունենալ իրենց Բանականության մեջ:

Եվ քանի որ պարզվեց, որ նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած չի կարող համապարփակ գիտելիքներ ունենալ գիտելիքների այդ բոլոր բնագավառներից միաժամանակ, ապա հարմարության համար նրանք բաժանվեցին մի քանի խմբերի, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը զբաղվի միայն իրեն հատուկ այն գիտելիքների ձեռքբերմամբ, որոնք անհրաժեշտ են իրենց հատուկ նպատակին հասնելու համար:

Այստեղ, տղա՛ս, դու պետք է ընդունես ի գիտություն, որ ճշմարիտ օբյեկտիվ գիտությունը հենց այդ ժամանակ է առաջին անգամ ծագել այնտեղ և շարունակել գոյություն ունենալ ընդհուպ մինչև այդ մոլորակի հետ տեղի ունեցած երկրորդ մեծ արհավիրքը, նաև այն պետք է իմանաս, որ դրա որոշ բնագավառների զարգացման տեմպերն այն ժամանակ առաջխաղացում էին ապրում աննախադեպ արագությամբ:

Իսկ դրա արդյունքն այն եղավ, որ այդ ժամանակաշրջանում բազմաթիվ մեծ ու փոքր տիեզերական, այսպես կոչված, «օբյեկտիվ ճշմարտություններ» սկսեցին աստիճանաբար ակներև դառնալ նաև քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների համար:

Այդ առաջին և, հավանաբար, վերջին երկրային մեծ ընկերության գիտուն անդամներն այն ժամանակ բաժանվեցին յոթ ինքուրույն խմբերի կամ, ինչպես իրենք էին ասում՝ «սեկցիաների», որոնցից ամեն մեկը ստացավ իր անվանումը:

¹⁵⁷ ռուս. տարբերակում՝ «Ахалдан соворы», անգլ. տարբերակում՝ «Akhldannsovors»

Ախալդան ընկերության առաջին խմբի անդամները կոչվեցին «Ախալդանփոխսովորներ¹⁵⁸», ինչը նշանակում էր, որ այդ խմբին պատկանող էակներն ուսումնասիրում են իրենց մոլորակի ընդհանուր ներկայությունն ու դրա առանձին մասերի փոխազդեցությունը:

Երկրորդ խմբի անդամները կոչվեցին «Ախալդանստրասովորներ¹⁵⁹», այսինքն՝ այդ խմբի անդամներն ուսումնասիրում էին իրենց արևային համակարգության մյուս մոլորակների, այսպես կոչված, ճառագայթումները և այդ ճառագայթումների փոխազդեցությունը:

Երրորդ խմբի անդամները կոչվեցին «Ախալդանմետրասովորներ», այսինքն՝ այդ խմբի անդամներն ուսումնասիրում էին գիտելիքների այն բնագավառը, որը նույնական է մեր ընդհանուր գիտելիքների «Միլկուրնանո¹⁶⁰» կոչվող բնագավառին, որը մասամբ համընկնում է այն առարկային, որին ժամանակակից քո սիրելիները մաթեմատիկա են անվանում:

Չորրորդ խմբի անդամները կոչվեցին «Ախալդանհոգեսովորներ¹⁶¹» և զբաղվում էին իրենց նման էակների ընկալումների, ապրումների և այլ դրսևորումների հետազոտությամբ, ինչպես նաև իրենց դիտարկումների արդյունքների վիճակագրությամբ:

Հինգերորդ խմբի անդամները կոչվեցին «Ախալդանխառնասովորներ», ինչը նշանակում էր, որ նրանք գիտելիքների այն բնագավառն էին ուսումնասիրում, որն այն ժամանակ համակցում էր ժամանակակից գիտության այն երկու ճյուղերը, որոնց քո սիրելիները «քիմիա» և «ֆիզիկա» են անվանում:

Վեցերորդ խմբին պատկանող անդամները կոչվեցին «Ախալդանմիսոխսովորներ¹⁶²», այսինքն՝ այնպիսի էակներ, որոնք ուսումնասիրում են իրենցից դուրս դրսևորվող բոլոր հնարավոր փաստերը, որոնք իրականացվում են գիտակցաբար կամ ծագում են ինքնաբերաբար. նաև ուսումնասիրում էին, թե դրանցից որոնք և ինչ պայմաններում են էակների կողմից ոչ ճիշտ ընկալվում:

Իսկ ինչ վերաբերում է յոթերորդ վերջին խմբի անդամներին, ապա նրանք կոչվեցին «Ախալդանքեզուծիսովորներ». Ախալդան ընկերության այս անդամները նվիրվեցին իրենց մոլորակի եռուղեղ էակների ներկայությունների այն դրսևորումների ուսումնասիրությանը, որոնք նրանց ներսում ծագում են ոչ թե այն զանազան ազդակների գործողության արդյունքում, որոնք ծնվում են իրենց ներսում արդեն առկա տվյալների հետևանքով, այլ այն տիեզերական ազդեցությունների պատճառով, որոնք իրենցից դուրս են և իրենցից անկախ:

Քո մոլորակի՝ այդ ընկերությանն անդամակցած էակներն իրոք որ շատ բան արեցին օբյեկտիվ գիտելիքներին մոտենալու առումով, ինչը նախկինում երբեք չէր արվել և, հավանական է, այլևս երբեք չի արվի ապագայում:

Այստեղ հնարավոր չէ ավստասանք չարտահայտել, որ, ի դժբախտություն հետագա դարաշրջանների բոլոր երկրային եռուղեղ էակների, հենց այն ժամանակ, երբ այդ ընկերության անդամների անասելի լինելիական ջանքերի արդյունքում արդեն ձեռք էր բերվել գիտակցական ճանաչողության հարկ եղած տեմպ, և նախահիմք էր ստեղծվել իրենց հետնորդների անգիտակցական բարօրության համար, ահա հենց այդ ամենի գագաթնակետին նրանցից մի քանիսը, ինչպես արդեն քեզ ասել եմ, գլխի ընկան, որ մոտ ապագայում իրենց մոլորակի հետ ինչ-որ լուրջ բան պետք է տեղի ունենա:

Այդ սպասվող լուրջ իրադարձության բնույթը պարզելու նպատակով նրանք ցրվեցին ամբողջ մոլորակով մեկ, որից շատ չանցած, ինչպես արդեն քեզ պատմել եմ, այդ չարաբաստիկ մոլորակի հետ տեղի ունեցավ արդեն իմ կողմից բազմիցս հիշատակված երկրորդ Տրանսապալյան խոտորումը:

Եվ ահա, զավա՛կս, երբ այդ ահեղ արհավիրքից հետո այդ ընկերության մի քանի ողջ մնացած անդամներ աստիճանաբար հավաքվեցին մի տեղում, ապա, զրկված լինելով հայրենիքից, սկզբում աղետից փրկված էակների մեծամասնության հետ վերաբնակվեցին Գրաբոնգի աշխարհամասի կենտրոնական մասերում, իսկ ավելի ուշ, երբ իրենց նոր բնակության վայրում արդեն քիչ թե շատ «ուշքի էին եկել», համատեղ որոշեցին կրկին կյանքի կոչել բոլոր այն խնդիրները, որոնք իրենց

¹⁵⁸ ռուս. տարբերակում՝ «Ахалданфохсоворы», անգլ. տարբերակում՝ “Akhldann-fokhsovors”

¹⁵⁹ ռուս. տարբերակում՝ «Ахалданстрассоворы», անգլ. տարբերակում՝ “Akhldann-strassovors”

¹⁶⁰ ռուս. տարբերակում՝ «Силкурнано», անգլ. տարբերակում՝ “silkoornano”

¹⁶¹ ռուս. տարբերակում՝ «Ахалданпсихосоворы», անգլ. տարբերակում՝ “Akhldann-psichosovors”

¹⁶² ռուս. տարբերակում՝ «Ахалданмистесоворы», անգլ. տարբերակում՝ “Akhldann-mistesovors”

նախկին ընկերության հիմքն էին կազմում՝ հուսալով, որ կկարողանան դրանց գործնական ընթացք տալ:

Քանի որ եռուղեղ էակների մեծամասնության ներկայության մեջ դեռևս նախքան արհավիրքը հաստատված լինելիական գոյության աննորմալ պայմաններն այդ ժամանակներում արդեն սկսել էին անգուսպ «եռալ ու բլթբլթալ»՝ այս անգամ արդեն Գրաբոնգի աշխարհամասի մակերևույթի նշված մասի վրա, ապա Ախալդան ընկերության ողջ մնացած անդամները սկսեցին իրենց մշտական բնակության համար այդ նույն աշխարհամասի վրա փնտրել մի ուրիշ վայր, որն ավելի հարմար կլիներ լրիվ մեկուսացվածություն պահանջող իրենց աշխատանքի իրականացման համար:

Այդպիսի հարմար մի վայր նրանք գտան մի մեծ գետի գետաբերանի շրջակայքում, որն այդ աշխարհամասով հոսում էր դեպի հյուսիս: Հենց այդտեղ էլ նրանք տեղափոխվեցին իրենց ընտանիքներով, որպեսզի մեկուսացման մեջ շարունակեն իրենց ընկերության խնդիրների լուծումը:

Այդ մեծ գետի ամբողջ շրջակա տարածքը, որտեղ նրանք բնակություն հաստատեցին, սկսեցին կոչել «Մակրոնաբարեր»¹⁶³:

Բայց այդ անունը հետագայում մի քանի անգամ փոխվեց, և հիմա այդ տարածքը Եգիպտոս է կոչվում, իսկ հիշյալ մեծ գետը, որն այն ժամանակ «Նեպեղված-չի»¹⁶⁴ անունն էր կրում, հիմա կոչվում է Նեղոս:

Կարճ ժամանակ անց, երբ գիտական Ախալդան ընկերության որոշ նախկին անդամներ հիմնավորվեցին Երկիր մոլորակի մակերևույթի այդ հատվածի վրա, բոլոր մեր այն ցեղակիցները, որոնք այն ժամանակ գոյատևում էին քո հետաքրքրությունը շարժած այդ մոլորակի մակերևույթի վրա, նույնպես տեղափոխվեցին այդ վայրը:

Մեր ցեղակիցների հարաբերությունները մոլորակի այդ մասի, ինչպես նաև պատահաբար ողջ մնացած և այդտեղ առաջինը հաստատված Ախալդան ընկերության նախկին անդամների հետ դրսևորվում էին հետևյալ կերպ:

Հիշեցնեմ, որ քեզ մի անգամ պատմել եմ այն մասին, որ հենց այդ երկրորդ Տրանսպայան խոտորումից անմիջապես առաջ մեր կուսակցական պյութիան իր մարգարեությամբ մեր ցեղակիցներին համոզել էր, որ նրանք, այդ մոլորակի վրա իրենց գոյության հետագա շարունակությունն ապահովելու համար, անհապաղ տեղափոխվեն հետագայում Աֆրիկա կոչված հենց այդ նույն աշխարհամասի մակերևույթի խիստ որոշակի հատվածների վրա:

Այդ որոշակի հատվածները, որոնք մատնանշել էր պյութիան, գտնվում էին այդ Նեպեղված-չի կոչվող մեծ գետի վերին հատվածի առափնյա տարածքներում: Այնտեղ մեր ցեղակիցները շարունակում էին մնալ, քանի դեռ Տրանսպայան խոտորումը չէր ավարտվել, ինչպես նաև դրանից հետո, երբ արդեն աստիճանաբար համեմատաբար հանգիստ վիճակ էր հաստատվել: Իսկ երբ փրկված երկրային էակների մեծամասնությունն արդեն իսպառ մոռացել էր, թե ինչ է տեղի ունեցել ոչ վաղ անցյալում, կրկին, կարծես ոչինչ չէր պատահել, իրենց հերթական նշանավոր «կուլտուրական կենտրոնը» հիմնեցին՝ այս անգամ արդեն ապագա Աֆրիկայի ուղիղ կենտրոնում: Եվ հենց այն ժամանակ, երբ Ախալդան ընկերության նախկին անդամներն իրենց համար նոր բնակության վայր էին որոնում, նրանք պատահաբար հանդիպել են մեր ցեղակիցներից ոմանց, որոնք էլ նրանց խորհուրդ են տվել վերաբնակվել հիշյալ գետի՝ իրենց զբաղեցրած վայրերից ցած գտնվող առափնյա տարածքներում:

Ախալդան ընկերության շատ անդամների հետ մեր ծանոթությունն ու բարեկամական հարաբերությունները հաստատվել էին դեռևս Ատլանտիդայում, համարյա թե այդ ընկերության հիմնադրման օրից:

Եթե հիշում ես, ես քեզ պատմել եմ, որ երբ առաջին անգամ այցելեցի այդ մոլորակը, և մեր ցեղակիցները հավաքվեցին Սամլիոսում, որպեսզի ինձ հետ միասին մի էլք գտնեն ստեղծված դժվարին դրությունից դուրս գալու համար, մեր այդ ընդհանուր ժողովները տեղի էին ունենում Ախալդան ընկերության գլխավոր տաճարի բաժանմունքներից մեկում: Ա՛յ, հենց այդ ժամանակից էլ լավ հարաբերություններ հաստատվեցին մեր ցեղակիցների և Ախալդան ընկերության որոշ անդամների միջև:

¹⁶³ ռուս. տարբերակում՝ «Сакронакари», անգլ. տարբերակում՝ “Sakronakari”

¹⁶⁴ ռուս. տարբերակում՝ «Нипилхуатчи», անգլ. տարբերակում՝ “Nipilhoatchi”

Նաև այնտեղ՝ ապագա Եգիպտոսում, որտեղ նշածս երկու կողմերը վերաբնակվեցին հիշյալ հանգամանքների բերումով, մեր ցեղակիցների և պատահաբար փրկված նախկին իսկական անդամների միջև հարաբերություններ վերահաստատվեցին ու շարունակվեցին համարյա ընդհուպ մինչև այդ մոլորակից մեր ցեղի հեռանալը:

Թեև Ախալդան ընկերության այդ մի քանի պատահաբար ողջ մնացած անդամների այն հույսերը, թե կկարողանան վերսկսել իրենց ընկերության խնդիրների իրագործումը, չարդարացան, այնուհանդերձ միայն նրանց շնորհիվ էր, որ հետագա մի քանի սերունդների ներկայության մեջ Ատլանտիդայի կործանումից հետո դեռևս շարունակում էր «բնագոյային համոզմունք» պահպանվել այն բանի իմաստի նկատմամբ, որն այնտեղ կոչվում է «ավարտուն անձնական Լինելիություն»:

Բացի այդ, նաև նրանց շնորհիվ ինչ-որ բան փրկվել է իրենց Բանականության այն նվաճումներից, որոնք այնտեղի եռուղեղ էակները ձեռք էին բերել իրենց Բանականության նորմալ վիճակում եղած ժամանակներում, և արհավիրքից որոշ ժամանակ անցնելուց հետո այդ «ինչ-որ բանը» սկսել է սերնդից սերունդ փոխանցվել և հասել մինչև ոչ շատ վաղ ապրած էակներին, նույնիսկ՝ ժամանակակից մի քանի էակների:

Անկասկած, ժառանգաբար փոխանցված այդ նվաճումների մեջ, որոնց հասել էին Ախալդան ընկերության գիտուն անդամները, մտնում էին և այն վարպետորեն կառուցված ու ամրակուռ կառույցները, որոնց շինարարությանը ես վկա եղա քո այդ մոլորակը կատարած իմ չորրորդ այցի ընթացքում, և որոնք կառուցում էին ներկայիս Աֆրիկայի տարածքում բազմացող այն եռուղեղ էակները, որոնց մասին հիմա պատրաստվում եմ պատմել:

Թեև այն հույսերը, որոնք ծագել էին իմ մեջ մեր ցեղակիցներից մեկի պատմածների հիման վրա՝ նախքան այդ նոր աստղադիտարանն իմ սեփական աչքերով տեսնելը, չարդարացան, այնուամենայնիվ, ինչպես այդ աստղադիտարանը, այնպես էլ այդ ժամանակ այդ տարածաշրջանում ապրող էակների օժանդակ շինությունները չափազանց հմտորեն էին կառուցված և առատ տեղեկություններով հագեցած նյութ տվեցին իմ գիտակցությանը՝ հարստացնելով իմ ընդհանուր ներկայությունը:

Իսկ որպեսզի դու հատակ պատկերացնես ու հասկանաս, թե այդ տարածաշրջանի այն ժամանակվա եռուղեղ էակներն ինչպես են կառուցել այդ տարբեր շինությունները՝ ի բարօրություն իրենց լինելիական գոյության, բավարար կլինի, եթե հնարավորինս մանրամասն քեզ բացատրեմ, թե ինչպես է դրսևորվել նրանց յուրահատուկ բարձր վարպետության հասած գործնական հնարամտությունը իրենց այդ նոր աստղադիտարանի պարագայում, որն իմ աչքով տեսնելու համար էլ ես որոշեցի այցելել այդ տարածաշրջանը:

Այդ նպատակով ես նախ պետք է քեզ հայտնեմ երկու փաստ, որոնք կապված են քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների ընդհանուր ներկայության մեջ տեղի ունեցած փոփոխության հետ:

Առաջին փաստն այն է, որ սկզբնական շրջանում, երբ նրանց գոյատևումը նորմալ էր ընթանում, այսինքն՝ այնպես, ինչպես սազական է բոլոր եռուղեղ էակներին, և քանի դեռ նրանք օժտված էին «օլոյստեսնողական»¹⁶⁵ տեսողությամբ», նրանք կարող էին նաև տեսողական ընկալում ունենալ (այնպիսի հեռավորություններից, որոնք ընդհանրապես բնորոշ են սովորական եռուղեղ էակների համար) բոլոր այն մեծ ու փոքր տիեզերական խտացումներից, որոնք գոյություն ունեն իրենցից դուրս՝ իրենց մոլորակի մթնոլորտում տեղի ունեցող Ամենաթափանց Ոգիդնողի բոլոր գործընթացներին համապատասխան:

Դրանից զատ՝ այդ էակներից նրանք, որոնք, պարտադիր կերպով կատարելագործվելով, իրենց տեսողական օրգանի զգայնությունը հասցրել են ամենուրեք ապրող եռուղեղ էակներին բնորոշ օլոյստեսնողական վիճակին, դրանով իսկ կարողություն են ձեռք բերել ընկալելու բոլոր այն տիեզերական միավորների տեսանելիությունը, որոնք, տեղաբաշխված լինելով այդ նույն հեռավորության վրա, կազմավորվում և հետագա գոյության ընթացքում կախված են լինում այն բյուրեղացումներից, որոնք տեղայնացվում են անմիջականորեն սրբազան Թեոմերտավոզոսից, այսինքն՝ մեր սրբազան Բացարձակ Արևի ճառագումներից:

¹⁶⁵ ռուս. տարբերակում՝ «олуэстетночное», անգլ. տարբերակում՝ «olooestesnokhnian»

Իսկ ավելի ուշ, երբ լինելիական գոյատևման նույն այդ աննորմալ պայմանները վերջնականապես հաստատվեցին, որի հետևանքով Մեծ Բնությունը, այն պատճառներից դրդված, որոնց մասին քեզ մի անգամ արդեն պատմել եմ, այլ սահմանափակումներից զատ, ստիպված եղավ նաև վերափոխել նրանց տեսողական օրգանի ֆունկցիոնալ գործունեությունը և դարձնել այն «քոռտեսնոդական¹⁶⁶», այսինքն՝ այնպիսին, որով օժտված են լինում միաուղեղ և երկուղեղ էակների ներկայությունները, այդ ժամանակից սկսած՝ նրանք կարող էին ընկալել իրենցից հեռու գտնվող ինչպես մեծ, այնպես էլ փոքր տիեզերական խտացումները միայն այն ժամանակ, երբ իրենց մոլորակի մթնոլորտի Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդնողում ընթանում է այվայվույ սրբազան գործընթացը կամ, ինչպես իրենք են ասում՝ ելնելով իրենց սեփական հասկացողությունից ու ընկալումներից, «մութ գիշերներով»:

Ինչ վերաբերում է երկրորդ փաստին, ապա այն, հենց իրենց տեսողության քոռտեսնոդային դառնալու պատճառով, հիմնված է բոլոր էակների համար ընդհանուր այն օրենքի վրա, որ Ամենաթափանց Ոգիդնողի ամեն մի դրսևորման արդյունքները տեսողական օրգանի համար ընկալելի են դառնում միայն այն թրթիռների հետ անմիջական շփման պարագայում, որոնք ծագում և գործում են էակների ընկալողական լինելիական օրգանում՝ կապված, տվյալ դեպքում, իրենցից դուրս եղած տիեզերական խտացման տեսանելիության հետ, այսինքն՝ միայն այն դեպքում, երբ Ամենաթափանց Ոգիդնողի դրսևորումների հիշյալ արդյունքները շարունակվում են մինչև այն շեմը, որից այն կողմ, տեսանելիության ընկալման տվյալ օրգանի որակին համապատասխան, ի չիք է դառնում, այսպես կոչված, «ագդակի շարժիչ ուժը», կամ, այլ կերպ ասած՝ նրանց համար տեսանելի են լինում միայն այն առարկաները, որոնք գտնվում են համարյա հենց իրենց կողքին:

Սակայն երբ այդ արդյունքներն ի հայտ են գալիս հիշյալ շեմից այն կողմ, այդ դրսևորումը չի հասնում այն էակներին, որոնց ներկայության մեջ առկա տեսողական ըկալման օրգանները կազմավորված են լինում միայն իթոկլանոսային արդյունքների համախմբությամբ:

Այստեղ տեղին կլինի կրկնել այնտեղ շատ հազվադեպ կիրառվող մի ասույթ, որը պատկանում է մեր սիրելի Մուլա Նասրեդինին և շատ դիպուկ է բնորոշում տվյալ վիճակը, այսինքն՝ քո սիրելիների տեսողական ընկալման սահմանափակության աստիճանը:

Այդ իմաստուն, բայց այնտեղ շատ հազվադեպ կիրառվող ասույթը բաղկացած է հետևյալ բառերից. «Ցույց տուր ինձ այն փիղը, որ տեսել է կույրը, այնժամ ես կհավատամ, որ դու իրոք ճանձ ես տեսել»:

Այսպիսով, զավա՛կս, այնտեղ իմ տեսած այդ արհեստական հարմարանքի շնորհիվ, որը նախատեսված էր տիեզերական խտացումներ դիտելու համար, և ապագա Եգիպտոսի տարածքում կառուցվում էր Ախալդան գիտական ընկերության էակների հեռավոր հետնորդների Բանականությունից բխած նախաձեռնությամբ, քո այդ թշվառ սիրելիներից ամեն ոք, չնայած իրենց ունեցած քոռտեսնոդային տեսողությանը, ինչը վաղուց է իրենց բնորոշ դարձել, հնարավորություն էր ստանում ցանկացած ժամանակ, կամ, ինչպես իրենք են ասում, «գիշեր լինեք, թե ցերեկ», իր տեսողական ընկալմանը հասու դարձնել հեռավոր այն տիեզերական խտացումների տեսանելիությունը, որոնք «համատիեզերական ներդաշնակ շարժման» ընթացքում հայտնվում են իրենց կողմից դիտվող երկնականարում:

Որպեսզի հաղթահարեն իրենց տեսողական ընկալման օրգանի սահմանափակությունը, նրանք այն ժամանակ հնարել էին հետևյալը:

Նրանց տեսքահանը կամ դիտախողովակը, որի կառուցվածքը, պետք է այստեղ նշել, նույնպես ժառանգել էին իրենց նախնիներից, նրանք տեղադրել էին ոչ թե իրենց մոլորակի մակերևույթի վրա, ինչպես այնտեղ սովորաբար անում էին և հիմա էլ են անում, այլ բավականաչափ իջեցրել էին իրենց մոլորակի խորքը և իրենց մոլորակի մթնոլորտի սահմաններից դուրս գտնվող տիեզերական խտացումների դիտումն իրականացնում էին հատուկ փորած խողովակաձև անցքերի միջով:

Այն ժամանակ իմ տեսած աստղադիտարանն այդպիսի հինգ անցքեր ուներ: Հորիզոնի նկատմամբ դրանք սկիզբ էին առնում աստղադիտարանի զբաղեցրած մոլորակային մակերևույթի տարբեր կետերից, բայց գալիս և միանում էին իրար ստորգետնյա մի խոռոչի մեջ, որը քարանձավ էր հիշեցնում: Այդտեղից աստղաբաշխ կոչվող մասնագետները կատարում էին իրենց դիտումները, որպեսզի ուսումնասիրեն, ինչպես արդեն քեզ ասել եմ, ինչպես իրենց արևային համակարգին

¹⁶⁶ ռուս. տարբերակում՝ «коритеснохное», անգլ. տարբերակում՝ “koritesnokhnian”

պատկանող, այնպես էլ Մեծ Տիեզերքի ուրիշ համակարգերի պատկանող տիեզերական խտացումների փոխազդեցությունների արդյունքների տեսանելի ներկայությունները:

Իրենց այդ դիտումները նրանք իրականացնում էին հորիզոնի նկատմամբ տարբեր ուղղություններ ունեցող անցքերից որևէ մեկով՝ կախված այն բանից, թե տվյալ պահին իրենց մոլորակն ինչ դիրք է զբաղեցնում այն տիեզերական խտացումների նկատմամբ, որոնք տեսանելի էին դառնում «համատիեզերական ներդաշնակ շարժման» շնորհիվ:

Կրկնում եմ, տղա՛ս, որ, թեև ապագա Եգիպտոսի այդ էակների կողմից այնտեղ կառուցված աստղադիտարանի գլխավոր յուրահատկությունն ինձ համար նորություն չէր, քանի որ այդ նույն սկզբունքը կիրառվել էր նաև Մարսի իմ աստղադիտարանում՝ միայն այն տարբերությամբ, որ իմ երկար խողովակները ոչ թե մոլորակի խորքն էին գնում, այլ ամրացված էին դրա մակերևույթին, այնուհանդերձ նրանց այդ նորարարության մանրամասներն այնքան հետաքրքիր էին, որ ամեն դեպքում ես նույնիսկ այնտեղ եղածս ժամանակ մանրամասն ուրվագծեցի իմ տեսածները և հետագայում այդ գծագրերից որոշ բաներ օգտագործեցի իմ սեփական աստղադիտարանում:

Իսկ ինչ վերաբերում է այնտեղի մյուս օժանդակ կառույցներին՝ հնարավոր է, որ ես ավելի ուշ ինչ-որ ժամանակ քեզ պատմեմ դրանց մասին. հիմա միայն կասեմ, որ բոլոր այդ առանձին կառույցները, որոնք այն ժամանակ դեռևս լիովին կառուցված չէին, տեղաբաշխված էին աստղադիտարանից ոչ շատ հեռու և նախատեսված էին, ինչպես դիտայցի ընթացքում իմացա մեր ցեղակցի ընկեր, մեր դիտայցը դեկավարող և մեզ ուղեկցող ճարտարապետից՝ մասամբ նույն նպատակի համար, այսինքն՝ մեր Մեծ Տիեզերքի արևներն ու մոլորակները դիտելու համար, մասամբ էլ՝ որպեսզի բացահայտեն և նպատակամղված ձևով կառավարեն իրենց շրջապատող մթնոլորտային շարժումները՝ ցանկալի «կլիմայական պայմաններ» ստանալու համար:

Բոլոր այդ շինություններն իրար հետ զբաղեցնում էին հիշյալ տարածաշրջանի վրա գտնվող բավականին մեծ բաց տարածք և արգելափակված էին հասուն կանգապատնեշով, որը կառուցվել էր այնտեղ «զալնակատար»¹⁶⁷ կոչվող բույսից:

Այստեղ խիստ հետաքրքիր կլինի նշել, որ այդ վիթխարի ցանկապատի մուտքի մոտ նրանք վեր էին խոյացրել բավականին մեծ չափսերով (մեծ՝ իհարկե, իրենց ներկայության չափսերի համեմատությամբ) քարե քանդակ, որին «Սֆինքս» էին անվանում, և որն ինձ հիշեցրեց այն արձանը, որն այդ մոլորակ կատարած իմ առաջին այցի ժամանակ տեսել էի Սամլիոս քաղաքում՝ հենց այն հսկայական շենքի դիմաց, որը Ախալդան ընկերության «գլխավոր տաճարի» մասն էր կազմում:

Այդ հսկա արձանը, որն այն ժամանակ ես տեսել էի Սամլիոսում և խիստ հետաքրքրվել դրանով, այդ ընկերության խորհրդանիշն էր և կոչվում էր «Խիդճ»:

Դա իրենից ներկայացնում էր մի այլաբանական էակ, որը բաղկացած էր այնտեղ տարածված որոշակի էակների մոլորակային մարմինների առանձին մասերից, բայց այնպիսի էակների, որոնց այս կամ այն լինելիական գործառույթը, ըստ այնտեղի եռուղեղ էակների բյուրեղացած պատկերացումների, կատարյալ էր:

Նշված այլաբանական էակի մոլորակային մարմնի հիմնական զանգվածը կազմված էր այն որոշակի տեսակի էակի իրանից, որն այնտեղ «ցուլ» է անվանվում:

Ցուլի այդ իրանը հենված էր այնտեղ ապրող մի ուրիշ էակի ոտքերի վրա, որն «առյուծ» է կոչվում, իսկ ցուլի մարմնի այն մասի վրա, որը «մեջք» է կոչվում, երկու մեծ թևեր էին ամրացված, որոնք իրենց արտաքին տեսքով այն թռչուն-էակի թևերն էին հիշեցնում, որն «արծիվ» անունն է կրում: Իսկ ցուլի իրանի այն տեղում, որտեղ գլուխը պետք է լիներ, սաթի կտորներով ամրացված էին երկու կրծքեր, որոնք ներկայացված էին որպես «կույսի ստինքներ»:

Երբ Ատլանտիդա մայրցամաքում ես հետաքրքրվեցի այդ այլաբանական կերպարով և հարցուփորձ արեցի դրա իմաստի մասին, մարդ-էակների այդ Մեծ Ընկերության գիտուն անդամներից մեկն այսպիսի բացատրություն տվեց.

«Այդ այլաբանական քանդակն Ախալդան ընկերության խորհրդանիշն է և խթան է հանդիսանում մեր ընկերության անդամների համար, որ նրանց ներսում մշտապես հիշվեն ու արթուն մնան այդ այլաբանական կերպարին համապատասխանող ազդակները»:

Հետո նա ասաց.

¹⁶⁷ ռուս. տարբերակում՝ «залнакатар», անգլ. տարբերակում՝ “zalnakatar”

«Այդ այլաբանական կերպարի ամեն մի մասը մեր ընկերության ամեն մի անդամի ընդհանուր ներկայության բոլոր երեք բաղկացուցիչ մասերում՝ մարմնում, մտքերում և զգացմունքներում, խթան է տալիս իրենց մեջ համապատասխան ձևով միակցելու այն առանձին գիտելիքները, որոնք միայն իրենց ամբողջության մեջ կարող են մեզ հնարավորություն տալ աստիճանաբար ձերբազատվելու մեզնից յուրաքանչյուրի մեջ առկա այն անցանկալի գործոններից՝ ինչպես ժառանգաբար անցած, այնպես էլ ձեռքբերովի, որոնք ժամանակի ընթացքում մեր մեջ ծնում են մեզ համար անցանկալի ազդակներ, ինչն էլ հանգեցնում է այն բանին, որ մենք այնպիսին չենք, ինչպիսին կարող էինք լինենք:

Այդ խորհրդանիշը մեզ մշտապես հիշեցնում ու ցույց է տալիս, որ նշված անցանկալի բաներից մենք կարող ենք ձերբազատվել միայն այն դեպքում, եթե մեր ընդհանուր ներկայությանը ստիպենք համապատասխան հանգամանքներում մշտապես մտածել, զգալ և գործել՝ համաձայն այդ խորհրդանիշի վրա արտացոլվածի:

Եվ այդ խորհրդանիշը մենք՝ Ախալդան ընկերության անդամներս, ընկալում ենք հետևյալ կերպ. այդ այլաբանական էակի իրանը, որը ցույլի իրան է հիշեցնում, արտահայտում է այն, որ մեր մեջ բյուրեղացված այն գործոնը, որը մեր ներկայություններում առաջացնում է ինչպես ժառանգաբար, այնպես էլ հենց մեր կողմից ձեռք բերված ու մեզ համար վնասակար ազդակներ, կարող է վերափոխվել միայն անխոնջ աշխատանքով՝ աշխատանք, որը մեր մոլորակի էակներից ամենաշատը ցույլին է բնորոշ:

Այն, որ ցույլի իրանը հենված է առյուծի չորս ոտքերի վրա, խորհրդանշում է, որ նշված աշխատանքները պետք է կատարվեն նույնպիսի գիտակցությամբ, խիզախությամբ ու սեփական «հզորության» հավատով, ինչպիսին Երկրի վրա ապրող էակներից ամենաշատն այդ ամուր ոտքերի տերը՝ հզոր առյուծն ունի:

Ցույլի մեջքի վրա ամրացված հզոր թևերը, որոնք նման են ամենաուժեղ և ամենաբարձր թևածող արծվի թևերին, մեր ընկերության անդամներին մշտապես հիշեցնում են, որ նշված աշխատանքների և սեփական արժանապատվության նշված ներքին հոգեբանական հատկությունների հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև մշտապես խորհրդածել այնպիսի հարցերի շուրջ, որոնք անմիջականորեն կապված չեն սովորական լինելիական գոյատևման համար անհրաժեշտ դրսևորումների հետ:

Իսկ ինչ վերաբերում է մեր այլաբանական էակի գլխի այդ տարօրինակ պատկերմանը «կույսի ստինքերի» տեսքով, ապա դա արտահայտում է այն, որ գիտակցություն կոչվող ներքին ու արտաքին գործառույթների ընթացքում միշտ և ամեն ինչում պետք է տիրապետող լինի Մերը, այն Մերը, որը կարող է ծագել և լինել միայն այն խտացումների ներկայություններում, որոնք կազմավորվում են լիովին պատասխանատու այն էակների օրինական մասերում, որոնց հետ հույսեր է կապել մեր Համընդհանուր Հայրը:

Իսկ այն, որ գլուխն իրանին ամրացված է սաթի կտորով, նշանակում է, որ այդ Մերը պետք է լինի խստորեն օբյեկտիվ, այսինքն՝ լրիվ անջատ պետք է լինի այն գործառույթներից, որոնք ընթանում են ամեն մի լիովին պատասխանատու էակի ներսում»:

Որպեսզի, զավա՛կս, սաթով արտահայտվող այդ վերջին խորհրդանիշը քեզ համար կատարելապես հասկանալի դառնա, ես պետք է ավելացնեմ, որ սաթը մեկն է մոլորակային այն յոթ գոյացություններից, որոնց կազմավորման գործին Ամենաթափանց Ակտիվ Տարր Ոգիդուրը նույնական չափաբաժիններով է մասնակցում իր բոլոր երեք առանձին ու անկախ սրբազան մասերով, և մոլորակային այդ իրականացումների գործընթացում այդ ներմոլորակային ու վերմոլորակային գոյացությունները որպես, այսպես կոչված, դիմադրություններ» են ծառայում նշված երեք տեղայնացված ու անկախ սրբազան մասերի ինքնակամ հոսքին»:

Իր գրույցի այս մասում Բեհեզգեբուրը կարճատև դադար տվեց՝ կարծես մտորելով ինչ-որ բանի մասին, որից հետո շարունակեց այսպես.

«Այս ամենը պատմելուս ընթացքում, ինչ ես այն ժամանակ տեսել եմ քո այդ մոլորակի մակերևույթի մի կերպ փրկված ցամաքի այդ հատվածում բնակություն հաստատած եռուղեղ էակների մոտ, որոնցից մի քանիսն էլ այնտեղի իսկապես մեծ Ախալդան գիտական ընկերության անդամների անմիջական հետևորդներն էին, իմ լինելիական Բանականության դրսևորման արդյունքն այնպիսին էր, որ հիշյալ տարածաշրջանի արտաքին շրջապատի տեսողական ընկալման տպավորություններից ծնունդ առած և իմ ընդհանուր ներկայության մեջ ամրապնդված ամեն տեսակի զանազան նմանազգացական հիշողությունների հետևանքով իմ ներսում աստճանաբար վերակենդանացան իմ

այդ լինելիական ապրումներից մեկի բոլոր պատկերներն ու նմանազգացական մտահոսքերը, որոնք ես ունեցա այն ժամանակ, երբ այդ մոլորակ կատարած իմ վերջին այցի օրոք գտնվում էի այս անգամ արդեն ժամանակակից Եգիպտոսում և, մտորումների մեջ խորասուզված, նստել էի այդ շինություններից մեկի մոտակայքում, որոնք դիմացել էին ժամանակի փորձություններին և հիմա այնտեղ «բուրգեր» են անվանվում:

Հենց այդ ժամանակ էր, որ իմ Բանականության ընդհանուր գործունեության մեջ ամեն ինչից գատնան հետևյալ նմանազգացությունն առաջացավ.

Լա՛վ, ասենք թե... Եթե սովորական լինելիական գոյատևման բարիքներից ոչ մեկը, որոնց իրենց Բանականությամբ հասել էին Ատլանտիդա աշխարհամասի էակները, այդպես էլ չի հասել այդ մոլորակի ժամանակակից էակներին, ապա դա գուցե հնարավոր լինի բացատրել պարզապես տիեզերական պատճառներով, որոնք չեն բխել այդ եռուղեղ էակներից և բոլորովին կախված չեն եղել նրանցից, և որոնց պատճառով էլ տեղի է ունեցել այն երկրորդ մեծ «անօրինաչափ արհավիրքը», որը կործանել է այդ աշխարհամասը՝ ոչնչացնելով դրա վրա եղած ամեն ինչ:

Բայց ի՞նչ ասել Եգիպտոսի՝ մասին...

Որքա՞ն վաղուց է այն ծաղկում ապրել...

Չե՛նք կարող ժխտել. այդ չարաբաստիկ մոլորակի հետ տեղի ունեցած երրորդ ավելի փոքր արհավիրքի հետևանքով, ինչպես նաև չորրորդի, որի մասին ես քեզ կպատմեմ ավելի ուշ, այդ մոլորակի մակերևույթի այդ մի հատվածն էլ է տուժել, քանի որ ծածկվել է ավազներով... Այնտեղ բնակվող բոլոր եռուղեղ էակները չեն կործանվել, այլ ցրիվ են եկել նույն աշխարհամասի ուրիշ տարբեր մասերում, և, հետևաբար, ինչպիսի նոր արտաքին պայմաններ էլ որ ծագեին, թվում է՝ նրանց ներկայություններում պետք է պահպանվեին ժառանգաբար իրենց փոխանցված և բյուրեղացված կատարյալ գործոնների այնպիսի արդյունքներ, որոնք անհրաժեշտ են նորմալ «լինելիական տրամաբանական մտածողություն» ունենալու համար:

Եվ այսպես, զավա՛կս, այդ դառը «ալստուզորի»¹⁶⁸ վիճակում հայտնվելուց, կամ, ինչպես քո սիրելիները կասեին՝ «տխուր մտորումներից» հետո ես ուզեցի ինձ համար պարզել այնտեղ հատատված այդ ողբալի փաստի պատճառները և երկարատև մանրակրկիտ հետազոտություններից հետո իմ ողջ էությանբ հասկացա ու գիտակցեցի, որ այդ աննորմալ վիճակն այնտեղ ծագում է նրանց տարօրինակ հոգեկառույցի գլխավոր առանձնահատկության մի զարմանալի գծի հետևանքով, հենց այն առանձնահատկության, որը, ամբողջովին բյուրեղանալով, նրանց ընդհանուր ներկայության անքակտելի մասն է դարձել և վերածվել նրանց մոտ պարբերաբար սկիզբ առնող «իրենցից դուրս եղած ամեն ինչը ոչնչացնելու համար պահանջ»-ի փաստի:

Բանն այն է, որ երբ եռուղեղ էակի հոգեկառույցի այդ առանձնահատկության զարգացումը, որ այդքան ահավոր է ամեն մի բանականության համար, հասնում է իր գագաթնակետին, նրանք իրենց ընդհանուր ներկայության այդ արտառոց առանձնահատկությունը սկսում են դրսևորել իրենցից դուրս, այսինքն՝ երբ նրանք իրենց մոլորակի որևէ մասում սկսում են փոխադարձ ոչնչացման գործընթացը, միևնույն ժամանակ, առանց որևէ նպատակի և նույնիսկ առանց, այսպես կոչված, «օրգանական պահանջի», նրանք ոչնչացնում են նաև այն ամենը, ինչը հայտնվում է իրենց տեսողական ընկալման դաշտում: Իրենց այդ «ֆենոմենալ հոգեզարության գագաթնակետի» ժամանակահատվածներում նրանք միշտ ոչնչացրել են տվյալ պահի և տվյալ վայրի այն բոլոր իրերը, որոնք հենց իրենք՝ իրար ոչնչացնող երկու կողմերը, որոնք մասնակից են լինում այդ ահավոր գործընթացին, գիտակցորեն կարողացել են ստեղծել. այդ ընթացքում ոչնչացնում են նաև այն ամենը, ինչը, ժամանակի փորձությանը պատահաբար դիմանալով, իրենց նախնիներից փոխանցվել ու հասել է իրենց:

Այսքանն ամփոփելով, զավա՛կս, ասեմ, որ քո այդ մոլորակի մակերևույթի վրա չորրորդ անգամ լինելուս ընթացքում ես նախ եղա հետազայում Եգիպտոս կոչված երկրում, այնտեղ մի քանի օր մնացի Ախալդան կոչվող մեծ գիտական ընկերության անդամների հեռավոր հետնորդների միջավայրում և ծանոթացա նրանց «լինելիական Պարտք-պարտականության» մի քանի արդյունքների հետ, որոնք փրկվել էին՝ ի բարօրություն իրենց հետնորդների: Դրանից հետո մեր երկու ցեղակիցների

¹⁶⁸ ռուս. տարբերակում՝ «алстужори», անգլ. տարբերակում՝ “alstoozori”

ուղեկցությամբ ես մեկնեցի դեպի այդ աշխարհամասի հարավային տարածքները և այնտեղ, դիմելով տեղական երկուդեղ եակների օգնությանը, որսացի բավարար քանակի կապիկ-էակներ:

Այդ ամենն ավարտելուց հետո ես հեռագգացական ազդանշան ուղարկեցի մեր «Պատահար» տիեզերանավին, որը, պետք է ասել, մեզ մոտ իջավ հենց առաջին շատ մութ գիշերը: Այնուհետև մենք այդ կապիկ-էակներին բռնեցինք «Պատահար» տիեզերանավի ներսում իրենց համար հատուկ նախապատրաստված խցերի մեջ, որոնք կառուցվել էին գոռնադառ Ղառղառի ցուցումներով: Հետո մենք անմիջապես թռանք դեպի Մարս և այնտեղից էլ մարսյան երեք օր անցնելուց հետո նույն տիեզերանավով այդ կապիկ-էակներին հասցրինք Մատուրն մոլորակ:

Թեև սկզբում մենք որոշել էինք այդ կապիկների հետ փորձեր կատարել միայն հաջորդ տարվա ընթացքում, երբ նրանք հիմնովին կլիմայափոխված և հարմարված կլինեին նոր պայմաններին, սակայն ես այդքան շուտ Մատուրն բարձրացա այն պատճառով, որ գոռնադառ Ղառղառի հետ ունեցած իմ վերջին հանդիպման ժամանակ ես նրան խոստացել էի մասնակցել նրա ընտանեկան այն հանդիսությանը, որը շուտով պետք է տեղի ունենար:

Այդ ընտանեկան արարողության իմաստն այն էր, որ գոռնադառ Ղառղառի շրջապատում գտնվող իր նման էակները պետք է կնքեին նրա առաջին արդյունք-ժառանգին:

Ես խոստացել էի ներկա գտնվել այդ «դոդոդոդո»¹⁶⁹ կոչվող ընտանեկան հանդիսությանը, որպեսզի այդ ոչ շատ վաղուց սկզբնավորված ժառանգի նկատմամբ հանձն առնեմ, այսպես կոչված, «Ալնատուրոբային»¹⁷⁰ լինելիական պարտավորությունն:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ լինելիական պարտավորության նման հանձնառություն ընդունված է եղել նաև քո այդ մոլորակի վաղեմի եռուդեղ էակների մոտ և նույնիսկ հասել է մինչև քո սիրելիների ժամանակակից ներկայացուցիչներին՝ թեև վերջիններս, ինչպես մնացած ամեն ինչում, այդ լուրջ ու կարևոր արարողության միայն արտաքին դրսևորումն են ընկալում: Այն էակները, որոնք իրենց վրա նման պարտավորություն են վերցնում, քո սիրելիների ժամանակակից ներկայացուցիչների մոտ կոչվում են «կնքահայր» և «կնքամայր»:

Գոռնադառ Ղառղառի ժառանգին այն ժամանակ դեռ Ռաուդո¹⁷¹ էին կոչում:

ԳԼՈՒԽ ԻԴ

Բեհեղգեբուդը դեպի Երկիր է թռչում հինգերորդ անգամ

Բեհեղգեբուդն իր պատմությունը շարունակեց այսպես.

«Երկիր մոլորակի մակերևույթի վրա չորրորդ անգամ լինելուցս հետո էլի շատ տարիներ անցան:

Այդ տարիների ընթացքում ես իհարկե, ինչպես նախկինում, իմ տեսքահանով երբեմն-երբեմն դիտում էի քո այդ սիրելիների լինելիական գոյատևման ընթացքը:

Այդ ընթացքում նրանց թիվը զգալիորեն աճեց, և նրանք արդեն բնակեցնում էին քո այդ մոլորակի ցամաքային մակերևույթի բոլոր մեծ ու փոքր մասերը, և, իհարկե, նրանք դեռ պահպանում էին իրենց գլխավոր առանձնահատկությունը՝ ժամանակ առ ժամանակ իրար գոյությանը վերջ տալը:

Այդ ամբողջ ընթացքում, այսինքն՝ իմ չորրորդ և հինգերորդ այցելությունների միջև ընկած ժամանակահատվածում, այդ մոլորակի մակերևույթի վրա մեծ փոփոխություններ էին տեղի ունեցել: Քո սիրելիների բնակության կենտրոնատեղիները նույնպես փոխվել էին: Օրինակ՝ Աշխարհք աշխարհամասի բոլոր այն կուլտուրական կենտրոնները, որոնցում ես եղել էի իմ նախկին վայրէջքների օրոք՝ Թիքլյամիջ և Պախրակարան երկրները, այդ մոլորակը կատարած իմ հինգերորդ այցի ժամանակ արդեն գոյություն չունեին:

¹⁶⁹ ռուս. տարբերակում՝ «Крихракри», անգլ. տարբերակում՝ “khri-khra-khri”

¹⁷⁰ ռուս. տարբերակում՝ «Алиаторная», անգլ. տարբերակում՝ “alnatoornian”

¹⁷¹ ռուս. տարբերակում՝ «Раурх», անգլ. տարբերակում՝ “Raorkh”

Այդ կուլտուրական կենտրոնների ոչնչացման պատճառը, և, ընդհանրապես, այդ մուլտրակի մակերևույթի հետ տեղի ունեցած բոլոր փոփոխությունների պատճառը կրկին արհավիրքն էր եղել թվով երրորդն այդ չարաբաստիկ մուլտրակի համար:

Այդ երրորդ արհավիրքը տեղային բնույթ էր ունեցել և տեղի էր ունեցել այն պատճառով, որ մի քանի տարի անընդհատ մուլտրակի մթնոլորտում կատարվել էին, այսպես կոչված, «մթնոլորտի առանձին մասերի արագացված տեղաշարժեր» կամ, ինչպես կասեին այնտեղի քո սիրելիները, «ուժեղ քամիներ»:

Այդ աննորմալ տեղաշարժերի կամ ուժեղ քամիների պատճառը կրկին այն երկու բեկորներն էին եղել, որոնք պղկվել էին այդ մուլտրակից նրա հետ տեղի ունեցած առաջին մեծ աղետի ժամանակ, և որոնք դրա հետևանքով վերածվել էին այդ արևային համակարգության փոքրիկ մուլտրակների և այժմ անվանվում են Լուսին և Անուլիոս:

Խստորեն ասած՝ երկրային նոր աղետի պատճառը հիմնականում մեծ բեկորն էր, այսինքն՝ Լուսինը. փոքր բեկորը՝ Անուլիոսը, դեր չի խաղացել:

Երկրի մթնոլորտում տեղի ունեցած այդ տեղաշարժերն այսպես էին սկսվել: Երբ այդ փոքրիկ ու պատահաբար առաջացած Լուսին մուլտրակի վրա վերջապես մթնոլորտ է ձևավորվել, և ըստ իմ նշած Կառչման օրենքի՝ Լուսինը շարունակել է հակադարձ անկում կատարել դեպի իր հիմնական զանգվածը արդեն այն ժամանակ հաստատված իր ուղեծրով, բայց Լուսնի վրայի այդ նոր որոշակի գոյացությունը դեռևս չէր ներդաշնակվել համահամակարգային ներդաշնակ շարժման հետ, ուստի այդ, այսպես կոչված, «հոսումնային»¹⁷² շփումը, որն ամբողջի հետ դեռևս չէր համապատասխանեցվել, Երկրի մթնոլորտում առաջացրել է այդ արագացված տեղաշարժերը կամ ուժեղ քամիները:

Այդ ժամանակաշրջանում այդ աննախադեպ ուժեղ քամիներն սկսվել են, որպեսզի իրենց հոսանքի ուժով, ինչպես ասում են, հարթեն «ցամաքային ցցվածքները» և լցնեն համապատասխան «իջվածքները»:

Այդպիսի իջվադքներում էին գտնվում Աշխարհք աշխարհամասի երկու երկրները, որոնցում մեծ մասամբ կենտրոնացված էին ներկայիս Ասիայի երկրորդ և երրորդ խմբերի էակների գոյատևման գործընթացները, և որոնք ընդգրկում էին Թիբլյամիշ և Պախրակարան երկրների հիմնական մասերը:

Ավազներն այն ժամանակ ծածկեցին նաև Գաղտակուրիանդայի որոշակի հատվածները, ինչպես նաև Գրաբոնգի աշխարհամասի կենտրոնում գտնվող այն երկրամասը, որտեղ, ինչպես արդեն պատմել եմ քեզ, Ատլանտիդայի կործանումից հետո կազմավորվել էր այնտեղի եռուղեղ էակների առաջատար «կուլտուրական Կենտրոնը»՝ մի երկիր, որն այդ ժամանակներում քո այդ մուլտրակի մակերևույթի ամենափթթուն մասն էր և ներկայումս անապատ է՝ «Սահարա» անունով:

Նկատի ունեցիր նաև, որ այդ ժամանակաշրջանի անսովոր ուժեղ քամիների հետևանքով, նշված երկրներից բացի, ավազով ծածկվեցին նաև քո այդ չարաբաստիկ մուլտրակի մակերևույթի մի քանի ուրիշ ոչ մեծ տարածքներ:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից քո սիրելիներն իրենք էլ են արդեն ինչ-որ ձևով իմացել այդ մեծ փոփոխությունների մասին, որոնք այն ժամանակ տեղի են ունեցել իրենց եռակենտրոն էակ-նախնիների մշտական բնակության վայրերում և, դա պիտակավորելով որպես «ժողովուրդների մեծ գաղթ», կցել են իրենց, այսպես կոչված, «գիտելիքների պաշարին»:

Որոշ «գիտնականներ» այնտեղ այժմ ամբողջ ուժով տքնելով փորձում են պարզել, թե ինչու և ինչպես է այդ ամենը տեղի ունեցել, որպեսզի կարողանան այդ մասին պատմել մյուսներին:

Հենց հիմա այնտեղ արդեն մի քանի տեսություններ կան դրա վերաբերյալ, որոնք թեև իրար հետ ոչ մի կապ չունեն և օբյեկտիվ իմաստով մեկը մյուսից անհեթեթ են, այնուամենայնիվ արդեն հասցրել են «պաշտոնական գիտելիքի» կարգավիճակ ստանալ:

Իսկ իրականում եռակենտրոն էակների վերաբնակության իսկական պատճառն այն է եղել, որ, հենց որ սկիզբ է առել սարերի համահարթեցման հիշյալ գործընթացը, Աշխարհք աշխարհամասի բնակիչները, ավազների տակ մնալուց երկյուղելով, սկսել են հեռանալ դեպի ավելի անվտանգ վայրեր: Եվ եռուղեղ էակների այդ տեղաշարժերն ընթացել են հետևյալ կարգով:

Թիբլյամիշում ապրող եռուղեղ էակների մեծամասնությունը շարժվել է դեպի այդ նույն Աշխարհք աշխարհամասի հարավային կողմերը և զբաղեցրել այն տարածքը, որը հետագայում «Պարսկաստան»

¹⁷² ռուս. տարբերակում՝ «осмуальное», անգլ. տարբերակում՝ “osmoalnian”

է անվանվել, իսկ մնացածները չվել են դեպի հյուսիս և հիմնավորվել այն շրջաններում, որոնք հետագայում անվանվել են «Դըրդըզչերի»¹⁷³:

Ինչ վերաբերում է Պախրակարանում բնակվող էակներին, ապա նրանց մի մասը շարժվել է դեպի արևելք, իսկ մնացածները՝ մեծագույն մասը՝ դեպի արևմուտք: Արևելյան կողմ գնացածներն անցել են լեռները և բնակություն հաստատել մեծ սալիաքուռիափային տարածքների ավամերձ շրջաններում, և նրանց այդ նոր երկիրը հետագայում կոչվել է «Չինաստան»: Իսկ Պախրակարանի էակների այն մասը, որը փրկություն գտնելու հույսով շարժվել է դեպի արևմուտք, երկարատև դեգերումներից հետո ի վերջո հանգրվանել է հարևան աշխարհամասի վրա, որն ավելի ուշ «Եվրոպա» է կոչվել:

Գրաբոնգի աշխարհամասի այն էակները, որոնք դեռևս ապրում էին դրա կենտրոնական մասերում, ցրիվ են եկել ամբողջ մակերևույթի վրա:

Եվ ահա, տղա՛ս, քո այդ մոլորակի վրա իմ հինգերորդ անձնական վայրէջքը եղել է քո սիրելիների այդ խմբերի հիշյալ վերատեղաբաշխումից հետո:

Իսկ իմ այդ անձնական վայրէջքի պատճառը հետևյալ դեպքերն էին:

Նախ պետք է քեզ ասեմ, որ քո սիրելիների հոգեկառույցի գլխավոր առանձնահատկությունը՝ «իրենց նմանների գոյատևմանը վերջ տալու պարբերաբար ծագող պահանջը», ամեն մի հերթական հարյուրամյակի հետ գնալով ավելի ու ավելի էր հետաքրքրում ինձ, և դրա հետ կապված՝ իմ մեջ անհաղթահարելի ցանկություն առաջացավ, որ պարզեմ եռուղեղ էակների համար այդքան անսովոր առանձնահատկության առաջացման ճշգրիտ պատճառը:

Ուստի, զավա՛կս, որպեսզի ձեռքի տակ հնարավորինս շատ նյութ ունենամ ինձ այդքան խիստ հետաքրքրած հարցը պարզելու համար, չորրորդ և հինգերորդ անգամ Երկրի վրա լինելուս միջև ընկած ժամանակահատվածում Մարս մոլորակի վրայից իմ տեսքահանով Երկրի եռուղեղ էակների գոյատևման ընթացքի իմ դիտումները ես իրականացնում էի հետևյալ կերպ:

Քո սիրելիներից շատերի վարքը երկար տարիների ընթացքում նպատակամղված ձևով կա՛մ անձամբ էի դիտում, կա՛մ մի ուրիշն էր իմ հանձնարարությամբ ուշադրությամբ հետևում նրանց՝ ամեն կերպ ջանալով ոչինչ բաց չթողնել: Նպատակս այն էր, որ համակողմանիորեն բացահայտեմ Երկրի էակների գոյատևման ընթացքում դրսևորվող բոլոր առանձնահատկությունները:

Պետք է խոստովանեմ, զավա՛կս, որ երբ ամբողջ «սինոնումներով», կամ, ինչպես մոտավոր կերպով տվյալ ժամանակահատվածին քո սիրելիներն են ասում, «Ժամերով»՝ մեծ հետաքրքրությամբ նշված դիտումներիս առարկան էի դարձնում այնտեղի եռուղեղ էակների գոյատևման անցուղարձերին հետևելը, ամեն կերպ փորձում էի որևէ տրամաբանական բացատրություն գտնել նրանց, այսպես կոչված, «հոգեկան ապրումների» համար:

Եվ ահա, իմ տեսքահանով Մարս մոլորակից կատարվող դիտումներիս ընթացքում մի անգամ հանկարծ գլխի ընկա, որ հարյուրամյակից հարյուրամյակ և նույնիսկ տարեցտարի շատ որոշակի ու նաև հավասարաչափ արագությամբ կրճատվում է այդ էակների կյանքի տևողությունը, և հենց այդ հանգամանքն էլ պատճառ հանդիսացավ, որ դրանից հետո ևս խիստ լրջորեն ուսումնասիրեմ քո հետաքրքրությունը շարժած այդ եռուղեղ էակների հոգեկառույցային առանձնահատկությունները:

Իհարկե, երբք առաջին անգամ դա նկատեցի, անմիջապես հաշվի առա նրանց հոգեկառույցի ոչ միայն նշածս գլխավոր առանձնահատկությունը՝ պարբերաբար իրար ոչնչացնելը, այլ նաև այն բազմաքանակ «ախտերը», որոնք բացառապես միայն այդ մոլորակի վրա են լինում, և որոնց մեծ մասն, իմիջիայլոց, ծագել և շարունակում են ծագել իրենց իսկ կողմից հաստատված սովորական լինելիական գոյատևման նույն այն աննորմալ արտաքին պայմանների հետևանքով, որոնք թույլ չեն տալիս նրանց նորմալ գոյատևել ընդհուպ մինչև իրենց սրբազան ռասկուարնոյի պահը:

Առաջին անգամ այդ հանգամանքը նկատելուց հետո, երբ սկսեցի վերհիշել դրանից ստացած իմ տպավորությունը, իմ ամբողջ ներկայության ամեն մի առանձին ոգի առած մասը լցվեց համոզվածությամբ և իմ ողջ էությունն իր վրա զգաց նշված «պայծառացումը», որ ախր քո մոլորակի եռուղեղ էակներն ի սկզբանե գոյատևում էին, իրենց իսկ ժամանակով հաշված, մոտ տասներկու դար, ոմանք էլ՝ նույնիսկ տասնհինգ դար:

Որպեսզի քիչ թե շատ ի վիճակի լինես պատկերացնելու այն արագությունը, որով ամբողջ անցած ժամանակում նվազել է նրանց գոյատևման տևողությունը, բավարար կլինի, եթե իմանաս, որ երբ ես

¹⁷³ ռուս. տարբերակում՝ «Киркистчери», անգլ. տարբերակում՝ “Kirghizcheri”

ընդմիջտ հեռացա այդ արևային համակարգությունից, նրանց գոյության առավելագույն տևողությունը 70 - 90 տարի էր:

Ի վերջո այնպես էր ստացվել, որ եթե որևէ մեկն այդքան ապրում էր, ապա քո այդ յուրօրինակ մոլորակի մյուս էակները համարում էին, որ նա գոյատևել է «բավականին երկար»:

Իսկ եթե այնպես պատահեր, որ որևէ մեկը հարյուր տարուց մի փոքր ավել ապրեր, ապա նրան թանգարան դնելու արժանի կհամարեին, նրա մասին բոլորը կիմանային, թերթերում նկարը կտպեին և կնկարագրեին նրա ապրած կյանքը՝ ամեն մի արած շարժումի ճշտությամբ:

Այսպիսով, զավա՛կս, քանի որ այդ փաստը հանկարծակի բացահայտելու ժամանակ Մարսի վրա առանձնապես գործեր չունեի, և քանի որ այդ նոր առանձնահատկությունը Մարսից իմ տեսքահանով հետազոտել հնարավոր չէր, ապա որոշեցի մեկնել այնտեղ և հենց տեղում պարզել դրա պատճառները:

Այդ որոշումը կայացնելուց մարսյան մի քանի օր հետո «Պատահար» տիեզերանավով մեկնեցի դեպի Երկիր:

Իմ այդ հինգերորդ վայրէջքի օրոք, քո այդ մոլորակում «ծամոն ծամելու լինելիական գործի կատարելագործման արդյունքների ելումուտի կենտրոնը» կամ, ինչպես իրենք են ասում՝ «կուլտուրական Կենտրոնը», Բաբելոն քաղաքն էր, ուստի հենց այդ վայրն էլ ես որոշեցի այցելել:

Մեր տիեզերանավը վայրէջք կատարեց, այսպես կոչված, «Պարսից ծոցում», քանի որ դեռ թռիչքից առաջ իմ տեսքահանով ես հետազոտել էի ինչպես այն ուղին, որով կարող էի հասնել Բաբելոն քաղաքը, այնպես էլ մեր նավի համար ամենահարմար կայանելու տեղը, որը գտել էի քո այդ մոլորակի հենց այն սալիաքուղիափային տարածքում, որը մինչև այսօր գոյություն ունի և կոչվում է Պարսից ծոց:

Այդ ջրային տարածքն իմ ճամփորդության համար հարմար էր այն պատճառով, որ դրա մեջ թափվում էր հենց այն մեծ գետը, որի ափին կառուցված էր Բաբելոն քաղաքը, ուստի վայրէջքից հետո մենք այդ գետի հոսանքով բարձրացանք ու հասանք այդտեղ:

Այդ ժամանակահատվածում «աննման» Բաբելոն քաղաքը ծաղկում էր բոլոր առումներով: Այն ոչ միայն Աշխարհք աշխարհամասի էակների համար էր կուլտուրական կենտրոն, այլ նաև մյուս բոլոր մանր ու մեծ ցամաքային մասերում ապրող էակների համար, որոնք հարմարվել էին այդ մոլորակի վրայի լինելիական գոյատևման պայմաններին:

Երբ ես առաջին անգամ եղա այդտեղ՝ նրանց այդ կուլտուրական Կենտրոնում, նրանք արդեն նախապատրաստել էին այն, ինչը հետագայում դարձավ իրենց «հոգևոր կառույցի» այլասերման գործընթացի արագացման գլխավոր պատճառը՝ հատկապես այն երեք հիմնական գործոնների բնագրական գործառության հետզարգացման իմաստով, որոնք «Հավատ», «Հույս» և «Մեր» անվանվող լինելիական ազդակներ են ծնում:

Այդ լինելիական գործոնները, որոնք սերնդեսերունդ այլասերվում էին, հանգեցրին այն բանին, որ այնպիսի ճշմարիտ լինելիական հոգեկառույց ունենալու փոխարեն, ինչպիսին պետք է լինի ամեն մի եռուղեղ էակի ներկայության մեջ, քո սիրելիների ներկայությունների մեջ թեև հիմա գոյություն ունի «ճշմարիտ հոգեկառույց», բայց այն այնպիսին է, որին մեր սիրելի Մովլա Նասրեդինի իմաստուն խոսքերով եթե բնորոշելու լինենք, ապա՝ «դրանում կա ամեն ինչ, բացի միջուկից կամ թեկուզ կորիզիկից»:

Կատարելապես անհրաժեշտ է հնարավորին չափ մանրամասն քեզ պատմել այն ժամանակ Բաբելոնում տեղի ունեցած ամեն ինչի մասին, քանի որ այդ տեղեկություններն արժեքավոր նյութ կարող են ծառայել, որ քեզ համար պարզես ու Բանականությանդ մեջ ամրապնդես բոլոր այն պատճառները, որոնց համախումբը վերջին հաշվով ծնեց քո սիրելիների մոտ հենց այնպիսի արտառոց հոգեկառույց, ինչպիսին այժմ առկա է նրանց ժամանակակից ներկայացուցիչների մոտ:

Պետք է նախ և առաջ քեզ ասեմ, որ այդ ժամանակահատվածին վերաբերվող իմ տեղեկությունները, որոնց մասին հիմա ուզում եմ քեզ պատմել, ես ձեռք եմ բերել այն եռուղեղ էակների միջոցով, որոնք այնտեղ «գիտնականներ» են կոչվում:

Նախքան իմ այս գրույցը շարունակելը ես պետք է մի փոքր կանգ առնեմ այն հարցի վրա, թե քո այդ մոլորակի վրա հատկապես ո՞ր էակներին են մյուսները գիտնականներ կոչում:

Բանն այն է, որ նույնիսկ նախքան մինչև իմ թվով հինգերորդ այցը, այսինքն՝ նախքան այն ժամանակները, երբ Բաբելոնը, ինչպես ասացի, բոլոր առումներով փթթում էր, այն էակները, որոնք գիտնական էին դարձել և այդպիսին էին համարվում ուրիշների կողմից, արդեն իսկ այնպիսի էակներ

չէին, որոնք գիտնական են դառնում և այդպիսին համարվում համայն Տիեզերքում. նաև այնպիսին չէին, որոնք նախկինում գիտնական էին դառնում թեկուզ հենց քո այդ մոլորակալի վրա, և որոնք իրենց գիտակցական ջանքերով ու կամավոր տառապանքների գնով ունակություն են ձեռք բերում ամբողջ գոյի տարրերը դիտարկելու Աշխարհաստեղծման ու Աշխարհապահպանման տեսանկյունից, հենց գլխավորապես ինչի շնորհիվ էլ նրանք իրենց բարձրագույն մարմինը կատարելագործում են մինչև Օբյեկտիվ Բանականության սրբազան չափի աստիճանին հասնելը, որպեսզի դրանից հետո տիեզերական ճշմարտությունները հասկանան այնքան խորությամբ, որքան կատարյալ է իրենց բարձրագույն լինելիական մարմինը:

Սակայն, սկսած թիքյամիշյան քաղաքակրթությունից մինչև ներկա ժամանակները, գիտնականներ են դարձել գլխավորապես այն էակները (հատկապես՝ ժամանակակիցներին է խոսքս վերաբերում), որոնք պարզապես «գլուխները լցրել են» հնարավորին չափ շատ դատարկ տեղեկություններով, որոնց մասին պառավները շատ են սիրում ասել, որ իբր դրանք հին ու լավ ժամանակներից են այդպես եկել ու հասել մեզ:

Իմիջիայլոց, ուշադրություն դարձրու, որ այնտեղի գիտնականներին արժևորելու համար մեր պատվարժան Մոլլա Նասրեդինն էլ ունի մի ասույթ, որն արտահայտվում է հետևյալ բառերով. «Բոլորը խոսում են, թե իբր մեր գիտուններն իմացել են, որ հարյուրի կեսը հիսուն է»:

Այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա, որքան ավելի շատ նման տեղեկություններ է անգիր անում քո սիրելիներից որևէ մեկը, այնքան նա ավելի գիտուն է համարվում, թեև երբևէ չի ստուգում իր իմացած տեղեկությունները և, դեռ ավելին, երբեք չի հասկանում, թե դրանց բուն իմաստը որն է:

Այսպիսով, տղա՛ս, հասանք Բաբելոն. և այնտեղ, իրոք որ, քո այդ մոլորակի բոլոր ծայրերից մեծ թվով գիտուններ կային հավաքված:

Քանի որ Բաբելոնում այդքան շատ գիտուն էակների կուտակման պատճառները չափազանց հետաքրքիր են, ապա դրանց մասին հիմա կպատմեմ ավելի մանրամասն:

Բանն այն է, որ Երկրի գիտուն էակների մեծ մասն այն ժամանակ այնտեղ էր հավաքվել պարսից խիստ ինքնատիպ արքայի կամոք, որի տիրապետության տակ էր գտնվում նաև Բաբելոն քաղաքը:

Որպեսզի լիովին ըմբռնես, թե այնտեղ հաստատում գտած լինելիական գոյատևման աննորմալ պայմանների համախմբության հատկապես ո՞ր հիմնական կողմն է հիշյալ արքային դրդել այդ քայլին, ես քեզ համար նախ պետք է լուսաբանեմ երկու փաստ, որոնք ի հայտ են եկել դրանից շատ ավելի վաղ:

Առաջին փաստն այն է, որ, համարյա Ատլանտիդա աշխարհամասի կործանման ժամանակից սկսած, քո սիրելիների մոտ սկսել է աստիճանաբար բյուրեղանալ և ապա հետագա մի քանի հարյուրամյակների ընթացքում ամբողջովին բյուրեղացել է մի յուրօրինակ «հատկություն», որի պատճառով «լինելիական երջանկություն» կոչվող լինելիական զգացողությունը, որը ժամանակ առ ժամանակ ամեն մի եռուղեղ էակ զգում է՝ իր ներքին ինքնագնահատմանը բավարարություն տալով, քո սիրելիների ներկայություններում դրսևորվում է միայն այն դեպքերում, երբ նրանք մեծ քանակությամբ ձեռք են բերում այն մետաղից, որն այնտեղ մեծ մասսայականություն է վայելում և կոչվում է «ոսկի»:

Իրենց ընդհանուր ներկայություններում առկա այդ «հատկության» առաջ բերած դժբախտություններից վատթարագույնն այն է, որ նշված մետաղի ձեռքբերմամբ պայմանավորված այդ զգացողությունն ուժեղացվում է այն էակների կողմից, որոնք շրջապատում են այդ մետաղից շատ ունեցողին, ինչպես նաև այն էակների կողմից, որոնք այդ ունեցվածքի մասին լսել են միայն «ասեկոսեներից» և անձամբ չեն համոզվել իրենց սեփական զգայարաններով. դեռ ավելին՝ այնտեղ արդեն ավանդույթ է դարձել ուշադրություն չդարձնել այն հանգամանքին, թե այդ ունևորն իր ո՞ր լինելիական դրսևորումներով է այդ մետաղի մեծ քանակության տեր դարձել, այլ միայն այդ ունևորն առիթ է տալիս, որ իր շրջապատում եղած էակների ներկայություններում բորբոքվի Կունդաբուֆեր օրգանի հատկությունների բյուրեղացած հետևանքներից հատկապես այն, որը «նախանձ» է կոչվում:

Իսկ երկրորդ փաստն այն է, որ երբ քո սիրելիների ներկայություններում իրենց գլխավոր առանձնահատկությունը հասնում է «կրեշչենդոյի» մակարդակի, և նրանց տարբեր հանրություններում հաստատված ավանդույթի համաձայն սկսում են իրար կոտորելու գործընթացը, ապա դրանից հետո, երբ այդ բացառիկ չարանենգ առանձնահատկությունն արդեն լիցքաթափված է լինում և համապատասխան գործընթացն էլ՝ ժամանակավորապես ավարտված, այն արքան, որի

հանրության ներսում ավելի շատ էակներ են կենդանի մնացած լինում, համարվում է հաղթած կողմ և սովորաբար իրենով է անում այն ամենը, ինչը նախքան այդ պատկանելիս է եղել պարտված հանրությանը:

«Հաղթած արքան» սովորաբար իր հպատակներին հրամայում է, որ պարտվածներից խլեն բոլոր հողերը, իզական սեռի բոլոր երիտասարդ էակներին և ամբողջ այն «հարստությունը», որը պարտված կողմի էակներն իրենց երկրում կուտակած են լինում երկար դարերի ընթացքում:

Եվ ահա, զավա՛կս, երբ հիշյալ պարսից արքայի հպատակները հաղթում էին մի ուրիշ հանրության էակներին, նա հրամայում էր պարտված կողմից այդ ամենը չխլել, այլ միայն գերի վերցնել պարտված հանրության բոլոր գիտուն էակներին:

Որպեսզի ավելի հստակ պատկերացնես ու հասկանաս, թե այդ պարսից արքայի անհատականության մեջ ինչու է նման յուրահատուկ մոլուցք առաջացել, նախ պետք է քեզ տեղեկացնեմ, որ թիքլյամիշյան քաղաքակրթության օրոք «Չիկլարալ¹⁷⁴» կոչվող մի քաղաք կար, որում ապրել է «Խառնախում¹⁷⁵» անունով մի գիտուն էակ, որի էությունը հետագայում բյուրեղացել է որպես, այսպես կոչված, «Հավերժ Տհասնամուս Անհատականություն»: Մա մի հորինվածք էր տարածել, թե մոլորակի մակերևույթին առատորեն տարածված ցանկացած մետաղ ինքը կարող է հեշտությամբ «ոսկի» կոչվող հազվագյուտ մետաղի վերածել, և որ դրա համար հարկավոր է ընդամենը մի փոքրիկ «գաղտնիք» իմանալ:

Այդ չարանենգ հորինվածքն այնտեղ լայն տարածում էր գտել և, բյուրեղանալով այն ժամանակ ապրող էակների ներկայություններում, սերնդեսերունդ փոխանցվել էր և աստիճանաբար վերածվել մի չարանենգ երևակայական գիտության, որին «ալքիմիա» անունն են տվել, այսինքն՝ այն մեծ գիտության անունը, որն իրոք այդ մոլորակի վրա եղել է այն վաղեմի ժամանակներում, երբ իրենց նախնիների ներկայություններում Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքները դեռևս այնքան էլ բյուրեղացված չէին. այն ժամանակ ճշմարիտ գիտելիքների այդ ճյուղն իրոք անհրաժեշտություն էր, և նույնիսկ հիմա օգտակար կլինե՞ր այդ մոլորակի ներկայիս եռուղեղ էակների համար:

Բայց քանի որ այն ժամանակաշրջանում, որին վերաբերվում է իմ այս գրույցը, այդ պարսից արքան, անկասկած, ինչ-որ տհասնամուսական նպատակով ուզում էր Երկրի մակերևույթի վրա հազվագյուտ համարվող ոսկու մեծ քանակություն ունենալ, և քանի որ Խառնախում տհասնամուսական անհատի հորինած մեթոդի վերաբերյալ տեղեկությունները հասել էին նաև նրա ներկայությանը, արքան կամեցել էր այդ հազվագյուտ մետաղից ունենալ հենց այդպիսի հեշտ եղանակով:

Եվ երբ վերջնականապես որոշել էր ոսկի ստանալ «ալքիմիայի» միջոցով, իր ողջ էությամբ նա անմիջապես գիտակցել էր, որ ինքը դեռևս չգիտի այն «փոքրիկ գաղտնիքը», առանց որի բոլորովին հնարավոր չէ բավարարություն տալ իր այդ ցանկությանը: Ուստի սկսել է մտորել, թե ինչպես տեր դառնա այդ «փոքրիկ գաղտնիքին»:

Մտորումների արդյունքում նա հասկացել է հետևյալը:

Քանի որ գիտուններին հայտնի են բոլոր մյուս «գաղտնիքները», ապա այդ մի գաղտնիքն էլ պետք է որ հայտնի լինի նրանցից որևէ մեկին: Այս պարզ եզրակացությանը հանգելուց հետո նա խիստ արտահայտված «լինելիական զարմանք» է ապրել, թե ինչու՞ մինչև այդ պահն այդ բանը գլխի չի ընկել: Դրանից հետո իր մոտ է կանչել իր մերձավոր հպատակներից մի քանիսին և հրամայել շուտափույթ իմանալ, թե իր մայրաքաղաքում ապրող գիտուն էակներից ո՞ր մեկը գիտի այդ գաղտնիքը:

Երբ հաջորդ օրը նրան զեկուցել են, որ մայրաքաղաքի գիտուն այրերից ոչ ոք չգիտի այդ գաղտնիքը, արքան հրամայել է տեղեկություններ հավաքել իր տերության ներսում ապրող գիտուն էակների մասին, իսկ երբ դրանից մի քանի օր հետո նորից բացասական պատասխան է ստացել, այս անգամ ձեռնամուխ է եղել ավելի լուրջ մտորումների:

Այդ լուրջ մտորումները սկզբում նրա Բանականությանը հանգեցրել են այն մտքին, որ, անկասկած, իր հանրությանը պատկանող ինչ-որ մի գիտուն էակ գիտի այդ «գաղտնիքը», բայց քանի

¹⁷⁴ ռուս. տարբերակում՝ «Чикларал», անգլ. տարբերակում՝ «Chiklaral»

¹⁷⁵ ռուս. տարբերակում՝ «Харнахум», անգլ. տարբերակում՝ «Harnakhoom», մի այլ տեղ՝ «Harnahoom»

որ այդ «համաքարության» էակները լավ սովոր են ամենայն խստությամբ պահապանել իրենց «մասնագիտական գաղտնիքները», ապա, իհարկե, չեն ուզում այդ գաղտնիքը հայտնել իրեն:

Եվ այդ լուրջ մտորումների արդյունքում նա հասկացել է, որ պետք է ոչ թե պարզապես հարցնել այդ գաղտնիքի մասին, այլ «հարցաքննել» գիտուն էակներին:

Շենց նույն օրը նա հրահանգ է տալիս իր համապատասխան մերձավոր օգնականներին, որոնք էլ սկսում են այդ «հարցաքննել» այնպես, ինչես վաղուց այնտեղի իշխանավորները սովոր են հարցաքննել շարքային էակներին:

Երբ պարսից այդ ինքնատիպ արքան վերջնականապես հասկացել է, որ իր հանրության գիտուն էակներն իրոք չգիտեն այդ գաղտնիքը, սկսել է ուրիշ հանրություններում փնտրել այն գիտուն էակին, որն այդ գաղտնիքն իսկապես կարող է իմանալ:

Սակայն, քանի որ մյուս հանրությունների արքաները չեն կամեցել իրենց գիտուն էակներին տրամադրել «հարցաքննության» համար, ապա նա որոշել է ուժով ստիպել, որ դեռևս չպարտված արքաները համաձայնեն իր պահանջին: Եվ այդ որոշումը կայացնելուց հետո նա, իր մեծաքանակ գորախմբերի գլուխն անցած, նախաձեռնել է իր, այսպես կոչված «ռազմական արշավները»:

Այդ պարսից արքան իր տիրապետության տակ բազմաթիվ այդպիսի հրոսակախմբեր ուներ, քանի որ այդ ժամանակաշրջանում քո այդ մոլորակի մակերևույթի այն տարածքում, որտեղ փոված էր նրա տերությունը, այդտեղի էակների ներկայություններում մինչև այդ արդեն աճել էր «ծննդաբերությունների քանակը», ինչը Մեծ Բնության, այսպես կոչված, «նախազգուշական-հարմարվողականության» արդյունք էր, և տվյալ դեպքում իրագործվել էր այն, ինչը պահանջում էր համատիեզերական Տրոգոսավտոէգոկրատական գործընթացը, այն է՝ քո մոլորակի մակերևույթի այդ տարածքից պետք է արձակվեին թրթռանքներ, որոնք առաջանում են լինելիական գոյության ոչնչացումից»:

Այս վերջին բացատրությունից հետո Հասեինը Բեհեդգեբուդին ընդհատեց հետևյալ խոսքերով.

– Միրելի՛ պապիկ, ես չեմ հասկանում, թե ինչու պետք է այդ մեծ տիեզերական գործընթացի իրագործման նպատակների համար պահանջվող թրթռուների արձակումը կախված լինի մոլորակի մակերևույթի որոշակի տարածքից:

Թոռան այդ հարցին Բեհեդգեբուդը պատասխանեց հետևյալ կերպ.

– Քանի որ ես մտադիր եմ շուտով այդ էակների կողմից «պատերազմ» կոչվող փոխադարձ ոչնչացման այդ ահավոր գործընթացի հարցը Երկիր մոլորակի եռուղեղ էակներին վերաբերող իմ գրույցներից մեկի հատուկ թեման դարձնել, ապա լավ կլինի քո այդ հարցի պատասխանը հետաձգենք մինչև այդ գրույցի ժամանակը հասնելը, քանի որ այդ ժամանակ դու ավելի լավ կհասկանաս դա:

Այս ասելուց հետո Բեհեդգեբուդը կրկին շարունակեց բաբելոնյան իրադարձությունների մասին պատմելը:

«Երբ հիշյալ պարսից ինքնատիպ արքան իր հրոսակներով արդեն սկսեց հաղթել մյուս հանրությունների էակներին և գերեվարել նրանց գիտուններին, վերջիններիս համար հավաքատեղի ու բնակության վայր դարձրեց հիշյալ Բաբելոն քաղաքը, որտեղ նրանց բերում էին, որպեսզի այն ժամանակվա Ասիա աշխարհամասի կեսին տիրած այդ բռնակալը հետո ազատորեն կարողանա նրանց հարցաքննել այն հույսով, որ նրանցից ինչ-որ մեկը կիմանա էժան մետաղները ոսկի դարձնելու գաղտնիքը:

Այդ նույն նպատակով նա նույնիսկ հատուկ «արշավ» նախաձեռնեց դեպի Եգիպտոս: Դա արեց այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում մոլորակի բոլոր աշխարհամասերից այնտեղ հավաքված գիտնականներ կային, քանի որ լայն տարածված կարծիք կար, որ Եգիպտոսում հնարավոր է ավելի շատ գիտելիքներ ստանալ զանազան «գիտություններից», քան մոլորակի մի որևէ այլ վայրում:

Այդ պարսից գավթիչ-արքան Եգիպտոսից քշեց-տարավ ոչ միայն տեղի գիտուն էակներին, այլ նաև նրանց, ովքեր այդտեղ էին հասել ուրիշ հանրություններից: Քշվածների թվում կային նաև մի քանի, այսպես կոչված, «եգիպտական քրմեր»՝ հենց այն Ախալդան ընկերության գիտուն անդամների հետնորդներից, որոնց հաջողվել էր արհավիրքից փրկվել և դառնալ այդ երկրի առաջին տեղաբնիկները:

Երբ պարսից այդ ինքնատիպ արքայի ներկայության մեջ որոշ ժամանակ անց մի նոր մոլուցք հայտնվեց՝ իր նման էակների կյանքին վերջ տալու մոլուցքը, որը դուրս մղեց նախկին մոլուցքը, նա

մոռացության մատնեց գիտուն էակներին, և վերջիններս շարունակեցին ազատ ապրել Բաբելոնում՝ սպասելով նրա հետագա հրամաններին:

Այդ եղանակով համարյա ամբողջ մոլորակից Բաբելոն քաղաքում հավաքված գիտուն էակները հաճախ հավաքվում և հարցեր էին քննարկում իրար հետ, ինչպես բնորոշ է Երկիր մոլորակի գիտուն էակներին, այնպիսի հարցեր, որոնք կա՛մ անհամեմատ բարձր էին իրենց հասկացողությունից, կա՛մ էլ դրանցից երբեք չէին կարողանա որևէ օգտակար բան քաղել ո՛չ իրենց, ո՛չ էլ այնտեղի շարքային էակների համար:

Եվ այսպես, նրանց այդ հավաքների ու քննարկումների ընթացքում, ինչպես այնտեղ ընդհանրապես պատահում է գիտուն էակների հետ, ծագեց մի, այսպես կոչված, «Ժամանակակից հրատապ» հարց, որը, այսպես թե այնպես, իրոք հուզում էր նրանց, ինչպես իրենք են ասում, «մինչև հոգու խորքը»:

Այդ «Ժամանակակից հրատապ հարցն» այնպես եռանդուն էր գրգռում նրանցից յուրաքանչյուրի էությունը, որ նրանք նույնիսկ «իջնում էին» իրենց, այսպես կոչված, «պատվանդաններից» և այդ հարցը քննարկում էին ոչ միայն իրենց նման գիտուն էակների հետ, այլև ում հետ ասես և որտեղ ասես:

Դրա հետևանքով այդ հարցի նկատմամբ հետաքրքրությունն աճեց ու աստիճանաբար տարածվեց Բաբելոնում բնակվող բոլոր սովորական եռուղեղ էակների միջավայրում, և հենց այն ժամանակներում, երբ մենք հայտնվեցինք այդ քաղաքում, այդ հարցն արդեն օրախնդիր հարց էր դարձել այնտեղի բոլոր էակների համար:

Այդ հարցի շուրջ խոսում և քննարկումներ էին անում ոչ միայն գիտուն էակները, այլ նաև շարքային էակների միջև էին ծագում բուռն քննարկումներ:

Այդ հարցի շուրջ խոսում էին ծերերն ու երիտասարդները, տղամարդիկ ու կանայք, նույնիսկ բաբելոնյան մսագործները: Բոլորը, հատկապես գիտունները, ջանում էին պարզաբանել այդ հարցը:

Մեր այնտեղ հասնելուց առաջ այդ քաղաքում ապրողներից շատերն արդեն խելքները թոցրել էին այդ հարցի հողի վրա, շատերն էլ այդ նույն ճանապարհին էին:

Այդ «Ժամանակակից հրատապ հարցի» բուն էությունն այն էր, որ թե՛ այդ «վայ-գիտնականները», և թե՛ Բաբելոն քաղաքի շարքային էակները անչափ շատ էին ուզում իմանալ՝ իրենք «հոգի» ունե՞ն, թե՞ ոչ:

Այդ հարցի շուրջ Բաբելոնում ամեն տեսակի ֆանտաստիկական տեսություններ արդեն կային, բայց կրկին ու կրկին նորերն էին թխվում, և յուրաքանչյուր այդպիսի «սրամիտ տեսություն», իհարկե, ուներ իր հետևորդները:

Թեև այնտեղ արդեն զանազան տեսությունների հսկա կույտ էր առաջացել, այնուհանդերձ բոլոր նրանք հիմնված էին միայն երկու, կատարելապես իրար հակադիր դրույթների վրա:

Դրանցից մեկը կոչվում էր «աթեիստական», իսկ մյուսը՝ «իդեալիստական» կամ «դուալիստական»:

Բոլոր դուալիստական տեսությունները պնդում էին հոգու գոյությունը և, իհարկե, դրա «անմահությունն» ու դրա հետ տեղի ունեցող ամեն տեսակի «խտորումները», որոնք տեղի են ունենում «մարդ էակի» մահից հետո:

Իսկ աթեիստական տեսությունները պնդում էին այդ ամենի ճիշտ հակառակը:

Կարճ ասած, զավա՛կս, մենք մուտք գործեցինք Բաբելոն քաղաք, երբ այնտեղ ընթանում էր, այսպես կոչված, «Բաբելոնյան աշտարակաշինությունը»:

Այս վերջին բառերից հետո Բեհեդգեբուղը մի կարճ ժամանակ մտքերի մեջ ընկավ և հետո շարունակեց.

«Այժմ կուզենայի քեզ պատմել հենց նոր իմ կողմից կիրառված այդ «Բաբելոնյան աշտարակաշինություն» արտահայտության ծագման պատմությունը: Այդ արտահայտությունը հաճախ են օգտագործում նաև քո այդ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակները:

Ուզում եմ շոշափել այդ շատ գործածական բառակապակցության հարցը և այն պարզաբանել քեզ համար գլխավորապես այն պատճառով, որ նախ՝ ինձ վիճակվել է վկա լինել այն իրադարձություններին, որոնք ծնունդ են տվել դրան, և երկրորդ՝ այդ բառակապակցության ծագման և քո ժամանակակից սիրելիների հասկացողության մեջ դրա նախագոյացման պատմությունը շատ հստակ ու ուսանելի կերպով քեզ կբացատրի, որ, ինչպես միշտ, սովորական լինելիական գոյատևման այնտեղ հաստատված աննորմալ պայմանների հետևանքով երբեք հետագա սերունդներին ոչ մի

ճշգրիտ տեղեկություն չի հասնում այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք իրականում տեղի են ունեցել նախորդ դարաշրջանների իրենց նման էակների հետ: Իսկ եթե պատահաբար ինչ-որ բան, ինչպես, օրինակ, այդ բառակապակցությունն է, հասնում է նրանց, ապա քո սիրելիների տարօրինակ Բանականությունն ամբողջական տեսություններ է հորինում դրա վերաբերյալ, ինչի արդյունքում պատրանքային լինելիական «էգո-պլաստիկություններ»¹⁷⁶ կամ, ինչպես իրենք են ասում, «հոգևոր պատկերացումները» իրենց ներկայություններում աճում ու բազմանում են, որոնք էլ հենց Տիեզերքում հանգեցրել են եռուղեղ էակների համար արտառոց այն «եզակի հոգեկառույցի» գոյացմանը, որն առկա է քո սիրելիների մոտ:

Եվ այսպես, երբ մենք ժամանեցինք Բաբելոն քաղաք, և ես սկսեցի շփվել զանազան էակների հետ ու կատարել համապատասխան դիտումներ, որպեսզի գտնեմ ինձ հետաքրքրող հարցի պատասխանը, ապա քանի որ ամենուրեք հանդիպում էի նշածս գիտուն էակների հետ, որոնք այնտեղ հավաքում էին ու մեծ թիվ էին կազմում, ստացվեց այնպես, որ ես միայն նրանց հետ էի շփվում, նրանց միջոցով և հենց նրանց անհատականությունների դիտումներով էի զբաղվում:

Այդ գիտուն էակների մեջ, որոնց հետ նշածս նպատակով ես հանդիպում էի, կար Համօրինադիր¹⁷⁷ անունով մեկը, որին նույնպես Եգիպտոսից ստիպողաբար էին բերել Բաբելոն:

Ահա հենց այդ Համօրինադիր կոչվող էակի և իմ միջև հաստատվեցին համարյա այնպիսի հարաբերություններ, որոնք հաճախակի հանդիպումների շնորհիվ ընդհանրապես հաստատվում են եռուղեղ էակների միջև:

Այդ Համօրինադիրն այնտեղի գիտուններից մեկն էր, որի ներկայության մեջ հետաճ էին ապրել ժառանգաբար իրեն փոխանցված եռուղեղ էակին հատուկ ազդակների գործոնները, նաև պարզվեց, որ նրա նախապատրաստական տարիքում իրեն շրջապատող պատասխանատու էակներին հաջողվել էր նրան դարձնել քիչ թե շատ նորմալ պատասխանատվություն ունեցող էակ:

Հարկ է նշել, որ այն ժամանակ Բաբելոնում նման գիտուն էակներ շատ կային:

Թեև Համօրինադիր անունով գիտնականը կազմավորվել ու նախապատրաստվել էր, որպեսզի պատասխանատու էակ դառնա հենց այնտեղ՝ Բաբելոնում և ծագումով այն էակների ազգին էր պատկանում, որոնք «ասորիներ» են կոչվում, սակայն նա գիտնական էր դարձել Եգիպտոսում, որտեղ այն ժամանակ գործում էր Երկրի վրա եղած դպրոցներից մեծագույնը՝ «Մոքի նյութականացման Դպրոցը»:

Երբ ես առաջին անգամ նրան հաղիպեցի, նա այն տարիքում էր, երբ նրա «ես»-ն արդեն իր ընդհանուր ներկայության, այսպես կոչված, «ինքնաբերական հոգևոր գործառությունների» ղեկավարման նկատմամբ առավելագույն չափով կայուն էր Երկիր մոլորակի այն ժամանակվա եռակենտրոն էակների համեմատությամբ, ինչի շնորհիվ, այսպես կոչված, «պասիվ արթնության վիճակում» գտնվելու ընթացքում նրա այնպիսի լինելիական ընկալումները, ինչպիսիք են՝ «ինքնագիտակցությունը», «անաչառությունը», «անկեղծությունը», «ընկալունակությունը», «ուշադրությունը» և այլն, նրա մոտ որոշակիորեն ու վառ էին արտահայտված:

Մեր Բաբելոն ժամանելուց կարճ ժամանակ անց, ես այդ Համօրինադիրի հետ սկսեցի այցելել այնտեղի էակների հիշյալ «հավաքները» և, այսպես կոչված, «զեկուցումներ» ունկնդրել նույն այն հարցի վերաբերյալ, որն այն ժամանակ օրախնդիր էր դարձել և ավելոծում էր «բաբելոնյան բոլոր ուղեղները»:

Այդ իմ ընկեր Համօրինադիրին նու՛յնպես շատ էր հուզում հիշյալ «հրատապ հարցը»:

Նրան շատ էր հուզում և մտահոգում այն փաստը, որ այդ հարցի շուրջ և՛ արդեն եղած, և՛ նոր ծագող տեսությունները, չնայած իրար հակասող փաստարկների գոյությանը, բոլորն էլ հավասարապես համոզիչ էին և հավասարապես ճշմարտանման:

Նա ասում էր, որ այն տեսությունները, որոնք ապացուցում են, թե հոգի կա, ձևակերպված են շատ տրամաբանորեն ու համոզիչ, միևնույն ժամանակ ոչ պակաս տրամաբանական ու համոզիչ են նաև այն տեսությունները, որոնք ճիշտ հակառակն են ապացուցում:

Որպեսզի դու քեզ կարողանաս դնել այդ համակրելի ասորու տեղը, ես նաև կասեմ քեզ, որ ընդհանրապես քո այդ մոլորակի վրա, ինչպես այն ժամանակ Բաբելոնում, այնպես էլ ներկա

¹⁷⁶ ռուս. տարբերակում՝ «эго-пластикури», անգլ. տարբերակում՝ “egoplastikoori”

¹⁷⁷ ռուս. տարբերակում՝ «Хамолинадир», անգլ. տարբերակում՝ “Hamolinadir”

Ժամանակներում այնպիսի հարցերի շուրջ, որոնք առնչվում են իրենց իսկ ասած «անդրշիրիմյան աշխարհին» կամ որևէ այլ «մանրամասն բացատրություններ պահանջող» որոշակի փաստի, այնտեղի եռուղեղ էակների կողմից, որոնց մոտ ամբողջովին բյուրեղացել է Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների գերակշիռ մասը, ինչի հետևանքով նրանց ներկայություններում եռանդուն գործում է «խորամանկություն» կոչվող լինելիական հատկանիշը, հորինվում են ահա այդպիսի զանազան տեսություններ: Դրա հետևանքով նրանք գիտակցաբար (գիտակցաբար՝ իհարկե, այն բանականության առումով, որը վաղուց բնորոշ է դարձել միայն իրենց) և, դեռ ավելին՝ մեքենայաբար իրենց ընդհանուր ներկայություններում աստիճանաբար ձևավորում են ևս մի ունակություն, այն է՝ «բռանցնել» իրենց նմանների հոգեկառույցի թույլ տեղերը: Եվ այդ ունակությունը նրանց մեջ աստիճանաբար տվյալներ է կազմավորում, որոնք նրանց հնարավորություն են ընձեռում երբեմն զգալ և նույնիսկ հասկանալ իրենց կողքի էակների յուրահատուկ տրամաբանությունը, և այդ տվյալների հիման վրա նրանք հորինում և առաջ են քաշում որևէ հարցի վերաբերյալ այս կամ այն «տեսությունը»: և, քանի որ, ինչպես արդեն ասել եմ, սովորական լինելիական գոյատևման այնտեղ հաստատված աննորմալ պայմանների պատճառով եռուղեղ էակներից մեծ մասի մոտ, այսպես կոչված, «տիեզերական ճշմարտությունները բնագոյաբար զգալու» լինելիական գործառույթն աստիճանաբար հետադիմել է, ապա, եթե նրանցից որևէ մեկը ձեռնամուխ է լինում այդ «տեսություններից» որևէ մեկի ուսումնասիրմանը, անպայմանորեն, ուզենա թե չուզենա, իր ամբողջ էությանը համոզվածություն է զգում դրա իրավացիության մեջ:

Այսպիսով, տղա՛ս, Բաբելոն ժամանելուցս ութ ամիս անց մի անգամ իմ այնտեղի ընկեր Համօրինադիրի հետ գնացի մասնակցելու, այսպես կոչված, «գիտնականների ընդհանուր համաժողովին»:

Այդ «գիտնականների ընդհանուր համաժողովը» հրավիրել էին բռնությամբ այնտեղ բերված գիտուն էակները, բայց այդ համաժողովին ներկա էին ոչ միայն այնպիսի գիտնականներ, որոնց հիշածս պարսից արքան էր բռնի ուժով հասցրել այդտեղ (հետո «սառել» ալքիմիայի նկատմամբ և իսպառ մոռացել դրա մասին), այլ նաև այնպիսի գիտնականներ, որոնք ուրիշ հանրություններից եկել էին իրենց հոժար կամքով, ինչպես իրենք են ասում, «հանուն գիտության»:

Այդ օրն այդ «գիտնականների ընդհանուր համաժողովի» զեկուցողները պետք է ելույթ ունենային վիճակահանությամբ:

Իմ ընկեր Համօրինադիրը ևս պետք էլույթ ունենար ինչ-որ հարցի շուրջ, և ինքն էլ վիճակ հանեց: Նրա համարը հինգերորդն էր:

Նրանից առաջ էլույթ ունեցող զեկուցողները կա՛մ ներկայացնում էին իրենց հորինած նոր «տեսությունները», կա՛մ քննադատում էին արդեն գոյություն ունեցող և բոլորին հայտնի տեսությունները:

Վերջապես հասավ մեր համակրելի ասորու հերթը:

Նա գնաց դեպի «ամբիոն» կոչված տեղը, և քանի դեռ բարձրանում էր՝ ծառայողները հայտարարություն կախեցին, որում հայտնվում էր, թե ինչ թեմայով պետք է խոսի զեկուցողը: Այն ժամանակ այդպես էր ընդունված:

Հայտարարությունն ազդարարում էր, որ զեկուցման թեման է «Մարդկային Բանականության անկայունությունը»:

Իմ երկրային ընկերը սկզբում նկարագրեց, թե իր կարծիքով ինչպիսի կազմություն ունի մարդու «գանգուղեղը», ապա նաև այն, թե ո՞ր դեպքերում և ինչպե՛ս է այն ընկալում զանազան տպավորություններ, և ինչպե՛ս են, մյուս ուղեղների հետ «համաձայնության գալուց հետո, վերջնական արդյունքները տպվում այդ գանգուղեղի ներսում:

Սկզբում նա հանգիստ էր խոսում, բայց գնալով այնքան բորբոքվեց, որ նրա ձայնն արդեն ճշոցի էր նմանվում, և հենց այդպես ճչալով էլ նա սկսեց քննադատել մարդու Բանականությունը:

Միաժամանակ նա անխնա կերպով նաև իր սեփական Բանականությունն էր քննադատում:

Այպես ճչալով՝ նա շատ տրամաբանական ու համոզիչ կերպով բացահայտեց մարդկային Բանականության անկայունությունը և ցուցադրեց թե որքան հեշտ է մարդու Բանականության մեջ խցկել ինչ ասես, և համոզել նրան՝ ինչու՞մ ասես:

Թեև իմ երկրային ընկերոջ ճշոցների մեջ արդեն հեկեկանք էլ էր զգացվում, բայց, հեկեկալով հանդերձ՝ նա շարունակում էր ճչալ: Այնուհետև նա ասաց.

«Ամեն մարդու, ինչպես նաև ինձ, ինչ ասես ապացուցելը, իհարկե, շատ հեշտ է. միայն պետք է իմանալ, թե ինչ խթաններ պետք է օգտագործել և ինչպիսի նմանազգացություններ պետք է գրգռել մի ուրիշ մարդու ուղեղում, որպեսզի նրան ապացուցես այս կամ այն «ճշմարտությունը»: Նույնիսկ կարելի է մարդուն շատ հեշտ ապացուցել, որ ամբողջ այս Աշխարհը՝ իր վրա եղած ամեն ինչով և, իհարկե, նաև մարդկանցով, ընդամենը պատրանք է, որ հավաստի գոյությունն ու իրականությունն ընդամենը մի «կոշտուկ» են՝ կոշտուկ, որն աճել է ձախ ոտքի բույս մատի վրա: Ահա այդ կոշտուկից զատ Աշխարհում բացարձակապես ոչինչ գոյություն չունի. ամեն ինչ միայն թվացյալ է և այն էլ միայն «քառակուսի աստիճանի հոգեկանների» համար»:

Երկրային այդ համակրելի եռուղեղ էակի ելույթի այդ պահին ծառայողներից մեկը նրան ջուր մատուցեց: Ջեկուցողն ազահաբար խմեց այն, որից հետո արդեն հանգիստ ձայնով շարունակեց.

«Ահա, հենց ի՞նձ վերցնենք. ես մի ինչ-որ շարքային գիտնական չեմ, ճի՞շտ է: Ես հայտնի եմ ամբողջ Բաբելոնում և շատ այլ քաղաքներում՝ որպես չափազանց գիտուն և իմաստուն մարդ: Ես այնպիսի ուսումնասիրություն եմ անցել, որից բարձր Երկրի վրա դեռ չի եղել և հազիվ թե երբևէ լինի:

Բայց ի՞նչ է տալիս ինձ իմ այդ բարձր զարգացումն այն հարցի վերաբերյալ, որն արդեն երկու տարի է, ինչ բաբելոնցիներին խենթացնում է:

Իմ այս Բանականությունը, որն իբր հասել է բարձրագույն զարգացման, այդ ընդհանուր խելագարություն առաջացնող հարցի առնչությամբ ինձ ոչինչ չի տալիս, բացի այն, որ «շաբաթվա յոթ օրն էլ ուրբաթ են»:

Ամբողջ այս ընթացքում ես համակ ուշադրությամբ ու լրջորեն հետևել եմ «հոգուն» վերաբերող բոլոր հին ու նոր տեսություններին, և չկա դրանցից մեկը, որի հեղինակի հետ ես ներքուստ համաձայն չլինեի, քանի որ բոլորի շարադրանքն էլ տրամաբանական է ու ճշմարտաման, և այնպիսի Բանականության համար, ինչպիսին իմն է, դժվար է դրանց հետ չհամաձայնելը:

Այդ ընթացքում ես ինքս էլ եմ ստվար մի աշխատություն գրել «անդրշիրիմյան աշխարհի» հարցի վերաբերյալ, և այստեղ ներկա եղողներից շատերն, անշուշտ, ծանոթացել են իմ տրամաբանական մտածողությանը, և, ամենայն հավանականությամբ, նրանց մեջ չկա մեկը, որ չնախանձի իմ այդ տրամաբանական մտածողությանը:

Այնուհանդերձ ես հիմա ամենայն անկեղծությամբ ձեզ հայտնում եմ, որ այդ «անդրշիրիմյան աշխարհի» հարցի առումով, իմ կուտակած գիտելիքների ողջ պաշարով հանդերձ, ավելին չեմ, քան «խորանարդ աստիճանի ապուշ»:

Հիմա գիտե՞ք թե ինչ է կատարվում մեր այս Բաբելոն քաղաքում. համաժողովրդական մի «աշտարակաշինություն», որպեսզի դրանով հասնենք »Երկնքին» և մեր սեփական աչքերով տեսնենք, թե այնտեղ իրականում ինչ է կատարվում:

Այդ աշտարակը մենք կառուցում ենք այնպիսի «աղյուսներով», որոնք, թեև արտաքինից իրար նման են երևում, իրականում պատրաստված են բոլորովին տարբեր նյութերից: Դրանց մեջ կան երկաթից, փայտից պատրաստվածներ, կան և «խմորից» պատրաստվածներ, նույնիսկ «այդերուկի աղվամազից» պատրաստվածներ:

Ահա, ասում եմ ձեզ՝ ներկայումս Բաբելոնի կենտրոնում այդ աղյուսների օգնությամբ հրեշավոր չափերի մի սյուն է կանգնեցվում, և ամեն մի քիչ թե շատ գիտակից մարդ պետք է ի նկատի ունենա, որ վաղ թե ուշ այդ սյունը փուլ է գալու և իր տակն առնի Բաբելոնի բնակիչներին և ընդհանրապես այն ամենը, ինչ այնտեղ կա:

Իսկ քանի որ ես դեռ ապրել եմ ուզում և բոլորովին մտադրություն չունեմ այդ սյունի փլվածքի տակ հայտնվելու, ապա անհապաղ այստեղից հեռանում եմ, իսկ դուք վարվեք, ինչպես ուզում եք»:

Այս վերջին բառերն ասելիս նա արդեն դուրս էր վազում դահլիճից, և դրանից հետո ես այլևս երբեք չտեսա այդ համակրելի ասորուն:

Ինչպես հետո իմացա, նա հենց այդ նույն օրը լքել էր Բաբելոնը, գնացել Նինվե և այնտեղ ապրել մինչև խոր ծերություն: Ես նաև պարզեցի, որ Համօրինադիրն այլևս երբեք «գիտություններով» չի զբաղվել, այլ մինչև իր կյանքի վերջը զբաղվել է միայն «չունգարի»¹⁷⁸ աճեցնելով, որոնց ժամանակակից լեզվով «եգիպտացորեն» են ասում:

¹⁷⁸ ռուս. տարբերակում՝ «чунгария», անգլ. տարբերակում՝ “choongary”

Եվ ահա, զավակս, այդ Համօրինադիրի ճառը սկզբում այնտեղի էակների վրա այնպիսի մեծ տպավորություն էր թողել, որ համարյա ամբողջ մի ամիս նրանք քայլում էին, ինչպես այնտեղ է ասվում՝ «թրջվածների պես»:

Եվ երբ հանդիպում էին իրար, հենց միայն այն էին անում, որ հիշում ու կրկնում էին նրա ճառի առանձին մասերը:

Եվ այնքան հաճախակի այդպես կրկնեցին, որ արդյունքում Համօրինադիրի որոշ արտահայտություններ տարածվեցին Բաբելոնի շարքային էակների շրջանում՝ առօրյա գոյատևման ժամանակ վերածվելով թևավոր խոսքերի:

Այդ արտահայտություններից որոշները հասել են նույնիսկ Երկիր մոլորակի ժամանակակից էակներին, և դրանց շարքում է նաև «բաբելոնյան աշտարակաշինություն» բառակապակցությունը:

Ժամանակակից էակներն արդեն հստակ այնպես են պատկերացնում, որ ինչ-որ ժամանակ Բաբելոն քաղաքում կառուցվել է ինչ-որ աշտարակ, որպեսզի դրա միջոցով այնտեղի էակներն իրենց մոլորակային մարմիններով բարձրանան «Աստծո մոտ»:

Երկրի ժամանակակից էակները ասում են և լիովին համոզված են, որ այդ «բաբելոնյան աշտարակի» շինարարության ժամանակ մի քանի «լեզուներ խառնվել են իրար»:

Ընդհանուր առմամբ, ինչպես այն ժամանակներից, երբ Բաբելոնն էր կուլտուրական Կենտրոն, այնպես էլ ուրիշ ժամանակներից Երկիր մոլորակի ներկայիս էակներին են հասել շատ այդպիսի առանձնացված արտահայտություններ, որոնք արտաբերվել կամ արձանագրվել են նախորդ դարաշրջանների տարբեր բանական էակների կողմից՝ որևէ ընդհանուր հասկացողության որոշ մանրամասների վերաբերյալ. իսկ վերջին հարյուրամյակների քո սիրելիներն այդ «պատառիկների» հիման վրա իրենց խիստ «աղքատիկ» Բանականությամբ այնպիսի չեղած բաներ են հորինում, որոնց կնախանձեր նույնիսկ գերխորամանկ Լյուցիֆերը:

Բաբելոնում այն ժամանակ լայն տարածում գտած ուսմունքներից, որոնք վերաբերում էին «անդրաշխարհային հարցին», միայն երկուսն էին, որ ունեին շատ կողմնակիցներ, թեև այդ ուսմունքներն իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեին:

Եվ հատկապես այդ երկու ուսմունքները սկսեցին սերնդեսերունդ փոխանցվել և խճճել նրանց արդեն իսկ խճճված «լինելիական առողջ մտածողությունը»:

Թեև մի սերնդից մյուսին փոխանցվելու ընթացքում այդ ուսմունքներն իրենց մանրամասների մեջ փոփոխություններ են կրել, սակայն նրանց մեջ պարփակված գաղափարներն անփոփոխ են մնացել և հասել մինչև ներկա ժամանակները:

Բաբելոնում շատ կողմնակիցներ ունեցած այդ երկու ուսմունքներից մեկը «դուալիստականն» էր, մյուսը՝ «աթեիստականը», և, ինչպես արդեն ասել եմ, մեկում ապացուցվում էր, որ էակները հոգի ունեն, իսկ մյուսը, ընդհակառակը, պնդում էր, որ ոչ մի նման բան գոյություն չունի:

Դուալիստական կամ իդեալիստական կոչվող ուսմունքում ասվում էր, որ լինելիական մարդու կոպիտ մարմնում կա նուրբ ու անտեսանելի մի մարմին, որը հենց հոգին է: Մարդու այդ «նուրբ» մարմինն անմահ է, այսինքն՝ այն երբեք չի քայքայվում: Այնուհետև ասվում էր, որ այդ նուրբ մարմինը կամ հոգին պետք է համապատասխան ձևով հատուցի «ֆիզիկական մարմնի» բոլոր արածների դիմաց՝ լինեն դրանք կամա, թե ակամա գործած, և որ ծնված օրից մարդն արդեն ունենում է երկու մարմին՝ ֆիզիկական մարմին և հոգի: Նաև ասվում էր, որ հենց որ մարդ ծնվում է, նրա ուսերին անմիջապես նստում են երկու անտեսանելի ոգիներ: Աջ ուսին նստողը «բարի ոգին է» և «հրեշտակ» է կոչվում, իսկ ձախ ուսին նստողը «չար ոգին է» կամ «դևը»:

Հենց առաջին օրվանից այդ երկու ոգիները՝ բարին ու չարը, իրենց «ճոցատետրերում» գրի են առնում մարդու բոլոր դրսևորումները. աջ ուսին նստածը գրի է առնում նրա բոլոր, այսպես կոչված, «լավ դրսևորումները» կամ «բարի գործերը», իսկ ձախ ուսին նստածը՝ «չար գործերը»:

Այդ երկու ոգիների պարտականությունների մեջ է մտնում մարդուն ներշնչել կամ ստիպել, որ ունենա այնպիսի դրսևորումներ, որոնք համապատասխանաբար գտնվում են իրենց վարման տիրույթում:

Աջ կողմինը մշտապես ձգտում է մարդուն ետ պահել այնպիսի գործողություններից, որոնք գտնվում են իրեն հակառակորդ ոգու իրավասությունների տակ, և այնպես անել, որ տվյալ մարդը կամա-ակամա ավելի շատ գործի այնպիսի արարքներ, որոնք իր սեփական ոլորտին են պատկանում:

Ձախ կողմինն էլ նույն կերպ վարվում, բայց արդեն հակառակ նպատակներով:

Այդ տարօրինակ ուսմունքում այնուհետև ասվում էր, որ այդ երկու «ախոյան-ոգիները» միշտ իրար հետ կռիվ են տալիս՝ ամեն մեկն իր հերթին ձգտելով, որ մարդն ավելի շատ գործի իր վարույթում գտնվող արարքներ:

Երբ մարդը մեռնում է, այդ երկու ոգիները ֆիզիկական մարմինը թողնում են Երկրի վրա, իսկ հոգուն հասցնում են Աստծո մոտ, Որը գտնվում է ինչ-որ տեղ «Երկնքում»: Այնտեղ Աստված նստած է՝ շրջապատված իրեն հավատարիմ հրեշտակներով ու հրեշտակապետերով, և Իր առջև կշեռք ունի կախած:

Կշեռքի երկու կողմում կանգնած են «ոգիները». աջ կողմում այն ոգիներն են, որոնք «Դրախտի սպասավորներն» են կամ հրեշտակները, իսկ ձախ կողմում՝ «Դժոխքի սպասավորները» կամ դևերը:

Ոգիները, որոնք մարդու կյանքի ընթացքում նստած են եղել նրա ուսերին, մահից հետո նրա հոգին հասցնում են Աստծո մոտ և Աստծո ձեռքն են հանձնում իրենց ծոցատետրերը, որոնցում գրառված են մարդու բոլոր արարքները, և Աստված դրանք դնում է կշեռքի նժարների վրա:

Աջ նժարի վրա Նա դնում է հրեշտակի ծոցատետրը, իսկ ձախ նժարի վրա՝ դևին: Կախված այն բանից, թե որ նժարն է ավելի ցած իջնում՝ այդ կողմում կանգնած հերթապահ ոգիներին Աստված հրահանգում է տվյալ հոգուն վերցնել իրենց խնամքի տակ:

Աջ կողմում կանգնած ոգիների խնամակալության տակ է գտնվում այն վայրը, որը Դրախտ է կոչվում: Այդ վայրն աննկարագրելի գեղեցիկ է և հոյակերտ: Այնտեղ աճում են հրաշալի պտուղներ ու մեծ քանակությամբ անուշահոտ ծաղիկներ, իսկ օդում անդադար հնչում են քերովբեների երգերի ու սերովբեների երաժշտության թովիչ ձայները: Այնուհետև թվարկվում էին նման շատ բաներ, որոնց այդ տարօրինակ մոլորակի եռուղեղ էակների աննորմալ ձևով արմատավորված ընկալումների ու պատկերացումների արտաքին արձագանքները բնորոշվում են, ինչպես իրենք են ասում՝ «մեծ երանություն» բառակապակցությամբ, այսինքն՝ իրենց ընդհանուր ներկայություններում կազմավորված այնպիսի պահանջումներն էր բավարարման մասին է խոսք գնում, որոնց ունենալը հանցավոր բան է եռակենտրոն էակների համար, և հենց դրանց համախմբությունն է իրենց ներկայություններից բացարձակապես դուրս մղել այն ամենը, ինչը մեր Ընդհանուր Արարչի կողմից ներդրված է եղել իրենց մեջ, և ինչը հարկ է, որ ունենա ամեն մի եռուղեղ էակ:

Ըստ այդ բարեկոնյան ուսմունքի՝ կշեռքի ձախ նժարի մոտ կանգնած ոգիները դևերն են, և նրանց խնամակալության տակ է այն վայրը, որը Դժոխք է կոչվում: Այդ վայրի վերաբերյալ ասվում էր, որ գուրկ է բուսականությունից. այնտեղ միշտ անտանելի շոգ է, և ոչ մի կաթիլ ջուր հնարավոր չէ գտնել: Այդ Դժոխք կոչվածում մշտապես լսվում են ահավոր ճիչ ու աղաղակներ, վիրավորական «հայհոյանքներ»: Ամենուրեք կտտանքի հարմարանքներ կան՝ սկսած «գելարաններից» ու «անիվներից», վերջացրած մարմինն անդամահատող ու վրան աղ ցանող մեխանիկական սարքերով, և նույնատիպ էլի շատ բաներով:

Բարեկոնյան այդ իդեալիստական ուսմունքում մանրամասնորեն բացատրվում էր, որ որպեսզի մարդու հոգին ընկնի Դրախտ, երկրային կյանքի ընթացքում նա պետք է մշտապես ձգտի գրառման համար ավելի շատ նյութ տալ իր աջ ուսին նստած ոգուն, այլապես նրա հոգին անխուսափելիորեն այդ ահավոր Դժոխքի բաժին կդառնա»:

Այստեղ Հասեի՛նը չդիմացավ և հանկարծակի ընդհատեց գրույցը հետևյալ խոսքերով.

– Իրենց դրսևորումներից որո՞նք են նրանք լավ համարում, և որոնք՝ վատ:

Բեհեզգեբուղը թոռանը նայեց շատ տարօրինակ հայացքով, ապա գլուխն օրորելով ասաց հետևյալը.

«Ինչ վերաբերում է դրան, թե քո այդ մոլորակի վրա լինելիական ո՞ր դրսևորումներն են լավ համարվում, և որոնք՝ վատ, ապա այնտեղ դրա վերաբերյալ գոյություն են ունեցել իրար հետ բոլորովին կապ չունեցող երկու պատկերացումներ, որոնք վաղեմի ժամանակներից սերնդեսերունդ փոխանցվել են մինչև ներկա ժամանակները:

Այդ պատկերացումներից մեկն այնտեղ գոյություն ունի և փոխանցվում է սերնդեսերունդ այն եռուղեղ էակների կողմից, որոնք Ախալդան ընկերության անդամներ են եղել Ատլանտիդա աշխարհամասում, և այնպիսի էակների կողմից, որոնց տարատեսակը թեև մի փոքր ուրիշ է, բայց նրանք Տրանսապալյան երկրորդ խոտորումից մի քանի հարյուրամյակ անց իրենց ընդհանուր ներկայությունների հիման վրա հասել են համարյա նույն մակարդակին և կոչվում են «ձեռնադրյալներ»:

Այդ առաջին պատկերացումն այնտեղ գոյություն ունի հետևյալ բառային ձևակերպմամբ. «Մարդու արարքն օբյեկտիվ իմաստով լավ է, եթե այն գործվել է իր խղճին համապատասխան, և մարդու գործած արարքը վատ է, եթե դրա համար նա հետո «խղճի խայթ» է զգում»:

Իսկ երկրորդ պատկերացումն այնտեղ ծագել է Մեծն Արքա Կոնյուցիոնի իմաստուն հորինվածքից շատ չանցած, երբ այդ հորինվածքն, այնտեղի շարքային էակաների կողմից սերնդեսերունդ փոխանցվելով, աստիճանաբար տարածվեց ամբողջ մոլորակով մեկ և «բարոյականություն» անունն է կրում:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել այդ բարոյականության մի առանձնահատկության մասին, որը դրա մեջ ներառվել է հենց սկզբնավորման պահից և ի վերջո դարձել դրա անբաժանելի մասը:

Թե դա երկրային բարոյականության ո՛ր առանձնահատկությունն է՝ դու հեշտությամբ կպատկերացնես ու կհասկանաս, եթե ասեմ, որ դա ինչպես ներքնապես, այնպես էլ արտաքինապես ձեռք է բերել հենց այն եզակի հատկանիշը, որը հատուկ է «քամելեոն» կոչվող էակին:

Իսկ այնտեղի սովորական բարոյականության, հատկապես ժամանակակից բարոյականության արտառոցությունն ու ինքնատիպությունն այն է, որ դրա գործելն ինքնաբերաբար կախված է բացառապես տեղական իշխանությունների տրամադրվածությունից, որոնք էլ իրենց հերթին, կրկին ինքնաբերաբար, կախված են եռանդի չորս աղբյուրներից, որոնք այնտեղ գոյություն ունեն «գոքանչ», «մարտողություն», «ծառա» և «կանխիկ գումար» անուններով:

Բաբելոնյան երկրորդ ուսմունքը, որը նույնպես շատ կողմնակիցներ ուներ և նույնպես սերնդեսերունդ փոխանցվելով հասել է քո սիրելիների ներկայիս սերնդին, առաջինի հակառակն էր, և այն ժամանակվա աթեիստական ուսմունքներից մեկն էր:

Տեսնումուսի այն ժամանակվա երկրային թեկնածուի այդ ուսմունքում պնդվում էր, որ Աստված չկա և, բացի այդ, մարդը հոգի չունի, հետևաբար հոգու վերաբերյալ այդ բոլոր խոսակցություններն ու վեճերը ոչ այլ ինչ են, եթե ոչ մեծ երևակայությունից ծագած գառանցանք:

Այնուհետև դրանում ասվում էր, որ աշխարհում գոյություն ունի միայն մեկ հատուկ մեխանիկայի օրենք, որին համապատասխան գոյություն ունեցող ամեն ինչ ձևափոխության է ենթարկվում. այսինքն՝ նախորդ պատճառներից առաջացած հետևանքներն աստիճանաբար փոխակերպվում են հետագա հետևանքների պատճառների:

Եվ հետևաբար՝ մարդը միայն հետևանք է ինչ-որ մի նախկին պատճառի, և ինքն էլ իր հերթին պետք է ի վերջո պատճառ հանդիսանա որոշակի հետևանքների:

Այնուհետև այդ ուսմունքում ասվում էր, որ նույնիսկ այն «գերբնական երևույթները», որոնք իրապես ընկալվում են մարդկանց մեծամասնության կողմից, ոչ այլ ինչ են, եթե ոչ նույնպիսի հետևանքներ, որոնք բխում են հիշյալ մեխանիկայի հատուկ օրենքից:

Մաքուր Բանականության կողմից այդ օրենքի ըմբռնումը կապված է նրա բազմաթիվ մանրամասներին օբյեկտիվ ու համակողմանի ծանոթանալու հետ, մանրամասներ, որոնք մաքուր Բանականությանը հասանելի են դառնում նրա զարգացմանը զուգընթաց:

Իսկ ինչ վերաբերում է մարդու Բանականությանը, ապա դա ընդամենը նրա զգացած բոլոր տպավորությունների հանրագումարն է, որից էլ աստիճանաբար տվյալներ են բխում համեմատություններ, եզրակացություններ ու եզրահանգումներ անելու համար:

Այդ ամենի արդյունքում նա ավելի շատ տեղեկություններ է ստանում իր շուրջը եղած բոլոր միատեսակ գործոնների վերաբերյալ, որոնք էլ մարդու ընդհանուր կառույցի համար որպես նյութ են ծառայում, որպեսզի ձևավորվեն նրա որոշակի համոզմունքները: Այդպիսով, այդ ամենի արդյունքում կազմավորվում է մարդու Բանականությունը, այսինքն՝ նրա սեփական սուբյեկտիվ հոգեկառույցը:

Ինչ էլ որ ասված լինե՛ր հոգուն վերաբերվող այդ երկու ուսմունքներում, և ինչպիսի չարաղետ միջոցներ էլ որ նախապատրաստեին ամբողջ մոլորակից այնտեղ հավաքված այդ գիտուն էակաները, որպեսզի դրանցով իրենց հետնորդների Բանականությունը վերածեն իսկական հիմարության ֆարքիկայի՝ օբյեկտիվ իմաստով դրանք լիովին կործանարար չէին լինի, սակայն օբյեկտիվորեն առավել ահավոր է այն փաստը, որ հետագայում այդ գիտնականներն իրենց գոյությամբ ծնեցին մի մեծ չարիք՝ ոչ միայն իրենց հետնորդների, այլ գուցե նաև ամբողջ գոյի համար:

Բանն այն է, որ Բաբելոն քաղաքում այն ժամանակ տեղի ունեցած հիշյալ «մտքերի խռովքը», որն արդյունք էր համատեղ իմաստակության, իրենց ներկայություններում արդեն իսկ եղածին հավելեցին տհասնամուսական դրսևորումների համար նոր նախադրյալների լրացուցիչ մեծ զագնված, իսկ երբ

ցրվեցին տարբեր երկրներում գտնվող իրենց տները, սկսեցին, իհարկե անգիտակացաբար, ամենուրեք վարակիչ մանրէների պես տարածել բոլոր այն հասկացությունները, որոնց համախումբն էլ վերջնականապես ամբողջովին ոչնչացրեց Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի սուրբ աշխատությունների վերջին մնացորդներն ու նույնիսկ դրանց հետքերը:

«Գիտակցական տառապանքի գնով ձեռք բերված» հենց այն սուրբ արդյունքները, որոնք նա կյանքի էր կոչել, որպեսզի հենց այդ եռակենտրոն էակների համար ստեղծի իրենց սովորական լինելիական գոյատևման համար հատուկ արտաքին պայմաններ, միայն որոնց առկայության դեպքում կարող էին աստիճանաբար չքանալ Կունդաբուֆեր օրգանի հատկությունների չարաղետ հետևանքները, որպեսզի դրանց տեղն աստիճանաբար բռնեն եռուղեղ էակների ներկայություններին սազական նոր հատկություններ, այն եռուղեղ էակների, որոնց ներկայությունը Տիեզերքի համայն գոյի ճշգրիտ պատճենն է:

Հոգու հարցի վերաբերյալ Երկրի բոլոր ծագերից Բաբելոն քաղաքում հավաքված այդ գիտուն էակների զանազան իմաստակությունների մյուս արդյունքն էլ այն եղավ, որ քո այդ մոլորակը կատարած իմ հինգերորդ անձնական այցից շատ ժամանակ չանցած՝ իրենց այդ նոր կուլտուրականը՝ հիրավի հոյակերտ քաղաք Բաբելոնը ևս, ինչպես այնտեղ ասվում է, «հիմնահատակ սրբվեց Երկրի երեսից»:

Ոչնչացվեց ոչ միայն Բաբելոն քաղաքը, այլև այն ամենը, ինչ երկար դարերի ընթացքում այնտեղ ձեռք էր բերվել նախկին ժամանակներում ապրած էակների կողմից:

Հանուն արդարության ես այստեղ պետք է ասեմ, որ Աշխաթա Շիեմաշի սուրբ աշխատությունների ոչնչացման սկզբնական նախաձեռնության հեղինակը ոչ թե Բաբելոնում հավաքված գիտուն էակները եղան, այլ բաբելոնյան այդ իրադարձություններից մի քանի դար առաջ նույն այդ Ասիա աշխարհամասում ապրած և «Լենտրոհամսանին»¹⁷⁹ կոչված մի «գիտուն» էակ, որը, իր բարձրագույն լինելիական մասը հանդերձավորելով որոշակի ամբողջության մեջ և իր Բանականությունը կատարելագործելով մինչև Օբյեկտիվ Բանականության պահանջված աստիճանին՝ դարձավ այն 313 Տիեզերանուսական Հավերժ Անհատականություններից մեկը, որոնք ներկայումս գտնվում են Հատուցում անունը կրող ոչ մեծ մոլորակի վրա:

Այդ Լենտրոհամսանինի մասին ես նույնպես կպատմեմ քեզ, քանի որ նրան առնչվող տեղեկությունները քեզ համար որպես բացատրություն կձառայեն, որպեսզի ավելի լավ հասկանաս քո այդ յուրօրինակ ու հեռավոր մոլորակի վրա ապրող եռուղեղ էակների արտառոց հոգեկառույցը:

Բայց ես այդ Լենտրոհամսանինի մասին քեզ կսկսեմ պատմել միայն այն բանից հետո, երբ ավարտած կլինեմ սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի մասին իմ գրույցը, քանի որ ներկայումս արդեն Գերսրբազնագույն Անհատականություն դարձած Աշխաթա Շիեմաշին և քո այդ մոլորակում ունեցած նրա գործունեությանը վերաբերվող տեղեկությունները չափազանց կարևոր և վերին աստիճանի արժեքավոր կլինեն քեզ համար, որպեսզի հասկանաս Երկիր մոլորակի վրա բազմացող և քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հոգեկառույցի առանձնահատկությունները»:

ԳԼՈՒԽ ԻԵ **Վերևից Երկիր առաքված** **Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը**

«Ահա այդպես, զավա՛կս...

Այժմ ուշադրությամբ լսիր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Գերսրբազնագույն, այժմ արդեն Համատիեզերական Անհատականություն Աշխաթա Շիեմաշին ու Նրա գործունեությանը՝ կապված Երկիր մոլորակի վրա սկզբնավորվող եռուղեղ էակների գոյատևման հետ, որոնք ապշեցրել են քո երևակայությունը:

Ես արդեն մեկ անգամ չէ, որ ասել եմ քեզ, որ մեր Ամենասիրող Ընդհանուր Հայր Անսահմանության Կամոք՝ մեր Տիեզերական Բարձրագույն Գերսրբազնագույն

¹⁷⁹ ռուս. տարբերակում՝ «Лентрохамсанин», անգլ. տարբերակում՝ “Lentrohamsanin”

Անհատականությունները երբեմն որևէ երկրային եռուղեղ էակի ներկայության մեջ իրականացնում են սրբազան Անհատականության «կանխորոշված» սաղմնավորում, որպեսզի նա, դառնալով նույն ներկայությամբ երկրային էակ, հենց տեղում «կողմնորոշվի» և համապատասխան ձևով նրանց լինելիական սովորական գոյատևման գործընթացին տա այնպիսի ուղղություն, որի շնորհիվ հնարավոր դառնա նրանց ներկայություններից հեռացնել դրանցում բյուրեղացած Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքները, ինչպես նաև նման բյուրեղացումների նկատմամբ հակվածությունները:

Իմ նկարագրած բաբելոնյան իրադարձություններից յոթ հարյուրամյակ առաջ այնտեղի եռուղեղ էակներից մեկի մոլորակային մարմնում կենսագործվել է սրբազան Անհատականության «կանխորոշված» սաղմնավորում, որից հետո այնտեղ ծնվել է, Վերևից առաքված Բանագնաց, իսկ այժմ Բարձրագույն Գերսրբազնագույն Համատիեզերական Անհատականություններից մեկը՝ Աշխաթա Շիեմաշ անունով:

Աշխաթա Շիեմաշը տղայի մոլորակային մարմնով ծնվել է, այսպես կոչված, «շումերական ժողովրդին» պատկանող աղքատ ընտանիքում, Բաբելոնի մոտերքում գտնվող և այն ժամանակ «Փիսպասկանի»¹⁸⁰ կոչվող մի գյուղակում:

Նա աճել և պատասխանատու էակ է դարձել մասամբ այդ գյուղակում, մասամբ էլ հենց Բաբելոնում, որը թեև դեռ չէր հասել իր հոյակերտության գագաթնակետին, բայց այն ժամանակ արդեն հայտնի քաղաք էր:

Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը քո այդ մոլորակի միակ Վերից Առաքվածն է եղել, որին հաջողվել է իր սուրբ աշխատանքով այդ մոլորակի վրա ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում այդ թշվառ էակների գոյատևումը կարող էր գոնե որոշ ժամանակով նմանվել մեր համայն Մեծ Տիեզերքի մյուս մոլորակների եռուղեղ էակների գոյատևմանը. Նա նաև առաջինն է Երկիր մոլորակի վրա հրաժարվել Իր համար կանխորոշված առաքելության ընթացքում այդ մոլորակի եռուղեղ էակների նկատմամբ այնպիսի սովորական մեթոդներ կիրառելուց, որոնք միշտ կիրառվել էին Վերևից առաքված նախկին Բանագնացների կողմից:

Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը բացարձակապես ոչինչ չի սովորեցրել Երկրի շարքային եռուղեղ էակներին և նրանց ոչինչ չի քարոզել, ինչպես դա արել են իրենից առաջ և հետո եղած Բանագնացները, որոնք մինևնույն նպատակով Վերևից երբևէ առաքվել են այնտեղ:

Եվ գլխավորապես հենց այդ պատճառով է, որ Նրա որևէ ուսմունք որևէ տեսքով Նրա ժամանակակիցներից չի հասել թեկուզ նրանցից հետո ապրած սովորական էակների երրորդ սերնդին և, առավել ևս, այնտեղ ներկայումս ապրող սովորական էակներին:

Նրա Սրբազնագույն Գործունեության մասին որոշ տեղեկություններ նրա ժամանակակիցներից հետագա սերունդներին են փոխանցել նրանք, ովքեր այնտեղ «ձեռնադրյալներ» են կոչվում, և որոնք դրա համար օգտվել են Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի «Իրավիճակի Ահավորություն» կոչված դատողությունների «Լեգոմինիզմի»¹⁸¹:

Դրանից զատ, Նրա Սրբազնագույն Գործունեության ժամանակներից փոխանցվել և նույնիսկ ներկա ժամանակներին է հասել Նրա մի քանի «մարմարե սալիկներից» մեկը, որոնց վրա փորագրվել էին Նրա «խորհուրդները», «պատգամները» և «իմաստախոսությունները», որոնք նախատեսված էին Իր ժամանակակից էակների համար:

Ներկայումս այդ պահպանված սալիկը գլխավոր սրբազան մասունք է հանդիսանում «Օլբոգմեկ Եղբայրության» ձեռնադրյալ էակների խմբի համար, որն իր գոյության վայր է ընտրել Ասիա աշխարհամասի կենտրոնական մասերը:

«Օլբոգմեկ» բառի իմաստը հետևյալն է՝ «Տարբեր կրոններ չկան, կա միայն մեկ միասնական Աստված»:

Երբ վերջին անգամ ես անձամբ այդ մոլորակի մակերևույթի վրա էի, ինձ վիճակվեց ծանոթանալ այն Լեգոմինիզմին, որը Երկիր մոլորակի հետագա սերունդների պատկանող ձեռնադրյալ մարդկային էակներին հաղորդում է Աշխաթա Շիեմաշի «Իրավիճակի Ահավորություն» կոչվող դատողությունները:

¹⁸⁰ ռուս. տարբերակում՝ «Писпаскана», անգլ. տարբերակում՝ “Pispascana”

¹⁸¹ ռուս. տարբերակում՝ «Легоминизм», անգլ. տարբերակում՝ “Legomonism”, մի այլ տեղ՝ “Legominism”

Այդ Լեգումինիզմն ինձ շատ օգնեց, որ հասկանամ այդ յուրահատուկ էակների հոգեկառույցի տարօրինակ կողմերը, հենց այն կողմերը, որոնք տասնյակ հարյուրամյակներ տևած իմ մանրագին դիտումների ընթացքում Ես մինչև այդ ժամանակ չէի կարողանում հասկանալ:»

– Իմ շատ սիրելի պապի՛կ, ասա ինձ խնդրեմ, ի՞նչ է նշանակում «Լեգումինիզմ» բառը»,– հարցրեց Հասեինը:

«Այդ բառով է անվանվում,– պատասխանեց Բեհեդզեբուդը,– այնտեղ կիրառվող այն եղանակներից մեկը, որով մի սերնդից մյուսին հեռավոր անցյալի իրադարձությունների մասին տեղեկություններ են փոխանցվում եռուղեղ էակներից նրանց միջոցով, որոնք ձեռնադրյալ կոչվելու արժանի են համարվում և իրոք այդպիսին են:

Մի սերնդից մյուսին տեղեկություններ փոխանցելու այդ եղանակը հիմնվել է Ատլանտիդա աշխարհամասի էակների կողմից: Որպեսզի դու ավելի լավ հասկանաս Լեգումինիզմի օգնությամբ մի սերնդից մյուսին տեղեկություններ փոխանցելու այդ եղանակի էությունը, ես մի փոքր պետք է պատմեմ հենց այն էակների մասին, որոնց մյուս էակները կոչել են և կոչում են ձեռնադրյալներ:

Վաղեմի ժամանակներում այնտեղ՝ Երկրի վրա, այդ բառը կիրառվում էր միայն մեկ իմաստով. ձեռնադրյալներ էին անվանում այն եռուղեղ էակներին, որոնք իրենց ներկայություններում ձեռք էին բերում համարյա միատեսակ օբյեկտիվ տվյալներ, որոնք կարող էին աչքի զարնող լինել մյուս էակների համար:

Սակայն վերջին երկու հարյուրամյակների ընթացքում արդեն այդ բառը կիրառվում է երկու իմաստով:

Դրանցից մեկը նույն նպատակն է հետապնդում, ինչ որ նախկինում էր, այսինքն՝ այնտեղ այդպես են անվանում այն էակներին, որոնք ձեռնադրյալ են դարձել իրենց անձնական գիտակցական աշխատանքով ու կամավոր տառապանքով և դրանով իսկ, ինչպես արդեն ասացի քեզ, ձեռք են բերում օբյեկտիվ արժանիքներ, որոնք նկատելի կարող են լինել մյուս էակների համար՝ անկախ ուղեղային համակարգից, և կարող են այդ արժանիքների շնորհիվ արժանանալ մյուս էակների վստահությանն ու հարգանքին:

Մյուս իմաստով՝ այդ անունով իրար են դիմում այնպիսի էակներ, որոնք պատկանում են, այսպես կոչված, «հանցավոր խմբավորումների», որոնք վերջին ժամանակներում խիստ բազմացել են, և որոնց անդամներն իրենց առջև նպատակ են դնում իրենց շրջապատում եղած էակներից «գողանալ» միայն «էական արժեք ներկայացնող» բաներ:

«Գերբնական» կամ «միստիկական» գիտություններով զբաղվելու անվան տակ այդ հանցավոր խմբավորումներն իրականում զբաղվում են, և այն էլ՝ շատ հաջող կերպով, այդ կարգի թալանով:

Եվ ահա, այդպիսի խմբավորմանը պատկանող ամեն մի իսկական անդամ այնտեղ հիմա ձեռնադրյալ է անվանվում:

Այդ երկրային ձեռնադրյալների մեջ կան նաև «ականավոր ձեռնադրյալներ», և այդ ականավորները, հատկապես ներկա ժամանակներում, այդ նոր տեսակի ձեռնադրյալների շարքային անդամների միջից առանձնանում են նրանով, որ իրենց «վիրտուոզ գործերով» անցած են լինում, ինչպես այնտեղ են ասում, «հրով, ջրով, պղնձե փողերով, ինչպես նաև Մոնտե Կառլոյի խաղատներով»:

Այսպիսով, զավա՛կս, Լեգումինիզմ է անվանվում Երկիր մոլորակի վրա վաղեմի ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունների հաջորդական փոխանցումն առաջին տեսակի ձեռնադրյալներից իրենց հաջորդներին, այսինքն՝ իսկապես արժանիներից արժանիներին:

Մենք պետք է արժանին մատուցենք Ատլանտիդա աշխարհամասի այն էակներին, որոնք տեղեկատվության փոխանցման նման եղանակ են հորինել. դա իրոք շատ իմաստուն եղանակ է և իրոք հասել է իր նպատակին:

Եվ դա է այն միակ եղանակը, որի միջոցով վաղուց անցած ժամանակների որոշակի իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները հասել են ավելի ուշ շրջաններում ապրած սերունդների էակներին:

Իսկ ինչ վերաբերում է այն տեղեկություններին, որոնք մի սերնդից մյուսին են փոխանցել այդ մոլորակի շարքային էակների զանգվածները, ապա դրանք կամ մոռացվելով իսպառ չքանում են, կամ

էլ, եթէ նույնիսկ ինչ-որ բան մնում է դրանցից, ապա դրանք մեր սիրելի Մոլլա Նասրեդինի խոսքերով ասած՝ «միայն պոզերն ու կճղակներն են, մեկ էլ նյութ [пиха] Շեհերեզադէի համար»:

Ուստի, երբ այս կամ այն իրադարձությանը վերաբերվող ինչ-որ վկայությունների պատառիկներ են հասնում ավելի ուշ շրջանի սերունդների էակներին, և նոր տեսակի գիտուն էակներն այդ պատառիկներից սարքում են իրենց «սոլյանկան», ապա դրանով ի հայտ է գալիս վերին աստիճանի յուրահաստուկ ու ծայրահեղ ուսանելի մի «երևույթ». այն է՝ երբ այնտեղի խավարասեր միջատներին բախտ է վիճակվում իմանալ, թե ինչ կա այդ «սոլյանկայում», անմիջապես դրանց ներկայությունների մեջ է ներխուժում այնտեղ գոյություն ունեցող «չար ոզի Մուրբ Վիթը» և սկսում կատաղի դիվոտել:

Թե ինչպես են Երկիր մոլորակի ժամանակակից գիտուն էակներն իրենց «սոլյանկան» սարքում մի կերպ իրենց հասած վկայությունների պատառիկներից, շատ լավ նկարագրում է մեր սիրելի Մոլլա Նասրեդինի մի ասույթը. «Լուսն աշխարհիս երեսին գոյություն ունի միայն այն բանի համար, որ հենց որ նա փոշտա, ջրհեղեղ լինի, որի նկարագրությամբ շատ են սիրում զբաղվել մեր գիտուն այրերը»:

Պետք է քեզ ասեմ, որ երբ քո սիրելիների շրջապատում էի գտնվում, ես մեծ դժվարությամբ էի զսպում, ինչպես քո սիրելիներն են ասում, «ծիծաղ», երբ որևէ մի գիտուն էակ «դասախոսություն» էր կարդում կամ անձամբ ինձ պատմում էր այն իրադարձությունների մասին, որոնց ես անձամբ վկա էի եղել:

Այնտեղի այդ դասախոսությունները կամ «պատմությունները» լիքն են այնպիսի հորինվածքներով, որ եթէ մեր Գերխորամանկ Լյուցիֆերը կամ նրա օգնականները փորձեին դրանց պես մի բան հորինել, ապա անհաջողության կմատնվեին»:

ԳԼՈՒԽ ԻԶ

«Իրավիճակի ահավորություն» կոչվող Լեզումինիզմը Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի դատողությունների վերաբերյալ

«Այն Լեզումինիզմը,– շարունակեց Բեհեզգեբուղը,– որի միջոցով փոխանցվել են Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի դատողությունները, այսպիսի բովանդակություն ուներ:

Այն սկսվում էր աղոթքով.

«Հանուն իմ սկզբնավորման պատճառի՝ ես կջանամ մշտապես արդարամիտ լինել ամեն մի արդեն ոզի առած գոյացության և ապագայում ոզի առնելիք գոյացությունների նկատմամբ, որոնք ամենքիս Ընդհանուր Հոր, Անսահմանության Ամենագոր Ինքնաստեղծի դրսևորումներն են, Ամեն:

Ինձ՝ Մեծն Համայնի աննշան մասնիկիս, Վերևից հրամայված է հանդերձավորվել այս մոլորակի եռուղեղ էակի մոլորակային մարմնով, որպեսզի այստեղ սկզբնավորվող և գոյատևող ինձ նման էակներին օգնեմ ազատվելու այն օրգանի հետևանքներից, որն ազնվագույն ու կարևոր պատճառներից ելելով ներդրվել է նրանց նախնիների ներկայություններում:

Բոլոր սրբազան Անհտականությունները, որոնք ինձնից առաջ հատուկ և նպատակամղված Վերևից իջել են այստեղ, միշտ փորձել են իրենց վրա դրված խնդիրը լուծել ինքնակատարելագործման այն երեք սրբազան ուղիներից որևէ մեկով, որոնք սրբազան ուղիներ են նախանշվել հենց Իր՝ մեր Անսահման Արարչի կողմից և կոչվում են «Հավատ», «Հույս» և «Մեր»:

Երբ լրացավ իմ տասնյոթ տարին, Վերին կամոք ես սկսեցի իմ մոլորակային մարմինը նախապատրաստել, որ «ի գորու լինեմ» իմ պատասխանատու գոյության ընթացքում լինելու անաչառ:

Իմ «նախապատրաստական» այդ շրջանում ես մտադիր էի պատասխանատու տարիքիս հասնելուն պես ի կատար ածել իմ առջև դրված այն խնդիրը, որը նույնպես լուծելի է հիշյալ երեք սրբազան լինելիական ազդակներից որևէ մեկով:

Սակայն, երբ իմ այդ նախապատրաստական շրջանում ինձ վիճակվեց այստեղ՝ Բաբելոն քաղաքում, հանդիպել այստեղի կազմավորված ու գոյատևող էակների համարյա բոլոր «տեսակներին»

հետ, այնժամ իմ անաչառ դիտումների արդյունքում իմ ներսում ծագեց և սկսեց անշեղորեն աճել մի «լինելիական կասկած», թե անհնարին է սույն մոլորակի եռուղեղ էակներին փրկել այդ երեք սրբազան ուղիների միջոցով:

Ինձ հանդիպած էակների զանազան դրսևորումները, որոնք իմ այդ կասկածն ավելի էին ուժեղացնում, արդյունքում ինձ բերեցին այն համոզման, որ Կունդաբուֆեր օրգանի հատկությունների այդ հետևանքները, որոնք, ժառանգաբար սերնդեսերունդ փոխանցվելով, շատ երկար ժամանակահատվածի ընթացքում ի վերջո այնպես են բյուրեղացվել նրանց ներկայություններում, որ ներկայիս էակների համար արդեն դարձել են իրենց էության օրինական մասը, և, հետևաբար, Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների այդ բյուրեղացումները նրանց ընդհանուր ներկայությունների, այսպես ասած, «երկրորդ բնավորությունն» են դարձել:

Ուստի երբ ես վերջապես պատասխանատու էակ դարձա, որոշեցի, որ նախքան հիշյալ երեք սրբազան ուղիներից որևէ մեկն ընտրելս իմ մոլորակային մարմինը պետք է հասցնեմ սրբազան «Կշեռքների»¹⁸² վիճակին, այսինքն՝ այնպիսի վիճակի, երբ «բոլոր ուղեղները համակշռված ընկալունակություն ունեն», քանի որ միայն այդ վիճակում կկարողանայի ընտրություն կատարել իմ գործունեության հետագա եղանակների միջև:

Այդ նպատակով ես բարձրացա «Վեզինյամա»¹⁸³ լեռը, որտեղ քառասուն օր ու գիշեր ծնկի իջած խորասուզվեցի մտասևեռման մեջ:

Հաջորդ քառասուն օրվա ընթացքում ես ոչինչ չկերա ու չխմեցի, այլ միայն հիշեցի ու վերլուծեցի իմ բոլոր ընկալումներից իմ մեջ մնացած տպավորությունները, որոնք ձեռք էի բերել իմ գոյության «ինքնանախապատրաստական» շրջանում:

Երրորդ քառասուն օրերի ընթացքում ես նորից ծնկաչոք վիճակում ոչինչ չկերա ու չխմեցի, և ամեն կես ժամը մեկ երկու մագ էի պոկում իմ կրծքից:

Եվ երբ այդ ամենից հետո ես վերջապես լիովին ազատվեցի սովորական կյանքի տպավորություններով լի իմ բոլոր մարմնական ու հոգևոր կապերից, սկսեցի մտորել, թե ինչպես շարունակեմ իմ Լինելիությունը:

Իմ մաքրված Բանականության այդ մտորումներն այն ժամանակ լիակատար հստակությամբ ցույց տվեցին ինձ, որ հիշյալ երեք սրբազան ուղիներից որևէ մեկով ժամանակակից էակներին փրկելու համար արդեն չափազանց ուշ է:

Իմ այդ խորհրդածությունները կատարելապես հստակ ցույց տվեցին ինձ, որ մարդկային էակին բնորոշ բոլոր այն ճշմարիտ գործառույթները, որոնք հատուկ են մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակներին, այստեղի էակների հեռավոր նախնիների մոտ արդեն փոխակերպվել են այլ գործառույթների՝ հատկապես այնպիսիների, որոնք պատկանում են Կունդաբուֆեր օրգանի հատկությունների թվին՝ մնալով շատ նման Հավատ Մեր և Հույս կոչվող ճշմարիտ ու սրբազան լինելիական գործառույթներին:

Եվ այդ այլասերումը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, այն փաստի հետևանքով, որ երբ նրանց նախնիների մոտ Կունդաբուֆեր օրգանը ոչնչացվել է, և նրանք նաև ճշմարիտ ու սրբազան լինելիական ազդակների համար գործոններ են ձեռք բերել, քանի որ նրանք դեռ պահպանել էին Կունդաբուֆեր օրգանի շատ հատկությունների նկատմամբ հակումը, ապա այդ երեք սրբազան ազդակներին նմանվող Կունդաբուֆեր օրգանի այդ խաբուսիկ հատկություններն աստիճանաբար միախառնվել են դրանց հետ, ինչի արդյունքում նրանց հոգեկառույցներում բյուրեղացվել են Հավատի, Սիրո և Հույսի այնպիսի ազդակներ, որոնք թեև նման են իրենց իսկական նախատիպերին, այնուհանդերձ, այսպես թե այնպես, խիստ տարբեր են դրանցից:

Այստեղի ներկայիս եռակենտրոն էակները երբեմն իրենց Բանականությամբ հավատում, սիրում և հույս են կապում այնպես, ինչպես իրենց զգացմունքներով. սակայն ինչպե՞ս են սիրում, ինչպե՞ս են հավատում և ինչպե՞ս են հույսով լցվում՝ ահա հենց այստեղ է թաքնված այդ երեք լինելիական հատկությունների յուրօրինակությունը...

Իհարկե, նրանք էլ են հավատում, բայց այդ սրբազան ազդակը նրանց ներսում գործում է ոչ թե այնպես անկախ, ինչպես լինում է ընդհանրապես բոլոր եռակենտրոն էակների մոտ, որոնք բնակվում

¹⁸² ռուս. տարբերակում՝ «Кшеркнара», անգլ. տարբերակում՝ “ksherknara”

¹⁸³ ռուս. տարբերակում՝ «Везиняма», անգլ. տարբերակում՝ “Veziniama”

են մեր Մեծ Տիեզերքի զանազան այլ մոլորակների վրա և օժտված են նմանատիպ հնարավորությամբ, այլ դրա ծագումը նրանց ներսում կախված է լինում իրենց ընդհանուր ներկայության մեջ ձևավորված այս կամ այն գործոնից, ինչի պատճառն էլի նույն Կունդաբուֆեր օրգանի հետևանքներն են, որոնք ծագում են նրանց ներսում այնպիսի յուրօրինակ հատկությունների տեսքով, ինչպիսիք են, օրինակ, «սնափառությունը», «եսասիրությունը», «հպարտությունը», «ինքնագոհությունը» և այլն:

Դրա հետևանքով է, որ այստեղի եռուղեղ էակները մեծ մասամբ հակված են ընկալելու և իրենց ներկայությունների մեջ տեղ տալու ամեն տեսակի «սինկրիփիզիզարարների»¹⁸⁴, կամ, ինչպես այստեղ են ասում, «հավատում են ամեն հորինվածքի»:

Այս մոլորակի էակներին հեշտությամբ կարելի է համոզել ամեն ինչում, եթե միայն այդ հորինվածքներն ընկալելու ընթացքում կա՛մ դրսից, կա՛մ ինքնաբերաբար՝ ներսից, նրանց մոտ գրգռվի ու զարգանա Կունդաբուֆեր օրգանի այս կամ այն համապատասխան հետևանքների ազդեցությունը, որոնք արդեն բյուրեղացել են նրանց մեջ և իրենցով պայմանավորում են տվյալ էակի «սուբյեկտիվությունը» և կրում են այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ «եսասիրությունը», «սնապարծությունը», «հպարտությունը», «փառամոլությունը», «ինքնահավանությունը», «պարծենկոտությունը», «մեծամտությունը» և այլն:

Իրենց այլասերված Բանականության և իրենց տեղայնացումներում ու լինելիական զգացողություններում առկա այլասերված գործոնների կրած նման ազդեցությունների հետևանքով հիշյալ հորինվածքների նկատմամբ նրանք ոչ միայն կեղծ համոզվածություն են ձեռք բերում, այլ նաև հենց իրենք են ամենայն անկեղծությամբ ու համոզվածությամբ իրենց շրջապատին սկսում ապացուցել, որ դա հաստատ այդպես է, և այլ կերպ չի էլ կարող լինել:

Նույնքան աննորմալ ձևով էլ նրանց ներսում ձևավորվել են այն տվյալները, որոնք առաջացնում են սրբազան սիրո ազդակ:

Ժամանակակից էակների ներկայություններում նաև այնպիսի արտառոց ազդակ է առաջանում, որը նրանք սեր են անվանում, և այդ ազդակից ինչքան ասես ունենում են, սակայն այդ սերը նախ՝ նույնպես այդ նույն Կունդաբուֆեր օրգանի հատկությունների որոշակի բյուրեղացված հետևանքների արդյունքով է պայմանավորված լինում, և երկրորդ՝ իրենց այդ ազդակը ծագում ու այդ գործընթացում դրսևորվում է նրանցից յուրաքանչյուրի համար կատարելապես սուբյեկտիվորեն, և այնքան սուբյեկտիվորեն ու իրարից տարբերվող, որ եթե նրանցից տասին խնդրեն բացատրել, թե ինչպես են իրենք զգում այդ ներքին ազդակը, ապա, իհարկե, բոլոր տասն էլ, եթե գոնե մի քիչ ազնվորեն ու անթաքույց նկարագրեին իրենց զգացմունքները, և ոչ ինչ-որ տեղ կարդացածը կամ լսածը, իրարից բոլորովին տարբեր զգացմունքներ կնկարագրեին:

Մեկն իր զգացմունքը կներկայացներ որպես սեքսուալ ցանկություն. մյուսը՝ որպես խղճահարություն. երրորդը՝ հնազանդվելու ցանկություն. չորրորդը՝ որպես սովորական կիրք արտաքինի նկատմամբ և այլն, և այլն: Մակայն նրանցից և ոչ մեկը նույնիսկ հեռավոր կերպով չէր կարողանա նկարագրել ճշմարիտ Սիրո զգացմունքը:

Եվ ոչ մեկին դա չէր հաջողվի այն պատճառով, որ այստեղի սովորական մարդկային էակներից ոչ մեկը երկարատև ժամանակահատվածի ընթացքում չի ապրել սրբազան լինելիական ազդակից սկիզբ առած ճշմարիտ Սիրո զգացմունք: Իսկ առանց դրա «ճաշակն» ունենալու նրանք նույնիսկ աղոտ կերպով չեն կարող նկարագրել համայն Տիեզերքի ամեն մի եռակենտրոն էակի ներկայության մեջ առկա այդ երանելի, սրբազան լինելիական ազդակը, որը Մեծ Բնության աստվածային նախախնամությամբ մեր ներսում կազմավորում է բոլոր այն նախադրյալները, որոնց շնորհիվ կարող ենք հանգստի երանություն զգալ ինքնակատարելագործման նպատակով ի կատար ածված արդար աշխատանքից հետո:

Ներկայումս այստեղ, եթե անգամ եռուղեղ էակներից մեկը «սիրում է» մի ուրիշին, ապա սիրում է միայն այն պատճառով, որ վերջինս անընդհատ խրախուսում կամ անարժան կերպով քծնում է իրեն. կամ՝ որ նրա քիթը շատ նման է այն կնոջ (կամ տղամարդու) քթին, որի հետ, «բնեռայնության» կամ «տեսակների» համապատասխանության տիեզերական օրենքի շնորհիվ կապ է ունեցել, որը դեռևս չի ընդհատվել. վերջապես՝ սիրում է, որովհետև սիրվող կողմի քեռին խոշոր գործարար է և երբևէ կարող է իրեն որևէ օժանդակություն ցույց տալ և այլն, և այլն:

¹⁸⁴ ռուս. տարբերակում՝ «Синкриусарамов», անգլ. տարբերակում՝ “sinkrpoosarams”

Սակայն այստեղի մարդկային էակները երբեք չեն սիրում ճշմարիտ, օբյեկտիվ և ոչ-եսասիրական սիրով:

Այստեղի ժամանակակից էակների նման սիրո հետևանքով Կունդաբուֆեր օրգանի հատկությունների բյուրեղացման նկատմամբ նրանց ժառանգական նախատրամադրվածությունը ներկայումս անարգել բյուրեղանում է՝ ի վերջո նրանց բնություն ամրապնդվելով որպես օրինական մաս:

Իսկ ինչ վերաբերում է երրորդ լինելիական ազդակին՝ «էաբուխ հույսին», ապա դրա վիճակն այստեղի եռակենտրոն էակների ներկայություններում ավելի վատ է, քան նախորդ երկուսինը:

Այդ լինելիական ազդակը ոչ միայն ի վերջո աղճատված ձևով հարմարվում է նրանց ներկայություններում առկա ամեն ինչին, այլև այդ նորովի ձևավորված չարաղետ ու տարօրինակ «հույսը», որը փոխարինում է Սրբազան Հույսի լինելիական ազդակին, հիմա արդեն այն զլխավոր պատճառն է, որի հետևանքով նրանց մեջ այլևս չեն ծագում Հավատի, Սիրո և Հույսի ճշմարիտ լինելիական ազդակներով պայմանավորված գործառություններ:

Այդ նորովի ձևավորված աննորմալ հույսի հետևանքով նրանք մշտապես ինչ-որ բանի հետ հույսեր են կապում, և դրանով իսկ մշտապես կաթվածահար են լինում այն հնարավորությունները, որոնք նրանց մոտ ծագում են կա՛մ դիտավորյալ կերպով դրսից, կա՛մ պատահաբար ու ինքնին. հնարավորություններ, որոնք կարող էին ի չիք դարձնել կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացման նկատմամբ նրանց ներկայություններում առկա ժառանգական հակվածությունը:

Երբ ես Վեգինյամա լեռան վրայից կրկին իջա Բաբելոն, իմ դիտումները շարունակեցի, որպեսզի պարզեմ, թե հնարավոր չէ՞ արդյոք որևէ այլ կերպ օգնել այդ դժբախտ էակներին:

Մեկ տարի անընդհատ շարունակվող հատուկ դիտումներ կատարելով նրանց բոլոր դրսևորումների ու ընկալումների նկատմամբ՝ ես համոզվեցի, որ այն գործոնները, որոնք նրանց ներկայություններում ծնում են Հավատի, Սիրո և Հույսի սրբազան լինելիական ազդակներ, այս մոլորակի էակների մոտ արդեն ամբողջովին այլասերվել են. այնուհանդերձ այն գործոնը, որը պետք է ծնի այն լինելիական ազդակը, որի վրա հիմնված է լինում եռուղեղ համակարգ ունեցող էակների ընդհանրապես ամբողջ հոգեկառույցը՝ ազդակ, որն Օբյեկտիվ Խիղճ անունն է կրում, նրանց մոտ դեռևս լրիվությամբ հետաճ չի ապրել, այլ նրանց ներկայություններում պահպանվել է համարյա իր նախասկզբնական վիճակով:

Այստեղ հաստատված արտաքին լինելիական գոյատևման աննորմալ պայմանների հետևանքով այդ գործոնն աստիճանաբար թափանցել է նրանց այն գիտակցության մեջ, որին այստեղ «ենթագիտակցություն» են կոչում, ինչի արդյունքում այդ գործոնը բացարձակապես ոչ մի մասնակցություն չի ունենում նրանց սովորական գիտակցության գործունեության մեջ:

Ահա հենց այդ ժամանակ, առանց որևէ կասկածի, իմ բոլոր առանձին մտածող մասերով, որոնք իմ ամբողջական «Ես»-ն կազմում, ես հասկացա, որ եթե նրանց այդ գիտակցության ընդհանուր գործունեության մեջ, որում անցնում է նրանց առօրյա, ինչպես այստեղ են ասում, «արթմնի վիճակը», այդ լինելիական գործոնը, որը դեռևս պահպանվում է նրանց ներկայության մեջ, մասնակցություն ունենար, ապա միայն այդ դեպքում հնարավոր կլիներ այստեղի եռուղեղ էակներին ազատել այն օրգանի հատկությունների հետևանքներից, որը դիտավորյալ կերպով տեղակայվել էր նրանց նախահայրերի ներկայություններում:

Հետագա խորհրդածություններս ինձ համոզեցին, որ դրան կարելի կլիներ հասնել, եթե միայն երկար ժամանակով նրանց ընդհանուր լինելիական գոյատևումն ընթանար նախապես համապատասխանեցված պայմաններում:

Երբ վերոհիշյալ ամեն ինչը կանխագոյացավ իմ մեջ, այդ պահից սկսած ես որոշեցի ամբողջովին նվիրվել այստեղ այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնցում հնարավոր կդառնար, որ նրանց ենթագիտակցության մեջ դեռևս պահպանված «սրբազան խիղճը» կարողանար աստիճանաբար անցում կատարել իրենց սովորական գիտակցության գործունեության մեջ:

Թո՛ղ որ օրհնվի իմ այս որոշումը մեր Ամենագոր, Ամենասեր, Ամենքի Հայր, Ամենահաս, Անսահման Արարչի կողմից: Ամեն»:

Ահա այդպես էր սկսվում «Իրավիճակի ահավորություն» կոչվող Լեգոմինիզմը Սրբազնագույն Աշխարհա Շիեմաշի դատողությունների վերաբերյալ:

Եվ այսպես, զավակս, ինչպես արդեն քեզ ասել եմ, երբ քո այդ մոլորակի մակերևույթի վրա կատարած իմ վերջին անձնական վայրէջքից որոշ ժամանակ անց ես առաջին անգամ մանրամասն ծանոթացա այդ Լեգոմիինիզմի հետ, որը հենց նոր ներկայացրի, և երբ անմիջապես հետաքրքրվեցի հետազայում Բարձրագույն, Սրբազնագույն, Համատիեզերական Անհատականություն դարձած Աշխարհա Շիեմաշի արած հետևություններով, իմացա, որ չկային ուրիշ Լեգոմիինիզմներ և ոչ էլ ուրիշ տեղեկատվական աղբյուրներ Նրա հետագա Սրբազան Գործունեության վերաբերյալ, որոնք կարող էին պահպանված լինել քո սիրելիների մոտ, ուստի այնժամ ես որոշեցի մանրակրկիտ հետազոտել և ինձ համար պարզել, թե Նա ինչ միջոցներ է ձեռնարկել և հետազայում ինչպես է դրանք իրականացրել, որ այնտեղի այդ դժբախտ էակներին ազատի Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից, որոնք ժառանգաբար փոխանցվել էին նրանց և այդքան չարաղետ էին նրանց համար:

Ուստի ես քո այդ մոլորակի մակերևույթի վրա գտնվելուս գլխավոր խնդիրներից մեկը դարձրի այն, որ մանրագին ուսումնասիրություններ կատարեմ և պարզեմ քո սիրելիների միջավայրում հայտնված այդ Մեծն Էաբուխ-Սիրողի՝ ներկայումս Բարձրագույն, Գերսրբազնագույն, Համատիեզերական Անհատականություն Աշխարհա Շիեմաշի Սրբազան Գործունեության հետագա ընթացքը:

Իսկ ինչ վերաբերում է այն մարմարե սալիկին, որը Մեծն Աշխարհա Շիեմաշի Սրբազան Գործունեության ժամանակներից պատահաբար պահպանվել է և հիմա որպես գլխավոր սրբազան մասունք պահվում է Օլբոգմեկ Եղբայրության ձեռնադրյալ էակների մոտ, ապա այնտեղ կատարած վերջին իմ այցի ժամանակ ինձ վիճակվեց տեսնել և կարդալ դրա վրա փորագրված տեքստի բովանդակությունը:

Իմ հետագա ուսումնասիրությունների ընթացքում նաև պարզեցի, որ ավելի ուշ, երբ այդ Սրբազնագույն Աշխարհա Շիեմաշն այնտեղ հաստատել է սովորական լինելիական գոյատևման հենց այն պայմանները, որոնք Ինքը մտադրվել էր հաստատել, Նրա խորհրդով ու նախաձեռնությամբ մի քանի այդպիսի սալիկներ տեղակայվել են մի շարք մեծ քաղաքների համապատասխան վայրերում, և այդ սալիկների վրա փորագրվել են ամեն տեսակի ասույթներ ու խորհուրդներ, որոնց հարկավոր էր հետևել համապատասխան գոյատևման ընթացքում:

Բայց երբ այնտեղ կրկին մեծ պատերազմներ են ծագել, այդ արտառոց էակները ոչնչացրել են բոլոր սալիկները, և դրանցից ընդամենը մեկը՝ հենց այն, որ այժմ պահվում է այդ եղբայրների մոտ, ինչ-որ կերպ փրկվել է և, ինչպես արդեն քեզ ասել եմ, հանդիսանում է այդ Եղբայրության սեփականությունը:

Այդ դեռևս պահպանվող մարմարի վրա կային գրառումներ, որոնք վերաբերվում էին Հավատ, Մեր և Հույս կոչվող սրբազան լինելիական ազդակներին և ունեին մոտավորապես այսպիսի տեսք.

Հավատ, Մեր, Հույս

*Գիտակցական Հավատը ազատություն է
Զգացմունքային Հավատը թուլություն է
Մարմնական Հավատը հիմարություն է:*

*Գիտակցական Մերը նույնն է ծնում
Զգացմունքային Մերը հակառակն է ծնում
Մարմնական սերը կախված է բնեռայնությունից ու տեսակից:*

*Գիտակցական Հույսը ուժ է
Զգացմունքային Հույսը ստրկություն է
Մարմնական հույսը հիվանդություն է:*

Նախքան հանուն քո սիրելիների բարօրության Սրբազնագույն Աշխարհա Շիեմաշի ծավալած հետագա գործունեության մասին պատմելս՝ ես պետք է, կարծում եմ, մի փոքր ավելի մանրամասն քեզ բացատրեմ այն ներքին ազդակի մասին, որին քո սիրելիները հույս են անվանում, և որի վերաբերյալ

Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը փաստել էր, որ դրա վիճակը շատ ավելի ծանր է, քան մյուս երկուսինը:

Նաև ի՛մ դիտումներն ու հետազոտությունները, որոնք ավելի ուշ ես հատուկ կատարեցի նրանց մոտ եղած հիշյալ արտառոց ազդակի վերաբերյալ, հատակորեն ցույց տվեցին ինձ, որ, հիրավի, այն գործոնները, որոնք նրանց ներկայություններում ծնում են այդ աննորմալ ազդակը, առավելագույնս վնասակար են հենց իրենց համար:

Այդ աննորմալ հույսի հետևանքով այնտեղ առաջացել է և նույնիսկ մինչև հիմա էլ գոյություն ունի մի շատ տարօրինակ ու յուրահատուկ հիվանդություն, որը դեռևս զարգանալու հավակնություն ունի և կոչվում է «վաղը»:

Այդ «վաղը» կոչվող տարօրինակ հիվանդությունն իր հետ բերել է ահավոր հետևանքներ, և հատկապես այնտեղի այն դժբախտ եռուղեղ էակների համար, որոնց վիճակվել է իմանալ և ամբողջ էությամբ համոզվել, որ իրենց ներսում կան մի քանի շատ անցանկալի հետևանքներ, որոնցից ձերբազատվելու համար իրենք պետք է որոշակի ջանքեր գործադրեն. նրանք նույնիսկ գիտեն, թե հատկապես ինչ ջանքեր և ինչպես գործադրեն դրանք, սակայն այդ չարաղետ «վաղը» հիվանդության երեսից չեն կարողանում այդ պահանջված ջանքերը գործադրել:

Վիթխարի ու ահավոր չարիքի հենց այդ չարաղետ հատվածն է, որ մեծ ու փոքր զանազան պատճառաբանություններով կենտրոնացվում է այդ խղճուկ եռուղեղ էակների լինելիական գոյատևման գործընթացներում, և այնտեղի այդ թշվառ էակները, ովքեր պատահաբար իմանում են այն, ինչը նշեցի, անընդհատ «վաղվանից» հաջորդ «վաղվան» հետաձգելով իրենք իրենց զրկում են որևէ իրական բանի հասնելու հնարավորությունից:

Նաև քո սիրելիների համար արտառոց այդ չարաղետ «վաղը» հիվանդությունն արդեն խանգարիչ հանգամանք է դարձել ներկայիս այնտեղի էակների համար ոչ միայն այն պատճառով, որ նրանք լիովին զրկված են իրենց ներկայություններից Կունդաբուֆեր օրգանի հետևանքները հեռացնելու հնարավորությունից, այլ նաև նրանց մեծամասնության համար խանգարիչ հանգամանք է դարձել, որ ազնվորեն կատարեն իրենց լինելիական պարտականությունները, որոնք կատարյալ անհրաժեշտություն են դարձել նրանց մոտ արդեն հաստատված սովորական լինելիական գոյատևման պայմաններում:

Այդ «վաղը» հիվանդության դրդմամբ այնտեղի եռուղեղ էակները, հատկապես ժամանակակիցները, համարյա միշտ «հետո»-ին են հետաձգում այն ամենը, ինչ պետք է անեն տվյալ պահին՝ հուսալով, որ «հետո» դա կանեն ավելի լավ ու շատ:

Նույն այդ հիշյալ չարաղետ «վաղը» հիվանդության պատճառով այնտեղի թշվառ էակների մեծ մասը, որոնք պատահաբար կամ արտաքին գիտակցական միջամտության շնորհիվ իրենց Բանականությամբ գիտակցում են իրենց լիակատար ոչնչությունը և դա սկսում են հասկանալ իրենց բոլոր ոգի առած առանձին մասերով, նաև նրանք, որոնք պատահաբար իմանում են, թե ո՞ր լինելիական ջանքերը և ինչպե՛ս պետք է գործադրեն, որպեսզի դառնան այնպիսին, ինչպիսին հարկ է, որ լինեն եռուղեղ էակները, ահա նրանք բոլորը նույնպես, «վաղվանից» «վաղվան» հետաձգելով, համարյա միշտ գալիս հանգում են այն բանին, որ իրենց համար մի տխուր օր սկսում են ի հայտ գալ ու դրսևորվել ծերության այն կանխանշանները, որոնք «թուլություն», «գառամություն» են կոչվում, և որոնք անխուսափելի ճակատագիրն են բոլոր մեծ ու փոքր տիեզերական կազմավորումների, երբ դրանք հասնում են իրենց գոյատևման ավարտին:

Այստեղ ես քեզ անպայման պետք է պատմեմ նաև այն տարօրինակ երևույթի մասին, որն այնտեղ ես նկատել եմ իմ դիտումների և քո սիրելիների համարյա ամբողջապես այլասերված ներկայություններն ուսումնասիրելու ընթացքում. այն է՝ ես որոշակիորեն փաստեցի, որ նրանցից շատերի մոլորակային գոյատևման վերջնամասում իրենց ներկայություններում բյուրեղացած օրգանի հետևանքներից շատերն սկսում են ինքնուրույնաբար հետաձգ ապրել, դրանցից որոշներն էլ նույնիսկ լրիվ անհետանում են, ինչի հետևանքով այդ էակներն սկսում են իրականությունը տեսնել ու հասկանալ մի փոքր ավելի լավ:

Նման դեպքերում քո սիրելիներից այդպիսիների մոտ ուժեղ ցանկություն է առաջանում իրենց վրա աշխատելու, ինչպես իրենք են ասում, «հոգու փրկության համար»:

Կարիք կա՞ արդյոք ասելու, որ նման ցանկությունից ոչինչ չի ստացվում այն պարզ պատճառով, որ արդեն չափազանց ուշ է լինում, քանի որ այն ժամանակը, որը Մեծ Բնությունից հատկացվում է դրա

համար, արդեն վաղուց անցած է լինում, և, թեև նրանք զգում են պահանջվող լինելիական ջանքերի գործադրման անհրաժեշտությունը, սակայն իրենց այդ ցանկությունների իրականացման ձգտումներն արդեն միայն «օրինաչափ ծերունական անկարողության» անպտուղ փորձեր են լինում:

Այսպիսով, տղա՛ս, հանուն քո այդ մոլորակի եռուղեղ էակների բարօրության Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի կատարած հետագա գործերի վերաբերյալ իմ փնտրտուքներն ու հետազոտություններն ի վերջո ինձ համար պարզ դարձրին հետևյալը:

Երբ այդ մեծագույն և Բանականությամբ համարյա իր նմանը չունեցող Սրբազան Անհատականությունը լիովին համոզվել է, որ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների համար գոյություն ունեցող ինքնակատարելագործման սովորական սրբազան ուղիներն այլևս պիտանի չեն այդ մոլորակի էակների համար, այնժամ Նա այդ էակների հոգեկառույցները հատուկ եղանակներով մեկ տարի դիտելուց և ուսումնասիրելուց հետո կրկին բարձրացել է Վեզինյամա լեռը և երկրային մի քանի ամիսների ընթացքում կենտրոնացած խորհրդածել, թե ինչ եղանակով իրագործի իր մտադրությունը, այն է՝ այդ մոլորակի էակների ենթագիտակցության մեջ դեռևս պահպանված սրբազան Խիղճ լինելիական հիմնարար ազդակի տվյալների միջոցով այդ էակներին ազատի Կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացման նկատմամբ ունեցած իրենց ժառանգական հակվածություններից:

Այդ խորհրդածությունները Նրան այն ժամանակ լիովին համոզել են, որ թեև այդ սրբազան լինելիական ազդակի վերածնման համար նրանց ընդհանուր ներկայություններում պահպանված տվյալներն օգտագործելով՝ իրապես հնարավոր է նրանց փրկել, սակայն դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե նրանց ենթագիտակցության մեջ պահպանված այդ տվյալների դրսևորումները մասնակցություն ունենան նրանց գիտակցության մեջ, որի ղեկավարությամբ ընթանում է նրանց ցերեկային արթնությունը, և, դեռ ավելին, եթե այդ լինելիական ազդակը երկար ժամանակի ընթացքում առկա լինի նրանց գիտակցության դրսևորումներում»:

ԳԼՈՒԽ ԻԷ

Մարդկանց գոյատևման կազմակերպումը Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի կողմից

Բեհեղգեբուղը շարունակեց պատմել այսպես.

«Իմ հետագա փնտրտուքների ու հետազոտությունների արդյունքում նաև պարզվեց, որ այն բանից հետո, երբ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը խորհրդածեց Վեզինյամա լեռան վրա և մտքում կազմեց իր գործունեության պլանը, այնտեղից իջավ ոչ թե Բաբելոն քաղաք, այլ մեկնեց այն ժամանակ Քուռլանդտեչ¹⁸⁵ կոչվող և Ասիայի կենտրոնում գտնվող երկրի Ջուլֆապալ¹⁸⁶ մայրաքաղաքը:

Այնտեղ Նա նախ և առաջ կապեր հաստատեց այն ժամանակ գոյություն ունեցող «Չափտանդուրի¹⁸⁷» եղբայրության «եղբայրների» հետ: Այդ եղբայրությունը, որի անունը նշանակում է «Լինել, թե ընդհանրապես չլինել», գործում էր քաղաքից ոչ շատ հեռու մի վայրում:

Այդ ընկերությունը Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի այնտեղ գնալուց հինգ տարի առաջ հիմնադրվել էր երկու երկրային ճշմարիտ ձեռնադրյալների նախաձեռնությամբ, որոնք ձեռնադրյալ էին դարձել այն սկզբունքներին համապատասխան, որոնք գործում էին, ինչպես այն ժամանակ էին ասում, Աշխաթայի դարաշրջանից առաջ:

Ճշմարիտ երկրային ձեռնադրյալ դարձած այդ երկու եռուղեղ էակներից մեկի անունը «Պունդուլերո¹⁸⁸» էր, իսկ մյուսինը՝ «Սենսիմինիրիկո¹⁸⁹»:

¹⁸⁵ ռուս. տարբերակում՝ «Курландтеч», անգլ. տարբերակում՝ “Kurlandtech”

¹⁸⁶ ռուս. տարբերակում՝ «Джультфапал», անգլ. տարբերակում՝ “Djoolfapal”

¹⁸⁷ ռուս. տարբերակում՝ «Чафтандури», անգլ. տարբերակում՝ “Tchafantoori”

¹⁸⁸ ռուս. տարբերակում՝ «Пундолеро», անգլ. տարբերակում՝ “Poundliro”

Իմիջիայլոց, պետք է նշեմ, որ այդ ժամանակաշրջանում ձեռնադրյալ դարձած այդ երկու էակներն էլ իրենց ընդհանուր ներկայությունների բարձրագույն մասերն արդեն հանդերձավորել էին «ավարտունություն» կոչվող աստիճանով և, հետևաբար, դեռևս ժամանակ ունեին հետագա գոյատևման ընթացքում իրենց այդ բարձրագույն մասերը հասցնելու պահանջված Սրբազան Օբյեկտիվ Բանականության աստիճանին, և հիմա արդեն իրենց բարձրագույն լինելիական մասերը նույնիսկ արժանացել են լինելու սուրբ Քավարան մոլորակի վրա:

Ըստ իմ վերջին հետազոտությունների՝ երբ այն ժամանակվա այդ երկու եռուղեղ էակների՝ Պուևտուլերոյի և Մենսիմինիրիկոյի ընդհանուր ներկայությունների առանձին ոգի առած մասերում ծագեց ու անընդհատ զգացվում էր, հետագայում էլ համոզմունքի վերածվեց մի կասկած, որ ինչ-ինչ բացահայտ անօրինաչափությունների հետևանքով իրենց ընդհանուր կառույցում ձեռք է բերվել և սկսել գործել «շատ անցանկալի ինչ-որ բան», և որ միևնույն ժամանակ այդ անցանկալի ինչ-որ բանից հնարավոր է ազատվել հենց իրենց մեջ եղած սեփական նախադրյալների օգնությամբ, ապա նրանք սկսեցին փնտրել մի քանի իրենց նման էակների, որոնք իրենց պես ձգտում էին նույն նպատակին, որպեսզի համատեղ ուժերով փորձեին ազատվել իրենց մեջ եղած հիշյալ անցանկալի ինչ-որ բանից:

Եվ երբ շուտով գտան իրենց այդ նպատակին համապատասխանող էակների, որոնք պատկանում էին այդ ժամանակներում Ջուլֆապալ քաղաքի մերձակայքի բազմաթիվ, այսպես կոչված, «վանքերում» եղած վանականների հոծ խմբին, ապա հենց այդ նոր գտած համախոհների հետ էլ հիմնեցին հիշյալ «եղբայրությունը»:

Այսպիսով, ժամանելով Ջուլֆապալ քաղաք, Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը համապատասխան կապեր հաստատեց հիշյալ եղբայրության եղբայրների հետ, որոնք իրենց իսկ հաստատած գործունեության եղանակով աշխատում էին իրենց հոգեկառույցի վրա: Ուստիև Նա սկսեց այդ եղբայրների Բանականությունը լուսավորել օբյեկտիվ ճշմարիտ տեղեկատվությամբ և նրանց լինելիական ազդակներն ուղղորդել այնպես, որ նրանք ի գորու լինեն հասկանալու այդ ճշմարտությունները չդիմելով ո՛չ իրենց մեջ առկա աննորմալ բյուրեղացված գործոնների, ո՛չ էլ այն գործոնների օգնությամբ, որոնք կարող էին նորից ծագել հաստատված սովորական լինելիական գոյատևման աննորմալ ձևերի արտաքին ընկալումների արդյունքներից:

Հիշյալ եղբայրության եղբայրներին այդպես լուսավորելով և իր առաջարկներն ու մտադրությունները նրանց հետ քննարկելով՝ միևնույն ժամանակ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը զբաղվում էր նաև այն «կանոնների» մշակմամբ, որոնց համախմբությանն այնտեղ «կանոնագիրք» էին ասում: Այն պետք է ծառայեր այն նոր եղբայրությանը, որը Նա Ջուլֆապալ քաղաքում հետո հիմնեց նախկին Չափտանդուռի եղբայրության այն ձեռնադրյալ անդամների հետ միասին, որոնց Ինքը նախապես լուսավորել էր: Այդ եղբայրությունը հետագայում անվանվեց «Խիդճտվողներ»¹⁹⁰, որի իմաստը հետևյալն էր. «Միայն նա կկոչվի ու կդառնա Աստծո Որդի, ով իր մեջ Խիդճ կարթնացնի»:

Ավելի ուշ, երբ Չափտանդուռի նախկին եղբայրության եղբայրների մասնակցությամբ ամեն ինչ արդեն մշակվել ու կազմակերպվել էր, Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը նույն այդ եղբայրներին առաքեց տարբեր վայրեր և պատվիրեց, որ Իր ընդհանուր ղեկավարությամբ տարածեն այն տեղեկությունը, որ իրենց ենթագիտակցության մեջ բյուրեղացված են ու մշտապես գոյություն ունեն Վերևից շնորհված նախադրյալներ, որպեսզի իրենց ներսում արթնանա ճշմարիտ Խղճի Աստվածային ազդակ, և որ միայն նա, ով ձեռք կբերի այնպիսի «ունակություն», որ այդ նախադրյալները մասնակցություն ունենան իր առօրյա արթմնի գիտակցության մեջ, օբյեկտիվ իմաստով անեղծ իրավունք կունենա կոչվելու և իրոք լինելու համայն գոյի մեր Ընդհանուր Հայր Արարչի իսկական որդին:

Եղբայրներն այն ժամանակ այդ օբյեկտիվ ճշմարտությունը սկզբում քարոզեցին գլխավորապես հիշյալ այն վանքերի վանականների միջավայրում, որոնք, ինչպես արդեն ասել եմ, շատ էին բուն քաղաքի մերձակայքում:

Այդ քարոզների շնորհիվ նրանք նախ կարողացան Ջուլֆապալ քաղաքում իրենց հիմնած այդ առաջին և Խիդճտվողներ կոչվող եղբայրության համար ընտրել թվով երեսունհինգ լրջմիտ ու լավ պատրաստություն անցած, այսպես կոչված, «մոնյթերի»:

¹⁸⁹ ռուս. տարբերակում՝ «Сенсимиринико», անգլ. տարբերակում՝ “Sensiminiriko”

¹⁹⁰ ռուս. տարբերակում՝ «Хичтвори», անգլ. տարբերակում՝ “Heeshtvori”

Դրանից հետո Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը, շարունակելով նախկին Չափտանդուռի եղբայրության եղբայրների մտքերը լուսավորելու գործը, սկսեց լուսավորություն տարածել նաև այդ երեսունհինգ մոնթերի շրջապատում:

Այդպես նրանց ժամանակով մեկ տարի շարունակվեց, մինչև որ նախկին Չափտանդուռի եղբայրության մի քանի եղբայրներ և երեսունհինգ մոնթերից մի քանիսն իրավունք ստացան կոչվելու Խիղճավորներ կոչվող առաջին եղբայրության «Լիիրավ» եղբայրներ:

Ըստ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի կազմած կանոնագրքի՝ ամեն մի եղբայր կարող էր Խիղճավորներ եղբայրության Լիիրավ եղբայր դառնալ միայն այն դեպքում, եթե, ի հավելումն նախատեսված որոշակի օբյեկտիվ ձեռքբերումների, նա կարողանա ինքն իրեն ստիպել («սեփական հոգեկառույցի գործունեության գիտակցական կառավարման ունակության» իմաստով) ևս հարյուր էակների մղելու դեպի ինքնակատարելագործման ուղին և նրանց ապացուցի, որ ամեն մարդ իր ներսում ունի լինելիական օբյեկտիվ խղճի ազդակ, և երկրորդ՝ կարողանա բացատրել, թե մարդ ինչպես պետք է իրեն պահի, որպեսզի համապատասխանի իր գոյության իսկական իմաստին ու նպատակին, և դեռ ավելին՝ կարողանա այնպես համոզել նրանց, որ այդ հարյուր հոգուց յուրաքանչյուրն իր հերթին, ձեռք բերելով, այսպես կոչված, «պահանջված չափի Ունակություն», կարողանա նույն կերպ համոզել իր նման ևս հարյուրի:

Նրանք, ովքեր արժանացան Խիղճավորներ եղբայրության այդպիսի Լիիրավ եղբայր կոչվելու իրավունքին, հենց այն առաջիններն էին, որ «քուրմ» կոչվեցին:

Որպեսզի քեզ համար ամբողջությամբ պարզ դառնա Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Գործունեությունը, դու պետք է իմանաս նաև, որ երբ հետագայում ոչնչացվեցին Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն աշխատանքների բոլոր արդյունքները, ապա այնտեղ այդ «քուրմ» և «ձեռնադրյալ» բառերը, որոնց մասին արդեն քեզ ասել եմ, քո սիրելիների կողմից կիրառվեցին և դեռ շարունակում են կիրառվել ընդհուպ մինչև ներկա ժամանակները՝ երկու իրարից կատարելապես տարբեր իմաստներով:

Մի իմաստով այդ «քուրմ» բառն այն ժամանակներից սկսած կիրառվում էր և հիմա էլ է կիրառվում, բայց միայն որոշակի վայրերում, և վերաբերում է սպասավորների առանձին անկարևոր խմբերի, որոնց բոլորը հիմա անվանում են «հոգևորականներ» կամ «տերտերներ»:

Իսկ մյուս իմաստով «քուրմ» են անվանվել և հիմա էլ շարունակում են անվանվել այն էակները, որոնք իրենց աստվածասեր կյանքով և հանուն իրենց շրջապատի էակների կատարած արժանավայել գործերով այնպես են առանձնանում այնտեղի սովորական եռուղեղ էակների շարքերից, որ ամեն անգամ, երբ այդ սովորական էակները հիշում են նրանց, իրենց ներկայություններում ծագում է մի գործառույթ, որը «երախտագիտություն» անունն է կրում:

Արդեն այն ժամանակ, երբ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը լուսավորում էր նախկին Չափտանդուռի եղբայրության եղբայրների Բանականությունները և նույն բանն անում էր նաև ընտրված երեսունհինգ մոնթերի համար, բուն Ջուլֆապալ քաղաքի և դրա մերձակայքի սովորական էակների շրջապատում սկսեց տարածվել այն ճիշտ գաղափարը, որ մարդկային էակների ընդհանուր ներկայություններում առկա են բոլոր նախադրյալները, որպեսզի դրսևորվի խղճի Աստվածային ազդակը. բայց այդ ազդակը իրենց սովորական գիտակցության մեջ մասնակցություն չի ունենում այն պատճառով, որ թեև այդ դրսևորումներն իրենց որոշակի, այսպես կոչված, «լիովին պարզաշնորհ բավարարություն» և զգալի նյութական առավելություն են տալիս, սակայն, դրանով հանդերձ, դրանք աստիճանաբար հետզհետե անցնում են տանում Բնության կողմից իրենց ներկայություններում ներդրված այն նախադրյալները, որոնք հնարավորություն են ընձեռում, անկախ ուղեղային համակարգի տարբերությունից, իրենց շրջապատի բոլոր էակների ներսում արթնացնելու Աստվածային Սիրտ օբյեկտիվ ազդակը:

Այդ ճիշտ տեղեկությունն սկսեց տարածվել գլխավորապես Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի վերին աստիճանի իմաստուն այն պայմանի շնորհիվ, որը բոլոր նրանց, ովքեր ձգտում էին դառնալ Խիղճավորներ եղբայրության Լիիրավ եղբայր, պարտավորեցնում էր, ինչպես արդեն քեզ ասել եմ, զանազան որոշակի ինքնաբերական արժանիքներից զատ, հասնել նաև այնպիսի «ունակության», որ այնտեղի ևս հարյուր եռուղեղ էակների բոլոր երեք առանձին ոգի առած ու կապակցված մասերին կարողանա համոզմունք տալ խղճի Աստվածային ազդակի վերաբերյալ:

Երբ Ջուլֆապալ քաղաքում առաջին Խիղճովողներ եղբայրության կազմակերպման գործը քիչ թե շատ կարգավորվել էր, և այնպես էր արվել, որ դրա հետագա աշխատանքը կարող էր միայն այն ցուցումների օգնությամբ ինքնուրույնաբար ընթանալ, որոնք բխում էին այն ժամանակ եղբայրության ներսում առկա Բանականությունից, Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշն անձամբ Լիիրավ եղբայրների շարքից ընտրեց նրանց, ովքեր արդեն իրենց գիտակցական Բանականությամբ ու ենթագիտակցության անգիտակցական զգացմունքներով լիովին հասկանում էին հիշյալ Աստվածային ազդակը և լիարժեք վստահություն ունեին, որ որոշակի ինքնուրույնաբար գործադրվող ջանքերի օգնությամբ այդ Աստվածային լինելիական ազդակը կարող է դառնալ և ընդմիջտ մնալ իրենց սովորական գիտակցության անբաժան մասը: Նրանց, ովքեր հասկացել և գիտակցել էին, թե ինչ բան է Աստվածային խիղճը, և որոնք անվանվեցին «առաջին աստիճանի ձեռնադրյալներ», Նա առանձնացրեց մյուսներից և սկսեց մասնավոր կերպով նրանց Բանականությունները լուսավորել այնպիսի օբյեկտիվ ճշմարտություններով, ինչպիսիք այն ժամանակ դեռևս բոլորովին անհայտ էին այնտեղի եռուղեղ էակներին:

Հատկապես այդ ակնհայտ «առաջին աստիճանի ձեռնադրյալներն» էին, որ այն ժամանակ կոչվեցին Մեծ Ձեռնադրյալներ:

Այստեղ հարկ է նշել, որ այնտեղի ձեռնադրյալ էակների լինելիության այն սկզբունքները, որոնք հետագայում անվանվեցին «Աշխաթայի վերածնունդներ», այն ժամանակ վեաճնվել էին հենց Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի կողմից:

Այսպիսով, Սրբազնագույն ներկայումս արդեն Գերսրբազնագույն, Աշխաթա Շիեմաշն այդ ընտրյալ Մեծ Ձեռնադրյալներին, ամեն ինչից զատ, նաև մանրամասն բացատրեց, թե ինչ բան է այդ «օբյեկտիվ խիղճ» կոչվող լինելիական ազդակը, և թե ինչպես են եռուղեղ էակների ներկայություններում ծագում դրա առաջացման գործոնները:

Եվ հենց այդ հարցի վերաբերյալ Նա մի անգամ հետևյալն է ասել.

«Լինելիական խիղճ ազդակի գործոնները եռուղեղ էակների ներկայություններում ծագում են մեր Ամենասիրող, Երկայնամիտ Անսահման Արարչի «Թախծի ճառագման» մասնիկների տեղայնացումներից. ահա հենց այդ պատճառով են եռուղեղ էակների ճշմարիտ խղճի դրսևորման աղբյուրը երբեմն անվանում Արարչի Պատկեր:

Եվ մեր Համատիրակալ Համընդհանուր Հոր Թախծը ծագում է այն բանից, որ համայն Տիեզերքում մշտապես պայքար է ընթանում ուրախության ու թախծի միջև»:

Հետո Նա նաև ավելացրել է.

«Համայն մեր Տիեզերքի անխտիր բոլոր եռուղեղ էակները, որոնց թվին ենք պատկանում նաև մենք՝ մարդիկս, ներկայություններում Աստվածային խղճի ազդակի ծագման համար անհրաժեշտ նախադրյալների բյուրեղացվածության հետևանքով, իրենց ամբողջ էությանը ի բնե տառապանք են:

Եվ նրանք տառապանք են այն պատճառով, որ այդպիսի լինելիական ազդակի լիակատար իրականացումը մեր ներսում կարող է ի կատար ածվել միայն երկու իրարամերժ, այսպես կոչված, «համալիր գործառությունների» մշտական փոխադարձ պայքարի դեպքում. կատարելապես իրար հակադիր ծագմամբ երկու աղբյուրների՝ հենց մեր մոլորակային մարմնի գործառական պրոցեսների և այն գործառական զուգահեռ տեսակների միջև, որոնք հարաձուռ կերպով ծագում են մեր լինելիական բարձրագույն մարմինների հանդեձավորման ու գոյատևման ընթացքում: Գործառական այն տեսակների մասին է խոսքս, որոնց համախումբը եռուղեղ էակների համար իրողություն է դարձնում Բանականության բոլոր ձևերը:

Դրա հետևանքով մեր Մեծ Տիեզերքի բոլոր եռակենտրոն էակները, դրանց թվում նաև մենք՝ Երկիր մոլորակի վրա գոյատևող մարդիկ, մեր ներսում առկա «Օբյեկտիվ Խիղճ» կոչվող Աստվածային ազդակ ծնող գործոնների հետևանքով պետք է անպայման պայքարենք մեր ընդհանուր ներկայություններում սկզբնավորվող և ընթացող երկու կատարելապես իրար հակադիր գործառությունների հետ, որոնց արդյունքները մենք մշտապես զգում ենք կա՛մ «ուզում եմ»-ի, կա՛մ «չեմ ուզում»-ի տեսքով:

Եվ այսպես, միայն նա, ով գիտակցաբար օգնում է ներքին պայքարի այդ գործընթացին, որ «չեմ ուզում»-ները գերակշռեն «ուզում եմ»-ների նկատմամբ, լիովին համահունչ է գործում հենց Իր՝ մեր Համընդհանուր Հայր Արարչի էության հետ. մինչդեռ նա, ով դրա հակառակն է անում, միայն մեծացնում է Նրա Թախծը»:

Այն ամենի շնորհիվ, զավա՛կս, ինչի մասին ես հենց նոր ասացի, այն ժամանակաշրջանում հազիվ էր անցել երեք տարի, երբ մի կողմից՝ Ջուլֆապալ քաղաքի և նրա մերձակայքի սովորական էակները, մյուս կողմից՝ Ասիա աշխարհամասի շատ ուրիշ երկրների էակներն արդեն ոչ միայն գիտեին, որ իրենց ներսում առկա է «Ճշմարիտ խղճի» լինելիական Աստվածային ազդակ, որ իրենք կարող են մասնակցություն ունենալ իրենց իսկ սովորական «արթմնի գիտակցության» գործառություններում, որ մեծ մարգարե Աշխաթա Շիեմաշի հիմնած բոլոր եղբայրությունների բոլոր ձեռնադրյալներն ու քրմերը բացատրում և ցույց են տալիս, թե ինչ և ինչպես պետք է անել, որպեսզի այդպիսի Աստվածային ազդակը մասնակցի հիշյալ արթմնի գիտակցության գործառություններում, այլև, դեռ ավելին, համարյա բոլորը սկսեցին ձգտել և գործադրել իրենց բոլոր ուժերը, որպեսզի Խիղճսովողներ եղբայրության քրմեր դառնան, որի շատ մասնաճյուղեր արդեն հիմնվել և այդ ժամանակներում արդեն ինքնուրույնաբար գործում էին Ասիա աշխարհամասի շատ երկրներում:

Իսկ այդ համարյա ինքնուրույն գործող եղբայրությունները կազմավորվել էին հետևյալ կարգով:

Երբ Ջուլֆապալ քաղաքում հիմնադրված եղբայրության սովորական աշխատանքն արդեն վերջնականապես հունի մեջ էր մտել, Սրբազնագույն Աշխաթա Շիամաշն սկսեց հիշյալ Մեծ Ձեռնադրյալներին համապատասխան հրահանգներով առաքել Ասիա աշխարհամասի ուրիշ երկրներ ու քաղաքներ, որպեսզի դրանցում նույնպես կազմավորվեն նման եղբայրություններ, իսկ Ինքը մնաց Ջուլֆապալ քաղաքում, որտեղից էլ ղեկավարում էր իր օգնականների գործունեությունը:

Այսպես թե այնպես, զավա՛կս, այն ժամանակ այնպես եղավ, որ համարյա բոլոր քո սիրելիները՝ այդ արտառոց եռուղեղ էակները, նույնպես ուզում էին իրենց սովորական արթմնի գիտակցության մեջ ունենալ ճշմարիտ Աստվածային օրյեկտիվ խիղճ, ուստի սկսեցին դրան ձգտել իրենց բոլոր ոգի առած լինելիական մասերով, և դրա արդյունքում այն ժամանակվա Ասիայի էակներից շատերը սկսեցին Խիղճսովողներ եղբայրության քրմերի ու ձեռնադրյալների առաջնորդությամբ աշխատել իրենք իրենց վրա, որպեսզի իրենց սովորական գիտակցության մեջ տեղափոխեն իրենց ենթագիտակցության մեջ առկա այն նախադրյալների արդյունքները, որոնք ճշմարիտ Աստվածային խղճի ազդակ են ծնում, և որպեսզի այդպիսով հնարավորություն ստանան մի կողմից՝ ամբողջովին հեռացնելու, գուցե՝ ընդմիջտ, Կունդաբուֆեր օրգանի հատկությունների այն չարաղետ հետևանքները, որոնք կա՛մ հենց իրենք էին ձեռք բերել, կա՛մ ստացել էին ժառանգաբար, և մյուս կողմից՝ գիտակցորեն մասնակցություն ունենալու մեր Համընդհանուր Անսահման Արարչի թախիծը նավազեցնելու գործին:

Այդ ամենի շնորհիվ քո սիրելիների՝ հատկապես Ասիա աշխարհամասում գոյատևողների միջավայրում այդ ժամանակահատվածում լինելիական գոյատևման սովորական գործընթացում խղճի հարցը սկսեց գերակշռել ինչպես արթմնի գիտակցության, այնպես էլ «պասիվ-բնազդային» վիճակներում:

Նույնիսկ այդ ժամանակվա այն եռուղեղ էակները, որոնց ներկայություններում դեռևս չէր գոյափոխվել այդ Աստվածային ազդակի զգացողությունը, բայց որոնք իրենց արտառոց և միայն իրենց բնորոշ ու յուրահատուկ գիտակցության մեջ ընդամենը դատարկ տեղեկություն ունեին այդ լինելիական ազդակի վերաբերյալ, որից կարող էին և ունենալ, նույնպես ջանում էին իրենց ամեն կերպ դրսևորել այդ տեղեկությանը համապատասխան:

Վերը նշվածի արդյունքում տաս երկրային տարում այնտեղ ինքնաբերաբար չքացան սովորական լինելիական գոյատևման աննորմալ կերպով այնտեղ հաստատում գտած այն երկու գլխավոր ձևերը, գլխավորապես որոնցից է բխել և դեռ շարունակում է բխել այն չարաղետ պատճառների մեծ մասը, որոնց համախմբությամբ էլ հենց առաջանում են ամեն տեսակի մանր գործոններ, որոնք խոչընդոտում են քո այդ թշվառ սիրելիների համար լինելիական գոյատևման գոնե արտաքնապես նորմալ պայմանների հաստատմանը:

Հատկանշական է, որ նախ՝ դադարեց գոյություն ունենալ կազմակերպական զանազան ձևեր ընդունած նրանց արտաքին և նույնիսկ ներքին գոյության բազմաթիվ համախմբությունների մասնատումը կամ, իրենց խոսքերով ասած, պետական կազմավորումները, և երկրորդ՝ այդ բազմաթիվ հանրությունների ներսում, կրկին ինքնաբերաբար, չքացան բոլոր այն զանազան դասերն ու դասակարգերը, որոնք վաղուց հաստատվել էին այնտեղ:

Իմ կարծիքով, ինչպես դու ինքդ էլ ի վերջո անկասկած կհասկանաս, հիշյալ հաստատում գտած գլխավոր աննորմալ ձևերից հատկապես երկրորդը, այն է՝ իրար տարբեր դասերի ու դասակարգերի անդամ համարելը, հիմք է հանդիսացել, որ քո այդ թշվառ սիրելիների ընդհանուր

ներկայություններում արմատավորվի հենց այն հոգեկան հատկանիշը, որը համայն Տիեզերքում բնորոշ է բացառապես միայն այդ եռուղեղ էակների ներկայություններին:

Այդ բացառիկ առանձնահատուկ հատկանիշը նրանց մոտ կազմավորվել է այնտեղի երկրորդ Տրանսապայան խոտորումից հետո և, աստիճանաբար իրենց ներսում զարգանալով ու ուժեղանալով, ժառանգաբար փոխանցվել է մի սերնդից մյուսին, այնպես որ հիմա այն անցել է ժամանակակից էակներին՝ որպես նրանց ընդհանուր հոգեկառույցի օրինաչափ ու անքակտելի մասը, և իրենց հոգեկառույցի այդ առանձնահատուկ հատկանիշը հենց իրենք «եսասիրություն» են անվանում:

Երբևէ ավելի ուշ՝ Երկիր մոլորակի վրա ապրող եռուղեղ էակներին վերաբերվող իմ գրույցների մի հարմար պահի, ես քեզ մանրամասն կպատմեմ նաև, թե այնտեղ հաստատված արտաքին լինելիական գոյատևման աննորմալ պայմանների հետևանքով քո սիրելիներն ինչպես են առաջին անգամ իրար համարել առանձին դասեր, և թե ինչպես է հետագա նմանատիպ աննորմալությունների հետևանքով այնտեղ հաստատված այդ փոխհարաբերությունների չարաղետ ձևը հարատևել մինչև ներկա ժամանակները: Իսկ առայժմ, նրանց ընդհանուր հոգեկառույցի այդ բացառիկ առանձնահատուկ հատկանիշի, այսինքն՝ էսասիրության մասին պետք է իմանաս միայն, որ նրանց ընդհանուր ներկայության մեջ այդ առանձնահատուկ հատկանիշի ծագման հնարավորության համար պատճառ է հանդիսացել այն, որ հիշյալ երկրորդ Տրանսապայան խոտորումից անմիջապես հետո այնտեղ հաստատում գտած նույն այդ աննորմալ պայմանների հետևանքով նրանց ընդհանուր հոգեկառույցը երկատվել է:

Դա ինձ համար կատարելապես ակնհայտ դարձավ, երբ այդ մոլորակի մակերևույթի վրա վերջին անգամ լինելուս ընթացքում ես խորապես հետաքրքրվեցի «Իրավիճակի Ահավորություն» կոչվող և Սրբագնագույն Աշխաթա Շիամաշի դատողություններին վերաբերող Լեգումինիզմով: Իմ հետագա մանրակրկիտ պրպտումների ու հետազոտությունների ընթացքում, որոնք վերաբերում էին Նրա Սրբագան Գործունեությանն ու դրա արդյունքներին, ես սկսեցի ուսումնասիրել նաև այն բանի պատճառը, թե ինչու և ինչպես է տեղի ունենում մեր Համընդհանուր Հայր Արարչի Թախծի ճառագման մասնիկներից ստացվող հիշյալ գործոնների բյուրեղացումը, որպեսզի օրյեկտիվ խղճի Աստվածային լինելիական ազդակ իրագործվի նրանց ներկայություններում, այսինքն՝ հատկապես նրանց ենթագիտակցության մեջ, և դրա շնորհիվ խուսափի այն վերջնական այլասերումից, որին ենթարկվում են նրանց ներկայություններում լինելիական Հավատ, Հույս և Մեր ծնելու համար նախատեսված բոլոր նախադրյալները, և ես համոզվեցի, որ նորմայից այդ տարօրինակ շեղումը լիովին հաստատում է մեր մեծապատիվ, անմասն ու պատվարժան Մովլա Նասրեդինի բազմաթիվ իմաստուն ասույթներից մեկը, որը հնչում է այսպես.«Մարդու ամեն մի իսկական երջանկություն կարող է ծագել բացառապես իր իսկ արդեն ապրած իսկական դժբախտությունից»:

Նրանց ընդհանուր հոգեկառույցի հիշյալ երկատվածությունը բխել է այն բանից, որ, մի կողմից՝ զանազան, այսպես կոչված, «անհատական նախաձեռնություններ» են սկսել բխել նրանց ներկայություններում ծագող այն տեղայնացումից, որը մշտապես իշխող է իրենց արթմնի գոյության վիճակում և որը ոչ այլ ինչ է, եթե ոչ դրսից եկած և իրենց աննորմալ շրջապատից ստացած տպավորությունների պատահական ընկալումների արդյունքը՝ ընկալումներ, որոնց համախմբությունն իրենք «գիտակցություն» են անվանում, և մյուս կողմից՝ նմանատիպ անհատական նախաձեռնությունները նաև սկսել են բխել, ինչպես բնորոշ է իրենց, այն նորմալ տեղայնացումից, որն առկա է լինում ամեն մի էակի ներկայության մեջ և իրենց կողմից անվանվում է «ենթագիտակցություն»:

Եվ քանի որ իրենց գոյատևման արթմնի վիճակում հիշյալ անհատական նախաձեռնությունները բխում են այդպիսի տարբեր տեղայնացումներից, ապա նրանցից յուրաքանչյուրն իր առօրեական գոյատևման ընթացքում, այսպես ասած, երկատվում է երկու ինքնուրույն անձի:

Այստեղ պետք է ասել, որ հենց այդ հիշյալ երկատվածությունն է պատճառ դարձել, որ նրանց ներկայություններում աստիճանաբար կորստյան մատնվի եռուղեղ էակի համար անհրաժեշտ այն ազդակը, որն «անկեղծություն» է կոչվում:

Ավելի ուշ նրանց մեջ նույնիսկ արմատավորվել է հենց նոր հիշատակված «անկեղծություն» կոչվող լինելիական ազդակը՝ դիտավորյալ կերպով ոչնչացնելու գործառույթ, և հիմա այնտեղի եռուղեղ էակները, իրենց սկզբնավորման օրից սկսած, կամ, ինչպես իրենք են ասում, իրենց «ծննդյան» օրից,

հենց նրանց կողմից, ովքեր իրենց արտադրողներն են կամ, ինչպես իրենք են ասում, ծնողների կողմից, վարժեցվում են լրիվ հակառակ ազդակին՝ «խաբեությանը»:

Երկիր մոլորակի ժամանակակից էակների մոտ այնպես է արմատավորվել իրենց երեխաներին սովորեցնելն ու ներչնչելը, որ անկեղծ չլինեն ուրիշների հետ ու խաբեն ամեն առիթով, որ դա արդեն պարտք են համարում իրենց երեխաների հանդեպ, և նրանց նկատմամբ այդպիսի վերաբերմունքն անվանել են «դաստիարակություն»:

Նրանք այդպես են դաստիարակում իրենց երեխաներին, որպեսզի վերջիններս երբեք չկարողանան վարվել այնպես, ինչպես բնագոյաբար հուշում է իրենց ներսում առկա «խիղճը», այլ միայն այնպես, ինչպես հանձնարարվում է «լավ վարվելակերպի» կանոններով, որոնք սովորաբար կազմվել ու կազմվում են կրկին նույն «տհասնամուսի» զանազան թեկնածուների կողմից:

Եվ իհարկե, երբ այդ երեխաները մեծանում են ու դառնում պատասխանատու էակներ, արդեն ինքնաբերաբար իրենց արարքներով ու դրսևորումներով լինում են հենց այնպես, ինչպես իրենց սովորեցրել, ներշնչել և «լարել են», մի խոսքով՝ ինչպես դաստիարակվել են:

Այդ ամենի հետևանքով, այն խիղճը, որը կարող էր և լինել այդ մոլորակի էակների գիտակցության մեջ, վաղ մանկությունից «դեպի ներս է քշվում» այնպես, որ երբ նրանք հասուն մարդիկ են դառնում, հիշյալ խիղճը մնացած է լինում միայն իրենց այն մասում, որին իրենք «ենթագիտակցություն» են անվանում:

Դրա արդյունքում նշածս այն նախադրյալների գործառությունը, որոնք նրանց ներկայություններում ծնում են խղճի հիշյալ Աստվածային ազդակը, արդեն վաղուց դադարել է մասնակցություն ունենալ նրանց այն գիտակցության մեջ, որն իրենք ունենում են արթմնի գոյության վիճակում:

Ահա թե ինչու, տղա՛ս, այդ սրբազան լինելիական ազդակի առաջացման համար անհրաժեշտ և Վերևից բխած նախադրյալների Աստվածային դրսևորումների բյուրեղացումը նրանց ընդհանուր ներկայություններում կայանում է միայն նրանց ենթագիտակցության մեջ, որն էլ դադարել է մասնակցություն ունենալ նրանց սովորական առօրեական գոյատևման գործընթացում, և դրանով իսկ այդ նախադրյալները փրկվել այն «այլասերումից», որին ենթարկվել են այն բոլոր սրբազան լինելիական ազդակները, որոնք պետք է որ առկա լինեին նրանց ներկայություններում, այն է՝ Հավատի, Միտք և Հույսի ազդակները:

Դեռ ավելին, եթե այս կամ այն պատճառով հիշյալ լինելիական ազդակի համար անհրաժեշտ և նրանց ներկայություններում բյուրեղացված նախադրյալների գործողությունն այժմ դուրս գա իրենց ենթագիտակցությունից և ձգտի մասնակցել իրենց աննորմալ ձևով կազմավորված սովորական «գիտակցության» գործառություններում, ապա նրանք չեն էլ հասցնի գիտակցել, որ հենց իրենք դրա դեմ անմիջապես միջոցներ են ձեռնարկում, որպեսզի խուսափեն նման բանից, քանի որ այնտեղ այժմ գոյություն ունեցող պայմաններում արդեն անհնարին է դարձել իրենց ներկայություններում ճշմարիտ օբյեկտիվ խղճի այդ Աստվածային ազդակի գործունեության առկայությամբ գոյատևելը:

Այն ժամանակից սկսած, երբ քո սիրելիների ներկայությունների մեջ լիովին «պատվաստվեց» հիշյալ եսասիրությունը, այդ յուրատեսակ լինելիական հատկությունն իր հերթին դարձավ այն հիմնական գործոնը, որը նպաստում էր նրանց ընդհանուր հոգեկառույցում այնպիսի տվյալների աստիճանական բյուրեղացմանը, որոնք նրանց ներսում առաջացրին ևս մի քանի կատարելապես բացառիկ ու յուրահատուկ լինելիական ազդակներ, որոնք այժմ գոյություն ունեն հետևյալ անուններով՝ «խորամանկություն», «նախանձ», «ատելություն», «կեղծավորություն», «արհամարհանք», «մեծամտություն», «ստրկամտություն», «նենգություն», «պատվամոլություն», «երկերեսանիություն» և այլն, և այլն:

Նրանց հոգեկառույցի հենց նոր թվարկածս բացառիկ ու յուրատեսակ հատկանիշները, որոնք բոլորովին սազական չեն եռուղեղ էակին, արդեն ամբողջովին բյուրեղացվել էին քո սիրելիներից մեծ մասի ներկայություններում և Աշխարհ Շիեմաշի ապրած ժամանակաշրջանից շատ ավելի վաղ շրջանում դարձել նրանցից յուրաքանչյուրի հոգեկառույցի անխուսափելի հատկանիշները, բայց երբ նրանց լինելիական գոյատևման ընթացքում սկսեց հաստատվել և ինքնաբերաբար ընթանալ գոյատևման այն նոր տեսակը, որը նպատակամղված կերպով նրանց մեջ հաստատեց Ինքը՝ Աշխարհ Շիեմաշը, ապա նրանց հոգեկառույցի մեջ մինչև այդ առկա արտառոց հատկանիշներն ամբողջովին չքացան այնտեղի եռուղեղ էակների մեծ մասի ներկայություններից: Մակայն հետագայում, երբ նրանք

հենց իրենց ձեռքով ոչնչացրին Էաբուխ-Սիրող Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքի բոլոր արդյունքները, իրենց համար չարաղետ այդ նույն հատկանիշներն աստիճանաբար կրկին ծագեցին նրանց մեջ, իսկ այնտեղի ներկայիս Էակների համար դրանք արդեն իրենց ողջ էության դրսևորման հիմքն են:

Այսպիսով, զավակ, երբ քո սիրելիների ընդհանուր ներկայություններում ծագեցին եսասիրություն կոչվող այդ «եզակի-յուրօրինակ» լինելիական ազդակը ծնող նախադրյալները, և այդ «եզակի-հատկանիշ» եսասիրությունը, աստիճանաբար զարգանալով և իրենից բխող նույնպես յուրօրինակ ուրիշ նոր գործոններ առաջացնելով այս անգամ արդեն երկրորդական լինելիական ազդակների համար, նրանց կառուցում գրավեց «Միահեծան-Լիիշխան-Կառավարչի» դիրք, այդ Աստվածային լինելիական ազդակի ոչ միայն բոլոր դրսևորումները, այլ նաև նույնիսկ «ծագման ցանկությունները» խանգարիչ հանգամանքի վերածվեցին այդ Միահեծան Կառավարչի գործունեության համար: Եվ դրա արդյունքում, երբ ի վերջո քո սիրելիները, արդեն անհրաժեշտությունից դրդված, ինչպես գիտակցաբար, այնպես էլ անգիտակցաբար միշտ և ամեն ինչում խոչընդոտում էին այդ ազդակի մասնակցությանն իրենց այն գիտակցության գործելու ընթացքին, որի ղեկավարությամբ իրենց բնորոշ է դարձել գոյատևել ցերեկային արթնության վիճակում, ապա այդ Աստվածային նախադրյալների ազդեցությունն աստիճանաբար, այսպես ասած, վտարվեց նրանց սովորական «գիտակցության» շրջանակներից և մասնակցություն էր ունենում միայն նրանց ենթագիտակցության գործունեության շրջանակներում:

Եվ միայն այն բանից հետո, երբ իմ մանրակրկիտ պրպտումներն ու հետազոտություններն ինձ համար հստակեցրին բոլոր այս վերը շարադրածս բաները, ես հասկացա, թե ինչու մինչև հիմա դեռ գոյություն ունեն այդ դասային ու դասակարգային բաժանումները, որոնք այդքան չարաղետ են իրենց համար:

Իմ վերջին փորձական պրպտումներն ու հետազոտությունները հստակորեն ու որոշակիորեն ցույց տվեցին ինձ, որ իրենց այն գիտակցության մեջ, որին իրենք ենթագիտակցություն են անվանում, նույնիսկ ներկայիս Էակների մոտ իսկապես դեռևս շարունակում են բյուրեղանալ և, հետևաբար, իրենց ողջ գոյատևման ընթացքում միշտ առկա են լինում հիշյալ այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ են, որ իրենց ներկայություններում ի հայտ գա այդ հիմնարար Աստվածային ազդակ-խիղճը:

Եվ այն հանգամանքը, որ այդ Աստվածային լինելիական ազդակի այդ նախադրյալները դեռևս բյուրեղանում են, և դրանց դրսևորումները դեռ շարունակում են մասնակցություն ունենալ նրանց լինելիական գոյատևման մեջ, իմ հիշյալ հետազոտություններից բացի հաստատվում է նաև այն բանով, որ Մարս մոլորակից կատարած իմ դիտումների ընթացքում ես հաճախ ոչ քիչ դժվարություններ եմ կրել դրանց պատճառով:

Բանն այն է, որ ես Մարս մոլորակից իմ տեսքահանով կարող էի առանց որևէ դժվարության հանգիստ դիտել այդ արևային համակարգության ցանկացած ուրիշ մոլորակի մակերևույթի վրա տեղի ունեցող գոյատևման գործընթացները, սակայն դրանց դիտումը քո այդ մոլորակի մակերևույթի վրա իսկական տանջանքի էր վերածվում ինձ համար՝ դրա մթնոլորտի յուրօրինակ գունավորման պատճառով:

Ինչպես հետո պարզեցի, այդ յուրօրինակ գունավորման պատճառն այն էր, որ ժամանակ առ ժամանակ այդ մթնոլորտի ներկայության մեջ մեծ քանակությամբ բյուրեղացումներ էին ի հայտ գալիս, որոնք քո սիրելիների ներկայությունների հաճախակի ճառագայթումների հետևանքն էին, որոնք առաջանում էին այն յուրատեսակ ներքին ազդակի պատճառով, որին իրենք «Խղճի խայթ» են անվանում:

Դրա բացատրությունն այն է, որ նրանցից ոմանց մոտ երբեմն ծագող ու ապրվող որոշ, այսպես կոչված, «օրգանական ամոթի խթաններից» առաջացած զգացողությունները, որոնք նախկին ինչ-որ տպավորությունների արդյունք են լինում, որոնք էլ, ինչպես արդեն քեզ ասել եմ, գլխավորապես բաղկացած են լինում ամեն տեսակի, այսպես կոչված, «դատարկ բաներից»՝ համարյա միշտ փոփոխվում են, հանդարտվում, երբեմն էլ ժամանակավորապես լրիվ դադարում: Արդյունքում այնտեղի այդ եռուղեղ Էակների ընդհանուր ներկայություններում ինքնաբերաբար գործառությունների այնպիսի համակցություն է ստացվում, որը ժամանակավորապես ազատություն է տալիս նրանց ենթագիտակցության մեջ առկա և խղճի Աստվածային ազդակի դրսևորման համար

անհրաժեշտ նախադրյալներին, որոնք էլ մասնակցություն են ունենում նրանց սովորական գիտակցության գործունեության մեջ ծնելով հիշյալ Խղճի խայթը:

Եվ այն բանի արդյունքում, որ այդ Խղճի խայթերն առաջացնում են հիշյալ յուրօրինակ բյուրեղացումները, որոնք նրանցից դուրս են ելնում մյուս ճառագայթումների հետ, այդ ճառագայթումների ամբողջությունը նրանց մոլորակի մթնոլորտին ժամանակ առ ժամանակ տալիս էր այն յուրահատուկ գունավորումը, որը լինելիական տեսողական օրգանին խանգարում է թափանցել մթնոլորտի միջով:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ քո սիրելիները, հատկապես ժամանակակիցները, կատարելապես սովորել են թույլ չտալ իրենց այդ Խղճի խայթ կոչվող ներքին ազդակին, որ երկար մնա իրենց ընդհանուր ներկայության մեջ:

Շենց որ զգում են իրենց ներսում այդպիսի լինելիական ազդակի գործելու սկիզբը կամ թեկուզ, այսպես ասած, «թեթն ծակոցը», ապա անհապաղ, ինչպես ասում են, «ճնշում են» այն, որից հետո այդ դեռևս լրիվ չձևավորված ազդակն անմիջապես մարում է:

Իրենց ներսում ամեն մի այդպիսի Խղճի խայթի «ճնշման» համար նրանք նույնիսկ հորինել են հատուկ, շատ արդյունավետ միջոցներ, որոնք այնտեղ ներկայումս գոյություն ունեն «ալկոհոլիզմ», «կոկաինիզմ», «մորֆինիզմ», «նիկոտինիզմ», «օսանիզմ», «վանականիզմ», «աթենացիիզմ» և այլ անուններով, որոնք բոլորը «իզմ»-ով են վերջանում:

Կրկնեմ, զավա կս, որ հարմար առիթով ես քեզ մանրամասն կպատմեմ այն արդյունքների մասին, որոնք բխել են այնտեղ հաստատված սովորական գոյության աննորմալ պայմաններից, որոնք էլ ազդակ են դարձել այնտեղ այդ չարաղետ կաստայական բաժանումների ծագման ու մշտական գոյատևման համար:

Ես անպայման դա քեզ կբացատրեմ, քանզի այնտեղի աննորմալ վիճակի առկայությունը պարզաբանող տեղեկությունները շատ լավ նախադրյալներ կարող են ծառայել քեզ համար, որպեսզի հետագայում տրամաբանական համեմատություններ անես քեզ հետաքրքրած այդ եռուղեղ էակների հոգեկառույցային տարօրինակություններն ավելի լավ հասկանալու համար:

Իսկ առայժմ ներքուստ կանխավ իմացիր, որ երբ քո սիրելիների ընդհանուր ներկայություններում ամբողջովին կազմավորվեց հիշյալ «եսասիրություն» կոչվող յուրահատուկ հոգեկան հատկանիշը, իսկ ավելի ուշ՝ նաև իմ կողմից հիշատակված զանազան այլ երկրորդական ազդակներ, որոնք բխել և շարունակում են բխել առաջինից, և, դեռ ավելին, այն բանի հետևանքով, որ սրբազան խղճի ազդակը բոլորովին մասնակցություն չի ունենում նրանց արթմնի գիտակցության գործունեության մեջ, այնժամ, ինչպես Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի ապրած ժամանակներից առաջ, այնպես էլ հետո, Երկիր մոլորակի վրա սկզբնավորվող և գոյատևող եռուղեղ էակները ձգտել են և էլի շարունակում են ձգտել իրենց գոյատևման ողջ ընթացքում իրենց բարեկեցությունը կազմակերպել բացառապես ամեն մեկն իր համար:

Եվ քանի որ մեր հսկա Տիեզերքի ընդհանրապես ոչ մի մոլորակի վրա բավարար քանակով գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ այն ամենը, ինչն անհրաժեշտ է հավասարապես բոլորի բարեկեցությունն ապահովելու համար՝ անկախ, այսպես կոչված, «օբյեկտիվ ծառայություններից», ապա դրանից հետևում է, որ մեկի բարգավաճումը պետք է կառուցվի շատերի թշվառության վրա:

Ահա հենց այդ սեփական բարեկեցության հոգսն է աստիճանաբար նրանց հոգեկառույցում բյուրեղացրել իմ հիշատակած այն չափից դուրս աննախադեպ ու յուրօրինակ հատկանիշները, ինչպիսիք են՝ «խորամանկությունը», «արհամարհանքը», «ատելությունը», «ստրկամտությունը», «քծանքը» և այլն, որոնք էլ իրենց հերթին, մի կողմից՝ արտաքին դրսևորման այնպիսի գործոններ են, որոնք սազական չեն եռուղեղ էակներին, և մյուս կողմից՝ պատճառ են դառնում, որ աստիճանաբար ոչնչացվեն Մեծ Բնության կողմից իրենց մեջ ներդրված ներքին այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են «Բանական Ամբողջի» մասնիկներ դառնալու համար:

Եվ ահա, տղա՛ս, այն ժամանակ, երբ Էաբուխ-Սիրող Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների արդյունքներն արդեն սկսեցին միախառնվել նրանց, այսպես կոչված, «ներքին ու արտաքին» լինելիական գոյատևման գործընթացների հետ, և երբ դրա շնորհիվ նրանց արթմնի գիտակցության գործունեության մեջ սկսեցին մասնակցություն ունենալ իրենց ենթագիտակցության մեջ դեռևս պահպանված խղճի Աստվածային ազդակի նախադրյալները, նրանց ինչպես անձնական,

այնպես էլ ուրիշների հետ փոխհարաբերություններ պարունակող լինելիական գոյության մեջ սկսեց տեղի ունենալ այն, ինչ տեղի է ունենում մեր հսկա Տիեզերքի բոլոր այն մոլորակների վրա, որոնցում բնակվում են եռուղեղ էակներ:

Այդ ժամանակներում նաև քո սիրելիները սկսեցին իրար վերաբերվել ինչպես էակների, որոնք տարբերվում են միայն Միասնական Համընդհանուր Արարչի դրսևորման աստիճանով, ինչպես նաև սկսեցին իրար հարգել միայն այն արժանիքներին համապատասխան, որոնք անձնապես ձեռք են բերվում «լինելիական Պարտք-պարտականության» շնորհիվ, այսինքն՝ անձնական գիտակցական աշխատանքով և կամավոր տառապանքով:

Ահա թե ինչու այդ ժամանակահատվածում այնտեղ դադարեցին գոյություն ունենալ նրանց սովորական գոյատևման այն երկու հիշյալ գլխավոր ու չարաղետ բաժանման ձևերը՝ առանձին անկախ հանրությունները և հենց դրանց ներսում առանձին դասերի ու դասակարգերի բաժանվելը:

Եվ այդ ժամանակ այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա, բոլոր եռուղեղ էակներն իրենց և իրենց նմաններին համարում էին պարզապես այնպիսի էակներ, որոնք իրենց մեջ կրում են մեր Համընդհանուր Հայր Արարչի Թախծի մասնիկները:

Այդ ամենն այդպես եղավ, որովհետև երբ Աստվածային լինելիական ազդակի նախադրյալների ազդեցությունն սկսեց մասնակցություն ունենալ նրանց սովորական արթմնի գիտակցության մեջ, և այդ եռուղեղ էակներն իրար միջև հարաբերություններ հաստատեցին բացառապես իրենց խղճի թելադրանքով, հետևանքն այն եղավ, որ տերերը դադարեցին ազատությունից զրկել իրենց ստրուկներին, իսկ զանազան իշխանավոր էակներ կամավոր հրաժարվեցին իրենց անարժան արտոնություններից՝ զոջալով ու հասկանալով, որ իրենց այդ արտոնություններն ու գրաված պաշտոնները ոչ թե ծառայում են ընդհանուր բարօրությանը, այլ միայն իրենց այնպիսի անձնական թուլությունների բավարարմանը, ինչպիսիք են՝ «փառասիրությունը», «եսամոլությունը», «ինքնահանգստացումը» և այլն:

Իհարկե, այդ ժամանակահատվածում շարունակում էին գոյություն ունենալ ամեն տեսակի պետեր, տնօրեններ և «խորհրդական-մասնագետներ», բայց նրանք այդպիսին էին դարձել գլխավորապես իրենց տարիքի և, այսպես կոչված, «էաբուխ ունակությունների» շնորհիվ, ինչպես ամենուրեք ընդունված է Տիեզերքի այն մոլորակների վրա, որոնցում բազմանում են ինքնակատարելագործման տարբեր աստիճանների հասած եռուղեղ էակներ. նաև նրանք այդպիսին էին դարձել ոչ ժառանգական իրավունքի կամ ընտրությունների արդյունքների հիման վրա, ինչպես լինում էր Աշխաթայի օրհնյալ ժամանակներից առաջ և այդպես դարձավ դրանից հետո՝ շարունակվելով ընդհուպ մինչև ներկա ժամանակները:

Բոլոր այդ պետերը, տնօրեններն ու խորհրդականներն այն ժամանակներում այդպիսին էին դառնում իրենց անձնական արժանիքների հիման վրա, որոնք իրապես տեսանելի էին լինում իրենց շրջապատող էակների համար:

Եվ դա տեղի էր ունենում հետևյալ կերպ:

Այդ մոլորակի բոլոր էակներն այն ժամանակ ջանում էին, որ իրենց գիտակցության մեջ ձեռք բերեն ճշմարիտ խղճի Աստվածային գործառույթ, և այդ նպատակով, ինչպես լինում է Տիեզերքում ամենուրեք, իրենց մեջ կանխաստեղծում էին, այսպես կոչված, «լինելիական փոխառու ձգտումներ», որոնց թիվը հինգն էր: Դրանք են՝

առաջին. սովորական լինելիական գոյության համար ունենալ բոլոր այն իսկապես անհրաժեշտ բաները, որոնք պահանջվում են մոլորակային մարմնի կարիքները հոգալու համար;

երկրորդ. մշտական և չթուլացող պահանջ ունենալ լինելիության իմաստով ինքնակատարելագործվելու նկատմամբ;

երրորդ. գիտակցաբար ձգտել ավելի ու ավելի շատ բան իմանալ Աշխարհաստեղծման և Աշխարհապահպանման օրենքների մասին;

չորրորդ. գոյատևման սկզբից սկսած՝ հատուցել սեփական ծագման և անհատականության համար որքան հնարավոր է շուտ, որպեսզի հետո ազատագրվելով՝ հնարավորինս քչացնել մեր Համընդհանուր Հոր Թախիծը,

և հինգերորդ՝ միշտ նպաստել ինչպես իր նման էակների, այնպես էլ այլ տեսակի էակների կատարելագործմանը, մինչև որ նրանք հասնեն «Մարդիտ» կոչվող սրբազան աստիճանին, այսինքն՝ Ինքնաանհատականության վերածվելու աստիճանին:

Այդ ժամանակահատվածում, երբ բոլոր եռակենտրոն էակներն ապրում և գիտակցաբար աշխատում էին իրենց վրա այդ հինգ ձգտումներին համապատասխան, նրանցից շատերը շատ արագ հասան արդյունքների՝ այնպիսի օբյեկտիվ նվաճումների, որոնք զգալի էին ուրիշների համար:

Իհարկե, այդ օբյեկտիվ նվաճումներն այն ժամանակ, ինչպես ասվում է, «գրավում էին» շրջապատում եղածների ուշադրությունը, որոնք էլ, դրանից ելնելով, նվաճումների հասածներին առանձնացնում էին իրենց միջավայրից և արժանացնում ամենայն հարգանքի. նրանք նաև ուրախությամբ ձգտում էին արժանանալ այդ ականավոր էակների ուշադրությանը և նրանցից ստանալ հանձնարարականներ ու խորհուրդներ, որպեսզի դրանց միջոցով իրենք էլ հասնեն կատարելության:

Այդ ժամանակվա ականավոր էակները ևս սկսեցին իրենց միջից առանձնացնել ամենաառաջադեմին, և այդ ամենաառաջադեմ էակն ինքնաբերաբար՝ առանց ժառանգական կամ այլ իրավունքի, դառնում էր բոլորի գլխավորը, և նրա համընդհանուր ճանաչում գտած այդ գլխավորի ցուցումները տարածվում էին ոչ միայն քո մոլորակի առանձին իրար հարևան տարածքներում, այլ նույնիսկ նաև հարևան աշխարհամասներում ու կղզիներում:

Այն ժամանակ այդպիսի գլխավորի խորհուրդը, առաջնորդությունը և ընդհանրապես ամեն մի խոսքն այնտեղ օրենք էր դառնում բոլոր եռուղեղ էակների համար և վերջիններիս կողմից ի կատար էր ածվում ամենայն նվիրվածությամբ և ուրախությամբ. ո՛չ այնպես, ինչպես դա լինում էր նախքան Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների արդյունքների ի հայտ գալը, և ո՛չ այնպես, ինչպես կրկին սկսեց լինել այն բանից հետո, երբ հենց իրենք ոչնչացրին Նրա Սրբազնագույն Աշխատանքների պտուղները:

Այսինքն այդ արտառոց եռուղեղ էակները՝ քո սիրելիները, ներկայումս կատարում են իրենց «գլխավորների» և, այսպես կոչված, «թագավորների» զանազան հրամաններն ու կարգադրությունները՝ միայն այն, այսպես կոչված, «սվինների» և «ոջլոտ Բանտախցերի» նկատմամբ վախի ազդեցությամբ, որոնցից իրենց տրամադրության տակ առատորեն ունեն այդ գլխավորներն ու թագավորները:

Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների արդյունքները խիստ որոշակի դրական ազդեցություն ունեցան քո սիրելիների հոգեկառույցային դրսևորման այն ահավոր առանձնահատկության վրա, որը կոչվում է «մեկը մյուսի գոյությանը վերջ տալու անհաղթահարելի պարբերական մղում»:

Իրենց հոգեկառույցի այդ ահավոր առանձնահատկությունից բխող և այնտեղ հաստատված փոխադարձ ոչնչացման այդ գործընթացն այն ժամանակ լիովին դադարեց Ասիա աշխարհամասում, բայց ժամանակ առ ժամանակ սկիզբ էր առնում քո այդ մոլորակի մակերևույթի առանձին մանր ու մեծ հատվածների վրա, որոնք բավականաչափ հեռու էին գտնվում Ասիա աշխարհամասից: Եվ դա շարունակվում էր, քանի որ ձեռնադրյալների ու քրմերի ազդեցությունը հեռավորության պատճառով չէր հասնում ու կանխագոյանում մոլորակի մակերևույթի այդ մասերում ապրող էակների ներկայությունների մեջ:

Սակայն Աշաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների ամենագարմանալի ու նշանակալի արգասիքն այն եղավ, որ այդ ժամանակահատվածում ոչ միայն երկարեց այդ դժբախտների կյանքի տևողությունը, այլ նաև նվազեց, այսպես կոչված, «մահացությունը», և միաժամանակ իրենց այն պտուղների թիվը, որոնք իրենց տեսակն են շարունակում, կամ, այլ կերպ ասած, «ծնելիությունը» նվազեց ամենաքիչը հինգ անգամ:

Դրանով իսկ՝ գործնականում դրսևորվեց տիեզերական օրենքներից մեկը, այն է՝ այսպես կոչված, «թրթիռների հավասարակշռության օրենքը», այն թրթիռների, որոնք առաջանում են տիեզերական նախանյութերի էվոլյուցիայից և ինվոլյուցիայից, որոնք անհրաժեշտ են Մեծագույն Համատիեզերական Տրոգոավտոեգոկրատի համար:

Ինչպես մահացության, այնպես էլ ծնելիության թվերի նվազումը տեղի է ունեցել այն պատճառով, որ եռակենտրոն էակի համար նորմալ համարվող գոյատևմանը մոտենալուն զուգընթաց նրանք սկսեցին ճառագել այնպիսի թրթիռներ, որոնք ավելի լավ էին համապատասխանում Մեծ Բնության պահանջումներին, ինչի շնորհիվ էլ Բնությունն ավելի քիչ թրթիռներ էր պահանջում, որոնք սովորաբար առաջանում են էակների գոյության ոչնչացումից:

Դու նաև « թրթիռների հավասարակշռության» այդ տիեզերական օրենքն ավելի լավ կհասկանաս, երբ ես հարկ եղած ժամանակ, ինչպես արդեն բազմիցս խոստացել եմ, մանրամասնորեն քեզ բացատրեմ բոլոր հիմնական ընդհանուր տիեզերական օրենքները:

Հատկապես այդպես, զավակս, և հենց այդ հաջորդականությամբ է այն ժամանակ աստիճանաբար, շնորհիվ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի գիտակցական ջանքերի, կերտվել քո սիրելիների համար աննախադեպ հիշյալ բարեկեցությունը, սակայն, ի անսահման թախիծ Բանականության բոլոր աստիճանակարգերի քիչ թե շատ գիտակից մտածող անհատների, Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի այդ մոլորակը լքելուց շատ չանցած, հենց իրենք՝ այդ թշվառները, ընդհանրապես հնուց ի վեր իրենց բնորոշ այն վերաբերմունքի պատճառով, որ ցուցաբերում են իրենց նախնիների բարի նվաճումների հանդեպ, ամբողջովին ոչնչացրին եղածը. ոչնչացրեցին և իրենց մոլորակի մակերևույթի վրայից իսպառ քամուն տվին նաև ամբողջ բարեկեցությունը, և դա արեցին այնպես, որ նույնիսկ շուրջ այն մասին, որ երբևէ նման երանելի վիճակ է եղել իրենց մոլորակի վրա, չի հասել այնտեղի ներկայիս էակներին:

Թերևս որոշ արձանագրություններում, որոնք վաղեմի ժամանակներից հասել են այդ մոլորակի ժամանակակից էակներին, կան որոշակի կցկտուր տեղեկություններ այն մասին, որ իրենց մոլորակի վրա ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել հատուկ տեսակի, այսպես կոչված, «պետական կազմավորում», և ամեն մի այդպիսի պետության գլուխ կանգնած են եղել բարձրագույն արժանիքներ ունեցող էակներ:

Եվ այդ տեղեկությունների հիման վրա ժամանակակից էակները կարողացել են միայն անուն հորինել այդպիսի պետական կազմավորման համար, և ուրիշ ոչինչ. նրանք դա անվանել են «քրմապետություն»:

Բայց, ի՞նչ էր ներկայացնում իրենից այդ քրմապետությունը, ինչպիսին և ինչի՞ համար էր... Մի՞թե Երկիր մոլորակի ժամանակակից եռուղեղ էակների համար միևնույնը չէ, թե ինչեր են արել այդ հինավուրց վայրենիները...»

ԳԼՈՒԽ ԻԸ

Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն Աշխատանքների բոլոր արգասիքների ոչնչացման գլխավոր մեղավորը

«Հիշում ես, ես քեզ արդեն ասել եմ, որ այնտեղ առաջացած այն գործոնների նախաձեռնման հիմքը, որոնք պատճառ են դարձել Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի՝ հանուն քո սիրելիների հետագա սերունդների գիտակցորեն ի կատար ածած աշխատանքների բարեշնորհ արդյունքների դեռևս պահպանված մնացորդների վերջնական ոչնչացման համար, ստեղծվեց ո՛չ Երկրի բոլոր ծագերից Բաբելոնում հավաքված գիտուն էակների կողմից, և որ վերջիններս ընդամենը նման էին «վարակ տարածող մանրէների», որոնք անգիտակցաբար ամեն տեսակի չարիքներ էին տարածում ինչպես հենց իրենց, այնպես էլ հետագա սերունդների համար, ինչը վաղուց բնորոշ է դարձել հատկապես նոր տեսակի երկրային գիտուն էակների մեծամասնությանը:

Հետագա բոլոր մեծ ու փոքր չարաղետ գործերի և այն ժամանակվա գիտուն էակների անգիտակցական չարաղետ դրսևորումների հիմքը, որը պատճառ դարձավ այնտեղի եռուղեղ էակների համար բարերար և Էաբուխ-Միրող Աշխաթա Շիեմաշի Սրբազնագույն գիտակցական Աշխատանքների արգասիքների նույնիսկ վերջին մնացորդների ոչնչացման համար, ինչպես ցույց տվեցին այդ Սրբազնագույն Գործունեության հետագա բախտի վերաբերյալ իմ հերթական մանրագին հետազոտությունները, եղել է իր ժամանակին անուն հանած և նոր տեսակի գիտուն էակների դասին պատկանող, Լենտրոհամասնին անունը կրող մի գիտուն էակի «հորինվածքը»:

Ներքին, այսպես կոչված, «ծանրության երկկենտրոնական» գոյատևման հետևանքով երկրային այդ եռուղեղ էակի «բարձրագույն լինելիական մասը» հանդերձավորվել և կատարելագործվել է մինչև պահանջված Օբյեկտիվ Բանականության աստիճանին հասնելը, և հետագայում այդ «բարձրագույն լինելիական մասը» դարձել է, ինչպես արդեն քեզ ասել եմ, այն 313 «բարձրագույն լինելիական

մարմիններից» մեկը, որոնք կոչվում են «Հավերժական Shասնամուսական Անհատականություններ և հանգրվանում են «Հավերժական Հատուցում» կոչվող փոքրիկ մոլորակի վրա:

Հիմա, երբ խոսքը վերաբերում է Լենտրոհամասնին անունով այդ երկրային եռուղեղ էակին, խստորեն ասած, հարկ է, որ ես կատարեմ իմ խոստումը և մանրամասն բացատրեմ քեզ «տհասնամուս» բառի իմաստը, սակայն ես դա դեռ մի փոքր էլ կհետաձգեմ, մինչև իմ գրույցի ընթացքում ավելի հարմար պահ լինի դրա համար:

Հիշյալ չարանենգ «հորինվածքը» կամ, ինչպես ժամանակակից երկրային նոր տեսակի գիտուն էակներն իրենք են անվանում՝ «շարադրանքը», նույնիսկ՝ «ստեղծագործությունը», ի կատար է ածվել, ինչպես արդեն քեզ ասել եմ, այն բանից ավելի քան երկու դար առաջ, երբ ես հինգերորդ անգամ հայտնվեցի այդ մոլորակի վրա և առաջին անգամ այցելեցի Բաբելոն քաղաքը, որտեղ, մասամբ՝ ստիպողաբար, մասամբ՝ ինքնակամ հավաքվել էին այդ մոլորակի բոլոր ծագերից եկած գիտուն էակներ:

Նախկին դարերի այդ գիտուն էակի չարանենգ շարադրանքը հիշյալ բաբելոնյան դարաշրջանի գիտուն էակներին էր հասել շնորհիվ, այսպես կոչված, «կաշիրայթեր¹⁹¹»-ի, որի վրա հիշյալ գիտնական Լենտրոհամասնինը գրառել էր իր հորինվածքը:

Անհրաժեշտ եմ համարում քեզ մի փոքր ավելի մանրամասն պատմել այդ Լենտրոհամասնինի ծագման պատմությունը և այն, թե նրա շրջապատի ինչ պատահական հանգամանքների բերումով է նա հետագայում դարձել նշանավոր գիտուն էակ և հեղինակություն համարյա ամբողջ մոլորակի իր ժամանակակից էակների համար:

Այն բանից զատ, որ այդ պատմությունը շատ բնութագրական է, այն նաև կարող է շատ լավ լուսաբանող օրինակ ծառայել այն գործառության համար, որը վաղուց է ամուր տեղ գտել քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների գոյատևման գործընթացում, ինչի արդյունքում նրանցից ոմանք նախ, այսպես ասած, հեղինակություն են դառնում նոր տեսակի գիտուն էակների միջավայրում, որից հետո՝ նաև այնտեղի բոլոր թշվառ էակների համար:

Այդ Լենտրոհամասնինի սկզբնավորման և ապա որպես պատասխանատու էակ կազմավորվելու պայմաններին վերաբերվող մանրամասներն ինձ հայտնի դարձան իմիջիայլոց, երբ ես ուսումնասիրում էի, թե քո սիրելիների արտառոց հոգեկառույցի հատկապես ո՞ր կողմերն են հիմք ծառայում, որ աստիճանաբար փոփոխվեն և ապա վերջնականապես իրենց լինիական գոյատևման ընթացքում լրիվ ոչնչանան բոլոր այն հատուկ օգտակար ձևերն ու սովորույթները, որոնք մտցվել և ամուր հաստատվել էին այդ գործընթացում՝ իդեալականորեն նախատեսված լինելով ներկայումս Համատիեզերական Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշի Բանականության կողմից այն ժամանակ, երբ Նա նախապատրաստվում էր դառնալու այն, ինչ հիմա է համայն Տիեզերքի համար:

Ահա այդ ժամանակ ես իմացա, որ այդ Լենտրոհամասնինը սկզբնավորվել է, կամ, ինչպես այնտեղ են ասում, «ծնվել է» Ասիա աշխարհամասի Նիեվիա երկրի Կրոնփոխան կոչվող մայրաքաղաքում:

Նրա սաղմնավորվել է երկու տարատեսակ էքսիոէհարիների միախառնումից, որոնք կազմավորվել էին այնտեղի երկու կեսափմարդական տարեց եռուղեղ էակների ներսում:

Նրա «արտադրողները», կամ, ինչպես այնտեղ են ասում, «ծնողները» իրենց մշտական գոյատևման վայր ընտրելով Նիեվիա երկիրը, այնտեղ էին տեղափոխվել այդ հետագայում Համաշխարհային Տհասնամուս դարձած էակի սկզբնավորումից երեք տարի առաջ:

Նա իր տարեց ու հարուստ ծնողների «առաջնեկն» էր, քանի որ թեև մինչև նրա աշխարհ գալը նրանք շատ անգամ էին միախառնել իրենց էքսիոէհարիները, սակայն, ինչպես պարզեցի, խորապես կլանված լինելով հարստանալու գործով և չուզենալով որևէ խանգարիչ հանգամանք ունենալ այդ գործի համար, այդ սրբազան միախառնման ամեն մի արդյունքի դեպքում նրանք դիմել էին, այսպես կոչված, «տուսի» անելուն, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «վիժեցման»:

Հարստություն կուտակելու իր գործունեության վերջում այդ էակի ծագման «ակտիվ սկզբնաղբյուրը», կամ, ինչպես այնտեղ են ասում, հայրը, մի քանի, այսպես կոչված, «քարավաններ» ուներ, ինչպես նաև հատուկ «քարվանսարաններ» Նիեվիայի տարբեր քաղաքներում, որոնց միջոցով ապրանքափոխանակություն էր կատարում:

¹⁹¹ ռուս. տարբերակում՝ «каширейтлеер», անգլ. տարբերակում՝ “kashireitleer”

Իսկ նրա ծագման «պասիվ սկզբնաղբյուրը», այսինքն՝ մայրը, սկզբում մասնագիտությամբ, այսպես կոչված, «տուսաչի» էր, բայց ավելի ուշ մի մեծ լեռան վրա կազմակերպել էր, այսպես կոչված, «սրբատեղի» և մյուս էակների շրջապատում լուր էր տարածել, թե իբր այդ վայրն օժտված է հատուկ նշանակությամբ, այն է՝ չբեր կանայք կարող են այցելել այդ վայրը և բուժվել:

Երբ ամուսնական այդ գույզն իր, այսպես կոչված, «կյանքի մայրամուտին» շատ հարստացավ, տեղափոխվեց Կրոնփոխան մայրաքաղաք, որպեսզի սեփական հաճույքի համար այդտեղ շարունակի իր գոյատևումը:

Սակայն շուտով զգացին, որ առանց իսկական «պտղի», կամ, ինչպես այնտեղ են ասում, «անզավակ» վիճակում լիակատար վայելք չեն կարող ունենալ, և այդ պահից սկսած՝ ոչ մի «գումար» չխնայելով զանազան միջոցների դիմեցին, որ այդպիսի մի «պտուղ» ունենան:

Այդ նպատակով նրանք այցելեցին այնտեղ այն ժամանակ գոյություն ունեցող և այդ նպատակին ծառայող շատ սրբատեղիներ, իհարկե, բացառությամբ իրենց իսկ ստեղծած «Սուրբ սարի», որից հետո զանազան «բժշկական միջոցների» դիմեցին, որոնք նպատակ էին հետապնդում նպաստելու տարատեսակ էքսիտեհարիների միավորմանը. ի վերջո մի այդպիսի միավորում պատահաբար գլուխ եկավ, և հարկ եղած ժամանակն անցնելուց հետո նրանք ստացան իրենց երազած այդ պտուղը, որին էլ հետո անվանեցին Լենտրոհամասնին:

Այդ էակի սկզբնավորման հենց առաջին օրից, որին իրենք «Աստվածատուր պտուղ» կամ որդի էին կոչում, ծնողներն ամբողջովին կլանված էին նրանով և հսկայական գումարներ ծախսեցին նրան հաճույքներ պատճառելու և «դաստիարակելու» համար: Նրանց, այսպես ասած, «նվիրական երազանքն» էր դարձել, որ Երկրի երեսին հնարավոր ամենալավ «դաստիարակությունն» ու «կրթությունը» տան իրենց զավակին:

Այդ նպատակով նրանք զանազան, այսպես կոչված, «դաստիարակներ» և «ուսուցիչներ» վարձեցին՝ ինչպես հենց Նիեվիայում եղածներից, այնպես էլ տարբեր հեռավոր երկրներից: Այդ վերջիններին, այսինքն՝ օտարերկրյա «դաստիարակներին» և «ուսուցիչներին», նրանք գլխավորապես հրավիրում էին այն երկրից, որը ներկայումս «Եգիպտոս» է կոչվում:

Արդեն այն ժամանակ, երբ այդ «պապայի ու մամայի սիրելին» մոտենում էր իր պատասխանատու տարիքին, ինչպես այնտեղ են ասում՝ նա շատ լավ «կրթված» ու «դաստիարակված» էր, այսինքն՝ նրա ներկայության մեջ արդեն մեծ քանակությամբ նախադրյալներ էին կուտակված ամեն տեսակի լինելիական «էգոպլաստիկությունների»¹⁹² համար, որոնք, ինչպես այնտեղ սովորաբար լինում է, լինելիական գոյատևման այնտեղ հաստատված աննորմալ պայմանների հետևանքով բաղկացած էին զանազան երևակայական ու կասկածելի տեղեկություններից, և ավելի ուշ, երբ նա պատասխանատու էակ դարձավ, նրա դրսևորումները պայմանավորված էին ամեն տեսակի պատահական խթաններով:

Երբ այդ հետագայում մեծանուն դարձած գիտուն էակն այնտեղ հասավ պատասխանատու էակի տարիքի, և, թեև իսկապես տիրապետում էր մեծ քանակի տեղեկությունների, կամ, ինչպես այնտեղ են ասում՝ «գիտելիքների», այնուհանդերձ բացարձակապես օժտված չէր այդ ձեռք բերված տեղեկություններին կամ գիտելիքներին համապատասխանող Լինելիությամբ:

Եվ ահա, երբ հիշյալ «պապայի ու մամայի սիրելին» այնտեղ դարձավ նոր տեսակի գիտուն էակ, ապա, քանի որ մի կողմից՝ նրա ներկայությունն օժտված չէր որևէ Լինելիությամբ, և մյուս կողմից արդեն այդ ժամանակ նրանում հիմնովին բյուրեղացել էին Կունդաբուֆեր օրգանի հատկությունների այնպիսի հետևանքներ, որոնք այնտեղ գոյություն ունեն «փառամոլություն», «եսամոլություն», «մեծամտություն» և այլ անուններով, նա փառասիրաբար կամեցավ մեծ գիտնականի համբավ վայելել ոչ միայն Նիեվիայի, այլ նաև ամբողջ մոլորակի մակերևույթի վրա եղած էակների կողմից:

Ուստի իր ողջ էությամբ նա երազում ու մտմտում էր, թե ինչպես հասնի այդ նպատակին:

Բազում օրերի ընթացքում լրջորեն մտորելուց հետո նա վերջապես որոշեց նախ տեսություն հորինել մի այնպիսի թեմայի շուրջ, որին իրենից առաջ դեռևս ոչ ոք չի անդրադարձել, և երկրորդ իր հորինվածքը գրառել մի այնպիսի կաշիրայթերի վրա, որի նմանը երբեք չի եղել և երբեք չի կարող լինել նաև ապագայում:

Եվ այդ օրվանից նա սկսեց նախապատրաստվել իր այդ որոշման իրականացմանը:

¹⁹² ռուս. տարբերակում՝ «эгопластикури», անգլ. տարբերակում՝ “egoplastikoori”

Սկզբում նա իր բազմաթիվ ստրուկների օգնությամբ ստեղծեց մի կաշիբայթեր, որի նմանը նախկինում երբեք չէր եղել:

Այդ ժամանակահատվածում Երկրի վրա կաշիբայթերներ սովորաբար պատրաստում էին «գոմեշ» կոչվող չորքոտանի կենդանու կաշվի որևէ մասից, իսկ Լենտրոհամասանինը իր կաշիբայթերը պատրաստեց՝ հարյուր գոմեշի կաշի իրար միացնելով:

Այդ կաշիբայթերները հետագայում փոխարինվեցին, այսպես կոչված, «մագաղաթներով»:

Եվ այսպես, երբ այդ աննախադեպ կաշիբայթերն արդեն պատրաստ էր, հետագայում մեծանուն Լենտրոհամասանինը դրա վրա գրառեց իր հորինվածքը, որի թեման այնպիսին էր, որ այն քննարկելու միտքը, իրոք, երբեք չէր ծագել որևէ մեկի գլխում, և, ընդհանրապես ասած, երբևէ այն քննարկելու որևէ հիմք չէր եղել:

Իր այդ իմաստակություններում նա ամեն կերպ քննադատում էր համատեղ գոյատևման այն ժամանակ գոյություն ունեցող կարգերը:

Նրա այդ կաշիբայթերի գրառումները սկսվում էին այսպես.

«Մարդու համար մեծագույն երջանկությունն այն է, որ նա կախում չունենա ոչ մի ուրիշ անձից և ազատ լինի որևէ ուրիշ մեկի ազդեցությունից՝ ով էլ որ նա լինի...»

Երբևէ ես քեզ կբացատրեմ, թե քո սիրելիները՝ այդ արտառոց եռուղեղ էակները, այնտեղ՝ Երկիր մոլորակի վրա, ընդհանրապես ինչպես են հասկանում ազատություն ասածը:

Այդ հետագայում Համաշխարհային Տիասնամուս դարձած Լենտրոհամասանինն այնուհետև գրում էր.

«Անկասկած է, որ կյանքը ներկայիս պետական կառույցի ներքո անհամեմատ ավելի լավ է ընթանում, քան նախկին ժամանակներում, բայց ու՞ր է այն իսկական ազատությունը, որից պետք է կախված լինի մեր երջանկությունը:

Արդյո՞ք մենք ավելի քիչ ենք աշխատում ու չարչարվում, քան դա եղել է նախկին պետական կառույցների օրոք:

Արդյո՞ք մենք կրկին քրտնաթոր չենք չարչարվում, որպեսզի ստանանք մեր ապրուստի համար անհրաժեշտ գարին, որպեսզի սովից չսատկենք շղթայակապ շների պես:

Մեր գլխավորները, կառավարիչներն ու խորհրդականները մշտապես մեզ ասում են ինչ-որ ուրիշ աշխարհի մասին, որն, իբր, անհամեմատ ավելի լավն է, քան այստեղ՝ Երկրի վրա եղածը, և որ բոլոր առումներով այնտեղի կյանքը երանելի է այն հոգիների համար, որոնք այստեղ՝ Երկրի վրա, արժանավայել են ապրել:

Արդյո՞ք մենք հիմա այստեղ «արժանավայել» չենք ապրում:

Արդյո՞ք մենք անընդհատ քրտնաթոր չենք չարչարվում մեր հանապազօրյա հացի համար:

Եթե այն ամենը, ինչ ասում են մեր գլխավորներն ու խորհրդականները, ճշմարտություն է, և իրենց կյանքն այստեղ՝ Երկրի վրա, իսկապես համապատասխանում է այն ամենին, ինչ իրենց հոգիներից պահանջվում է այն մյուս աշխարհի համար, ապա, իհարկե, Աստված պետք է, նույնիսկ պարտավոր է և ա՛յս աշխարհում նրանց ավելի շատ հնարավորություններ շնորհել, քան մեզ հասարակ մահկանացուներին:

Եթե այն ամենը, ինչ ասում են և ջանում համոզել մեզ մեր գլխավորներն ու խորհրդականները, իրոք ճշմարտություն է, ապա թող մեզ՝ հասարակ մահկանացուներին, դա ապացուցեն փաստերի միջոցով:

Թող մեզ ապացուցեն, օրինակ, որ մի բուռ սովորական ավազը կարող են հացի վերածել, այն ավազը, որի միջից մենք մեր չարչարանքով մեր հանապազօրյա հացն ենք քամում:

Եթե մեր գլխավորներն ու խորհրդականները կարողանան դա անել, ապա ես առաջինը կվազեմ, կչոքեմ նրանց առաջ և կհամբուրեմ նրանց ոտքերը:

Բայց, քանի որ դա այդպես չէ, ապա մենք ինքներս պետք է պայքարենք, և մենք ինքներս պետք է ձգտենք մեր իսկական ազատության ն ու մեր իսկական երջանկությանը, ինչպես նաև պետք է ձգտենք ազատել ինքներս մեզ քրտնաթոր չարչարվելու անհրաժեշտությունից:

Ճիշտ է, տարվա մեջ ութ ամիս մենք հիմա առանց աշխատելու ստանում ենք մեր հանապազօրյա հացը, սակայն որքա՛ն ենք չարչարվում ամառվա չորս ամիսների ընթացքում, որպեսզի ստանանք մեզ անհրաժեշտ գարին:

Միայն նա, ով ցանում ու հնձում է այդ գարին, իրապես գիտի, թե ինչպիսի՜ ծանր աշխատանք է դա:

Ճիշտ է, տարվա մեջ ութ ամիս մենք ազատ ենք լինում, բայց՝ միայն ֆիզիկական աշխատանքից, և հանուն դրա, մեր գիտակցությունը՝ մեր ամենաթանկ ու բարձրագույն մասն օր ու գիշեր պետք է ստրկացված մնա այդ պատրանքային գաղափարներին, որոնք անընդհատ մեր գլուխներն են խցկում մեր գլխավորներն ու խորհրդականները:

Բավական է այլևս: մենք ինքներս, առանց ներկայիս գլխավորների ու խորհրդականների, որոնք այդպիսին են դարձել առանց մեր կամքը հարցնելու, պետք է ձգտենք մեր իսկական ազատությանն ու մեր իսկական երջանկությանը:

Եվ մենք կարող ենք հասնել մեր իսկական ազատությանն ու երջանկությանը, եթե գործենք համատեղ՝ մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի: Մակայն դրա համար մենք նախ պետք է կործանենք ամբողջ հինը: Եվ մենք պետք է դա անենք, որպեսզի տեղ ազատվի նոր կյանքի համար, որը մենք ինքներս կստեղծենք և որը մեզ կտա իսկական ազատություն և իսկական երջանկություն:

Կորչի՜ ուրիշներից կախվածությունը:

Մենք ինքներս մեր տերը կլինենք, այլ ոչ նրանք, որոնք հիմա տնօրինում են մեր կյանքը՝ դա անելով առանց մեր գիտության ու համաձայնության:

Մեր կյանքը պետք է կառավարեն ու ղեկավարեն նրանք, որոնց մենք ինքներս կընտրենք հենց մեր միջից. կընտրենք նրանց, որոնք հենց իրենք են ստեղծում իրենց հանապազօրյա հացը:

Այդ նոր ղեկավարներին ու խորհրդականներին մենք կընտրենք իրավահավասարության հիման վրա՝ անկախ սեռից ու տարիքից, և դա կանենք համընդհանուր, հավասար, ուղիղ և թափանցիկ ընտրություններով»:

Ահա այդպես էին ավարտվում այդ նշանավոր կաշիրայթերի գրառումները:

Երբ այդ հետագայում Համաշխարհային Տեսնամուս դարձած Լենտրոհամասնինն ավարտեց իր կաշիրայթերը գրելու գործը, որն իրոք աննախադեպ էր այնտեղ, դրանից հետո մեծ ու ճոխ մի ճաշկերույթ կազմակերպեց, որին հրավիրեց մասնակցելու ամբողջ Նիեվիայի բոլոր գիտուն էակներին՝ հոգալով բոլորի ճանապարհածախսերը: Եվ այդ ճաշկերույթի ավարտին նա բոլորին ներկայացրեց իր կաշիրայթերը:

Երբ Նիեվիայի բոլոր ծայրերից եկած կայր ձրի խնջույքին մասնակցած գիտուն էակները տեսան այդ իրոք աննախադեպ կաշիրայթերը, սկզբում այնպես զարմացան, որ, ինչպես այնտեղ է ասվում, «քար կտրեցին», և միայն որոշ ժամանակ անցնելուց հետո աստիճանաբար սկսեցին տարակուսանքով զննել այն ու շուտով կարծիքներ փոխանակել:

Հիմնականում նրանք հարցնում էին մեկմեկու, թե ինչպե՞ս է եղել, որ ոչ մի նիեվիացի գիտուն կամ շարքային էակ մինչև հիմա չի իմացել և գլխի չի ընկել, որ իրենց սեփական երկրում կա այսպիսի գիտելիքների տիրապետող գիտուն էակ:

Հանկարծ նրանցից մեկը՝ ամենածերը, որն ամենաառաջավորն էր, մանչուկի պես թռավ սեղանի վրա և բարձր ձայնով ու այնպիսի առողջությամբ, ինչպիսին վաղուց բնորոշ էր դարձել այնտեղի նոր տեսակի գիտուն էակներին՝ հասնելով ընդհուպ մինչև նրանց ժամանակակից ներկայացուցիչներին, արտաբերեց հետևյալը.

– Լսեցե՛ք և բոլորդ իմացե՛ք, որ այստեղ հավաքված երկրային էակների ներկայացուցիչներս, որ մեր մեծ գիտունության շնորհիվ արդեն դարձել ենք ինքնուրույն անհատականություններ, այսօր բախտ ունենք մեր սեփական աչքերով տեսնելու անմահ ստեղծագործությունն Աստվածային Մեսիայի, որը Վերնից առաքվել է, որպեսզի մեզ համար բացահայտի Համաշխարհային ճշմարտություններ:

Դրանից հետո սկիզբ առավ այն սովորական ու չարաղետ, այսպես ասած, «փոխգովերգումը», որը վաղուց է, ինչ գործածում են այնտեղի նոր տեսակի գիտուն էակները, և գլխավորապես որի պատճառով պատահաբար նրանց հասած ոչ մի ճշմարիտ գիտելիք այնտեղ հետագա զարգացում չի ստանում, ինչպես դա լինում է Տիեզերքի բոլոր մյուս վայրերում, թեկուզ հենց պարզապես ժամանակի ընթացքից կախված. ընդհակառակը՝ նույնիսկ մեկ անգամ արդեն ձեռք բերված գիտելիքը ոչնչացվում է, իսկ այն ձեռք բերողներն ավելի ու ավելի են մանրանում:

Այնուհետև մյուս գիտուն էակներն էլ սկսեցին ճշալ ու հիմնադրել իրար, որպեսզի հնարավորին չափ մոտենան Լենտրոհամասանինին. ապա ճոխ խոսքերով դիմում էին նրան՝ որպես իրենց «երկար սպասված Մեսիային»՝ երեսներին տալով «մեծագույն երանության» արտահայտություն:

Այս ամենի մեջ ամենահետաքրքիրն այն է, որ այն պատճառը, որից դրդված բոլոր մյուս գիտուն էակներն այդպես զմայլվել էին և ազատորեն զեղում էին իրենց, այսպես ասած, «գիտուն գովասանքները, բխում էր այն չափազանց արտառոց համոզմունքից, որը քո սիրելիների հոգեկառույցներում ձևավորվել էր, ինչպես միշտ, սովորական լինելիական գոյատևման աննորմալ պայմանների հետևանքով, և համաձայն որի՝ եթե որևէ մեկը դառնում է արդեն հայտնի ու պատվարժան դարձած էակի հետևորդ, ապա դրանով իսկ մյուս էակների աչքին ինքն էլ է դառնում նույնքան հայտնի ու պատվարժան:

Ուստիև, քանի որ Լենտրոհամասանինը շատ հարուստ էր և, որ նույնպես կարևոր է, արդեն շատ հայտնի էր դարձել, ապա Նիեվիայի այն ժամանակվա բոլոր մյուս գիտուն էակները շտապեցին նրան կատամամբ տրամադրվել բարյացակամորեն:

Եվ ահա, տղա՛ս, երբ հիշյալ ճաշկերույթից հետո Նիեվիայի գիտուն էակները ցրվեցին իրենց տները, անմիջապես սկսեցին, առաջին հերթին՝ նախ իրենց հարևաններին, ապա և ավելի լայն շրջապատում պատմել իրենց տեսած կաշիրայթյալների մասին, և երկրորդ հերթին՝ փրփուրը բերաններին սկսեցին բոլորին համոզել այն «հայտնությունների» ճմարտացիությունը, որոնք այդ մեծն Լենտրոհամասանինը գրի էր առել իր կաշիրայթյալների վրա:

Այդ ամենի արդյունքում ինչպես Կրոնփոխան քաղաքի, այնպես էլ Նիեվիա երկրի բոլոր մյուս մասերի սովորական էակները խոսում էին միայն այդ «հայտնությունների» մասին:

Ապա աստիճանաբար, ինչպես սովորաբար այնտեղ լինում է, համարյա ամեն տեղ բաժանվեցին երկու փոխընդդիմադիր կուսակցությունների, որոնցից մեկը պաշտպանում էր այդ հետազայում Համաշխարհային Տեսնամուս դարձածի հորինվածքը, իսկ մյուսը՝ արդեն հաստատված ու դեռևս շարունակվող լինելիական գոյատևման ձևը:

Այդպես շարունակվեց համարյա մի ամբողջ երկրային տարի, որի ընթացքում հակառակորդ կուսակցությունների շարքերն ամենուրեք աճեցին, և նրանց միջև ուժեղացավ իրենց յուրահատուկ հատկանիշներից մեկը, որն «ատելություն» է կոչվում. և հենց դրա պատճառով էլ մի տխուր օր Կրոնփոխան քաղաքի երկու հիշյալ փոխընդդիմադիր ուղղություններին հարող էակների միջև հանկարծակի ծայր առավ այն ահավոր գործընթացը, որն իրենք «քաղաքացիական պատերազմ» են կոչում:

«Քաղաքացիական պատերազմը» նույն «պատերազմն» է՝ միայն այն տարբերությամբ, որ սովորական պատերազմի ժամանակ մի հանրությանը պատկանող էակները կոտորում են մի ուրիշ հանրությանը պատկանող էակների, մինչդեռ քաղաքացիական պատերազմի ժամանակ փոխադարձ ոչնչացման գործընթացը տեղի է ունենում միևնույն հանրությանը պատկանող էակների միջև. այսպես օրինակ՝ եղբայրը սպանում է եղբորը, հայրը՝ որդուն, քեռին՝ քեռորդուն և այլն, և այլն:

Ամենասկզբում՝ առաջին չորս օրերի ընթացքում, երբ այդ ահավոր գործընթացը Կրոնփոխանում հասել էր իր գագաթնակետին, և Նիեվիա երկրի մնացած վայրերի էակների ուշադրությունը կենտրոնացած էր մայրաքաղաքի վրա, մյուս քաղաքներում համեմատաբար խաղաղ էր, եթե չհաշվենք այն, որ որոշ տեղերում ոչ մեծ, այսպես կոչված, «բախումներ» եղան: Իսկ երբ չորրորդ օրվանից հետո Կրոնփոխանում հաղթեցին նրանք, ովքեր Լենտրոհամասանինի հորինվածքի, այսինքն՝ գիտուն էակների կողմնակիցներն էին, ապա այդ գործընթացը տարածվեց նաև Նիեվիայի տարածքում գտնվող բոլոր մանր ու մեծ բնակավայրերում:

Այդ լայնորեն տարածվող ահավոր գործընթացը շարունակվեց այնքան, մինչև գիտուն էակներից կազմված «ավագակախմբեր» ստեղծվեցին, որոնք, ինչպես ասում են, «ոտքերի տակ ամուր հող զգալով»՝ մնացած էակներին ստիպում էին ընդունել Լենտրոհամասանինի գաղափարները, և անհապաղ ամեն ինչ ոչնչացնում էին. ահա այդ ժամանակից սկսած՝ Նիեվիայի բոլոր եռուղեղ էակները դարձան Լենտրոհամասանինի հորինվածքի հետևորդները, որից հետո այդ հանրությունում հաստատվեց հատուկ, այսպես կոչված, «Հանրապետություն»:

Մի փոքր ավելի ուշ Նիեվիայի հանրությունը, որն այն ժամանակ մեծ ու, ինչպես ասում են, «հզոր» էր, սկսեց «պատերազմել», ինչպես այնտեղ կրկին հաճախ է պատահում, հարևան հանրությունների հետ, որպեսզի դրանցում նույնպես հաստատվեն նոր տիպի պետական կառույցներ:

Ահա այդ ժամանակվանից սկսած, զավա՛կս, քո այդ մոլորակի ամենամեծ աշխարհամասում այդ տարօրինակ եռուղեղ էակների միջև տեղի ունեցող փոխադարձ ոչնչացման գործընթացները սկսեցին տեղի ունենալ առաջվա պես, և միաժամանակ աստիճանաբար փոփոխության ենթարկվեցին և, վերջիվերջո, ոչնչացվեցին նրանց սովորական գոյատևման այն զանազան օգտավետ ձևերը, որոնք արդեն հաստատվել էին՝ շնորհիվ ներկայումս Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշի հեռատես Բանականության:

Այդ գործընթացից հետո քո այդ մոլորակի մակերևույթի վրա սկսեցին կազմավորվել բազմաթիվ զանազան ու առանձին հանրություններ՝ հնարավոր ամեն տեսակի «ներքին պետական կառույցներով», միայն այն բանի համար, որ ոչնչացվեն ու իրենց տեղը զիջեն ուրիշներին:

Թեև ներկայումս Համաշխարհային Տհասնամուս դարձած Լենտրոհամասանինի այդ չարանեղ հորինվածքի անմիջական հետևանքն այն եղավ, որ քո սիրելիների մոտ նորից վերածնվեց առանձին տարբեր հանրություններով գոյատևելու ավանդույթը, և նրանք նորից սկսեցին պարբերաբար իրար ոչնչացնել, այնուամենայնիվ Ասիա աշխարհամասում նոր կազմավորված այդ անկախ հանրություններից շատերում ապրող էակների մոտ դեռևս շարունակվում էին սովորական գոյատևման շատ ավանդույթներ, որոնք անսովոր իմաստությամբ նախատեսել էր Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը, և որոնք արդեն միահյուսվել էին նրանց ինքնաբերաբար ընթացող առօրեական գոյատևման գործընթացի հետ:

Իսկա որոշ հանրություններում դեռևս պահպանվող հիշյալ ավանդույթների ու սովորույթների վերջնական կործանման մեղավորները եղան այն գիտուն էակները, որոնք, ինչպես արդեն պատմել եմ, հավաքվել էին Բաբելոն քաղաքում:

Եվ այն ժամանակվա նրանց մեղավորությունը հետևյալն է. երբ անդրշիրիմյան աշխարհի հարցի կապակցությամբ նրանք հավաքվել էին այդտեղ և բոլոր գիտուն էակների համար «համամոլորակային համաժողով» էին կազմակերպել, իրենց սեփական կամքով Բաբելոն ժամանած գիտուն էակների մեջ կար մեկը, որը, լինելով Լենտրոհամասանինի ծոռը, նույնպես գիտուն էակ էր դարձել:

Եվ սա իր հետ Բաբելոն էր բերել հիշյալ կաշիրայթերի ճշգրիտ պատճենը, որն այս անգամ գրի էր առնված պապիրուսի վրա: Բնագիրը նա ժառանգություն էր ստացել իր նախապապից: Եվ ահա, երբ «հոգու հարցին» վերբերող «խելահեղությունները» հասել էին իրենց զագաթնակետին, գիտուն էակների վերջին ընդհանուր ժողովներից մեկի ժամանակ նա բարձրաձայն կարդաց իր նախապապի չարանեղ հորինվածքի բովանդակությունը. դրանից հետո եղավ հենց այնպես, ինչպես սովորաբար լինում է այդ մոլորակի «վայ-գիտնականների» հետ՝ իրենց Բանականության տարօրինակության պատճառով. այն է՝ նրանք իրենց հետաքրքրած մի հարցից անմիջապես անցնում են մի ուրիշին. տվյալ դեպքում նրանք «հոգու հարցից» անմիջապես անցան «քաղաքականությանը»:

Դրանից հետո Բաբելոն քաղաքում կրկին ամենուրեք ծայր առան հավաքներն ու քննարկումները, որոնք այս անգամ վերաբերում էին զանազան տեսակի պետական կառույցներին, որոնք կա՛մ արդեն գոյություն ունեին, կա՛մ էլ, իրենց կարծիքով, հարկավոր է ստեղծել:

Իրենց քննարկումների ընթացքում նրանք, իհարկե, հենվում էին Լենտրոհամասանինի հիշյալ հորինվածքի «ճշմարտությունների» վրա, որոնք հիմա արդեն գրառված էին պապիրուսի վրա, որն իրենց էր հասցրել հենց իր՝ Լենտրոհամասանինի ծոռը, և որի պատճենն իրենց գրպանում ունեին Բաբելոնում գտնվող համարյա բոլոր գիտուն էակները:

Մի քանի ամիս նրանք քննարկեցին ու վիճաբանեցին, և դրա արդյունքում այս անգամ «պառակտվեցին» երկու կուսակցության. այսինքն՝ Բաբելոն քաղաքում այդ ժամանակ եղած բոլոր գիտուն էակները բաժանվեցին երկու առանձին «բաժանմունքների», որոնք կոչվեցին հետևյալ անուններով՝

առաջին բաժանմունք - «Նեոմիտքականներ»,

երկրորդ բաժանմունք - «Պալեոմիտքականներ»:

Գիտուն էակների այդ երկու բաժանմունքներից ամեն մեկն իր համախոհները գտավ Բաբելոն քաղաքի սովորական էակների շարքերում, և անկասկած, բանը կրկին կհասներ քաղաքացիական պատերազմին, եթե պարսից արքան, այդ ամենի մասին լսելուց հետո, «չբամփեր» նրանց «գիտուն գլուխներին»:

Նա մահապատժի ենթարկեց գիտուն էակներից մի քանիսին, մի քանիսին նետեց ոջլոտ բանտերը, երրորդներին էլ ուղարկեց այնպիսի վայրեր, որտեղ նույնիսկ հիմա, ինչպես կասեր Մոլլա

Նասրեդինը, հնարավոր չէ «ֆրանսիական շամպայն» ճարել: Միայն մի քանի գիտուն էակի, որոնց վերաբերյալ նույնպես հստակ վկայություններ կային, որ խառն են եղել այդ գործին, միայն նրանց «խելագարության» հազամանքը հաշվի առնելով, արքան թույլ տվեց վերադառնալ իրենց երկրները. իսկ նրանց, որոնք իրոք ոչ մի մասնակցություն չէին ունեցել հիշյալ «քաղաքական գործերին», արքան ոչ միայն թույլ տվեց, որ ազատ վերադառնան իրենց երկրները, այլ նաև հրաման տվեց, որ նրանց ճանապարհեն դեպի իրենց հայրենիքները՝ զանազան պատիվներ տալով:

Այսպիսով, զավակս, բաբելոնյան այն գիտուն էակները, որոնք տարբեր պատճառներով ողջ մնացին ու ցրիվ եկան համարյա ամբողջ մոլորակով մեկ, իներցիայով շարունակեցին իրենց իմաստակությունները, որոնց համար որպես հիմք էին վերցնում, իհարկե, ոչ թե գիտակցաբար, այլ ուղղակի մեքենայաբար, նույն այն երկու գլխավոր հարցերը, որոնք ծագել ու «օրախնդիր» էին դարձել հիշյալ բաբելոնյան իրադարձությունների ընթացքում, այսինքն՝ մարդկանց «հոգիներին» և «ներհասարակական կառույցներին» վերաբերվող նշանավոր հարցերը:

Այդ իմաստակությունների արդյունքում ամբողջ Ասիա աշխարհամասում տարբեր հանրություններում կրկին բռնկվեցին քաղաքացիական պատերազմներ և տարբեր հանրությունների միջև փոխադարձ ոչնչացման գործընթացներ:

Նման եղանակով Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի գիտակցական աշխատանքների մնացյալ արդյունքների ոչնչացման գործն Ասիայում շարունակվեց մոտավորապես մեկուկես հարյուրամյակ. այնուամենայնիվ որոշ տեղերում պահպանվել էին և նույնիսկ իներցիայով իրականացվում էին որոշ կենսակերպեր, որոնք Աշխաթա Շիեմաշը հիմնել էր հանուն այդ էակների լինելիական գոյատևման բարօրության:

Բայց երբ Եվրոպա կոչվող հարևան աշխարհամասում սկզբնավորվող ու գոյատևող եռուղեղ էակները սկսեցին մասնակցել ասիական պատերազմներին, և երբ այդ աշխարհամասից նրանց հրոսակախմբերը գերփառասեր հույն Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ արշավեցին համարյա ամբողջ Ասիա աշխարհամասի վրայով, ապա նրանք, ինչպես ասում են, «իսպառ մաքրեցին» այդ չարաբաստիկ մոլորակի վրայից այն ամենը, ինչ այնտեղ հաստատվել էր ու դեռևս պահպանվում ու շարունակվում էր. այնքան մաքուր «ավլեցին», որ հիշողության նշույլ անգամ չմնաց այն մասին, որ իրենց մոլորակի մակերևույթի վրա երբևէ գոյություն է ունեցել այնպիսի մի «բարեշնորհանք», որը հատուկ մտադրությամբ իրենց գոյատևման համար շնորհել էր այնպիսի Բանականության տեր մեկը, որը ներկայումս Գերսրբազնագույն Համատիեզերական Անհատականություններից մեկն է, որոնց կարծիքն առանց հարցնելու՝ նույնիսկ մեր Ամենագո Համընդհանուր Հայրը ոչինչ չի ձեռնարկում:

Իսկ հիմա, տղա՛ս, այդ Լենտրոհամասինին վերաբերող իմ զրույցից հետո, որի շնորհիվ դու որոշակի չափով սեղմագրված նկարագրություն ստացար այն հետևանքների վերաբերյալ, որոնք հետագա սերունդներին բաժին են հասնում Երկիր մոլորակի եռուղեղ էակների շարքերում եղած և Հավերժ Տհասնամուսական Անհատականության այդպիսի տիպական ներկայացուցիչ գործունեությունից, լիովին տեղին կլինի, եթե, իմ խոստմանը համաձայն, մի փոքր ավելի մանրամասնորեն քեզ բացատրեմ «տհասնամուս» բառի իմաստը:

Ընդհանրապես, «տհասնամուս» բառով անվանում և բնորոշում են այն անկախ անհատներին, որոնց «անհատական ազդակների» մեջ առաջանում է որոշակի «ինչ-որ բան», որը, անկախ անհատների, այսպես կոչված, «ավարտուն կազմվածքի» բաղադրիչ մասն է դառնում եռուղեղ էակների ներկայություններում, ինչպես այն դեպքում, երբ նրանց հանդերձավորումն իր մեջ ներառում է հնարավոր հանդերձներից ամենաբարձրը, այնպես էլ այն դեպքում, երբ նրանց հանդերձավորումը բաղկացած է լինում միայն մոլորակային մարմնից:

Այդ առանձին տիեզերական անհատների ներսում այդ «ինչ-որ բանը» ծագում և նյութափոխանակության ընթացքում միախառնվում է այն բյուրեղացումների հետ, որոնք առաջանում են, այսպես կոչված, «նալուոսային»¹⁹³ ազդակների» ամբողջ «սպեկտրի» ազդեցությամբ:

Այդ «նալուոսային ազդակների սպեկտրը», սրբազան Յոթնապարապարշինող գլխավոր տիեզերական օրենքի հիման վրա և «ընկալումների գրգռումների» ու «արդյունարար դրսևորումների»

¹⁹³ ռուս. տարբերակում՝ «налюсных», անգլ. տարբերակում՝ “naloo-ossnian”

նկատմամբ ունեցած իր էության աղբյուրի վերաբերմունքին համապատասխան՝ բաղկացած է լինում յոթ տարբեր ասպեկտներից:

Ամբողջ «ասպեկտրի» այդ առանձին ասպեկտները քո սիրելիների լեզվի հասկացություններով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- 1) ինչպես գիտակացական, այնպես էլ անգիտակացական բոլոր տեսակի այլասերումներ;
- 2) ուրիշներին ճշմարիտ ուղուց շեղելուց ստացվող ինքնաբարարվածության զգացում;
- 3) ուրիշ էակների գոյատևմանը վերջ տալու անհաղթահարելի հակում;
- 4) Բնության կողմից պահանջվող լինելիական ջանքերի գործադրման անհրաժեշտությունից խուսափելու ձգտում;
- 5) ձգտում՝ ամեն տեսակի արհեստական միջոցներով ուրիշներից թաքցնելու այն, ինչ, իր կարծիքով, իր ֆիզիկական թերությունն է;
- 6) այն ամենի հանգիստ ու ինքնագոհ օգտագործում, ինչին անձամբ չի արժանացել;
- 7) ձգտում լինելու ոչ այն, ինչ ինքն իրականում կա:

Այդ որոշակի «ինչ-որ բանը», որը թվարկված նախուսային ազդակների հետևանքով առաջանում է որոշակի անհատների ներկայություններում, այն բանից զատ, որ հենց իրենց, այսպես կոչված, «պատժիչ տառապանքի լուրջ հետևանքների» պատճառն է, նաև ունի այն առանձնահատկությունը, որ հենց որ այդ անհատներից մեկի մեջ դադարում է, այսպես կոչված, «բուռն ճիգի» ազդեցությունը, ապա այդ «ինչ-որ բանի» այս կամ այն ասպեկտին բնորոշ ճառագայթումները մեծ ազդեցություն են թողնում նրա շրջապատում եղածների վրա և դառնում այն գործոնը, որը նույն բանը ծնում է նաև նրանց ներկայություններում:

Մոլորակային գոյատևման ընթացքում ամեն մի եռուղեղ էակ կարող է դառնալ չորս տեսակի անկախ տհասնամուսական անհատներից որևէ մեկը:

Առաջին տեսակի տհասնամուսական անհատն այն եռուղեղ էակն է, որն այդ «ինչ-որ բանն» իր ներկայության մեջ ձեռք բերելով՝ դեռևս միայն մոլորակային մարմին ունի, և որն իր ռասկուարնոյի գործընթացում կրում է իր ներսում այդ «ինչ-որ բանի» առկայության հետևանքները և, այդպիսով, ընդմիջտ ոչնչանում:

Տհասնամուսական անհատի երկրորդ տեսակն այն եռուղեղ էակն է, որի ընդհանուր ներկայության կեսջան մարմինը հանդերձավորվել է այդ «ինչ-որ բանի» մասնակցությամբ, և որն իր տիեզերական սկզբնավորմանը բնորոշ ձևով ձեռք բերելով «տուրիստիստ¹⁹⁴»-ի հատկություն, այսինքն՝ այն մոլորակի բոլոր ոլորտներում չքայքայվելու հատկություն, որի վրա սկզբնավորվել է տվյալ էակը, պետք է այդպես էլ գոյատևի՝ կրկին ու կրկին կազմավորվելով որոշակի եղանակով, մինչև որ իրենից հեռացվի այդ «ինչ-որ բանը»:

Երրորդ տեսակի տհասնամուսական անհատն այն եռուղեղ էակն է, որի ընդհանուր ներկայության բարձրագույն լինելիական մարմնում, այսինքն՝ հոգում, ծագել և մասնակցություն է ունեցել այդ «ինչ-որ բանը». սա էլ է ձեռք բերում տուրիստիստի հատկություն, բայց այս անգամ այն հատուկ է լինում բարձրագույն լինելիական մարմնին, այսինքն՝ այդ գոյացությունը չի քայքայվում ոչ միայն այն մոլորակի որևէ ոլորտում, որի վրա այն սկզբնավորվել է, այլ նաև Մեծ Տիեզերքի որևէ ուրիշ ոլորտում:

Չորրորդ տեսակի տհասնամուսական անհատը երրորդի պես է, միայն այն տարբերությամբ, որ երրորդ տեսակի տհասնամուսը դեռևս հնարավորություն ունի երբևէ «մաքրվելու» այդ «ինչ-որ բանից», մինչդեռ չորրորդ տեսակն ընդմիջտ զրկված է այդ հնարավորությունից:

Ահա թե ինչու՝ են չորրորդ տեսակի տհասնամուսին անվանում «Հավերժական Տհասնամուսական անհատ»:

Այն պատճառով, որ այդ չորս տեսակի տհասնամուսական անհատներն իրենց ներկայություններում կրում են այդ «ինչ-որ բանը», հիշյալ «պատժիչ տառապանքի հետևանքները» տարբեր են և համապատասխանում են ինչպես ամեն մի տեսակի բնույթին, այնպես էլ այն, այսպես կոչված, «օբյեկտիվ պատասխանատվությանը», որը բխում է այդ տիեզերական գոյացությունների նկատմամբ մեր Համընդհանուր Հոր սկզբնական նախաստեղծումից, հույսերից ու ակնկալիքներից:

Առաջին տեսակի տհասնամուսի դեպքում, այսինքն՝ երբ այդ «ինչ-որ բանը» ձեռք է բերվել միայն մոլորակային մարմին ունեցող էակի կողմից, այդ մոլորակային մարմնի քայքայումը տեղի է ունենում

¹⁹⁴ ռուս. տարբերակում՝ «туринурино, անգլ. տարբերակում՝ “toorinoorino”

ն՛չ սովորական ձևով, այսինքն՝ լինում է այնպես, որ օրգանիզմում ամեն տեսակի գիտակցական ազդակների գործունեության դադարումը տեղի չի ունենում սրբազան ռասկուարնոյի, այսինքն՝ մահվան, մոտեցման հետ միաժամանակ:

Սրբազան ռասկուարնոյի գործընթացը նրա մոտ սկսվում է դեռևս մոլորակային մարմնի կենդանության ժամանակ և տեղի է ունենում մաս-մաս, այսինքն՝ աստիճանաբար, մեկը մյուսի հետևից նրա ընդհանուր ներկայության մեջ դադարում են գործել առանձին ու անկախ ոգի առած տեղայնացումները, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, այդպիսի էակի մոտ սկզբում մեռնում է ուղեղներից մեկը՝ իր բոլոր գործառնություններով հանդերձ, ապա մեռնում է երկրորդ ուղեղը, և դրանից հետո է միայն վրա հասնում այդ էակի վերջնական մահը:

Ի հավելումն այդ ամենի՝ նրա մահվանից հետո, «բոլոր ակտիվ տարրերի քայքայումը, որոնցից կազմված է եղել տվյալ մոլորակային մարմինը, տեղի է ունենում, նախ՝ սովորականից ավելի դանդաղ, և երկրորդ՝ դրանցում անմիջապես չեն դադարում կյանքի ընթացքում էակի ունեցած «գիտակցված ազդակների» գործողությունները, այլ նվազում են՝ ակտիվ տարրերի ցնդելուն գուզընթաց:

Երկրորդ տեսակի տհասնամուսական անհատի դեպքում, այսինքն՝ երբ այդ «ինչ-որ բանն» առկա է լինում տվյալ եռուղեղ էակի ընդհանուր ներկայության կեսջան մարմնում, համապատասխան հետևանքներն այնպիսին են լինում, որ այդ հիբրավի դժբախտ գոյացությունը մոլորակային մարմնից զրկվելուց հետո մի կողմից՝ ինքնակատարելագործվելու հնարավորություն չունենալով մոլորակային մարմնից անկախ և առանց դրա, չի կարողանում իրենից հեռացնել իր համար աղետալի այդ «ինչ-որ բանը», որը թեև ոչ միշտ է, որ իր մեղքով է ձեռք բերած լինում, բայց Տիեզերքում միշտ և ամենուրեք խոչընդոտում է համատիեզերական Տրոգավտոէգոկրատական բնականոն գործընթացին, և մյուս կողմից՝ քանի որ իր մեջ առկա է լինում տուրիստիկոնոյի հատկանիշը, այսինքն՝ որ չի կարող քայքայվել տվյալ արևային համակարգի որևէ ոլորտում, որում ինքը կազմավորվել է, անխուսափելիորեն ստիպված է լինում հանդերձավորվել նոր մոլորակային մարմնով, այն էլ՝ մեծ մասամբ միաուղեղ կամ երկուղեղ էակի, իսկ քանի որ այդպիսի էակների կյանքի տևողությունն ընդհանրապես կարճ է, և ինքը չի հասցնում հարմարվել դրանցից որևէ մեկի արտաքին տեսքին, ապա, նորից սկզբից սկսելով, մոլորակի մի այլ էակի արտաքին տեսքն է ընդունում՝ առանց որոշակի պատկերացում ունենալու այդ նոր հանդերձավորման հնարավոր արդյունքի վերաբերյալ:

Իսկ ինչ վերաբերում է երրորդ տեսակի տհասնամուսական անհատներին, այսինքն՝ երբ այդ «ինչ-որ բանը» մտած է լինում եռուղեղ էակի ընդհանուր ներկայության բարձրագույն լինելիական մարմնի մեջ և այդ հանդերձի մեջ ունենում է այնպիսի որակ, որ էակը երբեք չի կորցնում այդ «ինչ-որ բանից» ձերբազատվելու հնարավորությունը, ապա դա ավելի ահավոր վիճակ է գլխավորապես այն պատճառով, որ նա՝ որպես բարձրագույն տիեզերական կազմավորում, որը, Համայն Գոյի Նախասկզբնական Սկզբունքի նախանշման համաձայն, օժտված է եղել համայն աճող Աշխարհի կառավարմանը նպաստելու առաքելությամբ, և որի վրա իր ծագման պահից սկսած՝ նույնիսկ այնժամ, երբ դեռ կատարյալ չէր իր Բանականությամբ, պատասխանատվություն է դրվել իր ամեն մի կամային կամ ոչ կամային սուբյեկտիվ դրսևորման նկատմամբ, հնարավորություն ունի այդ «ինչ-որ բանն» իր ներկայությունից հեռացնելու բացառապես միայն կամավորապես կատարված Պարտք-պարտականության արդյունքների ազդեցությամբ, այսինքն՝ «գիտակցական ջանքերով ու կամավոր տառապանքով»:

Հետևաբար, արդեն հասնելով, այսպես կոչված, «սեփական անհատականության գիտակցման» աստիճանին, այդպիսի բարձրագույն լինելիական մարմինը դրան համապատասխան պետք է անխուսափելիորեն միշտ տառապի, քանի դեռ այդ որոշակի «ինչ-որ բանն» ամբողջովին արմատախիլ չի արված իր ընդհանուր ներկայությունից:

Այդպիսի բարձր աստիճանի հասած Տհասնամուսական Անհատների տառապալից գոյատևման համար Բարձրագույն Սրբազան Անհատականությունների կողմից տիեզերական մեծ խտացումների ամբողջ բազմության միջից միտումնավոր կերպով ընտրվել են իրենց սուբյեկտիվ գործառնություններով աններդաշնակ չորս մոլորակներ, որոնք գտնվում են Մեծ Տիեզերքի ամենահեռավոր տարբեր ծայրերում:

Այդ աններդաշնակ չորս մոլորակներից մեկը, որը «Հավերժական Հատուցում» անունն է կրում, հատուկ նախատեսված է «Հավերժական Տհասնամուսական անհատների» համար, իսկ մնացած

երեքը՝ այն տհասնամուսների «բարձրագույն լինելիական մարմինների» համար, որոնց ընդհանուր ներկայություններում դեռևս հնարավորություն կա «երբևէ» իրենցից հեռացնելու այդ չարաղետ «ինչ-որ բանը»:

Այդ երեք մոլորակները հետևյալ անուններն են կրում.

- 1) «Խղճի խայթ»,
- 2) «Ապաշխարհանք»,
- 3) «Ինքնախարագանում»:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ տարբեր արտաքին ձևեր ունեցող բոլոր տեսակի եռուղեղ էակներից, դեռևս բարձրագույն լինելիական մարմնով հանդերձավորված միայն 313 էակներ են հայտնվել «Հատուցում» մոլորակի վրա, որոնցից միայն երկուսն են ծագումով քո այդ մոլորակից, և դրանցից մեկը այդ Լենտրոհամասնինի «բարձրագույն լինելիական մարմինն» է:

«Հատուցում» մոլորակի վրա այդ Հավերժական Տհասնամուս-անհատները պետք է մշտապես դիմանան այն աննկարագրելի տառապանքներին, որոնք կոչվում են «ինքնիրենուտել¹⁹⁵», որոնք թեև որոշ չափով նման են Խղճի խայթի տառապանքներին, բայց անհամեմատ ավելի տանջալից են:

Այդ «բարձրագույն լինելիական մարմինների» վիճակի գլխավոր տանջանքն այն է, որ նրանք այդ տառապանքները պետք է կրեն՝ լիովին գիտակցելով դրանց ավարտվելու հույսի լիակատար բացակայությունը...»:

Վերջ առաջին գրքի

¹⁹⁵ ռուս. տարբերակում՝ «Инкиранудель», անգլ. տարբերակում՝ “inkiranondel”